



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ



ΞΕΝΟΦΩΝ

ՔՍԵՆՈՓՈՆ

ΚΥΡΟΥ ΑΝΑΒΑΣΙΣ

ԱՆԱԲԱՍԻՍ

ΜΕΤΑΦΡΑΣΙΣ  
ΣΙΜΩΝΟΣ ΚΡΚΙΑΣΑΡΙΑΝ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ

ΕΚΔΟΣΙΣ ΑΚΑΔΗΜΙΑΣ  
ΕΠΙΣΤΗΜΩΝ ΣΣΔ ΑΡΜΕΝΙΑΣ  
ԵՐԵՎԱՆ 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1970



«ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ  
ԽՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ


Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Եախագահ)  
Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ, Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ,  
Ռ. Վ. ՋԱՐՅԱՆ, Գ. Ն. ՀՈՎՆԱՆ  
Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (գիտ. ֆաբրիկար)

Պատասխանատու խմբագիր  
Գ. Ա. ԳՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Մանրագրությունները  
Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ

КСЕНОФОНТ  
АНАБАСИС

(на армянском языке)  
Издательство АН Армянской ССР  
Ереван—1970



ՔՍԵՆՈՓՈՆ





### Գ Ի Բ Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն

1. Դարեհն ու Պարիսատիսը՝ ունեցան երկու որդի. ավագը՝ Արտաֆսերֆսես<sup>2</sup>, իսկ կրտսերը՝ Կյուրոս<sup>3</sup>: Ու երբ Դարեհը հիվանդացավ<sup>4</sup> և կանխագագ, թե մոտալուտ է իր կյանքի վախճանը, ցանկացավ, որ իրեն ներկայանան իր երկու որդիները: (2) Պատահեց, որ ավագ որդին արդեն իր մոտ էր գտնվում: Իսկ Կյուրոսին կանչեց այն երկրից, որտեղ նրան սատրապ էր նշանակել<sup>5</sup>, միաժամանակ և ստրատեգոս հայտարարել այն բոլոր գորհերի, որոնք գումարվում են Կաստուրոսի դաշտում<sup>6</sup>: Եվ այսպիսով Կյուրոսը հանապարհվում է, վերցնելով իր հետ Տիսսափեռնեսին<sup>7</sup> որպես բնկեր, ինչպես և հելլեններից 300 հապլիտների<sup>8</sup>. Քսենիաս պառասփացու հրամանատարությամբ:

(3) Իսկ երբ Դարեհը վախճանվեց և քաղաքապետության վրա հաստատվեց Արտաֆսերֆսեսը, Տիսսափեռնեսը զրպարտում է Կյուրոսին նրա եղբոր առաջ. թե իբր նա դավադրություն է նյութում նրա դեմ: Եվ սա, հավատալով, կալանավորում է Կյուրոսին, նրան սպանելու համար: Բայց մայրը ներումն աղերսելով, նորից հաջողացրեց, որ նա ուղարկվի իր իշխանության գլուխ<sup>9</sup>: (4) Երբ այսպիսով Կյուրոսը մեկնեց վտանգված ու պատվազրկված, որոշեց այսուհետև երբևէ չիմնել իր եղբոր գերիշխանության տակ, այլ, հնարավորության դեպքում, քաղաքները նրա փոխարեն: Իսկ մայրը, Պարիսատիսը, ևս օգնում էր Կյուրոսին, քանի որ սրան առավել էր սիրում. քան քաղաքապետ Արտաֆսերֆսեսին: (5) Արեայի մերձավորներից իր մոտ այցելողներին Կյուրոսն այնպես էր վերաբերվում, որ նրանք մեկնելիս ավելի դեպի իրեն էին տրամադրվում

բարեկամաբար, ևան դեպի արևան: Եւ հոգ էր տանում նաև այն մասին, որ իր իշխանության սահմաններում ապրող բարբառուները<sup>10</sup> տիրապետեն ռազմական արվեստին և միաժամանակ իր նկատմամբ բարյացակամ լինեն: (6) Իսկ հելլենական զորքը նա հավաքագրում էր ինչքան կարող էր առավել գաղտնի, որպեսզի արևային<sup>11</sup> հնարավորին չափ հանկարծակիի բերի:

Եւ իր ուժերը հավաքում էր հետևյալ կերպ: Քաղաքներում իր ունեցած բոլոր կայազորների բերդապահներից յուրաքանչյուրին նրանում ուղարկեց ռեֆան կարելի է շատ և լավագույն պելոպոնեսցի ռազմիկներ հավաքել այն պատճառաբանությամբ, թե իբր Տիսսափեոնեսը արշավանք է ծրագրում իրենց քաղաքների դեմ: Խնդիրն այն է, որ Հոնիական քաղաքները<sup>12</sup> սկզբնապես արևայի կողմից տրված լինելով Տիսսափեոնեսին, այդ ժամանակ բոլորը անցել էին Կյուրոսի կողմը, բացի Միլետից: (7) Տիսսափեոնեսը, նախազգալով, որ Միլետի բնակիչները ևս մտածում են հարել Կյուրոսին, նրանցից ոմանց սպանեց, որիչներին արտախեց: Իսկ Կյուրոսը վերցնելով վտարանդիներին իր մոտ, զորք հավաքեց ու պաշարեց Միլետը և՛ ցամաքից, և՛ ծովից, ու փորձեց արտաքսվածներին վերադարձնել քաղաք: Սա ևս իր համար զորք հավաքելու մի նոր առիթ եղավ: (8) Իսկ արևայի մոտ դեսպան ուղարկեց, պահանջելով իբրև եղբայր, որպեսզի այդ քաղաքները իրեն և ոչ Տիսսափեոնեսին տրվեն իշխելու համար: Մայրը ևս այս հարցում աչակցում էր նրան. ուստի արևան կասկած չունեւ դավադրության մասին և կարծում էր, թե Կյուրոսը զորքերի վրա փող է ծախսում Տիսսափեոնեսի դեմ պատերազմ մղելու առնչությամբ. այնպես որ նա բոլորովին դեմ չէր, որ նրանք իրար հետ պատերազմեն: Առավել ևս, որ Կյուրոսը Տիսսափեոնեսին պատկանած քաղաքներից սաացվող հարկերը ուղարկում էր արևային:

(9) Մի այլ բանակ ևս հավաքագրվում էր Աբյուդոսին<sup>13</sup> հանդիպակաց Քերտոնեսում, հետևյալ կերպ: Կլեարխոս լակեդեմոնացին<sup>14</sup> վտարանդի էր: Կյուրոսը հանդիպելով նրան, համակրեց ու տվեց 10 հազար դահեկան<sup>15</sup>: Իսկ սա, ստանալով ոսկին, դրամի մի մասով զորք հավաքեց ու Քերտոնեսից արշավելով, պատերազմում էր Հելլեսպոնեսից վերև ապրող քրակիացիների դեմ, դրանով իսկ օժանդակելով հելլեններին: Այդ իսկ պատճառով հելլեսպոնեսյան քաղաքները ևս հոծարակամ նրան դրամ էին ուղարկում զինվորներին ունենի վճարելու: Այսպիսով, այս զորամասը ևս գաղտնապես պահվում էր Կյուրոսի համար:

(10) Գարձյալ, Արխտիպպոս յեսասլացին, որը հյուրասիրության սովորույթի համաձայն բարեկամացել էր Կյուրոսի հետ, իր հայրենիքում հակաակորդներից ներշնչելով գալիս է Կյուրոսի մոտ ու խնդրում նրանից 2000

վարձկանի համար Երեք ամսվա ռոնիկ, հուսալով այդ ձևով հաղթահարել իր հակառակորդներին: Իսկ Կյուրոսը նրան տվեց 4000 վարձկանի համար վեց ամսվա ռոնիկ և խնդրեց նրան հակառակորդների հետ շհաշտվել, նախքան իր հետ խորհրդակցելը: Ահա այսպես Թեսասլիայում ևս նրա համար գաղտնաբար զորք էր պահվում:

(11) Իսկ Պրոֆանեսոս բեովտացուն, որը հյուրասիրության սովորույթով կապված էր իր հետ, Կյուրոսը պատվիրեց հնարավորին չափ շատ ռազմիկներ վերցնելով գալ իր մոտ, այն պատրվակով, թե ինքը ցանկանում է արշավել պիսիդիացիներին<sup>16</sup> դեմ, որովհետև պիսիդիացիները անհանգստացնում են իր երկիրը: Սոփայնետոս ստյումփալացուն ևս ու Սոկրատես աֆայացուն, որոնք նույնպես հյուրասիրության սովորույթով կապված էին նրա հետ, պատվիրեց հնարավորին չափ շատ զինվորներ վերցնելով գաև, որպեսզի պատերազմեն Տիսսափեոնեսի դեմ, միլետացի փախստականների հետ միասին: Մրանք այդպես էլ արեցին:

II. Երբ Կյուրոսին քվաց, թե հարմար ժամանակն է արդեն արշավանքն սկսելու, նա այդ բանը պատճառաբանեց, ասելով, թե իբր ցանկանում է պիսիդիացիներին ամբողջապես դուրս վանել իր հողերից, և իբր նրանց դեմ արշավելու նպատակով է, որ գումարեց և՛ բարբառուսական, և՛ հելլենական զորքերը: Այս ժամանակ էլ նա սուրհանդակ ուղարկեց, պատվիրելով և՛ Կլեարխոսին, որպեսզի սա վերցնի իր ամբողջ զորքը ու ժամանի, և՛ Արխտիպպոսին, որպեսզի սա համաձայնության գա իր ֆոնյանների հետ և ուղարկի իր հետ ունեցած ամբողջ զորքը: Պատվիրեց նաև Քսենիաս արկադիացուն, որը գլխավորում էր իրեն ենթակա քաղաքներում գտնվող վարձկաններին, որպեսզի ժամանի իր զորքերով, բացի նրանցից, ովքեր անհրաժեշտ էին բերդերի պաշտպանության համար: (2) Կանչեց նաև Միլետը պաշարողներին ու պատվիրեց վտարանդիներին արշավել իր հետ, խոստանալով նրանց, որ եթե իր արշավանքի հետապնդած նպատակը բարեհաջող իրականանա, ապա չի դադարեցնի ռազմական գործողությունները, մինչև նրանց չվերադարձնի իրենց տուն: Նրանք հոծարությամբ ենթարկվեցին, և ևս որ հավատում էին նրան: Ուստի և զենքերը վերցնելով, ներկայացան Սարդես<sup>17</sup>:

(3) Այսպիսով, Քսենիասը, հավաքելով քաղաքների զորամասերը, մոտավորապես 3000 հոպլիտներով ժամանեց Սարդես: Պրոֆանեսոսը ներկայացավ, իր հետ բերելով մոտ 1500 հոպլիտ և 500 մերկ<sup>18</sup>. Սոփայնետոս ստյումփալացին՝ ևս 1000 հոպլիտ, իսկ Սոկրատես աֆայացին՝ մոտավորապես 500 հոպլիտ: Պասինոն մեգարացին նույնպես ժամանեց, բերելով 300 հոպլիտ և

300 պելտաստ<sup>19</sup>: Վերջին, ինչպես և Սոկրատեսը, Միլետը պաշարողների թվում էր: Ահա՛ նրանք, ովքեր Սարդեսում ներկայացան Կյուրոսին:

(4) Իր կողմից Տիսսափեոնեկը, այս բոլորի մասին տեղեկանալով և կռահելով, որ ռազմական այս պատրաստությունները ավելի մեծ են, քան անհրաժեշտ էր պիսիդիացիների դեմ արշավելու համար, հնարավորին շափ արագ սուրաց դեպի արևան 500 հեծյալի հետ միասին: (5) Ու երբ արևան լսեց Տիսսափեոնեկից Կյուրոսի սպառազինման մասին, ինքը նույնպես սկսեց պատրաստվել պատերազմի:

Կյուրոսն ասածս զորեերով նանապարհ ընկավ Սարդեսից և անցավ Կյուրիայի վրայով 3 կայան<sup>20</sup>՝ 22 փարսախ<sup>21</sup>, մինչև Մեանդրոս գետը: Մրա լայնքը երկու պլեթրոն է<sup>22</sup>. և այնտեղ կամուրջ կար յոթ նավի վրա կապած: (6) Անցնելով գետը, նա արշավեց Փոյուզիայի միջով մի կայան՝ ութ փարսախ նանապարհ, մինչև Կոլոսոսս, որը բազմամարդ, հարուստ ու խոշոր քաղաք էր: Այստեղ նա մնաց յոթ օր: Նրա մոտ ժամանեց Մեհոն թեսսալացի<sup>23</sup>, բերելով իր հետ 1000 հուպլիտ և 500 պելտաստ՝ ղուլպներ, էնիաններ և օլինթացիներ<sup>24</sup>: (7) Այստեղից առաջ ընթացավ երեկ կայան՝ 20 փարսախ, մինչև Կելենե, Փոյուզիայի բազմամարդ, խոշոր և հարուստ քաղաք: Այստեղ Կյուրոսն ապարանք ուներ և ընդարձակ պարտեզ, վայրի գազաններով լեցուն, որոնց ինքը որսում էր հեծյալ, ամեն անգամ, երբ ցանկանում էր մարզել իրեն և իր ձիերին: Պարտեզի միջով հոսում է Մեանդրոս գետը. իսկ նրա ափունքները ապարանքի ներսում էին: Գետը հոսում է նաև Կելենե քաղաքի միջով: (8) Կելենեում գտնվում է նաև մեծ արևայի<sup>25</sup> ամրացված ապարանք, միջնաբերդից ներքև՝ Մարսիաս գետի ափունքների մոտ: Սա նա անցնում է քաղաքի միջով ու քափվում Մեանդրոս գետը: Մարսիասի լայնքը՝ 25 ոտ է: Ինչպես պատմում են, այստեղ է Ապոլլոնը մորթագերծ արել Մարսիասին<sup>26</sup>, հաղթելով նրան երաժշտական մրցույթի մեջ և նրա մորթին կախել քարայրում, որտեղ և գետի ափունքն է: Այդ իսկ պատճառով գետը կոչվում է Մարսիաս: (9) Պատմում են, թե իբր Քսերքսեսը<sup>27</sup> Հելլադայում կրած պարտությունից հետո վերադառնալիս կառուցել է այս ապարանքը և Կելենեի միջնաբերդը: Կյուրոսը այստեղ մնաց 30 օր: Այստեղ էկավ նաև վտարանդի Կեարֆոս լակեդեմոնացին, բերելով 1000 հուպլիտ, 800 քրակիացի պելտաստ և 200 կրեոացի աղեղնավոր: Նույն ժամանակ ներկայացավ նաև Սոսիս սիրակուսացին 300 հուպլիտով և Սոփայնետոս արկադիացին 1000 հուպլիտով: Եվ այստեղ, պարտեզում, Կյուրոսը զորատես կազմակերպեց և հաշվեց հելլեններին: Ներկա էր 11 հազար հուպլիտ և 2000 պելտաստ:

(10) Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև



Դանեկան (դարեկոս)՝ արքունեկան շրջանի պարսկական դրամ



Հույն ծանրազնի գինվոր (հուպլիտ). հին հունական վազայից



Պելտե բազմամարդ ֆաղափր: Այստեղ երեք օր մնաց: Այս ընթացքում Քսենիաս արկադիացին զոհաբերություն կատարեց, կիկյան տոներ<sup>28</sup> և մրցումներ կազմակերպեց: Մրցումների պարգևները ոսկե Ֆերիչներ էին<sup>29</sup>: Մրցումները դիտում էր նաև Կյուրոսը: Այստեղից առաջ ընթացավ երկու կայան՝ 12 փարսախ, մինչև Կերամոն-ագորա<sup>30</sup> կոչված մարդաշատ ֆաղափր, որը գտնվում էր Մյուսիայի ծայր սահմանում: (11) Այստեղից առաջ է ընթանում երեք կայան՝ 30 փարսախ, մինչև Կավստրուպեդիոն մարդաշատ ֆաղափր: Այստեղ հինգ օր մնաց: Զինվորներին նա արդեն պարտ էր ավելի ֆան երեք ամսվա ոռնիկ և նրանք բազմիցս եկել էին նրա դուռը և պահանջել իրենց վարձը: Իսկ ինքը հուսադրելով նրանց, ետ էր ուղարկում և, քստ երևույթին, վշտացել էր, որովհետև նա սովոր չէր ունենալ ու շտալ: (12) Այստեղ Կյուրոսի մոտ եկավ Եպիֆան, Կիլիկիայի Սյունենեսիս թագավորի<sup>31</sup> կինը: Եվ ասում էին, թե նա Կյուրոսին շատ դրամ տվեց: Այնուհետև Կյուրոսը զորքին չորս ամսովա ոռնիկ վճարեց: Կիլիկոսին ուներ թիկնապահներ, բաղկացած կիլիկեցիներից և ասպենդացիներից: Նաև ասում էին, թե Կյուրոսը մտերմացավ կիլիկոսու հետ:

(13) Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև Քյումբրիոն մարդաշատ ֆաղափր: Այնտեղ, նանապարհին մոտիկ, աղբյուր կար, որը կրում էր Փոյուգիայի թագավոր Միդասի անունը: Պատմում են, թե այստեղ Միդասը բռնեց Սատիրոսին՝ աղբյուրի ջրին գինի խառնելիս<sup>32</sup>: (14) Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև Տյուրիայոն մարդաշատ ֆաղափր: Այստեղ նա մնաց երեք օր: Պատմում են, թե իբր կիլիկոսին խնդրել էր Կյուրոսին ցույց տալ իրեն զորքը: Այսպիսով, Կյուրոսը, ցանկանալով ցուցադրել նրան իր զորքը, դաշտավայրում հեյլեն և բարբարոս ռազմիկների զորատես կազմակերպեց: (15) Կարգադրեց հեյլեններին դասավորվել ու շարվել այնպես, ինչպես նրանց մոտ ընդունված էր նակատամարտի ժամանակ, ընդ որում յուրաքանչյուր հեամանատար պետ է զլխավորեք իր զորագունդը: Նրանք դասավորվեցին չորս կազով: Աչք բևուռ Մենոնն էր իր զորականներով, ձախում՝ Կեարեսոսը իր մարդկանց հետ, իսկ կենտրոնում՝ մյուս զորահրամանատարները: (16) Կյուրոսը նախ բարբարոսների ստուգատես կատարեց: Մեանք անցնում էին քստ ջոկատների<sup>33</sup> և գեղերի: Այնուհետև դիտեց հեյլեններին, կառնով անցնելով նրանց շարքերի առջևով, իսկ կիլիկոսին անցնում էր ծածկած սալակառնով: Հեյլեններից յուրաքանչյուրի գրլխին պղնձե սաղավարտ կար, հագին՝ ծիրանի խիտոն և կենմիսներ<sup>34</sup>, իսկ վահանները հանել էին պատյաններից: (17) Ու երբ բոլորի առաջով անցավ, իր կառքը կանգնեցնելով ֆալանգսի մեջտեղը, քարզման Պիգրեսին սղար-

կեց հեղինակների գորավարների մոտ և հրամայեց գեներալ մերկացնել ու ամբողջ ֆալանգսով նետվել հարձակման: Նրանք հրամանը հաղորդեցին զինվորներին: Եվ ահա շեփորի ազդանշանով հեղինակները մերկացրին գեներալ և առաջ նետվեցին: Այնուհետև աղաղակելով սկսեցին ավելի ու ավելի արագ քայլել, այնպես, որ քայլեր ինքնաբերաբար վերածվեց զինվորների վագֆի՝ դեպի վրանները: (18) Այս բոլորից բարբարոսները խիստ սարսափեցին. կիլիկոնին փախավ իր ծածկած սայլակառով, իսկ շուկայում գտնվողները, լինելով իրենց ապրանքը, քաֆնվեցին<sup>35</sup>: Մինչդեռ հեղինակները ծիծաղով վերադարձան իրենց վրանները: Կիլիկոնին հիացավ, տեսնելով գործի շեղորջույնը և կարգ ու կանոնը, իսկ Կյուրոսը հանդիմանում էր, տեսնելով հույների տեսիլից բարբարոսներին համակած սարսափը:

(19) Այստեղից առաջ ընթացավ երեք կայան՝ 20 փարսախ, մինչև Իկոնիոն, Փոյուզիայի վերջին սահմանային ֆաղաֆը: Այստեղ երեք օր մնաց: Այստեղից առաջ ընթացավ Կիլիկոնիայի միջով հինգ կայան՝ 30 փարսախ: Նա բույլատրեց հեղինակներին ասպատակել այս երկիրը որպես թշնամակահ<sup>36</sup>:

(20) Այստեղից Կյուրոսը կիլիկոնիոն ուղևորեց Կիլիկիա ամենակարճ նահապարհով. նրա հետ միասին ուղևորեց նաև Մենոնին՝ իր զինվորներով: Իսկ Կյուրոսը մնացածների հետ առաջացավ Կապպադոկիայի միջով չորս կայան՝ 25 փարսախ, մինչև Դանա մարդաշատ, խոշոր և բարձրավան ֆաղաֆը: Այստեղ երեք օր մնաց: Այս ընթացքում Կյուրոսը սպանեց պարսիկ Մեգափեռեսին, արհուրի ծիրանակրին<sup>37</sup>, և իրեն ենթակա իշխանավորներից մեկ ուրիշին, մեղադրելով նրանց իր դեմ դավադրություն կազմակերպելու մեջ:

(21) Այստեղից նրանք փորձեցին ներխուժել Կիլիկիա: Մուտք մի կառուղի էր սոսկ, խիստ գաղիքափ և գործի համար անանց, և քե որևէ մեկը խանգարեր: Ասում էին, թե Սյունենեսիսը բարձունքների վրա է և պահպանում է իր երկրի մուտքը. այդ իսկ պատճառով Կյուրոսը ամբողջ օրը մնաց հարթավայրում: Հաջորդ օրը լրաբեր ժամանեց հայտնելով, որ Սյունենեսիսը լինել է բարձունքները, իմանալով, որ Մենոնի գորախումբը արդեն Կիլիկիայում, լեռների այն կողմն է, ինչպես նաև լսելով, թե Հոնիայից Կիլիկիա է նավում Տամուր լակեդեմոնական ու իր իսկ Կյուրոսի տրիերաներով<sup>38</sup>: (22) Այսպիսով, Կյուրոսը բարձրացավ լեռները առանց որևէ մեկի դիմադրության և տեսավ վրանները այնտեղ, ուր նախապես պահապան էին կանգնել կիլիկեցիները: Այստեղից Կյուրոսը իջավ ընդարձակ ու գեղեցիկ, լավ սողովող ու բազմապիսի ծառերով և խաղողի այգիներով ծածկված մի հարթավայր: Հարթավայրը տալիս է առատ հունջուր, հնդկացորեն, ցորեն ու գարի: Բոլոր կողմերից, ծովից ծով, այն շրջափակված է անմատույց և բարձր լեռներով: (23)

Կյուրոսը լեռներից իջավ ու այս հարթավայրով առաջ շարժվեց չորս կայան՝ 45 փարսախ, մինչև Տարսոն, Կիլիկիայի խոշոր ու բարձրավան ֆաղաֆը, որտեղ գտնվում էր Կիլիկիայի բազավոր Սյունենեսիսի ապարանը: Քաղաֆի միջով հոսում է Կյուրոս կոչվող գետը, որի լայնքը երկու պլեթրոն է: (24) Ռեակիչները, բացի զինվորների տերերից, լինել էին ֆաղաֆը և Սյունենեսիսի հետ ապաստանել լեռներում գտնվող անմատուցելի մի վայրում: Տեղում էին մնացել նաև Սոլի և Իսոսո<sup>39</sup> ծովափնյա ֆաղաֆների բնակիչները:

(25) Եպիստամոն, Սյունենեսիսի կինը, Տարսոն հասավ Կյուրոսից հինգ օր շուտ, բայց լեռներով դեպի հարթավայրը իջնելիս, ոչնչացան Մենոնի գործախից երկու լոֆոս<sup>40</sup>: Ոմանք պատմում էին, թե սրանք կոտորվեցին կիլիկեցիների կողմից՝ ինչ-որ քալան անելիս. իսկ ուրիշները՝ թե իբր ետ էին մնացել յուրայիններից ու շկարողանալով գտնել ոչ մնացած գործը, ոչ էլ նախապարհը, մոլորվել էին ու կորել: Նրանք ընդամենը 100 հուպիս էին: (26) Մնացյալը Տարսոն հասնելով, իրենց զորակիցների կորստից գագազած, և՛ ֆաղաֆը, և՛ նրանում գտնվող ապարանը կողոպտեցին: Երբ Կյուրոսը մտավ ֆաղաֆ, լրաբեր ուղարկեց պահանջելով, որ Սյունենեսիսը ներկայանա իրեն: Սա պատասխանեց, որ ոչ նախկինում է որևէ անգամ իրենից հզորի ձեռքը հանձնվել, ոչ ևս հիմա է ցանկանում գնալ Կյուրոսի մոտ. սակայն կինը նրան համոզեց և նա հավատարմությամբ երաշխիք ստացավ: (27) Այս բոլորից հետո, երբ նրանք հանդիպեցին իրար, Սյունենեսիսը շատ դրամ տվեց Կյուրոսին՝ նրա գործի համար, իսկ Կյուրոսը նրան այնպիսի ընծաներ պարգևեց, որոնք համարվում են արհայի կողմից տրված պատիվ. այն է՝ ոսկեսանձ ձի, ոսկե մանյակ, ապարանջան, ոսկե ակիճակե<sup>41</sup> և պարսկական տարազ<sup>42</sup>, ու խոստացավ այսուհետև երկիրը շկողոպտել: Իսկ հափշտակված գերիներին, եթե որևէ տեղ հայտնաբերվեն, վերադարձնել<sup>43</sup>:

III. Կյուրոսը և նրա բանակը այստեղ ֆան օր մնացին. որովհետև զինվորները ասում էին, թե այլևս առաջ չեն գնա: Նրանք արդեն կասկածում էին, թե արշավում են արհայի դեմ, իսկ իրենք, ինչպես ասացին, այդ նպատակով չէր, որ վարձվել էին: Առաջինը Կլեարհոսն էր, որ ստիպում էր զինվորներին գնալ առաջ: Բայց երբ նա փորձեց առաջ շարժվել, զինվորներն սկսեցին ֆարկոծել նրան և գումակայիններին: (2) Կլեարհոսը հագիվ կարողացավ ֆարկոծվելուց փրկվել և հետո, համոզվելով, որ ի վիճակի չէ ստիպել, իր զինվորներին հավաքեց ժողովի: Ակզբում նա երկար կանգնած մնաց ու արտասվեց, մինչդեռ զինվորները զարմանում էին և լուում: Այնուհետև նա խոսեց այսպես.

(3) «Արհ զինվորներ՝ Մի գարմանա՛ք, որ ծանր եմ տանում ստեղծված

դրությունը: Քանն այն է, որ Կյուրոսի հետ ևս մտերմացել էմ հյուրընկալության առիթով. երբ ևս փախած էի հայրենիքից. նա ինձ պատվելուց բացի 10 հազար դահեկան տվեց: Այդ բոլոր ստանալով, ևս ինձ համար չպահեցի, ոչ իսկ մսիեցի զվարճանալու համար, այլ ծախսեցի ձեզ վրա: (4) Նախ, ուրեմն, պատերազմ մղեցի քրակիացիների դեմ, որով, հանուն Հելլադայի, ձեզ հետ միասին պատժում էինք նրանց, էջելով Քերսոնեսից, քանի որ նրանք ցանկանում էին այնտեղ ապրող հույներին զրկել հողից: Իսկ երբ Կյուրոսն ինձ հրավիրեց, ձեզ վերցնելով ճանապարհ ընկա. որպեսզի, եթե նա որևէ բանի կարիք է զգում, օգնեմ նրան ի հատուցումն այն բոլորի, որ նա արել էր ինձ համար: (5) Քայց քանի որ դուք չեք ցանկանում նրա հետ արշավել, ուստի ես պետք է կամ դավանանելով ձեզ շարունակեմ վայելել Կյուրոսի բարեկամությունը, կամ նրան խաբելով ձեզ հետ մնամ: Զգիտեմ, արդա՞ր եմ վարվում թե ոչ, բայց ես գերադասում եմ ձեզ, և ձեզ հետ կլրեմ ամեն մի փորձություն: Ու երբեք ոչ ոք ինձ չի մեղադրի, թե ես հելլեններին բերելով բարբառաների մոտ, դավանանեցի. գերադասելով բարբառաների բարեկամությունը: (6) Քայց քանի որ դուք չեք կամենում ինձ ենթարկվել, ապա ես կհետևեմ ձեզ և կլրեմ ձեզ հետ ամեն մի փորձություն: Որովհետև ես համոզված եմ, թե դուք ինձ համար և՛ հայրենիք եք, և՛ բարեկամ, և՛ դաշնակից. ու եթե ձեզ հետ մնամ, ապա ես ամեն տեղ պատվի կարծանանամ. իսկ ձեզանից զրկվելով, ես ի վիճակի չեմ լինի ո՛չ բարեկամներես օգտակար լինել, ո՛չ իսկ թշնամուն դիմագրավել: Ուստի համոզված եղեք, որ ուր էլ գնաք, ես կլինեմ ձեզ հետ»:

(7) Այսպես խոսեց. իսկ զինվորները, և՛ իր, և՛ մյուսները, լսելով նրա խոսքերը, որ իբր չի արշավելու արժալի դեմ, հավանեցին: Քսենիասի և Պասիոնի ավելի քան երկու հազար զինվոր, վերցնելով իրենց զենքն ու գումակը, բանակեցին Կլեարխոսի մոտ: (8) Այս ամենի հետևանքով Կյուրոսը, վարանած ու վշտացած, Կլեարխոսին կանչեց իր մոտ: Սա մերժեց գնալ, բայց զինվորներից գաղտնի բանրեք ուղարկեց նրա մոտ, ասելով, որ շանհանգստանա, որովհետև ամեն ինչ կդասավորվի ինչպես հարկն է: Նա պատվիրեց Կյուրոսին իր ետևից մարդ ուղարկել. իսկ ինքը, ասաց՝ չի գա:

(9) Այնուհետև հավաքելով իր սեփական զինվորներին, ինչպես նաև իր կողմն անցածներին և մյուսներից՝ ամեն ցանկացողին, խոսեց այսպես. «Արք զինվորներ: Պարզ է, որ Կյուրոսի դրությունը մեր նկատմամբ այնպիսին է, ինչպիսին մեր դրությունն է նրա նկատմամբ: Արդեն մենք նրա զինվորները չենք, քանի որ այլևս չենք հետևում նրան, իսկ ինքն էլ այսուհետև մեր վարձատունն չէ: (10) Նա գիտեմ, որ նա իրեն մեր կողմից վիրավորված

է համարում. այդ իսկ պատճառով, թևակոտ նա ինձ հրավիրեց, բայց ևս չեմ կամենում գնալ նրա մոտ, հատկապես ամոթի զգացումից. որովհետև զիտացում եմ, որ ամեն ինչում խաբեցի նրան. միաժամանակ վախենում եմ, որ նա կարող է ինձ բռնելով պատժել իրեն հասցված վիրավորանքի համար: (11) Ուստի թվում է ինձ, որ այժմ ժամանակը չէ, որ մենք մենք ու անհոգ մնանք մեր գործերի նկատմամբ: Անհրաժեշտ է խորհրդակցել այս բոլորից հետո մեր անելիքի մասին: Ինձ թվում է, որ քանի դեռ այստեղ ենք մնում, պետք է մտածենք մեր առավելագույն ապահովության մասին: Իսկ եթե որոշենք վերադառնալ, ապա մտածենք առավել ապահովությամբ, անհրաժեշտ պարենով մեկնելու մասին, քանի որ առանց դրան ոչ մի օգուտ չկա ոչ գորահրամանատարից, ոչ էլ զինվորից: (12) Իսկ Կյուրոսը անգնահատելի այր է բարեկամ լինելու դեպքում և շատ ահավոր հակառակորդ՝ թշնամի լինելու դեպքում, քանի որ նա զինված ուժեր ունի՝ և՛ հետևակ, և՛ հեծյալ, և՛ ծովային: Այդ մենք բոլորս տեսնում ենք և գիտենք, որովհետև մենք, կարծեմ, նրանից հեռու չենք իջևանել: Ուստի և ժամանակն է, որ ձեզանից ամեն մեկը արտահայտի իր կարծիքը մեր լավագույն անելիքի մասին»: Այս խոսքերով նա վերջացրեց:

(13) Այնուհետև սկսեցին արտահայտվել, ոմանք ինքնաբերաբար, ասելով այն, ինչ մտածում էին, իսկ ուրիշները Կլեարխոսի թելադրանքով: Մրանք մատնանշում էին այն դժվարությունները, որոնց կմատնվեին իրենք առանց Կյուրոսի համաձայնության. թե՛ մնալու, թե՛ հեռանալու դեպքում: (14) Արտահայտվողներից մեկը, ձևացնելով, թե իբր շտապում է հնարավորին շուտ շուտ վերադառնալ Հելլադա, նույնիսկ առաջարկեց անհապաղ ընտրել նոր զորավարներ, եթե Կլեարխոսը չի ցանկանում իրենց ետ տանել: Իսկ մյթերքը նա առաջարկեց գնել—շուկան բարբառաների նամբարում էր—ու պատրաստվել մեկնելու: Այնուհետև գնալով Կյուրոսի մոտ, նրանից նավեր խնդրել ծովով վերադառնալու համար: Եթե նա շտա. ապա Կյուրոսից ուղեցույց առաջնորդ ուզել, որը իրենց կանցկացնի բարեկամ երկրի միջով: Իսկ եթե Կյուրոսը հրաժարվի առաջնորդ տրամադրել, այդ դեպքում շուտափույթ զինավառվել և շուտա փոխվել առաջ. լեռնակառուները գրավելու համար, որպեսզի մեզ չկանխեն ոչ Կյուրոսը և ոչ կիլիկեցիները, որոնցից շատ մարդ և դրամ ենք հափշտակել: Այսպես խոսեց նա:

(15) Նրանից հետո Կլեարխոսը այսֆան խոսեց միայն. «Ձեզանից ոչ ոք թող չասի, թե ես ձեր գորահրամանատարը կլինեմ այս արշավանքում. քանի որ շատ պատճառներ եմ տեսնում, որոնց համար ես չեմ կարող այդ անել: Քայց այն մարդուն, ում դուք կընտրեք, ես կհնազանդվեմ ըստ կարելիության



առավել, որպեսզի համոզվեմ, թե ենթարկվել զիտեմ ոչ պակաս, քան որևէ մեկ ուրիշ մարդ»: (16) Նրանից հետո վեր կացավ մեկ ուրիշը և մատնանշեց միամտությունը նրա, ով խորհուրդ էր տալիս նավեր խնդրել, կարծես թե ինքը Կյուրոսն էլ է վերադառնում. նա մատնանշեց նաև, թե «միամտություն կլինե՞ր ուղեցույց խնդրել այն մարդուց, որի ձեռնարկումը ձախողում էն: Եթե նույնիսկ մենք հոժարենք վստահել այն ուղեցույցին, որին Կյուրոսը մեզ կտրամադրե՞ր, ապա ի՞նչը կխանգարե՞ր Կյուրոսին հրամայելու, որ մեզ կանխեն ու գրավեն բարձունքները: (17) Ես ինքս չեի ցանկանա նրա տրամադրած նավերը նստել, վախենալով, որ մեզ տրիերաների հետ միասին ծովամույն կանի. ես կվախենայի նույնպես հետևել նրա տված ուղեցույցին, չլինի թե մեզ տանի այնպիսի վայր, որտեղից հնարավոր չլինի դուրս գալ: Ես կուզեի, եթե Կյուրոսի կամֆին հակառակ էնք գնալու, մեկնել նրանից գաղտնի. իսկ այդ բանը անհնարին է: (18) Բայց այս ամենը, իմ կարծիքով, շաղակրատանք է: Ըստ իս, պետք է Կյուրոսի մոտ այս գործին հարմար մարդիկ ուղարկեն՝ Կլեարխոսի հետ միասին, հարցնելու նրան, թե ի՞նչ բանի համար է մեզ օգտագործելու. և եթե նրա այս ձեռնարկումը նման է նրա նախորդ ձեռնարկումներին, որոնց համար նույնպես նա օգտագործում էր վարձկաններին, ապա մենք ևս հետևենք նրան և չլինենք ավելի վատթար նախկինում նրա հետ արշավածներից: (19) Իսկ եթե պարզվի, որ ներկա ձեռնարկումը նախորդից խոշոր է և ավելի տանջալից ու վտանգավոր, ապա պահանջենք նրանից, որ կամ մեզ համոզելով տանի իր հետ, կամ ինքը համոզվելով, բարեկամաբար մեզ բաց թողնի: Այսպիսով, եթե հետևենք Կյուրոսին, մենք կամովին կգնանք նրա հետ իբրև բարեկամներ, իսկ նրանից հեռանալու դեպքում՝ ապահով կմեկնենք: Կյուրոսի պատասխանը թող այստեղ հրապարակվի, իսկ մենք այն լսելուց հետո խորհուրդ կանենք»:

(20) Այդպես էլ որոշվեց. և մարդկանց ընտրելով, Կլեարխոսի հետ միասին ուղարկեցին Կյուրոսի մոտ. նրանք գործի որոշման համաձայն հարցրին Կյուրոսին: Սա պատասխանեց, որ լսել է. թե իր թշնամի Աբրոկոմասը գրտնըրվում է նփրատ գետի մոտ, 12 կայան հեռավորության վրա: Ասաց, որ իբրև պատակ ունի նրա դեմ արշավելու: Եվ երև նա այնտեղ լինի, ապա նրան անհրաժեշտ պատիժը կտա, իսկ եթե, ասաց, նա փախչի, ապա մենք այդ մասին կխորհրդակցենք տեղում: (21) Այս ամենը լսելով, պատգամավորները հաղորդեցին զինվորներին: Սրանք, կասկածելով հանդերձ, որ Կյուրոսն իրենց տանում է արձախի դեմ, որոշեցին հետևել նրան և միաժամանակ ավելի բարձր վարձ պահանջեցին: Կյուրոսը խոստացավ բոլորին վճարել մեկ և կես անգամ ավելի, քան առաջ, այսինքն՝ ամիսը մեկ դահեկանի փոխարեն երեք

կես դահեկան յուրաքանչյուր զինվորին: Իսկ թե նրանց տանում էր արձախի դեմ, այդ ժամանակ էլ ոչ ոք այստեղ չլսեց, համենայն դեպս՝ բացահայտ կերպով:

IV. Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև Փասրոս գետը, որի լայնքը երեք պլեթրոն էր: Այստեղից առաջ է ընթանում մեկ կայան՝ հինգ փարսախ, մինչև Պյուրամոս գետը, որի լայնքը մեկ ասպարեզ էր<sup>44</sup>: Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 15 փարսախ, մինչև Իսոսոս, Կիլիկիայի ամենածայրամասային ֆաղաքը, որը մարդաշատ էր, խոշոր և բարգավաճ: (2) Այստեղ երեք օր մնացին: Եվ Կյուրոսի մոտ ժամանեցին Պելոպոննեսից 35 նավեր, նավարխոս<sup>45</sup> Պյուրագորաս լակեդեմոնացու հրամանատարությամբ: Եփեսոսից այս կողմ նրանց առաջնորդում էր Տամոս եգիպտացին, իր հետ ունենալով նաև Կյուրոսի այն 25 նավերը, որոնցով պաշարել էր Միլետը, երբ այդ ֆաղաքը դեռևս Տիսսափեոնեսի կողմնակիցն էր, իսկ ինքը՝ Կյուրոսի դաշնակիցը: (3) Կյուրոսի կարգադրությամբ այդ նավերով ներկայացավ նաև Խեյրիսոփոս լակեդեմոնացին, իր հետ բերելով 700 հուպլիտների, որոնց հրամանատարն էր նա Կյուրոսի մոտ ծառայելու ժամանակ<sup>46</sup>: Նավերը խարխիս ձգեցին Կյուրոսի վրանի դիմաց: Այստեղ էլ Աբրոկոմասի մոտից հեղին վարձկանները՝ 400 հուպլիտ, փախչելով եկան Կյուրոսի մոտ և միացան նրա արշավանքին արձախի դեմ:

(4) Այստեղից նա առաջ է ընթանում մի կայան՝ հինգ փարսախ, դեպի Կիլիկիայի և Սիրիայի միջև գտնվող դարբասը<sup>47</sup>: Այս դարբասը բաղկացած էր երկու պարսպից, որոնցից մեկը՝ ներքինը, Կիլիկիայի կողմում էր և գտնվում էր Սյունենեսիսի ու Կիլիկիայի կայագործի ձեռքին, իսկ մյուսը՝ արտաքինը, Սիրիայի կողմում և, ասում էին, թե այն պաշտպանում է արձախի կայագործը: Այս երկուսի միջև գետ է հոսում, որը կոչվում է Կարսոս, մեկ պլեթրոն լայնքով: Պարսպների միջև եղած ամբողջ տարածությունը երեք ասպարեզ է: Այնտեղից բռնի անցնելը հնարավոր չէ, քանի որ անցումը նեղ է և պարիսպները մինչև ծով են հասնում, իսկ նրանցից վերև բարձրաբերձ ժայռեր են և երկու պարիսպների վրա էլ աշտարակներ են բարձրանում: (5) Այս անցման պատճառով էր հենց, որ Կյուրոսը նավեր կանչեց, որպեսզի հուպլիտներին սպի հանի դարբասի ներքին և արտաքին կողմերում, դուրս մղելու համար թշնամիներին, եթե նրանք պահպանում էին սիրիական դարբասը. իսկ Կյուրոսը ենթադրում էր, որ Աբրոկոմասը, շատ զորք ունենալով, հենց այդպես էլ կանի: Բայց Աբրոկոմասը այդ բանը չարեց, այլ, լսելով, որ Կյուրոսը արդեն Կիլիկիայում է, Փյունիկիայից ետ վերադարձավ<sup>48</sup> ու մեկնեց արձախի մոտ, տանելով իր հետ, ինչպես ասում էին, 30 բյուր զորք:

(6) Այստեղից կյուրոսը առաջ է շարժվում Սիրիայի միջով մեկ կայան՝ հինգ փարսախ, մինչև փյունիկեցիներով բնակեցված Մյուրիանդոս ծովափնյա հողաբնակավայր։ Դա առևտրական վայր էր, որտեղ խարսխել էին բազմաթիվ բնականավեր։ (7) Այստեղ նա յոր օր մնաց։ Քսենիաս արկադիացին ու Պասիոն մեգարացին նավ նստելով և իրենց թանկարժեք իրերը բարձելով մեկնեցին։ Ինչպես շատերը ենթադրում էին, նրանք այդպես վարվեցին, իրենց վիրավորված զգալով այն բանի համար, որ իրենց զինվորներին, որոնք կլեարհասի մոտ էին անցել Հելլադա վերադառնալու, և ոչ թե արքայի դեմ արշավելու միտումով, կյուրոսը թույլ տվեց մնալ կլեարհասի հետ։ Երբ նրանք տեսադաշտից անհետացան, լուր տարածվեց, թե կյուրոսը հետապնդում է նրանց իր տրիերաներով։ Ոմանք մաղթում էին, որ նրանց, իբրև երկչոտների, բռնեին. իսկ մյուսները կարեկցում էին նրանց հավանական գերեզմանաբան համար։

(8) Իսկ կյուրոսը ժողովի կանչելով գորահրամանատարներին, ասաց. «Քսենիասը և Պասիոնը մեզ լիեցին։ Բայց թող նրանք լավ իմանան, որ նրանք ինձանից չեն խույս տվել, քանի որ ինձ հաջ հայտնի է, թե նրանք ի՞նչ ուղղությամբ շվեցին. նրանք չեն կարող ինձանից խուսափել, որովհետև ես տրիերաներ ունեմ, որոնք կարող են բռնել նրանց նավը։ Բայց աստվածները թող զվա լինեն, որ ես նրանց չեմ հետապնդի և ոչ ոք չի սպի, թե ես իբր օգտվում եմ մարդուց, քանի դեռ նա ինձ մոտ է, իսկ եթե նա ցանկանա մեկնել, ապա ձերբակալում եմ նրան, չարիք հասցնում և նրա ունեցվածքը խլում։ Ուստի թող գնան, իմանալով, որ նրանք մեզ հետ ավելի վատ վարվեցին, քան մենք նրանց հետ։ Թեկուզև նրանց որդիներն ու կանայք իմ ձեռքում են և պահվում են Տրալլեսում<sup>49</sup>, այնուամենայնիվ դրանցից չեն զրկվելու. դրանց կլեարարանեն, հանուն իմ նկատմամբ նրանց ունեցած նախկին ծառայությունների»։ (9) Նա այսպես խոսեց։ Իսկ հելլենները, եթե նույնիսկ մեկը անբարյացակամ էր արշավանքի հանդեպ, լսելով կյուրոսի մեծահոգության մասին, հանույժով և առավել հոծարությամբ հետևեց նրան։

Այս բոլորից հետո կյուրոսը առաջ ընթացավ շուրս կայան՝ քսան փարսախ, մինչև հալոս գետը, մի պլեթրոն լայնքով, հարուստ խոշոր և ազնիվ ձրկներով, որոնց սիրիացիները աստվածներ են համարում և թույլ չեն տալիս ոչ ունեցանել դրանց, ինչպես և աղավնիներին<sup>50</sup>։ Գյուղերը, որոնցում նրանք բանակել էին, շնորհված էին Պարիսատիսին՝ գառու համար<sup>51</sup>։ (10) Այստեղից կյուրոսը առաջ է ընթանում հինգ կայան՝ 30 փարսախ, մինչև Դարդաս գետի ակունքները, որի լայնքը մեկ պլեթրոն է։ Այստեղ էր գտնվում Սիրիայի տիրակալ Բելեսիսի պալատը և շատ ընդարձակ ու գեղեցիկ պարտեզը, որը տարվա

բոլոր եղանակներին ծաղկուն է։ կյուրոսը կտրատեց պարտեզը և հրկիզեց պալատը։ (11) Այստեղից առաջ է շարժվում երեք կայան՝ 15 փարսախ, մինչև Եփրատ գետը, որի լայնքը շուրս ասպարեզ է։ Այստեղ ևս կար խոշոր և բարգավան հողաբնակավայր, Թափսակոս անունով։ Այստեղ հինգ օր մնաց։ կյուրոսը ժողովի հրավիրելով հելլենների գորավարներին, հայտարարեց, որ իրենց արշավանքի ուղին կլինի մեծ արքայի դեմ, դեպի Բաբելոն<sup>52</sup>։ Եվ կարգադրեց նրանց այդ հաղորդել զինվորներին ու համոզել նրանց հետևել իրեն։ (12) Զորավարները համաձայնով գումարելով այս ամենը հրապարակեցին։ Իսկ զինվորները վրդովմունք հայտնեցին գորավարներին և մեղադրեցին, թե նրանք վաղուց են իմացել այդ ամենի մասին, բայց թաքցրել են. հայտարարեցին, որ առաջ չեն գնալու, եթե իրենց այնքան չվճարեն, որքան նրանց, ովքեր կյուրոսի հետ արշավել էին երկրի խորքը, կյուրոսի հոր մոտ գնալու համար<sup>53</sup>, մանավանդ. որ նրանք արշավել են ոչ թե պատերազմելու նպատակով, այլ կյուրոսի հոր հրավերով։ (13) Այս ամենը գորավարները հաղորդեցին կյուրոսին։ Իսկ սա խոստացավ յուրաքանչյուր զինվորին տալ հինգ արծաթ մնա<sup>54</sup>, հենց որ իրենք Բաբելոն հասնեն և ոռնիկն իսկ լրիվ վճարել ընդհուպ մինչև հելլեններին վերստին Հոնիա բերելը։ Այսպիսով, հելլենական զորքի մեծ մասը համաձայնվեց առաջ գնալ։


Իսկ Մենոնը, քանի դեռ պարզ չէր, թե ինչպես կվարվեն մնացած զինվորները, կհետևե՞ն արդյոք կյուրոսին, թե՞ ոչ. հավաքեց իր գորամասը մյուսներից անջատ և այսպես խոսեց. (14) «Արք զինվորներ. եթե լսեք իմ խորհուրդը, ապա առանց վտանգվելու և առանց մյուսներից ավելի աշխատանք թափելու, կյուրոսի աչքում նախապատվություն ձեռք կբերեք։ Ի՞նչ եմ խորհուրդ տալիս անել։ Այժմ կյուրոսին անհրաժեշտ է, որ հելլենները հետևեն իրեն արքայի դեմ։ Ուստի ես պատվիրում եմ ձեզ Եփրատն անցնել նախքան հայտնի կլինի մնացած հելլենների պատասխանը կյուրոսին։ (15) Եթե նրանք որոշեն հետևել, ապա կրվա, թե դուք, առաջինը սկսելով գետն անցնել, եղել եք այդպիսի որոշման պատճառը. և կյուրոսը ձեզ շնորհապարտ կլինի, տեսնելով ձեր հոծարությունը. իսկ նա գիտե երախտապարտ լինել, որքան մեկ ուրիշը։ Իսկ եթե մյուսները մերժեն կյուրոսի առաջարկը, այնժամ բոլորս միասին ետ կվերադառնանք, իսկ ձեզ, որպես միակ հավատարիմների, կյուրոսը կօգտագործի ոչ միայն իբրև կայազորայինների, այլև կդարձնի լուրացներ<sup>55</sup>, և ընդհանրապես, ինչ որ նրանից խնդրեք, ես համոզված եմ, որ դուք, իբրև ընկերներ, կստանաք նրանից»։ (16) Այս լսելով զինվորները համոզվեցին և գետն անցան նախ քան մյուսները կպատասխանեին։ Իսկ կյուրոսը երբ լսեց, թե զորքը անցել է, ուրախացավ և նրանց մոտ ուղարկեց Գլուսին<sup>56</sup>,

ասելով. «Այժմ ես, ո՛վ գինվորներ, գովում եմ ձեզ. իսկ որպեսզի դուրս ես ինձ գովեմ, այդ մասին կհոգամ. հակառակ դեպքում ինձ կյուրառս չկոչեմ»: (17) Զինվորները մեծ հույսերով տարված, նրան բաերբախտություն էին մատուցում. իսկ Մեհնդին, ինչպես պատմում են, մեծաշուք նվերներ ուղարկեց: Այսպես անելով, նա սկսեց անցնել գետը, իսկ մնացած ամբողջ գործը հետևում էր նրան: Գետն անցնելիս և ոչ մեկը չբռնեց կրծքից վերև: (18) Քափասակոսի բնակիչները ասում էին, որ իբր այս գետը երբեք հետփոսն անցանելի չի եղել, բացի ավյալ դեպքից. այն անցնում էին նավերով, որոնք Աբրոկոմասը առաջ ընթանալիս այրել էր, որպեսզի կյուրոսը չկարողանա անցնել: Նրանց թվաց աստվածային նշան, որ գետը նահանջեց կյուրոսի առաջ, ապացույց այն բանի, որ նա պետք է թագավորի:

(19) Այստեղից առաջ է ընթանում Սիրիայի միջով 9 կայան՝ 50 փարսախ. և հասնում են Արաֆես գետը<sup>57</sup>: Այստեղ շատ գյուղեր կային, առատ ջուրներով ու գինիով: Այստեղ նրանք մնացին երեք օր և պաշար վերցրին:

V. Այստեղից առաջ է ընթանում Արաֆայի միջով<sup>58</sup>, Եփրատ գետը ունենալով աչ կողմում, հինգ կայան՝ 35 փարսախ անապատ երկրներով: Այստեղ դաշտավայր է, ամբողջապես հարթ, ծովի նման, ծածկված օշինդրով. եթե իսկ պատահում էր որևէ այլ բուսականություն, թփեր կամ եղեգնուտ, ամեն ինչ անուշաբույր էր օժանելիքի նման: (2) Այստեղ ոչ մի ծառ չկա, իսկ գազանները բազմապիսի են՝ մեծ թվով վայրի էջեր, բազմաթիվ ու խոշոր ջայլամներ. կային նաև խոշոր արոսներ և վիթեր: Հեծյալները երբեմն ընկնում էին այս գազանների ետևից: էջերը, եթե նրանց հալածում էին, առաջ էին վազում ու կանգնում, քանի որ շատ ավելի արագավազ էին, քան ձիերը: Իսկ երբ ձիերը մոտենում էին նրանց, նրանք նորից նույնն էին կրկնում, այնպես որ հնարավոր չէր որսալ, բայց միայն այն դեպքում, եթե հեծյալները կանգնում էին տարբեր տեղեր և նրանց հալածում հերթականությամբ: Բրոնդված էջերի միսը նման էր եղնիկի մսի, բայց ավելի փափուկ էր: (3) Զայլամներից ոչ մի հատ չկարողացան որսալ: Դրանց հալածող հեծյալները ջուտով դադարեցրին հետապնդումը, քանի որ փախչելիս նրանք շատ էին կտրվում, վազելիս օգտագործելով ռոտները, իսկ քեները թափահարում էին առագաստի նման: Արոսներին հնարավոր էր լինում բռնել, եթե հանկարծակի վրա հասնեին, քանի որ նրանք թռչում են կարճ տարածության վրա և շուտ հոգնում. իսկ նրանց միսը շատ է համեղ:

(4) Առաջանալով այս երկրի միջով, հասան Մասկաս գետը, որի լայնքը մեկ պլեթրոն էր: Այստեղ կար ամայի, խոշոր մի քաղաք, Կորստե կոչված. այս քաղաքի շուրջը հոսում էր Մասկաս գետը: Այստեղ մնացին երեք օր և



Պարսիկ հեծյալի արձանիկ (V դ. մ. թ. ա.)



Աքեմենյան արքան (Դարեն I-ը) և իր շրջապատը. բարձրաքանդակ Պերսեպոլիսից



պարենավորվեցին: Այստեղից առաջ ընթացավ 13 կայան՝ 90 փարսախ, անապատ երկրներով, Եփրատ գետը աչ կողմում թողած, և հասավ Պյուլե<sup>59</sup>: Այս կայաններում լծկաններից շատերը կոտորվեցին սովից. քանի որ ոչ խոտ կար և ոչ որևէ ուրիշ բույս, այլ ամբողջ երկիրը մերկ էր: Իսկ տեղի բնակիչները գետի մոտ աղուրիֆի ֆարե ևն հանում և դրանք մշակելով, տանում ֆարելուն, այնտեղ վաճառում, փոխարենը հաց գնում և դրանով ապրում: (6) Ինչ վերաբերում է զինվորներին, ապա նրանց հացը ևս սպառվեց, իսկ այն հնարավոր չէր գնել այլ տեղ, քան միայն լյուդիական շուկայում<sup>60</sup>, Կյուրոսի բարբարոսական զորքի մեջ, մեկ կապիթե ցորենի կամ գարու ալյուր՝ չորս սիկլ: Սիկլը հավասար է ատտիկյան յոթ և կես օբոլայի, իսկ կապիթեն տանում է ատտիկյան երկու ֆոյնիկս<sup>61</sup>: Ուստի և զինվորները ապրում էին միս ուտելով: (7) Այս անցումներից մի ֆանիսը Կյուրոսը շատ ձգում էր, հատկապես այն դեպքում, երբ ցանկանում էր հասնել չրի կամ արոտի:

Մի անգամ, երբ պատահեց մի նեղ, ճահճոտ անցում, որը դժվար էր սայլերի համար, Կյուրոսը կանգ առավ իրեն շրջապատող երևելիների և ամենահարուստների հետ. ու հրամայեց Գլուսին և Պիգրեսին, որպեսզի վերցնելով բարբարոսական զորքի մի մասը, օգնեն սայլերը դուրս բերելու: (8) Երբ նրան թվաց, թե այդ բանը նրանք դանդաղորեն են կատարում, նա զայրացած հրամայեց ամենաերևելի պարսիկներին ևս օգնել սայլերի ընթացքը արագացնելու համար: Այստեղ կարելի էր տեսնել կարգապահության լավ օրինակ: Նրանցից յուրաքանչյուրը, ուր որ կանգնած էր, դեն էր ձգում իր վրայից ծիրանի կանդիսը<sup>62</sup>, առաջ նետվում, երբեմն նույնիսկ զատիքափից, ասես դեպի հաղթանակ, իր քանկարժեք խիտոնն ու խայտանամուկ անախիթիդը<sup>63</sup> հագին, ոմանք մինչև իսկ մանյակը վզին և ապարանջանը՝ քեներին: Այս ամենով նրանք իսկույն ցատկեցին ցեխի մեջ և սպասվածից արագ սայլերը բարձրացնելով դուրս բերեցին: (9) Ընդհանրապես պարզ էր, որ Կյուրոսը ամբողջ ճանապարհին շտապում էր և կանգ էր առնում միմիայն զորքը պարենով ապահովելու համար, կամ որևէ մի այլ անհրաժեշտության դեպքում, ենթադրելով, որ ինչքան շուտ տեղ հասնի, այնքան արքան ավելի անպատրաստ կլինի պատերազմի համար. իսկ ինչքան հապաղի, այնքան նա ավելի մեծ զորք կարող է հավաքել: Ուշադիր դիտողը կարող էր նկատել, որ արքայի տերությունը հզոր էր իր ընդարձակությամբ և բնակչության բազմությամբ<sup>64</sup>, բայց նրա բույլ կողմն էր նաևապարհների ձգվածությունը և ըջնամու հանկարծակի հարձակվելու դեպքում՝ ուժերի ցրվածությունը:

(10) Եփրատ գետից այն կողմ, ամայի ճանապարհների վրա, կար մի խոշոր ու բարգավաճ ֆաղաֆ, Քարմանդե անունով: Այստեղ զինվորները պա-

րեն գնեցին, լաստերով գետը հետևյալ կերպ անցնելով: Մորթիները, որ օգտագործում էին իբրև ծածկոց, լցրին շոր խոտով, միացրին ու կառեցին այնպես, որ խոտը չբացվի<sup>65</sup>: Մահացավ նրանք անցնում էին ու ձեռք բերում պարեն՝ և՛ արմավենու պտուղներից պատրաստած զինի, և՛ կոբեկի հաց, քանի որ այն առատորեն աճում էր այս երկրում:

(11) Այստեղ Մենոնի զինվորներից մեկը ինչ-որ բանի շուրջ վիճեց Կլեարխոսի զինվորներից մեկի հետ, և Կլեարխոսը գործը բնեկելով, անարդարացի համարեց Մենոնի զինվորին և խփեց նրան: Սա էլ, գալով յուրայինների մոտ, պատմեց այդ մասին: Զինվորները, լսելով նրան, դժգոհեցին ու խիստ զայրացան Կլեարխոսի դեմ: (12) Այս նույն օրը Կլեարխոսը գալով գետանցի մոտ և այնտեղ շուկան դիտելուց հետո, ձի հեծած իր փոքրաքիվ մերձավորների հետ անցնում էր Մենոնի գորհերի միջով, ուղևորվելով դեպի իր վրանը: Կյուրոսը դեռևս չէր ժամանել. նա նոր էր տեղ հասնում: Մենոնի զինվորներից մեկը, որը փայտ էր ջարդում, երբ տեսավ Կլեարխոսին անցնելիս, կացինը նետեց նրա վրա, բայց վրիպեց. իսկ մեկ ուրիշը փար շարտեց, հետո մեկ ուրիշը ևս, հետո շատերը՝ աղմուկ-աղաղակով: (13) Կլեարխոսը սպաստանեց իր գործարար և իսկույն ի գեն կոչեց: Իր հուպիտներին հրամայեց մնալ իրենց տեղերում, վահանները ծնկների առաջ պահած, իսկ ինքը վերցնելով քրակիացիներին և հեծյալներին, սրունք իր գործարարում ավելի քան 40 հոգի էին, մեծ մասամբ դարձյալ քրակիացիներ, քայլեց Մենոնի գորհի վրա. այնպես, որ սրանք և ինքը Մենոնը ահաբեկված վազեցին զենքերը վերցնելու. իսկ ոմանք կանգնել էին, ապշած կատարվածի համար: (14) Քայց Պրոսպենոսը—պատահեց, որ նա իրեն հետևող հուպիտներով վերջինն էր տեղ հասնում—իսկույն իր գործարար այդ երկուսի մեջտեղ մխրեց, զենքը մերկացրեց և խնդրեց Կլեարխոսին այդպես չվարվել: Քայց Կլեարխոսը դժգոհում էր, ասելով, որ մինչդեռ ինքը հագիվ էր փրկվել փարկոծվելով սպանվելուց, Պրոսպենոսը այդքան մեղմ է խոսում իր հետ պատահածի մասին, և հրամայեց նրան հետանալ մեջտեղից: (15) Այդ պահին վրա հասավ նաև Կյուրոսը և իմանալով պատահածը, իսկույն նիզակները ձեռքը վերցրեց և իր մոտ գտնվող խոռհրդականների հետ միասին գործարար կենտրոնը հասնելով, այսպես խոսեց. (16) «Ով Կլեարխոսն և Պրոսպենոսն և այստեղ ներկա եղող մյուս հելլեններ: Դուք չեք գիտակցում ձեր արարքը: Եթե դուք իրար միջև կսկիվ սկսեք, ապա իմացեք, որ հույն օրն իսկ ևս կկործանվեմ. իսկ դուք ինձանից ոչ շատ ուշ: Քանզի եթե մեր գործերը վատանան, ապա այս բոլոր բարբարոսները, սրունք դուր տեսնում եմ, մեզ ավելի բշտամի կլինեն, քան արևայի կող-

մում Եղովները»: (17) Այս խոսքերը լսելով, Կլեարխոսը ուշքի եկավ ու երկու կողմերը զենքերը ցած դնելով, դադարեցրին իրենց վեճը:

VI. Այստեղից առաջ բնթանալիս, նախապահին նկատեցին ձիերի սրմբակների հետևեր և աղբ: Ենթադրվում էր, որ դրանք մոտ 2000 ձիու հետևեր էին: Հեծյալներն իրենց նախապահին այրել էին և՛ խոտը, և՛ այն ամենը, ինչ կարող էր պիտանի լինել: Այս ժամանակ պարսիկ Օրոնտասը, որը արևայի ազգակիցն էր և, ինչպես ասում էին, պարսիկների ռազմական գործի լավագույն զինակներից, դավադրում էր Կյուրոսի դեմ, քանի որ նախկինում ևս նրա հետ բշտաման էր ունեցել, քեպետև հետո հաշտվել էր: (2) Նա ասաց Կյուրոսին, որ եթե իրեն հազար հեծյալ տրամադրի, ապա ինքը դարանակարելով կամ կոչնչացնի առաջից գնացող և ամեն ինչ հրկիզող հեծյալներին, կամ էլ նրանցից շատերին գերի վերցնելով, կխանգարի նրանց առաջնալ այրելով, և որ դրանով իրեն կհաջողվի արգելել նրանց արևային որևէ տեղեկություն հաղորդել Կյուրոսի գորհերի մասին: Կյուրոսը լսելով նրան, այդ բոլորը օգտավետ համարեց. և հրամայեց Օրոնտասին յուրաքանչյուր գորահրամանատարից վերցնել մի շուկատ: (3) Իսկ Օրոնտասը ենթադրելով, որ հեծյալներն արդեն պատրաստ են իր համար, նամակ է գրում արևային, հայտնելով, որ ինքը գալիս է հնարավորին չափ մեծաքիվ հեծյալներով. միաժամանակ խնդրում էր արևայից, որ իր հեծյալներին պատվիրի իրեն ընդունել իբրև բարեկամի: Նամակում կար նաև հիշատակության նախկին բարեկամության և հավատարմության: Այս նամակը հանձնում է իր կարծիքով հավատարիմ մարդու, իսկ սա վերցնելով այն, հանձնում է Կյուրոսին: (4) Կյուրոսը այն կարողություն հետո կալանավորեց Օրոնտասին և իր վրանը հրավիրեց իր մերձավոր ազնվականներից յոթ պարսիկներին<sup>66</sup>. իսկ հելլենների գորահրամանատարներին պատվիրեց բերել հուպիտներին և զենքը ձեռքներին տեղավորել իր վրանի շուրջ: Նրանք կատարեցին այս, բերելով շուրջ 3000 հուպիտ:

(5) Քայց Կլեարխոսին ևս հրավիրեց իր վրանը որպես խոռհրդական, քանի որ և՛ իրեն՝ Կյուրոսին, և՛ մյուսներին քվում էր. քե նա ամենահարգվածն էր հելլենների մեջ: Դուրս գալով վրանից, Կլեարխոսը հաղորդեց իր ընկերներին, քե ինչպես կայացավ Օրոնտասի դատը, քանի որ դա գաղտնիք չէր: (6) Նա ասաց, քե Կյուրոսը հետևյալ կերպ սկսեց իր խոսքը. «Քարեկաններ, ևս ձեզ հրավիրեցի խոռհրդակցելու և աստվածային ու մարդկային օրենքների համաձայն դատավճիռ բնորոշելու Օրոնտասի նկատմամբ, և այն ի կատար ածելու: Այս մարդուն առաջին անգամ հայրս է ինձ ավել իբրև հպատակի: Այդ ժամանակ սա, ինչպես ինքն է ասում, եղբորս հրամանով իմ դեմ պատերազմ սկսեց, ձեռքի տակ ունենալով Սարգեսի միջնաբերդը. ևս

նրա դեմ պատերազմեցի և ինձ հաջողվեց զաղարեցնել իմ դեմ սկսված պատերազմը և ես բռնեցի նրա աչ ձեռքը, ինքն էլ իմը: (7) Այդ բոլորից հետո, — շարունակեց Կյուրոսը, — ո՛վ Օրոնտաս, ես քո դեմ որևէ անարդարություն գործե՛լ եմ»: Նա պատասխանեց քե՛ս՝ ոչ: Դարձյալ Կյուրոսը հարցրեց. «Գու չէ՞իր, որ հեռագայում, ինչպես ինձ ևս խոստովանում, ինձնից ոչ մի վիրավորանք չկրելով, լիեցիր ինձ ու անցար մյուսիացիների կողմը և հնարավորին չափ վնաս էիր հասցնում իմ երկրին»: Օրոնտասը հաստատեց: «Գու չէ՞իր որ, — ասաց Կյուրոսը, — երբ զգացիր քո ուժերի բուլբուլները, Եկար Արտեմիսի սանառը և զղում հայանեցիր ինձ, իսկ ևս խնայեցի քեզ, որից հետո, դու չէ՞իր դարձյալ, որ սկսեցիր ինձ համոզել և հավատարմության երդում տվեցիր և նույնը փոխադարձաբար ստացար ինձանից»: Օրոնտասը այս ևս խոստովանեց: (8) «Ուրեմն, — ասաց Կյուրոսը, — ի՛նչ անարդարության ես դու ենթարկվել իմ կողմից, որ հիմա էլ երրորդ անգամ ինձ դավանանեցիր»: Երբ Օրոնտասը պատասխանեց, որ ոչ մի անարդարության չի ենթարկվել, Կյուրոսը հարցրեց նրան. «Ուրեմն դու խոստովանո՞ւմ ես, որ իմ նկատմամբ անիրավ ես եղել»: «Պետք է համաձայնվեմ», ասաց Օրոնտասը: Այնուհետև Կյուրոսը կրկին հարցրեց. «Գուցե հիմա՞ ևս դու կդառնաս իմ եղբոր թշնամին, իսկ իմ հավատարիմ բարեկամը»: Եվ նա պատասխանեց. «Եթե իսկ ես քո բարեկամը դառնամ, ո՛վ Կյուրոս, քեզ այդպիսին չեմ քվալու»: (9) Այնժամ Կյուրոսը ասաց ներկաներին. «Այսպիսին են եղել մարդու գործերը, և այսպիսին են նրա խոսքերը: Չեզանից առաջինը դու, ով Կլեարխոս, արտահայտիր քեզ հիշա քվացող կարծիքը»: Իսկ Կլեարխոսը այսպես ասաց. «Ես խորհուրդ կտամ վերացնել այս մարդուն ինչքան հնարավոր է շուտ, որպեսզի հետագայում երբևէ հարկ չլինի նրանից պաշտպանվելու և որպեսզի մենք հնարավորություն ունենանք մեզ հավատարիմ մնացող մարդկանց շնորհակալ լինել»: (10) Նա ասաց, որ նույն կարծիքը հայտնեցին նաև մյուսները:

Այս ամենից հետո, պատմեց նա, Կյուրոսի հրամանով բոլորը, նույնիսկ Օրոնտասի ազգակիցները, վեր կացան ու բռնեցին նրա գոտուց. այդ նշան էր Օրոնտասին մահվան դատապարտելու<sup>67</sup>: Այնուհետև նրան դուրս բերեցին այն մարդիկ, ում հրամայվել էր: Երբ նրան նկատեցին այն մարդիկ, ովքեր նախկինում նրան երկրպագում էին, այնժամ ևս երկրպագեցին, իմանալով հանդերձ, որ նա դեպի մահ էր առաջնորդվում<sup>68</sup>: (11) Իսկ երբ նրան տարան Արտապատեսի վրանը, որը Կյուրոսի սենեկապետներից ամենավատահալիկն էր<sup>69</sup>, այնուհետև ոչ ոք Օրոնտասին չտեսավ ոչ կենդանի, ոչ մեռյալ, և ոչ ոք անգամ չէր կարող հաստատապես ասել, թե նա ինչպես սպանվեց. այս մա-

սին տարբեր ենթադրություններ կային: Մինչև իսկ նրա գերեզմանը երբևէ հայտնի չեղավ:

VII. Այստեղից Կյուրոսը առաջ ընթացավ Բաբելոնիայի միջով Երեք կայսն՝ 12 փարսախ: Երրորդ կայսնում Կյուրոսը հելլենների և բարբարոսների զորատես կազմակերպեց գիշերվա կեսին բաց դաշտում: Նա ենթադրում էր, որ հաջորդ օրը, արշալույսին, արևան կհայտնվի իր զորեով նակատամարտ տալու: Եվ հրամայեց Կլեարխոսին առաջնորդել աչ քեր, Մենոնին՝ ձախ քեր: Ինքը ևս դասավորեց իր զորամասը: (2) Զորատեսին հաջորդած օրը Կյուրոսի մոտ ժամանեցին փախստականներ մեծ արևայի զորից ու տեղեկություններ հայտնեցին արևայի բանակի մասին:

Կյուրոսը իր մոտ հրավիրեց հելլենների զորահրամանատարներին և լուրագներին ու խորհրդակցեց նրանց հետ, թե ի՛նչպես մղի նակատամարտը. և ինքը նրանց ֆաշալերեց հետևյալ խոսքերով. (3) «Հելլեն ռազմիկներ. բարբարոսական զորք չունենալու պատճառով չէ, որ ես ինձ հետ տանում եմ ձեզ իբրև դաշնակից, այլ այն համոզմունքով, որ դուք շատ ու շատ բարբարոսներից ավելի հզոր եք և անվեհեր. այդ իսկ պատճառով ձեզ վերցրի ինձ հետ: Ուրեմն ֆաշարի՛ եղեք, արժանի այն ազատության, որը դուք նվաճել եք և որի համար ես ձեզ երանի եմ տալիս: Ու լավ իմացեք, ես ազատությունը կգերադասեի այն ամենից ինչ ունեմ և նույնիսկ ավելի: (4) Եվ որպեսզի դուք իմանաք, թե ինչպիսի կովի եք գնում, ես ձեզ կհայտնեմ, քանի որ այդ լավ գիտեմ: Թշնամու զորքը մեծաթիվ է և հարձակվում է բարձր աղաղակելով: Եթե դուք այդ բանին դիմանաք, ապա մնացյալի մասին ես կարծում եմ, որ ինձ համար անհարմար է պատմել, թե ինչպիսին կրվան ձեր դեմ դուրս եկած այս երկրի մարդիկ: Եթե դուք արք լինեք և իմ գործերը բարեհաջող էլք ունենան, ապա ձեզանից տուն վերադառնալ ցանկացողներին ես այնպես ճանապարհ կդնեմ, որ տանը եղողների նախանձը շարժեն. բայց ես վստահ եմ, որ ձեզանից շատերը կգերադասեն ինձ մոտ ծառայելը տուն վերադառնալուց:

(5) Այնժամ այստեղ ներկա գտնվող Գավլիտեսը, որը փախստական էր Սամոսից և դարձել էր Կյուրոսի վստահելին, ասաց. «Այստեղանդերձ, ո՛վ Կյուրոս, ոմանք ասում են, թե դու այժմ շատ ես խոստանում, որովհետև գտնվում ես վերահաս վտանգի առաջ. իսկ եթե գործերը հաջողությամբ պսակվեն, ապա դու չես հիշի քո խոստումները. իսկ ոմանք ասում են, որ եթե նույնիսկ հիշես քո խոստումները և ցանկանաս դրանք կատարել, ապա ի վիճակի չես լինի լրիվ կենսագործել»: (6) Այս լսելով Կյուրոսն ասաց. «Ով գիտնուներ, մեր հայրենական տերությունը տարածվում է հարավում մինչև այն վայրերը, որտեղ մարդիկ չեն կարողանում ապրել տապի պատճառով, իսկ հյուսի-



տում մինչև այն վայրերը, որտեղ չեն կարողանում ապրել ցրտի պատճառով: Իսկ սրանց միջև եղած բոլոր երկրներում սատրապություն են անում իմ եղբոր մերձավորները: (7) Երբ մենք հաղթեցինք, ապա պարտավոր ենք մեր մերձավորներին այդ երկրներում տիրակալ դարձնել: Ուստի ես վստահում եմ ոչ թե այն բանից, որ հաղթանակի ղեպում իմ բոլոր մերձավորներին նվիրելու բավականաչափ պարգևներ չեմ ունենա, այլ այն բանից, որ այնքան շատ ընկերներ չեմ ունենա, որպեսզի պարգևներ շնորհեմ: Իսկ ձեզ, հելլեններ, յուրաքանչյուրին, կպարգևեմ նաև ոսկե պսակ»<sup>70</sup>: (8) Այս խոսքերը լսողները կ'իրենք դարձան ավելի հոծարակամ, և՛ դրանք հաղորդեցին մնացյալ հելլեններին: Այնժամ նրա մոտ եկան նաև մնացյալ հելլեններից ոմանք, լյուդոսիանցիները իմանալ, թե իրենք ի՞նչ կստանան հաղթելու ղեպում: Նա բոլորի ցանկությունը բավարարելով նաևապահեց: (9) Բոլոր նրա հետ զբոսողները համոզում էին նրան անձամբ շմասնակցել նակատամարտին, այլ դիրքավորվել իրենց ետևում: Եվ այնժամ կլեարժուր այսպիսի հարց ուղղեց կյուրոսին. «Պա, ով կյուրոս, կարծո՞ւմ ես, որ եղբայրդ քո դեմ կպատերազմի»: «Անարկա, — պատասխանեց կյուրոսը, — եթե նա Գարեհի և Պարսիասիսի որդին է և իմ եղբայրը, ապա ես այս թագավորությունը առանց պատերազմի ձեռք չեմ բերի»:

(10) Այստեղ զինավառված հելլենների թիվը հետևյալն էր. մի բյուր և 400 վահանակիր (հուպիտ—Ս. Կ.) և 2500 պելտաստ<sup>71</sup>. Իսկ կյուրոսի հետ եղող բարբարոսների թիվը՝ տասը բյուր և շուրջ էսան մանգաղակիր ռազմակառք<sup>72</sup>: (11) Ասում էին, թե թշնամու զորք բաղկացած էր 120 բյուր զինվորից և 200 մանգաղակիր ռազմակառքից<sup>73</sup>: Կար նաև վեց հազար հեծյալ, որոնց առաջնորդում էր Արտագերոսը. սրանք դասավորվում էին անմիջապես արևայից առաջ: (12) Արևայի բանակը ուներ չորս գորահրամանատար, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում էր 30 բյուր զինվոր. նրանք էին՝ Արտակոմասը, Տիսսափեռոսը, Գոբրիասը և Արբակեսը: Կովի ժամանակ սրանցից մասնակցեցին 90 բյուր մարդ և 150 մանգաղակիր ռազմակառք, քանի որ Արտակոմասը Փյունիկիայից գալու նաևապահին հինգ օր ուշացավ: (13) Այսպես հայտնեցին կյուրոսին մեծ արևայի մտից ժամանած փախստականները. իսկ հետագայում կովում վերցված գերիները նույն բանը հաստատեցին:

(14) Այստեղից կյուրոսը առաջ ընթացավ մեկ կայան՝ Երեք փարսախ, ամբողջ զորքը՝ և՛ հունականը, և՛ բարբարոսականը, ռազմական վիճակում դասավորած: Նա երթադրում էր, որ այդ նույն օրը տեղի կունենա հակառակմարտը արևայի հետ, քանի որ այստեղ նաևապահին խրամատ էր փորված

հինգ գրկաչափ լայնով և երեք գրկաչափ խորությամբ<sup>74</sup>: (15) Խրամատը ձգվում էր հարթավայրով դեպի վեր 12 փարսախ, մինչև Մեդական պարսիսը<sup>75</sup>: (Այստեղ են գտնվում Տիգրիս գետից հոսող չրանցքները, որոնք չորսն են: Դրանց լայնքը մեկ պլեթրոն է և մեծ խորություն ունեն, այնպես, որ նրանցում լողում են հուցատար նավեր: Զրանցքները քափվում են եփրատ գետը և գտնվում իրարից մեկական փարսախ հեռավորության վրա, իսկ նրանց վրա կամուրջներ կան)<sup>76</sup>: Եփրատի մոտ գետի և խրամատի միջև նեղ անցում կար, մոտ էսան ոտնաչափ լայնությամբ: (16) Այս խրամատը կառուցել էր մեծ արքան որպես ամրություն. լսելով, որ կյուրոսը արշավում է իր դեմ: Այս ևս կյուրոսն իր զորքի հետ անցավ ու հասավ խրամատի ներքին կողմը: (17) Այդ օրը արքան շրոնվեց կովի, սակայն նկատվում էին նաևանջող ձիերի և մարդկանց բազմաթիվ հետքեր: (18) Այստեղ կյուրոսն իր մոտ կանչեց գուշակ Սիլանոս ամբրակիացուն և նրան պարզեց երեք հազար դահեկան այն բանի համար, որ նա դեռևս 11 օր առաջ զոհաբերություն կատարելով հայտնել էր իրեն, թե արքան դեռ 10 օր նակատամարտ չի տալու: կյուրոսն այնժամ ասել էր. «Ուրեմն նա բոլորովին չի կովի, եթե այդ օրերի ընթացքում կովի չսկսի: Եթե քո գուշակությունը իրականանա, ապա քեզ խոստանում եմ վաթսուն տաղանդ»: Այդ ոսկին էլ նա պարզեց նրան, երբ տասը օրն անցավ: (19) Եվ քանի որ արքան շիսանգարեց կյուրոսի զորքին խրամատն անցնելու ժամանակ, ապա և՛ կյուրոսին, և՛ մյուսներին թվաց, որ արքան հրաժարվել է պատերազմ մղելուց: Ուստի և հաջորդ օրը կյուրոսը առաջ ընթացավ առավել ևս անհոգ: (20) Իսկ երրորդ օրը նա ընթանում էր իր կառքը նստած, մինչդեռ իրենից առաջ գնում էր փոքրաթիվ մի ջոկատ, իսկ զորքի մեծ մասը շարժվում էր անկանոն և զորականների զենքի խոշոր մասը տանում էին կառքերով և բեռնակիր անասունների վրա բարձած:

VIII. Արդեն այն ժամն էր, երբ շուկան բազմամարդ է դառնում և մոտ էր կայանը, որտեղ կյուրոսը մտադիր էր իջևանել, երբ Պատեգյուսար, կյուրոսի մերձավորներից երևելի մի պարսիկ, քրտնաբուր ձիու վրա ամբողջ արագությամբ հայտնվելով, սկսեց բոլոր հանդիսյալներին բարձրաձայն գոռալ և՛ բարբարոսների լեզվով, և՛ հունարեն, թե արքան մեծաթիվ զորքով մոտենում է, ամբողջովին պատրաստ պատերազմելու<sup>77</sup>: (2) Այնժամ մեծ շփոթություն ծագեց. քանի որ հելլենները, ինչպես մնացած բոլորը, իսկույն կերպով ենթադրեցին, թե հարձակման կենթարկվեն դեռևս ռազմական կարգ չընթանած: (3) կյուրոսը կառքից ցած թռչելով գրանը հագավ և իր ձին հեծնելով, նիզակները ձեռքն առավ և հրաման հղեց բոլորին զինավառվել և ռազմաշարժում գրավել յուրաքանչյուր իր տեղը: (4) Զորքերը հապշտապ դասավոր-

վեցին. Կլեարֆուր դիրֆալուրվեց դեպի եփրառ գետը, գրավելով աչ քեր. նրան հաջորդում էր Պրոֆսենուր, սրան՝ մյուսները, մինչդեռ Մենոնը և նրա զորամասը գրավում էր հելլենական զորքերի ձախ քեր<sup>78</sup>: (5) Բարբարոսական զորքից հագար հեծյալ պափղագոնացիներ, ինչպես նաև հելլեն պելոասոները, կանգնած էին Կլեարֆուսի մոտ աչ քում. իսկ ձախ քում կանգնած էր Կյուրուսի տեղակալ Արիայոսը<sup>79</sup> և բարբարոսական մնացյալ զորքը, մինչդեռ ինքը Կյուրուսը, իր շուրջ եղած վեց հարյուր հեծյալներով, որոնք բոլորը, բացի Կյուրուսից, պատած էին զրանով, կոնֆեռենցիանով ու սաղավարտներով, գրավեց կենտրոնը: Կյուրուսը կովի էր գնում զուլսը շծածկած: (Ասում են, թե պարսիկներն ընդհանրապես համարձակվում են կովել շծածկած գլխով)<sup>80</sup>: Իսկ բոլոր ձիերին Կյուրուսի ջոկատում հագցրել էին նակատակապ և լանջապանակ: Հեծյալները զինված էին նաև հելլենական քրերով:

(8) Արդեն կեսօր էր, բայց թշնամին դեռևս չէր հայտնվում: Երեկոյան վաղի երևաց, սպիտակ ամպի նման, իսկ քիչ անց դաշտում հեռվից ինչ-որ սև ամպ բարձրացավ: Երբ թշնամին ավելի մոտեցավ, սկսեցին փայլատակել պղնձե ինչ-որ մասեր և նիզակներ, ու թշնամու շարքեր նկատելի դարձան: (9) Թշնամու ձախ քում սպիտակագրան հեծյալներն էին. ասում էին, թե նրանց առաջնորդում է Տիսսափեռոնեսը: Նրանց կողմին հյուսված վահաններ կռոզ ուղղակիներն էին, այնուհետև՝ մինչև ոտները հասնող փայտե վահաններով զինված հուպիտոները: Ասում էին, թե իբր սրանք եգիպտացիներ են: Այնտեղ կային նաև տարբեր տեսակի հեծյալներ և աղեղնավորներ: Այս բոլորը առաջ էին շարժվում բաժանված ըստ ազգությունների. իսկ յուրաքանչյուր ազգություն դասավորված էր մարդկանցով կազմված ֆառակուսու ձևով<sup>81</sup>: (10) Նրանցից առաջ իբրից բավական հեռավորության վրա կանգնած էին մանգաղակիր կոչված կռուներ: Դրանց մանգաղները թեփոյթամբ ամրացված էին անիվների առանցքին և հատու սայրերը դեպի գետին, այնպես, որ կտրատեին այն ամենը, ինչ կհանդիպեր իրենց նանապարհին: Պարսիկների նպատակն էր խրվել հելլենների շարքերի մեջ և դրանք մասնատել: (11) Ինչ վերաբերում է Կյուրուսի այն խոսքերին, երբ զորածոլովում հելլեններին պատվիրեց շվախենալ բարբարոսների աղաղակներից, ապա դրանք սխալ դուրս եկան: Որովհետև ոչ թե աղաղակելով, այլ հնարավոր լուրջուն պահպանելով, նրանք հանգիստ և դանդաղ առաջ էին շարժվում:

(12) Այդ պահին Կյուրուսը բարգման Պիգրեսի և ուրիշ երեք թե չորս հոգու հետ մոտենալով, կարգադրեց Կլեարֆուսին իր զորամասը վառել թշնամու կենտրոնի վրա, ֆանի որ արժան այնտեղ էր գտնվում: «Եվ երե, — շարունակեց նա, — մենք նրան հաղթենք, ապա ամեն ինչ ավարտված կլինի»: (3) Բայց



Պարսիկ հեծյալ



Պարսիկ և հույն զինվորներ՝ մենամարտելիս (աքեմենյան շրջանի կնիքներ)



Կերարժուր տեսնելով թշնամու կենտրոնի խտությունը և իմանալով Կյուրոսից, որ արքան գտնվում է հեյլենների գործի ձախ քեից այն կողմ—արքայի գործը բազմությամբ այնքան էր գերազանցում, որ նրա կենտրոնը ձգվում էր Կյուրոսի գործերի ձախ քեից էլ այն կողմ—չցանկացավ աչքեր կտրել գետից, վախենալով երկուստեք շրջապատումից: Ուստի և պատասխանեց Կյուրոսին, թե ինքը կհոգա, որպեսզի ամեն ինչ լավ լինի:

(14) Մինչ այդ բարբարոսական գործը<sup>82</sup> կանոնավոր կերպով առաջանում էր, իսկ հեյլենականը տեղում կանգնած իր շարքերն էր համալրում դեռևս նոր տեղ հասնող ռազմիկներով: Եվ Կյուրոսը ոչ շատ հեռվից անցնելով իր գործերի առջևից, նայում էր այս ու այն կողմ, դիտելով և՛ թշնամուն, և՛ յուրայիններին: (15) Հեյլենական գործասից Քսենոփոնը արթնացին<sup>83</sup> նկատելով նրան, ընդառաջ եկավ ու հարցրեց, թե որևէ բան չի՞ հրամայի արդյոք: Պահելով իր ձին, Կյուրոսը խոսեց Քսենոփոնի հետ, պատվիրելով նրան հաղորդել բոլորին, որ և՛ կանխանշաններն են բարենպաստ, և՛ զոհաբերությունները<sup>84</sup>: (16) Այս ասելու պահին Կյուրոսը ազմուկ լսեց, որը գալիս էր շարքերի միջից, և հարցրեց, թե դա ի՞նչ բան է: Քսենոփոնը պատասխանեց, թե կարգախոս են հաղորդում, որը արդեն երկրորդ անգամ է, ինչ անցնում է շարքերով: Կյուրոսը զարմացավ, թե ո՞վ է կարգախոս տվել և հարցրեց, թե ինչպիսի՞ն է այն: Ու Քսենոփոնը պատասխանեց. «Ձևս-Փրկիչ<sup>85</sup> և հաղթանակ»: (17) Կյուրոսն այս լսելով ասաց. «Ես այդ ընդունում եմ, և բոլոր այդպես էլ լինի»: Այս ասելով նա վերադարձավ իր դիրքերը:

Հակառակորդ զորասյունները իրարից բաժանում էր արդեն երեք թե չորս ասպարեզից էլ քիչ տարածություն, երբ հեյլենները պեան երգելով<sup>86</sup> փայլեցին թշնամու դեմ: (18) Երբ հարձակման ժամանակ ֆալանգսի մի մասը ինչ որ շափով առաջ անցավ, ասպա մնացած մասն սկսեց վազել. և միաժամանակ բոլորն սկսեցին աղաղակել ի պատիվ էնիպիոսի<sup>87</sup> և առաջ վազել: Սուսն են նաև, որ իբր ոմանք նիզակներով հարվածում էին վահաններին, ձիերին վախեցնելու նպատակով: (19) Եվ նախքան նետերը կհասնեին նրանց, բարբարոսներն ընկրկեցին ու փախան<sup>88</sup>: Այնժամ հեյլեններն սկսեցին նրանց հալածել ամբողջ թափով, բայց միաժամանակ իրար ձայն էին տալիս, որ ոչ քե վազեն, այլ հետապնդեն թշնամուն ռազմական շարքերով: (20) Ռազմակառուցի մի մասը բշտվում էր թշնամու իսկ շարքերի միջով, մյուս մասն էլ, առանց կառապանների, հեյլենների ռազմաշարքերի միջով<sup>89</sup>: Բայց հեյլենները դրանք տեսնելով, նաևապարհ էին տալիս: Եղան նաև ոմանք, որ սարսափեցին, ինչպես ձիարշավարանում. բայց, ինչպես պատմեցին, նույնիսկ այդ ժամանակ սրանցից որևէ մեկը չվնասվեց և, ընդհանրապես, հեյլեններից և ոչ մեկը այս

նակատամարտի ընթացքում ոչնչով շտուժեց, բացի մեկից աչքից, որ, ինչպես ասացին, նետահարվել էր:

(21) Կյուրոսը տեսնելով, որ հելլենները հապրեցին իրենց դեմ կանգնածներին ու հետապնդում են նրանց, հրեկեց. իսկ իրեն մոտիկ եղողները սկսեցին երկրպագել նրան որպես արքայի: Այսուհանդերձ ինքը չհրապուրվեց թշնամուն հալածելու մտքից, այլ պահպանելով իր վեց հարյուր հեծյալների ռազմական դասավորությունը, հետևում էր. թե արքան ինչ է անելու, քանի որ իրեն հայտնի էր, որ արքան գրավում է պարսկական բանակի կենտրոնը: (22) Քարբարոսների բոլոր զորահրամանատարներն իրենց զորքերն առաջնորդում են մնալով կենտրոնում, մտածելով, որ այդ կերպ իրենք, երկուստեք գինվորական ուժերով պաշտպանված, առավել ապահով կլինեն, իսկ եթե անհրաժեշտություն զգացվի որևէ հրաման տեղ հասցնելու, ապա բանակն այն կստանա պահանջվող ժամանակի կեսում: (23) Այդ պահին արքան, թեպետև զբաղեցնում էր իր բանակի կենտրոնը, գտնվում էր Կյուրոսի ձախքից դուրս: Ու քանի որ ոչ ոք չէր գալիս նակատելու նրա դեմ կամ նրա առաջ դասավորվածների դեմ, ապա նա թեև իր զորասյունը, թշնամուն շրջապատելու նպատակով:

(24) Այնժամ Կյուրոսը երկյուղ կրելով, որ հելլենական զորքը կարող է քիկունքից շրջանցվել ու մասնատվել, նետվեց թշնամու դեմ: Եվ իր վեց հարյուր հեծյալների հետ հարձակում գործելով, հաղթեց արքայի առաջ դասավորված վեց հազարանոց զորամասը, վախուստի մատնեց և, ասում են, իր իսկ ձեռքով սպանեց նրանց առաջնորդ Արապեբեսսին: (25) Իսկ երբ փախուստն սկսվեց, Կյուրոսի վեց հարյուրը, հալածելով թշնամուն, ցրվեցին, բացի շատ էջերից, որոնք շիբեցին Կյուրոսին, այն է՝ համարյա միայն նրա այսպես կոչված սեղանակիցներից<sup>90</sup>: (26) Սրանց հետ եղած ժամանակ նա նկատեց արքային և նրա շուրջ գտնվող բազմությունը. ուստի չհամբերեց և իսկույն գոչեց. «Ես տեսնում եմ այրին» ու առաջ նետվելով արքայի վրա, հարվածեց նրա կրծքին ու խոցեց զրահի միջով, ինչպես պատմում է բժիշկ Լուեսիասը<sup>91</sup>, որն, իր ասելով, բուժել է նրա վերքը:

(27) Մինչ Կյուրոսը հարվածում էր արքային, ինչ որ մեկը իր նիզակը ուժգին նետելով, հարվածեց Կյուրոսին աչքից փոքր-ինչ ցած: Թե քանիսը արքայի կողմնակիցներից սպանվեցին այստեղ, երբ արքան ու Կյուրոսը և նրանց շուրջ եղողները կոպում էին, պատմել է Լուեսիասը, քանի որ նա արքայի հետ է եղել: Ինքը Կյուրոսը սպանվեց և նրա հետ ընկան իր ամենահայտնի մեծավորներից ուր մարդ: (28) Պատմում են, թե Արտապատեսը, մեկը Կյուրոսի ամենահավատարիմ մականակիրներից ու նրա սենեկապետը,

տեսնելով որ Կյուրոսն ընկավ, ձիուց ցած նետվեց և իրեն զցեց նրա դիակի վրա: (29) Ոմանք ասում են, թե արքան կարգադրեց ինչ-որ մեկին սպանել նրան Կյուրոսի դիակի վրա, ուրիշները՝ թե նա իրեն սպանեց իր ակինակեով. նա ուներ այդպիսինը, որը ոսկուց էր պատրաստած: Նա մանյակ էր կրում, ապարանջան և այլ զարդեր, ինչպես ազնվական պարսիկները, քանի որ Կյուրոսը նրան պատվում էր նրա նվիրվածության ու հավատարմության համար:

IX. Այսպես մահացավ Կյուրոսը, մարդ, որ, ինչպես վկայում են նրան բոլոր մոտիկից ճանաչողները, Կյուրոս Մեծից հետո ծնված բոլոր պարսիկներից ամենից արքայավայելն էր և արժանավորագույնը գահակալելու<sup>92</sup>: (2) Նախ, երբ նա, դեռևս մանուկ, դաստիարակվում էր իր եղբոր և այլ երեխաների հետ, ամեն ինչում համարվում էր բոլորից ընդունակը: (3) Քանզի ազնվական պարսիկների բոլոր երեխաները դաստիարակվում են արժույթի դասը<sup>93</sup>: Այնտեղ մարդ կարող է սովորել խելամտություն և ոչինչ վատբար քան ոչ կտեսնի, ոչ ևս կլսի: (4) Երեխաներն այնտեղ ականատես և ականջալուր են լինում, թե արքան ո՞ւմ է պատիվ շնորհում և ո՞ւմ պատվազրկում: Ուստի և մանուկ հասակից նրանք սովորում են և՛ իշխել, և՛ ուրիշի իշխանության տակ լինել: (5) Կյուրոսն այստեղ առաջին հերթին համարվում էր իր հասակակիցների մեջ համեստագույնը և առավել հնազանդը իրենից ավագների հանդեպ, քան իրենից համեստ ծագում ունեցողները: Այնուհետև՝ նա բոլորից ավելի ձիասեր էր և լավագույնս օգտվում էր ձիերից: Նա համարվում էր նաև ամենահետաքրքրասերը և ջանասերը ռազմական գործի, նետաձգության և նիզակի նետման մեջ: (6) Երբ քեակոխեց համապատասխան տարիք, նա դարձավ նաև որսի մեծ սիրահար և զազանների վտանգի հանդեպ բոլորից անվեհեր<sup>94</sup>: Մի անգամ, երբ արջը հարձակվեց նրա վրա, նա չվախեցավ, այլ ձիուց ցած նետվելով, արջի հետ գետին թավալվեց և, նիշտ է, վնասվածք ստացավ, որի հետևանքը մնաց, բայց ի վերջո սպանեց զազանին: Եվ իրեն օգնության հասած առաջին մարդուն նա շատերի աչքին երանելի դարձրեց:

(7) Իսկ երբ հայրը նրան ուղարկեց իբրև սատրապ Լյուդիայի և Մեծ Փոյոզիայի և Կապպադոկիայի, միաժամանակ նաև ստրատեգոս նշանակեց այն բոլոր զորքերի վրա, որոնք գումարվում էին Կաստոլոսի դաշտում, նա անհապաղ հայտարարեց, թե ամեն ինչից առավել կարևոր է համարում այն. որ եթե դաշն է կնքում և կամ որևէ խոստում տալիս, ապա ոչ մի դեպքում չխաբել: (8) Այդ իսկ պատճառով նրան հավատում էին հպատակ քաղաքները, հավատում էին նաև մարդիկ: Նույնիսկ եթե որևէ մեկը թշնամի էր եղել և



Կյուրոսի հետ հաշտություն էր կնքում, սպա վստահ էր, որ հաշտության պայմաններին հակառակ երբեք չի տուժելու: (9) Ուստի և երբ նա պատերազմեց Տիսսափեոնեսի դեմ, բոլոր ֆաղաֆները, բացի Միլետից, հոծարակամ նախընտրեցին Կյուրոսին Տիսսափեոնեսի փոխարեն: Իսկ Միլետի բնակիչները վախենում էին Կյուրոսից այն պատճառով, որ նա չէր ցանկացել փախստականներին հանձնել: (10) Նա և՛ գործով էր ցույց տալիս, և՛ հայտարարում, որ երբեք նրանց չի լքի, ֆանի որ մի անգամ նրանց բարեկամն է դարձել, երբ նույնիսկ նրանց թիվը նվազի և դրությունը առավել վատթարանա:

(11) Նկատելի էր ամեն մեկին գերազանցելու նրա ձգտումը թե՛ իր հանդեպ բարերարություն անելու դեպքում, թե՛ վնաս պատճառելու դեպքում: Ոմանք նույնիսկ պատմում են, թե նա մաղբում էր իրեն այնքան ապրել, մինչև կարողանար լրիվ հատուցել և՛ իր բարեկամներին, և՛ իրեն վնաս պատճառողներին: (12) Եվ այդ էր պատճառը, որ շատերը ցանկացան ժամանակակիցներից միայն նրան վստահել և՛ իրենց ունեցվածքը, և՛ ֆաղաֆները, մինչև իսկ իրենց կյանքը: (13) Այսուհանդերձ, ոչ ոք չէր կարող ասել, թե նա հանդուրժում էր շարագործ և վատ մարդկանց շարախնդությունը, ֆանի որ նրանց ավելի դաժանորեն էր պատժում, քան մեկ ուրիշը: Բանուկ նանապարհների վրա հանախ կարելի էր տեսնել ոտներից ու ձեռներից և աչքերից գրկված մարդկանց: Եվ Կյուրոսի տիրույթներում ամեն մի հեղին կամ բարբառու, երբ ոչ մի վատ արարք չէր գործել, կարող էր աներկյուղ ճանապարհորդել իր ունեցվածքով որտեղ կամենար:

(14) Բոլորի վկայությամբ, նա պատերազմում ֆաշություն ցուցաբերողներին առավել էր պատվում: Առաջինը նա կովեց պիսիդիացիների և մյուսիացիների դեմ: Ինքն անձամբ արշավելով այս երկրների դեմ, նվաճված վայրերի կառավարիչ նշանակեց այնպիսիներին, որոնք չէին խուսափում իրենց անձը վտանգի ենթարկելուց, իսկ հետագայում նրանց պատվեց այլ նվերներով ևս: (15) Այսպիսով, կտրիները արժանի դարձան ամենայն բարեկեցության, իսկ վատերին վիճակվեց դառնալ նրանց ստրուկները: Ուստի և նրա մոտ միշտ լինում էին մեծ թվով մարդիկ, որոնք կամովին դիմագրավում էին վտանգը, երբ իմանային, որ այդ բանը հայտնի կդառնա Կյուրոսին: (16) Երբ որևէ մեկը հոչակվում էր իր արդար գործով, սպա այն օրինակելի դարձնելու նպատակով, Կյուրոսը նրան հնարավորություն էր տալիս ապրելու ավելի հոխ, քան այն մարդիկ, որոնք հարստացել էին անարդար գործերով: (17) Ուստի և նա իր ձեռքի տակ ուներ և՛ հավատարմորեն ծառայող մեծ թվով օգնականներ, և՛ իրոք հուսալի բանակ: Բանն այն է, որ գորավարներն ու վաշտապետները, որոնք դրամի համար էին ծովն անցնելով եկել



Մարտի տեսարաններ: (հին հունական վազաներից)

իր մոտ, համոզվեցին, որ առավել շահավետ է Կյուրոսին լավ ծառայելը, քան թե պարզապես ամենամսյա շահը: (18) Եվ երբ որևէ մեկը նրա հանձնարարությունը լավ էր կատարում, Կյուրոսը երբեք նրա հոծարության հանդեպ անշնորհակալ չէր լինում: Այդ իսկ պատճառով, ինչպես պատմում են, ամեն մի գործի համար լավագույն օգնականները Կյուրոսի մոտ էին գտնվում:

(19) Եվ երբ նա նկատեւ որևէ կառավարչի, որը իրեն վստահված երկիրը արդարությամբ էր ղեկավարում և եկամուտները ավելացնում էր շահավետ արտադրությամբ, ապա Կյուրոսը նրան երբեք ոչնչից չէր զբլում, այլ, ընդհակառակը, ավելին էր հատուցում. այնպես, որ նման մարդիկ հաճույքով էին աշխատում և համարձակորեն ունեցվածք ձեռք բերում, և հարստություն կուտակելուց հետո, բոլորից քիչ Կյուրոսից էին այն բախցնում: Նա չէր նախանձում բացահայտ կերպով հարստացողներին, բայց ձգտում էր օգտվել թափաքված գանձերից:

(20) Բոլորը վկայում են, որ ընկերների նկատմամբ նա ցուցաբերում էր նատկապես մեծ հոգատարություն, եթե նրանք, իր կարծիքով, անկեղծ էին իր հանդեպ և կարող էին իր հետ գործակցել իր մտածած ամեն բնույթի ձեռնարկումների ընթացքում: (21) Եվ մտածելով, որ իր համար ևս ընկերները անհրաժեշտ են որպես գործակիցներ, ինքը նույնպես ձգտում էր ընկերների համար դառնալ լավագույն գործակից, եթե զգում էր, որ որևէ մեկը դրա կարիքն ուներ: (22) Կարծում եմ, որ Կյուրոսն ինքը առավել քան մեկ ուրիշը նվերներ էր ստանում և բազմաթիվ առիթներով<sup>95</sup>: Այս ամենը մեծ մասամբ նա պարգևում էր իր ընկերներին, նկատի ունենալով նրանցից յուրաքանչյուրի կենցաղավարությունը և հաշվի առնելով ամեն մեկի պահանջմունքները: (23) Եվ ինչքան որ շատ նվերներ էին ուղարկում իրեն, որպեսզի իր վրա կրի և՛ պատերազմի ժամանակ, և՛ պենանքի համար, պատմում են, որ այդ բոլորի մասին էլ ասում էր, թե իր մարմինը չի տեղավորի այդքան շատ զարդարանք. իսկ, իր կարծիքով, լավ հազնված ընկերները մարդու մեծագույն զարդարանքն են: (24) Զարմանալի չէ, որ նա բարեգործության մեջ գերազանցում էր իր ընկերներին, քանի որ նա առավել հզոր էր: Բայց այն հանգամանքը, որ նա գերազանցում էր նրանց նաև ընկերների նկատմամբ ցուցաբերած հոգատարությամբ և Շրանց օգտակար հանդիսանալու պատրաստակամությամբ, ինձ հիացության արժանի է թվում: (25) Այսպես, Կյուրոսը, երբ ստանում էր հատկապես ընտիր գինի, հաճախ էր իր ընկերներին կիսատ փարչեր ուղարկում և պատվիրում հաղորդել, որ «երկար ժամանակ է, ինչ իրեն բախտ չի վիճակվել այդպիսի ընտիր գինի ունենալ. ուստի և Կյուրոսը այս ուղարկեց քեզ և խնդրեց այն այսօր իսկ խմել այն մարդկանց հետ,



որոնց դու Բո լավագույնը ընկերներն ես համարում»: (26) Հանախ էլ նա կես սագ կամ կես հաց և նման բաներ էր ուղարկում, պատվիրելով տանողին ասել հետևյալը. «Կյուրոսը ճաշակեց սրանցից. և նա կամենում է, որ դու ևս ճաշակես սրանք»: (27) Ու էթե որևէ տեղ խուոր հազվագյուտ էր լինում, մինչդեռ ինքը բազմաթիվ սպասավորներ և մեծ հնարավորություններ ունենալով, կարող էր այն մթերել, խուոր ուղարկում էր իր ընկերներին և պատվիրում այն տալ իրենց տանող ձիերին, որպեսզի իր ընկերները չզնային անոթի ձիերին նստած: (28) Ուղևորության ժամանակ, երբ շատերն էին ցանկանում նրան տեսնել, նա իր մոտ կանչելով ընկերներին, զրուցում էր կարևոր գործերի մասին, որպեսզի հայանի դառնար, թե որո՞նց է ինքը պատվում: Ուստի և էս, դատելով իմ լսածներից, կարծում եմ, որ ոչ մեկը ո՛չ հելլեններից, ո՛չ բարբարոսներից այդպես սիրված չի եղել այդքան շատ մարդկանց կողմից: (29) Այդ բանի ապացույցն է նաև հետևյալը: Թեև Կյուրոսը ծառա էր<sup>96</sup>, ոչ ոք նրան լիելով չզնաց արքայի մոտ, բայց միայն Օրոնտասը այդպիսի փորձ արեց: Սակայն սրա կապակցությամբ ևս, որին արքան իր հանդես հավատարիմ էր համարում. շուտով համոզվեց, որ ավելի հակված է դեպի Կյուրոսը, քան դեպի իրեն: Մինչդեռ արքայի մոտից շատերն անցան Կյուրոսի կողմը, երբ սրանք թշնամացան իրար, և այդ արեցին այն մարդիկ, որոնք առավել սիրված էին արքայի կողմից, Լեթադրելով, որ Կյուրոսի մերձավորները դառնալով առավել բարձր պատվի կարժանանան, քան արքայի մոտ մնալով: (30) Կյուրոսի կյանքի վախճանին տեղի ունեցածը ևս խոշոր ապացույց էր նրա առափնուության, ինչպես նաև իր նկատմամբ հավատարիմ, բարյացակամ և հուսալի եղողների հանդես նրա ունեցած արդարադատության: (31) Քանզի երբ նա մահացավ, բոլոր նրա մերձավորները, ընկերները և սեղանակիցները, բացի Արիայոսից, սպանվեցին, կոպելով հանուն Կյուրոսի: Իսկ Արիայոսը գտնվում էր ձախ թևում և առաջնորդում էր հեծելազորը: Լսելով Կյուրոսի ընկնելը, նա փախավ, տանելով իր առաջնորդած ամբողջ զորամասը:

X. Այնժամ այստեղ կտրեցին Կյուրոսի գլուխը և աչ ձեռքը: Իսկ արքան հետապնդելիս, ներխուժեց Կյուրոսի ռազմական ճամբարը: Արիայոսի հետ եղողները, այլևս չլիմանալով, փախուստի դիմեցին իրենց ճամբարի միջով մինչև այն կայանը, որտեղից առավոտը մեկնել էին. ասում էին, թե այդ տարածությունը չորս փարսախ էր: (2) Իսկ արքան և նրա հետ եղողները շատ բան խլեցին և միաժամանակ գերեվարեցին Կյուրոսի փոկայունի հարճի<sup>97</sup>, որի մասին ասում էին, թե իմաստուն էր և գեղանի: (3) Իսկ ավելի երիտասարդ միլետոնուն, որին բռնել էին արքայի զինվորները, հաշտվեց առանց


վերնագրեստի ևս փախչել հելլենների մոտ, որոնք զինված գտնվում էին գրաստների մոտ, և դիմադրելով, կողոպտիչներից շատերին սպանեցին. սպանվեցին նաև իրենցից ոմանք: Սակայն նրանք չփախան ու փրկեցին և՛ միլետոնուն, և՛ մնացած այն ամենը, ինչքան որ այնտեղ հարստություն կար ու մարդ. ամենը փրկեցին:

(4) Այնժամ արքան և հելլենները գտնվում էին իրարից զրեթե երեսուն սուպարեզ հեռավորության վրա և սրանք հետապնդում էին իրենց դիմաց կանգնած թշնամուն, կարծելով, թե ընդհանրապես հաղթում են, իսկ նրանք կողոպտում էին, որպես թե արդեն բոլորին հաղթել են: (5) Երբ հելլենները զգացին, որ արքան իր զորով գրաստների մոտ է, իսկ արքան ևս իր հերթին լսեց Տիսսափեռնեսից, թե հելլենները հաղթել են իրենց դիմաց կանգնած զորամասերին և հալածելով նրանց, առաջ են շարժվում, այնժամ, ուրեմն, արքան գումարեց իր ուժերը ռազմական շարժելով, իսկ Կլեարխոսը կանչելով Պրոսպենոսին, որը իրեն մոտիկ էր, խորհուրդ արեց նրա հետ, զորքի մի մասը ուղարկել՝ արդյոք ճամբարին օգնություն ցույց տալու համար, թե՛ իրենք բոլորը միասին գնան այնտեղ: (6) Այդ պահին նորից հայտնվեց արքան, հարձակվելով, ինչպես իրենց թվաց, թիկունքից: Այնժամ հելլենները շրջվելով պատրաստվեցին նակատելու, ենթադրելով, որ արքան կշարժվի իրենց դեմ: Իսկ արքան իր զորքն այդ կողմով շտարավ, այլ քաշեց դեպի Կյուրոսի զորամասի ձախ թևից այն կողմ, որտեղից և սկսել էր հարձակումը, իր հետ վերցնելով նաև նրանց, ովքեր նակատամարտի ընթացքում փախել էին դեպի հելլենները, ինչպես նաև Տիսսափեռնեսին և նրա հետ եղողներին: (7) Քանզի Տիսսափեռնեսը չէր նահանջել առաջին ընդհարման ժամանակ, այլ գետի եզերքով առաջ էր անցել դեպի հելլեն պելտաստները: Հելլենների մոտով անցնելիս նա ոչ ոքի չէր սպանել. իսկ հելլենները տեղի տալով նետահարել և նիզակահարել էին նրանց: Պելտաստներին առաջնորդում էր Եպիսթենես ամփիպոլսեցին, որի մասին ասում էին, թե խելամիտ է: (8) Տիսսափեռնեսը կռուստներ կրելով հեռացել էր, բայց ետ չէր վերադարձել, այլ հասնելով հելլենների ռազմական ճամբարը, այնտեղ պատահել էր արքային. իրենց զորքերը միասին դասավորելուց հետո, նորից առաջ շարժվեցին:

(9) Երբ նրանք հայտնվեցին հելլենների ձախ թևում, հելլենները վախեցան, չլինի թե իրենց վրա հարձակվեն թևից և երկուստեք նեղելով, բնաջնեն: Ու նրանք որոշեցին տարածել թևը, գետը իրենց թիկունքում թողնելու նպատակով: (10) Մինչ նրանք այդ մասին էին խորհրդակցում, արքան արդեն նրանց մոտով առաջ շարժվելով, իր զորքը դասավորեց նույն կարգով, ինչ այն կանգնած էր նակատամարտի սկզբում: Հելլենները երբ տեսան նրանց

այնքան մոտիկ և արդեն մարտական դասավորությամբ, իսկույն պեան երգելով հարձակվեցին նրանց վրա առավել քափով, քան առաջ: (11) Բարբառոսները դարձյալ շղիմացան և փախան երբ դեռևս առավել մեծ տարածություն ևր (նրանց բաժանում հեղինակներից), քան առաջին (ընդհարման) ժամանակ. իսկ հեղինակները հետապնդեցին նրանց մինչև ինչ-որ գյուղ: (12) Հեղինակներն այստեղ կանգ առան, քանի որ գյուղից վերև բարձրանում էր մի հողաբլուր, որտեղ և բարձրացան արհալի շուրջ եղողները, որոնց մեջ չկային հետևակներ. բլուրը լցվեց այնքան բազմաքանակ հեծյալներով, որ հնարավոր չէր հասկանալ այնտեղ կատարվածը: Ասացին, թե այնտեղ տեսնում են արհուների զինանշանը՝ ոսկե արծիվ՝ նիզակի կոթաոհին հագցրած<sup>99</sup>: (13) Բայց երբ հեղինակներն սկսեցին դեպի այնտեղ ևս առաջանալ, հեծյալները այս բլուրը նույնպես լեցին, բայց արդեն ոչ համախմբված, այլ այս ու այն կողմ ցրվելով. այնպես, որ բլուրը մաքրվեց հեծյալներից և ի վերջո բլուրը հեռացան: (14) Սակայն Կեարհոսը զորքը շարժեցրեց բլուր, այլ կանգնեցնելով այն ստորոտին, Լյուկիոս սիրակուսացուն և ուրիշ մեկին ուղարկեց բլրի գագաթը, պատվիրելով նրանց դիտարկել բլրի այն կողմը և հաղորդել իրեն, թե ի՞նչ կա այնտեղ: (15) Եվ Լյուկիոսը մագլցելով ու դիտելով հաղորդեց, որ արագորեն փախչում են: Գրեթե այդ ժամանակ արևը մայր մտավ:

(16) Այստեղ հեղինակները կանգ առան, գեները հանեցին և սկսեցին հանգրստանալ: Միաժամանակ նրանք զարմանում էին, թե Կյուրոսը ոչ մի տեղ չի երևում և նրա մոտից ոչ ոք չի գալիս իրենց մոտ: Քանզի նրանք չգիտեին նրա մահվան մասին, այլ ենթադրում էին, թե նա կամ հեռացել է, հալածելով թշնամուն, կամ էլ առաջ է անցել որևէ դիրք գրավելու համար: (17) Ու նրանք սկսեցին խորհրդակցել՝ տեղում մնալով, գումակը և՛ս այստեղ բերել, թե՛ վերադառնալ նամբար: Որոշեցին վերադառնալ. և վրանների մոտ հասան ընթրիքի ժամին: (18) Այդ օրն այդպես վերջացավ: Նրանք տեսան, որ իրենց ունեցվածքի մեծ մասը կողոպտված է, ինչպես նաև ամբողջ ուտելիքն ու խմիչքը և այլուր ու գինի բարձած այն սայլերը, որ Կյուրոսը պատրաստել էր խիստ կարիքի դեպքում հեղինակներին բաժանելու համար. իսկ այդպիսի սայլերի թիվը, (ինչպես ասում են), չորս հարյուր էր. արհալի զորքը հափըշտակել էր այս սայլերը ևս: (19) Այսպիսով հեղինակների մեծ մասը մնաց առանց ընթրիքի: Ոմանք մնացին նույնիսկ առանց նախանշի. քանի որ արհան ավելի շուտ էր հայտնվել, քան զորքը կարձակվեր նախանշաշի: Այս գիշերը նրանք այսպես անցկացրին:



### Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Գ

I. [Թե ինչպես Կյուրոսը հեղինակներից զորք հավաքեց իր եղբայր Արտախստիսի դեմ արշավելիս, և ինչ կատարվեց արշավանքի ժամանակ, և ինչպես նակատամարտը տեղի ունեցավ, և ինչպես Կյուրոսը վախճանվեց, և ինչպես հեղինակները, գալով նամբար, բնեցին. կարծելով, թե լիովին հաղթել են և Կյուրոսը ողջ է, խոսվել է նախորդ գրքում]:

(2) Լուսաբացին զորավարները ի մի ժողովվելով զարմանում էին, որ Կյուրոսը ոչ ոքի չի ուղարկում իրենց մոտ հետագա անելիքների մասին հրամաններով, ոչ էլ ինքն է հայտնվում: Ուտի և նրանք որոշեցին հավաքել ունեցած-չունեցածը և զինավառվելով առաջ շարժվել, մինչև որ կմխանան Կյուրոսին: (3) Արևածագին, երբ նրանք արդեն պատրաստ էին մեկնելու, և կան Տեքրանիայի տիրակալ Պրոկլեսը, որը լակոնիացի Գեմարատոսի սերունդից էր<sup>2</sup>, և Տամոսի որդի Գլուսը: Մրանք պատմեցին, թե Կյուրոսը սպանված է և թե Արիայոսը մնացած բարբարոսների հետ փախել է և գտնվում է այն կայանում, որտեղից նախորդ օրը իրենք մեկնել էին, և ասել է, թե այդ օրվա ընթացքում կապասի հեղինակներին, էթե սրանք ցանկանան գալ իր մոտ, իսկ հաջորդ օրը կմեկնի Հոնիա, որտեղից որ եկել էր: (4) Այս լսելով զորավարները, ինչպես նաև մնացած հեղինակները այդ իմանալով, մեծապես տխրեցին: Այնժամ Կեարհոսն ասաց. «Օ՛, Եթե Կյուրոսը կենդանի լիներ: Բայց քանի որ նա վախճանվել է, ապա հաղորդեք Արիայոսին, թե մենք հաղթել ենք արհալիս և, ինչպես տեսնում եք, այլևս ոչ ոք մեր դեմ չի կռվում. և եթե դուք

Եկած շինեիք, մենք կշարժվեինք արժայի դեմ: Մենք խոստանում ենք Արիստոսին, որ եթե այստեղ գա, ապա մենք նրան արժայական գահին կհասնենք. քանի որ պատերազմում հաղթողին է պատկանում իշխելու իրավունքը: Այս խոսքերով նա ետ ուղարկեց ղեկավարներին և նրանց հետ լակոնիացի Խելիստոսին և Մենոն քեսապացուն. ինքը Մենոնն այդ ցանկացավ, քանզի Արիստոսի ընկերն էր և կապված էր նրա հետ հյուրընկալության կապերով:

(6) Նրանք հեռացան, իսկ Կլեարխոսը սպասում էր: Եվ զորքը իր համար ուտեստ էր հայրաքում ինչպես կարող էր, լծկան անասուններից եզներին ու էշերին մորթելով: Փոքր-ինչ առաջ անցնելով ռազմաշարժերից ղեկի այն վայրը, ուր տեղի ունեցավ նակատամարտը, նրանք իրեն վառելիք օգտագործեցին մեծ քանակությամբ այնտեղ ընկած հետերը, որ հեղեղների քելադրանքով շարտել էին արժայի մոտից փախածները, ինչպես նաև եգիպտական հյուսված ու փայտե վահաններ: (7) Այնտեղ կային մեծ քվով քեթև վահաններ և լվված սայլեր: Այս բոլորից օգտվելով նրանք այդ օրը միս էփեցին և սնվեցին:

Արդ այն ժամն էր, երբ շուկան բազմամարդ էր դառնում, և անա արժայի ու Տիսասփեռնեսի կողմից ղեկավարներ Եկան, բոլորը բարբառոսներ, իսկ նրանց մեջ նաև մի հեղեղ՝ Փալինոսը, որը Տիսասփեռնեսի մոտ էր լինում և մեծ պատվի էր արժանացել. քանզի նա իրեն ներկայացնում էր որպես ռազմավարության մասնագետ և հմուտ ծանրագին: (8) Նրանք ժամանելով և հեղեղների հրամանատարներին գումարելով հայտնեցին, թե արժան հրամայում է հեղեղներին, քանի որ ինքը հաղթել է և սպանել Կյուրոսին, զենքերը հանձնել, ներկայանալ արժանի դուռ և այնտեղ, եթե հաշտվի, ողորմաձուրյուն հայցել իրենց նկատմամբ: (9) Այսպես խոսեցին արժայի ղեկավարները: Հեղեղները դառնությամբ լսեցին այդ խոսքերը, բայց Կլեարխոսը ասաց միայն, թե հաղթողները չէ, որ զենքերը հանձնում են. «Քայց դուր, գորավարներ,—ասաց նա,—տվեք սրանց ձեր լավագույն և ամենից արժանի համարած պատասխանը. իսկ ես իսկույն կգամ»: Որովհետև ծառաներից մեկը կանչեց նրան, որպեսզի սա զենքեր մատուցված զոհի փոռոտիքը. քանզի Կլեարխոսն այդ պահին զոհ էր մատուցում:

(10) Այնժամ Կլեարխոսը արկաղիացին. լինելով ավագագույնը գորավարներից, պատասխանեց, թե իրենք ավելի շուտ կմեռնեն. քան կհանձնեն զենքերը: Իսկ Պրոսպենոս քեթևացին ասաց. «Քայց ես, ո՞վ Փալինոս, տարակուսում եմ. արժան մեր զենքերը որպես հաղթող է պահանջում, թե՛ խնդրում է դրանք որպես բարեկամական պարգև ստանալ: Եթե որպես հաղթող, ապա

ինչո՞ւ է նա խնդրում, այլ չի գալիս անձամբ վերցնելու: Եթե ցանկանում է մեզ համոզելով զենքերն ստանալ, ապա հայանիք մեզ, թե զինվորներն ի՞նչ կստանան զենքերը նրան պարգևելու ղեկավար»: (11) Փալինոսը դրան պատասխանեց. «Արժան իրեն հաղթող է համարում, քանի որ սպանել է Կյուրոսին: Եվ ո՞վ հիմա կարող է նրանից վիճարկել թագավորական իշխանությունը: Նա ենթադրում է, որ դուր ևս նրա իշխանության տակ եք, քանի որ գրանրվում եք նրա երկրում, անանցանելի գետերի միջև, և նա կարող է մարդկանց այնպիսի բազմություն հանել ձեր դեմ, որին դուր չեք կարող կտորել, եթե նույնիսկ նրանց ձեր ձեռքը հանձնելու լինի»: (12) Նրանից հետո խոսեց Քեոպոմպոս արթնացին՝ այսպես. «Ո՞վ Փալինոս. արդ, ինչպես տեսնում ես, մեզ համար ոչ մի այլ բարիք չի մնացել զենքից և արհուրյունից բացի: Չենք ունենալով մենք համոզված ենք, որ ի վիճակի կլինենք օգտվելու մեր արհուրյունից, իսկ եթե հանձնենք զենքերը, մենք մեր կյանքից իսկ կզրկվենք: Ուստի շտաժես, որ ձեզ կհանձնենք մեր ձեռքում մնացած միակ բարիքը, այլ դրանցով մենք դեռևս կկռվենք ձեր դեմ նաև ձեր բարիքների համար»: (13) Այս խոսքերը լսելով Փալինոսը ծիծաղեց և ասաց. «Փիլիսոփայի նման ես խոսում, ո՞վ պատանի, և քո խոսքերը շնորհագուրկ չեն: Քայց գիտցիր, որ դու անմիտ ես, եթե կարծում ես, որ ձեր արհուրյունը կգերազանցի արժայի հզորությանը»: (14) Պատմում են, թե ոմանք հանդես եկան, փորձելով մեղմել վիճակը, և նշեցին, թե իրենք ինչպես հավատարիմ են մնացել Կյուրոսին, այնպես էլ արժային կարող էին շատ օգտակար լինել, եթե նա ցանկանում է իրենց բարեկամը դառնալ: Իսկ եթե նա ցանկանա իրենց օգտագործել որևէ մի այլ ձեռնարկման համար, դիցուք եգիպտոսի դեմ արշավելու՛, ապա իրենք սիրով կաջակցեն նրան:

(15) Այդ պահին եկավ Կլեարխոսը և հարցրեց, թե արդեն պատասխանե՞լ են, թե ոչ: Փալինոսը ասաց. «Այս մարդիկ. ո՞վ Կլեարխոս, տարբեր կարծիքներ հայտնեցին. դու էլ քո խոսքն ասա»: (16) Եվ նա ասաց. «Ես, ո՞վ Փալինոս, ուրախացա քեզ տեսնելիս, և կարծում եմ, թե մնացած բոլորը նույնպես. քանզի դու ես հեղեղն ես, ինչպես և մենք բոլորս, ում դու տեսնում ես: Այժմ գտնվելով ներկա պայմաններում, մենք քո խորհուրդն ենք հարցնում, թե ինչպե՞ս վարվենք քո առաջարկների կապակցությամբ: (17) Ուստի դու, աստվածների առաջ, տուր մեզ քո կարծիքով լավագույն և ազնվագույն խորհուրդը, որը և ապագայում մեզ պատիվ է բերելու, երբ պատմեն, թե Փալինոսը երբեք արժայի կողմից հեղեղների մոտ զենքերը հանձնելու առաջարկով դեսպան ուղարկվելով, համատեղ խորհրդակցության ընթացքում այդպիսի խորհուրդ տվեց նրանց: Քանզի դու գիտես, որ քո տված խորհրդի մասին անպայ-

ման կխոսեն Հելլադայում»: (18) Կլեարխոսն այդպես ասաց այն հույսով, թե ինքն՝ արհայի կողմից որպես ղեկավար ուղարկվածը ևս խորհուրդ կաա շահանձնել զենքեր, և դրանով իսկ հելլեններն առավել ևս կհուսադրվեն: Բայց հակառակ նրա ենթադրության, Փալինոսը նարպարեն խուսաճավելով, պատասխանեց. (19) «Նքե նույնիսկ բյուր հույսի դիմաց ձեռ փրկուրյան միակ հույսը արհայի դեմ կովելը լինեք, ապա խորհուրդ կտայի շահանձնել զենքեր: Իսկ եթե ի հեճուկս արհայի կամփի, ձեզ համար ոչ մի փրկուրյուն չկա, ապա ընտրե՛ք հնարավոր միակ եղանակը»: (20) Իսկ Կլեարխոսը պատասխանեց նրան. «Սակայն այդ դո՛ւ ես ասում: Իսկ մեք կողմից գնա հազորդիք, թե մեք կարծիքով, եթե պետք է արհայի բարեկամները դառնանք, ապա ավելի արժեքավոր են զինված բարեկամները, քան զենքերը ուրիշին հանձնածները. քանզի եթե մենք հարկադրված լինենք պատերազմելու, ապա ավելի լավ է պատերազմել զենքը ձեռքներին, քան թե այն ուրիշին հանձնած»: (21) Իսկ Փալինոսը ասաց. «Այդ բոլորը ես կհաղորդեմ: Սակայն արհան հրամայեց հայտնել ձեզ նաև այն, որ եթե մնա՛ք ձեռ տեղում, ապա ձեզ հետ դաշինք կկնքի, իսկ եթե առաջ շարժվե՛ք կամ ետ նահանջե՛ք, ապա պատերազմ կսկսի: Արդ, ուրեմն, պատասխանե՛ք այս հարցին. մնում ե՛ք այստեղ և դա՛շն կրնա՞նք, թե՛ ձեռ անունից հայտնե՛մ, որ պատերազմ է՞»: (22) Կլեարխոսը պատասխանեց. «Այդ մասին հաղորդի՛ր արհային, որ մենք ևս նույն կարծիքին ենք, ինչ արհան»: «Այդ ի՞նչ է նշանակում», ասաց Փալինոսը: Կլեարխոսը պատասխանեց. «Նքե մնանք, ապա դաշինք կլինի. իսկ եթե մեկնենք կամ առաջադրանք՝ պատերազմ»: (23) Փալինոսը դարձյալ հարցրեց. «Հաղորդե՛մ դաշինք, թե՛ պատերազմ»: Կլեարխոսը դարձյալ նույնը պատասխանեց. «Նքե տեղում մնանք՝ դաշինք. եթե նահանջենք կամ առաջանանք՝ պատերազմ»: Իսկ թե ինչ էր նա մտադիր անելու, չհայտնեց:

II. Փալինոսը մեկնեց իր ուղեկիցներին հետ: Իսկ Արիայոսի մտայն ժամանեցին Պրոկլետը և Նեյրիսոփոսը. Մենոնը մնացել էր Արիայոսի մոտ: Նրանք հաղորդեցին Արիայոսի խոսքերը, թե իրենից ավելի ազնվական շատ պարսիկներ կան, որոնք չէին հանդուրժի նրա թագավոր դառնալը: Բայց եթե դուք ցանկանում եք միասին նահանջել, ապա նա պատվիրում է ձեզ գիշերն իսկ գնալ իր մոտ: Եթե ոչ, ապա նա ասում է, թե վաղն առավոտյան ինձի կհեռանա: (2) Իսկ Կլեարխոսը ասաց. «Պետք է այսպես անել. եթե մենք եկանք, այնժամ կլինի ձեռ ասածի համաձայն: Իսկ եթե ոչ, ապա վարվե՛ք ինչպես ձեզ շահավետ է»: Իսկ իր անելիքի մասին սրանց ևս ոչինչ չասաց:

(3) Այս բոլորից հետո, երբ արևը մայր էր մտնում, Կլեարխոսը իր մոտ կանչելով զորավարներին ու վաշտապետներին, այսպես խոսեց. «Զինվորսե՛ր:

Երբ ևս զոհ էի մատուցում արհայի դեմ արշավելու առթիվ, նշանները բարենպաստ չէին: Եվ արդարացի կերպով էր այդպես: Ինչպես այժմ ևս իմացա, մեք և արհայի միջև գտնվում է նավարկելի Տիգրիս գետը, որը չենք կարող անցնել առանց նավերի. իսկ մենք նավեր չունենք: Միաժամանակ, սակայն, չենք կարող այստեղ մնալ, քանի որ հնարավոր չէ պարենավորվել. իսկ Կյուրոսի բարեկամների մոտ գնալու մասին զոհարեման նշանները բարենպաստ էին: (4) Հետևաբար պետք է այսպես անել. ցրվել և ընթրել յուրաքանչյուրն իր ունեցածով: Երբ եղյուրները հանգիստ շեփոթեն, կհանդերձավորվե՛ք. երկրորդ շեփոթումով սայլերը կբարձե՛ք. երրորդ շեփոթումից հետո կհետևե՛ք առաջ գնացողին, զրատները պահելով գետի կողմը, իսկ հույլիները կդասավորվեն արտաքին կողմում»: (5) Այս լսելուց հետո զորավարներն ու վաշտապետները հեռացան և անցան գործի: (6) Այնուհետև Կլեարխոսը հրամայում էր, իսկ մյուսները՝ հնազանդվում, ոչ թե նրան ընտրած լինելու համար, այլ որովհետև համոզվել էին. թե միայն նա է դատում հրամանատարին վայել կերպով, մինչդեռ մյուսները անփորձ էին:

[Հռոմիական Եփեսոսից մինչև ճակատամարտի վայրը նրանց անցած ճանապարհի երկարությունը կազմում էր 93 կայան՝ 535 փարսախ՝ 16050 ասպարեզ. իսկ ճակատամարտի վայրից մինչև Բաբելոն, ինչպես պատմում էին, 360 ասպարեզ էր]:

(7) Երբ գիշերը վրա հասավ, Միլտոկյուրես թրակիացին իր քառասուն նեծյալներով և շուրջ երեք հարյուր հետևակ թրակիացիներով այստեղից անցավ արհայի կողմը: (8) Կլեարխոսը առաջնորդում էր մյուսներին, որովհետև հրահանգներին համաձայն. իսկ սրանք հետևում էին: Եվ գիշերվա կեսին նրանք հասան առաջին կայանը՝ Արիայոսի և նրա զորքի մոտ: Մինչդեռ զորքը կանգնած էր մարտաշարով, հելլենների զորավարներն ու վաշտապետները Արիայոսի մոտ հավաքվեցին խորհրդի: Այնժամ և՛ հելլենները, և՛ Արիայոսն ու նրա հետ եղող բարձրաստիճան ազնվականները իրար երդվեցին շղակահանել և լինել դաշնակիցներ: Բարբարոսները երդվեցին նաև առաջնորդել անխարդախ: (9) Նրանք այսպես երդվեցին վահանի վրա մտքելով ցուլ և վարագ և խոյ, որոնց արյան մեջ հելլենները բարբախեցին սուր, իսկ բարբարոսները՝ նիզակ: (10) Երդում տալուց հետո Կլեարխոսն ասաց. «Այժմ, ո՛վ Արիայոս, քանի որ և՛ ձեռ, և՛ մեք նախապահիք նույնն է, հայտնի՛ր քո կարծիքը ևս առավել հարմար ճանապարհի մտածելով, թե՛ դու կարող ևս առավել հարմար ճանապարհի մտածել»: (11) Իսկ նա պատասխանեց. «Նքե վերադառնա՞նք մեք եկած ճանապարհով, ապա ամբողջովին կկորուրդենք սովից. քանզի այժմ մենք ոչ մի պարեն չունենք: Նույնիսկ այստեղ

ման կխոսեն Հելլադալում»: (18) Կլեարհոսն այդպես ասաց այն հույսով, թե ինքն՝ արհայի կողմից որպես դեսպան ուղարկվածը ևս խորհուրդ կաա շահանձնել զենքերը, և դրանով իսկ հելլենները առավել ևս կհուսադրվեն: Քայց հակառակ նրա Լեքադուրյան, Փալինոսը նարակորեն խուսաճավելով, պատասխանեց. (19) «Նքե նույնիսկ բյուր հույսի դիմաց ձեռ փրկուրյան միակ հույսը արհայի դեմ կովելը լինեք, ապա խորհուրդ կաալի շահանձնել զենքերը: Իսկ եթե ի հեճուկս արհայի կամֆի, ձեզ համար ոչ մի փրկուրյուն չկա, ապա ընտրեք հնարավոր միակ եղանակը»: (20) Իսկ Կլեարհոսը պատասխանեց նրան. «Սակայն այդ դո՛ւ ես ասում: Իսկ մեք կողմից գնա հազորդիք, թե մեք կարծիքով, եթե պետք է արհայի բարեկամները դառնանք, ապա ավելի արձեքավոր են զինված բարեկամները, քան զենքերը ուրիշին հանձնածները. քանզի եթե մենք հարկադրված լինենք պատերազմելու, ապա ավելի լավ է պատերազմել զենքը ձեռքներին, քան թե այն ուրիշին հանձնած»: (21) Իսկ Փալինոսը ասաց. «Այդ բոլորը ես կհաղորդեմ: Սակայն արհան հրամայեց հայտնել ձեզ նաև այն, որ եթե մնաք ձեռ տեղում, ապա ձեզ հետ դաշինք կկնքի, իսկ եթե առաջ շարժվեք կամ ետ նահանջեք, ապա պատերազմ կսկսի: Արդ, ուրեմն, պատասխանեք այս հարցին. մնում եք այստեղ և դա՞շն կրնաք, թե՞ ձեռ անունից հայտնեմ, որ պատերազմ է»: (22) Կլեարհոսը պատասխանեց. «Այդ մասին հաղորդիր արհային, որ մենք ևս նույն կարծիքին ենք, ինչ արհան»: «Այդ ի՞նչ է նշանակում», ասաց Փալինոսը: Կլեարհոսը պատասխանեց. «Նքե մնանք, ապա դաշինք կլինի. իսկ եթե մեկնենք կամ առաջադրանք՝ պատերազմ»: (23) Փալինոսը դարձյալ հարցրեց. «Հաղորդե՞մ դաշինք, թե՞ պատերազմ»: Կլեարհոսը դարձյալ նույնը պատասխանեց. «Նքե տեղում մնանք՝ դաշինք. եթե նահանջենք կամ առաջանանք՝ պատերազմ»: Իսկ թե ինչ էր նա մտադիր անելու, չհայտնեց:

II. Փալինոսը մեկնեց իր ուղեկիցների հետ: Իսկ Արիայոսի մտախոսմանն Գրոկլեսը և Խեյրիսոփոսը. Մենոնը մնացել էր Արիայոսի մոտ: Նրանք հաղորդեցին Արիայոսի խոսքերը, թե իրենից ավելի ազնվական շատ պարսիկներ կան, որոնք չէին հանդուրժի նրա թագավոր դառնալը: Քայց եթե դուք ցանկանում եք միասին նահանջել, ապա նա պատվիրում է ձեզ գիշերն իսկ գնալ իր մոտ: Եթե ոչ, ապա նա ասում է, թե վաղն առավոտյան ինքն կհեռանա: (2) Իսկ Կլեարհոսը ասաց. «Պետք է այսպես անել. եթե մենք և՛ կանք, այնժամ կլինի ձեռ ասածի համաձայն: Իսկ եթե ոչ, ապա վարվեք ինչպես ձեզ շահավետ է»: Իսկ իր անելիքի մասին սրանց ևս ոչինչ չասաց:

(3) Այս բոլորից հետո, երբ արևը մայր էր մտնում, Կլեարհոսը իր մոտ կանչելով զորավարներին ու վաշտապետներին, այսպես խոսեց. «Զինվորներ՛:

երբ ևս զոհ կի մատուցում արհայի դեմ արշավելու առթիվ, նշանները բարենպաստ չէին: Եվ արդարացի կերպով էր այդպես: Ինչպես այժմ ևս իմացա, մեք և արհայի միջև գտնվում է նավարկելի Տիգրիս գետը, որը չենք կարող անցնել առանց նավերի. իսկ մենք նավեր չունենք: Միաժամանակ, սակայն, չենք կարող այստեղ մնալ, քանի որ հնարավոր չէ պարենավորվել. իսկ Կյուրոսի բարեկամների մոտ գնալու մասին զոհարեման նշանները բարենպաստ էին: (4) Հեռաբար պետք է այսպես անել. ցրվել և ընթրել յուրաքանչյուրն իր ունեցածով: Երբ եղյուրները հանգիստ շեփորեն, կհանդերձավորվեք. երկրորդ շեփորումով սայլերը կբարձեք. երրորդ շեփորումից հետո կհետևեք առաջ գնացողին, զրաստները պահելով գետի կողմը, իսկ հույլիտները կդասավորվեն արտաքին կողմում»: (5) Այս լսելուց հետո զորավարներն ու վաշտապետները հեռացան և անցան գործի: (6) Այնուհետև Կլեարհոսը հրամայում էր, իսկ մյուսները՝ հնազանդվում, ոչ թե նրան ընտրած լինելու համար, այլ որովհետև համոզվել էին, թե միայն նա է դատում հրամանատարին վայել կերպով, մինչդեռ մյուսները անփորձ էին:

[Հռոմեական Եփեսոսից մինչև ճակատամարտի վայրը նրանց անցած ճանապարհի երկարությունը կազմում էր 93 կայան՝ 535 փարսախ՝ 16050 ասպարեզ. իսկ ճակատամարտի վայրից մինչև Քաբեյուն, ինչպես պատմում էին, 360 ասպարեզ էր]:

(7) Երբ գիշերը վրա հասավ, Միլտոկյուսես թրակիացին իր քառասուն ճեծյալներով և շուրջ երեք հարյուր հետևակ թրակիացիներով այստեղից անցավ արհայի կողմը: (8) Կլեարհոսը առաջնորդում էր մյուսներին, որովհետև հրահանգներին համաձայն. իսկ սրանք հետևում էին: Եվ գիշերվա կեսին նրանք հասան առաջին կայանը՝ Արիայոսի և նրա զորքի մոտ: Մինչդեռ զորքը կանգնած էր մարտաշարով, հելլենների զորավարներն ու վաշտապետները Արիայոսի մոտ հավաքվեցին խորհրդի: Այնժամ և՛ հելլենները, և՛ Արիայոսն ու նրա հետ եղող բարձրաստիճան ազնվականները իրար երզվեցին շղակաճանել և լինել դաշնակիցներ: Բարբարոսները երզվեցին նաև առաջնորդել անխարդախ: (9) Նրանք այսպես երզվեցին վահանի վրա մտքելով ցուլ և վարագ և խոյ, որոնց արյան մեջ հելլենները բարբախեցին սուր, իսկ բարբարոսները՝ նիզակ: (10) Երդում տալուց հետո Կլեարհոսն ասաց. «Այժմ, ո՛վ Արիայոս, քանի որ և՛ ձեռ, և՛ մեք նախապահիր նույնն է, հայտնիք քո կարծիքը ուղերթի մասին. արդյո՞ք հեռանանք մեք Եկած ճանապարհով, թե՞ դու կարող ես առավել հարմար ճանապարհ մտածել»: (11) Իսկ նա պատասխանեց. «Նքե վերադառնանք մեք Եկած ճանապարհով, ապա ամբողջովին կկորուզվենք սովից. քանզի այժմ մենք ոչ մի պարեն չունենք: Նույնիսկ այստեղ

գալու ճանապարհին, մոտակա տասնյոթ կայաններում մենք ոչինչ չկարողացանք երկրում ձեռք բերել. իսկ երբ ինչ-որ բան էլ որևէ տեղ կար, ապա արշավելիս մենք բոլոր սպառեցինք: Այժմ մտադրվում ենք ավելի երկար ճանապարհով գնալ, որտեղ, սակայն, մենք պարենավորման դժվարություն չենք կրի: (12) Այժմ առաջին անգամները պետք է հնարավորին չափ ավելի երկար անենք, որպեսզի առավել կտրված լինենք արհալի բանակից: Եվ երբ մի անգամ երկու կամ երեք օրվա ճանապարհ հեռանանք, ապա արհալի այլևս չի կարող մեզ հասնել: Քանզի փոքրաքիվ զորքով նա չի համարձակվի հետապնդել մեզ, իսկ մեծաքիվ բանակն էլ չի կարող արագ շարժվել: Բացի այդ, գուցե և պարենի պակաս զգա: Ահա իմ կարծիքը», — ասաց նա:

(13) Ռազմական այս ծրագիրը ուրիշ բան չէր նշանակում, քան բանակը և փախչել. բայց դիպվածը ավելի լավ ծրագիր ընձեռեց: Երբ օրը բացվեց, նրանք ճանապարհվեցին, արևն աչ կողմում պահած: Նրանք ենթադրում էին արևը մայր մտնելու պահին հասնել բարելունյան երկրի գյուղերը, և դրանում շուտախաբվեցին: (14) Բայց դեռ աղչամուղչին նրանց թվաց, թե թշնամի հեծյալներ են տեսնում. և այն հեղինակները, որոնք այդ պահին գորսայունից դուրս էին գտնվում, իսկույն շարժվում իրենց տեղերը գրավեցին, իսկ Արիստոսը, որը վերավորված լինելու պատճառով սայլի վրա էր ճանապարհ գնում, ցած իջավ և գրահ հագավ. նույնն արեցին նաև նրա մերձավորները: (15) Մինչդեռ նրանք իրենց գեներներն էին կապում, առաջ ուղարկված դիտորդները եկան ու հայտնեցին, թե հեծյալներ չեն, այլ լծկան անասուններ են արածում: Եվ իսկույն բոլորն իմացան, որ արհալի այնտեղ մոտակայքում է բանակել. քանզի մոտակա գյուղերից բարձրացող ծուխ էր երևում:

(16) Կեարհոսը զորքը շտաբով թշնամու դեմ, քանզի գիտեք, որ զինվորները հոգնած են ու փողոցած և, բացի այդ, արդեն ուշ էր: Նա միաժամանակ ճանապարհից էլ շեղվեց, զգուշանալով, որ շրվա թե փախչում է, այլ զորքը տարավ ուղիղ, և արևը մայր մտնելու պահին առաջինը ինքը բանակեց գյուղերին հուպ մտախ, որտեղ արհալի զորքերը կողոպտել էին ամեն ինչ, նույնիսկ տների անտառանջուրը: (17) Ուստի առաջապահները դեռ ինչ-որ ձևով բանակեցին, մինչդեռ վերջինները մուր ժամանակ տեղ հասնելով, տեղավորվեցին ամեն մեկն ինչպես պատահեց. և իրար ձայն տալով այնքան աղմուկ բարձրացրին, որ թշնամին կարող էր լսել. մինչև իսկ թշնամիներից մտախկ եղողները դուրս վազեցին վրաններից: (18) Այս բանը հայտնի դարձավ հետևյալ օրը, երբ մոտակայքում արդեն չէր երևում ոչ լծկան անասուն, ոչ նամբար, ոչ իսկ ծուխ: Ըստ երևույթին ինքը արհալի ևս ահաբեկվել էր զորքի մոտենալուց: Այդ բանը նա դրսևորեց իր հաշորդ օրվա գործելակերպով:

(19) Այսուհանդերձ այդ գիշերվա ընթացքում հեղինակներին ևս սարսափը համակեց, և աղմուկ ու շփոթ առաջացավ, որպիսին պատահում է խուճապի մատակցելիս: (20) Իսկ Կեարհոսը այդ պահին իր մոտ գտնվող Տուրմիդես էլեացուն, որը լավագույն ֆարոզներից էր, հրամայեց բոլորին լուրջուն պանելու կոչ անել և հայտարարել, թե հրամանատարները մեկ տաղանդ վարձատրություն են խոստանում նրան, ով ցույց կտա էջր զորքերի մեջ բաց թողած մարդուն: (21) Այս հայտարարությունից հետո զինվորները համոզվեցին, որ վախենալով իրար է և որ հրամանատարներն անվնաս են մնացել: Լուսաբացին Կեարհոսը հրամայեց հեղինակներին մարտականոթեն դասավորվել և զինավառվել, ինչպես ճակատամարտի ժամանակ:

III. Այն, ինչ գրել եմ զորքերի մոտենալու ժամանակ արհալի ահաբեկվելու մասին, հայտնի դարձավ հետևյալ կերպ: Նրե նախորդ օրը նա դեսպան էր ուղարկել, պահանջելով գեներներ հանձնել, ապա այժմ, արևածագին, լուրբերներ ուղարկեց դաշինք կնքելու մասին: (2) Մրանք, հասնելով առաջավոր պահակակետերը, ուզեցին հանդիպել առաջնորդներին: Պահակներն այդ մասին տեղեկացրին, իսկ Կեարհոսը, որն այդ պահին գորաշարքերն էր դիտում, պատվիրեց հաղորդել լուրբերներին, որպեսզի սպասեն մինչև ինքը ազատ լինի: (3) Երբ զորքը դասավորեց մարտական շարքով, այնպես, որ ֆալանգսը բոլոր կողմերից խիտ էր թվում և հույլիտներից բացի ոչ ոք չէր երևում, կանչեց պատգամավորներին, ինքն իսկ նրանց ընդառաջ եկավ, իր հետ վերցնելով բոլորից լավ զինված և ամենից գեղատես զինվորներին, և նույնը պատվիրեց անել նաև մյուս զորավորներին: (4) Մոտենալով պատգամավորներին, նա հարցրեց, թե ի՞նչ են ցանկանում: Նրանք ասացին, թե ժամանել են դաշինք կնքելու, լիազորված լինելով արհալի պայմանները հաղորդել հեղինակներին, և հեղինակների պայմանները՝ արհալին: (5) Եվ նա պատասխանեց. «Ուրեմն հայտնեցե՛ք նրան, թե նախապես պատերազմ կլինի. Լանի որ մենք նախանշել չունենք, և չկա մեկը, որը համարձակվի հեղինակներին դաշինքի մասին խոսել, մինչև նրանց համար նախանշել չհայթայթի»: (6) Այս լսելով դեսպանները հեռացան և շուտով ետ վերադարձան, որից պարզ եղավ, թե այնտեղ մտախկ գտնվում է արհալի, կամ ինչ-որ մեկ ուրիշը, որին հանձնարարված էր բանակեցնելու զործի մասին: Նրանք հայտնեցին, թե հեղինակների ասածները արհալի իրավացի է համարում, իսկ իրենք էկել են հետները բերելով ուղեցույցներ, որոնք, դաշինք կնքելու դեպքում, հեղինակներին կառաջնորդեն այնտեղ, որտեղ մրբե՛ր կա: (7) Կեարհոսը հարցրեց, թե դաշինքը ու՞մի մեջ է միայն նրանց համար, ովքեր պետք է գնան ու վերադառնան, թե՛ այն վերաբերում է մյուսներին ևս: Նրանք պատասխանեցին.



«Ռոյորին, քանի ղևա ձեր պայմանները արժանի չեն հաղորդվել»: (8) Նրանց այս խոսքերից հետո Կլեարհոսը հեռացրեց դեսպաններին և խորհուրդ գումարեց: Ու որոշեցին անհապաղ դաշինք կնքելով հանգիստ գնան ու պարեն վերցնեն: (9) Իսկ Կլեարհոսն ասաց. «Ինձ ևս այդպես է թվում, բայց այդ մասին ևս իսկույն չեմ հայտնի, այլ կծգծվեմ մինչև այն ժամանակ. երբ դեսպաններն անհանգստանան, որ մենք կարող ենք հրաժարվել դաշինք կնքելուց: Իմ կարծիքով,—չարունակեց նա,—մեր գիևվորներին ևս նույն վախը կհամակի»: Երբ նրան թվաց, որ արդեն ժամանակն է, նա հայտարարեց, թե կնքում է դաշինքը և հրամայեց իսկույն գործը առաջնորդել պարենավորվելու:

(10) Նրանք առաջ ընկան, իսկ Կլեարհոսը, թեպետև դաշինք էր կնքել, այնուամենայնիվ նա նապարհ ընկավ գործը դասավորած մարտական շարքերով, ինքն էլ գտնվում էր վերջապահ գործմասում: Ճանապարհին պատահում էին առուներ և ջրանցքներ, ջրով լի, որոնք անհնար էր անցնել առանց կամրջի: Նրանք գետանցներ էին պատրաստում արձավի ծառերից, որ այնտեղ ընկած էին, հանախ իրենք ևս կտրատում էին դրանք: (11) Այստեղ իսկ կարելի էր տեսնել Կլեարհոսին, թե ինչպես էր նա աշխատանքը վերահսկում, ձախ ձեռքում նիզակը բռնած, իսկ աչում՝ գավազանը. և եթե նկատեր աշխատանքը կատարելու սահմանվածներից որևէ մեկին դանդաղելիս կամ հեշտ աշխատանքի վազելիս, խփում էր նրան և ինքն իսկ ցեխը մտնելով, օգնում. այնպես, որ բոլորի համար ամորալի էր լինում համատեղ ջանք շրափելը: (12) Այս աշխատանքի համար ընդգրկվեցին երեսնամյա հասակ ունեցողները. բայց երբ առավել ավագները տեսան Կլեարհոսին շանասիրությամբ աշխատելիս, իրենք ևս մասնակցեցին: (13) Կլեարհոսը շտապում էր հատկապես, որովհետև նա կասկածում էր, թե առուները միշտ չէ, որ այդպես ջրով լեցված են լինում, քանզի դեռևս դաշտերը ջրելու ժամանակը չէր: Նա կասկածում էր, որ արհան է ջրերը բաց թողել, ցանկանալով ցույց տալ հելլեններին, թե ինչքան դժվարություններ են սպասում նրանց նախապահին:

(14) Առաջ գնալով, նրանք հասան այն գյուղերը, որտեղից, ինչպես ասել էին ուղեկցողները, պետք է պարեն վերցնեին: Այնտեղ առձառ հաց կար և արձավի գինի, ինչպես նաև նույն արձավից պատրաստած քացախ: (15) Այնպիսի արձավները, որոնց նմանը Հելլադայում ևս կարելի է հանդիպել, առանձնացնում են ծառաների համար, իսկ տերերի համար պահ դրվածները ընտիր էին, սխանչելի իրենց զեղեցկությամբ ու մեծությամբ և նրանց տեսքը սաքից չէր տարբերվում: Դրանց մի մասը շորացնում են և պահում որպես քաղցրավենիք օգտագործելու համար: Դրանից պատրաստված ըմպելիկ հանելի համ ուներ, բայց գլխի ցավ էր պատճառում: (16) Այստեղ էլ գիևվոր-

ներն առաջին անգամ նաշակեցին արձավենու ուղեղը և շատերը զարմացան և՛ դրա տեսքով, և՛ յուրահատուկ համով. բայց սա ևս ուժեղ գլխացավ էր պատճառում: Իսկ արձավենին, որից հանում էին ուղեղը, ամբողջովին չորանում էր:

(17) Այստեղ նրանք երեք օր մնացին: Ու մեծ արհայի կողմից նրանց մոտ եկան Տիսսափեռները և արհայի կնոջ եղբայրը, ինչպես նաև ուրիշ երեք պարսիկ: Նրանց հետևում էին մեծ թվով ստրուկներ: Երբ հելլեն գորավորները նրանց դիմավորեցին, առաջինը Տիսսափեռները քարգմանչի միջոցով խոսեց այսպես. (18) «Ո՛վ հելլեններ. ևս Հելլադայի հարևանությամբ եմ ապրում և երբ տեսա, թե ինչպիսի ծանր և անելանելի կացության մեջ եք ընկել, ինձ համար հանելի առիթ ներկայացավ խնդրելու արհայից, որպեսզի ինձ բույլ տա ձեզ անվնաս Հելլադա հասցնել: Եվ ես վստահ եմ, որ դուք և ամբողջ Հելլադան ինձանից անջնորհակալ չեք լինի դրա համար: (19) Այսպիսի խորհրդածություններով խնդրեցի արհային և ասացի, որ նա արդար կվարժի ինձ այդ շնորհը անելով, քանի որ երբ Կյուրոսը արշավեց իր դեմ, առաջինը ես այդ հաղորդեցի իրեն և միաժամանակ իմ գործով ներկայացա իրեն օգնելու. և միայն ես էի հելլենների դեմ նակատողներից, որ շփախա, այլ առաջ անցնելով միացա արհայի գորագողին ձեր իսկ նամբարում, որտեղ, Կյուրոսին սպանելուց հետո, հասել էր արհան, որից հետո նա Կյուրոսի հետ եղող բարբարոսներին հալածեց այն մարդկանց օգնությամբ, ովքեր այժմ ներկայացել են ինձ հետ և ովքեր արհայի ամենահավատարիմ անձնավորություններն են: (20) Եվ արհան խոստացավ մտածել այդ մասին. միաժամանակ ինձ հրամայեց գալ ձեզ մոտ և հարցնել, թե ինչո՞ւ դուք արշավեցիք նրա դեմ: Ես խորհուրդ եմ տալիս ձեզ համեստ պատասխանել, որպեսզի ինձ համար ավելի հեշտ լինի արհայից ձեր օգտին նպաստավոր վնիս ստանալը»:

(21) Հելլենները առանձնացան և իրար հետ խորհրդակցելուց հետո պատասխան տվեցին. այն հաղորդեց Կլեարհոսն այսպես. «Մենք հավաքվել ենք ոչ արհայի դեմ պատերազմելու համար, ոչ էլ արշավել ենք արհայի վրա: Կյուրոսը բազում պատրվակներ էր հնարում, ինչպես ինքի ևս լավ գիտես, որպեսզի ձեզ անակնկալի բերի և մեզ այստեղ առաջնորդի: (22) Իսկ երբ նրան տեսանք դժվարին դրության մեջ, ամաչեցինք աստվածների և մարդկանց առաջ դավանանել այն մարդուն, որը անցյալ ժամանակներում մեզ համար շատ բարիք է կատարել: (23) Այժմ քանի որ Կյուրոսը մահացել է, արդեն մենք չենք պայքարում արհայի դեմ հանուն իշխանության, ոչ էլ ցանկանում ենք արհայի երկրին շարիք հասցնել, ոչ իսկ իրեն՝ արհային սպանել: Մենք կվերադառնանք մեր երկիրը, եթե որևէ մեկը մեզ չնեղացնի. իսկ եթե

մեզ վնաս պատճառեն, ապա մենք, աստվածների օգնությամբ, կպաշտպանվենք: Բայց եթե որևէ մեկը մեր նկատմամբ բարություն գործի, մենք լավությամբ փոխհատուցելու գործում չենք զիջի»: (24) Նա այսպես ասաց. իսկ Տիսասփեռնեսը լսելով նրան, պատասխանեց. «Այս ամենը ևս կհաղորդեմ արքային, իսկ ձեզ էլ՝ նրա պատասխանը: Մինչև իմ վերադարձը դաշինք մնում է ուժի մեջ. իսկ մենք ձեզ շուկա կտրամադրենք»:

(25) Հաջորդ օրը նա շնայունվեց, ուստի և հելլեններն սկսեցին անհանգրստանալ: Բայց երկրորդ օրը նա գալով հայտնեց, թե իրեն հաջողվել է արքայի համաձայնությունն ստանալ հելլեններից փրկելու մասին. թեպետև շատերը հակաճանաչել են, թե իբր արքային արժանավայել չէ բաց թողնել նրանց, ովքեր արշավել էին իր դեմ: (26) Ի վերջո նա ասաց. «Այժմ ձեզ մնում է մեզանից հավաստիացում ստանալ այն մասին, որ մենք ձեզ, մեր երկրով անցնելիս, բարեկամաբար կվերաբերվենք և առանց խաբեության ձեզ ետ Հելլադա կհասցնենք, մթերք գնելու հնարավորություն ընձեռելով: Իսկ այնտեղ, ուր հնարավոր չէ մթերք գնել, մենք թույլ կտանք այն վերցնել տեղում՝ մեր երկրից: (27) Բայց դուք ևս պետք է մեզ երդում տաք, որ կընթանաք բարեկամաբար, առանց վնաս պատճառելու, պարեն և ըմպելիք կվերցնեք այն դեպքում, եթե հնարավոր չլինի շուկայում գնել. իսկ եթե մենք շուկա արամադրենք, ապա դուք մթերք ձեռք կբերեք գնելու միջոցով»: (28) Այսպես որոշեցին ու երդվեցին. Տիսասփեռնեսը և արքայի կնոջ եղբայրը իրենց աջը տվեցին հելլենների գորավարներին, իրենք ևս վերցրին նրանց աջը: (29) Այնուհետև Տիսասփեռնեսն ասաց. «Այժմ ես կվերադառնամ արքայի մոտ և անհրաժեշտ պատրաստություններ տեսնելուց հետո կգամ կազմ ու պատրաստ և ձեզ Հելլադա կառաջնորդեմ, ինքս էլ կվերադառնամ իմ սեփական իշխանության երկիրը»:

IV. Այս բոլորից հետո հելլենները և Արիայոսը, իրար մոտիկ բանակած, սպասեցին Տիսասփեռնեսին ավելի քան քսան օր: Այդ ընթացքում Արիայոսի մոտ եկան նրա եղբայրը և ուրիշ ազգականներ, իսկ իր զինակիցների մոտ՝ մի քանի պարսիկ: Նրանք հուսադրում էին և արքայի կողմից հավաստիացնում, թե արքան անհիշաչար կլինի նրանց հանդեպ և՛ կյուրոսի հետ իր դեմ արշավելու, և՛ անցյալում պատահած որևէ այլ բանի համար: (2) Այս դեպքից հետո Արիայոսը և նրա մերձավորները սկսեցին պակաս ուշադրություն դարձնել հելլենների վրա: Հելլեններից շատերին այս բանը հանելի չթվաց, և նրանք գալով Կլեարոսի մոտ, ասացին նրան և մյուս գորավարներին: (3) «Ինչո՞ւ ենք դանդաղում: Մի՞թե չենք հասկանում, որ արքան ամեն ինչից առավել ցանկանում է մեզ ոչնչացնել, որպեսզի մնացած հելլենները ևս վա-

խենան արքայի դեմ արշավելուց: Այժմ նա ցանկանում է ստիպել մեզ սպասել, քանի որ իր գործը ցրված է: Բայց երբ նա վերահավաքի իր գործը, անկասկած է, որ կհարձակվի մեզ վրա: (4) Գուցե և ինչ-որ տեղ խրամատ է փորում, կամ պարիսպ է բարձրացնում, մեր նաճապարհը անանցանելի դարձնելու համար: Քանզի նա երբեք հոժարակամ չի ցանկանա, որպեսզի մենք Հելլադա վերադառնալով հայտնենք, թե ինչպես մենք, փոքրաթիվ լինելով հանդերձ, հաղթեցինք արքային իր իսկ դառնը և ծիծաղելով նրա վրա, վերադարձանք»: (5) Այդպես խոսողներին Կլեարոսը պատասխանեց. «Ես ևս այդ բոլորը նկատի ունեմ: Բայց կարծում եմ, որ եթե հիմա մենք հեռանանք, ապա կմտածեն, թե մենք հեռանում ենք կովելու նպատակով և դաշինքի պայմաններն ենք դրժում: Այդ դեպքում ոչ ոք մեզ շուկա չի տրամադրի և մենք ոչ մի տեղից մթերք չենք կարող ձեռք բերել. և բացի այդ, մենք ուղեցույց առաջնորդ չենք ունենա: Եթե այդպես վարվենք, ապա Արիայոսը իսկույն կլքի մեզ. այնպես, որ մեզ համար ոչ մի բարեկամ չի մնա, այլև մեր նախկին բարեկամները մեզ թշնամի կդառնան: (6) Ես չգիտեմ, կա՞րողո՞ք մեր նաճապարհին ուրիշ գետ ևս, որը մենք պետք է անցնենք: Բայց մենք տեսանք Եփրատը և գիտենք, որ անհնար է այն անցնել թշնամու հարձակման դեպքում: Իսկ եթե կովելու անհրաժեշտություն ծագի, ապա մենք արդյո՞ք ունենք դաշնակից հեծելազոր. մինչդեռ թշնամու հեծելազորը բազմաթիվ է և ունի բազում արժանիքներ: Ուստի հաղթելու դեպքում մենք ինչնա՞ն մարդ կարող ենք սպանել, մինչդեռ պարտվելու դեպքում մեզանից ոչ ոք չի փրկվի: (7) Ինձ համար անհասկանալի է, թե իր տրամադրության տակ այսֆան միջոցներ ունեցող արքան, եթե իրոք ցանկանար մեզ կործանել, ապա ինչո՞ւ կերդվեր և իր աջը կտար և դրանով իսկ աստվածների առաջ երդմնագրանց կդառնար, իսկ հելլենների և բարբարոսների մոտ իր վայելած վստահությունը կփոխեր անվստահության»: Նա նման շատ բաներ ասաց:

(8) Այդ ընթացքում ժամանեց Տիսասփեռնեսը իր սեփական գորամատով, ըստ երևույթին տուն վերադառնալու մտադրությամբ, ինչպես նաև Օրոնտասը՝ իր սեփական գորամատով: Նա իր հետ բերել էր նաև արքայադասեր, որին կնության էր վերցրել: (9) Այստեղից նրանք արդեն նաճապարհ ընկան Տիսասփեռնեսի առաջնորդությամբ, որը նաև պարեն գնելու հնարավորություն էր ստեղծում: Արիայոսը ևս վարելով կյուրոսի բարբարոսական գործը, ընթանում էր Տիսասփեռնեսի և Օրոնտասի հետ և նրանց հետ էլ բանակում: (10) Իսկ հելլենները այդ բանը կասկածանքով էին դիտում և ինքնուրույն ընթանում, ունենալով իրենց ուղեցույցները: Նրանք միշտ բանակում էին մեկ կամ ավելի փարսախա հեռավորության վրա: Երկու կողմերն էլ զգուշանում էին



իրարից, ասես թշնամիներ լինեին. ու այս պարագան ևս կասկած էր հարուցում: (11) Իսկ երբեմն նույն վայրում վառելիք կամ անասնակեր և նման բաներ հավաքելիս կովում էին իրար հետ. այնպես, որ սա ևս թշնամանք էր ծնում:

(12) Անցնելով Երեկ կայան, նրանք հասան Մեղական կոչված պարիսպը և անցան դրա ներքին կողմը: Այն կառուցված էր բրձված աղյուսով՝ կուպրի հետ շարված: Լայնքը ֆսան ռանաշափ էր, բարձրությունը՝ հարյուր, իսկ երկարությունը, ինչպես ասում էին, ֆսան փարսախ էր: Այն շատ հեռու չէր Բարեղունից: (13) Այստեղից առաջ ընթացան երկու կայան՝ ուր փարսախ և անցան երկու ջրանցք, մեկը կամրջի վրայով, մյուսը՝ յոթ նավերից պատրաստված գետանցով: Այդ ջրանցքները սկիզբ էին առնում Տիգրիս գետից. իսկ ջրանցքներից բաժանվում էին խրամատներ ամբողջ երկրով. սկզբում մեծ, ապա ավելի փոքր առուներ, ինչպիսիք լինում են Հելլադայում՝ կորեկի դաշտերում:

Եվ նրանք հասան Տիգրիս գետը, որի մոտ գտնվում էր խոշոր և մարդաշատ ֆաղաֆ, Սիտտակե կոչվող, գետից տասնհինգ ասպարեզ հեռավորության վրա: (14) Հելլենները վրան զարկեցին ֆաղաֆի շուրջ, մեծ, գեղեցիկ և բազմապիսի ծառերով ստվերախիտ մի պարտեզի մոտ, իսկ բարբարոսները անցել էին Տիգրիսը. և դրանով իսկ անհետացան տեսադաշտից: (15) Ընթրիքից հետո Պրոֆսենոսը և Քսենոփոնը զբոսնում էին ռազմաշարքերի առաջ, երբ ինչ-որ մարդ մոտենալով հարցրեց առաջապահներին, թե որտե՞ղ կարող է տեսնել Պրոֆսենոսին կամ Կլեարհոսին: Մենոնի մասին չհարցրեց նա, թե պետև եկել էր Արիայոսի մոտից, որի հետ Մենոնը կապված էր հյուրընկալման օրենքով: (16) Երբ Պրոֆսենոսն ասաց թե «ես նա եմ, ում փնտրում ես», այդ մարդն այսպես խոսեց. «Ինձ ուղարկել են Արիայոսը և Արտաոզոսը, որոնք հավատարիմ են մնացել Կյուրոսին և ձեր նկատմամբ բարյացակամ են եղել: Նրանք պատվիրում են ձեզ զգուշանալ, որ չլինի բարբարոսները գիշերով հարձակվեն, քանի որ մոտակա պարտեզում մեծ քվով զորք է կուտակվել: (17) Նրանք խորհուրդ են տալիս նաև պահակախումբ ուղարկել Տիգրիս գետի կամուրջը, քանի որ Տիսսափեոնները մտադիր է գիշերը ֆանդել այն, երբ հնարավոր լինի, որպեսզի դուք չկարողանաք այն անցնել և դրանով իսկ մնաք գետի ու ջրանցքի միջև»: (18) Այս լսելով, նրանք այդ մարդուն տարան Կլեարհոսի մոտ և կրկնեցին նրա ասածները: Իսկ Կլեարհոսը, լսելով, խիստ վրդովվեց ու վախեցավ:

(19) Այնտեղ ներկա եղող մի երիտասարդ<sup>11</sup> խորհրդածելով ասաց, թե այդ երկուսը, այն է՝ հարձակումը և կամուրջի ավերումը, իրար բացառում են:



Արքայական սպասավորներ  
Պարսկական Պարսպալսից



Պարսիկ մեծատոմարիկներ



Քանի որ հարձակվողները կամ պետք է հաղթեն, կամ պարտվեն: Ուրեմն, եթե հաղթեն, ապա ինչո՞ւ նրանք պետք է կամուրջը փակեն: Չէ՞ որ եթե մինչև իսկ շատ կամուրջներ լինեն, մենք դարձյալ չէինք կարող փախչելով փրկվել: (20) Իսկ եթե մենք հաղթենք, ապա կամուրջը փակված լինելու դեպքում նրանք ոչ մի տեղ չեն կարող փախչել. իսկ գետի մյուս ափին կանգնած գուրդից, ինչքան էլ այն բազմաթիվ լինի. և ոչ մեկը չի կարող, կամուրջը փակված լինելու դեպքում, օգնության հասնել:

(21) Այս լսելուց հետո Կլեարֆոսը հարցրեց լրաբերին, թե ինչքան է մեծ Տիգրիսի և ջրանցքի միջև ընկած երկիրը. սա պատասխանեց, թե այնտեղ կան շատ գյուղեր ու բազմամարդ ֆաղափներ: (22) Այնժամ արդեն պարզ դարձավ, որ բարբարոսները այդ մարդուն ուղարկել էին երկյուղ կրելով, որ հեղինները փակվելով կամուրջը, կմնան կղզու վրա, որպես պաշտպանական գիծ ունենալով մի կողմից Տիգրիս գետը, մյուս կողմից ջրանցքը: Իսկ պարեն նրանք կստանան այդ ընդարձակ և բարեբեր երկրից, որտեղ կային նաև աշխատող մարդիկ: Այնուհետև այդ վայրը կդառնար ապաստան ամեն մեկի համար, ով կամենար վնասել արքային:

(23) Դրանից հետո հեղինները գնացին հանգստանալու, բայց միաժամանակ պահակախումբ ուղարկեցին կամուրջը պաշտպանելու համար: Սակայն, ինչպես պահակները հաղորդեցին, ոչ ոք ոչ մի կողմից չհարձակվեց և ոչ իսկ թշնամիներից որևէ մեկը մտեցավ կամուրջին: (24) Առավոտյան հեղինները 37 նավերից կազմված կամուրջով սկսեցին անցնել մեծ գգուշավորությամբ, քանի որ Տիսսափեռնեսի հետ եղող հեղիններից ոմանք հայտնեցին, որ իբր նա պատրաստվում է հարձակվելու գետանցի ժամանակ: Թայց այս լուրը սուտ դուրս եկավ: Միայն գետանցի ժամանակ այլոց հետ հայտնրվեց Գուար, հետևելով, թե իրո՞ւմ հեղինները կանցնեն գետը: Եվ երբ այդ տեսավ, նա հեռացավ:

(25) Տիգրիսից նրանք առաջ ընթացան չորս կայան՝ քան փարսախ, մինչև Փյուսկոս գետը, որի լայնքը մի պլեթրոն էր, վրան էլ կամուրջ կար: Այստեղ էր հիմնված Օպիս անունով խոշոր ֆաղափը. սրա մոտակայքում հեղիններին հանդիպեց Կյուրոսի և Արտաստերեսի ապօրինի եղբայրը, որը Սուսայից և Եկբատանայից մեծաթիվ զորք էր բերում արքային օգնելու համար: Նա կանգնեցնելով իր զորքը, սկսեց դիտել իր մոտով անցնող հեղիններին: (26) Իսկ Կլեարֆոսը զորքը գույգ-գույգ դասավորեց ու մերթ շարժվում էր առաջ, մերթ էլ կանգ էր առնում: Այդպիսով, ինչքան որ առաջամասը կանգ էր առնում, նույնքան ևս զորքը ստիպված էր կանգ առնելու, այնպես որ նույնիսկ հեղինների աչքին իրենց զորքը մեծաքանակ թվաց, իսկ իրենց

դիտող պարսիկը զարմացավ: (27) Այստեղից առաջ ընթացան Մեդիայի<sup>12</sup> միջով վեց անմարդաբնակ կայան՝ երեսուն փարսախ, մինչև Կյուրոսի և արքայի մոր՝ Պարիսատիսին պատկանող գյուղերը: Տիսասփեռնեսը, Կյուրոսին ծանակելու նպատակով, թույլատրեց հելլեններից կողոպտել ամեն ինչ, բացի ստրուկներից: Իսկ այնտեղ շատ հաց կար և ոչխար և այլ հարստություն: (28) Այստեղից անապատով առաջացան չորս կայան՝ քսան փարսախ, Տիգրիս գետն իրենց աջ կողմը պահելով: Գետից այն կողմ առաջին կայանի վրա կար խոշոր և բարգավաճ ֆղաֆ՝ Կայնայ անունով, որտեղից բարբարոսները կաշվե լաստերի վրա<sup>13</sup> բերեցին հաց, պանիր, գինի:

V. Այնուհետև նրանք հասան Զապատաս գետը<sup>14</sup>, որի լայնքը չորս պլեթրոն էր, և այստեղ մնացին երեք օր: Այդ օրերին իրոք որ կասկածներ կային, բայց ոչ մի բացահայտ շարժումներ չնկատվեց: (2) Ուտի և Կլեարֆոսը որոշեց հանդիպել Տիսասփեռնեսին և, եթե հնարավոր լիներ, վերջ դնել կասկածանքներին, քանի որ այդ պատճառով կոպի չէր սկսվել: Նա մարդ ուղարկեց հայտնելու, թե ցանկանում է հանդիպել իրեն, և Տիսասփեռնեսը հոժարությամբ Կլեարֆոսին հրավիրեց իր մոտ:

(3) Երբ հանդիպեցին, Կլեարֆոսն այսպես խոսեց. «Ո՛վ Տիսասփեռնես, ես գիտեմ, որ մեզ երդումներ են տրվել և աչ ենք փոխանակել, իրար չվնասելու խոստումով: Բայց ես տեսնում եմ, որ դու քեզ պաշտպանում ես մեզանից, ասես մենք թշնամիներ լինեմք, իսկ մենք ևս այդ տեսնելով նույնպես պաշտպանում ենք մեզ: (4) Բայց քանի որ ուշադիր ֆննելուց հետո ես չնկատեցի, որ դուք փորձեիք շարիք նյութել մեր դեմ, իսկ ես հաստատ համոզված եմ, որ մենք ևս նման ոչինչ չենք մտածում ձեր նկատմամբ, ուստի և վրեժնեցի քեզ հետ բանակցություններ վարել, որպեսզի վերացնենք մեր միջից փոխադարձ անվստահությունը: (5) Քանզի ես գիտեմ, որ մարդիկ, զբաղությամբ կամ կասկածանքի պատճառով իրարից վախենալով, հանախ շտապել են միջոցներ ձեռք առնելու և հարվածել են, հարվածից վախենալով. և դրանով իսկ անուղղելի վնաս հասցրել մարդկանց, որոնք ոչ ցանկացել են շարիք հասցնել. ոչ իսկ այդպիսի մտադրություն են ունեցել: (6) Արդ, համոզված լինելով, որ նման քյուրոսի միջոցով, ես եկել եմ ապացուցելու, որ մեր հանդեպ քո ունեցած անվստահությունը արդարացի չէ: (7) Առաջին և ամենակարևորը, աստվածների առաջ մեր տված երդումները արգելում են մեզ իրար նկատմամբ թշնամի լինել. և ես երբեք չեմ նախանձի այն մարդուն, որը գիտակցաբար դրժում է երդումները: Քանզի աստվածների դեմ կոպելու դեպքում չգիտեմ մարդ ինչպիսի՞ արագությամբ և որտե՞ղ պետք է փախչի փրկվելու

համար, կամ որպիսի՞ խավարի մեջ կարող է քսվել, կամ ամբողջով ինչպիսի՞ վայրում կարող է ապաստան գտնել: Զի՞ որ ամենուր ամեն ինչ աստվածներին է ենթակա և բոլորի վրա աստվածներն իշխում են հավասարապես:

(8) Այս է իմ կարծիքը աստվածների և երդումների մասին, որոնց միջոցով մենք հաստատել ենք մեր բարեկամությունը: Իսկ ինչ վերաբերում է մարդկայինին, ապա, ներկա դեպքում, ես կարծում եմ, թե դու մեզ համար մեծագույն բարիք ես: (9) Որովհետև քեզ հետ մեզ համար ամեն մի ճանապարհ մատչելի է, ամեն մի գետ՝ անցանելի, և մենք պարենի պակաս չենք զգա: Իսկ առանց քեզ ամեն մի ճանապարհ մթին է, քանի որ մեզ անհայտ է ուղին. ամեն մի գետ՝ դժվարանցանելի, ամեն մի ամբոխ՝ սարսափելի. իսկ առավել անհարկու է անապատը, քանի որ դժվարությունները շատ են: (10) Իսկ երբ մոլեգնելով մենք, այնուամենայնիվ, որոշեցինք ոչնչացնել քեզ՝ մեր բարեբարին, մի՞թե մենք դրանով որևէ այլ բան կնվաճեինք, քան պատերազմը նոր, ուժեղագույն՝ հակառակորդի՝ արքայի դեմ<sup>15</sup>: Իսկ թե ինչպիսի մեծ հույսերից ես կզրկվեի քեզ որևէ շարիք պատճառելով, այժմ ես կհայտնեմ քեզ: (11) Ես ցանկացա Կյուրոսի բարեկամը դառնալ, կարծելով, որ նա այդ ժամանակ բոլորից առավել ի վիճակի է բարություն անել իր ցանկացած մարդուն: Իսկ այժմ քո մեջ եմ տեսնում Կյուրոսի իշխանությամբ օժտված մարդուն, որը տիրում է նրա երկրին, միաժամանակ պահելով իր սեփականը. արքայի գործընդերս էլ, որը թշնամի էր Կյուրոսին, քո դաշնակիցն է: (12) Քանի որ այդպես է, ապա ո՛վ այնքան խելացուր կլինի, որ քո բարեկամությունը չցանկանա: Այժմ, սակայն, ես կնշեմ նաև այն հանգամանքները, որոնք ինձ հուսադրում են, թե դու ևս ցանկանում ես մեր բարեկամը լինել: (13) Ես գիտեմ, որ մյուսիսիցիները ձեզ տհանություններ են պատճառում և կարծում են, որ իմ տրամադրության տակ եղած ուժերով նրանց կարող եմ հնազանդեցնել: Նույնը կասեմ նաև պիսիդիացիների մասին: Ես լսել եմ, որ ուրիշ շատ ժողովուրդներ ևս նույն դերում են հանդես գալիս և կարծում են, որ նրանց ևս կարող եմ հարկադրել շխանգարելու ձեր բարեկեցությունը: Ինչ վերաբերում է եգիպտացիներին, որոնց հանդեպ, ինչպես ինձ հայտնի է, դուք առավել եք զայրացած, ապա ես չգիտեմ, թե ինձ հետ եղող գործից բացի էլ ո՛ւմ օգնությամբ դուք կկարողանաք պատժել նրանց: (14) Ու դարձյալ, եթե մենք քեզ ծառայենք, ապա քո շրջակա հարևանների համար դու կդառնաս հզորագույն բարեկամը, իսկ եթե որևէ մեկը քեզ անախորժություն պատճառի, դու կարող ես դառնալ նրա տերը: Եվ մենք քեզ կժառանգենք ոչ միայն հանուն ոռոգիկի, այլև իբրև շնորհակալության նշան քո հանդեպ՝ մեզ փրկելուդ համար: (15) Այս

բոլորը նկատի ունենալով, և անվտանգությունը մեր նկատմամբ այնքան զարմանալի է թվում ինձ, որ ես մեծ հաճույնով կլսեի այն մարդու անուր, որն այնքան պերճախոս է և կարողացել է քեզ համոզել, թե մենք դավեր ենք նյութում և դեմ: Կլեարֆոսն այսպես խոսեց. իսկ Տիսսափեռնեսը այսպես պատասխանեց:

(16) «Ես հրեմովում եմ, ով կլեարֆոս, և իսկապես խոսեցի լսելով. քանզի ինձ թվում է, թե դու հասկացել ես, որ եթե ինձ շարիք ցանկանաս, դրանով իսկ դու քեզ հանդեպ ես շարիք գործում: Իսկ այժմ լսիր ինձ, որպեսզի իմանաս, թե իրավացի չես արժայի և իմ նկատմամբ ունեցած կասկածներիդ մեջ: (17) Եթե մենք ուզե՞նայինք ձեզ կործանել, ապա, և կարծիքով, մենք բավականաչափ հեծյալներ կամ հետևակ, կամ զենք չէինք ունենա, որով կարողանայինք ձեզ վնասել, առանց փոխադարձ վտանգի ենթարկվելու: (18) Կամ գուցե կարծում ես, թե մենք հարձակվելու համար հարմար վայրեր չէինք գտնի: Մի՞թե բազում դժվարություններով չեք անցնում անհամար դաշտերը, թեպետև դրանք ձեզ բարեկամական են<sup>16</sup>: Չե՞ք տեսնում, թե ինչպիսի լեռներ պետք է դուր անցնեք, որոնք եթե մենք նախապես գրավե՞նք, ձեզ համար անմատչելի կլինեն: Մի՞թե չկան այնպիսի գետեր, որոնց մոտ մենք կարող էինք որոշել, թե ձեզ քանի՞ մասի բաժանենք ու ոչնչացնենք: Կան նաև այնպիսի գետեր, որոնք դուր բոլորովին էլ չեք կարողանա անցնել, եթե մենք ձեզ չօժանդակենք: (19) Եթե այս բոլորի մեջ ձախողվե՞նք իսկ, այսուհանդերձ կրակն առավել հզոր է, քան բերքը, մենք կարող էինք այն հրդեհելով ձեզ դեմ հանդիման կանգնեցնել սովին, որք դուր չէիք կարող հաղթահարել, ինչքան էլ որ արի լինեիք: (20) Ուստի և ինչո՞ւ, ձեր դեմ կովելու այսքան շատ հնարավորություններ ունենալուց հետո, որոնցից ոչ մեկը մեզ համար վտանգավոր չէ, մենք պետք է ընտրենք այն միակ միջոցը, որը անարգանք է աստվածների նկատմամբ և ուխտադրում՝ մարդկանց հանդեպ: (21) Ամբողջովին անգոր են, անհարակ, ծայր աստիճան թշվառ, մինչև իսկ շար, այն մարդիկ, որոնք կամենում են աստվածների հանդեպ երդմնագանց ու մարդկանց նկատմամբ անհավատարիմ գտնվելու միջոցով որևէ բան կատարել: Իսկ մենք, ո՞վ կլեարֆոս, այդպիսին չենք. մենք ոչ անխոհեմ ենք և ոչ թուլամիտ: (22) Իսկ ինչո՞ւ, ձեզ ոչնչացնելու հնարավորություններ ունենալով, մենք այդպես չարեցի՞նք: Քաջ իմացիր, որ դրա պատճառը հելլենների վստահությունը վայելելու իմ բուռն ձգտումն է. այնպես որ վարձկան այն գործերով, որոնց հետ կյուրոսը արշավեց, վստահ իր առատ վարձատրության վրա, ես ցանկանում եմ ետ իջնել ծովափ, հույս ունենալով իմ բարեգործության հանդեպ նրանց ունենալիք երախտագիտության վրա: (23) Դու արդեն նշեցիր, թե ինչ ծառա-

յություններ դուր կարող եք ինձ մատուցել. բայց ես գիտեմ նաև դրանցից ամենակարևորը. միայն արժանի իրավունք գլխին ուղիղ տիրա (խույր) դնելով<sup>17</sup>, իսկ ձեր աջակցությամբ այդ ցանկությունը ունեցող մեկ ուրիշը ևս այդպիսին կարող է իր գլխին դնել:»

(24) Երբ նա այսպես ասաց, կլեարֆոսին քվաց, թե նա անկեղծ է խոսում, ուստի և պատասխանեց. «Մի՞թե նրանք, ովքեր հակառակ բարեկամության համար առկա այսպիսի պատճառների, փորձում են զրպարտանքների միջոցով մեզ թշնամացնել, արժանի չեն ծանրագույն պատիժների»: (25) «Ինչ վերաբերում է ինձ, ասաց Տիսսափեռնեսը, եթե և գորավարները, և վաշտապետները ցանկանան զալ ինձ մոտ, ես բացահայտ կտամ այն մարդկանց անունները, ովքեր ինձ հայտնել են, թե դու դավեր ես նյութում իմ դեմ»: (26) «Ես, պատասխանեց կլեարֆոսը, բոլորին կբերեմ և ինքս իմ հերթին կհայտնեմ քեզ, թե որտեղից եմ լսել ես քո մասին»:

(27) Այս խոսքերից հետո Տիսսափեռնեսը նրան բարեկամաբար խնդրեց մնալ իր մոտ և ընթրակից դարձրեց: Հաջորդ օրը, երբ կլեարֆոսը վերադարձավ նամբար, բացահայտ էր, որ հավատում էր Տիսսափեռնեսի բարեկամական հավաստիացումներին, և նրա խոսքերը հելլեններին հաղորդելով, ասաց նաև, թե Տիսսափեռնեսի մոտ պետք է գնան նրանք, ում նա հրավիրել է. և եթե հելլեններից որևէ մեկը բռնվի զրպարտության հանցանքի մեջ, ապա նա կպատժվի որպես դավաճան և հելլենների հանդեպ շարժառայ: (28) Ես կասկածում էր, որ զրպարտողը Մեհոնն է, քանզի իմացել էր, թե նա Արիայոսի ներկայությամբ տեսակցել էր Տիսսափեռնեսի հետ, և թե նա ըմբոստանում էր իր դեմ և դավեր նյութում՝ ամբողջ զորքը իր ձեռքը վերցնելու և դրանով իսկ Տիսսափեռնեսի բարեկամը դառնալու նպատակով: (29) Կլեարֆոսը նույնպես ձգտում էր ամբողջ զորքը գրավել իր կողմը և չեզոքացնել իր հակառակորդներին: Իսկ զինվորներից ոմանք առարկում էին նրան, համարելով, թե պետք չէ, որ բոլոր վաշտապետները և զորավարները գնան, և ոչ իսկ կարելի է հավատ ընծայել Տիսսափեռնեսին: (30) Բայց կլեարֆոսը համատորեն պնդեց, մինչև որ հաջողվեց նրան որոշում ընդունել՝ հինգ զորավարների և քսան վաշտապետների ուղարկել Տիսսափեռնեսի մոտ: Շուկա գնալու պատրվակի տակ նրանց ընկերակցեցին նաև զինվորներից շուրջ երկու հարյուր մարդ:

(31) Երբ նրանք հասան Տիսսափեռնեսի դռների առաջ, ներս հրավիրվեցին զորավարներ Պրոֆսեսոս բեռլոսիացին, Մեհոն քեսալացին, Ագիաս արկադիացին, կլեարֆոս լակոնացին, Սոկրատես աֆայացին, իսկ վաշտապետները մնացին դռների առաջ: (32) Ոչ շատ ժամանակ անց, միևնույն ազդանշանով, ներսում եղածները կալանավորվեցին, իսկ դրսում մնացածները



սպանվեցին: Դրանից հետո բարբարոսների հեծյալներից ոմանք արշավեցին դաշտ, սպանելով հանդիպող բոլոր հելլեններին. ստույգ լինե՞ր, թե ազատ: (33) Իսկ ճամբարից դիտող հելլենները զարմանում էին տեսնելով ձիարշավը ու չցիտեին ի՞նչ անել, մինչև որ փորից վիրավոր Նիկսոս արկաղիացին աղիքները ձեռքերով բռնած. փախչելով հասավ ու պատմեց կատարվածի մասին: (34) Այնժամ հելլենները բոլորը միասին սարսափած վազեցին գինավելու, կարծելով, թե բարբարոսները իսկույն կրափվեն իրենց ճամբարի վրա:

(35) Բայց բոլորը չէ, որ Եկան դեպի ճամբար, այլ միայն Արիայոսը, Արտառոսը և Միքրադատեսը, որոնք առավել հավատարիմ էին Կյուրոսին: Իսկ հելլենների բարգմանը ասաց, որ նրանց հետ տեսնում և ճանաչում է նաև Տիսսափեռոնեսի եղբորը: Նրանց հետևում էին նաև զրահ հագած շուրջ երեք հարյուր պարսիկ: (36) Երբ նրանք արդեն մոտեցան, առաջարկեցին դուրս գալ զորավարներին ու վաշտապետներին, Եթե հելլենների թվում դեռևս այդպիսիները կան, որպեսզի իրենք հայտնեն արևայի հրամանները: (37) Այնժամ պահակախմբի ուղեկցությամբ դուրս եկան հելլենների զորավարներ Կլեանոր օրհոմենացին և Սոփայնետոս ստյումփայացին. նրանց հետ նաև Քսենոփոն արքեևացին, որպեսզի իմանա՞ր Պրոսպենոսի մասին: Խելիստոփոսը պատահաբար բացակայում էր, ուրիշների հետ պարեն վերցնելու համար ինչ-որ գյուղ գնացած լինելու պատճառով: (38) Երբ նրանք կանգնեցին լսելի հեռավորության վրա, Արիայոսն այսպես խոսեց. «Ո՛վ հելլեններ, Կլեարհոսը երդմնազանց և ուխտադրու՞մ գտնվելով, իր դատաստանը գտավ ու սպանվեց. իսկ Պրոսպենոսը և Մենոնը նրա դավերը մեր առաջ բացահայտելու համար մեծ պատվի արժանացան մեզ մոտ: Իսկ ձեզանից արհամարհանում է զեներ հանձնել. ֆանգի, ասում է նա, այն պատկանում է իրեն, ֆանի որ նախկինում պատկանում էր Կյուրոսին, իր ստույգին»: (39) Այս խոսքերին հելլենները տվեցին հետևյալ պատասխանը. որը հաղորդեց Կլեանոր օրհոմենացին: «Ո՛վ Արիայոս, ստորագույնը մարդկանց մեջ. և դուք բոլորը, Կյուրոսի նախկին ընկերներ: Մի՞թե դուք չե՞ք երկյուղում ո՛չ աստվածներից, ո՛չ մարդկանցից. դուք, որ երդվեցիք մեզ ունենալ ընդհանուր բարեկամներ ու թշնամիներ, իսկ հիմա ամեն ինչ դրժելով. ամենաանաստված և ամենանենգ Տիսսափեռոնեսի հետ համատեղ ոչնչացրիք այն նույն մարդկանց. որոնց փոխադարձ երդումներ էիք տվել. մեզ ևս մատնելով. հիմա թշնամու հետ Եկել էք մեզ վրա»: (40) Իսկ Արիայոսը պատասխանեց. «Բացահայտվեց. որ առաջինը Կլեարհոսն էր դավեր նյութել Տիսսափեռոնեսի և Օրոնտասի. ինչպես նաև նրանց հետ Եղող մեր բոլորիս դեմ»: (41) Այս խոսքերին Քսենոփոնը պատասխանեց. «Ուրեմն Կլեարհոսը, Եթե իրոք հակառակ տրված երդումներին, ուխտադրում

գտնվեց, արդարացի պատիժ է ստացել. ֆանգի արդարությունը պահանջում է երդմնազանցներին ոչնչացնել: Ինչ վերաբերում է Պրոսպենոսին և Մենոնին, ձեր բարեկամներին ու մեր զորավարներին, ապա նրանց ուղարկե՛ք այստեղ: Ակներև է, որ նրանք երկու կողմերին էլ բարեկամ լինելով, կաշխատեն և՛ ձեզ. և՛ մեզ լավագույն խորհուրդներ տալ»: (42) Այս խոսքերից հետո բարբարոսները երկար խորհրդակցեցին իրար միջև ու հեռացան առանց պատասխանելու:

VI. Այս միջոցով բռնված զորավարները տարվեցին արևայի առաջ և, գլխատվելով, սպանվեցին: Նրանցից Կլեարհոսը, բոլոր նրան մոտիկից ծանոթների միահամուտ խոստովանությամբ, և՛ հմուտ ռազմագետ, և՛ վերին աստիճանի ռազմասեր մարդ էր: (2) Այսպես օրինակ, ֆանի դեռ լակեդեմոնացիները պատերազմում էին արքեևացիների դեմ<sup>19</sup>, նա մնում էր իր հայրենիքում. իսկ երբ հաշտություն կնքվեց, նա համոզեց իր պետությանը, որ քրակիացիները վնասում են հելլեններին<sup>20</sup>, և հնարավոր բոլոր միջոցները գործադրելով, վերցրեց էֆորներին<sup>21</sup> համաձայնությունը և նավերով մեկնեց Քերոսնեսից այն կողմ բնակվող քրակիացիներին պատժելու: (3) Իսկ էֆորները ինչ-որ պատճառով փոխեցին իրենց որոշումը, երբ նա արդեն Իսթմոսն անցել էր<sup>22</sup>, և փորձեցին նրան ետ վերադարձնել. բայց Կլեարհոսը նրանց չենթարկվեց ու շարունակեց նավել դեպի Հելլեսպոնտոս: (4) Այդ իսկ պատճառով նա, որպես անհնազանդ, մահվան դատապարտվեց Սպարտայում իշխանության գլուխ կանգնածների կողմից: Արդեն որպես վտարանդի, նա Եկավ Կյուրոսի մոտ: Թե ինչպես նա Կյուրոսին համոզեց իրեն 10 հազար դանեկան տալ, ուրիշ առիթով գրել ենք: (5) Եվ նա ստանալով դրամը, անգործության շմատնվեց, այլ այդ փողերով գուրհավաքեց ու պատերազմեց քրակիացիների դեմ: Նրանց հաղթելուց հետո կողոպտում ու ավերում էր նրանց երկիրը, մինչև որ զորքը Կյուրոսին պետք եղավ: Այնժամ նա հեռացավ, որպեսզի Կյուրոսի հետ համատեղ նոր պատերազմ մղի:

(6) Իմ կարծիքով այս գործերը ռազմասեր մարդուն են հատուկ. մինչ նա կարող էր խաղաղ, առանց ստորանալու և առանց վնաս կրելու ապրել, նա գերադասում է պատերազմը. զվարճանալու փոխարեն նա կամենում է աշխատել, այսինքն՝ պատերազմել. իր ունեցվածքը ապահով պահելու փոխարեն նախընտրում է այն ծախսել ռազմական նպատակներով: Նա իր փողերը ծախսում էր պատերազմ մղելու վրա, ինչպես կծախսեին սիրային կամ այլ բավականության համար: Ահա թե ինչքան ռազմասեր էր նա: (7) Իսկ ռազմական արվեստում նրան համարում էին հմուտ, ֆանի որ նա չէր փախչում վտանգից և ցերեկ թե գիշեր հարձակվում էր թշնամու վրա և դժվար պահե-

րին խելամիտ էր, ինչպես միաբերան վկայում են ամեն տեղ նրա հետ եղողները: (8) Պատմում էին նույնպես, թե նա լավագույն զորահրամանատար էր, ինչքան որ այդ հնարավոր էր նրա բնավորությունն ունեցող մարդու համար: Այսպես, նա ավելի քան որևէ ուրիշը կտրուղանում էր միջոցներ գտնել իր զորքը պահելով ապահովելու համար, ինչպես և կարողանում էր իր հետ եղողներին հավատարմություն ներշնչել իրեն՝ Կլեարհոսի նկատմամբ: (9) Այդ ամենը նա ձեռք էր բերում իր խստության շնորհիվ: Նրա տեսքը մոռյլ էր և ձայնը կոպիտ. նա պատժում էր դաժանորեն, երբեմն ցատումով. այնպես որ հաճախ ինքն իսկ զոչում էր: (10) Եվ նա պատժում էր գիտակցաբար, քանի որ, նրա կարծիքով, այն բանակը, որում պատիժ չկա, պիտանի լինել չի կարող: Պատմում են նաև, թե իբր նա ասել է, որ զինվորը, Լթե նրանից պահանջվում է պահակ կանգնել կամ սիրելիներից հեռանալ, կամ անառարկելիորեն հարձակվել թշնամու վրա, պետք է ավելի շատ վախենա իր հրամանատարներից, քան թշնամուց: (11) Ուստի դժվարին պայմաններում զինվորները պատրաստ էին բացարձակապես նրան լսելու և չէին ցանկանում ուրիշ ոչ մեկին հրամանատար ընտրել: Որովհետև, ասում էին նրանք, նրա մոռյլությունը փոխվում էր պայծառության, իսկ դաժանությունը ուղղվում էր թշնամու դեմ այնպես, որ այն դառնում էր փրկարար ու դադարում ահաբեկու թվալուց: (12) Իսկ երբ վտանգից դուրս էին գալիս, և հնարավորություն էր ստեղծվում անցնել ուրիշ գորավարի հրամանատարության տակ, շատերը լնում էին նրան, քանի որ նա հրապուրիչ ոչինչ չունեց, այլ միշտ կոպիտ էր ու դաժան. այնպես, որ զինվորները նրա հանդեպ զգում էին այն, ինչ Լեվիաները ուսուցչի հանդեպ: (13) Ուստի և նրան Լերեք շեն հետևել բարեկամությունից ու բարյացակամությունից մղված. իսկ ովքեր նրան Լեքարկվել էին պետության որոշմամբ կամ կարիքից ստիպված և կամ որևէ այլ հանգամանքի բերումով, նա պահում էր նրանց դաժան հպատակության մեջ: (14) Երբ զինվորներն սկսում էին նրա հրամանատարության տակ հաղթել թշնամուն, արդեն նրանց համակում էր սխրանքներ գործելու բուռն ցանկությունը. այնքան թշնամու դեմ արիություն էին ցուցաբերում և Կլեարհոսի կողմից պատժվելու երկյուրը նրանց դարձնում էր կարգապահ: (15) Այսպիսի հրամանատար էր Կլեարհոսը. և, ինչպես պատմում են, նա այնքան էլ չէր սիրում ծառայել ուրիշի հրամանատարության տակ: Մահանալիս նա շուրջ հիստոն տարեկան էր:

(16) Պրոֆանեսոս բեռվախաղի, Լեք դեռևս մահուկ էր, Լեքում էր դառնալ մեծագործություններ կատարելու քնդունակ մարդ. և հաճուն այդ ցանկության, նա դրամ վճարեց Գորգիաս լեռնախնացուն<sup>2</sup>: (17) Նրա մոտ որոշ ժամանակ սովորելուց հետո, Լեք արդեն իրեն ընդունակ համարեց հրամա-

նատար դառնալու և լավագույնների հետ ընկերություն անելու, ինչպես և իր բարերարներին պարտական շննալու, Պրոֆանեսոսը եկավ միանալու Կյուրոսի ձեռնարկումներին. և ենթադրում էր, թե այդպիսով ինքը մեծ համբավ ձեռք կբերի, մեծ հեղինակություն և շատ հարստություն: (18) Այս բոլորը խիստ ցանկանալով հանդերձ, միաժամանակ և բացահայտ էր, որ այդ ամենը նա չէր կամենում անարդար եղանակով ձեռք բերել, այլ մտածում էր միայն արդարությամբ և արիությամբ տիրանալ բարիքներին. բայց ոչ առանց այդ առաքինությունների: (19) Նա կարող էր գլխավորել արի և ազնիվ մարդկանց. բայց նա չէր կարողանում իր զինվորներին ոչ հարգանք, ոչ իսկ սարսափ ներշնչել, այլ ավելի շատ ինքն էր ամաչում զինվորներից, քան իր եերականներն իրենից. և նա ավելի շատ վախենում էր զինվորներին ատելի դառնալուց, քան թե նրանք կվախենային իրեն շենքարկվելուց: (20) Նրա կարծիքով, հրամանատարի համար բավական է, երբ նա գովում է լավ գործ անողին, իսկ անարդար վարվողին չի գովում: Այդ իսկ պատճառով իր զինակիցներից ազնիվներն ու արիները համակրում էին նրան, իսկ խարդախները նրա դեմ դավեր էին նյութում, քանի որ հեշտ էր նրան խաբելը: Երբ նա մահայալ, շուրջ երեսուն տարեկան էր:

(21) Հայտնի էր, որ Մենոն թեսալացին, մեծապես տենչալով հարստանալ, ձգտում էր իշխանության հասնել, որպեսզի առավել ստանա, ձգտում էր պատվի, որպեսզի կարողանա առավել շահ ձեռք բերել: Նա ձգտում էր նաև ամենահզորների բարեկամությունը շահել. որպեսզի անարդարություն գործելիս պատիժներ չկրի: (22) Իր ձգտումները իրականացնելու ամենակտուրկ նախապարհը նա համարում էր Լեզմահագանց լինելը, սակայն և խաբելությունը, միևնույն պարզությունը և նշմարտությունը նա համարում էր անմիտներին վայել բաներ: (23) Ոչ ոքի բացահայտ չէր սիրում, իսկ երբ որևէ մեկին վրտանեցնում էր իր բարեկամության մասին, ապա պարզ էր, որ նա դավեր էր նյութում նրա դեմ: Նա երբեք չէր ծաղրում թշնամուն, բայց իր մեծավորների մասին միշտ հեզմանեով էր խոսում: (24) Նա երբեք չի մտածել թշնամու ունեցվածքը ձեռք բերելու մասին. քանի որ, նրա կարծիքով, դժվար է վերցնել այն, ինչ մարդիկ պահպանում են. իսկ իր կարծիքով միայն ինքը գիտեր, որ ընկերների ունեցվածքը ավելի հեշտ է ձեռք բերել. քանի որ այն չի պահպանվում: (25) Նրանցից, ում ինքը նախաչում էր որպես ուխտադրում և օրինազանց, նա վախենում էր, ինչպես լավ պաշտպանված մարդկանցից, միևնույն նշմարտությամբ գործող և ազնիվ մարդկանց նա փորձում էր շահագործել որպես բույլերի: (26) Ինչպես որ մեկը հպարտանում է իր երկյուրածությամբ, նշմարտասիրությամբ և արդարությամբ, այնպես և Մենոնը

պարծենում էր խաբելու, ստեղծեց հարիւնելու, ընկերներին հեզնելու իր ընդունակութեամբ. իսկ խորամանկութիւնից զուրկ մարդկանց նա միշտ անուսում էր համարում: Եվ երբ ցանկանար որևէ մեկի առաջին ընկերը դառնալ, ապա շարախոսում էր նրա լավագույն ընկերների մասին, մտածելով, որ այդպիսով կարող է հասնել իր նպատակին: (27) Զինվորների հնազանդությունը մտածում էր ապահովել նրանց վատ արարքներին մասնակից դառնալու նախապահով: Նա պահանջում էր իրեն պատվել ու ծառայել, ակնարկելով, որ կարող է, ցանկութեամբ դեպքում, մեծ վնաս հասցնել: Երբ որևէ մեկը հեռանում էր նրանից, նա ասում էր, թե ինքը մեծ բարեգործություն է արել շսպանելով նրան, քանի դեռ օգտվում էր նրա ծառայություններից:

(28) Նրա անհայտ գործերի մասին խոսելիս կարելի է սխալվել. բայց անհա թե ինչ է հայտնի բոլորին: Արիստրապոսի մոտ նա, դեռևս փոքր տարեկանի, դարձավ վարձկանների գործավար. իսկ բարբառոս Արիստրապոսի հետ, որը գեղատես պատանիների սիրահար էր, շատ մտերմացավ. և ինքը ևս, անմոռում լինելով հանդերձ, մորուսավոր սիրեկան ունեւ, թարիպաս անունով: (29) Երբ նրա ընկեր գործարհները սպանվեցին, որովհետև Կյուրոսի հետ արշավել էին արհայի դեմ, ինքը նույնն արած լինելով հանդերձ, շսպանվեց: Բայց նա սպանվեց հետագայում արհայի կողմից՝ մյուս գործարհների սպանությունից հետո, բայց ոչ թե Կլեարհոսի ու մյուս գործարհների նման գրկխառվելով, որ համարվում է մահվան ամենաարագ ձևը, այլ, ինչպես պատմում են, ամբողջ մի տարի տանջանքների ենթարկվելուց հետո, և այդպիսով իր կյանքն ավարտեց որպես շարագործ:

(30) Ագիաս արկադիացին ու Սոկրատես ասոյացին նույնպես սպանվեցին: Ոչ ոք նրանց չձանակեց իրեն պատերազմում վախեցողների և ոչ ոք նրանց չմեղադրեց ընկերներին դավանանքի մեջ: Նրանք երկուսն էլ շուրջ երեսունհինգ տարեկան էին:



## Գ Ի Բ Ք Ե Ր Ր Ո Ր Դ

1. [Այն, ինչ հելլենները կատարեցին Կյուրոսի արշավանքի ժամանակ մինչև նակատամարտը, և այն, ինչ տեղի ունեցավ Կյուրոսի մեռնելուց հետո. երբ հելլենները սկսեցին նահանջել Տիսսափեռնեսի հետ միասին՝ նրա հետ պայման կապելուց հետո, պատմվել է նախորդ գրքում]:

(2) Զորավարների կալանավորվելուց և վաշտապետների ու նրանց ուղեկցող զինվորների ոչնչացումից հետո հելլենները ընկան շատ դժվարին դրության մեջ, մտածելով, որ իրենք գտնվում են արհայի զորների առաջ, իսկ շորչապատում կան բազմաթիվ բշտամի ցեղեր և բաղախներ, և որ այստեղևն ոչ ոք իրենց պարեն չի տրամադրելու. մյուս կողմից նրանք Հելլադայից հեռու էին ոչ պակաս քան տասը հազար ասպարեզ, և նախապահի համար առաջնորդ չունեին, իսկ նրանց տուն դարձի նախապահը կտրում էին անանցանելի գետեր. նրանց դավանանք էին նաև Կյուրոսի հետ արշավանքի ելած բարբառոսները և իրենք մնացել էին մեն-մենակ, առանց որևէ հեծյալ զաշնակցի, ուստի և պարզ էր, որ հաղթելու դեպքում իրենք ոչ ոքի չէին կարող ոչնչացնել, իսկ պարտվելու դեպքում իրենցից և ոչ մեկը կենդանի չէր մնալու: (3) Այս ամենի մասին մտածելով ու ննջված տրամադրությամբ, նրանցից էշերը միայն երկուսն էին հաց նաշակեցին և էշերն էլ կրակ վառեցին. իսկ առավել շատերը այդ գիշեր չվերադարձան իրենց համբարը. այլ ամեն մեկը պառկեց հանգստանալու ու պատահեց, բայց չէին կարողանում լնել տխուրությունից, ինչպես նաև հայրենիքի. ծնողների, կանանց ու երեխաների նկատ-

մամբ զգացած կարոտից, կարծելով, թե նրանց այսուհետև երբեք չեն տեսնելու: Այս մտածմունքներով նրանք պառկեցին հանգստանալու:

(4) Քանակում կար մի մարդ՝ Քսենոփոն արեւացիէ՞, որը ո՛չ գորավար էր, ո՛չ վաշտապետ, ո՛չ իսկ զինվոր: Բայց ուղեկցում էր զորքերին: Նրան հայրենի երկրից հրավիրել էր Պրոֆսենոսը, իր վաղեմի բարեկամը, որը խոստացել էր իրեն. եթե գալու լինե՞ր, բարեկամացնել Կյուրոսի հետ, որին, ինչպես ասում էր, ինքը իր հայրենիքից բանկ էր գնահատում: (5) Քսենոփոնը կարողավ նրա նամակը, խորհրդակցեց Սոկրատես արեւացու՞ հետ իր ուղեվարության մասին: Եվ Սոկրատեսը, կասկածելով, որ Կյուրոսի հետ մտերմությունը կարող է պետության ձեռքին պատրվակ հանդիսանալ Քսենոփոնին մեղադրելու համար, քանի որ կարծիք կար, թե Կյուրոսը եռանդագին օգնել էր լակեդեմոնացիներին Աթենքի դեմ պատերազմելիս՝ խորհուրդ տվեց Քսենոփոնին զնալ Դելփի՞ և աստծու պատգամն իմանալ այդ ուղևորության մասին: (6) Գալով Դելփի, Քսենոփոնը հարցրեց Ապոլլոնին, թե աստվածներից ո՞ր մեկին գոն մատուցի և աղոթի, որպեսզի լավագույնս և առավել հաջող ի կատար ածի իր նպատակադրած ուղևորությունը և բարեհաջող վերադառնա հայրենիք: Եվ Ապոլլոնը հայտնեց նրան, թե որ աստվածներին նա պետք է գոհաբերություն կատարի: (7) Դելփիից վերադառնալով, Քսենոփոնը հայտնեց պատգամը Սոկրատեսին: Կսելով Քսենոփոնին, Սոկրատեսը սկսեց կշտամբել նրան, որ աստծուն հարցրել է ոչ թե իր գնալու կամ չգնալու մասին, այլ ինքը նախապես գնալ որոշելով, հարցրել է ուղևորությունը լավագույնս ի կատար ածելու մասին: «Բայց քանի որ,—ասաց նա,—դու այդպես ևս հարցը դրել, ուստի և պետք է կատարել աստծու հրամանը»: (8) Եվ այսպես, Քսենոփոնը, մատուցելով աստծու սահմանած գոհերը, ետվով մեկնեց: Սարդեսում նա հասավ Պրոֆսենոսին ու Կյուրոսին, որոնք արդեն պատրաստվում էին արշավել դեպի Երկրի խորք, և ներկայացվեց Կյուրոսին: (9) Քանի որ Պրոֆսենոսը համոզում էր Քսենոփոնին, ապա Կյուրոսը ևս սկսեց համոզել նրան մնալու, ավելացնելով, որ արշավանքն ավարտելուց անմիջապես հետո նրան ետ կուղարկի. իսկ արշավանքը, ինչպես ասվում էր, պիտի դիպարված, բայց ոչ Պրոֆսենոսի կողմից. քանզի ոչ նա, ոչ իսկ նկլեցներից ուրեք մեկը, բացի Կլևարոսից, չգիտե՞ր, որ արշավում են արեւայի դեմ. բայց երբ հասան Կիլիկիա, բոլորի նամար պարզ դարձավ, որ արշավանքը արեւայի դեմ էր: Հնկեցները սկսեցին վախենալ ուղևորությունից. բայց շատերը, թեպետև ակամա, շարունակեցին արշավանքը, ամաչելով և՛ իրարից, և՛ Կյուրոսից: Նրանցից մեկն էր և Քսենոփոնը:

(11) Երբ արդեն ծանր վիճակ ստեղծվեց. Քսենոփոնը ևս տխրեց մյուսների հետ և շկարոպացավ մեկ. բայց մի փոքր մտախելով նա երազ տեսավ: Նրան երևաց, թե սրտաց ու կայծակ ընկավ իր հայրենի տան վրա, որից այն ամբողջովին բոցավառվեց: (12) Սարսափած, նա խելույն վեր բռավ, և երազը նրան մի կողմից բարենշան թվաց, քանի որ միևնչյեռ ինքը դժվարությունների և վտանգների մեջ էր, Ձևսից նառագայրող լույս տեսավ. մյուս կողմից սարսափեց, մտածելով, որ երազը ուղարկել է Ձևս-արեւան՞. քանզի թվաց, թե ինքը շրջապատված է բոցավառվող կրակով, ուստի և չի կարողանալու դուրս գալ արեւայի երկրից, այլ բոլոր կողմերից պետք է կաշկանդվի ինչ-որ դժվարություններով: (13) Իսկ թե ինչ իմաստ կարող էր ունենալ այդպիսի երազ տեսնելը, կարելի է կռահել երազին հաջորդող դեպքերից: Ու կատարվեց այսպես: Զարթնելուց անմիջապես հետո նա սկսեց մտածել. «Ինչո՞ւ եմ պառկել: Գիշերն անցնում է. իսկ լուսաբացին, հավանաբար, թշնամին կհայտնվի: Եթե մենք ընկնենք արեւայի ձեռքը, ապա ի՞նչը կխանգարի, որ մենք, ամեն տեսակ դժվարություններ հաշակելուց և ամենաձանձուր փորձությունների ենթարկվելուց հետո, անարգված մեռնենք: (14) Միևնչյեռ ոչ ոք հոգ չի տանում և չի պատրաստվում պաշտպանության, այլ պառկել ենք, ասես մեզ բույրատրելի է հանգիստ լինել: Իսկ ե՞ս. ո՞ր ֆաղափից եմ սպասում այն գորավարին, որը պետք է այդ ամենն անի: Ու ես իմ ո՞ր տարիքն եմ սպասում? Անշուշտ ես հետ այսու ավելի մեծ տարիքի չեմ հասնի. եթե այսօր ինձ մատնեմ թշնամու ձեռքը»:

(15) Այնժամ նա վեր կացավ ու նախ իր մտ կանչեց Պրոֆսենոսի վաշտապետներին: Երբ հավաքվեցին, նա ասաց. «Ես, վաշտապետներ, ոչ կարող եմ մեկնել, ոչ իսկ պառկած մնալ, և կարծում եմ, որ դուք ևս չեք կարող, տեսնելով այն վիճակը, որում այժմ գտնվում եմ: (16) Ինչ վերաբերում է թրշնամիներին, ապա պարզ է, որ նրանք մեր դեմ չսկսեցին պատերազմը, միևնչյեռ համոզվեցին, թե ամեն ինչ լավ են նախապատրաստել. իսկ մեզանից ոչ ոք հակամիջոց չի մտածում, որպեսզի լավագույնս կռվենք: (17) Եվ եթե մենք ենթարկվենք և ընկնենք արեւայի ձեռքը, ապա ի՞նչ կլինի մեր բախտը: Նա իր արգանդակից եղբորը, թեկուզև սպանված, գլխատելուց և ձեռքերը կտրելուց հետո խաչեց: Իսկ մեզ, որ ոչ մի հովանավոր պաշտպան չունենք և արշավեցինք նրա դեմ, որպեսզի նրան թագավորից վերածենք ստրուկի և, եթե կարողանանք, սպանենք, ի՞նչ տանջանքներ են սպասում: (18) Մի՞թե նա ամեն ինչ չի անելու, որպեսզի մեզ հետին տանջանքների ենթարկելով, բոլոր մարդկանց սարսափ ներշնչի, որ նրանք երբեք չարշավեն իր դեմ: Ուստի մենք հնարավոր ամեն ինչ պետք է անենք, նրա ձեռքը շրնկնելու համար: (19) Ինչ

վերաբերում է ինձ, ապա երբ դեռևս մեր դաշինքն ի գորու էր, ես դարձյալ չէի դադարում մեզ խղճարուց, և երանի էի տալիս արհային և նրա մերձավորներին, տեսնելով թե ինչ բնօրհանակ և բարեբեր երկիր ունեն, ինչքան առատ պարեն, ինչքան ծառաներ, ինչքան անասուն, ոսկի և հանդերձ: (20) Եվ մտածում էի մեր զինվորների մասին. թե այս բոլոր բարիքներից և ոչ մեկին հաղորդակից չեն դառնում. բայց միայն գնումների միջոցով. իսկ ինձ հայանի է, որ մեզանից էլ երբ հնարավորություն ունեն գնելու. և ուրիշ ի՞նչ ճանապարհով մենք կարող էինք պարենավորվել, եթե ոչ գնումների միջոցով, քան որ մեզ կաշկանդում էին դաշինքի պայմանները: Այս բոլորի մասին մտածելով ես ավելի շատ դաշինքից էի վախենում, քան այժմ պատերազմից: (21) Մինչդեռ հիմա, երբ իրենք են պայմանները դրժել, ինձ քվում է, որ դրանով իսկ վերջ տրվեց նրանց մեծամտությամբ և մեր անել վիճակին: Այժմ այդ բարիքները իբրև մրցանակ դրված են անա լավագույն ռազմիկների համար. իսկ մրցանակ սահմանողները (ագոնոթետները)<sup>8</sup> իրենք աստվածներն են, որոնք, իհարկե, մեզ հետ կլինեն: (22) Քանզի իրենք են, որ երդմնագրանց գտնվեցին աստվածների առաջ: Մինչդեռ մենք բազում բարիքներ տեսնելով մեր առաջ, համառոտ են դրանցից հեռու մնացինք, հանուն աստվածներին տված մեր երդման, ուստի մենք կարող ենք մրցման գնալ ավելի մեծ վատանությամբ, քան նրանք: (23) Բացի այդ, մեր մարմիններն ավելի քնդունակ են ցուրտը, տապը և դժվարությունները տանելու, քան նրանք, և մեր հոգիները, աստվածների շնորհիվ, ավելի կորովի են, քան նրանք. և նրանք ավելի խոցելի են ու սպանվելու ենթակա, քան մենք, եթե աստվածները, ինչպես նախկինում, մեզ հաղթանակ շնորհեն: (24) Արդ, գուցե ուրիշները ևս այդպես են մտածում. բայց, հանուն աստվածների, չսպասենք, որ ուրիշները գան և մեզ կոչեն սխրագործությունների. այլ մենք ինքներս սկսենք և մյուսներին էլ մղենք արիության: Ցույց տվեք, որ դուք լավագույններն եք վաշտապետներից և ավելի արժանի գորավար լինելու, քան իրենք գորավարները: (25) Իսկ ես, եթե դուք որոշեք ինքներդ խթանել այս գործերը, սիրով կհետևեմ ձեզ: Բայց եթե դուք որոշեք, որ ես դառնամ առաջնորդ, ապա ես պատճառ չեմ բերի իմ երիտասարդ տարիքը, քանի որ ինձ արդեն համարում եմ չարիքը հեռացնել կարողանալու ծաղկուն հասակում»:

(26) Նա այսպես խոսեց. և հրամանատարները, լսելուց հետո, բոլորը խնդրեցին նրան դառնալ առաջնորդ, բացի ոմն Ապոլլոնիդեսից, որը խոսում էր բեովտիական բարբառով: Նա ասաց, թե դատարկախոս է այն մարդը, ով պնդում է, թե մեզ համար փրկության որևէ այլ ճանապարհ կա, քան արհային ենթարկվելը, եթե այդ հնարավոր լինի. և նա սկսեց թվել ստեղծված դրժ-

վարությունները: (27) Իսկ Քսենոփոնը բնդհատելով նրան, այսպես ասաց. «Ո՞վ ամենազարմանալի մարդ. դու քո տեսածները չես հասկանում և քո լսածները չես հիշում: Գու, անշուշտ, այս մարդկանց մեջ չէիր գտնվում, երբ արհան, Կյուրոսի մահից հետո, այդ առթիվ մեծամտանալով, դեսպաններ ուղարկեց և պահանջեց զենքեր հանձնել: (28) Իսկ երբ մենք հրաժարվեցինք հանձնել և սպառազինվելով գնացինք ու բանակեցինք նրան մոտիկ, այնժամ ինչե՞ր չարեց. և՛ դեսպաններ ուղարկեց, և՛ դաշինք առաջարկեց, և՛ պարեն խոստացավ, մինչև հաջողվեց նրան մեզ հետ դաշինք կնքել: (29) Երբ, այստեղանդերձ, գորավարներն ու վաշտապետները, ինչպես դու ես առաջարկում, հավատալով դաշինքի պայմաններին, առանց զենքի գնացին նրա մոտ բանակեցելու, մի՞թե նրանք չծեծվեցին, շանարգվեցին և խեղճերը չէին կարողանում մեռնել, թեև, կարծում եմ, խիստ ցանկանում էին այդ: Եվ այս բոլորը իմանալով հանդերձ, պաշտպանվել առաջարկողներին դու դատարկախոս ես անվանում և առաջարկում ես գնալ ու հնազանդություն հայտնել: (30) Առաջարկում եմ, ով այրեր, այսուհետև այս մարդուն չքողեցի մեր միջավայրում և վաշտապետությունից նրան զրկելով, ուսերին հանդերձանք դնել և օգտագործել իբրև բեռնակիր: Նա խայտառակում է և՛ իր հայրենիքը, և՛ համայն Հելլադան. քանզի հելլեն լինելով հանդերձ, նա այսպիսի մարդ է»:

(31) Այնժամ խոսք վերցրեց Ագասիաս ստյուժիալացին և ասաց. «Այս մարդն իրոք որ ոչինչ վայել չունի ոչ Բեովտիային, և ոչ իսկ հանուր Հելլադային. քանզի ես նկատել եմ, որ նրա գույգ պակասին ծակեր կան<sup>9</sup>, ինչպես լյուդիացիների մոտ»: Եվ իրոք այդպես էր. ուստի և նրան դուրս արեցին: Իսկ մյուսները այցելելով դասակները<sup>10</sup>, որտեղ ողջ մնացած գորավարի հանդիպեցին, հրավիրեցին. իսկ որտեղ այդպիսին չկար՝ ենթագորավարին. և եթե կար կենդանի մնացած վաշտապետ, ապա վաշտապետին: (32) Երբ բոլորը հավաքվեցին, նստեցին նամբարի առաջ: Ու հավաքված գորավարները և վաշտապետները շուրջ հարյուր մարդ եղան: Այդ ժամանակ արդեն գիշերվա կեսն էր մոտենում: (34) Այնժամ Հիերոնիմոս էլեացին, որպես ավագագույնը Պրոսպենոսի վաշտապետներից, սկսեց այսպես խոսել. «Ո՞վ գորավարներ և վաշտապետներ. ստեղծված ներկա պայմաններում մեզ նպատակահարմար թվաց հավաքվել ու ձեզ հրավիրել, որպեսզի, եթե հնարավոր է, ընդունենք լավագույն որոշումը: Այժմ կրկնիր, Քսենոփոն, — ասաց նա, — այն, ինչ մեզ ես ասել»:

(35) Այնժամ Քսենոփոնը խոսեց այսպես. «Մենք բոլորս լավ գիտենք, որ արհան ու Տիսսափեոնեսը ձերբակալեցին մերոնցից ում կարողացան, իսկ մնացյալների դեմ դավեր են նյութում, որպեսզի նրանց ևս ոչնչացնեն: Ուս-



տի ես կարծում եմ, ամեն ինչ պետք է անել, երբեք բարբառոսներին չեն-  
 քարկվելու համար և, ընդհակառակը, նրանց պետք է մեզ ենթարկենք: (36)  
 Համոզված եղեք, որ այժմ այսֆանով հավաքվելով այստեղ, մեծագույն հնա-  
 րավորություններ ունեք, քանզի բոլոր զինվորները ձեզ են նայում. եթե ձեզ  
 տեսնեն հուսահատ, ապա բոլորը վախկոտ կդառնան. իսկ եթե նրանք տես-  
 նեն, որ դուք պատրաստվում եք կռվելու և ինքներդ եք գնում թշնամու դեմ,  
 մյուսներին ևս պայքարի կոչելով, լավ իմացեք, որ նրանք ևս կձգտեն ձեզ  
 նմանվել: (37) Դուրս ել իրավացիորեն դուք պետք է ինչ-որ բանով տարբեր-  
 վեք նրանցից: Ուղիները դուք գործարներ եք, տախարհոսներ<sup>11</sup> և վաշ-  
 տապետներ. և քանի դեռ խաղաղություն էր, դուք նրանցից և՛ ավելի շատ  
 դրամ էիք ստանում, և՛ ավելի պատիվների արժանանում. իսկ հիմա, երբ  
 պատերազմ է, ձեզանից պահանջվում է ավելի բարձր լինել, քան ամբողջը,  
 և խորհուրդներ տալ նրանց ու ավելի շատ ափսոսել, երբ անհրաժեշտությունն  
 զգացվի: (38) Այժմ առաջին հերթին կարծում եմ, որ դուք գործին մեծա-  
 գույն օգուտ կտայիք, եթե հոգ տանեիք, որ սպանվածների փոխարեն անհա-  
 պաղ գործարներ ու վաշտապետներ նշանակվեին: Քանզի առանց առաջ-  
 նորդների ընդհանրապես ոչ մի ասպարեզում հաջողություն չի լինում, իսկ  
 ռազմական գործերում՝ ամենևին: Ուղիները կարգապահությունը, թվում է,  
 փրկարար է, իսկ անկարգությունը արդեն շատերին է կործանել: (39) Մեզ  
 անհրաժեշտ եղող բոլոր առաջնորդներին ընտրելուց հետո, մնացած բոլոր  
 զինվորներին ևս հավաքելով եթե ֆաշալեքեք, ապա կարծում եմ, այդ ճիշտ  
 ժամանակին կատարված գործ կլինի: (40) Հավանաբար դուք ինքներդ էլ  
 նկատեցիք, թե ինչքան անտրամադիր եկան նրանք համբար և ինչքան ան-  
 տրամադիր գնացին պահակ կանգնելու. և քանի որ այդպիսի վիճակում են,  
 ապա չգիտեմ, արդյո՞ք որևէ մեկը նրանց կարող է անհրաժեշտության դեպ-  
 քում օգտագործել, լինի գիշեր թե ցերեկ: (41) Իսկ եթե նրանց մտքերը հե-  
 ղաշրջենք և հասկացնենք ոչ միայն այն վտանգը, որ նրանց սպառնում է,  
 այլև բացատրենք, թե ինչ կարող են անել, ապա նրանք առավել առույգ կլի-  
 նեն: (42) Դուք գիտեք, որ ոչ թվական գերազանցությունը, ոչ իսկ ուժը չեն  
 պատերազմում հաղթանակ տվողները, այլ մեծ մասամբ հակառակորդը չի  
 դիմանում նրանց առաջ, ովքեր նետվում են թշնամու դեմ արիացած ոգով և  
 աստվածների օգնությամբ: (43) Ես ինքս նկատել եմ, ո՛վ այրեք, որ այն  
 մարդիկ, ովքեր ձգտում են ամեն կերպ կենդանի մնալ պատերազմում, մեծ  
 մասամբ վատ և ամոթալի մահվան են մատնվում. իսկ ովքեր մահը համա-  
 բուրում են բոլոր մարդկանց համար ընդհանուր և անխուսափելի վիճակ, ուստի  
 և ձգտում են արիարար դիմագրավել մահվան, նրանք, ինչքան ես նկատել եմ,



(տես) ճիշտ ևսկայանքը. Գրեյսի անհրաժեշտությունը (Մուգա)



առավել չափով են ծերության հասնում և կյանքը ավելի երջանիկ են անցկացնում: (44) Այս բոլորը հիմա մենք պետք է լավ իմանանք, քանի որ այնպիսի ժամանակում ենք, երբ և՛ մենք ինքներս քաջարի ուղիքներ պետք է լինենք, և՛ ուրիշներին պետք է մղենք այդպիսիք լինելու»: (45) Այսպես խոսելով նա նստեց:

Նրանից հետո հեյրիսոփոսն ասաց. «Ես նախկինում, ո՛վ Քսենոփոն, ուրիշներից լսելով, այն գիտեի լուր, որ դու արեւացի ես. իսկ այժմ քեզ կզոյժեմ և՛ քո խոսքերի, և՛ քո գործերի համար ու կցանկանայի, որ քեզ նմանները շատ լինեին. քանզի այդ բոլորիս համար բարիք կլինեի: (46) Իսկ այժմ, — շարունակեց նա, — չհապաղեմք, ո՛վ այրեք. այլ գնացե՛ք և, որտեղ անհրաժեշտ է, հրամանատարներ ընտրե՛ք, և ընտրելուց հետո եկե՛ք նամբարի մեջտեղը, ձեզ հետ բերելով ընտրվածներին: Այնուհետև մենք կհավաքենք այնտեղ բոլոր զինվորներին. ձեզ հետ թող գա նաև քառոց Տոլմիդեսը»<sup>12</sup>: (47) Այս ասելով նա վեր կացավ, որպեսզի անհապաղ կատարի անհրաժեշտը: Այնժամ հրամանատարներ ընտրվեցին Կլեարհոսի փոխարեն՝ Տիմասիոն դարդանացին, Սոկրատեսի փոխարեն՝ Քսանթիկլես աֆայացին, Ագասիաս արկադիացու փոխարեն՝ Կլեանոր օրֆոմենացին<sup>13</sup>, Մենոնի փոխարեն՝ Փիլեսիոս աֆայացին, իսկ Պրոսպենոսի փոխարեն՝ Քսենոփոն արեւացին:

II. Օրը գրեթե լուսանում էր, երբ վերջացրին ընտրությունները, և հրամանատարները հավաքվելով նամբարի մեջտեղը, որոշեցին պահակակետեր հաստատել և ժողովի հրավիրել զինվորներին: Երբ արդեն բոլոր զինվորները հավաքվեցին, առաջինը վեր կացավ հեյրիսոփոս լակեդեմոնացին և այսպես խոսեց. (2) «Ո՛վ զինվորներ. մեր վիճակն այժմ վատ է, քանի որ մենք զրկվեցինք այնպիսի զորավարներից, վաշտապետներից և զինվորներից ու, բացի այդ, Արիայոսի զորքը, որը նախկինում մեր դաշնակիցն էր, դավաճանեց մեզ: (3) Թայց ներկա պայմաններում պետք է մեզ պահենք ինչպես վայել է քաջարի մարտիկներին և չհուսալվենք, այլ աշխատենք ամեն ջանքի գործ դնել, փայլուն հաղթանակ տանելով փրկվելու համար: Հսկառակ դեպքում՝ փառքով մեռնենք և երբեք կենդանի չընկնենք թշնամու ձեռքը: Քանզի ես կարծում եմ, որ այդ դեպքում մենք կենթարկվենք այնպիսի փորձությունների, որպիսիք ես մաղքում եմ, որ աստվածները թափեն մեր թշնամու վրա»:

(4) Այնուհետև վեր կացավ Կլեանոր օրֆոմենացին և խոսեց այսպես. «Դուք, զինվորներ, տեսնում եք արքայի երդմնազանցությունը և սրբապղծությունը. տեսնում եք Տիսսափեռնեսի անհավատարմությունը, որն ասաց, թե Հելլադայի հարևանն է և ամեն ինչ կանի մեզ փրկելու համար, ու երգվելով իր աչք տվեց, բայց ինքն իսկ մեզ խաբելով կալանավորեց զորավարներին

ու շամաչեց մինչև իսկ Ձև-հյուրընկալից<sup>14</sup>, այլ Կեաբոսի հետ սեղանակից դառնալով, խաբեց այդ մարդկանց ու կոտորեց: (5) Իսկ Արիայոսը, որին մենք ցանկանում էինք արհա դարձնել, և որի հետ փոխադարձ պայման կապեցինք իրար շղարկանելու խոստումով, նա ևս շվախեցավ աստվածներից ու շամաչեց սպանված Կյուրոսից, մինչդեռ երբ Կյուրոսը կենդանի էր, մեծ պատիվներ էր տալիս Արիայոսին, որը հիմա անցնելով նրա բշտամիների կողմը, աշխատում է մեզ, Կյուրոսի բարեկամներին, շարիք հասցնել: (6) Բայց աստվածները բող հատուցեն նրանց. իսկ մենք, որ այդ բոլորին ակա՛նատես ենք եղել, այսուհետև այդ ամենից շխարվենք, այլ մեր ամբողջ ուժով կովենք և դիմագրավենք այն ամենին, ինչ աստվածները նախատեսել են մեզ համար»:

(7) Այնժամ վեր կացավ Քսենոփոնը, զարդարված իր լավագույն ռազմական հանդերձներով: Նա մտածում էր, որ եթե աստվածները իրենց հաղթանակ շնորհեն, ապա հաղթության համար վայել կլինի ամենաշքեղ հարդարանք. իսկ եթե վիճակված է մեռնել, ապա նա, ով իրեն արժանի է համարում ամենաշքեղ զգեստների, պետք է դրանց մեջ էլ դիմավորի մահը. և նա այսպես սկսեց իր խոսքը. (8) «Բարբարոսների երզմնազանցության և անհավատարմության մասին Կլեանորը խոսեց. դուրս ինքներդ ևս, թվում է, լավ գիտեք այդ բոլորը: Հետևաբար, եթե մենք որոշենք նորից դիմել նրանց բարեկամության առաջարկով, ապա մեծապես կհիասթափվենք, քանի որ մեր աշխի առաջ են այն փորձությունները, որ կրեցին նրանց վատահաճ և հոծաբակամ հանձնված մեր զորավարները. իսկ եթե մենք վճռենք կատարվածի համար մեր իսկ զենքերով դատաստան տեսնել նրանց հետ և այսուհետև նրանց դեմ պատերազմի գնանք, ապա, աստվածների օգնությամբ, մեր փրկության շատ ու լավ հույսեր կունենանք»:

(9) Երբ նա այսպես խոսում էր, ինչ-որ մեկը փոշտաց<sup>15</sup>: Այդ լսելով բոլոր գինվորները մի քափով երկրպագեցին աստծուն, իսկ Քսենոփոնն ասաց. «Ո՛վ գինվորներ. մինչև ես խոսում էի մեր փրկության մասին, հայտնվեց Ձևս փրկչի նշանակը. ուստի և ես կարծում եմ, որ պետք է ուխտենք այդ աստծուն գոնունակության գոհեր մատուցել, հենց որ հասնենք բարեկամական մի երկիր: Միաժամանակ զոհ մատուցել մյուս աստվածներին ևս, մեր հնարավորության համեմատ: Ով այս բոլորին համաձայն է, ասաց նա, բող ձեռք բարձրացնիք»: Եվ բոլորը բարձրացրին: Այնուհետև մաղբանք արեցին և պեան երգեցին: Երբ աստվածներին վերաբերող գործերը հաջող ավարտվեցին, Քսենոփոնը նորից սկսեց այսպես խոսել.

(10) «Ես ասում էի, թե փրկության շատ ու լավ հույսեր ունենք: Նախ,

որ մենք հաստատ ենք պահում աստվածներին տված մեր երդումը, մինչդեռ բշտամիները երզմնազանց ելան և դաշինքին հակառակ, պայմանները դրժեցին: Եթե այդպես է, ապա աստվածները մեր բշտամիներին դեմ կլինեն, իսկ մեզ՝ դաշնակից: Իսկ աստվածները, եթե կամենան, կարող են արագ կերպով հզորներին դարձնել թույլ, իսկ թույլերին հեշտությամբ փրկել. Եթե նույնիսկ նրանք ամենադժվարին պայմանների մեջ են գտնվում: (11) Այնուհետև, ես ձեզ կհիշեցնեմ նաև մեր նախնիների դիմագրաված վտանգները, որպեսզի տեսնեք, թե անհրաժեշտ է, որ դուրս ևս փաշարի լինեք, քանզի փաշարիները աստվածների օգնությամբ փրկվում են առավել ծանր փորձանքներից: Այսպես, երբ պարսիկները և նրանց դաշնակիցները բազմամրիս զորով արշավեցին Աթենքը ոչնչացնելու մտադրությամբ, արեւաջրիներն իրենք համարձակվեցին դիմագրավել նրանց ու հաղթեցին<sup>16</sup>: (12) Եվ Արտեմիսին ուխտեցին զոհաբերել այնքան այծ, ինչքան մարդ կոտորեն բշտամիներից. ու քանի որ նրանք չկարողացան այդքան մեծ քանակությամբ այծեր նարել<sup>17</sup>, որոշեցին ամեն տարի զոհաբերել հինգ հարյուր այծ: Այդ զոհաբերությունը կատարվում է մինչև այսօր: (13) Այնուհետև Քսերքսեսը անթիվ զորք գումարելով<sup>18</sup> արշավեց Հելլադա, այդ ժամանակ ևս մեր նախնիները հաղթեցին նրանց նախնիներին և՛ ցամափ վրա, և՛ ծովում<sup>19</sup>: Այդ հաղթանակների ապացույցներն են հաղթության հուշարձանները, բայց դրանց առավել մեծ վկայությունը այն պետությունների սգատությունն է, որոնցում դուրս ծնվել է և սնվել. քանզի դուրս ոչ մի մահկանացու մարդու չեք ենթարկվում, այլ աստվածներին էք երկրպագում: Ահա այդպիսի նախնիներից էք դուրս սերվել:

(14) Դրանով, սակայն, ես չեմ ուզում ասել, որ դուրս արժանի չեք նրանց. դեռ շատ օր չի անցել, երբ դուրս դիմագրավելով այդ նույն պարսիկների հետնորդներին, հակառակ որ ձեզանից բազմապատիկ էին, աստվածների օգնությամբ հաղթեցիք նրանց: (15) Այն ժամանակ դուրս արիություն ցուցաբերեցիք հանուն Կյուրոսի թագավորության. մինչդեռ այժմ, երբ պայտարը ձեր իսկ փրկության համար է, անհրաժեշտ է, որ լինեք առավել փաշ ու խիզախ: (16) Այժմ դուրս ավելի համարձակորեն կարող եք դիմակայել բշտամուն: Քանզի այդ ժամանակ նրանց հանդեպ դեռևս անփորձ լինելով, իսկ նրանց բազմությունը անհամար տեսնելով հանդերձ, դուրս համարձակվեցիք ձեր հայրերի ոգևորությամբ նետվել բշտամու վրա. իսկ այժմ, երբ ինքներդ սեփական փորձով տեսաք, թե նրանք, բազմապատիկ լինելով հանդերձ, չեն կարողանում ձեր թափը կասեցնել, էլ ինչո՞ւ վախենալ նրանցից:

(17) Ոչ իսկ մտածեք, որ այժմ վատբար վիճակում եք այն պատճառով,

որ Արիայոսի գործը, որը նախապես մեզ հետ էր, այժմ հեռացել է: Չէ՞ որ նրանք ավելի վախկոտ են, քան մեր կողմից պարտվածները: Նրանք փախան բշտամու մաս, լիելով մեզ. իսկ փախուստի սկիզբը դնել ցանկացողներին ավելի լավ է բշտամու շարժերում տեսնել, քան լքե մեր բանակում:

(18) Եթե ձեզանից որևէ մեկը մտահոգված է, որ մենք հեծյալներ չունենեմք, իսկ բշտամին շատ ունի, ապա հաշվի առե՛ք, որ մի բյուր ձիավորը ոչ այլ ինչ է, քան մի բյուր մարդ: Քանզի ոչ ոք երբևէ պատերազմում չի մահացել ոչ ձիու կծելուց, ոչ էլ նրա սմբակների հարվածից. պատերազմում տեղի ունեցող ամեն մի գործողություն մարդիկ են կատարում: (19) Առավել ևս, մենք ապահովագույն հիմքի վրա ենք շարժվում, քան հեծյալները, քանզի նրանք կախված են ձիերի վրա, վախենալով ոչ միայն մեզանից, այլև վայրընկնելուց. մինչդեռ մենք հողի վրա քայլելով, ավելի ուժգին կարող ենք հարվածել մեզ վրա եկողին և ավելի դիպուկ նետահարել ում ցանկանանք: Հեծյալները միայն մի առավելություն ունեն՝ նրանց փախուստը ավելի ապահով է, քան մերը: (20) Գուցե դուք պատրաստ եք պատերազմի գնալ, բայց անհանգստանում եք, որ Տիսասփեռոնեսը մեզ չի առաջնորդում և արքան մեզ շուկա չի տրամադրում: Բայց մտածե՛ք. ո՞րն է ավելի լավ. առաջնորդ ունենալ Տիսասփեռոնեսի՞ն, որը բացահայտ կերպով դավեր է նյութում մեր դեմ, թե՛ այն մարդկանց, որոնց մենք կվերցնենք ու կհրամայենք մեզ առաջնորդել. մարդիկ, որոնք լավ են գիտենալու, որ եթե սխալվեն մեր հանդեպ, ապա դա կլինի սխալ նաև իրենց հոգու և կյանքի հանդեպ: (21) Ինչ վերաբերում է պարեն հայրայրելու հարցին, ապա ո՞րն է ավելի լավ. այն գնել մեզ տրամադրվող շուկաներում, մեծ փողի դիմաց փոքր շափով, իսկ հիմա փող էլ չունենեմք, թե՛ այն վերցնել հաղթանակից հետո, օգտագործելով ինչպիսի շափ որ յուրաքանչյուրը ցանկանա:

(22) Եթե դուք ընդունում եք, որ այս վերջինը ավելի լավ է, բայց միաժամանակ գետերը անանցանելի եք պատկերացնում և կարծում եք, որ դրանց անցումը կործանիչ սխալ կլինի, ապա մտածե՛ք, արդյո՞ք սա ևս բարբարոսների հերյուրած անմտությունը չէ՞ միթե: Քանզի բոլոր գետերը, թեկուզև ակունքներից հեռու. անանցանելի լինեն, ապա ակունքներին մոտենալիս դրանք կարելի է անցնել առանց ծնկներն իսկ թռչելու:

(23) Եվ եթե նույնիսկ գետերը խոչընդոտեն մեզ, իսկ ոչ մի ուղեցույց առաջնորդ էլ չհայտնվի, մենք դարձյալ չպետք է հուսահատվենք: Քանզի մեզ հայտնի է, որ մյուսիացիները, որոնց մասին չենք կարող ասել, թե մեզանից առավել քաջարի են, բնակվում են արքայի երկրում գտնվող բազմաթիվ բարձրավան և խոշոր քաղաքներում. հայտնի է, որ պիսիդիացիները նույնպես, իսկ

լիկանացիներին մենք ինքներս տեսանք, որ դաշտավայրերում ամրացված կետերը վերցնելով իրենց ձեռքը, վայելում են պարսիկների երկրի բերքը<sup>20</sup>: (24) Ուստի ևս կարծում եմ, որ մենք դեռևս չպետք է բացահայտենք տուն վերադառնալու մեր մտայնությունը, այլ պետք է ձևացնենք, իբր պատրաստվում ենք բնակվել այստեղ: Իմ կարծիքով, արքան մյուսիացիներին, եթե նրանք ցանկանային երկրից հեռանալ, շատ առաջնորդներ կտար և շատ պատանդներ, որպես գրավական նրանց անվտանգ մեկնելու թույլտվության, և նույնիսկ նրանց համար քառասուն կառքերի նախապարհներ կկառուցեր: Ես համոզված եմ, որ նա եռապատիկ հոծարությունը նույնը կաներ, եթե տեսներ, որ մենք պատրաստվում ենք մնալ այստեղ: (25) Բայց ես վախենում եմ, որ չլինի թե մի անգամ ծուլ կյանքին սովորելով և առատության մեջ ապրելով ու մեղացիների և պարսիկների գեղեցիկ ու փարթամ կանանց ու աղջիկների հետ շփվելով, մենք, լուսոսակերների նման<sup>21</sup>, մոռանանք հայրենիքի նախապահը: (26) Ուստի և ավելի նիշտ ու արդարացի է թվում ինձ աշխատել վերադառնալ Հելլադա մեր հարազատների մոտ և ցույց տալ հելլեններին, որ իրենք կամովին են չհավոր ապրում, քանի որ նրանք կարող են այնտեղ դաժան կյանք ունեցողներին փոխադրել այստեղ և նրանց հարուստ տեսնել<sup>22</sup>:

(27) Բայց այս բոլոր բարիքները, ո՛վ գիտնորներ, պարզ է, որ հաղթողներին կպատկանեն: Ուստի և այժմ պետք է խոսել այն մասին, թե ինչպե՞ս ավելի ապահով ուղևորվենք և եթե անհրաժեշտ լինի կովել, ինչպե՞ս լավագույնս կովենք: Նախ,—չարունակեց նա,—ինձ թվում է, որ պետք է այրել մեր ունեցած սայլերը, որպեսզի ոչ թե գումակը մեզ թելադրի, այլ մենք կարողանանք ազատ ուղևորվել այնտեղ. ուր շահավետ է գործի համար: Այնուհետև՝ այրենք նաև վրանները. քանի որ դրանք փոխադրելը ևս դժվարություն է հարուցում, բայց ոչնչով չի օգնում կովելու. ոչ էլ պարեն հայրայրթելու հարցում:

(28) Նաև պետք է դեն նետենք ավելորդ ամեն ինչ, բացի այն իրերից, որոնք անհրաժեշտ են պատերազմելու, պարենավորվելու և բմպելիք ձեռք բերելու համար. այնպես. որ մեզանից հնարավորին շափ ավելի մեծ թվով մարդիկ զինված լինեն և էջերը միայն բեռներ կրեն<sup>23</sup>: Քանզի լավ գիտեմք, որ պարտվողի ամեն ինչը յուրացվում է. իսկ եթե հաղթենք, ապա բշտամիներին կարող ենք դիտել որպես մեր բեռնակիրների:

(29) Ինձ մնում է խոսել ամենակարևոր հարցի մասին: Տեսնում եք, որ բշտամիները չհամարձակվեցին մեր դեմ պատերազմ սկսել, նախքան կծերակալելին մեր զորավարներին, ենթադրելով, որ քանի դեռ մենք զորավարներ ունենեմք և հնազանդվում ենք նրանց, ապա կարո՞ք ենք պատերազմում

հաղթել. իսկ գորավարներին կալանավորելով նրանք կարծում էին, թե ան-  
իշխանությունը և անկարգապահությունը մեզ պետք է կործանեն: (30) Ուստի  
և ներկայիս հրամանատարները պետք է ավելի Լուսնոյն լինեն, քան նա-  
խորդներն էին, իսկ ենթարկվողները՝ ավելի կարգապահ և ավելի հնազանդ  
հրամանատարներին, քան նախկինում: (31) Պետք է որոշում ընդունել, որ  
Եթե որևէ մեկը անհնազանդ գտնվի, ապա այդ բանը նկատույր իրավունք ու-  
նենա իր հրամանատարի հետ նրան պատժելու: Այսպիսով, թշնամիները մե-  
ծապես հուսախար կլինեն. քանզի նրանք այդ օրը մեկի փոխարեն կտեսնեն  
մի բյուր կլարա՞ս<sup>24</sup>, որոնք շեն հանդուրժելու որևէ մեկին վատ զինվոր լի-  
նել: (32) Քայց արդեն գործելու ժամն է. քանզի գուցե թշնամիները ուր ուր է  
կհայտնվեն: Ուստի նա, ով գտնում է, որ այս առաջարկները հիշտ են, թող  
շուտափույթ այն վավերացնի, որպեսզի սկսեն գործադրել: Իսկ եթե որևէ  
մեկը, թեկուզև նա հասարակ զինվոր լինի, ուրիշ, ավելի լավ առաջարկ ունի,  
քան իմն է, ապա թող համարձակ հայտնի այն. քանզի բոլորս ձգտում ենք  
ընդհանուր փրկության:

(33) Այնուհետև խեղճությունն ասաց. «Եթե Քսենոփոնի ասածներից բա-  
ցի որևէ այլ բանի կարիքը զգացվի, ապա այն կարող ենք քննարկել իր ժա-  
մանակին: Իսկ այն մասին, ինչ ինքը այժմ առաջարկեց, ես կարծում եմ, որ  
պետք է իսկույն որոշենք: Ով համամիտ է նրան, թող ձեռք բարձրացնի»: Եվ  
բոլորը բարձրացրին:

(34) Քսենոփոնը նորից հանդես գալով ասաց. «Ո՞վ զինվորներ. լսե՛ք  
թե ինչ եմ մտածում: Պարզ է, որ մենք պետք է ուղևորվենք այնտեղ, ուր  
հնարավոր է պարենամքեր ձեռք բերել: Ես լսել եմ, որ այստեղից ոչ ավելի  
քան խառն ասպարեզ հեռավորության վրա լավ գյուղեր կան. (35) մենք չենք  
զարմանա, եթե թշնամիները, վախկոտ շների նման, որոնք հետապնդում են  
անցորդներին և, եթե կարողանան, խածնում են նրանց, իսկ իրենց հետա-  
պնդողների առաջ փախչում, մեզ հետապնդեն երբ մենք մեկնենք: (36) Ուս-  
տի ավելի ապահով կլինեն, եթե ուղևորության ընթացքում հուպիտները քա-  
նակուսի կազմեն, որպեսզի գումակը և ամբոխի բազմությունը պաշտպա-  
նության տակ լինեն: Եվ եթե այժմ իսկ որոշենք, թե ով պետք է քառակու-  
սին առաջնորդի և առաջապահ զորին հրամայի, ովքեր առաջնորդեն երկու  
թևերը, և ով վերջապահ գորամասը, ապա կարիք չի լինի, որ մենք խոհուրդ  
գումարենք թշնամու հայտնվելու դեպքում, այլ մենք կկարողանանք անմի-  
ջապես գործի դնել արդեն իսկ դասավորված զորք: (37) Եթե որևէ մեկը  
ավելի լավ բան առաջարկի, այդպես էլ կանենք: Իսկ եթե ոչ, ապա թող խեղ-  
ճությունը առաջնորդի զորքը, քանզի նա լավեղենմոնացի է<sup>25</sup>. Երեքից յուրա-

հանչուրի հոգսերը թող ստանձնեն ավագագույն երկու գորավար, իսկ վե-  
ջապահ գորամասում կգտնվենք երիտասարդներս՝ ես ու Տիմասիոնը: (38)  
Չետագայում մարտական այս կարգը գործնականում ստուգելով, ամեն ան-  
գամ կարող ենք որոշել այն, ինչ տվյալ դեպքում մեզ ավելի հարմար կըլ-  
ծա: Եթե որևէ մեկը ուրիշ ավելի լավ բան է նկատում, թող ասի»: Քանի որ ոչ  
ոք չհակաճանաչեց, Քսենոփոնը շարունակեց. «Ով համամիտ է, թող ձեռք բարձ-  
րացնի»: Այդպես էլ որոշվեց: (39) «Այժմ, — շարունակեց նա, — պետք է ցրվել  
և կատարել որոշումները: Եվ ձեզանից նա, ով ցանկանում է իր հարազատնե-  
րին տեսնել, թող հիշի, որ պարտավոր է քառարի լինել, քանզի այլ կերպ չի  
կարող դրան հասնել. իսկ նա, ով ցանկանում է ապրել, պետք է ձգտի հաղթել.  
քանզի հաղթողն ինքն է սպանում, իսկ պարտվողը՝ սպանվում: Եվ եթե որևէ  
մեկը ցանկանում է հարստանալ, ապա թող ձգտի հաղթել, քանի որ հաղթող-  
ներին հատուկ է և՛ իրենց ունեցածը պահպանել, և՛ պարտվածների ինչքը  
ստանալ»:

III. Այս խոսքերից հետո վեր կացան և ցրվելով, սկսեցին սայլերն ու  
վրանները այրել. ավերող իրերը իրար հետ փոխանակեցին, ում ինչ անհրա-  
ժեշտ էր, մնացածը նետեցին կրակը: Այս գործը վերջացնելով, նստեցին նա-  
խանաչի: Միևնուրեք նախանաչում էին, դեպի բանակատեղին եկավ Միքրա-  
դատեսը<sup>26</sup>, շուրջ երեսուն հեծյալով, և հեղին գորավարներին կանչելով մինչև  
լսելի հեռավորություն, սկսեց այսպես խոսել. (2) «Ով հեղիններ. ես և՛ կյու-  
րոսին հավատարիմ էի. ինչպես ինքներդ գիտեք, և՛ հիմա ձեր նկատմամբ  
բարյացակամ եմ. այժմ այստեղ հայտնվելով իսկ ես մեծ վտանգի եմ են-  
թարկվում: Եվ եթե իմանալի, թե դուք փրկության որևէ միջոց եք պատկե-  
րացնում, ապա ես կմիանալի ձեզ իմ բոլոր ենթակաների հետ միասին: Ուս-  
տի հայտնեցե՛ք ինձ, որպես բարեկամի և ձեզ համակրողի, որև ուզում է  
միանալ ձեզ այս արշավանքի ընթացքում. ի՞նչ եք ծրագրել ձեր մտքում»: (3)  
Զորավարները ատյան գումարելով, որոշեցին այսպես պատասխանել. ու  
խոսեց խեղճությունը. «Մենք որոշել ենք, եթե որևէ մեկը չխանգարի մեզ տուն  
վերադառնալ, ապա արհալի երկրի միջով անցնել ինչքան հնարավոր է նվազ  
վնաս պատճառելով. իսկ եթե որևէ մեկը ճանապարհին մեզ խոչընդոտի, ա-  
պա որոշել ենք կոպել նրա հետ մեր բոլոր ուժով»: (4) Այս լսելով, Միքրա-  
դատեսը փորձեց ցույց տալ, թե անհնար է փրկվել արհալի կամֆին հակա-  
ռակ: Այստեղ իսկ պարզ դարձավ, որ նա դիտավորյալ էր ուղարկված. առավել  
ևս, որ ապահովության համար նրան հետևում էր Տիսասպեռոնեսի մտերիմ-  
ներից մեկը: (5) Ուստի գորավարները որոշեցին, որ ավելի լավ է առանց նա-  
խագգուշացնելու անխնա պատերազմ սկսել, քանի դեռ գտնվում են թշնա-

մական երկրում: Առավել ևս, քանի որ բարբարոսները մոտենալով, սկսեցին կաշառել զինվորներին. նրանց հաջողվեց կաշառել վաշտապետ Նիկարհոս արկադիացուն, որը շուրջ խան զինվորով գիշերը հեռացավ:

(6) Այնուհետև նախանշելուց և Չապատաս գետն անցնելուց հետո նրանք մարտաշարքերով ուղևորվեցին, գումակը և ամբոխը մեջտեղը դասավորած: Նրանք դեռևս շատ առաջ չէին գնացել, երբ Միքսիադատեսը դարձյալ հայտնվեց, շուրջ 200 հեծյալով և 400 աղեղնավորով ու պարսատիկավորով, որոնք շատ քեթեաշարժ էին ու ճարպիկ: (7) Եվ նա մերձենում էր, ասես հեղինակների բարեկամը լինե: Քայց երբ մոտեցավ, հանկարծ և՛ հեծյալները, և՛ հետևակները սկսեցին նետահարել, իսկ մյուսները՝ պարսատիկներով փախեր նետել ու վիրավորել: Հեղինակների վերջապահ շոկատը ծանրապես տուժում էր, իսկ փոխարենը ոչինչ չէր կարողանում ձեռնարկել: Քանզի նույնիսկ կրետացիները<sup>27</sup> ավելի կարճ տարածության վրա էին նետահարում քան պարսիկները և, բացի այդ, մերկ լինելու պատճառով<sup>28</sup>, կրետացիները ապաստանեցին հոպլիտների դասավորության մեջ. իսկ նիզակ նետողները չէին կարողանում այնքան հեռու նետել, որ հասցնեին պարսատիկավորներին: (8) Ուստի Քսենոփոնը որոշեց հետապնդել թշնամուն: Հետապնդումն սկսեցին այն հոպլիտներն ու պելտաստները, որոնք իր հետ վերջապահ զորամասում էին գտնվում. բայց հալածելիս թշնամիներից և ոչ մեկին չկարողացան բռնել: (9) Քանզի հեղինակները ձիավորներ չունեին, մինչդեռ հետիոտն եղողները արդեն նախապես փախուստի դիմած հետիոտն թշնամիներին չէին կարողանում կարճ տարածության վրա հասնել. իսկ թշնամուն հալածելով ամբողջ բանակից շատ հեռանալը վտանգավոր էր: Բարբարոսների հեծյալները փախչելիս ևս խոցում էին, նետահարելով ձիերի ընթացքին հակառակ. և հետապնդող հեղինակներն ստիպված էին կոխվա մղելով վերադառնալ այնքան տարածություն, ինչքան նրանք անցել էին թշնամուն հետապնդելիս: (11) Այսպիսով, ամբողջ օրվա ընթացքում նրանք գնացին ընդամենը քսանհինգ ասպարեզից ոչ ավելի, և միայն երեկոյան հասան գյուղերը<sup>29</sup>:

Այստեղ նրանք նորից վհատվեցին: Եվ խեղճությունն ու ավագությունը գործարարները մեղադրում էին Քսենոփոնին, թե նա հետապնդեց թշնամուն, հեռանալով զորքից, որով ինքը վտանգի ենթարկվեց, իսկ թշնամուն չկարողացավ ոչ մի լուրջ վնաս հասցնել: (12) Քսենոփոնը լսելով այդ, պատասխանեց, թե իրեն ճիշտ են մեղադրում և այդ բանը հաստատում է զործր ինքնին: «Բայց ես, — ասաց նա, — ստիպված էի հետապնդել. քանզի նկատեցի, որ տեղում կանգնած մնալով մենք ավելի ենք տուժում, իսկ փոխարենը ոչինչ չենք կարողանում անել: (13) Հետապնդման վերաբերյալ դուք ճիշտ եք ասում.

մենք, իրոք որ, չկարողացանք թշնամուն լուրջ վնաս հասցնել, մինչդեռ մեծ դժվարությամբ ևս նահանջեցինք: (14) Գնահանք աստվածներից, որ թշնամին մեծ ուժերով չեկավ, այլ փոքր շոկատով. ուստի և չկարողացան մեծ վնաս պատճառել մեզ, բայց նրանք մեր աչիքն քայքայեցին մեր կարիքները: (15) Այսպես, թշնամիներն այժմ աղեղներով ու պարսատիկներով ավելի հեռուն են հարվածում, քան կրետացիները, որոնք աղեղներով պաշտպանվելիս չեն կարողանում հարվածը հասցնել թշնամիներին. նրանց չեն հասնում նաև նիզակները: Իսկ նրանց հալածելիս հնարավոր չէր շատ առաջանալ ու հեռանալ զորքից, և փոքր տարածության վրա հետիոտն զինվորը, ինչքան էլ ճարպիկ լինի, չի կարող հետիոտն թշնամուն հասնել, և թե վերջինս արդեն գտնվում է մի նետընկեց հեռու: (16) Ուրեմն, և թե մենք ցանկանում ենք այսուհետև նրանց հնարավորություն չտալ մեր ընթացքի ժամանակ մեզ վնասելու, ապա շուտափույթ պետք է մեզ համար պարսատիկավորներ ու հեծյալներ հարենք: Ես լսել եմ, որ մեր բանակում կան հողոսցիներ, որոնցից շատերի մասին պատմում են, թե հմուտ պարսատիկավորներ են և նրանց նետումը կրկնակի ուժեղ է, քան պարսկական պարսատիկների նետումը: (17) Պարսկականների նետումը կարճ է լինում, քանի որ դրանցում օգտագործում են միայն փախչափ ֆարեր. իսկ հողոսցիները գիտեն օգտագործել նաև կապարե գնդիկներ: (18) Արդ, եթե մենք որոշենք, թե նրանցից ո՞վքեր պարսատիկներ ունեն և դրանց փոխարեն նրանց արծաթ վնարենք, իսկ նոր պարսատիկներ հյուսել ցանկացողներին դարձյալ արծաթով հատուցենք, և այն զինվորներին, որոնք կցանկանան պարսատիկավոր դառնալ, ինչ-որ հավելյալ վարձատրություն սահմանենք, հավանաբար կհայտնվեն մարդիկ, որոնք մեզ օգտակար հանդիսանան: (19) Ես գիտեմ նաև, որ բանակում ձիեր կան, մի քանիսն ինձ մոտ, մյուսները մնացել են Կլեարհոսի շոկատում<sup>30</sup>, և ուրիշներ, որ գերեզմարել ենք և օգտագործում ենք բեռներ փոխադրելու համար: Եթե նրանց միջից մենք ընտրություն կատարենք և փոխարենը լրացնենք գումակից, և ձիերը հանդերձավորենք հեծյալների համար, ապա, հավանաբար, նրանք ևս կարող են ինչ-որ շափով խանգարել փախչողներին»: (20) Այդպես էլ որոշեցին: Եվ այդ գիշերն իսկ պատրաստվեցին մոտ երկու հարյուր պարսատիկավորներ. իսկ հաջորդ օրը փորձարկվեցին շուրջ հիսուն ձի և ձիավոր, որոնց համար կաշվե լանջապանակներ ու գրահներ հայթայթեցին և նրանց վրա հիպպարհոս նշանակվեց Պոլիստրատոսի որդի Լյուկիոս արքեմացին:

IV. Այդ օրը նրանք հանգստացան. իսկ հետևյալ օրը կանուխ վեր կենալով, ուղևորվեցին: Նրանք պետք է կիրճով անցնեին և վախենում էին, որ

բշնամին կհարձակվի իրենց վրա կիրեն անցնելիս: (2) Երբ արդեն կիրեն անցել էին, դարձյալ հայտնվեց Միքրադատեսը, իր հետ ունենալով հազար հեծյալ և շուրջ չորս հազար աղեղնավոր ու պարսատիկավոր: Քանզի նա այդֆան էր խնդրել Տիսսափեռնեսից և ստացել, խոստանալով, որ այդֆան զորք ունենալու դեպքում նա հելլեններին կհանձնի Տիսսափեռնեսի ձեռքը: Նա քերազնահատում էր հելլեններին, քանի որ նախորդ ընդհարման ժամանակ փոքրաթիվ ջոկատով ոչ մի վնաս չկրեց. բայց, ինչպես ինքն էր ենթադրում, մեծ վնաս պատճառեց հելլեններին: (3) Երբ հելլենները կիրեն անցնելուց հետո արդեն առաջացել էին շուրջ ութ ասպարեզ, Միքրադատեսը ևս իր զորքով անցնում էր կիրեն: Այնժամ հելլենները որոշեցին, թե պետաասներից և հոպլիտներից ովքեր պետք է հալածեն բշնամուն, իսկ հեծյալներին պատվիրեցին աներկյուղ հետապնդել, քանի որ նրանց պետք է ընդհուպ հետևեր զինվորական բավական մեծ ուժ: (4) Երբ Միքրադատեսը հասավ իրենց և արդեն պարսատիկներն ու նետերը հասնում էին քիրախին. հելլենների համար շեփոքով ազդանշան արին, և իսկույն կովի նետվեցին նրանք, ում հանձնարարված էր, և հեծյալները առաջ սուրացին: Թշնամին չդիմացավ, և փախավ դեպի կիրեն: (5) Այս հետապնդման ընթացքում բարբարոսների հետևակից շատերը սպանվեցին և կիրենում կենդանի վերցվեցին մոտ 18 հեծյալ: Սպանվածներին հելլենները, իրենց նախաձեռնությամբ, այլակերպեցին, որպեսզի դրանց տեսքը ավելի ահաբեկի բշնամուն:

(6) Թշնամին զործի այդպիսի վախճանից հետո հեռացավ. իսկ հելլենները օրվա մնացած մասը ապահով առաջ ընթացան և հասան Տիգրիս գետը: (7) Այստեղ էր գտնվում ամայացած խոշոր մի ֆաղաֆ, Լարիսսա կոչված<sup>31</sup>: Հնում այն բնակեցրել էին մեղացիները: Քաղաքի պարիսպների լայնքը ֆանհինգ ոտնաչափ էր, բարձրությունը՝ հարյուր, իսկ շուրջանակի ամբողջ երկարությունը՝ երկու փարսախ: Այն կառուցված էր թրծված աղյուսից, որի տակ կար ֆարե հիմք՝ ֆան ոտնաչափ բարձրությամբ: (8) Պարսից արֆան<sup>32</sup> այն ժամանակ, երբ պարսիկները իշխանությունը վերցրին մեղացիներից, պաշարեց այս ֆաղաֆը, բայց ոչ մի կերպ չկարողացավ նվաճել: Բայց արևը ծածկվելով ամպերի տակ, անհետացավ<sup>33</sup>, մինչև որ բնակիչները լեցին ֆաղաֆը և այսպիսով այն գրավեց: (9) Այս ֆաղաֆին մոտիկ կար ֆարե բարձր մի բուրգ<sup>34</sup>, որի լայնքը մի պլեթրոն էր, իսկ բարձրությունը՝ երկու: Այս բուրգի վրա մեծ թվով բարբարոսներ կային, որոնք այստեղ էին ապաստանել մոտակա գյուղերից:

(10) Այստեղից առաջ ընթացան մեկ կայան՝ վեց փարսախ, մինչև հըսկա մի պարիսպ, որը գտնվում էր ավերակ վիճակում: Քաղաքի անունն էր

Մասպիլա. այն մի ժամանակ բնակեցրել էին մեղացիները<sup>35</sup>: Հիմքը կառուցված էր տաշած խեցաֆարով. լայնքը հիսուն ոտնաչափ էր. բարձրությունը՝ ոտից հիսուն: (11) Իսկ դրա վրա կառուցված է եղել աղյուսե պարիսպ, որի լայնքը հիսուն ոտնաչափ էր, բարձրությունը՝ հարյուր. իսկ պարիսպի շրջագծի երկարությունը՝ վեց փարսախ: Ասում են, թե այստեղ է ապաստանել արֆայի կին Մեղեան, երբ պարսիկները տապալեցին մեղացիների տերությունը: (12) Այս ֆաղաֆը, ուրեմն, պաշարելով, պարսից արֆան չկարողացավ այն գրավել ո՛չ երկարատև պաշարումով, ո՛չ էլ զենքի միջոցով. բայց Չեսը բնակիչներին կայծակնահար արեց և դրանով ֆաղաֆը գրավվեց:

(13) Այստեղից ուղևորվեցին մեկ կայան՝ չորս փարսախ: Այս կայանում հայտնվեց Տիսսափեռնեսը, իր հետ ունենալով և՛ իր հեծյալներին, և՛ արֆայադատեր ամուսին Օռնետասի զորքը, և՛ բարբարոսական այն զորքերը, որոնց հետ Կյուրոսն էր արշավել, և՛ նրանց, ում արֆայի եղբայրը բերել էր արֆային օգնության, և՛ այս բոլորից բացի նաև արֆայի կողմից իրեն տրամադրված զորքերը. այնպես որ նրա բանակը շատ մեծ թվաց: (14) Երբ արդեն մոտեցել էր, նա իր շարքերի մի մասը դասավորեց հելլենների զորքի ետևը, մյուս մասերը տարավ թևերի դիմաց, բայց շիմարձակվեց հարձակվել, իր բանակը շփանգելու համար, այլ հրամայեց նետումներ կատարել աղեղներով ու պարսատիկներով: (15) Բայց երբ հոռոսցիները դասավորվելով սկսեցին պարսատիկներով ֆարե նետել և աղեղներով նետահարել, ապա նրանց ոչ մի նետումը չէր վրիպում, քանզի ցանկության դեպքում իսկ դժվար կլինեք վրիպել<sup>36</sup>. ուստի Տիսսափեռնեսը արագ հեռացավ նետահարվող տարածությունից. հեռացավ նաև մնացած ամբողջ զորքը:

(16) Օրվա մնացած մասը մի գորամասը առաջ էր շարժվում, իսկ մյուսը՝ հետևում. և արդեն բարբարոսները չէին կարողանում իրենց նետումներով վնասել. քանզի հոռոսցիները ավելի հեռու էին հարվածում, քան պարսատիկավորներն ու աղեղնավորները: (17) Բայց պարսիկների աղեղները ևս մեծ էին. ուստի և դրանցից խլվածները պիտանի էին դառնում կրետացիներին, որոնք օգտագործում էին թշնամու աղեղները և նետահարման վարժություններ կատարում, նետասլաֆները մեծ բարձրության վրա արձակելով: Կյուրոսն ասում էր գտնվում էին մեծ ֆանակությամբ ձգաններ ու կապար պարսատիկների համար: (18) Այդ օրը, երբ հելլեններն արդեն բանակել էին իրենց պատահած գյուղերում, բարբարոսները հեռացան, քանի որ նրանց նետումները ավելի կարևոր տարածություն էին կտրում: Հետևյալ օրը հելլենները մնացին այնտեղ ու պարենավորվեցին. քանզի գյուղերում շատ ցորեն կար: Իսկ

մյուս օրը ուղևորվեցին դաշտավայրերով, և Տիսսափեռնեսը հետևում էր նրանց փոխադարձ նետահարումներով:

(19) Այստեղ հեղինակները համոզվեցին, որ գործի հավասարակող ֆառակուսի դասավորությունը վատ է, երբ թշնամին հետապնդում է: Որովհետև անհրաժեշտ էր լինում ֆառակուսու քեներ կծկել նաևապարհի նեղուրյան կամ լեռների պատճառով, կամ կամրջից անցնելու դեպքում, և դրանով իսկ հույլիտները խոնվում էին ու դժվարությամբ առաջանում, առավել ևս երբ նրնշվում էին թշնամու կողմից և խոնվում շարժերը, ուստի և նրանք անկարգության մեջ անպետքանում էին: (20) Իսկ երբ քեներ կրկին ձգվում էին, ապա շարժերից արտամղվածները անխուսափելիորեն ցրվում էին, որի հետևանքով քեների մեջտեղը դատարկվում էր և այդ վիճակում գտնվող զինվորները վհատվում էին, երբ թշնամին հետևում էր նրանց: Ու եթե անհրաժեշտ էր լինում անցնել կամրջով կամ որևէ այլ անցումով, ապա ամեն մեկը շտապում էր առաջինը հասնելու. և այս հանգամանքն էլ նպաստում էր թշնամու հարձակմանը: (21) Երբ գորավարներն այդ նկատեցին, վեց վաշտ կազմեցին, յուրաքանչյուրը հարյուր զինվորից, ու նրանց վրա նշանակեցին վաշտապետներ, իսկ ուրիշներին՝ հիսնապետներ և էնոմոտարներ<sup>37</sup>: Երբ ընթացքի ժամանակ քեներ կծկվում էին, այս ջոկատները ետ էին մնում, որպեսզի չխանգարեն քեների շարժումը, և ընթանում էին առանձին՝ քեներից դուրս: (22) Իսկ երբ ֆառակուսու կողմերը ձգվում էին, ապա նրանք լցնում էին միջանկյալ տարածությունը, նեղ լինելու դեպքում՝ ըստ վաշտի, ավելի լայն լինելու դեպքում՝ հիսունական, իսկ շատ լայն լինելու դեպքում՝ ըստ էնոմոտիայի. այնպես, որ մեջտեղը միշտ լրացված էր լինում: (23) Իսկ եթե անհրաժեշտ էր լինում անցնել որևէ կիրճ կամ կամուրջ, ապա չէին խոնվում, այլ ամեն մի վաշտ անցնում էր իր հերթով. իսկ եթե գործի որևէ մասում որևէ բանի կարիք էր զգացվում, ապա այս վաշտերը պատրաստ ներկա էին լինում: Այս ձևով հեղինակները առաջացան չորս կայան:

(24) Հինգերորդ կայանն անցնելիս, նրանք ինչ-որ ապարանք տեսան և նրա շուրջը՝ շատ գյուղեր. իսկ դեպի այնտեղ տանող ճանապարհը անցնում էր բարձր բլուրների վրայով, որոնք ձգվում էին մինչև լեռը, որի վրա այդ գյուղերն էին գտնվում: Հեղինակները ուրախացան, տեսնելով բլուրները, քանի որ նրանց թշնամիները հեծյալներ էին<sup>38</sup>: (25) Բայց երբ նրանք առաջանալով դաշտից բարձրացան առաջին բլուրը և իջան, հաջորդը բարձրանալու համար, այնժամ բարբարոսները հարձակվեցին նրանց վրա, մտրակների հարվածների տակ<sup>39</sup> սկսեցին բարձրից ֆարե գլորել, պարսատիկներով շարժել և աղեղներից նետահարել, (26) որով շատերին խոցեցին և հեղինակների մերկե-

րին գերազանցելով, նրանց էջեցին հույլիտների դասավորության մեջ. ուստի և այդ ամբողջ օրը պարսատիկավորները և աղեղավորները գտնվելով ամբողջի մեջ, պիտանի չեղան: (27) Իսկ երբ հեղինակները, սեղմված լինելով, փորձեցին թշնամուն հալածել, ապա ծանր գեներ ունենալու պատճառով նրանք դանդաղորեն հասան գագաթը, մինչդեռ թշնամին արագորեն նահանջեց: (28) Երբ հույլիտները կրկին վերադառնում էին դեպի մնացած գործը, նորից նույնանման հարձակման ենթարկվեցին. և երկրորդ բլրի վրա նույնը կատարվեց. ուստի և երրորդ բլուրը հասնելով, որոշեցին զինվորներին առաջ չշարժել, նախքան ֆառակուսու աչքից պելտաստներին լեռ բարձրացնելը: (29) Եվ երբ սրանք հայտնվեցին հետևող թշնամուց վերև, ապա վերջիններս այլևս չէին հարձակվում իջնող հեղինակների վրա, վախենալով, որ շլինք թե կտրվեն և երկու կողմից պաշարվեն թշնամուց: (30) Այսպես, օրվա մնացած մասը նրանք առաջ ընթացան. կեսը բլուրների վրայով անցնող ճանապարհով, կեսը գուգահեռաբար լեռան վրայով, մինչև հասան գյուղերը. և ուր բժիշկ նշանակեցին. քանզի վիրավորները բազմաթիվ էին:

(31) Այստեղ մնացին երեք օր և՛ վիրավորների պատճառով, և՛ որովհետև այստեղ շատ պարեն կար՝ այլուր, զինքի, ձիերի համար կուտակված մեծ քանակությամբ գարի: Այս բլուրը կուտակվել էին երկրի ստորապի համար: Չորրորդ օրը իջան դաշտ: (32) Բայց երբ Տիսսափեռնեսը իր գործով հասավ նրանց ետևից, ապա կարիքը պարտադրեց նրանց նամբար դնել առաջին իսկ պատահած գյուղում և կովելով շնքաճալ. քանզի շատերը արդեն ի վիճակի չէին կովելու, և՛ վիրավորները, և՛ նրանց փոխադրողները, և՛ վերջիններիս գեները կրողները: (33) Երբ արդեն բանակեցին, իսկ բարբարոսները մոտենալով գյուղին, փորձեցին նետահարել, հեղինակները մեծապես գերազանցեցին. քանզի առավել գերադասելի է պաշտպանվել դիրավորվելուց հետո, քան կովել ընթացքի ժամանակ հետևող թշնամու դեմ:

(34) Երբ երեկոն իջավ, արդեն թշնամու հեռանալու ժամանակը հասավ: Քանզի բարբարոսները երբեք նամբար չէին դնում հեղինակներին ավելի մոտ, քան վաքսուն ասպարեզ հեռավորությամբ, վախենալով, որ հեղինակները գիշեր ժամանակ կհարձակվեն իրենց վրա: (35) Քանզի գիշեր ժամանակ պարսական գործը անպետքանում էր: Իրենց ձիերը պարսիկները կապում էին և, բացի այդ, նրանց մեծ մասի ոտներն իրար էին միացնում, որպեսզի կապերը ֆանդվելուց իսկ չկարողանային փախչել: Ուստի և որևէ տագնապի դեպքում պարսիկ զինվորը պետք է ձին քամբեր ու սանձեր և, զրահ հագնելով, հեծներ: Այս բլուրը դժվար է գիշերվա ընթացքում տագնապի ժամանակ կատարել: Այդ իսկ պատճառով նրանք հեղինակներից հեռու էին բանակում:



(36) Երբ հեղինակները նկատեցին, որ նրանք որոշել են հեռանալ և այդ հրամանը հաղորդում են իրար, ապա փարոզը հայտարարեց հեղինակներին, որ պեսգի բոլորը պատրաստվեն մեկնելու այնպես, որ այդ լսելի լինեն թշնամուն: Եվ ահա փարոզները որոշ ժամանակ հետաձգեցին իրենց մեկնումը. իսկ երբ արդեն իրիկուն էր, նրանք հեռացան. ֆանի որ չէին ցանկանում գիշերով հավաքվել ու մեկնել. և տեղ հասնելով բանակել: (37) Եվ երբ հեղինակները տեսան, որ նրանք իրականում մեկնեցին, իրենք ևս ճամբարը վերցնելով ճանապարհ ընկան և անցան շուրջ վաթսուն ասպարեզ: Այսպիսով երկու բանակների միջև այնքան տարածություն եղավ, որ հետևյալ օրը թշնամին չէր նկատվում, ոչ էլ երրորդ օրը: Բայց շարժող օրը փարոզները գիշեր ժամանակ առաջ անցնելով, գրավեցին ճանապարհի աջ կողմում գտնվող փարձաղի մի գյուղ լեռան կատարին, որի մոտով հեղինակները պետք է անցնեին, հարթավայր իջնելու համար:

(38) Խեյրիսոփոսը տեսնելով, որ բարձունքը արդեն գրավվել է թշնամու կողմից, Քսենոփոնին վերջապահ ջոկատից կանչեց իր մոտ և պատվիրեց՝ վերցնելով իր պելտաստներին, անցնել առաջամաս: (39) Բայց Քսենոփոնը չբերեց պելտաստներին, ֆանգի նկատել էր, որ Տիսսափեռնեսը հայտնվել է ամբողջ բանակով. իսկ ինքը գալով առաջ, հարցրեց Խեյրիսոփոսին. «Ինչո՞ւ ես ինձ կանչում»: Եվ նա պատասխանեց. «Դա բոլորովին պարզ է: Նրանք գրավել են մեր վայրէջքի ճանապարհին իջիտը բոլորը և հնարավոր չէ այնտեղով անցնել, եթե նրանց շարժումը նենգ: (40) Իսկ ինչո՞ւ չբերեցիր պելտաստներին»: Քսենոփոնը պատասխանեց, թե իրեն ճիշտ չթվաց դատարկ թողնել վերջամասը, ֆանի որ թշնամին արդեն հայտնվել էր: «Այնուամենայնիվ, — պատասխանեց Խեյրիսոփոսը, — պետք է որոշել, թե ինչպե՞ս նրանց հեռացնենք բլրից»: (41) Այնժամ Քսենոփոնը նկատեց լեռան գագաթը, որը փարձաղում էր իրենց գործամասի գլխավերևում, ու ճանապարհը, որը տանում էր այնտեղ՝ դեպի թրշնամիները, ուստի ասաց. «Մեզ համար, ով Խեյրիսոփոս, բոլորից լավն այն է, որ ինչքան հնարավոր է շտապ փարձաղանք գագաթը: Եթե մենք այն վերցնենք, ապա մեր ճանապարհը փակողները չեն կարող դիմանալ: Եթե կամենում ես, դու մնա գործի հետ, իսկ ես գնամ առաջ. բայց եթե դու ես այդ ցանկանում, ապա ինքդ գնա դեպի լեռը, իսկ ես կմնամ այստեղ»: (42) Խեյրիսոփոսն ասաց. «Ընտրությունը ես քեզ եմ թողնում»: Քսենոփոնը պատասխանեց, թե ինքը ավելի կրտսեր լինելով, գերադասում է առաջանալ, բայց խնդրում է Խեյրիսոփոսին, որ պեսգի իր հետ առաջամասի ջոկատից զինվորներ տա, ֆանի որ երկար ժամանակ կխլեր վերջամասից զինվորներ վերցնելը: (43) Եվ Խեյրիսոփոսը նրա հետ ուղարկեց առաջամասի պելտաստներին և

դրանց փոխարեն վերցրեց ֆառակուսու կենտրոնում եղողներին. միաժամանակ առաջամասում գտնվող այն երեք հարյուր զինվորներին, որոնք իր ջոկատում էին, նա նույնպես հրամայեց հետևել Քսենոփոնին:

(44) Ահա նրանք առաջ շարժվեցին ինչքան կարող էին ավելի արագ: Իսկ բլրի վրա կանգնած թշնամիները, երբ հասկացան, որ հեղինակները դիմում են դեպի փարձաղը, իսկույն իրենք ևս նետվեցին առաջ՝ դեպի փարձաղը, մորցելով հեղինակների հետ: (45) Այնժամ մեծ աղաղակ փարձաղացավ հեղինակների գործարանակում, որոնք ֆաջալերում էին յուրայիններին, և նույնպիսի մեծ աղաղակ՝ Տիսսափեռնեսի բանակում, յուրայիններին ֆաջալերելու նպատակով: (46) Իսկ Քսենոփոնը ձի նստած անցնում էր շարժերի առաջով ու կոշ անում. «Ով ֆաջե՛ր. մտածե՛ք, որ այժմ դուք մեզում եք Հելլադա վերադառնալու համար, ձեր որդիների և կանանց մոտ, և որ այժմ փոքր ջանք թափելով մենք մնացած ճանապարհը առանց պատերազմի կընթանանք»: (47) Իսկ Սոտերիդաս սիկիոնացին ասաց. «Մենք, ո՞վ Քսենոփոն, հավասար պայմաններում չենք. ֆանգի դու ձիու վրա ես գնում, մինչդեռ ես դժվարությամբ եմ իմ վահանը կրում»: (48) Այս լսելով, Քսենոփոնը իջավ ձիուց, նրան շարժից դուրս հրեց և նրա վահանը վերցնելով, առաջ ֆայլեց ինչքան կարող էր ավելի արագ. բայց նրա հագին հեծյալի գրան ևս կար. ուստի և նա ճնշվում էր: Թեպետև ինքը դժվարանում էր հետևել, այսուհանդերձ կարգադրեց առաջից գնացողներին շտապել. իսկ հետևողներին՝ ետ շմնալ: (49) Իսկ մյուս զինվորները խփում էին, հրմշտում և անարգում Սոտերիդասին, մինչև որ սաստիպված եղավ նորից իր վահանը վերցնելով, առաջանալ: Իսկ Քսենոփոնը նստելով ձի, հեծյալ ընթացավ մինչև այնտեղ, ուր հնարավոր էր, իսկ եթե հեծյալ անցնելը հնարավոր չէր, ապա ձի նստելով առաջ էր շտապում հետիստրին: Այսպիսով, գագաթ հասան թշնամուց առաջ:

V. Այնժամ փարձաղները շրջվելով փախուստի դիմեցին, ով որտեղ կարող էր, և հեղինակները գրավեցին գագաթը: Իսկ Տիսսափեռնեսի և Արիալոսի զորքերը շեղվեցին ուրիշ ճանապարհ ու հեռացան: Մինչդեռ Խեյրիսոփոսի գործամասը բլրից իջնելով, բանակեց գյուղում, որտեղ առատորեն ամեն բարիք կար: Այս դաշտավայրում, Տիգրիս գետի մոտ, փարձաղներով լեցուն բազմաթիվ ուրիշ գյուղեր ևս կային: (2) Բայց երբ երեկոն իջավ, թշնամիները անակնկալ հայտնվեցին դաշտում և սպանեցին մի ֆանի հեղինակների, որոնք ցրվել էին դաշտում և կողոպուտով էին զբաղված. նրանք մեծ թվով անասուններ էին խլել, որոնց անց էին կացնում գետով: (3) Այնժամ Տիսսափեռնեսը և իր զորքը փորձեցին հրի մատենել գյուղերը: Հեղինակներից ոմանք ընկրկվեցին, մտածելով, որ եթե գյուղերը հրկիզվեն, ապա իրենք այլևս չեն

կարողանա պարեն նարել: (4) Մինչ այդ Խեյրիսոփոսի հետ օգնության գնացած շակատը վերադարձավ. իսկ Քսենոփոնը իջնելով բարձունքից, սկսեց շարժերի առջևով անցնել ու հանդիպելով օգնությունից վերադարձող հելլեններին, ասաց. (5) «Նկատեցի՞՞ք, ո՞վ հելլեններ, որ նրանք երկիրն արդեն մերն են համարում: Քանզի երբ մեզ հետ դաշինք էին կնքում, նրանք պայման էին դնում չհրկիզել արժայի երկիրը, մինչդեռ այժմ իրենք են այրում այն, որպես ուրիշի: Եվ եթե նրանք որևէ վայրում իրենց համար պարեն են թողել, ապա մեզ ևս կտեսնեն այնտեղ ուղևորվելիս: (6) Սակայն, ով Խեյրիսոփոս,—շարունակեց նա,—իմ կարծիքով, մենք պետք է պաշտպանենք այս երկիրը հրկիզողներից, ինչպես կայաշտպաններն մեր սեփականը»: Իսկ Խեյրիսոփոսը պատասխանեց. «Ես այդ կարծիքին չեմ: Եկեմ մենք ևս այրենք. այդպիսով նրանք իսկույն կդադարեն հրկիզելուց»:

(7) Երբ հասան իրենց վրանները, զինվորներն սկսեցին հոգալ պարենի մասին, իսկ գորավարները և վաշտապետները նստեցին խորհրդակցելու: Դուրսյունը շատ ծանր էր: Մի կողմից բարձրաբերձ լեռներ էին, մյուս կողմից այնքան խորունկ գետ, որ նույնիսկ նիզակները չէին մնում ջրից դուրս, երբ փորձեցին դրանցով ստուգել խորությունը: (8) Մինչ նրանք շվարած խորհուրդ էին անում, հոռոսցի մի զինվոր մոտենալով ասաց. «Ես, ո՞վ ռազմիկներ, կարող եմ անցկացնել չորս հազար հուպիտ միանգամից, եթե ինձ ապահովեք անհրաժեշտ պիտույքով և մեկ տաղանդ վարձ վճարեք»: (9) Երբ նրան հարցրին, թե ի՞նչ բանի կարիք է զգում, պատասխանեց. «Ինձ պետք են երկու հազար տիկ: Այստեղ բազմաթիվ ոչխարներ, այծեր, եզներ և էշեր կան, որոնք մաշկելու և փշելու դեպքում մենք կարող ենք հեշտությամբ գետն անցնել: (10) Ինձ պետք կգան նաև այն փոկերը, որոնցով կապում եք ձեր բեռնատար անասուններին: Դրանցով տիկերը իրար կկապեմ, յուրաքանչյուր տիկից քար կախելով որպես խարիսխ, կայուն կդարձնեմ ջրի մեջ, այնուհետև տիկերը կձգեմ գետի լայնքով ու երկու ծայրերը կամրացնեմ գետափերին. որից հետո վրան խոփվ կծածկեմ ու հող կփռեմ: (11) Որ դուք չեք սուզվի, այդ բանում իսկույն կհամոզվեք, քանզի յուրաքանչյուր տիկ առանց սուզվելու կարող է երկու մարդ պահել, իսկ խոփվն ու հողը թույլ չեն տա, որ մարդիկ սահեն»: (12) Այս գաղափարը գորավարներին բանական թվաց, բայց դրա կտարումը՝ անհնար. քանի որ գետի այն կողմում մեծ թվով հեծյալներ կային, որոնք կխանգարեին այդ կատարել և առաջին անցնողներին իսկ կարգելնին որևէ բան անել:

(13) Այստեղից նրանք հաշորդ օրը ետ մեկնեցին հակառակ ուղղությամբ, դեպի շայրված գյուղերը, կրակի մատնելով այն գյուղերը, որտեղից դուրս

էին եկել: Ուստի և թշնամիները չէին մոտենում, այլ դիտում էին և ասես տարակուսում, թե հելլենները դեպի ո՞ր կողմն են շրջվելու և ի՞նչ են մտադիր անելու: (14) Այնուհետև զինվորները սկսեցին հոգալ պարենի մասին. իսկ գորավարները դարձյալ ի մի եկան խորհրդի և, հավաքելով գերի վերցվածներին, հարցախնդիրներ նրանց շրջակա բոլոր երկրների մասին: (15) Գերիները պատմեցին, թե դեպի հարավ նանապարհը տանում է Քարելոն և Մեդիա. այդ նանապարհով էլ հելլենները եկել են. դեպի արևելք նանապարհը տանում է Սուսա և Եկբատանա<sup>40</sup>, որտեղ, ինչպես ասացին, արժան անց է կացնում ամառները. գետն անցնելուց հետո դեպի արևմուտք նանապարհը տանում է Լյուդիա և Հոնիա, իսկ լեռների միջով դեպի հյուսիս նանապարհը տանում է կարդուխների երկիրը: (16) Ասում էին, որ սրանք ապրում են լեռներում և ռազմատենչ են ու չեն հպատակվում արժային: Այսուհանդերձ, մի անգամ սրանց վրա արշավել էր արժայական զորքը, թվով տասներկու բյուր մարդ. բայց այդ զորքից և ոչ մեկը ետ չէր վերադարձել երկրի դժվարանցանելիության պատճառով: Բայց երբ կարդուխները պայման են կնքում դաշտային երկրի սատրապի հետ, ապա հաղորդակցվում են թե՛ իրենք նրանց հետ, թե՛ նրանք իրենց հետ:

(17) Այս լսելով, գորավարները նիստ արեցին առանց այն մարդկանց, որոնք պնդում էին, թե բոլոր կողմերի տեղանքը իրենց ծանոթ է, և ոչինչ չհայտնեցին, թե ո՞ր ուղղությամբ են իրենք ընթանալու: Զորավարները որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը. քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասնեն Աւմենիա, որին իշխում էր Օրոնտասը և որը մեծ էր ու հարուստ: Այստեղից, ասում էին, հեշտ է գնալ ցանկացած ուղղությամբ: (18) Այնուհետև նրանք զոհ մատուցեցին, որպեսզի պատեն ժամանակին պատրաստ լինեին նանապարհ ընկնելու<sup>41</sup>. քանզի նրանք երկյուղ էին կրում, թե լեռնանցքը կարող է գրավվել նախապես թշնամիների կողմից: Ու հրահանգեցին՝ ընթրելուց հետո բոլորը պատրաստվեն արշավանքի և հանգստանան ու առաջին իսկ հրամանով երթի դուրս գան:





Գ Ի Բ Ք Զ Ո Ր Ր Ո Ր Դ

1. [Այն մասին, թե ինչ տեղի ունեցավ արշավանքի ժամանակ մինչև նակատամարտը. և ինչ տեղի ունեցավ նակատամարտից հետո, երբ դաշինք կնքվեց արքայի և Կյուրոսի հետ արշաված հելլենների միջև, և թե Տիսսապիեռնեսի՝ դաշինքը դրժելուց հետո ինչ ռազմական գործողություններ տեղի ունեցան հելլենների դեմ նրանց հետևող պարսկական զորքերի կողմից, պատմվել է նախորդ գրքում: (2) Երբ հասան այնտեղ, ուր Տիգրիս գետը ընդհանրապես անանցանելի էր իր խորության ու լայնքի պատճառով, իսկ գետեզրով էլ ոչ մի նրբանցք չկար, ֆանի որ կարողության լեռները կտրուկ կախվում էին անմիջապես գետի վրա, զորավարները որոշեցին առաջանալ լեռների միջով: (3) Նրանք գերի վերցվածներից լսել էին, որ եթե անցնեն կարողության լեռները, կհասնեն Արմենիա, որտեղ և, եթե ցանկանան, կարող են անցնել Տիգրիս գետի ափամասերը, իսկ եթե չցանկանան, կարող են գետը շրջանցել: Ասում էին, թե Եփրատի ափամասերը ևս Տիգրիսից հեռու չէին. և այդպես էլ կար': (4) Եվ հելլենները ներխուժեցին կարողության երկիրը, ձգտելով աննկատելի մնալ, միաժամանակ և թշնամուց առաջ հասնել և գրավել բարձունքները]:

(5) Երբ արդեն վերջին պահն էր<sup>2</sup> և դեռ գիշերվանից բավականին ժամանակ էր մնացել դաշտը մթով անցնելու համար, նրանք, ըստ հրամանի, վեր կացան և, ճանապարհ ընկնելով, լուսաբացին հասան լեռան մտ: (6) Այստեղ Խեյրիսոփոսն էր գնում զորքի առաջից, ունենալով իր զորամասը ու

բոլոր մերկերին, իսկ Քսենոփոնը վերջապահ հուպիտներով հեռանում էր՝ առանց մերկերի: Քանզի քվում էր, որ քիկունքից վտանգ չի սպառնում լեռը բարձրացողներին: (7) Եվ Խեյրիսոփոսը բարձրացավ գագաթը, նախքան թշնամիներից ուրև մեկը կնկատեր իրեն: Այնուհետև դանդաղորեն առաջացավ և շարունակ գագաթն անցնող զորամասերը հեռանում էին նրան դեպի գյուղերը, որոնք գտնվում էին լեռների կիրճերում և հովիտներում: (8) Արդ՝ կարողությունը լքելով իրենց տները և վերցնելով կանանց ու երեխաներին, փախչում էին դեպի լեռները: Այստեղ առատ պարեն կար վերցնելու, իսկ տները կահավորված էին բազմաքանակ պղնձե ամաններով, որոնցից հելլենները ոչինչ չվերցրին, ոչ իսկ մարդկանց հալածեցին, այլ նրանց խնայեցին այն նկատառումով, որ գուցե կարողությունը իրենց թույլ տան անցնելու այդտեղով որպես բարեկամական երկրով, ֆանի որ նրանք ևս արքային թշնամի էին: (9) Իսկ ով ինչ պարեն գտնում էր, վերցնում էր, ֆանզի անհրաժեշտ էր. բայց կարողությունը ոչ նրանց կանչին արձագանքեցին, ոչ էլ ուրեք կերպ իրենց բարեկամությունն արտահայտեցին: (10) Երբ հելլեններից վերջինները լեռնագագաթից իջնում էին գյուղերը, արդեն մթնել էր, — ֆանզի ճանապարհորդները լինելու պատճառով բարձրանալը և իջնելը նրանցից ամբողջ մի օր էր խլել, — կարողությունից ոմանք համախմբվելով հարձակվեցին նրանց վրա և մի ֆանիսին ֆարերով ու նետահարությամբ սպանեցին և վիրավորեցին. նրանք փոքրաքիվ էին, ֆանզի հելլենական զորքը հանկարծակի մտավ նրանց երկիրը: (11) Եվ եթե այդ ժամանակ ավելի մեծ քվով կարողությունը հավաքված լինեին, ապա զորքի մի մեծ մասը կոչնչանար: Եվ այդ գիշերը նրանք այդպիսով օքսանեցին գյուղերում. իսկ կարողությունը շրջակա լեռների վրա շատ կրակներ էին վառում և իրար ձայնակցելով ազդանշան տալիս:

(12) Երբ լուսացավ, հելլենների զորավարները և վաշտապետները ժողով գումարեցին և որոշեցին առաջ շարժվել, իրենց հետ վերցնելով բեռնատար գրաստներից միայն ամենամեծածառերը և ամենագորեղները, և լքել մյուսները, ինչպես նաև ազատ արձակել վերջին օրերի ընթացքում գերեվարված ու զորքի մեջ եղած բոլոր ստրուկներին: (13) Քանզի գրաստները և գերեվարվածները շատ լինելով, դանդաղեցնում էին առաջընթացը. շատ էին նաև դրանց վրա հսկիչ նշանակվածները, որոնք անմարտունակ էին դառնում, բացի այդ, մարդկանց շատ լինելը անհրաժեշտ էր դարձնում կրկնապատիկ պարենի մթերումն ու փոխադրումը: Այս որոշումը ֆարզի միջոցով հաղորդեցին բոլորին:

(14) Նախանաշելուց հետո ճանապարհվեցին, մինչդեռ զորավարները կանգնեցին ճանապարհի նեղ մասում, ու եթե նկատում էին լվելու ենթակա

որևէ բան, ապա վերցնում էին այն, իսկ զինվորները հնազանդվում էին բացի այն դեպքերից, երբ որևէ մեկին հաջողվում էր բախցնել իր հավանած գեղատեսիլ տղայի կամ կնոջ: Այդ օրը նրանք առաջ ընթացան մերթ կռիվ մղելով, մերթ հանդարտ: (15) Իսկ հետևյալ օրը ուժեղ փոթորիկ եղավ, բայց անհրաժեշտ էր առաջ շարժվել, քանի որ եղած պարեկը չէր բավականացնի: Առաջից գնում էր Նեյրիսոփոսը, մինչդեռ Քսենոփոնը վերջապահ զորամասում էր: (16) Եվ թշնամիները ուժեղ հարձակում գործեցին, ու որովհետև հանապարհը անցնում էր նեղ տեղով, ապա նրանք մտանալով նետահարում էին ու պարսաստիկներով նետում: Ուստի հելլենները ստիպված էին լինում նրանց հետապնդել և վերադառնալ, որի պատճառով էլ ընթացքը դանդաղում էր: Քսենոփոնը ևս հանախ էր պատվիրում կանգ առնել, քանի որ թշնամիները ուժեղ ենչում էին: (17) Նեյրիսոփոսը, երբ նրան այդ մասին հաղորդում էին, հանախ կանգ էր առնում, իսկ այս անգամ կանգ չառավ, այլ շտապ առաջ անցավ ու պատվիրեց հետևել իրեն. պարզ եղավ, որ արտակարգ դեպք է կատարվել: Բայց ժամանակ չեղավ առաջ գնալով դրա պատճառն իմանալու. այնպես, որ վերջապահ զորամասի առաջընթացը նմանվեց փախուստի: (18) Այստեղ էլ սպանվեցին ֆաջարի կենդիմու լակոնացին, վահանի և կաշվե լանջապանակի միջով կողից նետահարված, և Բասիաս արկաղիացին, զլխից զարկված:

(19) Երբ հասան կայանելու վայրը, Քսենոփոնն իսկույն գնաց Նեյրիսոփոսի մոտ և սկսեց նրան հանդիմանել այն բանի համար, որ չէր սպասել, այլ ստիպել էր իրենց միաժամանակ վազել ու կռվել: «Եվ ահա սպանվեցին երկու լավագույն և ֆաջարի մարդիկ, որոնց դիակները ոչ կարողացանք տանել, ոչ իսկ քաղել հողում»: (20) Նեյրիսոփոսը պատասխանեց. «Նայիր լեռներին և համոզվիր, թե ինչքան դրանք բոլորը անանցանելի են: Տեսնո՞ւմ ես, միայն մի վերձիգ հանապարհ է, և վրան դու ևս կարող ես նկատել մարդկանց մեծ բազմություն, որոնք գրավել են անցումը և պահպանում են այն: (21) Ահա թե ինչու ես, առանց քեզ սպասելու, շտապեցի այն հույսով, որ անցմանը կհասնեմ ավելի շուտ, քան այդ կգրավեին թշնամիները. իսկ մեր ուղեցույցներն ասում են, թե ուրիշ հանապարհ չկա»: (22) Եվ Քսենոփոնն ասաց. «Իմ ձեռքին երկու մարդ կա: Բանն այն է, որ երբ թշնամին մեզ խիստ անհանգստացնում էր, մենք դարանակալեցինք. այդ բանը մեզ հնարավորություն տվեց հանգստանալու և միաժամանակ թշնամիներից ումանց սպանելու, իսկ ուրիշներին կենդանի բռնելու, որպեսզի նրանց օգտագործենք իբրև երկրին ծանոթ ուղեցույցների»:


(23) Եվ իսկույն այդ մարդկանց բերելով, սկսեցին առանձին-առանձին



Տիրիբազուսի արծաթյա դրամը  
(IV դ. մ. թ. ա.)



Օրոնտաս սատրապի ոսկյա դրամը  
(IV դ. մ. թ. ա.)



Արծաթյա անոթ՝ Հայաստանից (V դ. մ. թ. ա.)



հարցախնդիր, թե շփոթե՞ն արդյո՞ք այս երևացող ճանապարհից բացի մեկ ուրիշը: Նրանցից մեկը, հակառակ բազում սպառնալիքների, ոչինչ չհայտնեց. ու քանի որ նա օգտակար բան չստաց, նրան խողխողեցին մյուսի աչքերի առաջ: (24) Իսկ մյուսն ասաց, թե սա հայտարարեց իբր ճանապարհը շփոթի այն պատճառով, որ այնտեղ ամուսնացած դուստր ունեւ. մինչդեռ ինքը, իր ասելով, հելլեններին կտանի այնպիսի ուղիով, որը մատչելի է նաև բեռնատար անասուններին: (25) Սրբ նրան հարցրին, թե այդ ճանապարհին կա՞ արդյո՞ք դժվարանցանելի որևէ վայր, նա պատասխանեց, թե կա մի գագաթ, որը եթե նախապես չգրավվի, ապա հնարավոր չէ ճանապարհն անցնել:

(26) Այնժամ որոշեցին ժողովի հրավիրել վաշտապետներին և պելտաստներին և հուպիտներից ոմանց, հալարդել ներկա իրադրության մասին և հարցնել, թե կա՞ արդյո՞ք նրանց մեջ որևէ մեկը, որը ցանկանում է իր փառքյունը ցույց տալ և կամավոր մեկնել այս գործին մասնակցելու համար: (27) Հուպիտներից ներկայացան Արիստոնիմոս մեթիդրացին և Ագասիաս ստյուսփալացին, իսկ Կալլիմախոս պառասիացին հակադրվեց նրանց, ասելով, թե ինքը ցանկանում է ուղևորվել, իր հետ վերցնելով կամավորներ ամբողջ զորքից: «Քանզի ես գիտեմ,—ասաց նա,—որ երիտասարդներից շատերը կհետևեն ինձ, եթե իմանան, որ ես եմ առաջնորդը»: (28) Այնժամ հարցրին, թե մերկերի տախարհոսներից որևէ մեկը ևս չի՞ ցանկանում միասին գնալ: Ներկայացավ Արիստեսաս փոսցին, որը այսպիսի դեպքերում շատ հաճախ էր գործին օգտակար եղել:

II. Արդևն երեկո էր, ուստի հրամայեցին կամավորներին. ճաշել ու նախապահվել: Ուղեցույցին էլ կապելով հանձնեցին նրանց և պայմանավորվեցին, որ եթե գրավեն բարձունքը, ապա գիշերվա ընթացքում այն կպահեն և առավոտյան շեփորով կազդարարեն այդ մասին. և այնժամ բարձունքը գրաված զինվորները կգնան երևացող անցումը պահող թշնամիների դեմ, իսկ իրենք արագ դուրս կգան ու կօգնեն նրանց: (2) Այսպես պայմանավորվելուց հետո նրանք, մոտ երկու հազար մարդ, ճանապարհվեցին. երկնից ուժեղ անձրև էր քափվում. իսկ Քսենոփոնը վերջապահ զորամասն իր հետ վերցնելով, շարժվեց դեպի երևացող անցումը, որպեսզի թշնամիներն իրենց ուշադրությունը կենտրոնացնեին այդ ուղու վրա. իսկ շրջանցիկ ճանապարհով գնացողները ըստ հնարավորին աննկատ մնային: (3) Բայց երբ վերջապահ զորամասը հասավ ձորը, որի միջով անցնելուց հետո պետք է վերձիգ բարձրանային, բարբարոսներն սկսեցին այնպիսի խոշոր փառեր գլորել, որոնց ամեն մեկը բավական էր մի սայլ բեռնելու համար, և ավելի խոշոր ու ավելի մանր, որոնք ընկնելով ժայռերի վրա, զարնվում էին դրանց ու շարժվում

բոլոր սպորտայիններով. այնպես որ բոլորովին անհնար էր մոտենալ թեկուզ ձորի մուտքին: (4) Վաշտապետներից ոմանք, չկարողանալով այստեղով անցնել, փորձեցին ուրիշ տեղով: Եվ այսպես շարունակեցին մինչև մթնելը: Երբ նրանք համոզվեցին, թե իրենց հեռանալը անհնար կմնա, հեռացան ընթրելու. ֆանգի կային զինվորներ, որոնք նույնիսկ չէին նախաճաշել: Իսկ թշնամիները ամբողջ գիշեր շղաղարեցին ֆառեր գլորելուց. այդ մասին կարելի էր եզրակացնել դրոշմներից:

(5) Մինչ այդ, իր հետ ուղեցույց ունեցող չոկատը շրջանցիկ ճանապարհով գնալիս, հանդիպեց պահակախմբի, որը նստած էր կրակի շուրջ: Թշնամիներից ոմանց սպանելով, մյուսներին հալածելով, իրենք այստեղ էին մնացել, ենթադրելով, որ բարձունքը գրավել են: (6) Սակայն իրականում այն չէին գրավել, ֆանի որ նրանցից վերև բարձրանում էր մի բլուր, որտեղից էլ անցնում էր պահակախմբի պահպանած նեղ ճանապարհը: Այստեղից նրանք անցնում էր պահակախմբի պահպանած նեղ ճանապարհը: Այստեղից նրանք կարող էին մոտենալ թշնամու չոկատին, որը պահպանում էր երևացող ճանապարհը: (7) Հեյլենները գիշերը այստեղ անցկացրին, իսկ լուսաբացին անաղմուկ, ռազմական շարժերով առաջացան դեպի թշնամիները. և ֆանի որ մշուշ էր իջել, ապա նրանք աննկատելի մտեցան: Երբ արդեն իրար նկատեցին, շեփորը հեշեց և ռազմական աղաղակներով նետվեցին թշնամու վրա: Թշնամիները շփմացան, և լինելով ճանապարհը, փախան. նրանցից բերր սպանվեցին, ֆանգի շատ ճարպիկ էին: (8) Իսկ խեյրիսոփոսի գործարար լսելով շեփորը, իսկույն սկսեց բարձրանալ նկատելի ճանապարհով: Մյուս գորավորները ևս առաջ շարժվեցին, յուրաքանչյուրը իր գտնված տեղից, չտրոսված ուղիներով. և մագլցելով լեռը ով ինչպես կարող էր, իրար վերև էին ֆաշում նիզակների օգնությամբ: (9) Նրանք առաջինը միացան բարձունքը գրավածներին:

Քսենոփոնը վերջապահ գործարար մի կեսի հետ շարժվեց այն ճանապարհով, որով գնում էր ուղեցույց ունեցող չոկատը, ֆանի որ այն առավել հարմար էր գրաստների համար: Իսկ մյուս կեսը նա դասավորեց գրաստներից հետո: (10) Առաջ գալով, նրանք ճանապարհին պատահեցին թշնամիների կողմից գրավված մի բլրի. անհրաժեշտ էր կամ ոչնչացնել նրանց, կամ կորովել մյուս հեյլեններից: Իրենք գուցե կարողանային առաջ գնալ այն նույն ճանապարհով, ինչ-որ մյուսները<sup>4</sup>, բայց գրաստների համար ուրիշ ճանապարհ չկար բացի այդ մեկից: (11) Այնժամ իրար ֆաշակերելով, նրանք վաշտերի ուղիղ դասավորությամբ<sup>5</sup> նետվեցին դեպի բլուրը, ընդ որում ոչ թե շրջապատելով, այլ թշնամիներին նահանջի ճանապարհ բողբոջելով, եթե նրանք որոշեին փախչել: (12) Մինչ հեյլենները մագլցում էին ով ինչպես կարող էր,

բարբարոսները սկսեցին նետահարել ու ֆառեր շարժել և երբեք չթողեցին հեյլեններին մոտենալ իրենց, այլ փախչելով լեցին այդ կետը ես: Այն անցնելով հեյլենները իրենց առաջ տեսան ևս մի բլուր, որը գրավել էր թշնամին, ու որոշեցին իսկույն գրոհել այն: (13) Իսկ Քսենոփոնը մտածելով, որ շինի թե արդեն գրավված բլուրը լինու դեպքում թշնամին նորից վերցնի այն և հարձակվի մոտիկից անցնող գումակի վրա, որը ճանապարհի նեղ լինելու պատճառով ընթանում էր մեծ տարածության վրա ձգված, բլրի վրա թողեց վաշտապետներ՝ կեփիսոփոնի որդի կեփիսոփոսոս արթնացուն և Ամփիդեմոսի որդի Ամփիկրատես արթնացուն և Արգոսից վտարանդի Արֆագորասին, իսկ ինքը մյուսների հետ առաջացավ դեպի երկրորդ բլուրը ու այն ևս վերցրեց նույն եղանակով:

(14) Մնում էր դեռևս գրավել երրորդ բլուրակ ու առավել վերձից բլուրը, որ բարձրանում էր կամավորների կողմից գիշերը գրավված կրակի շուրջը գտնվող պահակներից վերև: (15) Երբ հեյլենները մոտեցան բլրին, բարբարոսները, առանց կովի բռնվելու, լեցին այն: Այդ բոլորի համար զարմանալի թվաց և ենթադրեցին, թե բարբարոսները այդպես վարվեցին երկյուղ կրելով, որ շինի շրջապատվեն և ընկնեն պաշարման մեջ: Մինչդեռ նրանք բարձունքից տեսնելով, թե ինչ էր կատարվում բլրի ետևում, բոլորը միասին դիմեցին վերջապահ գործարարի վրա: (16) Եվ Քսենոփոնը իր առավել երիտասարդ զինվորների հետ մագլցեց բարձունքը, իսկ մյուսներին կարգադրեց դանդաղորեն առաջ գնալ, որպեսզի վերջին վաշտերը հասնելով միանային նրանց և դուրս գալով ճանապարհի վրա, կանգնեին դաշտում:

(17) Այդ ժամանակ հայտնվեց փախուստով փրկված Արֆագորաս արգոսացին և հայտնեց, որ իրենք ետ շարժվեցին բլրից և որ սպանվեցին կեփիսոփոսոսը և Ամփիկրատեսը և բոլոր մյուսները, որոնք չկարողացան ցատկել ժայռի վրայից և հասնել մինչև վերջապահները: (18) Այս գործողություններից հետո բարբարոսները բարձրացան բլուրակ բարձունքի դիմաց գտնվող բլուրը. և Քսենոփոնը բարգմանի միջոցով նրանց հետ բանակցություններ սկսեց դաշինք կնքելու մասին ու պահանջեց սպանվածների դիակները<sup>6</sup>: (19) Նրանք հոժարեցին վերադարձնել. պայմանով, որ հեյլենները չհրկիզեն տները: Քսենոփոնը համաձայնվեց այդ պայմանին: Մինչդեռ այսպես բանակցում էին և մնացած ամբողջ գուրքը ավարտում էր իր անցումը, բոլոր թշնամիները այդ վայրերից հավաքվեցին այստեղ: (20) Ու երբ հեյլեններն սկսեցին իջնել բլուրակ բարձունքից, դաշտում կանգնած ամբողջ գործարարները միանալու համար, թշնամիները մեծ բազմությամբ ու աղաղակով նետվեցին նրանց վրա: Ու հասնելով բլրի գագաթը, որտեղից իջնում էր Քսենոփոնը, սկսեցին ֆառեր

գորել: Մեկի սրունքը ջարդեցին, իսկ Քսենոփոնը մնաց առանց զինակրի, որը իր վահանն էր տանում: (21) Քայց Եվրիտոս լուսիացին նրան մոտիկ վազեց և սկսեց նահանջել, իր վահանով երկուսին միասին պաշտպանելով. մյուսները ևս ետ ֆաշվեցին դեպի այն գորամասը, որը կանգնած էր ռազմական դասավորությամբ:

(22) Այնուհետև հելլենական ամբողջ զորքը միացավ ու բանակեց այստեղ գտնվող բազմաթիվ ու բարեշեն տներում, որտեղ առատ պարեն կար: Այնքան մեծ ֆանակությամբ գինի կար այնտեղ, որ այն պահում էին ծեփված հորերում: (23) Քսենոփոնը և Խեյրիստոփոսը պայմանավորվեցին թշնամիների հետ և ստացան սպանվածների դիակները, փոխարենը ազատ արձակելով ուղեցույցին: Եվ մատուցեցին սպանվածներին այդ հանգամանքներում հնարավոր եղած բոլոր հարգանքները, ինչ ընդունված է մատուցել ֆաշարի ռազմիկներին:

(24) Հաջորդ օրը նրանք ուղևորվեցին առանց ուղեցույցի. իսկ թշնամիները կոպում էին, և նախօրոք գրավելով հանապարհին գտնվող ամեն մի նեղ կիրճ, խոչընդոտում անցումները: (25) Երբ նրանք խանգարում էին առաջիններին, ապա Քսենոփոնը փորձում էր հակառակ կողմից լեռը մագլցել առաջընթացին խանգարող թշնամիներից ավելի բարձր, և այդպիսով վերացնում էր խոչընդոտը: Իսկ երբ նրանք հարձակվում էին վերջապահների վրա, այնժամ Խեյրիստոփոսն էր մագլցում, փորձելով ավելի բարձրանալ, քան խանգարողները և դրանով իսկ վերացնում էր վերջապահների անցումը խոչընդոտող արգելիք: Եվ այսպես, նրանք միշտ օգնում էին իրար և շատ հոգատար էին իրար նկատմամբ: (27) Պատահում էր նաև, որ բարբառուները շատ նեղություններ էին պատճառում նույնիսկ նրանց, ովքեր մագլցել էին և հասցնում էին նորից իջնել: Նրանք այնքան նարպիկ էին, որ անգամ մոտիկ լինելիս կարողանում էին փախչելով ազատվել. քանզի նրանք ուրիշ ոչինչ չէին կրում. բացի աղեղներից ու պարաստիկներից: (28) Նրանք գերազանց նետաձիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր: Նետաձակման ժամանակ նրանք լարը ձգում էին, ձախ ոտը դնելով աղեղի ցածի ծայրի վրա: Նրանց արձակած նետերը ծակում էին վահաններն ու լանջապանակները: Հելլենները, երբ այդպիսի նետեր ձեռք էին բերում, ապա կաշվե փոկեր հարմարեցնելով դրանց, օգտագործում էին տեգի փոխարեն: Այս վայրերում բոլորից պիտանի հանդիսացան կրետացիները. նրանց առաջնորդն էր Ստրատոկլես կրետացին:

III. Այդ օրը հելլենները դարձյալ մնացին գյուպերում, որոնք գտնվում էին Կենտրիտես գետի<sup>7</sup> հարթավայրից վերև: Գետի լայնքը համարյա երկու

պլեթրոն է. այն սահման է Արմենիայի և կարգուխների երկրի միջև: Հելլեններն այստեղ ուրախացած շուրջ ֆաշեցին դաշտ տեսնելով: Գետը վեց կամ յոթ ասպարեզ հեռու էր կարգուխների լեռներից: (2) Այնժամ նրանք մեծ գոհունակությամբ բանակեցին, և՛ պարեն ունենալով, և՛ անցած շատ նեղություններ վերհիշելով: Քանզի այն յոթ օրը, որ նրանք անցան կարգուխների երկրի միջով, միշտ ստիպված էին եղել կովելու և ենթարկվել էին այնքան մեծ աղետների, որքան չէին պատճառել արքան ու Տիսսափեռնեսը միասին վերցրած: Այժմ՝ ազատված այդ ամենից, նրանք հանույթով բնեցին:

(3) Լուսարացին գետի այն կողմը նրանք նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոչընդոտելու գետանցը, իսկ հեծյալներից վերև, բլուրների վրա շարվել էին հետևակ զարգեր, որոնք պետք է արգելեին հելլեններին Արմենիա դուրս գալ: (4) Մրանք Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերը<sup>8</sup> ու խաղալայները<sup>9</sup> վարձկան<sup>10</sup>: Ասում էին, թե խաղալայները ազատ են և խիզախ. նրանք զինված էին հյուսկեն երկայն վահաններով և նիզակներով: (5) Բլուրները, որոնց վրա նրանք դասավորված էին, գետից երեք թե չորս պլեթրոն հեռու էին գտնվում: Տեսանելի միակ մի նահապարհ կար, որը վեր էր տանում և կարծես ձեռակերտ լիներ: Հելլենները փորձեցին այստեղ իսկ գետն անցնել: (6) Երբ փորձեցին այդ, ջուրը հասավ նրանց կրծքից բարձր, իսկ գետը մոլեգին էր, խոչը ու լարձուն ֆառերով, և հեռավոր չէր ջրի մեջ վահաններով առաջ գնալ. հակառակ դեպքում գետը ֆշում տանում էր դրանք. իսկ երբ որևէ մեկը փորձեց վահանը տանել գլխից վերև պահած, ապա նրա մարմինը անպաշտպան էր մնում սլաֆների և այլ նետումների դեմ. ուստի և հելլենները Լա վերադարձան ու բանակեցին գետի մոտ: (7) Իսկ այնտեղ, որ նախորդ գիշերը իրենք անց էին կացրել լեռներում, այժմ հավաքված տեսան բազմաթիվ զինված կարգուխների: Այնժամ հելլեններին խոր վիսառություն համակեց, տեսնելով գետի անանցանելիությունը, անցումը խանգարողներին. ինչպես նաև կարգուխներին, որոնք պատրաստ էին անցման ժամանակ իրենց թիկունից հարվածելու:

(8) Այդ օրն ու գիշերը հելլենները մնացին տեղում խիստ վարանման մեջ: Իսկ Քսենոփոնը երազ տեսավ. նրան քվաց, թե ինքը շղթաներով կապկրված էր, բայց շղթաները ինքնաբերաբար բեկան, այնպես, որ ինքը ազատվեց և արդեն ի վիճակի եղավ ինչքան ցանկանաք ռաբեր շարժել: Աշալույսին Քսենոփոնը Եկավ Խեյրիստոփոսի մոտ և առաջ նրան, թե ինքը հուսով է, որ լավ կլինի, և նրան պատմեց իր երազը: (9) Սա ուրախացավ և օրը բացվելուն պես ներկա բոլոր զորավարները զոհ մատուցեցին: Առաջին իսկ մատուցման ժամանակ նշանները բարենաչող ստացվեցին, և զոհաբերությունը

նից հետո զորավարներն [ու վաշտապետները] հրամայեցին զորքին նախահաշել:

(10) Եվ մինչ Քսենոփոնը նախահաշում էր, նրան մոտ վազեցին Երկու պատանի. Բանգի բոլորը գիտեին, թե ամեն մեկը կարող էր գալ նրա մոտ և՛ նախահաշելիս, և՛ հաշելիս, և՛ քնած ժամանակ նրան արթնացնել, եթե պատերազմական գործերին վերաբերող որևէ բան ունենար հաղորդելու: (11) Այնժամ պատանիները պատմեցին, թե մինչ իրենք կրակի համար ցախ էին հավաքում, մյուս ասիին, մինչև գետը ձգվող ժայռերի մեջ նկատեցին մի ծերուկու և մի կնոջ ու աղջիկների, որոնք հավանաբար զգեստի կապոցներ էին բախցնում Բարայրի մեջ: (12) Այդ տեսնելով, նրանք ենթադրեցին, որ այստեղ գետի անցումը անվտանգ կլինի, Բանգի թշնամու հեծյալներին այս վայրը անմատչելի է: Պատմեցին, թե իրենց զգեստները, ինչպես լողանալիս, հանելով, նրանք մերկ, բայց դաշույնները պահած, սկսեցին գետն անցնել: Եվ առաջ գնալով, մյուս ասին անցան առանց անգամ սեռական օրգանները թրջելու. և այն կողմն անցնելով նրանք վերցրին զգեստներն ու ետ դարձան:

(13) Քսենոփոնն իսկույն ինքը հեղում կատարեց<sup>11</sup> ու պատանիներին ևս թելադրեց լցնել բաժակները և մաղթանք անել երազները և գետանցը հայտնած աստվածներին ու ցանկալ, որ իրենց բոլոր ձեռնարկումները բարեհաջող վախճան ունենան: Հեղելուց հետո պատանիներին իսկույն տարավ Նեյրիսոփոսի մոտ, ու նրանք նույնը պատմեցին: Նեյրիսոփոսը լսելով նույնպես հեղում կատարեց: (14) Այս մաղթանքից հետո նրանք հրամայեցին զինվորներին արշավի պատրաստվել. իսկ իրենք խորհրդի հրավիրեցին զորավարներին, որոշելու համար, թե ինչպե՞ս լավագույնս իրագործեն անցումը, ինչպե՞ս հաղթեն առջևում կանգնած թշնամիներին և ինչպե՞ս խուսափեն թիկունում գտնվող թշնամիների հարձակումից: (15) Նրանք որոշեցին, որ Նեյրիսոփոսը առաջնորդելով զորքը, գետը անցնի զորքի կեսի հետ, իսկ մյուս կեսը դեռևս մնա Քսենոփոնի հետ, գումակն ու ամբոխն էլ անցնի այս երկուսի միջև:

(16) Երբ ամեն ինչ լավագույնս կարգավորվեց, նրանք նանապարհվեցին: Նրանց առաջնորդում էին պատանիները, գետը ձախ կողմում ունենալով: Մինչև գետանցը մոտ չորս ասպարեզ էր: Մինչ նրանք գնում էին, հակառակ ափով նրանց հետևում էին հեծյալների շարքերը: Հասնելով գետանց, հեղևները սպառազինվեցին և առաջինը ինքը Նեյրիսոփոսը գլխին պսակ դրեց<sup>12</sup>. զգեստները հանեց, գեները վերցրեց և հրամայեց մյուս բոլորին ևս նույնն անել. իսկ վաշտապետներին կարգադրեց վաշտերը տանել ուղիղ դասավորությամբ, մի մասին իր ձախով, մյուս մասին իր աջով: (18) Մինչ այդ, գու-

շակները զոն մատուցեցին գետի վրա<sup>13</sup>, իսկ թշնամիները սլախներ էին արծակում ու նետում պարսատիկներով, բայց նպատակին չէին հասցնում: (19) Քանի որ զոհաբերման նշանները բարենպաստ եղան, բոլոր զինվորները պլան երգեցին ու ռազմական աղաղակ բարձրացրին. նրանց հետ աղաղակում էին նաև բոլոր կանայք. Բանգի զորքի մեջ կային մեծ թվով հետերաներ:

(20) Այնժամ Նեյրիսոփոսն ու իր զորամասը մտան գետը, իսկ Քսենոփոնը վերջապահ զորամասից ամենաթեթևներին վերցնելով իր հետ, ամբողջ թափով ետ վազեց նորից դեպի այն նանապարհը, որը տանում էր վեր դեպի հայկական լեռները, ձևացնելով, որ իբր ցանկանում է այնտեղով գետն անցնել և թիկունից կտրել գետի մոտ կանգնած հեծյալներին: (21) Քշնամիները նկատելով, որ Նեյրիսոփոսի զորամասը հաջողությամբ է անցնում գետը, իսկ Քսենոփոնի ջոկատը շտապում է դեպի ետ, վախեցան շրջապատվելուց և արագ կերպով վազեցին դեպի գետից վեր տանող նանապարհը, և հասնելով այնտեղ, բարձրացան լեռը: (22) Լյուկիոսը, հեծյալ ջոկատի հրամանատարը, և Էսֆինեսը, Նեյրիսոփոսի զորամասի պելտաստների ջոկատի հրամանատարը, տեսնելով թշնամու շտապ փախուստը, սկսեցին հետապնդել: Իսկ զինվորները ձայն էին տալիս նրանց ու կոչ անում ետ շմնալ, այլ հարածելով թշնամուն բարձրանալ լեռը: (23) Իսկ Նեյրիսոփոսը անցնելով գետը, շհալածեց հեծյալներին, այլ իսկույն ուղղվեց դեպի գետի մոտ գտնվող բլուրները, վերևում կանգնած թշնամիների դեմ: Իսկ վերևում գտնվողները նկատելով իրենց հեծելագործի փախուստը, ինչպես և նրանց վրա հարձակվող հուպիստներին, լիեցին գետից վերև բարձրացող բլուրները:

(24) Քսենոփոնը տեսնելով, որ գետի մյուս ափին ամեն ինչ լավ է ընթանում, ինքը շտապեց ետ, դեպի գետն անցնող զորամասը. Բանգի նկատելի էր, որ կարդուխները արդեն դաշտ են իջնում, վերջին մնացողների վրա հարձակվելու համար: (25) Մինչ այդ Նեյրիսոփոսը գրավեց բարձունքը, իսկ Լյուկիոսը փոքրաթիվ ջոկատով ձեռնամուխ եղավ թշնամու հետապնդմանը և ձեռք բերեց գրաստների մնացած մասը, դրանց հետ նաև գեղեցիկ զգեստ և ըմպանակներ<sup>13</sup>: (26) Արդ՝ Բանի որ հեղևների գումակը և ամբոխը արագորեն անցնում էր, Քսենոփոնը շրջվելով դեպի կարդուխները, մարտական դիրք ընդունեց և կարգադրեց վաշտապետներին, որ յուրաքանչյուրն իր վաշտը դասավորի ըստ դասակների, տանելով դասակը դեպի ձախ<sup>14</sup>, այնպես, որ ֆալանգսի դասավորություն ստացվեր: Այնժամ վաշտապետներին ու դասակապետներին հրամայեց գնալ կարդուխների վրա, իսկ ետի ջոկատների հրամանատարներին՝ մնալ գետի մոտ: (27) Կարդուխները նկատելով, որ ամբոխին պաշտպանող վերջապահ զորամասը նոսրանում է և արդեն փոքրաթիվ

է երևում, արագ նետվեցին առաջ, ինչ-որ երգեր երգելով: Իսկ Նեյրխոփոսը, ֆանի որ իր դուրսունն արդեն ապահով էր. Քսենոփոնի մոտ ուղարկեց պելտաստներին և պարսատիկավորներին և աղեղնավորներին, պատվիրելով կատարել ինչ որ նա կհրամայի:

(28) Քսենոփոնը տեսնելով, որ նրանք սկսում են գետը նորից անցնել, լրատար ուղարկեց, պատվիրելով, որ առժամանակ տեղում, գետի մոտ մնան, ու այն շանցնեն, իսկ երբ իր գործարար կսկսի գետն անցնել, այնժամ դիմացից մտնեն գետը անցնողների աջ ու ձախ կողմից, իբր թե մտադիր են անցնել հակառակ ափը. ընդ որում նիզակավորները ձեռքերը նիզակի կաշվե փոկին անցկացրած լինեն, իսկ աղեղնավորները՝ նետը աղեղի լարին պահած. բայց գետում շատ շտորանան: (29) Իսկ իր զինվորներին հրամայեց, որ երբ թշնամու պարսատիկներից նետումները հասնեն իրենց և վահանները զրնգան, իրենք պեան երգելով վազեն թշնամիների վրա, իսկ երբ թշնամիները ետ դառնան ու շեփորահարը գետի կողմից ռազմի ազդանշանը տա, շրջվեն դեպի աջ<sup>15</sup>, վերջապահները առաջ ընկնելով բոլորը միասին վազեն դեպի առաջ և հնարավորին շափ արագ անցնեն գետը, առանց շարքերը խախտելու, որպեսզի իրար չխանգարեն. և նա, ով առաջինը կանցնի գետի մյուս ափը, կհամարվի գերազանցը բոլորից:

(30) Կարդուխները նկատելով, որ տեղում մնացածները արդեն փոքր թիվ են կազմում—ֆանգի նույնիսկ շատերը նրանցից, ում հրամայված էր մնալ, գնացել էին, ոմանք՝ բեռնատար անասուններին խնամելու, ուրիշներ՝ իրերի և մյուսները՝ հետերանների մասին հոգալու—համարձակ կերպով հարձակվեցին և սկսեցին նետեր արձակել ու պարսատիկներով փախել նետել: (31) Իսկ հելլենները պեան երգելով, վազճով նետվեցին նրանց վրա: Թշնամիները շղիմացան. ֆանգի նրանք, որպես լեռնականներ, լավ էին զինված հարձակվելու և նահանջելու համար, մինչդեռ ձեռնամարտի համար նրանց զինվածությունը չէր բավականացնում: (32) Այստեղ էլ շեփորահարը ազդանշան տվեց. և թրշնամիները առավել ևս արագությամբ փախան, իսկ հելլենները ետ դառնալով, շտապեցին անցնել գետը: (33) Այդ բանը նկատելով, թշնամիներից ոմանք նորից վազեցին դեպի գետը և նետածգություն սկսելով մի ֆանիսին վիրավորեցին. սակայն նրանց մեծ մասը, նույնիսկ այն ժամանակ, երբ հելլենները արդեն անցել էին մյուս ափը, շարունակում էր փախչել: (34) Իսկ հելլեններից նրանք, ովքեր գալիս էին գետն անցնողներին ընդառաջ, ոգևորվելով շատ առաջ էին անցել, ֆան իրենց հրամայված էր. ուստի Քսենոփոնի գորհրդի անցումից հետո ետ վերադարձան: Նրանցից ոմանք նույնպես վիրավորված էին:

IV. Գետն անցնելուց հետո հելլենները կեսօրվա շուրջ դասավորվեցին ու



Պեղակապատկեր. Մեթուստասի կողմից պատկերված Քսենոփոնի զորքի հաղթանակը Կարդուսի դեմ: Մեթուստասի կողմից պատկերված Քսենոփոնի զորքի հաղթանակը Կարդուսի դեմ:



նանապարհ ընկան Արմենիայի միջով. և ամբողջ ժամանակ դաշտավայրով ու հողաբլուրներով գնալով, անցան ոչ պակաս Բան հինգ փարսախ: Քանզի կարդուխների դեմ կռիվների պատճառով գետի մոտ գյուղեր չկային: (2) Այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սաուրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ<sup>16</sup>: Այստեղ նաև պարենն առատ էր: (3) Այստեղից առաջ գնացին Երկու կայան՝ տասը փարսախ, մինչև անցան Տիգրիս գետի ակունքը: Այնուհետև գնացին երեք կայան՝ տասնհինգ փարսախ, մինչև Տելեքոս գետը<sup>17</sup>: Այն գեղեցիկ էր, բայց ոչ մեծ. իսկ գետի մոտակայքում կային շատ գյուղեր: (4) Այս վայրը կոչվում էր արևմտյան Արմենիա: Նրա հյուսիսարևուն էր Տիրիքագոսը<sup>18</sup>, որը լինելով արևայի բարեկամը, երբ ինքը ներկա էր գտնվում, ուրիշ ոչ ոք արևային ձի չէր նստեցնում: (5) Սա հեծյալների ուղեկցությամբ մոտեցավ ու քարգվան ուղարկելով ասաց, թե ցանկանում է բանակցել հրամանատարների հետ: Չորավարները որոշեցին լսել նրան. ուստի մոտենալով մինչև լսելի տարածություն, հարցրին, թե ի՞նչ է կամենում: (6) Նա ասաց, թե ցանկանում է պայմանավորվել, որպեսզի ոչ ինքը վնասի հելլեններին, ոչ էլ նրանք այրեն տները. իսկ պարեն կարող են վերցնել ինչքան անհրաժեշտ է: Չորավարները համաձայնվեցին այդ բոլորին և այդպիսի պայման կնքեցին:

(7) Այստեղից ընթացան երեք կայան դաշտավայրի միջով՝ տասնհինգ փարսախ. և Տիրիքագոսը իր զորով հետևում էր նրանց մոտ տասը ասպարեզ հեռավորության վրա: Եվ նրանք հասան ապարանքի մոտ, որի շուրջը բազմաթիվ գյուղեր կային, լի զանազան պարենով: (8) Երբ արդեն բանակել էին, գիշերը առատ ձյուն եկավ. ուստի և լուսաբացին որոշեցին զորաշարքերը և զորավարներին տեղավորել գյուղերում, քանի որ ոչ մի թշնամի չէր երևում և կարծում էին, թե իրենք ապահով են ձյան առատության պատճառով: (9) Այստեղ նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն. մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդդեմ: Բայց ոմանք, որ բանակից դուրս գալով քափառել էին, պատմում էին, թե իբր գիշերը իրենք տեսել էին փայլող բազմաթիվ կրակներ: (10) Ուստի զորավարները վտանգավոր համարեցին տներում ցրված մնալը և որոշեցին զորքը դարձյալ ի մի հավաքել: Ուստի և բոլորը հավաքվեցին. մանավանդ, որ թվում էր, թե եղանակը պարզվում է: (11) Մինչ նրանք այստեղ գիշերում էին, այնքան առատ ձյուն տեղաց, որ ծածկեց և՛ զենքերը, և՛ պառկած մարդկանց. ձյունը կաշկանդեց նաև անասունների ոտքերը ու շատ դժվար էր վեր կենալը. քանզի եկած ձյունը, քանի դեռ չէր հալվել, տափացնում էր պառկածներին: (12) Իսկ երբ Քսենոփոնը համարձակվեց

մերկ վեր կենալ ու փայտ չարդել, իսկույն մեկ ուրիշը ևս վեր կենալով, վերցրեց կացինը նրա ձեռքից և սկսեց ինքը չարդել: Այնուհետև վեր կացան նաև ուրիշները և կրակ վառեցին ու յաղ ֆսվեցին<sup>19</sup>: (13) Քանզի այստեղ յուղի շատ տեսակներ կային, որ գործածում էին ձիթայուղի փոխարեն. խոզանարպ և ֆեջուրթի և դառն նշի և բևեկնի յուղ: Կար նաև սրանցից պատրաստված մե-

(14) Այնուհետև որոշվեց դարձյալ տեղավորվել [գյուղերի] տներում: Այնժամ զինվորները մեծ աղմուկով և ուրախությամբ դիմեցին դեպի բնակարաններն ու պարենամթերքը: Իսկ նրանք, ովքեր նախապես հեռանալիս անմտաբար այրել էին տները, պատժվեցին նրանով, որ վատ տեղավորվեցին: (15) Այնուհետև գիշերով Դեմոկրատես տեմենուսացուն մի չոկատ հանձնեցին և ուղարկեցին դեպի լեռները, որտեղ, ինչպես պատմել էին բանակից դուրս բախառած զինվորները, նկատել էին կրակներ. Բանզի Դեմոկրատեսը նախկինում ևս այդպիսի տվյալներ ստուգել էր, եղածը՝ որպես եղած, իսկ չեղածը՝ որպես չեղած: (16) Սա գնաց, և վերադառնալով հայտնեց, թե կրակներ չի տեսել. սա իր հետ բերեց իր բռնած մարդուն, որը կրում էր պարսկական աղեղ, կապարն և երկաշորի տապար, ինչպիսին ունեն ամազոնոսիները<sup>20</sup>: (17) Երբ սրան հարցրին, թե որտեղացի է, պատասխանեց, թե պարսիկ է ու գալիս է Տիրիբագոսի բանակից, պաշար վերցնելու համար: Հելլենները հարցրին նաև, թե ինչքան է զորքը և ի՞նչ նպատակով է հավաքված: (18) Նա ասաց, որ Տիրիբագոսն է, որն ունի և՛ իր զորքը, և՛ վարձկան խալկուրներ ու տառխներ. և նա պատրաստվում է, շարունակեց պարսիկը, հելլենների վրա հարձակվել լեռն անցնելու ժամանակ կիրենեում, որտեղ և գտնվում է միակ նանապարհը:

(19) Այս լսելով, զորավարները որոշեցին զորածոզով գումարել. այնուհետև պանակախումբ թողնելով ու մնացողների վրա Սոփայնեսոս ստյուժիֆալացուն զորապետ նշանակելով, իսկույն մեկնեցին, ուղեցույց ունենալով գերված մարդուն: (20) Երբ նրանք անցնում էին լեռները, պետաստները առաջ գնալով ու նկատելով զորակայանը, չսպասեցին հասլիտների հասնելուն, այլ աղաղակելով վազեցին դեպի զորակայանը: (21) Իսկ բարբարոսները աղմուկը լսելով, շղիմացան ու փախան: Բայց բարբարոսներից ոմանք սպանվեցին, և ձեռք բերվեց մոտ հսան ձի, միաժամանակ գրավվեց Տիրիբագոսի վրանը և նրա մեջ արծաթե ռոֆերով մանիհներ և քմպանակներ, ինչպես նաև մարդիկ. որոնք ասացին, թե հացարարներ են ու մատովակներ: (22) Այս իմանալուց հետո հասլիտների զորավարները որոշեցին որքան կարելի է շուտ վերադառնալ զորակայան, որպեսզի այնտեղ մնացածների վրա որևէ հարձակում չկա-

տարվի: Եվ իսկույն շեփորը նահանջի ազդանշան տվեց ու վերադառնալով հույն օրը հասան բանակատեղի:

V. Հաջորդ օրը որոշեցին ուղևորվել ինչքան ննարավոր է արագ, նախքան թշնամու նորից հավաքվելը և կիրեները գրավելը: Հելլենները պատրաստվելով նանապարհվեցին խոր ձյան միջով. ունենալով շատ առաջնորդներ: Եվ նույն օրն իսկ նրանք անցնելով լեռնագագաթը, որտեղ Տիրիբագոսը մտադրվել էր հարձակում գործել, բանակեցին: (2) Այստեղից առաջ անցան երեք կայան ամառի տարածություններով՝ տասնհինգ փարսախ, մինչև Եփրատ գետը, և այն անցան թրջվելով մինչև պորտը: Պատմում էին, թե ակունքները հեռու չէին:

(3) Այստեղից գնացին խոր ձյան ու դաշտի միջով երեք կայան՝ տասներեք փարսախ: Դեպի երրորդ կայան նանապարհը շատ ծանր եղավ. Բանզի փշում էր հյուսիսային հակառակ քամի, որն ամեն ինչ սառեցնում էր և ցրտահարում մարդկանց: (4) Այնժամ գուշակներից մեկն ասաց, թե անհրաժեշտ է զոն մատուցել քամուն, և մատուցեցին. ու բոլորը պարզորեն զգացին, որ դադարեց քամուն ու ծագությունը: Իսկ ձյան խորությունը մեկ գրկաչափ էր. այնպես, որ բեռնատար անասուններից ու ստրուկներից շատերը կորստի մատնվեցին, ինչպես նաև երեսուն հոգի զինվորներից: (5) Նրանք գիշերն անցկացրին վառած կրակների շուրջ. կայանում շատ փայտ կար, բայց օրվա վերջին հասնողները առանց փայտի մնացին: Ուստի շուտ եկողները, որոնք կրակ կին վառել, ուշ եկողներին չէին բողբոլում մոտենալ կրակին, մինչև նրանցից չէին ստանում ցորեն կամ ուտելու որևէ այլ բան: (6) Այնժամ սկսեցին իրար միջև փոխանակել այն, ինչ յուրաքանչյուրն ուներ: Այնտեղ ուր կրակ էր վառվում, ձյան հալվելու հետևանքով գոյացել էին մեծ փոսեր մինչև գետին. և այնտեղ ննարավոր էր չափել ձյան խորությունը:

(7) Այստեղից հետևյալ ամբողջ օրը նրանք գնում էին ձյան միջով և շատերը մարդկանցից տանջվում էին սաստիկ ֆաղցից: Քսենոփոնը վերջապահների առաջնորդը լինելով, պատահում էր վայր ընկած մարդկանց և չգիտեր, թե ինչ պիտ էր այդ: (8) Բայց երբ փորձառուներից մեկը նրան ասաց, թե սրանք, հավանաբար, սովահար են և եթե մի բան ուտեն, ապա վեր կկենան, Քսենոփոնը շրջելով գրաստների միջև, որտեղ ուտելու բան տեսնում էր, ինքը բաժանում էր կամ ուղարկում տարբեր կողմեր այնպիսի մարդկանց միջոցով, որոնք կարող էին հասնել մինչև սովահարները: (9) Որևէ բան ուտելուց հետո հիվանդները ռոֆի էին կանգնում և գնում:

Մինչ առաջ էին ընթանում, Խեյրիսոփոսը աղջամուղջին հասավ մի գյուղ և ամբողջան առաջ, աղբյուրի մոտ պատահեց գյուղի կանանց և աղջիկների, որոնք չուր էին տանում: (10) Մրանք հարցրին հելլեններին, թե ովքե՞ր են: Իսկ

քարգմանք պարսկերեն ասաց, որ քաղաքի կողմից գնում են սատրապի մոտ<sup>21</sup>: Եվ կանայք պատասխանեցին. թե նա այստեղ չէ, այլ գտնվում է գրեթե մեկ փարոսախ հեռու: Այնժամ, քանի որ ուշ էր, հեյլենները չուր տանողների հետ մտան ամբուրյունից ներս՝ գեղջավազի մոտ<sup>22</sup>: (11) Այսպիսով, Խեյրիսոփոսը և զինվորներից նրանք, ովքեր կարողացան, բանակեցին այստեղ. իսկ մյուսները, որոնք չէին կարողացել նանապարհի միջև վերջը գալ, գիշերեցին անսնունդ և անկրակ. այնժամ ևս զինվորներից ոմանք մահացան:

(12) Իսկ թշնամիների մի մասը, հավաքվելով, հետևում էին և ուժասպառ անասուններին հափշտակում ու սրանց պատճառով կոպում էին իրար միջև: Ես էին մնում նաև այն զինվորները, որոնց ոտների մատները ցրտից սառել էին: (13) Աչքերի համար ձյունից պաշտպանվելու մի միջոց էր. եթե մեկը գնում էր աչքերի առաջ որևէ սև բան ունենալով. իսկ ոտների համար՝ եթե մեկն անդադար շարժվում էր, իսկ գիշերը հանում ոտնամանները: (14) Ովքեր ոտնամաններով էին փնտրում, կապերը խրվում էին ոտների և ոտնամանները սառչում էին. քանզի դրանք, քանի որ հին կոշիկները մաշվել էին, գեղջկական էին, պատրաստված էզան նոր փերած կաշուց:

(15) Ահա այս կարիքներից ստիպված, զինվորներից ոմանք էս էին մնում. և տեսնելով ինչ-որ սև տեղ, որն առաջացել էր ձյան վերանալու պատճառով, նրանք ենթադրեցին, թե ձյունը հալվել է. և իրոք այն հալվել էր մոտիկ անտառանոցում գտնվող աղբյուրի հետևանքով, որը գոլորշի էր արձակում: Նրանք շեղվելով նանապարհից, նստեցին այստեղ և ասացին, թե առաջ չեն գնա: (16) Իսկ Քսենոփոնը վերջապահների հետ, երբ նկատեց այդ բանը, ամեն կերպ ու հնարանով համոզում էր շանջատվել բանակից, ասելով, թե շատ թշնամիներ ի մի հավաքված հետևում են իրենց, և վերջում սկսեց զայրանալ. իսկ նրանք խնդրում էին սպանել իրենց, քանզի չէին կարող առաջ գնալ: (17) Այնժամ որոշեցին, որ ամենից լավն է, հնարավորության դեպքում, վախեցնել հետևող թշնամիներին, որպեսզի շնորհակալեն ուժասպառների վրա: Եվ արդեն մութ էր, երբ թշնամիները մեծ աղմուկով մոտեցան, վիճելով իրենց ձեռք բերած ավարի պատճառով: (18) Այնժամ վերջապահներից առողջ մնացածները վեր կենալով նետվեցին թշնամիների վրա, իսկ ուժասպառները որքան կարող էին ուժեղ աղաղակ բարձրացրին ու սկսեցին նիզակները վահաններին խփել: Իսկ թշնամիները անարեկված փախան ձյան միջով դեպի անտառները, և այլևս ոչ ոք ոչ մի տեղ չէր աղմկում:

(19) Քսենոփոնը և նրա հետ եղողները հիվանդներին ասելով, թե հաջորդ օրը մարդիկ կգան նրանց տանելու, առաջ շարժվեցին. բայց դեռևս չորս ասպարեզ շանջած, նանապարհին պատահեցին զինվորների, որոնք ծածկված,

հանգստանում էին ձյան վրա. և ոչ մի պահակ չէր կարգված. նրանց վեր կացրին: Նրանք ասացին, թե առջևում եղողները առաջ չեն շարժվում: (20) Քսենոփոնը առաջ գնալով պելոսսոսներից ամենաուժեղներին ուղարկեց, պատվիրելով իմանալ, թե ի՞նչն էր խոշորագուստում: Նրանք հաղորդեցին, թե ամբողջ զորքը այդպես էր հանգստանում: (21) Այնժամ Քսենոփոնի հետ եղողները ևս տեղավորվեցին նույն վայրում բացօթյա, առանց կրակի և առանց ընթելու, և պահակներ կարգեցին ինչքան կարող էին: Երբ արդեն օրը բացվում էր, Քսենոփոնը հիվանդների մոտ ուղարկեց ամենաերիտասարդներին և հրամայեց վեր կացնել նրանց ու ստիպել առաջ գնալու:

(22) Մինչ այդ Խեյրիսոփոսը գյուղում եղողներից ոմանց ուղարկեց իմանալու, թե ի՞նչ վիճակում են ետևում եղողները: Վերջինները տեսնելով նրանց, ուրախացան և հիվանդներին նրանց հանձնեցին զորակայան տանելու համար. իսկ իրենք առաջ գնալով, քան ասպարեզ շանջած, հասան այն գյուղը, ուտեղ իջևանել էր Խեյրիսոփոսը: (23) Երբ բոլորը հավաքվեցին իրար մոտ, որոշեցին, որ ապահով կլինի զորամասերը գյուղերում տեղավորել: Եվ Խեյրիսոփոսը մնաց այնտեղ, իսկ մյուսները վիճակահանությամբ բաժանեցին իրենց տեսած գյուղերը և յուրաքանչյուրը այնտեղ մեկնեց իր զորամասի հետ: (24) Այնժամ վաշտապետ Պոլլուկրատեսը արժեքացրեց խնդրեց թույլ տալ իրեն առաջ գնալ, ու վերցնելով իր հետ արագաշարժներին, վազեց դեպի այն գյուղը, որը վիճակով ստացել էր Քսենոփոնը, ու գերեվարեց այնտեղ գտնված բոլոր գյուղացիներին և գեղջավազին, նաև քաղաքից ուղարկեց սուրբ սևուցվող տասնյոթ մտրուկների, ինչպես և գեղջավազի դստեր, որը իններորդ օրն էր, ինչ ամուսնացած էր: Իսկ նրա ամուսինը գնացել էր նապաստակ որսալու և չգերվեց գյուղում:

(25) Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես շրճի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզեր, հավեր և սրունց ձագեր: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: (26) Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդդեմ և կրատներին<sup>23</sup> մեջ գարուց պատրաստած զինի, որի երեսին<sup>24</sup> լողում էին գարու հատիկներ. կրատների մեջ կային հաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: (27) Մարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դնե ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե չուր շիտոններ. իսկ սովոր մարդու համար շատ ախորժեղի բնույթի էր:

(28) Այս գյուղի ավագին Քսենոփոնը սեղանակից դարձրեց ու նրան խորհուրդ տվեց չվհատվել, ասելով, որ նա իր զավակներից չի գրկվի և փոխարենը հեռանալիս իրենք նրա տունը կլցնեն մթերքներով, եթե նա լավ ծառայություն

մատուցի զորքին և դառնա ուղեցույց, մինչև իրենք կհասնեն մի այլ ժողովուրդ երկիր: (29) Իսկ նա խոստացավ այդ բոլորն անել, ու բարչացակամ դառնալով, հայտնեց, թե որտեղ է հորած գինին: Այդ գիշեր բոլոր զինվորները տեղավորվելով տներում՝ քնեցին ամեն տեսակ պարենի առատության մեջ, անդույ հրակողության տակ պահելով գեղջավազին ու նրա որդիներին:

(30) Հաջորդ օրը Քսենոփոնը գեղջավազին իր հետ վերցնելով, գնաց խեյրիստոսի մոտ: Ուր որ գյուղ էր հանդիպում, գնում էր գյուղերում եղողների մոտ և ամենուրեք նրանց գտնում էր կերուխումի և ուրախության մեջ, և ոչ մի տեղ նրան բաց չթողեցին, մինչև հաշ շմատուցեցին: (31) Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին զառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ ֆանակությամբ ցորենի ու զարու հացի հետ: (32) Ու եթե որևէ մեկը մտերմաբար ցանկանում էր խմել մյուսի կենացը, ապա նրան ֆարշ էր տալիս կրատերի մոտ և կոանալով այնտեղից պետք է խմեր եզան նման ծծելով: Եվ գեղջավազին թույլ տվեցին վերցնելու այն, ինչ ցանկանում էր: Բայց նա ոչինչ չէր վերցնում, այլ երբ որևէ տեղ տեսնում էր իր տոհմակիցներից մեկն ու մեկին, նրան միշտ վերցնում էր իր հետ: (33) Երբ եկան խեյրիստոսի մոտ, սրանց ևս գտան խնջույքի մեջ. պսակված չոր խոտն պսակներով. նրանց սպասավորություն էին անում արմենների երեխաները բարբառոսական զգեստներ հագած. իսկ երեխաներին նրանք նշաններով ցույց էին տալիս, ինչպես մունջերի, թե ինչ անել:

(34) խեյրիստոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց հետո սկսեցին միասին հարցուփորձել գեղջավազին պարսկերեն խոսող բարգմանի միջոցով, թե այդ ի՞նչ երկիր էր: Նա ասաց, թե Արմենիան է: Եվ դարձյալ հարցրին, թե ձիերը ո՞ւմ համար են բուծվում: Նա ասաց, թե՝ արքայի համար իբրև տուրք<sup>25</sup>: Ասաց նաև, որ հարևան երկիրը խալյուբների երկիրն է և ցույց տվեց, թե որն է այնտեղ տանող նանապարհը: (35) Այնուհետև Քսենոփոնը վերադարձավ, գեղջավազին և վերադարձնելով նրա ընտանիքին, և դեռ առաջներում իր ավար վերցրած պառավ ձին նվիրեց գեղջավազին, որպեսզի սնուցի ու զոհաբերի, ֆանգի լսել էր, որ այն նվիրաբերված էր Հելիոսին<sup>26</sup> և միաժամանակ վախենում էր, որ այն կսատկի, ֆանգի նանապարհից խիստ հյուծվել էր: Ինքը վերցրեց մարուկներից մեկը, և մյուս [զորավարներին ու] վաշտապետներին ևս տվեց մեկական մարուկ: (36) Այստեղի ձիերը փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ: Այստեղ իսկ գեղջավազը սովորեցրեց ձիերի ու գրաստների ոտներին, ձյան միջով գնալիս, պարկեր փաթարել. ֆանգի առանց պարկերի անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ:

VI. Երբ արդեն ուրբերոց օրն էր. Քսենոփոնը գյուղապետին որպես ուղև-

ցույց հանձնեց խեյրիստոսին, իսկ նրա անեցիներին բաց թողեց, բացի նոր շափանա դարձող որդուց: Սրան հանձնեց Պլեյսթենես ամփիպոլսեցու նսնդուրյանը, որպեսզի էրե գեղջավազը լավ առաջնորդելու լինի. ապա սրան ևս վերցնելով, վերադառնա: Ու նրա տունը ինչքան կարող էին ավելի շատ մթերներ տանելով, նրանք պատրաստվեցին ու նանապարհ ընկան: (2) Չյան միջով նրանց առաջնորդում էր կապերից արձակված գեղջավազը: Եվ արդեն երրորդ կայանի նանապարհին էին, երբ խեյրիստոսը զայրացավ նրա վրա այն պատճառով, որ իրենց չի առաջնորդել դեպի գյուղերը: Իսկ նա ասում էր, թե այս վայրում գյուղեր չկան<sup>27</sup>: խեյրիստոսը նրան ծեծեց, բայց չկապեց: (3) Այդ բանից հետո գեղջավազը գիշերը փախավ, լքելով իր որդուն: Այս դեպքը՝ ուղեցույցի նկատմամբ վատ վերաբերմունքը և անհոգությունը, միակ գծառությունը եղավ ամբողջ նանապարհի ընթացքում խեյրիստոսի և Քսենոփոնի միջև: Իսկ Պլեյսթենեսը սիրեց (գեղջավազի) տղային և նրան իր տունը բերելով, վերաբերվում էր ամենայն մտերմությամբ:

(4) Այնուհետև առաջ գնացին յոթ կայան՝ օրական հինգ փարսախ, Փասիս գետի մոտ<sup>28</sup>, որի լայնքը մոտ մեկ պլեթրոն էր: (5) Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ. և լեռնանցքով դեպի դաշտ իջնելիս նրանց դեմ էլան խալյուբները<sup>29</sup>, տառխները<sup>30</sup> և փասիանները<sup>31</sup>: (6) խեյրիստոսը տեսնելով թշնամիներին լեռնանցքի վրա, կանգ առավ նրանցից գրեթե երեսուն ասպարեզ հեռավորության վրա, որպեսզի թշնամուն շնոտենա այն ժամանակ, երբ զորքը դասավորված էր զորասյան ձևով: Նա հրամայեց մյուսներին ևս վաշտերը դասավորել այնպես, որ կազմվի ֆալանգս: (7) Երբ վերջապահները ևս հասան, նա գումարեց զորավարներին և վաշտապետներին ու խոսեց այսպես. «Թշնամին, ինչպես տեսնում եք, գրավել է լեռնանցքը. ժամանակն է մտածելու լավագույնս կովելու մասին: (8) Իմ տեսակետն այն է, որ պատվիրենք զինվորներին նախանաշել, իսկ մենք խորհուրդ անելով որոշենք, թե ե՞րբ ավելի հարմար է լեռն անցնել. այսօ՞ր, թե՞ վաղը»: (9) «Իմ կարծիքով,—ասաց կլեանորը,—պետք է շտապ նախանաշել, այնուհետև զինավառվել և ամբողջ թափով գնալ թշնամու վրա: Քանզի էթե մենք այսօր սպասենք, ապա այժմ մեզ տեսնող թշնամիները առավել կֆաշալերվեն և, հավանաբար, այդ համարձակությունը կմեծացնի նրանց քիվը»:

(10) Նրանից հետո Քսենոփոնն ասաց. «Իսկ իմ կարծիքն այս է. ֆանի որ անհրաժեշտ է կովել, ապա պետք է այնպես նախապատրաստվել, որ պատերազմենք լավագույն ձևով: Եթե մենք ցանկանում ենք առավել հեշտությամբ անցնել լեռը, կարծում եմ, պետք է մտածենք այդ իրագործել նվազագույն վիճակում և նվազագույն մարդկային զոհեր տալու գնով: (11) Մեր առաջ

Երևացող լեռը ձգվում է ավելի քան վարսուն սասարեգ, բայց ոչ մի տեղ մեր դիմաց չեն երևում այն պահպանող մարդիկ, բացի նախապարհի վրա Եղովնե-  
րից: Ուստի շատ ավելի լավ է փորձել աննկատ գրավել լեռան ամառի մի հատ-  
վածք, շեղելով թշնամու ուշադրությունը, կամ գրավել այն, եթե հնար լինի,  
առաջ անցնելով, քան թե կովել ամբացված վայրերում պատրաստ սպասող  
մարդկանց դեմ: (12) Քանզի շատ ավելի հեշտ է գաղիվեր բարձրանալ առանց  
կովի, քան հարթությամբ գնալ, եթե այս ու այն կողմ թշնամիներ են. և գի-  
շերն իսկ, երբ մարդ չի կովում, ավելի լավ է նկատում նախապարհին իր ու-  
րի տակ, քան ցերեկը կովի ընթացում, և ժայռոտ նախապարհը առանց կովի  
առավել բարենպաստ է, քան հարթ նախապարհը նետահարության տակ: (13)  
Ինձ քվում է, որ անհնար չէ լեռը գողունի գրավելը, եթե գիշերով գնանք, որ-  
պեսզի մեզ չտեսնեն և այնքան հեռանան, որ չկարողանան մեզ նկատել: Ես  
կարծում եմ, որ եթե ձևացնենք, թե իբր այստեղ ենք հարձակվելու, ապա լե-  
ռան մյուս հատվածները ավելի կամայանան. քանզի թշնամու ուժերը այստեղ  
կմնան հավաքված: (14) Բայց ես ինչո՞ւ դատողություններ եմ անում լեռը  
գողունի գրավելու մասին: Չէ՞ որ, ինչքան ինձ հայտնի է, ո՞վ խեղճություն,  
դուր, լակեղեմունցի լիբրավ ֆաղաֆաղները<sup>32</sup>, մանուկ հասակից իսկ վարժ-  
վում եմ գողության և գողությունը, եթե այն չի վերաբերում օրենքով արգել-  
ված իրերի, ձեզ մոտ համարվում է ոչ թե ամոթ, այլ լավ արարք<sup>33</sup>: (15) Եվ  
որպեսզի սովորեմ ավելի ճարպկորեն գողանալ և աշխատեմ ձեր գողությունը  
թափանցել, ձեզ մոտ օրինական է համարվում գողության ժամանակ բռնվողին  
զանալիծման ենթարկել: Արդ հասել է ժամը, երբ դու պետք է ցույց տաս քո  
վարժության (հետևանքը) և հոգ տանես, որպեսզի մեզ չնկատեն լեռը գողու-  
նի գրավելիս ու հակահարված չտանանք»:

(16) «Ենթադրենք, որ,—ասաց խեղճությունը,—այդպես է իսկ ես լսել եմ,  
որ դուր, արեւնացիներդ ևս հանրային ունեցվածքը գողանալու մեծ վարպետ-  
ներ եք, նույնիսկ այն դեպքում, երբ գողացողին մեծ վտանգ է սպառնում.  
հատկապես այդ առում են առավել հզորները, եթե ձեզ մոտ իրոք հզորներն  
են իշխելու արժանի համարվում. ուստի ժամն է, որ դու ևս ցույց տաս քո  
վարժության (հետևանքը)»<sup>34</sup>: (17) «Ես պատրաստ եմ,—ասաց Քսենոփոնը,—  
ընթրիքից հետո վերցնել վերջապահներին ու գնալ լեռը գրավելու: Ես հույ-  
նիսկ ուղեցույցներ ունեմ, քանի որ թերևազենները դարանակալելով բռնել են  
գողունի մեզ հետևողներից ոմանց: Նրանցից ես իմացա, որ լեռը անմատչելի  
չէ և որ այնտեղ արածում են այծեր և եզներ. ուստի եթե մենք կարողանանք  
հանկարծակի գրավել լեռան մի հատվածը, այն մատչելի կլինի նաև մեր  
գրաստների համար: (18) Ես հուսով եմ նաև, որ թշնամիները չեն մնա իրենց

տեղում, եթե մեզ տեսնեն իրենց հետ նույն բարձրության վրա: Նրանք այժմ  
էլ չեն ցանկանում իջնել և հավասարվել մեզ»: (19) Այնժամ խեղճությունն  
ասաց. «Բայց ինչո՞ւ դու պետք է գնաս, լինելով վերջապահներին: Ավելի լավ  
է ուղարկես ուրիշներին, եթե կամովին գնացողներ չլինեն»:

(20) Այնժամ առաջ եկան Արիստոնիմոս մեթիդրիացին իր հուպիտներով  
և Արիստեսա ֆիոսացին իր մերկերով և Նիկոմաֆոս իտեացին իր մերկերով.  
և պայմանավորվեցին, որ բարձունքը գրավելու դեպքում իսկույն բազում  
կրակներ կվառեն: (21) Այսպես որոշելով, նրանք նախանաշեցին. ու նախա-  
նաշելուց հետո խեղճությունը ամբողջ գործը տարավ տասը սասարեգ առաջ,  
դեպի թշնամիները, ձևացնելով, որ իբր մտադիր է այստեղից հարձակում  
գործելու:

(22) Ընթրելուց հետո, երբ գիշերն իջավ, գործի մի մասը շարժվելով մեկ-  
նեց ու գրավեց լեռը. իսկ մնացածները հանգստացան իրենց գտնված տե-  
ղում: Մինչդեռ թշնամիները տեսնելով, որ լեռը գրավվեց, ամբողջ գիշերը  
կրակ վառելով արթուն մնացին: (23) Երբ օրը բացվեց, խեղճությունը, զոհ  
մատուցելուց հետո, գործը տարավ նախապարհով, մինչդեռ լեռը գրաված շո-  
կատները գնում էին բարձունքներով: (24) Ինչ վերաբերում է թշնամիներին,  
ապա նրանց մեծ մասը մնաց լեռնանցքի վրա, իսկ մի մասն էլ գնաց բար-  
ձունքը գրաված (հեղեմների դեմ): Եվ նախքան գլխավոր ուժերն իրար կմո-  
տենային, բարձունքի վրա եղողները ընդհարվեցին. հաղթեցին հեղեմներն ու  
սկսեցին հալածել (թշնամուն): (25) Մինչ այդ, հարթավայրում եղող հեղեմ  
պելտաստները վազում էին նետվեցին թշնամու դասավորության վրա, իսկ խեղ-  
ճությունը հուպիտների հետ արագ ֆայլով հետևում էր նրանց: (26) Ճանա-  
պարհի վրա կանգնած թշնամիները տեսնելով բարձունքում գտնվողների պար-  
տությունը, փախան. և նրանցից սպանվեցին ոչ շատերը, բայց հեղեմները  
գրավեցին շատ ու շատ հյուսված վահաններ, որոնք բերով կտրատելով ան-  
պետք էին դարձնում: (27) Երբ բարձրացան (գագաքը), զոհ մատուցեցին և  
հաղթության հուշարձան կանգնեցնելով, իջան հարթավայր ու հասան գյուղերը,  
որոնք լեցուն էին ամեն տեսակ բարիքներով:

VII. Այստեղից նրանք գնացին դեպի տառխները հինգ կայան՝ երեսուն  
և հինգ փարսախ, և նրանց պարենը սպառվեց. քանզի տառխներն ապրում  
էին ամբողջով վայրերում, որտեղ և փոխադրել էին իրենց ամբողջ պարե-  
նամբերը: (2) Երբ (հեղեմները) հասան մի վայր, որը ֆաղաֆ չէր և որտեղ  
տներ էլ չկային, բայց ուր հավաքվել էին այրեր և կանայք և շատ անասուն-  
ներ, խեղճությունը առանց սպասելու, իսկույն հարձակվեց նրանց վրա. և երբ  
առաջին շոկատը հոգնեց, մյուսը անցավ հարձակման, հետո մեկ ուրիշը.



հանգի անհնար էր ի մի հավաքվելով այն պաշարել, որովհետև շուրջանակի գահավեժ վայրում էր այն գտնվում:

(3) Երբ Քսենոփոնը վերջապահների և պելոպոնեսների ու հուպիսների հետ տեղ հասավ, ապա խելոսիստիսը ասաց. «Դու լավ ժամանակին եկար. այս վայրը պետք է գրավել. հանգի գործը պարեն չի ունենա, Երև մենք այս վայրը չգրավենք»: (4) Այնժամ նրանք խորհրդակցեցին. և Քսենոփոնի այն հարցին, թե ի՞նչն է խանգարում խուժելու այնտեղ, խելոսիստիսը պատասխանեց. «Միայն այս նանապարհն է, որը դու տեսնում ես, տանում այնտեղ. ու երբ որևէ մեկը փորձի այստեղով անցնել, ապա անցումի վրա բարձրացող ժայռից ֆառեր են գլորում ցած: Ահա վիճակը նրա, ով հարվածի հանդիպի»: Այս ասելով նա միաժամանակ ցույց տվեց սրունքները և կողերը փշրված զինվորների: (5) «Իսկ եթե սպառեն եղած ֆառերը,—ասաց Քսենոփոնը,— ապա մեր անցումն արգելող որևէ բան մնում է դեռ: Չէ՛ որ մեր դիմաց փոքրաթիվ մարդիկ են, և նրանցից սուս երկուսը կամ երեքն են զինված: (6) Այն տարածությունը, որը մենք պետք է անցնենք ֆարկոժման ենթարկվելով, ինչպես ինձ էլ տեսնում ես, մեկ և կես պլեթրոն է. դրանից մոտ մեկ պլեթրոնը ծածկված է իրարից հեռու անած բարձր սոճիներով, որոնց ետև կանգնած մարդիկ ի՞նչ վնաս կարող են կրել շարված կամ գլորված ֆառերից: Մնում է կես պլեթրոն, որը պետք է անցնել երբ ֆառերը դադարեն գլորվելուց»: (7) «Քանն էլ այն է,—պատասխանեց խելոսիստիսը,—որ երբ շարվում ենք դեպի ծառերը, իսկույն մեծ ֆանակությունը ֆառեր են քափվում»: «Այդ էլ մեզ պետք է,— ասաց Քսենոփոնը,—այդպիսով նրանք ավելի շուտ կսպառեն ֆառերը: Ուրեմն զնանք այնտեղ, որտեղից ի՞նչ տարածություն է մնում մեզ վազել դեպի առաջ, երև այդ հաջողվի, և որտեղից հեշտ է նահանջել, երբ դրա կարիքն զգացվի»:

(8) Այնժամ առաջ անցան խելոսիստիսը և Քսենոփոնը, նաև վաշտապետ Կալլիմախոս պառասիացին. հանգի այդ օրը նրան էր հանձնված վերջապահ վաշտապետների հրամանատարությունը. իսկ մյուս վաշտապետները մնում էին ապահով վայրում: Այնուհետև ծառերի տակ վազեցին մոտ յոթանասուն մարդ, ոչ բոլորը միասին, այլ մեկ առ մեկ, յուրաքանչյուրը պաշտպանվելով ինչպես կարող էր: (9) Իսկ Ագասիաս ստյուժիալացին և Արիստոնիմոս մերթիդիացին, որոնք նույնպես վերջապահների վաշտապետներից էին, և ուրիշները ևս դիրքավորվեցին ծառերից հեռու. հանգի ծառերի տակ կարող էր ապահով կանգնել ոչ ավելի քան մեկ վաշտ: (10) Այստեղ էլ Կալլիմախոս մի խորամանկություն արեց. նա առաջ էր վազում երկու կամ երեք ֆալ այն ծառից, որի տակ ապաստանել էր, իսկ երբ ֆառեր էին քափում, նորից բա-

րենհաջող ետ էր վերադառնում: Եվ նրա ամեն մի արտելին ցած էր քափվում ավելի քան տասը սայլ ֆառ: (11) Ագասիասը տեսնելով, թե ինչ էր անում Կալլիմախոսը ամբողջ գործի աչքերի առաջ և վախենալով, որ շիճի թե առաջինը նա ներխուժի ամրությունից ներս, առանց գոյուցանելու իր մոտ եղող Արիստոնիմոսին, ոչ իսկ եվրիոփոս լուսիացուն, որոնք իր ընկերներն էին, ոչ էլ որևէ մեկ ուրիշին, ինքը վազեց ու բոլորից առաջ անցավ: (12) Կալլիմախոսը տեսնելով նրան իր մոտով առաջ վազելիս, բռնեց նրա վահանը: Այնժամ նրանից առաջ անցավ Արիստոնիմոս մերթիդիացին և նրանից հետո եվրիոփոս լուսիացին. հանգի նրանք բոլորը մրցում էին իրար հետ և աշխատում ֆաշուրյամբ գերազանցել մեկը մյուսին. այսպիսով նրանք գրավեցին ամրությունը: Քանզի մի անգամ որ ներխուժեցին այնտեղ, այլևս ոչ մի ֆառ վերևից չգլորվեց: (13) Այնժամ ահավոր մի տեսարան բացվեց: Կանայք իրենց երեսներին ցած էին նետում և նրանց ետևից իրենք ևս ցած գլորվում. նույնպես էին վարվում նաև տղամարդիկ: Այստեղ էլ վաշտապետ էնեյաս ստյուժիալացին տեսնելով մեկին, որը լավ զգեստներ էր հագած և վազում էր հավանաբար իրեն ցած նետելու, բռնեց նրան, որ թույլ չտա: (14) Բայց մարդը իր հետ ֆաշեց նրան և երկուսը միասին գահավիժելով ծայրերից, մահացան: Այստեղ գերի վերցվեց շատ ֆիշ մարդ, բայց մեծ թվով եզներ, էշեր և ոչխարներ (վերցվեցին):

(15) Այստեղից նրանք խալյուրների երկրի միջով գնացին յոթ կայան՝ հիսուն փարսախս: Մրանք, առավել քան բոլորը, ում երկրից անցել էին հելլենները, ֆաշ էին և ձեռնամարտի էին բռնվում: Նրանք մինչև փորը հասնող վաշտ գրահներ ունեին. և զրահի եզրարևիկների փոխարեն՝ խիտ հյուսված ֆալեր: (16) Նրանք նաև ունեին սոնապահներ և սաղավարտներ և գտուց կախած դաշույն, լակեդեմոնական կեռ դանակի<sup>35</sup> մեծությամբ, որով սպանում էին ում որ հաղթել կարողանային, և կտրելով գլուխները, վերցնում էին ու գնում. և նրանք երգում էին ու պարում. երբ թշնամու տեսադաշտում էին գտնվում: Ունեին նաև մեկ ծայրով նիզակ՝ հինգ<sup>36</sup> կանգուն երկարությամբ: (17) Մրանք մնում էին ֆաղաֆալայերում<sup>37</sup>. և երբ հելլենները անցնում էին այդ տեղերով, նրանք հետևում էին անընդհատ կովերով: Բնակվում էին ամբողջ վաշտերում, որտեղ հավաքել էին նաև իրենց մթերքները. այնպես, որ հելլենները այստեղից ոչինչ չկարողացան վերցնել, այլ սնվում էին այն անասուններով, որ վերցրել էին տառիսներից: (18) Նրանց մոտից հելլենները հասան Հարպասոս գետը, որի լայնքը չորս պլեթրոն էր: Այստեղից առաջ ընթացան սկյուրեներ<sup>38</sup> երկրի միջով չորս կայան՝ ֆան փարսախս՝ հարթա-

վայր տեղերով դեպի գյուղերը, որոնցում մնացին երեք օր և պարենավորվեցին:

(19) Այստեղից նրանք անցան շարս կայան՝ ֆան փարսախս, դեպի մեծ, բարգավաճ և մարդաշատ մի ֆաղափ, որը կոչվում էր Գյումնիաս<sup>39</sup>: Այս ֆաղափից երկրի իշխողը ուղեցույց ուղարկեց հելլեններին, որպեսզի սա առաջնորդի նրանց իրենց թշնամի երկրի միջով<sup>40</sup>: (20) Գալով (հելլենների մոտ), սա առաջ, որ հինգ օրվա ընթացքում կհասցնի այնպիսի մի վայր, որտեղից կաեսնեն ծովը<sup>41</sup>. հակառակ դեպքում, հավաստեց նա, թող իրեն սպանեն: Նա առաջնորդեց նրանց ու երբ մտավ թշնամու երկիրը, հրահրում էր նրանց այրել և ավերել երկիրը. այսպիսով պարզ դարձավ, որ նա այդ նպատակով է եկել և ոչ թե հելլենների նկատմամբ բարյացակամ լինելու: (21) Եվ հինգերորդ օրը նրանք հասան լեռը. իսկ լեռան անունն էր Թեֆես<sup>42</sup>: Երբ առաջապահները բարձրացան լեռը, մեծ աղմուկ առաջացավ: (22) Լսելով ճիչերը, Քսենոփոնը և վերջապահները կարծեցին, թե առաջից ուրիշ թշնամիներ են հարձակվել, մինչդեռ իրենց հետևում էին այրվող երկրի մարդիկ, որոնցից ոմանց հելլենները դարանակալելով սպանեցին, իսկ մի ֆանիսին գերի վերցրին, միաժամանակ ձեռք բերեցին շուրջ ֆանս հյուսկեն վահան, որոնք ծածկրված էին եզան հում կաշվով: (23) Մինչ այդ, աղմուկը հետզհետե ավելանում էր և ավելի մոտիկից էր գալիս, ու ֆանի որ անդադար մտեցողները արագ վազում էին դեպի աղաղակողները, ապա աղմուկը առավել ևս սաստկանում էր, աղաղակողների շատանալու հետ միասին: Ուստի Քսենոփոնի համար պարզ դարձավ, որ շատ կարևոր բան է կատարվել, և հեծնելով իր ձիին ու կյուկիոսին և ուրիշ հեծյալներին վերցնելով, նա շտապեց օգնության: Եվ շուտով նրանք լսեցին «ծովը, ծովը» զոռացող զինվորներին, որոնք մյուսներին դեպի իրենց էին կանչում: Այնտեղ վազեցին բոլորը, նաև վերջապահները, իրենց հետ կշելով նաև գումակն ու ձիերին: (25) Երբ բոլորը հասան գագաթ, այնժամ արտասվելով սկսեցին իրար գրկել. ինչպես նաև զորավարներին և վաշտապետներին: Եվ իսկույն, չգիտես թե ում թելադրանքով, զինվորները ֆաբեր կրելով մեծ ֆաբարուր ստեղծեցին: (26) Դրա վրա դրին եզան բազմաթիվ մորթիներ և գավազաններ ու թշնամուց վերցված հյուսկեն վահաններ, իսկ ուղեցույցը ինքը կտորատում էր այդ վահանները և պատվիրում էր մյուսներին ևս նույնպես անելու: (27) Այս բոլորից հետո հելլենները ուղեցույցին ետ ուղարկեցին, ընդհանուրի ունեցվածքից պարզելով նրան ձի և արծաթե բաժակ և պարսկական զգեստ ու տասը դահեկան. բայց նա առավելապես խնդրում էր մատանիներ. և այդպիսիները նա շատ ստացավ զինվորներից: Եվ ցույց տալով նրանց մի գյուղ, որտեղ կարող էին բանակել, ու

բացատրելով դեպի մակրոններ<sup>43</sup> տանող ճանապարհը, երբ արդեն երեկոն իջավ, նա հեռացավ:

VIII. Այստեղից հելլենները մակրոնների (երկրի) միջով առաջ գնացին երեք կայան՝ տասը փարսախս: Առաջին իսկ օրը նրանք հասան գետը, որը մակրոնների երկիրը բաժանում էր սկյութների երկրից: (2) Նրանց աջ կողմում բարձրանում էր դժվարամատուց մի տեղանք, իսկ ձախ կողմում կար մի ուրիշ գետ, որի մեջ թափվում էր բաժանող սահմանային գետը և որը հարկավոր էր անցնել: Տեղանքը ծածկված էր ծառերով, ճիշտ է՝ ոչ հաստ, բայց խիտ: Հելլենները երբ մոտեցան, սկսեցին ծառերը կտրատել, շտապելով հնարավորին չափ շուտ դուրս գալ այդ վայրից: (3) Իսկ մակրոնները, որոնք ունեին հյուսկեն վահաններ և նիզակներ և մազից պատրաստած խիտոններ, դասավորվել էին գետանցի մյուս կողմում, իրար ֆաշալերում էին ու ֆաբեր նետում գետը. բայց ֆաբերը չէին հասնում մինչև հելլենները և ոչ ոքի չէին վիրավորում:

(4) Այնժամ Քսենոփոնին մտեցավ պելասատներից մեկը, որն, ինչպես ինքը պատմեց, Աթենիում ստրուկ էր եղել. նա առաջ, թե հասկանում է այդ մարդկանց խոսքը. «Ինձ թվում է,—շարունակեց նա,—որ սա իմ հայրենիքն է. և եթե որևէ արգելի չկա, ապա ես ուզում եմ խոսել նրանց հետ»: (5) «Ոչ մի արգելի չկա,—ասաց Քսենոփոնը,—ուստի և խոսիր նրանց հետ և իմացիր նախ, թե ո՞վքեր են»: Նրանք պատասխանեցին, թե «մակրոններ»: «Այժմ հարցրու,—ասաց Քսենոփոնը,—ինչո՞ւ են կանգնել մեր դիմաց և իրենց պահում են թշնամու նման»: (6) Նրանք պատասխանեցին. «Որովհետև դուք մեր երկրի վրա եք գալիս»: Զորավարները հրամայեցին ասել, թե «չարիք պատճառելու համար չենք եկել, այլ արհայի դեմ կովելուց հետո վերադառնում ենք Հելլադա և ցանկանում ենք ծով հասնել»: (7) Մակրոնները հարցրին, թե իրենց հավատարմության երաշխիք կտան արդյոք: Զորավարները պատասխանեցին, թե կուզենային այդպիսի և՛ տալ, և՛ ստանալ: Այնժամ մակրոնները հելլեններին բարբառոսական նիզակ տվեցին, իսկ հելլենները նրանց՝ հելլենական. ֆանգի մակրոններն ասում էին, թե երաշխիքը դա է. և, բայց այդ, երկու կողմերը աստվածներին վկա կոչեցին:

(8) Հավատարմության երաշխիք տրվելուց հետո մակրոններն իսկույն հելլենների հետ սկսեցին ծառերը կտրուկ և նաևապարհ բացել, ասես իրենք ևս մտադիր էին անցնել հելլենների հետ, (պարենավորման) շուկա տրամադրեցին իրենց հնարավորության համեմատ, և երեք օրում հելլեններին հասցրին մինչև կոլխերի սահմանը: (9) Այստեղ մեծ լեռ կար, որի վրա շաբերով դասավորվել էին կոլխերը: Սկզբում հելլենները նրանց դիմաց շարվեցին ֆա-

լանգսի ձևով, որպեսզի այդ դասավորությամբ բարձրանան լեռը. բայց հետո գորավարները որոշեցին հավաքվել ու խորհրդակցել, քե ինչպես է հնարավոր ավելի լավ պատերազմել:

(10) Քսենոփոնն ասաց, որ պետք է, իր կարծիքով, արձակել ֆալանգսի դասավորությունը և վաշտերը ուղիղ դասավորել, որովհետև ֆալանգսը խկույն կհայտնվի. Բանգի լեռան մի մասում վերելքը դժվար կլինի, մյուս մասում՝ հեշտ. և այս բանը հուսալիություն կառաջացնի, Եթե զորքը նկատի իր ֆալանգսի դասավորության հայտնությունը: (11) Այնուհետև, — շարունակեց նա, — եթե մենք առաջ շարժվենք խիտ շարժվելով, թշնամիները կարող են մեզանցից ավելի լինել և այդ ավելին նրանք կօգտագործեն ինչպես ցանկանան. իսկ եթե շարժվենք նուր շարժվելով, ապա զարմանալի չի լինի, եթե մեր ֆալանգսը մասնատվի թշնամու խիտ զորքերի հարվածների ու նետերի տարափի տակ: Եվ եթե որևէ կետում նման բան պատահի, ապա ամբողջ ֆալանգսի վրա վատ կանդրադառնա: (12) Բայց, իմ կարծիքով, պետք է վաշտերը կանգնեցնենք ուղիղ դասավորությամբ և նրանց միջև որոշ տարածություն բողնելով, վաշտերը այնքան ծավալենք, որ դրանցից վերջինները թշնամու թևերից էլ այն կողմը հասնեն: Այդպիսով մենք ավելի ձգված կլինենք, Բան թշնամիների դասավորությունը և վաշտերը ուղիղ տանելու դեպքում, մեզանից լավագույնները բոլորից առաջ կգնան հարձակման, և յուրաքանչյուր վաշտապետ իր վաշտը կարող է տանել առավել հարմար նախապահով: (13) Բացի այդ, թշնամու համար հեշտ չի լինի վաշտերի միջև ներխուժել, Բանգի այս ու այն կողմից հարձակման կենթարկվի, և նրա համար նույնպես դժվար կլինի նեղվել գնացող վաշտերի դասավորությունը: Իսկ եթե որևէ վաշտ դժվար կացության մատնվի, հարևան վաշտը կօգնի նրան: Եվ եթե վաշտերից գեթ մեկը կարողանա գազաթը բարձրանալ, ապա թշնամիներից և ոչ մեկը այնտեղ չի մնա»:

(14) Այսպես որոշեցին և վաշտերը ուղիղ դասավորեցին: Իսկ Քսենոփոնը աչքից ձախն անցնելով<sup>44</sup>, ասաց զինվորներին. «Ո՛վ այրեր. այս մարտիկ, որոնց դուր տեսնում եմ, միակ արգելքն են մեր առաջ, որի պատճառով էլ մենք դեռևս չենք հասել այնտեղ, որտեղ շտապում ենք. և սրանց, եթե կարողանանք, պետք է հուժ-հուժ խժոնենք»<sup>45</sup>:

(15) Երբ ամեն մեկը գնաց իր տեղը և վաշտերը կանգնեցին ուղիղ դասավորությամբ՝ ստացվեց հուպիտների գրեթե ութսուն վաշտ, իսկ յուրաքանչյուր վաշտում՝ չորս հարյուր մարդ: Իսկ պելաստներին և աղեղնավորներին բաժանեցին երեք մասի. մի մասը դասավորեցին ձախ քեից և մյուս մասը՝ աչքից այն կողմ, իսկ երրորդ մասը՝ կենտրոնում. այդ զորամասերից յու-

րախանջյուրում կար չորս վեց հարյուր մարդ<sup>46</sup>: (16) Այնուհետև գորավարները հրաման արձակեցին աղաթելու: Աղաթելուց և պեան երգելուց հետո առաջ շարժվեցին: Եվ խեղճիսոփոսն ու Քսենոփոնը և նրանց հետ եղող պելաստները առաջ էին շարժվում թշնամու դասավորությունից այն կողմ գտնվելով<sup>47</sup>: (17) Թշնամիները տեսնելով նրանց, վազեցին նրանց դեմ ու դրանով իսկ անջատվեցին, մի մասը դեպի աջ, մյուսը՝ դեպի ձախ. ու նրանց դասավորության կենտրոնում մեծ դատարկություն առաջացավ: (18) Այնժամ արկաղիական գորամասի պելաստները, որոնց հրամանատարն էր էսփինես ալիանանցին, կարծելով, որ նրանք փախչում են, աղաղակելով առաջ վազեցին: Եվ նրանք առաջինը բարձրացան լեռը: Նրանց հետևեցին նաև արկաղիացի հուպիտները, որոնց գլխավորում էր Կլեանոր օրֆոմենացին: (19) Իսկ թշնամիները, հենց որ (հեղինակները) առաջ վազեցին, այլևս չդիմադրեցին, այլ փախան ով որտեղ կարող էր:

Իսկ հեղինակները, բարձրանալով լեռը, բանակեցին բազմաթիվ գյուղերում, որտեղ մթերքի առատություն կար: (20) Այստեղ, բնդհանրապես, զարմանալի ոչինչ չկար. բայց կային մեղվի բազմաթիվ փեթակներ և այն զինվորները, որոնք կերան այդ մեղրից, բոլորը խելակորույս դարձան և փսխում էին և լուծ ընկնում և ոչ մեկը նրանցից չէր կարողանում ուղիղ կանգնել ոտների վրա. ինչ ուսողները նմանվում էին ուժեղ հարբածների, իսկ շատ ուսողները՝ խելացնորների, մինչև իսկ մեռյալների<sup>48</sup>: Եվ այնքան շատ մարդ էր պառկած. ասես զորքը պարտություն էր կրել. և բոլորը այդ բանից մեծապես վհատվել էին: Սակայն հաջորդ օրը ոչ ոք չմեռավ և գրեթե միևնույն ժամին սկսեցին ուշքի գալ. և երրորդ քե չորրորդ օրը նրանք ոտքի կանգնեցին, ինչպես բուժավորումից հետո:

(22) Այստեղից առաջ գնացին Երկու կայան՝ յոթը փարսախ, և ծով հասան Տրապեզունտի<sup>49</sup> մոտ, որը բազմամարդ հեղինական Բաղաֆ էր Եվֆսինյան Պոնտոսում. այն Սինոպի գաղութն էր կոլխերի երկրում: Այստեղից հեղինակները շուրջ երեսուն օր մնացին կոլխերի գյուղերում. և այստեղից արշավելով ավարի էին ենթարկում կոլխիդան: (23) Զորքին շուրջ տրամադրեցին Տրապեզունտի բնակիչները, որոնք լավ ընդունեցին հեղինակներին և որպես հյուրասիրության նշան, պարգևեցին եզներ, զարի և գինի: (24) Նրանք նույնպես հեղինակներին գործակցեցին դաշինք կնքելու մեջ հարևան կոլխերի հետ, որոնք առավելապես ապրում էին դաշտավայրում, և նրանց կողմից ևս եզներ ստացվեցին իբրև հյուրասիրության նշան:

(25) Այս բոլորից հետո նրանք խոստացված զոհաբերության պատրաստություն էին տեսնում: Նրանք բավական թվով եզներ էին ստացել, որպեսզի

դրանք զոհեին Ձևսին՝ փրկուրյան համար, Հերակլեսին՝ իրենց առաջնորդելու համար, և մյուս աստվածներին, իրենց կատարած մաղթանքի համաձայն: Նրանք կազմակերպեցին նաև մարզական մրցումներ այն լեռան վրա, որտեղ բանակել էին: Որպես վազքի կազմակերպիչ և մյուս մրցումների ղեկավար, նրանք ընտրեցին Դրակոնտիոս սպարտացուն, որը դեռևս տղա ժամանակ փախել էր տնից, ակամայից դաշույնի հարվածով մեկ ուրիշ տղայի սպանած լինելու համար: (26) Զոհաբերությունն ավարտելուց հետո մորթիները հանձնեցին Դրակոնտիոսին ու պատվիրեցին նրան տանել իրենց այնտեղ, ուր պետք է վազքի մրցումը կայանար<sup>50</sup>: Նա ցույց տալով այն բլուրը, որտեղ այնժամ կանգնել էին, ասաց. «Այս բլուրը հարմարագույն վայրն է, որտեղից կարող ես ուզածդ ուղղությամբ վազել»: «Թայց ինչպե՞ս կարելի է,— հարցրին նրան,— մրցել այսպիսի անհարթ ու մացառոտ գետնի վրա»: Եվ նա պատասխանեց. «Վայր ընկնողի համար տանջանքն ավելի մեծ կլինի»: (27) Տղաների, առավելապես գերիների երեխաների, մրցումը մեկ ասպարեզ տարածությամբ վազքն էր. ավելի քան վաքսուն կրետացի մրցեցին երկար տարածություն վազելով. տեղի ունեցան նաև ըմբշամարտ, բռնցքամարտ և պանկրատիոն<sup>51</sup>. ու տեսարանը շատ գեղեցիկ էր: Ու քանի որ մրցումներին շատերը մասնակցեցին, իսկ դիտողները նրանց ընկերներն էին, հաղթելու մեծ եռանդ առաջացավ: (28) Տեղի ունեցավ նաև ձիարշավ, և հեծյալները պետք է իրենց ձիերը բռնեին գաղտնի և զանազան ձևերով դեպի ծով և ետ վերադառնալիս դեպի զոհասեղան<sup>52</sup>: Եվ վայրէջքի ժամանակ շատերը գործում էին ցած, իսկ վերելքի ժամանակ, խիստ գաղտնի լինելու պատճառով, ձիերը հագիվ կարողանում էին առաջ քայլել. այնպես, որ շատ աղաղակ էր բարձրանում և ծիծաղ ու փառալերով բացականչություններ:



#### Գ Ի Բ Ք Հ Ի Ն Գ Ե Ը ՈՐ Գ

1. [Այն ամենը, ինչ հելլենները կատարեցին Կյուրոսի հետ արշավելիս և դեպի Եվֆրատյան Պոնտոսի ծովափը նահանջելու նահապարհին, և թե ինչպես նրանք հասան հելլենական Տրապեզունտ քաղաքը, և թե ինչպես, համաձայն օրենքի, նրանք իրենց փրկուրյան համար զոհեր մատուցեցին անմիջապես. երբ հասան բարեկամական երկիր, պատմվել է նախորդ խոսքում]:


(2) Այնուհետև նրանք ժողովվելով, խորհրդակցեցին հետագա ուղևորության մասին: Առաջինը հանդես եկավ Լեոն քուրիացին և այսպես խոսեց. «Ես, ո՞վ ռազմիկներ, արդեն հոգնել եմ պատրաստվելուց և սպառազինվելուց, և քայլելուց. և վազելուց, և զենքեր կրելուց, և շարժում կանգնելուց, և պահակություն անելուց, և կովելուց. այժմ ուզում եմ վերջ տալ այդ բոլոր տանջանքներին. և քանի որ արդեն ծով ենք հասել, ցանկանում եմ ուղևորության մնացած մասը նավարկել և Ողիսևսի նման մեջքի վրա պառկած, հասնել Հելլադա»<sup>1</sup>: (3) Այս խոսքերը լսելով, գինվորները աղաղակում էին, թե նա հիշտ է խոսում: Այնժամ Խեյրիստոսը հանդես գալով խոսեց այսպես. (4) «Ո՞վ ռազմիկներ. իմ բարեկամ Անաֆիբիոսը այժմ, բարեբախտաբար նավարկում է<sup>2</sup>: Ուստի և, եթե դուք ինձ ուղարկեք նրա մոտ, ես ենթադրում եմ, որ կվերադառնամ ու ձեզ համար տրեբաններ և բեռնատար նավեր կբերեմ: Եթե դուք իրոք ցանկանում եք նավարկել, ապա սպասեցե՛ք մինչև իմ գալը. ես շուտով կվերադառնամ»: Այս լսելով, գինվորները ուրախացան և որոշեցին, որ Խեյրիստոսը պետք է, ինչքան հնարավոր է, շուտափույթ նավարկի:

(5) Նրանից հետո հանդես եկավ Քսենոփոնը և խոսեց այսպես. «Ուրեմն, խեյրխոփոսը մեկնում է նավեր բերելու համար, իսկ մենք նրան կսպասենք: Այժմ կասեմ, թե ինչ պետք է անենք մենք այստեղ նրան սպասելու ընթացքում: (6) Նախ անհրաժեշտ է պարեն ձեռք բերել թշնամի Երկրից, քանի որ ոչ բավարար շուկա կա, և ոչ իսկ, բացի Բելոսիցս, գնելու կարողություն ունենք: Իսկ Երկիրը թշնամական է. այդ իսկ պատճառով մեզանից շատերը կարող են կորչել, եթե անզգուշորեն և առանց պաշտպանվելու գնանք մթերք հայրաթիվու: (7) Ուստի ես կարծում եմ, որ մթերքը պետք է հարենք հատուկ խմբեր կազմած և անշատ շքափառենք. դրանով դուք վտանգից գերծ կլինեք: Այդ մասին կհոգանք մենք՝ զորավարներս»: Այդպես էլ որոշեցին:

(8) «Այժմ լսե՛ք շարունակությունը: Ձեզանից ոմանք, անշուշտ, կգնան ավար ձեռք բերելու: Իմ կարծիքով, բոլորից լավը կլինի այն, որ գնալ ցանկացողը այդ մասին մեզ հայտնի, ինչպես նաև ասի, թե ուր է գնում, որպեսզի մենք իմանանք, թե ինչքան մարդ է գնում և ինչքան մնում, և եթե կարիք լինի, օժանդակենք նրանց նախապատրաստությունը. իսկ եթե անհրաժեշտություն զգացվի որևէ մեկին օգնություն հասցնելու, ապա իմանանք, թե այն որտեղ ուղարկենք: Եվ եթե անփորձներից որևէ մեկը այդպիսի բան է ձեռնարկում, ապա մենք կաշխատենք իմանալ նրա հակառակորդների ուժը և ըստ այնմ խորհուրդներ կտանք նրան»: Այս նույնպես ընդունվեց:

(9) «Իմացե՛ք նաև հետևյալը, — շարունակեց նա: — Մեր թշնամիները հնարավորություն ունեն մեզ վրա հարձակվելու. և նրանք իրավացի կերպով մեր նկատմամբ դավեր կնյութեն, քանզի մենք նրանց բարիքներն ենք հափշտակում: Եվ նրանք հետամուտ են լինում մեզ: Ուստի ես կարծում եմ, որ մեր նամբարի շուրջը պետք է պահակակետեր դնել. և եթե մենք հերքով պահպանություն անենք և զգույշ լինենք, ապա թշնամին պակաս չափով կարող է մեզ հետամտել:

(10) Մի ուրիշ բան ևս պետք է նկատի ունենա՛ք: Եթե մենք հաստատ իմանայինք, որ խեյրխոփոսը կվերադառնա իր հետ բավականաչափ նավեր բերելով, ապա բոլորովին կարիք չէր զգացվի իմ այս խոսքերին: Բայց քանի որ այդ անորոշ է, ապա մենք ևս այստեղ պետք է փորձենք նավեր ձեռք բերել: Եթե նա բերի, ապա այստեղ եղածների հետ միասին մենք կնավարկենք ավելի մեծ թվով նավեր ունենալով մեր տրամադրության տակ. իսկ եթե չբերի, ապա մենք կօգտվենք այստեղ եղած նավերից: (11) Ես հաճախ այստեղով անցնող նավեր եմ տեսնում: Եթե մենք տրապեզունացիներից մեծ նավեր խնդրենք, ապա կարող ենք անցնող նավերը գերի վերցնել և հանելով դեկերը, այդ նավերը պահակների հսկողությանը հանձնել, մինչև որ մենք բավա-



Արքայական որսի տեսարաններ (աքեմենյան շրջանի կնիքներ)



կանաչափ նավեր կունենանք և, այսպիսով, մեր փոխադրման ժամանակ դրժվարություն չենք կրի»: Այդ ևս որոշեցին:

(12) «Մտածե՛ք նաև, — շարունակեց նա, — պատշան չե՛ք արդյոք, որ մենք ընդհանուր միջոցներից կերակրենք գերվածներին, քանի որ նրանք մեր պատճառով պետք է մնան այստեղ, ինչպես նաև համաձայնվենք փոխադրված սահմանել, որպեսզի մեզ օգտակար հանդիսանալով իրենք ևս օգտվեն»: Այդ ևս որոշեցին:

(13) «Թայց ինձ քվում է, — շարունակեց նա, — եթե նույնիսկ այդ բանը մեզ չհաջողվի և մենք չկարողանանք բավարար չափով նավեր ձեռք բերել, այդ դեպքում մենք կդիմենք ծովափնյա ֆաղափներին, որպեսզի նրանք բարեկարգեն նանապարհները, որոնք, ինչպես լսել ենք, դժվարանցանելի են: Նրանք կհամաձայնվեն և՛ վախից, և՛ մեզանից ազատվելու ցանկությունից»:

(14) Այնժամ սկսեցին աղմկել, թե չպետք է նանապարհով ընթանալ: Իսկ Քսենոփոնը, նկատելով նրանց անմտությունը, այդ մասին ոչ մի որոշում չառաջարկեց ֆվեարկման. բայց ֆաղափներին համոզեց կամովին բարեկարգել նանապարհները, ասելով, որ հելլեններից ավելի շուտ կազատվեն, եթե նանապարհները բարեկարգ լինեն: (15) Նրանք տրապեզունտցիներից ստացան մի պենտեկոնտորոն<sup>3</sup> և այն հանձնեցին պերիոլոս<sup>4</sup> Ռեսիպպոս լակոնացուն: Սակայն նա հոգ չտարավ նավեր գերեվարելու մասին, այլ փախավ և իր նավի հետ հեռացավ Պոնտոսից: Հետագայում նա արդարացի պատժվեց. քանզի Սեթեսի<sup>5</sup> մոտ ինչ-որ դավեր նյութելիս սպանվեց Նիկանդրոս լակոնացու կողմից: (16) Նրանք ստացան նաև մի տրիակոնտորոն<sup>6</sup>, որի հրամանատար նշանակվեց Պոլյուկրատես աթենացին, որը և գերված բոլոր նավերը նամբար էր առաջնորդում: Եթե դրանք որևէ բեռ էին տանում, ապա բեռնաբափում էին և բեռների մոտ պահակ նշանակում, որպեսզի դրանք ապահով լինեն, իսկ նավերը օգտագործում էին որպես փոխադրամիջոց: (17) Այս դեպքերի ընթացքում հելլենները գնում էին ավարի, ոմանք այն ձեռք էին բերում, ոմանք՝ ոչ: Իսկ կլեայնետոսը իր վաշտը և մեկ ուրիշ վաշտ ևս տանելով դժվարամատույց մի ամբողջան դեմ, և՛ ինքը սպանվեց, և՛ շատերը իր հետ եղողներից:

II. Երբ արդեն հնարավոր չէր պարեն ձեռք բերելուց հետո նույն օրը վերադառնալ բանակատեղի<sup>7</sup>, Քսենոփոնը տրապեզունտցիներից ուղեցույցներ վերցնելով իր հետ, գործի կեսը տառավ դրիլների երկիրը<sup>8</sup>, իսկ մյուս կեսը քողեց տեղում, բանակատեղին պահպանելու համար. քանզի կոլխերը, վտարված լինելով իրենց բնակարաններից, հավաքվել էին մեծ բազմությամբ և դիրավորվել շրշակա բարձունքների վրա: (2) Սակայն տրա-

պեզունտցիները նրանց չէին առաջնորդում այնտեղ, որտեղից հեշտ էր պարեն ձեռք բերել. քանզի այնտեղ բնակվողների հետ բարեկամներ էին. իսկ հոժարությամբ էին տանում դրիլների դեմ, որոնք իրենց շատ շարիք էին պատճառում և բնակվում էին լեռնային ու անմատույց վայրերում և Պոնտոսում ապրող բոլոր ցեղերից ամենաազմունակներն էին:

(3) Երբ հելլենները հասան բարձրավայրերը, դրիլները հեկիզեցին այն ամրությունները, որ կարծում էին, թե հեշտությամբ կգրավվեն, և իրենք հեռացան: Ուստի և այստեղ վերցնելու ջշինչ շմնաց, բացի խոզից ու եզրից և կամ մի այլ անասունից, որը կարողացել էր ճողոպրել հրդեհից: Բայց կար ամրացված մի վայր, որը նրանց ֆաղաֆամայրն էր. և բոլորը այնտեղ ապաստանեցին. նրա շուրջը շատ խորը հեղեղատ կար և ամրության մատույցները շատ դժվարին էին: (4) Արդ՝ պելոսասները, որոնք հոպլիտներից հինգ թե վեց ասպարեզ առաջ էին վազել, անցնելով հեղեղատը և տեսնելով շատ ոչխարներ և այլ հարստություն, նետվեցին դեպի ամրությունը: Նրանց հետևեցին նաև շատ նիզակավորներ, որոնք պարեն էին փնտրում. այնպես, որ հեղեղատն անցնողների թիվը դարձավ ավելի քան հազար մարդ<sup>9</sup>: (5) Ու երբ չկարողացան ամրությունը մարտով վերցնել, ֆանգի դրա շուրջը լայն խրամատ կար հողաթմբով, իսկ հողաթմբի վրա ցցապատնեջ՝ փայտե խիտ աշտարակներով, ապա նրանք փորձեցին նահանջել, իսկ թշնամին սկսեց հարձակվել: (6) Եվ ֆանի որ հնարավոր չէր փախչել, ֆանգի ամրությունից դեպի հեղեղատը կարելի էր իջնել միայն մեկ առ մեկ, ուստի և լուր ուղարկեցին Քսենոփոնին. նա գլխավորում էր հոպլիտներին: (7) Բանագնացը գալով ասաց. «Ամրությունը լեցուն է ամեն տեսակի հարստությամբ, բայց ոչ կարողանում ենք գրավել այն, ֆանգի շատ է ամրացված, ոչ իսկ կարողանում ենք հեշտությամբ նահանջել. ֆանգի թշնամին արտագրոհ կատարեց և վերադարձի նանապարհը շատ է դժվար»:

(8) Այս լսելով, Քսենոփոնը զորքը բերեց հեղեղատի մոտ և հրամայեց հոպլիտներին սպառազինված սպասել. իսկ ինքը վաշտապետների հետ անցավ հեղեղատը և մտածում էր՝ ո՞րն է ավելի լավ. ե՞տ տանել հեղեղատն անցած զինվորներին, թե՞ հոպլիտներին ևս անցկացնել՝ ամրությունը գրավելու հույսով: (9) Նա նկատեց, որ նահանջել առանց մեծ կորուստների չի լինի. իսկ վաշտապետները գտնում էին, որ հնարավոր է ամրությունը գրավել և Քսենոփոնն էլ համաձայնվեց նրանց հետ, հավատալով զոհ մատուցելու ժամանակ նկատված բարեհաջող նշաններին. ֆանգի գուլակները հայտնել էին, որ հակառակորդ տեղի կունենա, որի էլքը հաջող կլինի: (10) Եվ նա վաշտապետներին ուղարկեց, որպեսզի հոպլիտներին այս կողմ անցկաց-



Արծաթյա պոչակ (ոխտոն)՝ Երզնկայից (V դ. մ. թ. ա.)

նեն. իսկ ինքը մնաց տեղում և բոլոր պելտաստներին ետ փաշելով, հրամայեց նրանց ոչ մի նետում չկատարել: (11) Երբ հոպլիտները եկան, նա հրամայեց յուրաքանչյուր վաշտապետին իր վաշտը դասավորել այնպես, ինչպես ինքն է ավելի լավ համարում կովելու համար: Այն վաշտապետները, որոնք միշտ փաշուքամբ մրցում էին իրար հետ, դասավորվեցին իրար մոտիկ: (12) Նրանք այդպես արեցին. իսկ Քսենոփոնը հրամայեց բոլոր պելտաստներին մարտի գնալ նիզակի փոխը դաստակին անցկացրած, որպեսզի ազդանշան տրվելուն պես նիզակը նետեն, իսկ աղեղնավորներին՝ լարը հագցնել, որպեսզի ազդանշան տրվելուն պես նետերն արձակեն, իսկ մերկերին ևս հրամայեց իրենց պարկերը փառերով լցնել. և բանիմացներին ուղարկեց հետևելու հրամանի կատարմանը:

(13) Երբ ամեն ինչ պատրաստ էր, և՛ վաշտապետները, և՛ ենթավաշտապետները, և՛ նրանք, ովքեր իրենց ավելի ցածր չէին համարում վաշտապետներից, բոլորը միասին կանգնեցին շարքի, այնպես, որ իրար տեսնում էին: Նրանց դասավորությունը, համաձայն տեղանքի, կիսալուսնի ձև ստացավ: (14) Այնժամ նրանք պեան երգեցին, շեփորը հնչեց և միաժամանակ էնիպիոսի<sup>10</sup> պատվին ռազմական աղաղակ բարձրացրին, իսկ հոպլիտները առաջ վազեցին. միաժամանակ նետվեցին նիզակները, արձակվեցին նետերն ու պարսառիկները, իսկ շատերը ձեռքերով էին փակել շարտում. կային նաև կրակ տանողներ: (15) Նետումների տարափից թշնամիները լքում էին իրենց ցցապատները և աշտարակները. ուստի Ագասիաս ստյուժիալացին մի կողմ թողնելով իր զենքը, սոսկ խիտոնը հագին, բարձրացավ հողաթմբի վրա և իր հետ վերև փաշեց մեկ ուրիշին ևս, այս ուրիշն էլ բարձրացավ և, թվում էր, ամբողջունը գրավվեց:

(16) Եվ պելտաստներն ու թեթևագեները ներխուժելով, յուրաքանչյուրը հափշտակում էր ինչ կարող էր: Իսկ Քսենոփոնը դարբասների առաջ կանգնելով, ինչքան կարող էր հոպլիտներին արգելում էր մտնել. ֆանգի մի ֆանի բարձունքի վրա ուրիշ թշնամիներ էին երևում: (17) Քիչ ժամանակ անց ներսից աղաղակ լսվեց, և մարդիկ սկսեցին փախչել. ոմանք իրենց հափշտակած իրերով, իսկ շուտով նաև մի վիրավոր երևաց. և դարբասների մոտ մեծ խնդում առաջացավ: Պատասխանելով հարցերին, փախչողները պատմում էին, թե ներքին մասում միջնաբերդ կա, ու թշնամիները մեծաթիվ են. սրանք արտելք կատարելով հարվածեցին ներսում եղող զինվորներին: (18) Այնժամ Քսենոփոնը փառոզ Տոլմիդեսին հրամայեց հայտարարել, որ ով ցանկանում է ավար ձեռք բերել, թող մտնի ներս: Ու շատերը ներս խուժեցին և գերազանցեցին փախչողներին. այնպես, որ թշնամիներին դարձյալ ֆշեցին միջև-



բերդ: (19) Այդպիսով, միջնաբերդից դուրս պատահած ամեն ինչ հեղինակները հափշտակեցին ու տարան. և հոպլիտները զենքերը պատրաստ կանգնեցին, ոմանք պատնեշի վրա, ուրիշներ՝ դեպի միջնաբերդը տանող ճանապարհի վրա: (20) Իսկ Քսենոփոնն ու վաշտապետները մտածում էին, թե ինչպե՞ս կարող են միջնաբերդը ևս գրավել. Բանգի այդպիսով իրենց փրկությունը ապահովված կլինե՞ր. հակառակ դեպքում նահանջելը իրենց համար դժվարին կլինե՞ր: Ուշադիր ֆենեկուց հետո նրանք եզրակացրին, որ ամրությունը բուրովին անառիկ է:

(21) Այնժամ սկսեցին պատրաստվել նահանջի. և ցցապատնեշը բաժանելով իրար միջև, ամեն մեկն սկսեց ֆանդել իր մոտ եղած մասը. իսկ կովելու համար անկարող եղողներին և բեռներ ունեցողներին ետ ուղարկեցին, ինչպես նաև հոպլիտների մեծ մասին. վաշտապետները տեղում թողեցին նրանց, ում կարող էին լրիվ վստահել: (22) Բայց երբ սկսեցին նահանջել, ներքև-մասից դուրս վազեցին բազմաթիվ (թշնամիներ), որոնք հյուսկեն վահաններ ունեին և նիզակներ, սունապաններ և պափլագոնյան սաղավարտներ. մինչդեռ ուրիշները բարձրացան դեպի միջնաբերդը տանող ճանապարհի այս ու այն կողմը եղած տների վրա. (23) այնպես, որ անվտանգ չէր թշնամուն դեպի միջնաբերդ տանող մուտքի առաջ հալածելը: Եվ ֆանի որ նրանք վերևից խոշոր գերաններ էին նետում ցած, ապա նույնչափ վտանգավոր էր և՛ մնալը, և՛ հեռանալը. ահավոր էր նաև վրա հասնող գիշերը:

(24) Մինչդեռ նրանք կռվում էին անելանելի վիճակում, աստվածներից մեկը նրանց փրկության միջոց շնորհեց: Հանկարծ, հավանաբար կրակ ընկնելուց, աչ կողմի տներից մեկը բոցավառվեց: Եվ ֆանի որ այն փոլ էր գալիս, աչ կողմի տներում գտնվող բոլոր թշնամիներն սկսեցին փախչել: (25) Քսենոփոնն իմանալով նախախնամության այդ նշանի մասին, հրամայեց հրկիզել նաև ձախ կողմի տները, որոնք փայտաշեն լինելով, արագորեն այրվում էին: Թշնամիները փախչում էին նաև այդ տներից: (26) Այնժամ հելլեններին սպառնում էին միայն միջնաբերդի մուտքի մոտ գտնվող թշնամիները, որոնք պարզ է, որ հարձակվելու էին (հեղինակների) վրա, նրանց դուրս գալու և (հեղեղատն) իջնելու ժամանակ: Ուստի Քսենոփոնը հրամայեց թրշնամու նետումների հարվածից դուրս գտնվողներին, որ գերաններ բերեն իրենց և թշնամու միջև եղած բաց տարածության վրա: Երբ արդեն բավականաչափ դիզեցին, գերանները կրակ տվին. հրկիզեցին նաև պատնեշի մոտ եղած տները, որպեսզի թշնամու ուշադրությունը դրանով զբաղեցնեն: (27) Այսպիսով հազիվ կարողացան հեռանալ ամրությունից, իրենց և թշնամիների

միջև կրակե (գոտի) ստեղծելով: Եվ ամբողջ ֆաղաֆե այրվեց. տները և արտարակները և ցցապատնեշները և ամեն ինչ. բացի միջնաբերդից:

(28) Հաջորդ օրը հելլենները հեռացան իրենց հափշտակած մթերքներով: Եվ ֆանի որ նրանք վախենում էին դեպի Տրապեզունտ տանող վայրէջքից, Բանգի այն գառիթափ էր ու նեղ, ուստի կեղծ դարանակալում կազմակերպեցին: (29) Եվ մի մյուսիացի, որը կրում էր նույն Մյուսոս անունը<sup>11</sup>, վերցնելով տասը կրետացու, մնաց բավուտ մի վայրում և ձևացրեց, որ իբր փորձում է թափնվել թշնամուց: Իսկ նրանց վահանները, որոնք պղնձից էին, փայլում էին մերթ այս, մերթ այն տեղում: (30) Թշնամիներն այս տեսնելով վախեցան, թե դարան են մտել. իսկ գորհրդ մինչ այդ իջնում էր: Երբ պարզ դարձավ, որ հելլենները բավականաչափ հեռացել են արդեն, Մյուսոսն ազդանշան տվեց ամենայն արագությամբ հեռանալու. և նա վեր կենալով փախավ իր մարդկանց հետ միասին: (31) Կրետացիները, որոնց ետևից, ինչպես իրենք էին պատմում, հասնում էր թշնամին, ճանապարհից շեղվեցին դեպի անտառ և իջնելով հեղեղատը, փրկվեցին. իսկ Մյուսոսը վազում էր ճանապարհով ու գոռում, օգնության կանչում: Կրետացիներն օգնեցին ու վերցրին նրան վիրավորված: Նրան օգնության հասնողները նահանջում էին ետ-ետ, երեսները դեպի թշնամին, ընդունելով թշնամու նետումները. իսկ կրետացիներից ոմանք էլ փախադարձ նետեր էին արձակում: Այսպիսով, բոլորը փրկվելով հասան ճամբար:

III. Եվ ֆանի որ ոչ խեյրիսոփոսը եկավ, ոչ բավարար բվով նավեր կային, և ոչ իսկ որևէ տեղից կարող էին պարեն ձեռք բերել, ուստի որոշեցին ցամաքով ճանապարհով: Իսկ նավերի վրա բարձեցին հիվանդներին և ֆառասուն տարին անցածներին, ինչպես նաև երեխաներին և կանանց և այն իրերը, որոնք անհրաժեշտ չհամարեցին իրենց հետ վերցնել: Նավ նստեցրին նաև ավագագույն գորավարներ Փիլեսիոսին և Սոփայնետոսին և պատվիրեցին նրանց ճամփորդության հոգսը վերցնել իրենց վրա: Այնժամ մնացյալները առաջ ընթացան, ֆանի որ ճանապարհը բարեկարգված էր: (2) Եվ ուղևորման երրորդ օրը նրանք հասան ծովափնյա հելլենական Կերասունտ ֆաղաֆը<sup>12</sup>, որը Սիևոպի ֆաղաֆացիների գաղութն էր Կոլխիդա երկրում: (3) Այստեղ մնացին տասը օր. և գորհի ստուգատես կատարեցին ու հաշվեցին. ընդամենը ստացվեց ութ հազար վեց հարյուր մարդ: Այդքան էր փրկվել: Մնացածները կոտորվել էին և՛ թշնամիների, և՛ ձյան, և՛ տարբեր հիվանդությունների պատճառով:

(4) Այստեղ նրանք իրար միջև բաժանեցին գերիների վանառից գոյացած արծաթը: Ապոլլոնի և Եփեսոսյան Արտեմիսի համար տասանորդ<sup>13</sup> ա-

նանձնացրին, որ բաժանվեց զորավարներից յուրաքանչյուրին, որպեսզի այն պահեն աստվածներին (նվիրաբերելու) համար. եկեղեցիների փոխարեն (նրա բաժինը) ստացավ նեոն ասիւնեացիին: (5) Եվ Քսենոփոնը<sup>12</sup> ընծա պատրաստելով Ապոլլոնին, այն գեանդեց Եկլիփում գտնվող արեւացիների գանձարանում<sup>15</sup>, վրան մակագրելով իր անունը, ինչպես նաև Պրոֆսենոսի, որը սպանվել էր Կլեարխոսի հետ. քանզի նրա (Քսենոփոնի) ընկերն էր: (6) Իսկ եփեսոսյան Արտեմիսի բաժինը, երբ Քսենոփոնը Ագեսիլաոսի<sup>16</sup> հետ հեռանում էր Ասիայից, ուղղվելով Բեովտիայի դեմ արշավանալի<sup>17</sup>, քողեց Արտեմիսի նեոկորոս<sup>18</sup> Մեգաբյուզոսի մոտ, ենթացելով, թե իրեն վտանգ է սպառնում. և հանձնարարեց նրան, եթե ինքը փրկվի, ապա այն վերադարձնի իրեն. իսկ եթե իրեն որևէ դժբախտություն պատահի, ապա այդ դեպքում դրամը քող նվիրաբերի Արտեմիսին, պատրաստելով այնպիսի բան, ինչ իր կարծիքով առավել հանելի կլինի դիցումուն:

(7) Երբ Քսենոփոնը դարձավ վտարանդի<sup>19</sup>, և լակեդեմոնացիները նրան արդեն բնակեցրել էին Սկիլլունտում՝ Օլիմպիայի մոտ, Մեգաբյուզոսը գալիս Լ Օլիմպիա, (խաղերը) դիտելու<sup>20</sup>, և Քսենոփոնին ետ վերադարձրեց իրեն վստահվածը: Իսկ Քսենոփոնը վերցնելով այն, դիցումուն համար և դիցումուն ընտրությամբ գնեց մի հողակտոր: (8) Պատահեց, որ այդ վայրով հոսում էր Սելինունտ (անունով) գետը: Եփեսոսում ևս Արտեմիսի տաճարի մոտով հոսում է Սելինունտ գետը: Եվ երկու գետերում էլ ձկներ կան և խեցիներ. իսկ Սկիլլունտի հողամասում հնարավոր է նաև ամեն տեսակ վայրի գազանի որսը: (9) Դիցումուն համար նախատեսված փողից Քսենոփոնը կառուցեց նաև զոհարան և տաճար և հետագայում նա միշտ արտից ստացած բերքի տասանորդը նվիրաբերում էր դիցումուն և բոլոր ֆաղաֆացիներն ու շրջակայքում ապրող տղամարդիկ ու կանայք մասնակցում էին տոնակատարությանը: Իսկ դիցումին խրախնդողներին մատակարարում էր գարի, հաց, գինի, ֆաղցրավենիք, ինչպես նաև տաճարի արոտավայրերում արածող անասունների զոհաբերված, ինչպես նաև որսված գազանների մսից մի-մի կտոր<sup>21</sup>: (10) Քանզի Քսենոփոնի որդիները, ինչպես և մյուս ֆաղաֆացիների որդիները, տոնախմբության ժամանակ կազմակերպում էին գազանների որս, որին մասնակցում էին նաև շափահասներից ցանկացողները. և նրանք որսի գազանները՝ վարագներ, վիթեր, եղնիկներ, որսում էին սրբազան հողամասում և Փոլոն լեռան վրա:

(11) Այդ վայրը գտնվում է Լակեդեմոնից Օլիմպիա տանող ճանապարհին, Օլիմպիական Զևսի տաճարից շուրջ քսան ասպարեզ հեռավորության վրա: Սրբազան տեղամասում կան նաև արոտատեղի և անտառաշատ սարեր, որտեղ կարող են կերակրվել վարագներ և այծեր և ձիեր. այնպես, որ տոնա-

խմբության եկողների գրաստները կարող էին այնտեղ արածել: (12) Իսկ տաճարի շուրջը ընտանի ծառեր տնկեցին, որոնք իրենց ժամանակին ամեն տեսակ համեղ մրգեր էին տալիս: Տաճարը փոքր լինելով հանդերձ, նման էր եփեսոսի մեծ տաճարին<sup>22</sup>, իսկ նոնուց պատրաստած դիցումուն արձանը նման էր եփեսոսում եղած ոսկե արձանին: (13) Ու տաճարի մոտ կանգնած էր կոթող<sup>23</sup>, որի վրա կար հետևյալ մակագրությունը. ԱՐՏԵՄԻՍԻ ՍՐԲԱԶՍԱՆ ՀՈՂԱՄԱՍ: ԴՐԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ, ՈՐԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ԵԿԱՄՈՒՏԸ, ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՄԵՆ ՏԱՐԻ ՏԱՍԱՆՈՐԳԸ ԵՎԻՐԱԲԵՐԵԼ ԴԻՑՈՒՀՈՒՆ. ԻՍԿ ԱՎԵԼԱՅԱԾՈՎ ՏԱՃԱՐԸ ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼ: ԵԹԵ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԱՅԴ ԲՈՂՈՐԸ ՉԿԱՏԱՐԻ, ԱՊԱ ԴԻՑՈՒՀԻՆ ԿՀԱՏՈՒՑԻ:

IV. Կերասունտից նորից ծովով մեկնեցին նրանք, ովքեր ծովով էին եկել, իսկ մյուսներն առաջ ընթացան ցամաքով: (2) Երբ նրանք հասան մոսսինոյկներին<sup>24</sup> սահմանը, նրանց մոտ ուղարկեցին Տիմեսիթեոս տրապեզունտացուն, որը մոսսինոյկների դեսպանն էր<sup>25</sup>, հարցնելու, թե իրենք որպես բարեկամ պետք է անցնեն նրանց երկրի միջով, թե՛ որպես թշնամի: Նրանք պատասխանեցին, թե թույլ չեն տալու անցնել. քանզի նրանք ապավինում էին իրենց ամրացված վայրերին: (3) Այնժամ Տիմեսիթեոսը հայտնեց հելլեններին, թե այն կողմում բնակվող մոսսինոյկները թշնամի են այս մոսսինոյկներին: Ուտի որոշեցին նրանց հրավիրել և իմանալ, չէ՞ն ցանկանա արդյոք դաշինք կնքել: Եվ Տիմեսիթեոսը ուղարկվեց նրանց մոտ ու վերադարձավ, իր հետ բերելով նրանց առաջնորդներին: (4) Երբ նրանք ժամանեցին, մոսսինոյկների առաջնորդները և հելլենների զորավարները համառոտ ժողով գումարեցին. և խոսեց Քսենոփոնը, իսկ քարզմանում էր Տիմեսիթեոսը. «Ո՞վ մոսսինոյկներն են: մենք ուզում ենք բարեհաջող հասնել Հելլադա հետիոտն, քանզի նավեր չունենք: Իսկ մեզ խանգարում են այն մարդիկ, որոնք, ինչպես իմացել ենք, ձեր թշնամիներն են: (6) Ուրեմն, եթե ցանկանում եք, ապա կարող եք մեզ հետ դաշնակցել և վրեժ լուծել երբեկցե նրանց կողմից ձեզ պատճառված վնասի համար, և այսուհետև նրանց դարձնել ձեր հպատակները: Իսկ եթե մեզ մերժեք, ապա մտածեք, թե ո՞րտեղից նորից այսպիսի զորք ձեզ կներկայանա իբրև դաշնակից»: (8) Նրա այս խոսքերին մոսսինոյկների առաջնորդը պատասխանեց, թե իրենք ևս այդպես են մտածում և համաձայն են դաշնակցելու: (9) «Ասացե՛ք ուրեմն, — շարունակեց Քսենոփոնը, — ի՞նչ ծառայություն կպահանջեք մեզանից, եթե մենք դառնանք ձեր դաշնակիցը. փոխարենը դուք ինչո՞վ կարող եք մեզ օգնել այս երկրով անցնելիս»: (10) Նրանք պատասխանեցին. «Մենք կարող ենք ձեր և մեր թշնամիների երկիրը ներխուժել



հակառակ կողմերից, և այստեղ ձեզ համար նավեր ուղարկել և մարդկանց, որոնք կօգնեն ձեզ կովելու և միաժամանակ ցույց կտան ձեզ ճանապարհը»:

(11) Այդ մասին հավաստիացումներ տալուց և ստանալուց հետո նրանք մեկնեցին: Եվ հաջորդ օրը վերադարձան. իրենց հետ բերելով մի բնից պատրաստած մակույկներ, բվով երեք հարյուր, յուրաքանչյուրի մեջ երեք մարդ, որոնցից երկուսը ցամաք դուրս գալով կանգնեցին սպասագինով, իսկ մեկը մնաց մակույկում: (12) Սրանք մակույկներով հեռացան. իսկ մնացողները դասավորվեցին հետևյալ կերպ: Նրանք կանգնեցին շարքերով, յուրաքանչյուր շարքում ամենաշատը հարյուր մարդ, դեմ առ դեմ՝ ինչպես կանգնում են խորանները<sup>26</sup>. և նրանցից յուրաքանչյուրն ուներ վահան, ծածկված սպիտակ եզան թավամազ մորթիներով, բաղեղի տերևի նման, իսկ աջ ձեռքին՝ մոտ վեց կանգուն երկարությամբ տեգ, որի առջևի ծայրին շեղբ կար, իսկ ետևի ծայրին՝ գնդաձև վերջավորություն: (13) Նրանք հագած էին կարճ խիտոններ՝ ծնկներից վեր, վուշե ներհակի հաստությամբ, իսկ գլխներին ունեին կաշվե սաղավարտներ, ինչպես պափլագոնացիները՝ մեջտեղում մազափնջով, շատ նման տիարայի. նրանք նաև ունեին երկաթե սակրեր: (14) Այնժամ նրանցից մեկը առաջ ընկավ, և մնացած բոլորը նույնպես շարժվեցին առաջ, ֆայլերգի հնչյունների տակ, և անցնելով հելլեն հոպլիտների շարքերի միջով, իսկույն առաջ նետվեցին թշնամիների դեմ այն ամրության վրա, որը նրանց առավել դյուրամատուցյց թվաց: (15) Այս ամրոցը հիմնված էր այն ֆաղափի առաջ, որը նրանք անվանում էին ֆաղափամայր, որտեղ և գտնվում էր մուսսինոյկների գլխավոր միջնաբերդը: Սրա շուրջն էլ մղվեց կռիվը. ֆանգի համարում էին, որ սրան տիրողները կգերիշխեն նաև ամբողջ մուսսինոյկների վրա. և ասում էին, թե միջնաբերդի այժմյան տերերը անիրավ կերպով էին ձեռք բերել ընդհանուրի այդ սեփականությունը, հանուն անձնական բարօրության:

(16) Նրանց հետևեցին նաև հելլեններից ոմանք, ոչ թե գորավարների հրամանով, այլ կողոպուտի համար: Մինչ սրանք մոտենում էին, թշնամիները սկզբում հանգիստ էր մնում. երբ արդեն հույս մոտեցան ամրությանը, թշնամիները արտելք կատարեցին և նրանց փախուստի մատնեցին, և սպանելով մեծ թվով բարբարոսներ, ինչպես նաև նրանց հետ արշաված հելլեններից ոմանց, հարձակվողներին հալածեցին, մինչև տեսան նրանց օգնության շտապող հելլեններին: (17) Այնժամ նրանք շրջվելով սկսեցին հեռանալ, և կարելով սպանվածների գլուխները, դրանք ցույց էին տալիս հելլեններին և իրենց թշնամիներին, ու միաժամանակ պարում էին ինչ-որ եղանակ երգելով: (18) Իսկ հելլենները շատ վշտացան, որ այդպիսով թշնամիներին դարձրին ավելի խիզախ

և որ մուսսինոյկների հետ արշաված հելլենները, փոքրաթիվ շինելով հանդերձ, փախուստի դիմեցին: Նման բան ամբողջ արշավանքի ընթացքում նրանք չէին արել:

(19) Եվ Քսենոփոնը հելլեններին ժողովի գումարելով ասաց. «Ջինվորներ, մի՛ հուսալքվեք պատահածների պատճառով: Իմացե՛ք, որ բարիքը չարիքից պակաս չի լինելու: (20) Նախ, արդեն իմացա՛ք, որ մեզ առաջնորդել կամեցողները հիրավի թշնամի են նրանց, որոնց մենք ևս, հանգամանակների բերումով, թշնամի ենք: Այնուհետև՝ այն հելլենները, որոնք արհամարհեցին մեր ռազմական շարքերը և կարծեցին, թե բարբարոսների ընկերակցությամբ կկարողանան նույն գործերը կատարել, ինչ մեզ հետ էին կատարում, հատուցում ստացան. այնպես, որ ուրիշ անգամ նրանք պակաս հոժարությամբ կլինե՛ն մեր շարքերը: (21) Այժմ դուք պետք է պատրաստ լինե՛ք ցույց տալու մեր դաշնակից բարբարոսներին ձեր գերազանցությունը նրանց առաջ, իսկ թշնամիներին ապացույցե՛ք, թե նրանք այժմ պետք է կովեն այլ տիպի մարդկանց հետ, քան այն զինվորները, որոնք ռազմական շարքեր չունենին»:

(22) Այդ օրը նրանք այդպես սպասեցին. իսկ հաջորդ օրը զոհ մատուցելուց և բարենպաստ կանխանշաններ ստանալուց հետո նախանշաշեցին, վաշտերը ուղիղ շարքերով դասավորեցին, բարբարոսներին ևս ձախ թեում նույն ձևով շարելով, առաջ շարժվեցին, աղեղնավորներին դասավորելով վաշտերի միջև, հոպլիտների առաջամասից մի փոքր ետ: (23) Քանզի թշնամին թեթևագեներ ուներ, որոնք ցած վազելով ֆարեր էին նետում: Նրանց ետ էին մղում աղեղնավորներն ու պելլաստները: Իսկ մնացյալները ֆայլով ընթանում էին ուղիղ դեպի այն ամրությունը, որտեղից նախորդ օրը բարբարոսները և նրանց հետ եղողները ետ մղվեցին. ֆանգի թշնամիներն այստեղ էին հավաքվել դիմադրելու համար: (24) Բարբարոսներն ընդունեցին պելլաստների հարձակումը և նրանց հետ մարտի բռնվեցին. բայց երբ հոպլիտները մոտեցան, նրանք փախուստի դիմեցին: Եվ պելլաստներն իսկույն սկսեցին նրանց հալածել վերև՝ դեպի ֆաղափ, իսկ հոպլիտները հետևում էին, պահպանելով իրենց շարքերը: (25) Երբ հելլենները հասան վերև՝ ֆաղափամայրի տների մոտ, թշնամիներն այստեղ բոլորն ի մի հավաքվելով, սկսեցին կովել և տեղեր էին նետում, իսկ ուրիշներն էլ ունեին այնքան հաստ ու երկար նիզակներ, որ մարդ հագիվ կկարողանար տանել, և դրանք ձեռքում պահած փորձում էին պաշտպանվել: (26) Բայց ֆանի որ հելլենները շինե՛ն նահանջում, այլ խիտ շարքերով շարժվում էին առաջ, թշնամիները շինե՛ն նահանջում, այլ խիտ լուրը լեցին ամրությունը<sup>27</sup>: Իսկ նրանց թագավորը, որը գտնվում էր միջնաբերդում կառուցված փայտե աշտարակում և որին մուսսինոյկները խնամում

են ու պահպանում այնտեղ բնօրինակով միջոցներով, շուրջ դուրս գալ այնտեղից, ինչպես նաև նախապես գրավված ամրությունն առաջնորդը, և նրանք փայտե աշտարակների հետ միասին այրվեցին:

(27) Իսկ հելլենները, ամրությունները կողոպտելիս, տներում հացի պաշարներ գտան, որոնք, ինչպես ասում էին մոսսիևոյկները, անցյալ տարվա հայրենական բերքն էր. իսկ այս տարվա հացը դեռևս մնում էր ցողունի հետ և մեծ մասը անար էր: (28) Ամֆոբաների<sup>28</sup> մեջ հայտնաբերեցին դելփինի աղած կտորներ<sup>29</sup>, իսկ ուրիշ ամանների մեջ՝ դելփինի ճարպ, որը մոսսիևոյկները օգտագործում էին այնպես, ինչպես հելլենները՝ ձիթայուղը: (29) Վերահարկում կար մեծ ֆանկոլոթյամբ շագանակ<sup>30</sup>, որի միջուկը ոչ մի ներքին կար չուներ: Մոսսիևոյկները շատ հաճախ դրանք օգտագործում էին իբրև սնունդ, խաշելով և դրանցից հաց թխելով: Հայտնաբերվեց նաև գինի, որն անխառն օգտագործելու դեպքում թթու էր թվում բունդ լինելու պատճառով. մինչդեռ երբ այն խառնում էին ջրով, դառնում էր անուշաբույր և ֆաղցրահամ:

(30) Այստեղ նախանշելուց հետո հելլենները առաջ ընթացան, ամրացված այդ վայրը հանձնելով իրենց հետ դաշնակցած մոսսիևոյկներին: Իսկ մյուս այն դյուրամատույց ամրությունները, որոնք պատկանում էին հելլեններին թշնամի եղող մոսսիևոյկների դաշնակիցներին, այնտեղից հելլենների անցնելու ժամանակ կամ լքվում էին, կամ կամովին հանձնվում: (31) Ամրությունների մեծ մասը հետևյալ ձևն ուներ. ֆաղաֆներն իրարից ուրսուն ասպարեզ հեռավորության վրա էին, մի մասն առավել, մյուսը՝ պակաս: Բնակիչները իրար ձայնարկելիս, մի ֆաղաֆից մյուսը լսվում էին. այդպիսի բարձունքներ և հովիտներ կային այդ երկրում: (32) Բարեկամ մոսսիևոյկների երկրով անցնելիս, հելլենների առաջ բերեցին հարուստների կուշա երևիսաներին, որոնք սնվել էին խաշած շագանակով. նրանք փափկամաշկ էին և շափազանց սպիտակ, և նրանց բարձրությունը և հաստությունը գրեթե հավասար էր. նրանց քիկունքը երկնեանց ներկված էր, իսկ առաջը ամբողջապես դաշված ծաղկանկարով: (33) Այս մոսսիևոյկները ցանկացան նաև բացահայտորեն կենակցել հելլեններին ուղեկցող հետերաների հետ, ասելով, որ այդպիսին է իրենց սովորությունը: Նրանք բարբր՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք, սպիտակ էին: (34) Ինչպես պատմում են արշավանքին մասնակցած հելլենները, նրանք ամենաբարբառոսներն են բոլոր այն ժողովուրդներից, որոնց երկրով իրենք անցել են և բոլորից շատ են խորք հելլենական սովորություններին: Քանզի նրանք հանրության առաջ անում էին այն, ինչ ուրիշները՝ առանձնացած. իսկ առանձին լինելիս իրենց պահում էին այնպես, ասես գտնվում

էին մարդկանց մեջ. իրենք իրենց խոսում էին ու ծիծաղում, ինչպես նաև պարում էին որտեղ պատահեր, ասես ուրիշներին ցուցադրելու համար:

V. Այս երկրի միջով, ինչպես թշնամական, այնպես էլ բարեկամական, հելլեններն անցան ուրբ կայան և հասան խալկոբներին<sup>31</sup>: Մրանք փոքրաթիվ էին և հպատակվում էին մոսսիևոյկներին. նրանց մեծագույն մասի ապրուստի աղբյուրը երկաթագործությունն էր: (2) Այստեղից նրանք հասան տիբարենների մոտ<sup>32</sup>: Տիբարենների երկիրը առավել դաշտային էր և այնտեղ կային առափնյա բնակավայրեր, որոնք պակաս ամրացված էին: Զորավարները ցանկանում էին հարձակվել այդ բնակավայրերի վրա և այդպիսով զորքի համար որևէ բան ձեռք բերել. ուստի և նրանք շրջապատեցին տիբարենների ուղարկած հյուրընկալման ընծաները, այլ պատվիրելով նրանց սպասել մինչև իրենց խորհրդակցելը, զոհեր մատուցեցին: (3) Եվ բազում զոհաբերություններ կատարելուց հետո ի վերջո բոլոր գուշակները հայտարարեցին, թե աստվածները ոչ մի դեպքում համաձայն չեն պատերազմին: Ուստի և նրանք ընդունեցին հյուրընկալման ընծաները և երկու օր ընթացալով այդ երկրի միջով իբրև բարեկամներ, հասան հելլենական Կոտյուրա ֆաղաֆ<sup>33</sup>, որը Սինոպի ֆաղաֆացիների գաղութն էր տիբարենների երկրում:

(4) [Մինչև այստեղ զորքը հետիտան գնաց: Բարբելոնի մոտ անդի ունեցած նակատամարտի վայրից մինչև Կոտյուրա նրանց անցած հանապարհի երկարությունը 122 կայան է՝ 620 փարսախ՝ 18600 ասպարեզ, իսկ ամբողջ ժամանակը վեց ամիս եղավ]<sup>34</sup>:

(5) Այստեղ նրանք մնացին ֆառատունիկից օր: Այդ ժամանակամիջոցում նրանք նախ զոհեր մատուցեցին աստվածներին, և բոտ առանձին հելլենական ցեղերի հանդիսավոր երբեր<sup>35</sup> ու մարզական մրցումներ կազմակերպեցին: (16) Իսկ պարենը մասամբ վերցնում էին Պափլագոնիայից<sup>36</sup>, մասամբ և կոտյուրացիների երկրից. ֆանգի նրանց ոչ չուկա էին տրամադրում, ոչ իսկ հիվանդներին ընդունում էին պարիսպներից ներս:

(7) Այդ ժամանակամիջոցում դեսպաններ ժամանեցին Սինոպից<sup>37</sup>, որոնք անհանգստանում էին ինչպես կոտյուրացիների ֆաղաֆի մասին, որն իրենց էր պատկանում և որից ամենամյա հարկ էին ստանում, այնպես և նրա երկրամասի համար. ֆանգի լսել էին, թե այդ երկիրը ասպատակում են: Ու գալով նամբար, նրանք այսպես ասացին. իսկ խոսեց Նեկատոնյումոսը. որը համարվում էր լավ հոռտոր: (8) «Ով գիտորեն: Մեզ ուղարկել է Սինոպ ֆաղաֆը, որպեսզի ձեզ զովարանենք այն բանի համար, որ դուք, իբրև հելլեններ, հաղթել եք բարբարոսներին, ինչպես և շնորհավորենք ձեզ, ֆանգի, ինչպես լսել ենք, բազմապիսի և ծանր փորձությունների ենթարկվելուց հետո

դուր փրկվել եմ և հասել այստեղ: (9) Ուտի մենք, լինելով հեղինակներ, պահանջում ենք ձեռնարկ, որ նույնպես հեղինակներ եմ, բարի վերաբերվեմ մեզ հետ և շարիք չգործեմ. Բանգի մենք ևս երբեք ձեռնարկ եմ, և այս երկիրը մենք ենք նրանց հանձնել, այն խլելով բարբարոսներից: Գրա համար էլ նրանք մեզ սահմանված հարկ են վճարում, ինչպես նաև կերասունացիներն ու տրապեզունացիները. ուտի և էթե դուր որևէ շարիք պատճառով սրանց, ապա սինոպցիների ֆաղափը կհամարի. որ այդ շարիքը իրեն է հասցված: (11) Այժմ ևս լուր էնք, որ դուր բռնությամբ ֆաղափ եմ մտել և ձեռնարկից ոմանք այնտեղ տներում իջեցնել են և իբր դուր բռնությամբ, առանց հարցնելու, այս երկրից վերցնում եմ այն ամենը, ինչ ձեզ պետք է գալիս: (12) Այս գործերին մենք համաձայն չենք. և էթե այսպես շարունակեմ, ապա մենք ստիպված կլինենք Կորյուպասին<sup>38</sup> և պափլագոնացիներին և բոլոր նրանց, ում հնարավոր է, մեզ դաշնակից դարձնել:»

(13) Քսենոփոնը վեր կենալով, գործի կողմից նրանց խոսքերին այսպես պատասխանեց. «Մենք, ո՞վ Սինոպի ֆաղափացիներ, գոհունակությամբ ենք այստեղ եկել այն մտածմունքով, որ գոնե փրկել ենք մեր կյանքն ու գեները: Քանզի հնարավոր չէ ունեցվածք կրել և միաժամանակ կոճով մղել թըռնամու դեմ: (14) Արդ, երբ մենք հասանք հեղինական ֆաղափները, Տրապեզունում, օրինակ, մեզ շուկա տրամադրեցին և մենք գնելու միջոցով մեզ պարենով ապահովեցինք. և մեր հանդեսը ցույց տրված պատիվների ու գործին պարզև սուրված հյուրընկալման բնձանքի համար մենք ևս փոխադարձաբար պատվեցինք նրանց և հեռու մնացինք այն բարբարոսներից, որոնք նրանց հետ բարեկամություն ունեն: Իսկ նրանց թշնամիներին, որոնց դեմ իրենք էին մեզ առաջնորդում, մենք վնաս պատճառեցինք ինչպես մեր ուժերը ներկեցին: (15) Հարցեմք նրանց, թե իրենք մեզ ինչպիսի՞ն են համարում. Բանգի այստեղ ներկա են մարդիկ, որոնց տրապեզունացիները, ի նշան բարեկամության, ուղարկել են մեզ մոտ որպես ուղեցույց առաջնորդներ: (16) Իսկ էթե հասնում էինք որևէ վայր, որտեղ շուկա չէինք գտնում, լինե՞ր դա բարբարոսական երկիր, թե՞ հեղինական, ապա մենք ինքներս էինք պարենը վերցնում ոչ թե ամբարտավանությամբ, այլ կարիքից զրոգված: Եվ կարողություն ու տառիներին ու խաղայններին, թեև նրանք արքայի հպատակները չէին համարվում և առավել վտանգավոր էին, այնուամենայնիվ պարեն ձեռք բերելու անհրաժեշտությունից մղված, թշնամաբար վերաբերվեցինք, Բանգի որ նրանք մեզ շուկա տրամադրեցին: (18) Միևնույն մակրոններին, որոնք թեև բարբարոսներ էին, բայց որովհետև ըստ կարելիության մեզ շուկա էին

տրամադրում, մենք բարեկամներ համարեցինք և նրանցից ոչինչ բռնությամբ չվերցրինք:

(19) Իսկ կոտյուրացիներից, որոնց դուր ձեռն ևս համարում, էթե իսկ որևէ բան վերցրել ենք, ապա դրա համար իրենք են մեղավոր. Բանգի նրանք մեզ բարեկամաբար չվերաբերվեցին, այլ դարբասները փակելով մեզ ոչ ֆաղափ ընդունեցին, ոչ ևս պարսպից դուրս պարեն ուղարկեցին. իրենց այդ վարմունքը նրանք արդարացնում էին ասելով, թե պատճառը ձեռն նշանակած կառավարիչն է: (20) Ինչ վերաբերում է Բո այն խոսքերին, թե ոմանք բռնությամբ ներս են անցել և տեղավորվել, ապա մենք խնդրել ենք, որ ֆաղափ տներում ընդունեն մեր հիվանդներին. և Բանգի որ դարբասները չբացեցին, ուտի մենք ուրիշ ոչ մի բռնություն չենք գործադրել. իսկ մեր հիվանդները պատասպարվելով հարկերի տակ, իրենց միջոցներով են ապրում: Մենք պահում ենք դարբասները, որպեսզի մեր հիվանդները ոչ թե ձեռն կառավարչի իշխանության տակ լինեն, այլ մեր, որպեսզի մեր ցանկացած ժամանակ նրանց ետ վերցնենք: (21) Իսկ մնացածներս, ինչպես ինքներդ տեսնում եմ, բանակել ենք բաց երկնքի տակ, ռազմական դասավորությամբ, լրիվ պատրաստ, որպեսզի մեզ լավություն անողին լավությամբ հատուցենք, իսկ վատություն պատճառողից պաշտպանվենք:

(22) Գալով Բո այն սպառնալիքին, թե դուր մտածում եմ Կորյուպասի և պափլագոնացիների հետ մեր դեմ դաշինք կնքել, ապա մենք, ի պահանջելու հարկին, ձեռն երկուսի դեմ էլ կկռվենք. Բանգի մենք արդեն ձեռնարկից բազմապատիկ ուրիշ թշնամիների դեմ պատերազմել ենք: (23) Իսկ էթե մենք որոշենք պափլագոնացուն<sup>39</sup> մեզ բարեկամ դարձնել—իսկ մենք իմացել ենք, որ նա ցանկանում է վերցնել ձեռն ֆաղափը, ինչպես նաև առափնյա ամրությունները—ապա մենք կաշխատենք նրա ձեռնարկումներին գործակցելով դառնալ նրա բարեկամները:»

(24) Այնժամ իրեն՝ Հեկատոնյուսոսի ղեկավարներիցները ակներևորեն արտահայտեցին իրենց դժգոհությունը նրա խոսքերի առթիվ, և նրանցից մեկ ուրիշը ևս հանդես գալով ասաց, թե իրենք եկել են ոչ թե պատերազմելու, այլ ցույց տալու, որ իրենք բարեկամներ են: «Իսկ էթե դուր գալ սինոպցիների ֆաղափը,—շարունակեց նա,—ապա մենք ձեռն կընդունենք հյուրընկալության բնձանքը նվիրելով, իսկ այստեղ եղողներին կպատվիրենք տալ ձեռն այն ամենը, ինչ կարող են. Բանգի տեսնում ենք, որ ձեռն բոլոր ասածները ճշմարիտ են»: (25) Գրանից հետո կոտյուրացիները բնձանք ուղարկեցին, և հեղինակները զարավարները հյուրասիրեցին Սինոպի ղեկավարներին. և նրանք մտեր-

մաքար երկար գույնեցին իրար հետ տարբեր բաների, ինչպես նաև հետագա ճանապարհի և փոխադարձ կարիքների մասին:

VI. Այդ օրն այդպես վերջացավ: Հաջորդ օրը գորավարները զինվորների համաժողով գումարեցին ու որոշեցին հրավիրել նաև սինոպցիներին, նրանց հետ հետագա ուղևորության մասին խորհրդակցելու համար: Քանզի էրև անհրաժեշտ լինե՞ր ցամաքով հետիոտն ճանապարհով, սինոպցիները կարող էին օգտակար հանդիսանալ, որովհետև ծանոթ էին Պափլագոնիային. իսկ էթե ծովով ուղևորվեին, նրանք դարձյալ սինոպցիների կարիքը պետք է ունենային, որովհետև գորավարներին քվում էր, թե միայն սրանք հնարավորություն ունեն գործի փոխադրման համար բավականաչափ նավեր տրամադրելու: (2) Ուստի և հրավիրելով ղեսպաններին, նրանց հետ խորհրդակցեցին և առաջին հերթին պահանջեցին նրանցից, որ իբրև հելլեններ բարեսրտությամբ ընդունեն հելլեններին և լավագույն խորհուրդներ տան:

(3) Հանդես գալով Հեկատոնյումուր առաջին հերթին սկսեց արդարանալ իր այն խոսքերի համար, թե պափլագոնացու հետ կղաշնակցեն և բացատրեց, որ նա այդ ասաց ոչ թե հելլենների դեմ պատերազմ սկսելու նպատակով, այլ ակնարկելով այն, որ բարբարոսների հետ դաշինք կնքելու հնարավորության առկայության դեպքում իսկ իրենք հելլեններին կգերադասեն: Իսկ էր նրան խնդրեցին խորհուրդներ տալ, նա աղոթք անելով այսպես խոսեց. (4) «Եթե ես ձեզ խորհուրդ տամ այն, ինչ ինձ լավագույն է քվում, ապա թող ինձ վրա ևս բոլոր բարիքները տեղան. իսկ էթե ոչ, ապա թող հակառակը կատարվի: Քանզի սրբազան խորհուրդ արտահայտությունը ինձ քվում է, թե պատշաճում է այս դեպքին: Եվ էթե այժմ ես ձեզ բարի խորհուրդ տամ, ապա ինձ շատերը կգովեն. իսկ էթե վատ, այդ դեպքում ինձ անիծողները շատ կլինեն: (5) Արդ՝ ես գիտեմ, որ էթե ծովով փոխադրվեմ, ապա մենք ավելի շատ հոգսեր կունենանք, քանզի նավերը մենք պետք է նարենք. իսկ էթե ցամաքով ուղևորվեմ, այդ դեպքում կովողները դուր պետք է լինեմ: (6) Քայց ես կասեմ այն, ինչ գիտեմ. քանզի ինձ ծանոթ է և՛ պափլագոնացիների երկիրը, և՛ նրանց գոտությունը: Այդ երկրում կան և՛ գեղեցկագույն հարթավայրեր, և՛ շատ բարձր լեռներ:

(7) Նախ, ինձ հայտնի է, թե որտեղից պետք է ներխուժումը կատարել. քանզի չկա այլ ճանապարհ, քան այն, որի երկու կողմից ցցված են բարձր լեռներ և որը մի անգամ գրավելով, կարելի է պահել փոքրաթիվ զորքի օգնությամբ. իսկ այն գրավելուց հետո. այնտեղից շեն կարող անցնել նույնիսկ ամբողջ աշխարհի մարդիկ: Եվ այս բոլորը ես կարող եմ ցույց տալ, էթե որոշեմ որևէ մեկին ուղարկել ինձ հետ:

(8) Այնուհետև, ինձ հայտնի է, որ նրանք հարթավայրեր ունեն և հեծելազոր, որը իրենք բարբարոսները գերազանց են համարում արհայի ամբողջ հեծելազորից: Եվ դեռ հիմա էլ նրանք չեն երկայացան արհայի կանչին, քանի որ նրանց առաջնորդը առավել հույսալի է:

(9) Ու վերջապես, էթե իսկ ձեզ հաջողվի լեռնանցքը գրավել գողունի կամ այն վերցնել՝ կանխելով թշնամուն, և բաց դաշտում կովելով հաղթել և՛ նրանց հեծելազորին, և՛ հետևակին, որը ավելի քան տասներկու բյուր է, ապա դուր կհասնեմ գետերին. նախ՝ Քերմոնոստին, որի լայնքը երեք պլեթրոն է: Իմ կարծիքով, այդ գետը դժվար կլինի անցնել հատկապես այն դեպքում, էթե առջևում կանգնած լինեն մեծ թվով թշնամիներ, իսկ ետևից նույնպես հետապլնդելիս լինեն մեծաթիվ թշնամիներ. երկրորդ՝ Իրիս գետին, որի լայնքը նույնպես երեք պլեթրոն է. երրորդ՝ Հալյուս գետին. որը ոչ պակաս քան երկու ասպարեզ լայնություն ունի, և որը հնարավոր չէ անցնել առանց նավերի. իսկ ո՛վ ձեզ նավեր կտրամադրի: Նույնպես անանցանելի է նաև Պարթենիոս գետը, որին դուր կհասնեմ Հալյուսու գետն անցնելուց հետո:

(10) Եվ ես կարծում եմ, որ այս ուղևորությունը ձեզ համար ոչ միայն դժվար է, այլ նույնիսկ բոլորովին անկարելի: Իսկ էթե նավարկեմ, ապա այստեղից կհասնեմ Սինոպ, իսկ Սինոպից՝ Հերակլեա<sup>40</sup>. իսկ Հերակլեայից այն կողմ ոչ մի դժվարություն չկա և՛ ցամաքով, և՛ ծովով ճանապարհովելու համար. քանզի Հերակլեայում շատ նավեր կան»:

(11) Եթե նա այսպես խոսեց, ոմանք կասկածեցին, որ նա այդպես է ասում Կորյուպսի հանդեպ ունեցած իր բարեկամության պատճառով. քանզի ինքը նրա դեսպանն էր. իսկ ուրիշները ենթադրում էին, որ նա այդպիսի խորհուրդ էր տալիս ընծաներ ստանալու ակնկալությամբ. իսկ մի մասն էլ այն կարծիքին էր, որ նա այդ բոլորն ասում էր, որպեսզի արգելի հելլեններին ցամաքով ճանապարհովել և սինոպցիների երկրի որևէ մասին վնաս հասցնել: Այնուամենայնիվ հելլենները որոշեցին ճանապարհորդությունը կատարել ծովով: (12) Այնուհետև Քսենոփոնն ասաց. «Ո՛վ սինոպցիներ. զորքն ընտրում է այն ճանապարհը, որը դուր էք խորհուրդ տալիս. բայց այսպիսի հարց կա: Եթե նարվեն բավականաչափ նավեր, որպեսզի ոչ ոք չմնա այստեղ, ապա մենք կուղևորվենք: Իսկ էթե պետք է մեզանից մի մասը մնա, իսկ մյուս մասը նավերով ուղևորվի, ապա մենք նավ չենք բարձրանա: (13) Քանզի մենք գիտենք, որ էթե որևէ տեղ ավելի հզոր լինենք, քան թշնամին, ապա կարող ենք փրկվել և պարեն ձեռք բերել. իսկ էթե որևէ տեղ ավելի քայլ գտնվենք, ապա պարզ է, որ մենք ստրկական դրության մեջ կընկնենք»: Այս լսելով, սինոպցիները խորհուրդ տվեցին ղեսպաններ ուղարկել: (14) Եվ ուղարկեցին

կալիմաբոս արկադիացուն և Արիստոն արևնացուն և Սամույաս աբալացուն. և նրանք մեկնեցին:

(15) Այնժամ Քսենոփոնը իր առաջ տեսնելով մեծ թվով հելլեն հուպիստների, ինչպես նաև բազմաթիվ պելտաստների և ադեղնավորների, և պարսատիկավորների և հեծյալների, որոնք փորձի շնորհիվ վարպետացել էին և այժմ գտնվում էին Պոնտոսում, որտեղ հնարավոր չէր այսֆան մեծ զորք կենտրոնացնել փոքր միջոցներ ծախսելով. հանգեց այն մտքին, որ լավ կլինե՞ր այստեղ երկիր ձեռք բերել և ֆաղաֆ հիմնադրելով ավելացնել Հելլադայի տիրույթներն ու հզորությունը: (16) Եվ երբ հաշվեց իրենց թիվը, ինչպես նաև Պոնտոսի շուրջ ապրողների ֆանակը, իրեն թվաց, թե այդ ֆաղաֆը խոշոր կլինի: Եվ այդ նպատակով Քսենոփոնը, դեռևս զինվորներից ոչ մեկին ոչինչ չասած, իր մոտ կանչելով կյուրոսի նախկին գուշակ Սիլանոս ամբրակիացուն, զոհաբերություն կատարեց: (17) Իսկ Սիլանոսը վախենալով, որ այդ բանը կկատարվի և զորքը կմնա ինչ-որ տեղ, զորքի մեջ լուր տարածեց, թե Քսենոփոնը ցանկանում է բանակը բողոնել այնտեղ և ֆաղաֆ հիմնելով իր համար անուն և կարողություն վաստակել: (18) Մինչդեռ ինքը՝ Սիլանոսը ցանկանում էր շուտափույթ հասնել Հելլադա. ֆանգի նա պահպանել էր այն երեք հազար դանեկանը, որ ստացել էր կյուրոսից. երբ նրա համար զոհ մատուցելիս նշմարտությունն էր գուշակել տասը օրերի մասին<sup>41</sup>:

(19) Երբ զինվորները լսեցին այս, ապա նրանցից ոմանք գերադասեցին մնալ այնտեղ, բայց մեծ մասը դեմ եղավ: Տիմասիոն դարդանացին և Թորաֆս բեովտիացին այնտեղ ներկա եղող հերակլեսացի և սինոպի վանականներին հայտնեցին, որ եթե նրանք զորքի համար ոռնիկ չհայրապրեն, որպեսզի իրենք մթերք ձեռք բերելով մեկնեն նավերով, ապա այդպիսի մեծ զորքը կարող է մնալ Պոնտոսում: «Քանզի Քսենոփոնը,—շարունակեցին նրանք,—ցանկանում է և մեզ համոզում, որպեսզի եթե նավերը ժամանեն, իսկույն զորքին հայտարարենք այսպես. (20) «Ո՛վ զինվորներ. մենք տեսնում ենք, թե դուք ինչքան դժվարություն եք կրում և՛ մեկնելու համար պարեն ձեռք բերելու, և՛ տուն վերադառնալիս ձեր տնեցիների համար որևէ բան գնելու կապակցությամբ. ուստի եթե դուք ցանկանում եք ձեր ընտրությամբ տիրել մերձպոնտոսյան երկրներից որևէ մեկին, որպեսզի վերադառնալ ցանկացողները կարողանան իրագործել իրենց ցանկությունը, իսկ մնալ կամեցողները հասնեն իրենց նպատակին, ապա դուք ահա նավեր ունեք, որոնցով կարող եք հանկարծակի հարձակվել որտեղ կամենաք»:

(21) Այս խոսքերը լսելով, վաճառականները դրանք հաղորդեցին ֆաղաֆներին. իսկ Տիմասիոն դարդանացին նրանց հետ ուղարկեց նաև Եվրիմա-

ֆոս դարդանացուն ու Թորաֆս բեովտիացուն, որպեսզի նույնը պատմեն: Երբ սինոպիցիներն ու հերակլեսացիները լսեցին այս բոլորը, բանազնաց ուղարկեցին Տիմասիոնի մոտ, խնդրելով դրան ընդունել իբրև ընծա և հոգ տանել, որպեսզի զորքը հեռանա նավերով: (22) Նա հանույնով լսեց այդ ամենը, և երբ զինվորները հավաքվեցին ժողովի, նա այսպես խոսեց. «Երբեք չմտածեք, ո՛վ այրե՛ր, այստեղ մնալու մասին, և ոչ իսկ որևէ բան ավելի բարձր դասեք, քան Հելլադան: Մինչդեռ ես լսել եմ, թե ոմանք այդ նպատակով նույնիսկ զոհեր են մատուցում, բայց ձեզ ոչինչ չեն հայտնում: (23) Եթե դուք նավերով մեկնեք, ապա ես խոստանում եմ ձեզ ամեն ամիս նորալուսնի օրը յուրաքանչյուրիդ վճարել մեկ կիզիկյան դրամ<sup>42</sup>, և ձեզ կհասցնեմ Տրովադա, որտեղից ես վտարանդի եմ, և իմ ֆաղաֆը ձեզ ծառայություն կմատուցի. ֆանգի նրանք այժմ ինձ հոծարությամբ կրնդունեն: (24) Իսկ ես կառաջնորդեմ ձեզ այնպիսի վայրեր, որտեղից դուք շատ հարստություն ձեռք կբերեք: Քանզի ինձ ֆաջ հայտնի են էոլիսը, Փոյուզիան, Տրովադան և Փառնաբազուսի<sup>43</sup> իշխանության տակ գտնվող ամբողջ երկիրը, մասամբ այն պատճառով, որ ինքս այդ երկրից եմ, մասամբ էլ այն պատճառով, որ ես այնտեղ արշավանքի եմ մասնակցել կեբարֆոսի և Գերկյուպիդասի հետ միասին»<sup>44</sup>:

(25) Այնուհետև հանդես եկավ Թորաֆս բեովտիացին, որը պայքարում էր Քսենոփոնի դեմ զորավարության համար, և ասաց, որ եթե դուրս գան Պոնտոսից, ապա կհասնեն Քերսանեսոս երկիրը, որը բարեբեր է և հարուստ. ցանկացողները կարող են հաստատվել այնտեղ, իսկ չցանկացողները կարող են մեկնել տուն: Միծաղելի է բնակության վայր փնտրել բարբարոսական երկրում, եթե Հելլադայում կա ընդարձակ և բարեբեր երկիր: (26) «Եվ ֆանի դուք դեռ չեք հասել այնտեղ,—շարունակեց նա,—ես ևս Տիմասիոնի նման խոստանում եմ ձեզ ոռնիկ վճարել»: Նա այդ ասում էր, որովհետև տեղյակ էր այն խոստումներին, որ Տիմասիոնին տվել էին հերակլեսացիներն ու սինոպիցիները, եթե հելլենները մեկնեին ծովով: Իսկ Քսենոփոնն այդ ժամանակ լուռ էր:

(27) Այնժամ հանդես եկան աբալացիներ Փիլեսիոսը և կյուկոնը և ասացին, թե վատ է, որ Քսենոփոնը ինքն առանձին համոզել է մարդկանց մնալ և այդ առնչությամբ զոհեր է մատուցել, իսկ հասարակայնորեն ոչինչ չի ասել այդ մասին:

Ուստի Քսենոփոնը ստիպված եղավ վեր կենալ և խոսել այսպես. (28) «Ես, ո՛վ զինվորներ, ինչպես տեսնում եք, ինչքան հիարավոր է զոհաբերություն եմ անում և՛ ձեզ, և՛ ինձ համար, որպեսզի միշտ կարողանամ ասել, մտածել և աճել այն, ինչը կարող է և՛ ձեզ, և՛ ինձ համար լավագույն լինել և



օգտավետ: Այս դեպքում ևս էս գոն էի մատուցում իմանալու համար, թե ո՞րն է ավելի լավ. հաղորդե՞լ ձեզ իմ անելիքի մասին և այդ ուղղությամբ գործե՞լ, թե՞ այդ գործը նույնիսկ բոլորովին չսկսել: (29) Գուշակ Սիլանոսը հայտնեց ինձ շատ կարևոր մի բան. թե զոհանշանները բարեկապատ էին. նա գիտեր, որ ևս ևս, միշտ զահաբերությունների ներկա գտնվելով, անփորձ չեմ այդ գործի մեջ: Նա ավելացրեց, որ զոհանշանները բացահայտում են նաև խաբեություն և դավ իմ դեմ, քանի որ իրեն հայտնի էր, որ ինքն է մտածում ինձ ձեր առաջ մեղադրել: Քանզի նա է տարածել, թե էս արդեն որոշել եմ իրագործել իմ մտադրությունը, առանց ձեր համաձայնության: (30) Իսկ էս, եթե նկատեի, որ դուք դժվարին վիճակի մեջ եք, ապա կմտածեի, թե ինչպես անել, որ դուք ֆաղաֆ նվաճեք, որպեսզի ցանկացողն անմիջապես նավով մեկնի և կամ մնա այնտեղ մինչև այն ժամանակ, երբ բավականաչափ միջոցներ ձեռք կբերի իր քննադատի օգուտ տալու համար: (31) Բայց քանի որ տեսնում եմ, թե հերակլեացիները և սինոպցիները մեկնելու համար ձեզ նավեր են տրամադրում և այս մարդիկ խոստանում են ձեզ ամեն նորալուսնին ոռնիկ վճարել, ապա ինձ թվում է, թե լավ բան է փրկվելով հասնել մեր ցանկացած վայրը և միաժամանակ ոռնիկ ստանալ մեր փրկության համար. ուստի և էս դադարում եմ այդ մասին մտածելուց, և խորհուրդ եմ տալիս նույնն անել բոլոր նրանց, ովքեր եկել էին ինձ մոտ և ասել, թե պետք է այդ իմ մտածածը իրագործել:

(32) Իմ կարծիքը հետևյալն է. երբ բոլորս այսֆան մեծ թվով իրար հետ ենք լինում, ինչպես այժմ, ապա մենք և՛ հարգանք ենք վայելում, և՛ մթերք ունենում. քանզի ուժեղը կարող է թույլի ունեցվածքին տիրանալ: Իսկ եթե մենք մասնատվենք փոքր խմբերի, այդ դեպքում ոչ կարող ենք պարեն ձեռք բերել, ոչ իսկ անվտանգ շարունակել մեր նախապահը: (33) Ես նույնպես կարծում եմ, ինչպես և դուք, որ մենք պետք է մեկնենք Հելլադա. բայց եթե որևէ մեկը մերկացվի մեզ լիելու միտում ունենալու հանցանքով, նախքան ամբողջ գործի ապահով տեղ հասնելը, ապա նրան պետք է դատել որպես հանցագործի: Եվ ով համաձայն է,—շարունակեց նա,—այս բոլորին, ապա թող ձեռք բարձրացնի»: Եվ բոլորը բարձրացրին:

(34) Իսկ Սիլանոսը գոռում էր և փորձում ապացուցել, թե արդարացի կլինի մեկնել ցանկացողին ազատ քողանել: Բայց զինվորները չէին հանդուրժում նրա խոսքերը, այլ սպառնում էին, որ եթե նա փախչելու հանցանքի մեջ բռնվի, ապա նրան կպատժեն: (35) Երբ հերակլեացիներն իմացան, թե որոշվել է մեկնել նավով, և ինքը Քսենոփոնն իսկ դրա օգտին է փվեարկել, իրենք նավեր ուղարկեցին. ինչ վերաբերում է այն դրամին, որ խոստացել էին Տի-

մասինն ու Թորաֆսին (իբրև ոռնիկ), նրանք խաբեցին: (36) Ուստի և գործին ոռնիկ խոստացողները շփոթված էին ու սարսափած: Այդ իսկ պատճառով, վերցնելով իրենց հետ նաև մյուս զորավարներին, որոնք այդ գործին մասնակից էին դարձել, բացի Նեոն ափնացուց, որը փոխարինում էր Խեյրիսոփոսին, քանի որ Խեյրիսոփոսը դեռևս չէր վերադարձել, ու գալով Քսենոփոնի մոտ, ասացին նրան, որ զոչացել են. միաժամանակ հայտնեցին, որ քանի արդեն նավեր ունեն, գերադասում են նավել դեպի Փասիս և գրավել փասիանների երկիրը<sup>45</sup>: (37) Այդ ժամանակ այնտեղ թագավորում էր Ալեքսանդր<sup>46</sup> ծոռը: Քսենոփոնը նրանց պատասխանեց, թե այդ մասին ինքը գործին ոչինչ չի ասելու: «Բայց եթե դուք,—շարունակեց նա,—ցանկանում եք, ապա ինքներդ գումարեք գործը և այդ մասին հայտնեք»: Այնժամ Տիմասինը դարձանացին խորհուրդ տվեց գործը շփոթվել, այլ նախապես փորձել վաշտապետներին համոզել: Նրանք ցրվելով այդպես էլ վարվեցին: ր

VII. Իսկ զինվորներն իմացան այդ հուզումների մասին: Եվ Նեոնը ասաց նրանց, որ Քսենոփոնը վերահամոզել է մյուս զորավարներին և մտածում է զինվորներին խաբելով, նորից էտ տանել դեպի Փասիս: (2) Այս լսելով, զինվորները զայրացան և սկսեցին հավաքվել ու խմբեր կազմել. և կարելի էր երկյուղել, որ նրանք կվարվեին այնպես, ինչպես կոլիսերի բանագնացների և ագարանաժուների<sup>47</sup> հետ, [որոնք բոլորը, բացի ծովի վրայով փախածներից, ֆարկոնովելով սպանվեցին]: (3) Երբ Քսենոփոնն իմացավ այդ, որոշեց իսկույն ժողով հրավիրել, թույլ շտալով, որ նրանք ինքնաբերաբար հավաքվեն. ուստի նա հրամայեց ֆարոզին ժողով հրավիրել: (4) Եվ զինվորները, լսելով ֆարոզին, հավաքվեցին ամենայն պատրաստակամությամբ: Այնժամ Քսենոփոնը, առանց հիշատակելու, թե զորավարներն այցելել են իրեն, այսպես խոսեց.

(5) «Ով զինվորներ. լսեցի, թե ինչ-որ մեկն իմ մասին զրպարտում է, թե իբր էս ձեզ խաբելով ցանկանում եմ տանել դեպի Փասիս: Արդ՝ հանուն աստվածների, լսեցեք ինձ և եթե պարզվի, որ էս մեղավոր եմ, ապա այստեղից չհեռանամ, մինչև իմ պատիժը շտանամ: Իսկ եթե դուք համոզվեք որ հանցավոր եմ ինձ զրպարտողները, ապա թող նրանք կրեն իրենց արժանի պատիժը: (6) Դուք,—շարունակեց նա,—գիտեք անշուշտ, թե արևը որ կողմից է ծագում և որտեղ է մայր մտնում. ինչպես նաև գիտեք, որ Հելլադա գնալ ցանկացողը պետք է դեպի արևմուտք ուղևորվի, իսկ բարբարոսների մոտ գնալ ցանկացողը պետք է ուղևորվի հակառակ ուղղությամբ՝ դեպի արևելք: Հետևաբար, կգտնվի՞ որևէ մեկը, որ կարողանա ձեզ խաբել, թե արևը ծագում է այնտեղից, որտեղ մայր է մտնում, և մայր է մտնում այնտեղ, որտեղից ծագում է: (7) Դուք գիտեք նաև այն, որ հյուսիսային համին դուրս է տանում

Պոնտոսից դեպի Հելլադա, իսկ հարավային կամին տանում է ներս՝ դեպի Փասիս, և ասացվածք կա, թե՛ լավ է նավարկել դեպի Հելլադա, երբ հյուսիսն է փչում: Այսպիսի դեպքում մի՛թե հնարավոր է մարդկանց խաբեությամբ նավ նստեցնել, եթե հարավն է փչում: (8) Անշուշտ, ևս կարող եմ ձեզ նավ նստեցնել խաղաղ եղանակին: Քայց չէ՛ որ ևս նամփորդելու եմ միայն մեկ նավի վրա, իսկ դու՛ք՝ առնվազն հարյուր: Հետևաբար, ևս ինչպե՛ս կկարողանայի բռնությամբ կամ խաբեությամբ հարկադրել ձեզ նավարկելու ինձ հետ ձեր կամքին հակառակ: (9) Ենթադրենք, սակայն, որ դուք իմ կողմից խաբված և հմայված, կհասնեք Փասիս, և մենք անհա դուրս եմք գալիս ցամաք. դուք, անշուշտ, կկռահեք, թե Հելլադայում չեք, իսկ ձեզ խաբողը ևս էմ՝ մեկ մարդ, մինչդեռ դուք, խաբվածներդ՝ մոտ տասը հազար զինված մարդ: Եվ ուրիշ ի՞նչ եղանակով մարդ հաստատապես կարող է իր դեմ դատաստան հարուցել, քան իր և ձեր նկատմամբ այսպիսի որոշում կայացնելով:

(10) Այս բոլորը անմիտ մարդկանց հերյուրանքն է, որոնք ինձ նախանձում են այն բանի համար, որ ևս ձեր կողմից պատվի եմ արժանացել: Քայց նրանք իրավունք չունեն ինձ նախանձելու. քանզի ևս նրանցից ո՛ւմ եմ արգելել, եթե ցանկացել է, ձեզ բարի խորհուրդներ տալ, կամ եթե կամեցել է կովել ձեր և իր անձնական բարօրության համար, կամ եթե աշխատել է արթուն հսկել ձեր ապահովության համար: Եվ մի՛թե երբ դուք հրամանատարներ եք ընտրում, ևս որևէ մեկին խանգարում եմ: Ես հրաժարվում եմ. թող նա էլ առաջնորդ դառնա. միայն թե պարզվի, որ նա ձեզ համար որևէ օգտակար գործ է անում: (11) Սակայն բավական է ինչքան խոսեցի այդ մասին. բայց եթե ձեզանից որևէ մեկը կարծում է, թե ինքը կամ մեկ ուրիշը կարող է խաբված լինել այս հարցում, թող նա խոսի և հայտնի իր կարծիքը: (12) Եթե այս ամենից բավարարված եք, ապա մի ցրվեք նախքան իմ կարծիքը լսելը, թե ինչ անկարգություն է ծայր առնում զորքի շարքերում. և եթե իրոք այդ այնպես է, ինչպես թվում է, ապա ժամանակն է, որպեսզի աստվածների և մարդկանց, ինչպես բարեկամների, այնպես և թշնամիների առաջ շղառնանք վառարագույն և առավել մեղապարտ մարդիկ»:

(13) Զինվորներն այս բոլորը լսելով զարմացան, թե դա ի՞նչ բան կարող է լինել. ուստի և խնդրեցին Քսենոփոնին շարունակել իր խոսքը: Այնժամ նա նորից սկսեց այսպես. «Դուք, անշուշտ, գիտեք, որ լեռներում բարբարոսական բնակավայրեր կան, որոնք կերասունտցիների հետ բարեկամություն են անում, և որտեղից բնակիչները իջնելով ձեզ միս էին վաճառում կամ որևէ այլ բան, ինչ ունեին. կարծեմ, ձեզանից ոմանք ևս գնացին մերձավորագույն բնակավայրերը և ինչ-որ բաներ գնելով ետ վերադարձան: (14) Վաշտապես

կլեարեալուք իմանալով, որ այդ բնակավայրը և՛ փոքր է, և՛ չի պաշտպանվում մեզ հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվելու պատճառով, գիշեր ծամանակ ուղևորվեց այնտեղ, կողոպտելու նպատակով, այդ մասին մեզանից ոչ ոքի ոչինչ չհայտնելով: (15) Ես մտադրվել էր, եթե հաջողվեր բնակավայրը գրավել, այլևս չվերադառնալ գորամաս, այլ նստելով այն նավը, որի վրա լողում էին իր վրանակիցները, բեռնելով իր ամբողջ հափրշտակածը, հեռանալ ու դուրս գալ Պոնտոսից: Ինչպես այժմ ենթադրում եմ, նրա հետ համաձայնության էին եկել նավի վրա գտնվող իր վրանակիցները: (16) Եվ նա հավաքելով բոլոր նրանց, ում կարողացավ համոզել, տարավ բնակավայրի վրա: Քայց նրանք դեռ նախապահին էին, երբ արդեն լուսացավ. բնակիչները, հավաքվելով, ամրացված վայրերից սկսեցին ֆարեր նետել ու նետահարել. և սպանեցին կլեարեալուսին ու շատ ուրիշների. և միայն ոմանց հաջողվեց փախչել կերասունտ: (17) Այս ամենը տեղի ունեցավ այն օրը, երբ մենք հետիոտն դուրս եկանք դեպի այստեղ. իսկ ծովով նավորների մի մասը դեռևս կերասունտում էր և չէր կարողանում մեկնել:

Այս դեպքից հետո, ինչպես պատմում են կերասունտցիները, այդ բնակավայրից գալիս են ավագագույն երեք մարդ, ցանկանալով հանդես գալ մեր ընդհանուր ժողովի առաջ: (18) Ու քանի որ մեզ չհանդիպեցին այնտեղ, ապա դիմեցին կերասունտցիներին՝ ասելով, թե իրենք զարմանում են, որ ինչո՞ւ մենք որոշեցինք արշավել նրանց դեմ: Իսկ երբ կերասունտցիները, ինչպես իրենք պատմեցին, ասում են նրանց, թե այդ կատարվել է ոչ ընդհանուրի որոշմամբ, նրանք հանոյացան և ցանկություն հայտնեցին նավել այստեղ, որպեսզի պատմեն մեզ կատարված դեպքի մասին և խնդրեն մեզ վերցնել ու քաղել մեռյալներին<sup>46</sup>: (19) Ու պատահեց, որ փախչելով ազատված հելլեններից ոմանք դեռևս կերասունտում էին գտնվում: Նրանք իմանալով, թե բարբարոսները դեպի ուր են նախապահվում, հանդգնեցին ֆարեր նետել նրանց վրա, ուրիշներին ևս գրգռելով հետևել իրենց օրինակին: Այդպես ֆարկոծվելով, սպանվեցին երեք մարդ, որոնք դեսպաններ էին<sup>46</sup>:

(20) Այս դեպքից հետո մեզ մոտ եկան կերասունտցիները և պատմեցին կատարվածի մասին: Իսկ մենք, զորավարներս, լսելով այդ բոլորը շատ վերջապահ եղածի համար և խորհրդակցեցինք կերասունտցիների հետ միասին, թե ինչպե՛ս քաղենք սպանված հելլեններին: (21) Մինչդեռ նրանց հետ ժողովի էինք նստել նամբարից դուրս, մենք հանկարծ լսեցինք, որ բարձրաձայն գոռում էին՝ «գա՛րկ, գա՛րկ, նետի՛ր, նետի՛ր». և միաժամանակ տեսանք մեծ թվով զինվորների, որոնք վազում էին գետնից ֆարեր վերցնելու: (22) Եվ կերասունտցիները, որոնք ականատես էին եղել իրենց մոտ կատար-

ված դեպքերին, անաբեկվելով վագեցին դեպի նավերը: Ձևս վկա, որ մեզանից ոմանք նույնպես անաբեկվեցին: (23) Իսկ ես, այսուհանդերձ, գեացի դեպի զինվորները և հարցրի, թե ի՞նչ է պատահել: Նրանց մեջ կային նաև այնպիսիները, որոնք ոչինչ չգիտեին, բայց և նույնպես իրենց ձեռներում քաշեր ունեին: Իսկ երբ հանդիպեցի բանն իմացողներից մեկին, նա ինձ հայտնեց, թե շուկայի վերահսկիչները խստորեն շարժարում են զինվորներին: (24) Այնժամ ինչ-որ մեկը նկատեց վերահսկիչ Ձևարհոսին, որը փախչում էր դեպի ծովը, և աղաղակեց: Ձինվորներն այդ լսելով, նետվեցին Ձևարհոսի վրա, ասես վայրի խոզ էր երևացել կամ եղջերու: (25) Իսկ կերասունացիները դարձյալ նկատելով իրենց կողմը վագոզ զինվորներին, կարծելով, որ նրանք իրոք իրենց վրա են գալիս, վագելով փախան ու ծով նետվեցին: Նրանց հետ միասին ծով նետվեցին նաև մեզանից ոմանք. և ով լողալ չգիտեր, խեղդվեց: (26) Այժմ ի՞նչ է մտածում այս բաների մասին: Մարդիկ ոչ մի վնաս չեն պատճառել մեզ, բայց սարսափեցին, որ մեզ վրա կարող է կատաղություն եկած լինել, ինչպես շների վրա:

Արդ, եթե դուրսյունն այսպես շարունակվի, կարո՞ղ է պատկերացնել, թե ինչպիսին կլինի մեր գործի վիճակը: (27) Դուք բոլորդ արդեն իրավասու չեք լինի ոչ պատերազմ հայտարարելու, եթե այդ կամենաք, և ոչ իսկ խաղաղության դաշինք կնքելու, այլ որևէ մեկը, ով ցանկանում է, տանելու է գործը իր կամքի համաձայն: Ու եթե մեզ մոտ գան դեսպաններ խաղաղության դաշինք կնքելու կամ որևէ այլ նպատակով, ապա մեկը, եթե ցանկանա, կարող է նրանց սպանել և անհնար դարձնել մեզ համար լսելու դեսպանների խոսքը: (28) Այնուհետև, այն դեկավարները, որոնց դուք բոլորդ կրնա՞րեք, ոչ մի հեղինակություն չեն կարող վայելել, իսկ որևէ մեկը, ով ինքն իրեն առաջնորդ կհռչակի և կսկսի գոռալ՝ «գա՛րկ, գա՛րկ», կկարողանա առանց դատաստանի սպանել և՛ առաջնորդին, և՛ մեզանից որևէ մեկին, եթե միայն նրան լսող մարդիկ գտնվեն, ինչպես այդ պատահեց ներկա դեպքում: (29) Մտածեք, թե ինչե՞ր հանեցին ձեր գլխին ինքնակոչ այս գորավարները: Ազգրանձոսն Ձևարհոսը, եթե նա իրոք ձեր առաջ հանցավոր է, արդեն նավելով հեռացավ, առանց իր պատիժը կրելու. իսկ եթե նա հանցավոր չէ, ապա փախավ գործից, որպեսզի առանց դատի անմեղ տեղը չսպանվի: (30) Մակայն դեսպաններին քարկոծողները հասան այն բանին, որ բոլոր հեղինակներից միայն դուք չեք կարող անվտանգ հայտնել կերասունտում, եթե մեզ գորական ուժ չուղեցիք. ինչ վերաբերում է սպանվածների դիակներին, որոնց նախապես իրենք սպանողներն էին առաջարկում մեզ վերցնել ու քաղել, ապա այժմ, կատարված դեպքերից հետո, այդ դիակները վերցնելը ապա-

նով չի լինի նույնիսկ քարոզի մական կրող դեսպանի համար<sup>50</sup>: Եվ ո՞վ կցանկանա իբրև դեսպան գնալ, երբ ինքն է դեսպաններին սպանել: Բայց մենք խնդրեցինք կերասունացիներին, որ իրենք քաղեն մեռյալներին: (31) Արդ՝ եթե այս բոլորը դուք նիշտ եք համարում, այդ դեպքում որոշեք, որ հետագայում նույնանման դեպքերի կրկնության երկյուղից, ամեն մեկը իր համար պահակախումբ նշանակի և բանակելիս աշխատի իր ձեռքը վերցնել ամրացված բարձունքները: (32) Բայց եթե մեզ թվում է, թե նման գործերը վայրի գազաններին են հատուկ և ոչ թե մարդկանց, ապա մտածեցե՛ք այս բոլորին վերջ տալու մասին. ապա թե ոչ, Ձևս վկա, ինչպե՞ս կարող ենք մենք անխոռով կերպով զոհ մատուցել աստվածներին. անորեն գործեր կատարելով. և կամ ինչպե՞ս մենք պետք է կովենք՝ թշնամիների դեմ. եթե ինքներս իբրև ենք սպանում: (33) Իսկ ո՞ր մի բարեկամական փողոց մեզ կընդունի, տեսնելով մեր այս անօրենությունները: Եվ ո՞վ կհամարձակվի վանառփի համար մեզ մրերի բերել. եթե մենք այսպիսի կարևոր գործերում օրինազանց երեվանք: Եվ ո՞վ մեզ, այսպիսի արարներից հետո, կգովի այն երկրում, որտեղ<sup>51</sup> մենք հավանություն ունենք բոլորի գովեստին արժանանալու: Քանզի ես կարծում եմ, որ մենք ինքներս ևս նման արարներ կատարողներին հանցապարտներ կհամարենք»:

(34) Այնժամ բոլորը կանգնելով ասացին, որ այդ արարն սկսողներին պետք է պատժի ենթարկել, և այսուհետև քույր շտալ որևէ մեկին տնօրենություն կատարել. իսկ եթե որևէ մեկը նման բան կատարի, ապա նրան մահվան դատապարտել. և գորավարները պետք է բոլոր մեղավորների հետ դատաստան տեսնեն. պետք է դատաստան տեսնել նաև բոլոր նրանց հետ, ովքեր կյուրոսի մահից հետո որևէ անարդարություն են կատարել. և նրանք դատավորներ նշանակեցին վաշտապետներին: (35) Այնուհետև Քսենոփոնի, ցուցմունքով և գուշակների խորհրդով որոշեցին բանակում արարողություն կատարել: Եվ սրբագործումը կատարվեց:

VIII. Որոշեցին նաև, որ գորավարները հաշիվ տան անցած ժամանակի համար: Հաշվետվության ընթացքում Փիլեսիոսը և Քսանթիկլեսը պարտավորվեցին ֆան մնա տուգանք վճարել, իրենց պահպանությանը վստահված նավային պիտույքների պակասորդի դիմաց. իսկ Սոփայնետոսը՝ տասը մնա, Լանգի ընտրված լինելով.....<sup>52</sup> քերացել էր:

Ոմանք մեղադրեցին նաև Քսենոփոնին, ասելով, որ ծեծվել են նրա կողմից և որ նա ինքնակամություն է ցուցաբերում: (2) Քսենոփոնը հրամայեց առաջին մեղադրողին ասել, թե որտեղ է նա ծեծվել: Եվ նա պատասխանեց. «Այնտեղ, ուր մենք կոտորվում էինք ցրտից և շատ ձյուն կար»: (3) Իսկ Քսեն-

նովորեն ասաց. «Բայց երև այդպիսի ձմեռ էր, ինչպես դու ասում ես, երբ հացը պակաս էր, իսկ գինու հոտն անգամ չկար, և մենք տանջվում էինք բազում ցավերից, իսկ բշտամիսն հետևում էր մեզ, երև այդպիսի ժամանակ ես կատաղում էի, խոստովանում եմ՝ գուցե ավելի էի կատաղում, քան էջերը, որոնց կատաղությունը, ասում են, չի մեղմում նույնիսկ հոգնածությունը: (4) Բայց և ասա,—շարունակեց նա,—ի՞նչ բանի համար դու ձեռնեցիր: Մի՞թե քեզ անհանձնելի էր պահանջում և դու չէիր տալիս, որի համար էլ քեզ ձեռնում էի: Մի՞թե որևէ բան էր պահանջում, կամ գուցե սիրեկանի համար էի կոպում, թե՛ հարբած վիճակում մոլեգնել էի»: (5) Ու երբ նա այդ բոլորից և ոչ մեկը չհաստատեց, ապա Քսենոփոնը հարցրեց, թե նա հույլիտ չէ՞ արդյո՞ք: Նա ասաց՝ ոչ, հետո թե՛ պելլաս՝ սա է գուցե: Գարձայլ «ոչ,—պատասխանեց նա,—այլ իմ վրանակիցները ինձ հանձնարարեցին ջորի էջել, թեպետև ազատ եմ ծնվել»: (6) Այնժամ Քսենոփոնը նրան նանաչեց ու հարցրեց. «Ին՞չ չէիր հիվանդ գինվորին փոխադրողը»: «Ձեռք վկա, ես էի,—պատասխանեց նա.—հանգի դու ինձ ինձ հարկադրեցիր այդ անել և նույնիսկ ցած նետեցիր իմ վրանակիցների իրերը»: (7) «Բայց իրերը ցած նետելը,—ասաց Քսենոփոնը,—կարծեմ այսպես կատարվեց: Ես ուրիշներին հանձնարարեցի այդ բոլորը տանել, ու կարգադրեցի հասցնել ինձ մոտ, և ստանալով դրանք, բոլորը անվնաս հանձնեցի քեզ, քանզի դու ես հիվանդին ինձ մոտ հասցրիր: Այժմ լսեցե՞ք,—շարունակեց նա.—թե այդ ինչպես տեղի ունեցավ, քանզի արժե այդ մասին պատմել:

(8) Զինվորներից մեկը ետ էր մնում, քանզի չէր կարողանում այլևս առաջ գնալ: Ես նրա մասին այնքան միայն գիտեի, որ նա մեր գինվորներից էր, ուստի և քեզ հարկադրեցի տանել նրան, որպեսզի չկորչեր, որովհետև, ինչքան հիշում եմ, բշտամիսներն էին մեզ հետևում»: Զինվորն այս խոսքերը հաստատեց: (9) «Մի՞թե,—շարունակեց Քսենոփոնը,—ես քեզ առաջ ուղարկելուց հետո վերջապահ զորամասի հետ չհասա քեզ ու շտեպ, որ փոս էիր փորում այդ մարդուն՝ քաղելու համար, և մոտենալով քեզ շփոթեցի»: (10) Բայց մենք դեռ կանգնած էինք շրջան կազմած, երբ այդ մարդը ծալեց ոտքը, և բոլոր ներկաները աղաղակեցին, որ մարդը կենդանի է, իսկ դու ասացիր, «Թող ապրի ինչքան ցանկանա, իսկ ես այլևս նրան չեմ տանի»: Այնժամ ես քեզ ձեռնեցի, դու նիշտ ես ասում, քանզի դու, ինչպես ինձ քվաց, գիտեիր, որ նա դեռ կենդանի է»: (11) «Հետո ի՞նչ,—ասաց գինվորը.—մի՞թե նա շմահացավ նրան քեզ ցույց տալուց հետո»: «Մենք բոլորս,—պատասխանեց Քսենոփոնը,—մահկանացու ենք, բայց մի՞թե դրա համար կենդանի վիճակում պետք է քաղվենք»:

(12) Այնժամ բոլորն սկսեցին աղաղակել, թե Քսենոփոնը նրան պետք էր արձակել, քանզի ձեռնում էր նրան Քսենոփոնը հրամայեց մյուսներին ես պատմել, թե ի՞նչ պատճառով նրանցից ամեն մեկը ձեռնում էր: (13) Եվ քանի որ ոչ մեկը հանդես չեկավ, ապա Քսենոփոնը ինձ ասաց. «Ես, ո՞վ գինվորներ, խոստովանում եմ, որ ձեռնում եմ մարդկանց, նրանց անկարգության համար, մարդկանց, որոնք ուզում էին ապահովություն ձեռք բերել ձեր միջոցով, և մինչև դրա շարժումը առաջանում էի և անհրաժեշտության դեպքում կոխով մղում, նրանք, լիկով շարժվելով, առաջ էին վազում, որպեսզի հափշտակեին և առավել չափով օգուտ փողեին, քան դու: Ու երբ մենք բոլորս այդպես վարվեինք, ապա ամբողջապես կործանված կլինեինք: (14) Ու դարձայլ, ես ձեռնում եմ ու ստիպել առաջ գնալ նրան, ով ծուլանում էր և չէր ցանկանում տեղից վեր կենալ, այլ գերադասում էր սպասել բշտամու գալույնը: Քանզի միջև իսկ ես մի անգամ ուժեղ ստոնամանիքի ժամանակ, երբ սպասում էի արշավանքի գնալու համար պատրաստվողներին, երկար ժամանակ տեղում նստած մնալուց հետո երբ փորձեցի ոտքի կանգնել, զգացի, որ հազիվ եմ կարողանում ստուններս շարժել: (15) Այսպես, իմ իսկ փորձով այդ բանում համոզվելով, ես էլ ուզում էի ամեն մեկին, ով նկատում էր ծուլանում էր նստած, քանզի շարժման մեջ գտնվելը և իրեն աղամարդավարի պանելը ջերմություն է հաղորդում և նկունություն, մինչդեռ տեղում նստելը և անգործության մատնվելը, ինչպես ես նկատել եմ, նպաստում են արյան սառչելուն և մատների ցրտահարվելուն, մի բան, որին, ինչպես գիտեմ, ենթարկվեցին ձեռքերից շատերը: (16) Գուցե մեկ ուրիշին ես, որքան անհոգություն էր անում և խանգարում էր առաջ ընթանալու և՛ ձեռք, որ առջևում էի, և՛ մեզ, որ ետևում էինք, ես հարկադրել եմ բռնեցնելով, որպեսզի բշտամիսները նրան չհարվածեն նիզակով: (17) Եվ այժմ, երբ նրանք փրկվել են, կարող են արդարացի հատուցում պահանջել իմ կողմից իրենց հասցված անարդարության համար: Բայց եթե նրանք ընկնեին բշտամու ձեռքը, ապա ինչպիսի՞ ծանր տանջանքներ պետք է կրեին և դրա փոխարեն ումի՞ց պետք է բավարարություն պահանջեին:

(18) Իմ խոսքը,—շարունակեց նա,—պարզ է, եթե ես որևէ մեկին պատմել եմ նրան բարիք ցանկանալով, ապա ինձ քվում է, թե ես ենթակա եմ այնպիսի դատի, որին արժանի են ծնողները՝ որդիների կողմից և ուսուցիչները՝ աշակերտների, նույնպես և բժիշկները դադում են և հատում բարի նպատակով: (19) Իսկ երբ դու կարծում եմ, թե այդ բոլորը ես կատարել եմ ինքնակամությունից, ապա նկատի ունեցե՛ք այն, որ ես այժմ, աստվածների ողորմածությամբ, ավելի համարձակ եմ, քան այն ժամանակ էի, և ավելի շատ եմ գինի խմում, բայց և այնպես ոչ մի չեմ ձեռնում, քանզի ես տես-



նում եմ որ դուք խաղաղության մեջ եք: (20) Իսկ երբ փոքորիկ է, և ծովը մեծապես ալեկոծվում է, դուք շղիտե՛ք. որ քիավարողների վերակացուն<sup>53</sup> ամենաշնչին առիքով գաշտանում է առաջամասում եղողների վրա, իսկ նավավարը՝ նավախելի մոտ գտնվողների վրա: Քանզի նման դեպքերում ամենափոքր սխալն իսկ կարող է ամեն ինչ կործանել: (21) Դուք ինձներդ որոշեցիք, որ ես արդարացի կերպով ձեռնել եմ նրանց. Բանզի դուք շուրջանակի կանգնած էիք, Բվեախարեի փոխարեն<sup>54</sup> ձեռքներիդ սրեր բռնած և, եթե ցանկանայիք, հնարավորություն ունեիք նրանց օգնելու: Եվ, Ձևսք վկա, դուք նրանց չօգնեցիք, բայց և հետո անկարգություն անողին չձեռնեցիք: (22) Եվ դրանով իսկ դուք Բաշալեբեցիք ձեր մեջ եղած վատերի կամայականությունը:

Ինձ քվում է, որ եթե ուշադիր դիտեմ, ապա կտեսնեմ, որ նույն մարդիկ, որոնք այդ ժամանակ առավել երկշոտ են եղել, այժմ բոլորից առավել անպատկառ են վերաբերվում: (23) Այսպես, բռնցքամարտիկ Քոխսկոս քեսսալացին այն ժամանակ, իբր թե հոգնած լինելով, դժվարանում էր կրել իր վահանը, իսկ հիմա, ինչպես լսել եմ, նա արդեն քալանել է բազմաթիվ կոտյուորացիների: (24) Եթե դուք խելացի լինեք, ապա նրա հետ կվարվեք բոլորովին հակառակ ձևով, ինչպես շների հետ են վարվում. գայրացկոտ շներին ցերեկը կապում են և գիշերը ազատ են արձակում, իսկ սրան պետք է գիշերը կապել և ցերեկը ազատ արձակել:

(25) Քայց ես.— շարունակեց նա.— զարմանում եմ, որ եթե երբևիցե ես որևէ մեկին նեղացրել եմ, այդ հիշում է ու չի լում: Իսկ եթե ես որևէ մեկին օգնել եմ ստունամանիքի ժամանակ, կամ նրա մոտից հեռացրել եմ ըշնամուն, կամ հիվանդին ու կարիքավորին անհրաժեշտ եղող որևէ բան եմ նսրել, այդ մասին ոչ ոք չի հիշում, ինչպես նաև չեմ հիշում, թե ես գովել եմ նրանց կատարած լավ արարեցների համար. կամ իմ կարողության համեմատ պարզեվատրել Բաշարիներին: (26) Քայց չէ՛ որ ավելի լավ և ավելի արդար և ավելի արժանի և ավելի հանելի է բարի գործերը հիշել, քան շար»:

Այս խոսքից հետո բոլորը հանդես եկան և սկսեցին իրենց հուշերը պատմել. և ամեն ինչ բարեհաջող վերջացավ:



## Գ Ի Բ Թ Վ Ե Յ Ե Բ Ո Ր Գ

I. Այնուհետև, Բանի դեռ նրանք այդ վայրերում էին մնում, հելլենների մի մասը ապրում էր շուկայից հայրաքաժամ մթերևով, իսկ մյուս մասը՝ Պափլագոնիան ասպատակելով: Իրենց հերթին պափլագոնացիները ևս կողոպտում էին հեռուներում քափառող հելլեններին և գիշերները փորձում վնասել նամբարից հեռու վրան խփած զինվորներին. այդ իսկ պատճառով նրանց և հելլենների միջև խիստ ըշնամություն առաջացավ: (2) Իսկ Կորյուպար, որն այդ ժամանակ Պափլագոնիայի առաջնորդն էր, ձիերով ու շֆեղ զգեստներով դեսպաններ ուղարկեց հելլենների մոտ. նրանք հաղորդեցին, որ Կորյուպար պատրաստ է հելլեններին շվնասել. եթե հելլենները ևս իրեն շվնասեն: (3) Իսկ գորավարները պատասխանեցին, թե այդ հարցի շուրջ պետք է խորհրդակցեն ամբողջ գորբի հետ, բայց և այնպես դեսպաններին բնդունեցին իբրև հյուր. հրավիրեցին նաև այն մարդկանց, որոնց համարում էին այդ բանին առավել արժանի:

(4) Չոհաբերելով կովի բնրացումը ըշնամիներից վերցրած եզները, ինչպես նաև այլ անասուններ, նրանք նոխ խնջույք կազմակերպեցին. նրանք բնրում էին շարժական մահակալների վրա բնկողմանած և խմում էին եղջյուրե ըմպանակներով, որ գտել էին այդ երկրում: (5) Երբ գիւնի հեղեցին և պեան երգեցին, առաջինը հանդես եկան քրակիացիները և սենզի հնչյունների տակ, զենեք ձեռքներին, սկսեցին պարել. նրանք պարելիս ցատկում էին բարձր և անկաշկանդ ու քափահարում իրենց սուտերները. վերջում, ինչ-



պես բարձրին թվաց, նրանցից մեկը հարձակեց մյուսին. սա վայր ընկավ մեծ արվեստականությամբ: (6) Պափլագոնացիները աղաղակ բարձրացրին: Եվ այն մեկը վերցնելով սրա զենքերը, հեռացավ, երգելով սիտալկան<sup>1</sup>. Իսկ քրակիացիներից մյուսները վայր ընկածին դուրս բերեցին որպես սպանվածի. բայց նրան ոչինչ չէր պատահել: (7) Այնուհետև հանդես եկան էփանները և մագնեսիացիները<sup>2</sup>, որոնք սպառազինված պարեցին կարպայա կոչված պարը: (8) Այդ պարի ձևը այսպիսին էր. պարողներից մեկը զենքը մի կողմ է դնում, իրեն մոտիկ, և սկսում է հերկել ու սերմանել, հանախակի և աշխարհով. ասես նա վախենում է ինչ-որ բանից. ավագակ է մտանում: Սերմանողը նկատում է նրան և վերցնելով իր զենքերը, դիմագրավում է ավագակին և իր եզների համար կոպում նրա հետ: Նրանք այդ բոլորը կատարում էին սրեզի շեշտերին համապատասխան. և ի վերջո ավագակը մարդուն կապկպեց և եզներին էջեց տարավ. իսկ երբեմն հերկողն է կապում ավագակին. այս դեպքում նա ավագակին լծում է, եզների հետ և էշում. երկու ձեռքերը ետևին կապած: (9) Այնուհետև հանդես եկավ մի մյուսիացի, յուրաքանչյուր ձեռքին էջուսկեն վահան բռնած, և սկսեց պարել՝ մերթ մերկայացնելով երկու ըշնամու դեմ կոպող ռազմիկի. մերթ էլ գույց վահաններով ինչ-որ մեկից պաշտպանվող զինվորի. մերթ էլ պատվում էր և թավալվող ընկնում վահանները ձեռքին, այնպես, որ տեսարանը գեղեցիկ էր: (10) Իսկ վերջում նա պարեց պարսկական պար, վահաններն իրար խփելով. ձեռքերը ծալելով ու նորից վեր բարձրանալով, և այս բոլորը նա կատարում էր սրեզի շեշտերին համապատասխան: (11) Այնուհետև հանդես եկան մանտինեացիները և արկադիացիներից ոմանք, իրենց լավագույն զենքերը կապած. նրանք բայում էին սրեզի հնչյունների տակ. ռազմական ֆայերգի շեշտերին համապատասխան և պեան էին երգում ու պարում, ինչպես աստվածների պատվին կազմակերպված սրբազան երթերի ժամանակ: Այս ամենը տեսնելով, պափլագոնացիները զարմանում էին, որ բոլոր պարերը կատարվում էին սպառազինված փրճակով: (12) Այնժամ մյուսիացին տեսնելով նրանց զարմանքը, համոզեց ոման արկադիացու, որի մոտ մի պարուհի կար, ու բերելով պարուհուն, նրան հազրեց լավագույն զգեստներ ու ձեռքին թեթև վահան տվեց. և նա մեծ շնորհքով կատարեց պարուհիին՝ պարը: (13) Այնժամ ուժեղ ծափեր եղան և պափլագոնացիք հարցրին, թե արդյո՞ք կանայք ևս պատերազմում եմ իրենց հետ միասին: Հելլենները պատասխանեցին, թե այս կանայք արեալին դուրս էջեցին նամբարից: Այդ գիշերն այդպես վերջացավ:

(14) Հաջորդ օրը դեսպաններին բերեցին զորքի առաջ, և զինվորները որոշեցին, որպեսզի ոչ իրենք վնաս հասցենեն պափլագոնացիներին և ոչ

նրանցից վնաս կրեն: Գրանից հետո դեսպանները մեկնեցին: Իսկ հելլենները, ֆանի որ թվում էր, թե արդեն բավականաչափ նավեր կան, նստեցին ու նավեցին մի ամբողջ օր և գիշեր բարենպաստ փամու ուղղությամբ. Պափլագոնիան իրենց ձախ կողմում ունենալով: (15) Հետևյալ օրը հասան Սինոպ և խարսիսեցիքը Հարմենեում՝ Սինոպի մոտ: Սինոպցիները բնակվում են պափլագոնական երկրում, մինչդեռ իրենք Միլետից եկած գաղութարեականներ են: Մրանք, ի նշան հյուրասիրության, հելլեններին բնծաներ ուղարկեցին՝ երեք հազար մեդիմնա<sup>5</sup> գարու ալյուր և հազար հինգ հարյուր սափոր<sup>6</sup> գինի:

(16) Այստեղ ժամանեց նաև Խելիսոսոսը՝ արիերայով: Զինվորները ենթադրում էին, թե նա որևէ բան է բերել իր հետ. բայց նա ոչինչ չբերեց, այլ սոսկ հայտարարեցին, թե նավաբեռն Անասիսոսը<sup>8</sup> և ուրիշները զոհվում են նրանց, և որ Անասիսոսը խոստանում է, եթե դուրս գան Պոնտոսից, նրանց ոռնիկ վճարել: (17) Այստեղ, Հարմենեում, զինվորները մնացին երեք օր:

Քանի որ արդեն նրանք գիտեին, որ մտանում են Հելլադային, ապա այժմ, ավելի ֆան նախկինում, մտածում էին այն մասին, որ տուն հասնելիս ինչ-որ բան ունենան իրենց հետ: (18) Ուստի նրանք եկան այն համոզման, որ եթե առաջնորդ բնտրեն միայն մեկ մարդու, ապա նա ավելի լավ, ֆան բազմիշխանության դեպքում, կարող է դեկավարել զորքը ցերեկ լինի, թե գիշեր. և եթե անհրաժեշտ լինի որևէ բան գաղտնի պահել, ապա նման պայմաններում այդ ավելի հեշտ կլինի, և դարձյալ, եթե անհրաժեշտ լինի շտապել թշնամու դեմ, ապա զորքը նվազ շափով կարող է ուշանալ. ֆանգի կարիք չի լինի, որպեսզի առաջնորդը խորհրդակցի ուրիշների հետ, այլ կկատարվի միայն մեկ մարդու հրամանը. մինչդեռ նախկինում զորավարները միշտ գործում էին ձայների մեծամասնությամբ կայացած որոշման համաձայն:

(19) Այսպես մտածելով, նրանք դիմեցին Քսենոփոնին, և վաշտապետները գալով նրա մոտ, ասացին, թե այդ է զորքի կարծիքը և նրանցից ամեն մեկը իր համակրանքը արտահայտելով, համոզում էր նրան իր ձեռքը վերցնել իշխանությունը: (20) Իսկ Քսենոփոնը մի կողմից ցանկանում էր այդ, ենթադրելով, թե այդպիսով ի՞նչ իր ընկերների մոտ առավել մեծ պատվի կարծանանա և նրա անունը ավելի հռչակված կլինի իր ֆաղաբը վերադառնալիս և գուցե ինքը այդպիսով կարողանա ինչ-որ օգուտ բերել զորքին: (21) Այսպիսի մտքերը նրան մղում էին ցանկանալու ինքնակալ առաջնորդ դառնալ: Մյուս կողմից, սակայն, երբ նա մտածում էր, թե բոլոր մարդկանց համար ապագան անհայտ է, ուստի վտանգ կար, որ կարող էր կորցնել իր ձեռք բերած փառքը, սկսեց տարակուսել:

(22) Ընկնելով տարակուսանքի մեջ, նա որոշեց, որ ավելի լավ է հազորակցվել աստվածների հետ: Այն երկու անասուն բերելով, դրանք զոհաբերեց Չևա-Աբեդային՝ ինչպես այդ սահմանել էր Եկփիում արված պատգամը: Նրան բժում էր նաև, քե այն երազը, որ ին՛քը տեսավ այն ժամանակ, երբ դեռ նոր էր մասնակից դարձել գործի ղեկավարությանը, նույն այդ աստվածն էր ուղարկել: (23) Նաև երբ նփեսոսից մեկնեց Կյուրոսին ներկայացվելու համար, հիշեց, քե իր աչ կողմում արծիվը կռնչաց՞, արծիվը քառած վիճակում էր, ուստի և Քսենոփոնին ուղեկցող գուշակն ասաց, քե այդ ոչ քե սովորական, այլ մեծ նշան է, որ ք փառ է նախանշում, բայց և մեծ փորձություններ, քանզի ուրիշ հավեր հանախ են հարձակվում արծիվի վրա, երբ սա նստած է, դա հարստություն գուշակող նշան չէ նաև, քանզի արծիվը իր սնունդը բռնելու ժամանակ է հայրայրում: (24) Այսպիսով, երբ նա զոհ էր մատուցում, աստված բացահայտ կերպով խորհուրդ տվեց իշխանության չձգտել և հրամանատար ընտրվելու դեպքում իսկ չհամաձայնվել: Այդպես էլ կատարվեց:

(25) Իսկ գորհն այնժամ ժողովի հավաքվեց և բոլորը ասացին, քե անհրաժեշտ է ընտրել մեկ մարդու, այդպես որոշելուց հետո տալիս էին Քսենոփոնի անունը: Երբ արդեն պարզ դարձավ, որ նրան են ընտրելու, երբ որևէ մեկը առաջարկեց նրա քեկնածությունը փեարկության դեմ, նա վեր կացավ ու խոսեց այսպես.

(26) «Ո՛վ զինվորներ, ես ևս մարդկային արարած եմ, ուստի և ուրախանում եմ, որ ձեզ մոտ նման պատվի եմ արժանացել, ևս շնորհապարտ եմ ձեզ և կիսնդրեմ աստվածներից, որ ինձ կարողություն տան ձեզ համար որևէ օգտակար գործ կատարելու: Բայց ես կարծում եմ, որ ձեր կողմից ինձ հրամանատար ընտրելը այն դեպքում, երբ այստեղ ներկա է լակեդեմոնացի ռազմիկ<sup>10</sup>, ձեզ համար օգտավետ չի լինի, քանզի լակեդեմոնացիներից որևէ բան խնդրելու դեպքում դուք հազիվ քե այն ստանաք, իսկ ինձ համար ևս, ինչքան ես գիտեմ, այդ բանը անվտանգ չի լինի: (27) Քանզի ինձ հայտնի է, որ լակեդեմոնացիները իմ հայրենի քաղաքի դեմ չդադարեցրին պատերազմը, մինչև որ ամբողջ պոլիսը ստիպված չեղավ ընդունել լակեդեմոնացիների տիրապետությունը<sup>11</sup>: (28) Երբ արենացիներն այդ ընդունեցին, լակեդեմոնացիները իսկույն ներ դադարեցրին պատերազմը և վերացրին քաղաքի պաշարումը: Արդ՝ այդ բոլորը ես լավ իմանալով հանդերձ, եթե որոշեի իմ ուժերի ներածին շափ նրանց հեղինակությանը վնասել, ապա, ես ենթադրում եմ, շուտով ինձ կզգաստացնեին: (29) Ինչ վերաբերում է ձեր այն համոզմանը, քե մեկ առաջնորդի դեպքում պակաս տարածայնություններ կծագեն, քան շատ

հրամանատարներ ունենալու դեպքում, ապա հաստատ իմացեք, որ եթե մեկ ուրիշին ընտրեք, ևս այդ որոշման երբեք դեմ չեմ լինի, քանզի ես գտնում եմ, որ պատերազմի ժամանակ առաջնորդի դեմ խոսովություն բարձրացնողը իր իսկ սեփական փրկության դեմ է խոսովություն բարձրացնում, իսկ եթե, այնուամենայնիվ, ինձ առաջնորդ ընտրեք, ապա ևս չեմ զարմանա, երբ գտնվեն մարդիկ, որոնք դժգոհ լինեն և՛ ձեզանից, և՛ ինձանից»:

(30) Նրա այս խոսքերից հետո շատ շատեր հանդես գալով ասացին, քե նա պետք է իրենց առաջնորդի: Իսկ Ագասիաս ստյումփալացին ասաց, որ ծիծաղելի կլինեք դրությունն այդպես ներկայացնել, մի՛քե լակեդեմոնացիները կզայրանան, եթե խնջույքի հավաքվածները ոչ լակեդեմոնացու ընտրեն խնջույքի պետ<sup>12</sup>: «Այդ դեպքում,— շարունակեց նա,— բառ երևույթին մենք ևս վաշտապետության իրավունք չունենք, քանզի որ արկադիացի ենք»: Այնժամ ժողովականները աղաղակեցին, քե Ագասիասը ճիշտ է խոսում:

(31) Եվ Քսենոփոնը տեսնելով, որ ավելի համոզիչ փաստեր են պետք, դարձյալ հանդես գալով այսպես խոսեց. «Ո՛վ զինվորներ, որպեսզի ձեզ ամեն ինչ հայտնի լինի, ևս երզվում եմ բոլոր աստվածների և աստվածուհիների անունով, որ իմանալով ձեր այս մտադրության մասին, զոհ մատուցեցի, որպեսզի իմանամ, քե արդյո՞ք օգտավետ կլինի ձեզ համար այդ իշխանությունը ինձ հանձնել, իսկ ինձ համար՝ այն ստանձնել, և զոհաբերության ժամանակ աստվածներն ինձ այնպիսի նշան բացահայտեցին, որ հասարակ մարդն իսկ կարող էր հասկանալ, որ ես պետք է խուսափեմ միանձնյա իշխանությունից»:

(32) Այսպիսով, ընտրեցին Նեյրիսոփոսին: Ընտրվելուց հետո Նեյրիսոփոսը հանդես եկավ ու ասաց. «Ո՛վ զինվորներ, իմացեք, որ ես ևս չեի բնդդիմանա, եթե մեկ ուրիշին առաջնորդ ընտրեիք, իսկ Քսենոփոնին դուք, անկասկած, ծառայություն մատուցեցիք, նրան շնորհելով, քանզի այժմ իսկ Դեփսիպպոսը ամեն գեղով աշխատում էր գրպարտել նրան Անափսիքոսի առաջ, մինչև որ ևս չափայեցի նրան լռելու»: Նեյրիսոփոսն ասաց նաև, քե Քսենոփոնը, իր կարծիքով, կցանկանար հրամանատարությունը բաժանել ավելի շուտ Կլեարխոսի գորամասի հրամանատար Տիմասիոնի հետ, որը դարձանացի է, քան իր՝ լակեդեմոնացու հետ: (33) «Բայց քանզի որ,— շարունակեց նա,— դուք ինձ ընտրեցիք, ևս կաշխատեմ, իմ ուժերի սահմաններում, ձեզ օգտակար լինել: Իսկ դուք նախապատրաստվեք այնպես, որ վաղը, երբ նպատակովոր քամի լինի, նավերով ճանապարհ ընկնենք: Մենք կնավարկենք դեպի Հերակլեյա, բոլորս կաշխատենք այնտեղ ավ դուրս գալ, իսկ մնացածի մասին մենք կորոշենք երբ այնտեղ հասնենք»:

II. Հետևյալ օրն այստեղից նավ հատելով, բարենպաստ ֆամու տակ հեղինակները երկու օր նավեցին ափի երկայնքով: Նավարկման ժամանակ լնրանք տեսան Յասոնի հրվանդանը, որտեղ, ինչպես պատմում են, խարխախ է նետել Արգո նավը<sup>13</sup>. այնուհետև տեսան գետաբերանները, նախ՝ Փերմոդոնտի, ապա՝ Իրիսի, ապա՝ Հալյուսի և դրանից հետո՝ Պարքենիոսի. սրանց մոտով անցնելով<sup>14</sup> հեղինակները հասան Հերակլեյա, որը հեղինական ֆաղափ էր, մեգարացիների գաղութը և գտնվում էր մարիանդիներին<sup>15</sup> երկրում: (2) Եվ նրանք խարխախ նետեցին Աֆերուսիաս քերակղզու մոտ, որտեղ, ինչպես պատմում են, Հերակլեսը իջել է (Հադես)՝ Կերբերոս շան համար<sup>16</sup>. այնտեղ մինչև այժմ էլ ցույց են տալիս վայրէջքի տեղը, որի խորությունը ավելի քան երկու ասպարեզ է: (3) Այստեղ հերակլեյացիները, ի նշան հյուրասիրության, հեղինակներին ընծաներ ուղարկեցին՝ էրեֆ հազար մեդիմնա գարու այլուր և երկու հազար սափոր գինի և ֆան եզ և հարյուր ոչխար: Այստեղ դաշտի միջով հոսում է Լյուկոս գետը, որի լայնքը մոտ երկու պլեթրոն է:

(4) Զինվորները ժողովվելով խորհուրդ էին անում, թե ինչպե՞ս Պոնտոսից շարունակել մնացած ճանապարհը՝ ցամաքով, թե՞ ծովով: Լյուկոն աֆայացին հանդես գալով ասաց. «Ես զարմանում եմ, ո՞վ զինվորներ, որ գորավորները մտահոգված չեն մեզ մքերով ապահովելու մասին. մինչդեռ հյուրասիրության համար մեր ստացած ընծաները նույնիսկ էրեֆ օր չեն բավականացնի. իսկ այստեղ հնարավոր չէ պարեն հայրաքայթել հետագա ճանապարհի համար: Ինձ թվում է, որ պետք է պահանջենք հերակլեյացիներից ոչ պակաս ֆան էրեֆ հազար կիզիկյան դրամ»: (5) Մեկ ուրիշն ասաց. «Ոչ պակաս ֆան տասը հազար. և անհապաղ, ֆանի արդեն ժողովվել ենք, այժմ իսկ դեսպաններ ընտրենք և ուղարկենք ֆաղափ, իմանալու համար նրանց պատասխանը, որից հետո էլ մենք կխորհրդակցենք»: (6) Այնժամ առաջարկեցին որպես դեսպաններ ուղարկել նախ Խեյրիսոփոսին, որն արդեն ղեկավար էր ընտրվել. եղան նաև Քսենոփոնին առաջարկողներ: Բայց այս երկուսն էլ կրտուռով հրաժարվեցին. ֆանգի նրանք այն կարծիքին էին, որ չի կարելի հեղինական ֆաղափից, այն էլ բարեկամական, բռնի վեցցնել այն, ինչ ֆաղափը հոծարակամ չի ընծայում: (7) Եվ ֆանի որ նրանք չէին համաձայնվում, ուստի ուղարկեցին Լյուկոն աֆայացուն և Կալլիմաֆոս պառասիացուն և Ագասիաս ստյուսիալացուն: Սրանք մեկնելով հաղորդեցին որոշումը: Պատմում են, թե Լյուկոնը մինչև իսկ սպառնացել է. էթե այդ պահանջները չկատարվեն: (8) Հերակլեյացիները այդ ամենը լսելուց հետո ասացին, թե ցանկանում են խորհուրդ հրավիրել. և անմիջապես ունեցվածքը դաշտերից փոխա-

դրեցին և շուկան տեղափոխեցին ֆաղափի պարիսպներից ներս, և դարբասները փակվեցին ու պարիսպների վրա զինված մարդիկ երևացին:

(9) Այնժամ այդ դեպքերը հրահրողներն սկսեցին մեղադրել գորավորներին, թե նրանք գործը ձախողեցին: Արկադիացիներն ու աֆայացիները ժողով գումարեցին. նրանց մեջ առանձնապես աշխի կին ընկնում Կալլիմաֆոս պառասիացին և Լյուկոն աֆայացին: (10) Նրանք ասում էին, թե իբր ամոքալի է, որ պելոպոնեսացիների վրա հրամանատար լինեն մի քթեմացի և մի լակեդեմոնացի, որոնք ոչ մի շոկատ չեն տրամադրել զորքին<sup>17</sup>, որ ամբողջ դժվարություններն իրենք են կրում, իսկ օգուտը ուրիշներն են ստանում, հակառակ այն բանի, որ իրենք են եղել զորքի փրկությունն ապահովողները. ֆանգի բոլոր հաջողությունները ձեռք են բերել արկադիացիները և աֆայացիները, իսկ մնացյալները ոչինչ են. և իրոք, բանակի կեսից ավելին արկադիացիներ էին և աֆայացիներ. (11) ուստի և խելամիտ բան կլինեք, էթե իրենք հավաքվելով, իրենց միջից գորավորներ ընտրեն և իրենք ինքնուրույն ճանապարհվելին ու փորձելին որևէ ավար ձեռք բերել: (12) Այդպես էլ որոշեցին. և Խեյրիսոփոսի ու Քսենոփոնի զորքերում գտնվող արկադիացիներն ու աֆայացիները լքելով սրանց, հավաքվեցին և իրենց միջից տասը գորավոր ընտրեցին. և որոշեցին կատարել այն ամենը, ինչ նրանք կորոշեն ձայների մեծամասնությամբ: Այսպիսով, Խեյրիսոփոսի գերագույն հրամանատարությանը վերջ տրվեց նրա ընտրվելուց վեց կամ յոթ օր հետո:

(13) Քսենոփոնն, այսուհանդերձ, ցանկանում էր ուղևորությունը կատարել ընդհանուրի հետ միասին, համոզված լինելով, որ այդպես ավելի ապահով կլինեն, ֆան էթե յուրաքանչյուրը գնար առանձին: Բայց Նեոնը<sup>18</sup> փորձում էր համոզել նրան առանձին ուղևորվել. ֆանգի լսել էր Խեյրիսոփոսից, թե կրեանդրոսը, Բյուզանդիոնի կառավարիչը<sup>19</sup> ասել էր նրան, որ ինքը տրիբուններով պետք է ժամաներ Կալպե նավահանգիստ: (14) Նեոնը այդ խորհուրդը տվեց, որպեսզի միայն իրենք և իրենց շոկատները կարողանային մեկնել տրիբուններով, իսկ մյուսներից ոչ մեկը չկարողանար օգտվել դրանցից: Եվ Խեյրիսոփոսը, դժգոհ տեղի ունեցած դեպքերից, ինչպես նաև այդ հիման վրա ատելով ամբողջ զորքին, թույլատրեց նրան վարվել ինչպես կամենում է: (15) Մինչ այդ արդեն Քսենոփոնը որոշել էր ձերբազատվել զորքից և մեկնել մեռակ. բայց երբ նա զոհ էր մատուցում ուղեցույց Հերակլեսին, նրանից խորհուրդ հարցնելով, թե ո՞րն է առավել լավ և հարմար՝ ճանապարհվել իր մոտ մնացած զինվորների հետ, թե՞ նրանցից ձերբազատվել, աստված գոհաբերության ընթացքում ցուցմունք տվեց՝ զինվորների հետ ուղևորվելու: (16) Այսպիսով, ամբողջ զորքը բաժանվեց էրեֆ մասի. արկա-




գիացիներ և աֆայացիներ՝ ավելի քան չորս հազար մարդ, բոլորը հոպլիաներ. խեյրիստոփոսի հետ՝ շուրջ հազար չորս հարյուր հոպլիտ և Կլեարհոսի մոտ ծառայող քրակիացի յոթ հարյուր պելտաստ. իսկ Քսենոփոնի հետ՝ շուրջ հազար յոթ հարյուր հոպլիտ և մոտավորապես երեք հարյուր պելտաստ. հեծյալներ կային միայն Քսենոփոնի ջակատում, շուրջ քառասուն ձիավոր:

(17) Եվ արկադիացիները հերակլեյացիներից նավեր ստանալով, առաջինը մեկնեցին, որպեսզի հանկարծակի հարձակվելով բյուրանիացիների վրա, ավելի շատ ավար ձեռք բերեն. նրանք ափ դուրս եկան Կալպե նավահանգիստում, լորը գտնվում է քրակիական ծովափի միջնամասում]: Իսկ խեյրիստոփոսը, հերակլեյացիների ֆաղափից սկսած, ընթանում էր այդ երկրի միջով. բայց երբ մտավ Թրակիա<sup>20</sup>, սկսեց առաջանալ ծովափով, ֆանգի հիվանդացել էր: (19) Մինչդեռ Քսենոփոնը նավեր ձեռք բերելով, ափ դուրս եկավ Թրակիայի և հերակլեյացիների երկրի սահմանում և առաջացավ միջնաշխարհով:

III. [Թե ինչպես վերացվեց խեյրիստոփոսի գերագույն հրամանատարությունը և թե ինչպես հելլենների զորքը մասնատվեց, պատմվել է վերևում]<sup>21</sup>: Այդ զորամասերից յուրաքանչյուրը ահա թե ինչ կատարեց: Արկադիացիները գիշերով Կալպե նավահանգստում ափ դուրս գալուց հետո ուղղվեցին դեպի մոտակա գյուղերը, որոնք գտնվում էին ծովից շուրջ երեսուն ասպարեզ հեռավորության վրա: Երբ լույսը բացվեց, յուրաքանչյուր զորավար իր վաշտը տարավ գյուղերից մեկի դեմ. իսկ եթե որևէ գյուղ խոշոր էր թվում, ապա զորավարները դրա դեմ տանում էին երկու վաշտ միասին: (3) Նրանք պայմանավորվեցին նաև, որ հետագայում բոլորը պետք է հավաքվեին մի բլրի վրա. և ֆանի որ հանկարծակի հարձակվեցին, ուստի նրանց հաշտվեց մեծ թվով ստրուկներ ձեռք բերել և բազմաքանակ ոչխարներ հափշտակել: (4) Իսկ փախչելով փրկված քրակիացիները սկսեցին ի մի հավաքվել. և նրանցից շատերին էր հաջողվել փախչել, ֆանգի պելտաստներ լինելով, նրանք դուրս էին պրծնում հոպլիտների ձեռքից: Երբ նրանք ի մի հավաքվեցին, նախ հարձակվեցին արկադիացի զորավարներից մեկի՝ Սմիկրեսի վաշտի վրա, որն արդեն մեծ ավար վերցնելով, գնում էր դեպի պայմանավորված բլուրը: (5) Եվ որոշ ժամանակ հելլեններն ընթանում էին մարտ մղելով. բայց ձորի միջով անցնելիս. քշեամին նրանց փախուստի մասնեց ու սպանեց և Սմիկրեսին, և բոլոր նրա հետ եղողներին: Տասը զորավարների ղեկավարած վաշտերից մեկից ևս, որի հրամանատարը Հեգեսանդրոսն էր, մնացին միայն ութ մարդ. փրկվեց նաև ինքը՝ Հեգեսանդրոսը:

(6) Իսկ մնացած վաշտերը ի մի հավաքվեցին, մի մասը դժվարությամբ,



(ցուշտան) արցունքի կամ արցունքի տանգու (ստանալով)



մյուս մասն առանց դժվարության: Մինչդեռ քրակիացիները, ոգևորված այդ հաջողությունից, սկսեցին իրար ձայնել և գիշերվա ընթացքում մեծ եռանդով խմբվեցին: Առավոտյան նրանք շրջապատեցին բլուրը, որտեղ բանակել էին հելլենները. նրանք մեծ թվով ձիավորներ ունեին և պելտաստներ, և դեռ ուրիշներն էլ անընդհատ գալիս էին: (7) Նրանք, առանց վտանգի ենթարկվելու, հարձակվում էին հուպիսաների վրա. քանզի հելլենները ոչ նետածից ունեին, ոչ տեգանետ և ոչ իսկ հեծյալ. մինչդեռ թշնամիները առաջ էին վազում և արշավում ու հարվածում տեգերով. իսկ երբ հելլենները նրանց հարվածում էին, նրանք հեշտությամբ խուսափում էին, մինչդեռ մյուսները հարձակվում էին մի այլ կողմից: (8) Ուստի և մի կողմում շատերը վիրավորվում էին, իսկ մյուս կողմում՝ ոչ մեկը: Այսպիսով, հելլենները չէին կարողանում այդ վայրից հեռանալ և, ի վերջո, քրակիացիները ջրից ևս զրկեցին նրանց: (9) Ընկնելով անել դրության մեջ, հելլենները հաշտության բանակցություններ սկսեցին: Ամեն ինչում քրակիացիները համաձայնվում էին. բայց երբ հելլենները պատանդներ պահանջեցին, քրակիացիները մերժեցին, և դրանով գործը խափանվեց: Այսպիսին էր արկադիացիների դրությունը:

(10) Իսկ Խեյրիսոսիսը առանց վտանգի ծովափով ուղևորվեց և հասավ Կալպե նավահանգիստը:

Մինչդեռ Քսենոփոնը միջերկրյայինով առաջանում էր, նրա ձիավորները, առջևում շարժվելիս պատահեցին ինչ-որ տեղ գնացող երեց մարդկանց: Ու երբ նրանց բերեցին Քսենոփոնի առաջ, սա հարցրեց, թե իրենք որևէ բան գիտե՞ն արդյոք հելլենական մյուս զորքի մասին: (11) Եվ սրանք պատմեցին ամբողջ եղելությունը և հաղորդեցին, որ այժմ հելլենները պաշարված են բլրի վրա, իսկ քրակիացիները ամբողջ բազմությամբ շրջապատել են նրանց: Այնժամ Քսենոփոնը այս մարդկանց խիստ պահպանության տակ վերցրեց, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, ուղեցույցի դեր կատարեն. և պահակակետեր նշանակելով. զինվորներին հավաքեց ու այսպես խոսեց. (12) «Ո՛վ զինվորներ. արկադիացիների մի մասը սպանվել է, իսկ մյուս մասը պաշարվել է ինչ-որ բլրի վրա: Իմ կարծիքով, եթե նրանք կորստի մատնվեն, ապա մեզ համար ևս ոչ մի փրկություն չի լինելու և՛ այն պատճառով, որ թշնամիները մեծաթիվ են, և՛ այն պատճառով, որ նրանք շատ հանդուգն են դարձել: (13) Ուստի մեզ համար ավելի լավ է, որ շտապենք նրանց օգնության հասնել, որպեսզի եթե նրանք դեռևս կենդանի են, կովենք նրանց հետ միասին. և ոչ թե մենակ մնալով, մենակ էլ վտանգի ենթարկվենք<sup>22</sup>: [14] (16) Մենք այստեղից չենք կարող ոչ մի կողմ փախչել. քանզի,—չարունակեց նա,—դեպի Հերակլեյա վերադարձի ճանապարհը երկար է. ճանապարհը եր-



կար է նաև մինչև Քրիստոսյոլիս հասնելը, մինչդեռ թշնամիները մոտիկ են. իսկ մինչև Կալպե նավահանգիստը, որտեղ մենք ենթադրում ենք, որ պետք է հասած լինի հեյրիստոսը. երբ անշուշտ նա անվնաս է, հանապարհը կարն է: Սակայն այնտեղ նավեր չկան, որոնցով մենք կարողանայինք մեկնել. իսկ այնտեղ մնալու դեպքում մեր պարենամքերը նույնիսկ մեկ օր մեզ չի բավականացնի: [15] (17) Եվ երբ պաշարվածները կործանվեն, միայն հեյրիստոսի շոկատին միանալու դեպքում մեզ համար ավելի դժվար կլինի դիմագրավել վտանգները, քան եթե պաշարվածներին ևս փրկելով, բոլորս միանանք և ընդհանուր ուժերով պայքարենք մեր փրկության համար: Արդ, մենք պետք է առաջ գնանք, հաշտվելով այն մտքի հետ, որ կամ այժմ կմեռնենք փառքով, կամ ազնվագույն գործ կկատարենք այսօր հեյրենների փրկելով: [16] (18) Գուցե և այսպես աստված է դասավորում, որ ցանկանում է նվաստացնել շողակրատող մեծամիտներին, իսկ մեզ՝ ամեն մի գործ աստվածների խորհրդով սկսողներին<sup>23</sup>, նրանցից առավել բարձր պատվի արժանացնել: Բայց այժմ դուք պետք է ինձ հետևեք և ուշադիր լինեք, որպեսզի կարողանաք կատարել իմ հրահանգները: [17] (14) Այսպես, մենք այժմ կգնանք առաջ մինչև այն ժամանակ, երբ մեզ կթվա, թե ընթրիքի պահն է հասել, որից հետո կբանակենք: Ընթրիքի միջոցին Տիմասիոնը հեծյալներին վերցնելով կգնա առաջ, մեզ իր տեսադաշտից չկորցնելով, և կհետախուզի հանապարհը, որպեսզի մեզանից ոչինչ չվրիպի»:

[18] (15) Այս ասելով Քսենոփոնը գործն առաջ տարավ: Դեպի քեներ և դեպի բարձունքները նա ուղարկեց մերկերից առանձնապես նարայիկ մարդկանց, որպեսզի որևէ տեղ որևէ բան նկատելիս հաղորդեն իրեն. միաժամանակ հրամայեց հրի մատնել այն ամենը, ինչ այրվելու ենթակա է: (19) Արդ, ձիավորները սփռվելով այնքան տարածության վրա, քանի դեռ իրենց ապահով էին զգում, հրի էին մատնում երկիրը. բարձունքներով գնացող պեղտաստները ևս հրկիզում էին այն ամենը, ինչ հնարավոր էր. հրկիզում էր նաև զորքը, երբ իր ճանապարհին անվնաս մնացած որևէ բանի էր հանդիպում. ուստի և թվում էր, թե ամբողջ երկիրը բռնկվել է կրակների մեջ և մեծաթիվ զորք է մոտենում: (20) Երբ ժամանակը հասավ, հեյրենները բարձրանալով բլուրը, բանակեցին. այնտեղից տեսան թշնամիների վառած խարույկները՝ շուրջ քառասուն ասպարեզ հեռավորության վրա. և իրենք նույնպես խարույկներ վառեցին: (21) Ընթրելուց հետո հեյրենները անմիջապես, ինչպես հրամայվել էր, բոլոր կրակները հանգցրին: Եվ գիշերը պահակակետեր հաստատելուց հետո ֆեկեցին. իսկ առավոտյան աստվածներին աղոթք մաղթելուց հետո դասավորվեցին ինչպես նակատամարտի ժամանակ և հնարավոր

րին չափ արագ մեկնեցին: (22) Եվ Տիմասիոնն ու հեծյալները ուղեցույցների հետ միասին առաջ ընթանալիս անակնկալ կերպով հայտնվեցին այն բլրի վրա, որտեղ պաշարվել էին հեյրենները: Բայց նրանք այստեղ չնկատեցին ոչ բարեկամական, ոչ իսկ թշնամու զորամաս [և այդ մասին նրանք հաղորդեցին Քսենոփոնին ու զորամասին], այլ տեսան միայն պառավ կանանց ու ծերունիների և այնտեղ լված փոքրաթիվ ուղիարհների ու եզների: (23) Սկզբում նրանք միայն զորամանում էին, թե ի՞նչ է կատարվել. բայց հետո այնտեղ մնացածներից իմացան, որ քրակիացիները մութն ընկնելիս անմիջապես հեռացել են. պատմեցին, թե հեյրենները ևս մեկնել են. բայց թե որտե՞ղ, չգիտեին:

(24) Այս լսելով, Քսենոփոնի զորամասը նախանշելուց հետո պատաստվեց ու ճանապարհ ընկավ, ցանկանալով հնարավորին չափ շուտ միանալ մյուսների հետ Կալպե նավահանգստում: Եվ առաջ ընթանալիս նրանք նկատեցին արկաղիացիների և աֆայացիների հետերը Կալպե տանող ճանապարհին: Ու երբ երկու զորամասերը հասան միևնույն վայրը, ուրախացան իրար տեսնելով ու ողջագուրվեցին եղբայրների նման: (25) Եվ արկաղիացիները հարցրին Քսենոփոնի զինվորներին, թե ինչո՞ւ կրակներ հանգցրել էին: «Մենք սկզբում,—ասացին նրանք,—երբ արդեն կրակներ չէինք տեսնում, ենթադրեցինք, որ դուք գիշերով գնացել եք թշնամու վրա. իսկ թշնամին, ինչպես մենք կարծեցինք, վախենալով այդ բանից, հեռացել է. քանզի նրանց հեռանալը տեղի էր ունեցել համարյա այդ նույն ժամանակ: (26) Բայց քանի որ դուք չեկաք, իսկ ժամանակն անցնում էր, մենք ենթադրեցինք, որ դուք, իմանալով մեզ հետ պատահածի մասին, վախեցաք ու հեռանալով մեկնեցիք դեպի ծով: Մենք ևս որոշեցինք ձեզանից ետ չմնալ: Ուստի և ուղևորվեցինք այստեղ»:

IV. Այդ օրը հեյրենները անցկացրին ծովափին. նավահանգստի մոտ: Այդ վայրը, որ կոչվում է Կալպեի ծովախորշ, գտնվում է ասիական Թրակիայում: Այս Թրակիան սկսվում է մուսից<sup>24</sup> և տարածվում մինչև Հերակլեյա, ներս՝ դեպի Պոնտոս նավորի աջ կողմում: (2) Թիերով առաջացող տրիերայի համար Բյուզանդիոնից մինչև Հերակլեյա նավարկելը մեկ երկար օր է տևում. իսկ միջանկյալ տարածության վրա չկա և ոչ մի ֆաղաֆ, ո՛չ բարեկամական, ո՛չ հեյրենական, այլ այնտեղ բնակվում են քրակիական բյուրանիացիներ: Պատմում են, թե իբր իրենց ձեռքն ընկած հեյրենների հետ նրանք խիստ դաժան են վերաբերվում: (3) Իսկ Կալպե ծովախորշը գտնվում է Հերակլեյայի և Բյուզանդիոնի միջև ընկած տարածության մեջտեղում. այն ծովի մեջ խրված մի ելուստ է, որի մի մասը ծովով է շրջապատված և ունի

ժայռոտ ափեր. ոչ պակաս քան քան զրկաչափ բարձրությամբ. իսկ այս թե-  
րակողին ցամափին միացնող ամենալայն մասը չորս պլեբրան է. և պարա-  
նոցի ամբողջ տարածությունը բավական է տասը հազար մարդ բնակեցնելու  
համար: (4) Մովսիսը զտնվում է ուղիղ ժայռի տակ, որից արևմուտք ձրգ-  
վում է ծովափ: Այնտեղ ծովափին կա նաև անուշահամ ջրի առատահոս աղ-  
բյուր: Մովսիսը բազմազան և բազմաթիվ ծառեր կան. հատկապես շատ են  
նավաշինության համար պիտանի ծառերը: (5) Սարը ձգվում է դեպի ցամափ,  
մտավորապես քան ասպարեզ և ամբողջովին հողային է, առանց ժայռերի.  
մինչդեռ ծովափնյա մասը առավել քան քան ասպարեզ տարածության վրա  
ծածկված է բազմազան սաղարթախիտ ու բարձր ծառերով: (6) Իսկ այդ վայ-  
րի մնացած մասը ընդարձակ է ու բարեբեր, և այնտեղ կան բազմամարդ շատ  
գյուղեր: Երկիրն այստեղ արտադրում է և՛ գարի, և՛ ցորեն, և՛ ամեն տեսակ  
ընդեղեն, և՛ կոբեկ, և՛ ֆունջուք, և՛ բավականաչափ թուզ, և՛ գինեկտ շատ  
խաղող, և՛ ամեն ինչ, բացի ձիթապտղից:

(7) Այսպիսին էր այդ երկիրը: Հելլենները վրան խփեցին ծովափին.  
Նրանք չցանկացան բանակել այնտեղ. ուր հնարավոր էր ֆաղափ հիմնադրել.  
Նրանց նույնիսկ թվաց, թե այստեղ գալը ոմանց կողմից հետին նպատակով  
է եղել, որպեսզի այս վայրում ֆաղափ հիմնադրեն: (8) Քանզի զինվորներից  
շատերը, վարձկան դառնալով, արշավանալով մասնակցեցին ոչ թե կարիքից  
դրդված, այլ որովհետև լսել էին Կյուրոսի առաջինության մասին: Նրանցից  
ոմանք իրենց հետ բերել էին նաև ընկերների, ուրիշները նույնիսկ իրենց  
սեփական միջոցներն էին ծախսել: Կային նաև այնպիսիները, որոնք լինել էին  
իրենց հորն ու մորը, իսկ ուրիշները լինել էին իրենց որդիներին, որպեսզի  
հարստություն կուտակելով վերադառնան նրանց մոտ. քանզի լսել էին, որ  
Կյուրոսի մոտ ծառայած ուրիշ մարդիկ շատ բարիքների տեր են դարձել:  
Ուստի և նրանք բոլորը ցանկանում էին փրկվել և Հելլադա վերադառնալ:

(9) Չորամասերի միանալու հաջորդ օրը Քսենոփոնը զոհ մատուցեց մեկ-  
նելու առնչությամբ: Քանզի անհրաժեշտ էր դուրս գալ պարեն ձեռք բերելու  
համար: Քսենոփոնը մտադրվեց նաև մեռյալներին թաղել: Եվ քանի որ զո-  
հաբերությունը բարենշան էր, նրանց հետևեցին նաև արկադիացիները և քա-  
ղեցին մահացածների մեծ մասին, որտեղ որ ամեն մեկը սպանվել էր. որով-  
հետև արդեն հինգերորդ օրն էր և հնարավոր չէր այդ դիակները տեղաշարժել.  
մյուսներին, որոնք ճանապարհին մոտ էին ընկել, բոլորին ի մի հավաքելով  
թաղեցին առկա պայմաններում հնարավոր եղած բոլոր ծիսակատարություն-  
ներով. իսկ նրանց համար, ում դիակները չկարողացան գտնել, պատրաս-  
տեցին խոշոր հուշադամբարան<sup>26</sup> և նրա վրա պսակներ դրեցին: (10) Այս բո-

լորը կատարելուց հետո նրանք վերադարձան նամբար և ընթերցում պառկե-  
ցին քնելու: Հաջորդ օրը բոլոր զինվորները հավաքվեցին ժողովի: Հավաքի  
գլխավոր նախաձեռնողներն էին վաշտապետ Ագասիաս ստյամփալացին և  
Հիերոնիմոս էլեացին, որը նույնպես վաշտապետ էր, և արկադիացի ավագ-  
ներից ոմանք ևս: (11) Որոշում կայացրին, որ եթե այսուհետև որևէ մեկը  
մտածի զորքը մասնատել, ապա նրան մահով պատժել. որոշվեց նաև բանակը  
նորից կազմավորել նախկին եղանակով, ինչ եղել էր, ու հրամանատարու-  
թյունը հանձնել նախկին զորավարներին: Սակայն Նեյրիստիոսն այդ ժամա-  
նակ արդեն մահացել էր, թեպետև դեղ էր խմել շերմախտի դեմ. նրա զորա-  
մասի հրամանատարությունը ստանձնեց Նեոն ասինեացին:

(12) Այնուհետև Քսենոփոնը հանդես գալով ասաց. «Ո՛վ զինվորներ.  
ըստ երևույթին մենք ցամափով կճանապարհվենք. քանզի նավեր չունենք.  
Իսկ անհրաժեշտ է արդեն մեկնել. որովհետև այստեղ մնալու համար մենք  
բավականաչափ պարենամթերք չունենք: Մենք,—շարունակեց նա,—զոհ կմա-  
տուցենք, իսկ դուք կպատրաստվեք կովելու առավել քան երբեք, քանի որ  
բշնամին նորից համարձակ է դարձել»: (13) Այնուհետև զորավարները զո-  
հաբերություն կատարեցին, իսկ իբրև գուշակ ներկա էր Առեֆսիոն արկա-  
դիացին. քանզի Սիրանոս ամբրակիացին արդեն փախել էր, Հերակլեյայում  
նավ վարձելով: Սակայն զոհաբերության ընթացքում նշանները բարենպաստ  
չեղան մեկնելու համար. ուստի և նրանք այդ օրը ոչինչ չձեռնարկեցին: (14)  
Եվ ոմանք համարձակվեցին ասել, թե Քսենոփոնն իբր ցանկանալով այստեղ  
ֆաղափ հիմնել, համոզել է գուշակին ասելու, որ նշանները բարենպաստ չեն  
մեկնելու համար: (15) Այնժամ Քսենոփոնը ֆարոզի միջոցով հայտարարեց.  
թե հաջորդ օրը բոլոր ցանկացողները ներկա լինեն զոհաբերությանը, և եթե  
գուշակողներ կան, ապա հրահանգեց նրանց ևս ներկա լինել, նշաններին  
միասին հետևելու համար. դրանից հետո նա զոհ մատուցեց. և շատ մար-  
տիկներ ներկա էին: (16) Երրորդ անգամ, դարձյալ մեկնելու կապակցու-  
թյամբ, զոհ մատուցելիս նշանները բարենպաստ չեղան: Այդ պատճառով  
զինվորները վիստվեցին. քանզի պարենամթերքը, որ իրենց հետ բերել էին  
այստեղ, վերջանում էր և ոչ մի տեղից հնարավոր չէր գտնել:

(17) Այդ պատճառով նորից հավաքվեցին. ու Քսենոփոնը դարձյալ նրանց  
այսպես ասաց. «Ո՛վ զինվորներ. ինչպես տեսնում եք, մեկնելու առնչությամբ  
նշանները բարենպաստ չեն ստացվում. իսկ ևս գիտեմ, որ դուք պարենի  
անհրաժեշտություն եք զգում. ուստի թվում է ինձ, որ մենք պետք է զոհեր  
մատուցենք այս հարցի կապակցությամբ»: Այնժամ ինչ-որ մեկը հանդես գա-  
լով ասաց. «Եվ իրավացի կերպով զոհաբերումը բարենպաստ չէր լինում.

ֆանգի ևս երեկ նավով այստեղ ժամանած մեկից պատահաբար լսեցի, որ Բյուզանդիոնի կառավարիչ Կլեանդրոսը պետք է այստեղ ժամանի նավերով ու տրիերաներով»: (19) Ուստի և բոլոր միաձայն որոշեցին սպասել. բայց անհրաժեշտ էր գնալ պարեն ձեռք բերելու համար: Եվ այդ նպատակով դարձյալ երիցս զոհ մատուցվեց և ամեն անգամ նշաններ աննպաստ էին: Իսկ զինվորներն արդեն գալիս էին Քսենոփոնի վրանը և հայտնում, թե պարեն չունեն. բայց նա պատասխանեց, որ ոչ մի տեղ չի առաջնորդի իրենց, քանի դեռ նշաններն աննպաստ են:

(20) Հետևյալ օրը դարձյալ զոհաբերություն կատարվեց և համարյա ամբողջ գործը շրջապատել էր զոհաբերվելիք անասուններին, քանի որ բոլորը շահագրգռված էին. բայց զոհերը բավարար չեղան: Զորավարները բանակը շտաբան արշավանքի. այլ հավաքեցին ընդհանուր ժողովի: (21) Ու Քսենոփոնը խոսեց այսպես. «Հավանական է, որ թշնամիները ի մի են հավաքվել և մենք պետք է նրանց հետ կռվի բռնվենք. ու երե մենք գումակը թողնենք անմատչելի վայրում և պատրաստ սպասենք կռվի գնալու, գուցե մեր զոհաբերությունը հաջող ստացվի»: (22) Այս լսելով զինվորներն աղաղակեցին, թե ոչինչ պետք չէ տանել անմատչելի վայր, այլ անհրաժեշտ է շուտափույթ զոհաբերություն կատարել: Իսկ ոչխարներ արդեն բոլորովին չունեին, բայց սայլին լծած եզ գտնելով. այն զոհեցին. և Քսենոփոնը խնդրեց Կլեանդրոսը ևս ուշադիր հետևել զոհաբերմանը, այն հույսով, թե գուցե նա կարողանար որևէ բարենպաստ նշան նկատել. բայց դարձյալ ոչինչ չստացվեց:

(23) Իսկ Նեոնը, որը Խելիսափոսի փոխարեն գորավար էր դարձել, նկատելով, որ զինվորները ծանր գրկանքներ են կրում, ցանկացավ ընդառաջել նրանց: Նա գաավ հերակլեյացի ինչ-որ մարդու, որն ասում էր, թե իբր իրեն հայտնի են մոտակայքում գտնվող գյուղեր, որտեղից հնարավոր է պարենամքեր ձեռք բերել ու հայտարարեց, որ պարենամքեր ձեռք բերել ցանկացողները կարող են գնալ նրա առաջնորդությամբ: Ուստի տեղերով, տիրելով, պարկերով և այլ ամաններով դուրս եկան շուրջ երկու հազար մարդ: (24) Բայց երբ հասան գյուղերը և ցրվեցին ավար ձեռք բերելու համար, նրանց վրա հանկարծակի հարձակվեցին նախ Փառնարագոսի<sup>27</sup> հեծյալները, որոնք եկել էին օգնելու բյուզանդացիներին, որպեսզի նրանց հետ միասին, հնարավորության դեպքում, խանգարեն հելլենների մուտքը Փոյուգիա. այս հեծյալներին հաջողվեց սպանել ոչ պակաս քան հինգ հարյուր հելլենների. մնացյալները փախան դեպի լեռ: (25) Այնուհետև ազատվածներից մեկը այս եղելությունը հաղորդեց նամբարում գտնվողներին: Եվ Քսենոփոնը, քանի որ այդ օրը զոհաբերության նշանները բարենպաստ չէին, վերցրեց սայլին

լծված մի եզ, քանզի զոհելու ոչ մի ուրիշ անասուն չէր մնացել, մորթեց այն և շտապեց օգնության, իր հետ վերցնելով նաև բարո նրանց, որոնք երեսուն տարեկանից ցածր էին: (26) Այսպես, փրկվածներին վերցնելով իրենց հետ, վերադարձան բանակատեղի: Արդեն արևը մայր էր մտնում, և հելլենները մեծապես հուսահատված պատրաստվում էին ընթրելու. երբ հանկարծ խիտ մալուխների միջից բյուզանդացիներից ոման հարձակվեցին հելլենների առջավոր պահակակետերի վրա և ոմանց սպանեցին, իսկ մյուսներին հալածեցին մինչև բանակատեղի: (27) Աղաղակ բարձրացավ, ու հելլենները վազեցին դեպի զենքերը: Եվ նրանց վտանգավոր քվայք թշնամուն հալածելը և նամբարը տեղաշարժելը, քանի որ տեղանքը ծածկված էր խիտ մացառներով. ուստի և նրանք, անհրաժեշտ պահակակետեր նշանակելուց հետո, սպառազինված գիշերեցին:

V. Եվ գիշերն այդպես անցկացրին. իսկ առավոտյան զորավարները բանակն առաջնորդեցին դեպի անմատչելի վայրը. և զինվորները հետևեցին, իրենց հետ վերցնելով զենքերն ու հանդերձանքը: Նախանաչի պահից առաջ նրանք խրամատ փորեցին անմատչելի վայրի միակ մուտքի առաջ<sup>28</sup>. և այն պատենեցին ամբողջությամբ, թողնելով միայն երեք դարբաս: Իսկ Հերակլեյայից մի նավ ժամանեց, որը բերեց զարու այլուր և մորթելու անասուններ և զինի: Վաղ առավոտյան վեր կենալով, Քսենոփոնը զոհ մատուցեց նախարհվելու առնչությամբ և նշանները առաջին իսկ զոհաբերության ժամանակ բարենպաստ ստացվեցին: Իսկ երբ զոհաբերությունն արդեն ավարտվում էր, գուշակ Առեֆսիոն պառասիացին բարեգուշակ արժիվ նկատեց և խորհուրդ տվեց Քսենոփոնին զորքն առաջնորդելու: (3) Եվ անցնելով խրամատը, զենքերը դրեցին գետին և փարոզների միջոցով զինվորներին կարգադրվեց նախանաչելուց հետո զենքը ձեռքներին առաջ շարժվել, իսկ ամբոխին ու ստրուկներին թողնել տեղում: (4) Այնժամ բոլորը դուրս եկան, բացի Նեոնից, քանզի որոշել էին, որ ավելի լավ է նրան թողնել նամբարում, այնտեղ գտնվող գույքը պահպանելու համար: Բայց երբ վաշտապետներն ու զինվորները, ամաչելով գնացող զինվորներից ու նրանցից ետ շմեալու համար, հեռացան նրանից, ապա ստիպված եղան նրա մոտ թողնելու ֆառասունհինգ տարին անցած զինվորներին: Ու նրանք մնացին, իսկ մյուսները գնացին առաջ: (5) Դեռևս տասնհինգ ասպարեզ շանցած, նրանք արդեն սկսեցին պատահել սպանվածների. առաջին պատահած դիակների մոտ զորաքևից վերջապահներ կազմեցին, որոնք թաղեցին զորաքևի հայտնաբերած բոլոր սպանվածներին: (6) Առաջին հայտնաբերած դիակները թաղելուց հետո. գործը շարունակեց առաջ գնալ. իր նախապահին դարձյալ վերջապահ խմբեր կազմելով այնտեղ, որտեղ նորից անբաղ դիակներ էին հանդիպում. այսպիսով.

հեղինակները հողին հանձնեցին անբաղ մնացածներին: Իսկ երբ հասան գյուղերից սկիզբ առնող նաեպարհին, որտեղ մեծ թվով ընկածներ պատահեցին, բոլորին մի տեղ հավաքեցին ու բաղեցին:

(7) Արդեն միջօրեն անցել էր, երբ զորքը գյուղերից այն կողմ առաջ ընթանալիս որպես պարենամթերք էր վերցնում այն ամենը, ինչ պատահում էր ֆալանգսի ճանապարհին, և ահա հանկարծ նկատեցին թշնամիներին, որոնք իշնում էին հեղինակների դիմաց գտնվող բլուրներից. նրանք ևս դասավորված էին ըստ ֆալանգսի՝ բազմաբանակ հեծյալներ և հետևակ զորք. այդ Սպիր-րիդատեսն ու Հոսթիլեսն էին իրենց զորքերով, ուղարկված Փառնաբագասի կողմից: (8) Երբ թշնամիները նկատեցին հեղինակներին, նրանք կանգ առան մտավորապես տասնհինգ ասպարեզ հեռավորության վրա: Այնժամ հեղինակների գուշակ Առեփոնը զոհ մատուցեց և առաջին իսկ նշանները բարենպաստ եղան: (9) Ուստի և Քսենոփոնը այսպես խոսեց. «Ձորավարեն՛ր. ինձ թվում է, թե պետք է մեր ֆալանգսի ետևում պահեստային վաշտեր թողնենք<sup>29</sup>, որպեսզի անհրաժեշտության դեպքում պետք եղած կետում օգնության հասնեն ֆալանգսին և որպես ռազմաշարժով դասավորված թարմ ուժեր նետվեն անկարգության մատնված թշնամու վրա»: Բոլորը համաձայնվեցին նրա առաջարկին: (10) «Ուրեմն,—չարունակեց Քսենոփոնը,—այժմ դուք զորքը տարեք թշնամու դեմ, որպեսզի տեղում կանգնած չմնանք, քանի որ թշնամին մեզ նկատել է, ու մենք ևս տեսել ենք թշնամուն. իսկ ևս կառաջնորդեմ վերջին վաշտերը, նրանց տեղադրելով այնտեղ, որտեղ դուք ինքներդ հարմար գտնեք»: (11) Մրանից հետո զորավարները հանդարտորեն զորքը տարան առաջ, իսկ Քսենոփոնը անչատեց վերջին երեք շարքը, յուրաքանչյուրում մոտ երկու հարյուր մարդ, և պատվիրեց դրանցից մեկին հետևել աջ թևին, շուրջ մեկ պլեթրոն հեռավորությամբ. այս շարքն առաջնորդում էր Սամուլաս աֆայացին: Երկրորդ շարքը հրահանգ ստացավ հետևել կենտրոնական զորամասին. այս շարքն առաջնորդում էր Պյուտիաս արկադիացին: Մյուս շարքը դասավորեց ձախ թևի թիկունքում. սրան առաջնորդում էր Փրասիաս արքեպիսկոպոսը:

(12) Առաջ ընթանալիս, երբ առաջապահ զորքերը հասան մի խոշոր և դժվարամատույց խորխորատ, որը մացառներով էր պատած, նրանք կանգ առան, շիմանալով ինչ անել՝ խորխորատն անցնել, թե՛ ոչ: Եվ կանչեցին զորավարներին ու վաշտապետներին, որպեսզի սրանք մոտ գան առաջապահ զորքին: (13) Ու Քսենոփոնը զարմացավ, թե ինչու է ընթացքը կանգ առել. բայց լսելով կանչողներին, անմիջապես շտապեց այնտեղ: Երբ նրանք հավաքվեցին, Սոփայնեստոսը, զորավարներից ավագագույնը, ասաց, թե շարժի

նույնիսկ խորհրդակցել, թե արդյո՞ք պետք է անցնել այսպիսի խորխորատ:

(14) Քսենոփոնը շտապեց նրան ընդհատել և ասաց. «Դուք գիտեք, ո՞վ զինվորներ, որ ես երբեք իմ կամով ձեզ որևէ վտանգի չեմ ենթարկել. քանզի ես գիտեմ, որ դուք ոչ թե ֆաշտություն ցուցաբերելու անհրաժեշտությունն ունեք, այլ փրկվելու: (15) Ահա թե այժմ դրությունը ինչպիսին է. մենք հնարավորություն չունենք այստեղից առանց կոպի հեռանալու. քանզի եթե մենք չգնանք թշնամիների վրա, ապա նրանք մեր մեկնելու ժամանակ մեզ կհետևեն ու կհարձակվեն մեզ վրա: (16) Ուստի և մտածեցեք, թե ո՞րն է ավելի լավ. գնալ սրանց դեմ զենքերը առաջ պահած, թե՛ ետևից եկող թշնամու առաջ զենքերը թիկունքին պահած: (17) Իմացեք նաև, որ թշնամու առաջ նահանջելը վայել չէ որևէ ֆաշի, իսկ թշնամուն հալածելը նույնիսկ երկշտաներին ֆաշտություն է ներշնչում: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես կնախընտրեմ զորքի կիսով գնալ հարձակման, քան կրկնակի զորքով նահանջել: Ես գիտեմ նաև, որ եթե մենք շարժվենք նրանց վրա, ապա դուք ևս համոզված եք, որ նրանք չեն դիմանա մեր հարձակմանը. իսկ մեր նահանջի դեպքում մենք գիտենք, որ նրանք կհամարձակվեն մեզ հալածելու: (18) Եվ մի՛թե ավելի լավ չէ կովելուց առաջ գրավել ու անցնել դժվարամատույց խորխորատը և այն թողնել մեր ետևում: Եվ ես կցանկանայի, որ թշնամու համար բոլոր վայրերը դյուրանցանելի թվային նահանջի համար. իսկ այսպիսի տեղանք մեզ պետք է հարկադրի մտածել, որ առանց հաղթանակի փրկություն չկա: (19) Ես զարմանում եմ, որ կան մարդիկ, որոնք այս խորխորատը համարում են ավելի ահավոր, քան մինչև հիմա մեր անցած մյուս վայրերը: Ինչպե՞ս կարելի է անցնել դաշտավայրը, առանց հեծյալներին հաղթելու. և ինչպե՞ս կարող ենք վերադառնալ մեր անցած լեռներով, եթե այսֆան մեծ թվով պլեթաստներ հետևեն մեզ<sup>30</sup>: (20) Եվ եթե նույնիսկ փրկվելով մենք հասնենք ծովը, ապա ինչպիսի՞ խոշոր խորխորատ է Պոնտոսը: Այնտեղ ոչ նավեր կան մեզ փոխադրելու համար, ոչ էլ հաց, որով կարողանայինք սնվել այնտեղ մնալու դեպքում. և ինչքան շուտ այնտեղ հասնենք, այնքան շուտ նորից պետք է արշավանքի դուրս գանք պարենամթերք հայթայթելու համար: (21) Մի՛թե ավելի լավ չէ այժմ նախանաշելուց հետո կովենք, քան վաղն առանց նախանաշի: Ռազմիկեն՛ր. զոհաբերությունը բարենպաստ եղավ, հավերքը հաջողություն են կանխագուշակում և նշանները լավագույն են. գնանք թրշնամու վրա: Մեզ ամբողջությամբ տեսնելուց հետո, նրանք արդեն ի վիճակի չեն լինի հանույժով ընթրելու և ոչ էլ իրենց ցանկացած վայրում վրան խփելու»:

(22) Այնժամ վաշտապետները խնդրեցին նրան առաջնորդել զորքը, և ոչ

ո՛ր շահականանց: Ուստի և նա առաջ անցավ հրահանգելով, որ ամեն մեկն անցնի խորխորատն այնտեղով. որտեղ որ պատահարս կանգնած է. Բանգի նա համոզված էր, որ գորհն այսպես հո՛ծ բազմությամբ շարժվելով, ավելի շատ կանցնի մյուս կողմը. Բան էրև շարժվի խորխորատի վրա ձգված կամբռչի վրայով: (23) Անցումից հետո Քսենոփոնը շարժերի առաջով անցնելիս այսպես էր ասում. «Ռազմիկնե՛ր. հիշեցե՛ք, թե ասավածների օգնությամբ դուք ինչպիսի նակատամարտերում ե՛ք հաղթել, Երբ գնացել ե՛ք թշնամու դեմ, և ինչպիսի փորձություն ե՛ն կրում թշնամու առջևից փախչողները. մի մոռացե՛ք նաև այն, որ մենք Հելլադայի դուռն ենք գտնվում: (24) Արդ՝ հետևեցե՛ք առաջնորդ Հերակլեսին և հականն հանվանն կոչելով իրար՝ Բաշալերեցե՛ք: Այժմ ձեզանից ամեն մեկի համար, անկասկած, հանելի կլիճի և՛ խոսքով, և՛ գործով դրսևորել իր Բաշությունը և դրանով իսկ բարի հիշատակ թողնել այն մարդկանց մոտ, որոնց կարծիքը հանելի է իր համար»:

(25) Այս խոսքերը նա ասում էր շարժերի առաջով հեծյալ անցնելիս, և միաժամանակ առաջնորդում էր գորհը. Երկու թևերին տեղադրելով պելտաստներին, նա շարժվեց թշնամու վրա: Հրամայեց գորհին տեղերը պահել աչ ուսին, մինչև շեփորը կհնչեր. այնուհետև տեղերը հարձակվան համար պատրաստ պահելով առաջ գնալ Բայլով և ոչ մի դեպքում չվազել: Այնուհետև շարժերի միջով անցավ «Ձևա Փրկիչ, Հերակլես Առաջնորդ» կարգախոսը: Թշնամիները մնացին իրենց տեղում, կարծելով, թե այն նպատակով է: (26) Երբ մոտեցան, հելլեն պելտաստները ռազմական աղաղակներով՝ վազեցին թշնամու վրա առանց որևէ մեկից հրաման ստանալու. իսկ թշնամիները, թե՛ հեծյալները, թե՛ բյուրանիսցիների հո՛ծ բազմությունը նեավեցին նրանց ընդատաչ և ետ մղեցին պելտաստներին: (27) Բայց երբ հուպիտոսների ֆալանգսը արագ երթով դիմավորեց նրանց և միաժամանակ հնչեց շեփորը, և հելլենները պե՛տև երգեցին ու ռազմատենչ աղաղակներով առաջ անցան և սկսեցին տեղերը նետել, այնժամ թշնամին շփմացավ ու նահանջեց: (28) Եվ Տիմասթոնն ու հեծյալները, հալածելով թշնամուն, սպանեցին այնքան մարդ, ինչքան կարող էին, այդքան փոքրաքիվ լինելով հանդերձ: Թշնամու ձախքեր, որի դիմաց հելլենների հեծյալներն էին, իսկույն ցրվեց. իսկ աչ թևը, որը ուժեղ հետապնդման շեր ենթարկվել, կենտրոնացավ մի բլրի վրա: (29) Երբ հելլենները տեսան, որ դրանք մնում են իրենց տեղում, որոշեցին, որ ավելի հեշտ և անվտանգ է անհապաղ հարձակվել նրանց վրա: Ուստի պե՛տև երգելով նրանք իսկույն հարձակվեցին. իսկ թշնամիները շփմացան: Այնժամ պելտաստները հալածեցին նրանց, մինչև որ աչ թևը ցրվեց. Բայց թշնամուց էլերը սպանվեցին, Բանգի հեծյալները մեծաքիվ լինելով, Երկյուղ էին ներ-

շնում: (30) Իսկ Երբ հելլենները նկատեցին դեռևս անխախտ շարժերով կանգնած Փառնարագոսի հեծելագործը և նրա շուրջը համախմբվող բյուրանիական հեծյալներին, որոնք ինչ-որ բլրից հետևում էին կատարվող դեպքերին. ապա թեկուզև հոգնած էին. Բայց որոշեցին նրանց վրա ևս առաջվել ամբողջ թափով, որպեսզի ժամանակ չտան նրանց հանգստանալու և նորից համարձակություն ձեռք բերելու: Ուստի և մարտաշարժերով շարժվեցին առաջ: (31) Այնժամ թշնամու հեծյալները փախուստի դիմեցին բլրալանջն ի վար, ասես հեծյալների կողմից էին հալածվում. և նրանց պատսպարեց մի խորխորատ, որը հելլենները չէին նկատել. ուստի և դադարեցրին հետապնդումը. Բանգի արդեն օրվա ուշ ժամն էր: (32) Ու վերադառնալով այն վայրը, որտեղ առաջին ընդհարումը տեղի ունեցավ, նրանք հաղթարձան կանգնեցրին ու արևամուտին հասան ծովափ, որովհետև հեռավորությունը մինչև նամբար շուրջ վաթսուն ասպարեց էր:

VI. Այնուհետև թշնամիներն սկսեցին զբաղվել իրենց գործերով ու ընդոծիներին<sup>32</sup> և ունեցվածքը տարան ինչքան կարող էին ավելի հեռու: Իսկ հելլենները սպասում էին Կլեանդրոսին, որը պետք է հայտնվեր տրիերաներով ու նավերով. և ամեն օր, առանց վտանգի ենթարկվելու, նամբարից դուրս էին գալիս գրաստների և սարուկների հետ միասին և հայրաքյում ցորեն ու գարի, զինի, բնդեղեն, կարեկ, բուրգ. Բանգի այդ երկիրը լի էր բոլոր բարիքներով. բացի ձիաբազուկից: (2) Ու երբ գորհը մնում էր տեղում հանգստանալու, ցանկացողները կարող էին ավարի համար արշավի դուրս գալ և ձեռք բերածը յուրաքանչյուրը կարող էր վերցնել իր համար. Բայց երբ ամբողջ գորհն էր դուրս գալիս ավարի. այդ դեպքում նույնիսկ առանձին զինվորներին ձեռք բերածը համարվում էր բնդեանորի ունեցվածք: (3) Եվ այդ ժամանակ ամեն ինչի առատություն էր. Բանգի բոլոր կողմերից հելլենական շատ Բաղաճներ պարենամբերի շուկա էին կազմակերպում և մոտով անցնող նավերը հոժարությամբ էին ամեն ինչ հասցնում փոխ, լսելով, որ այստեղ իրք թե Բաղաճ է հիմնվում և հարմար նավահանգիստ կա: (4) Նույնիսկ մտակալում սպրող թշնամիները, որոնք լսել էին, թե Քսենոփոնը այդ վայրում ցանկանում է Բաղաճ հիմնել, դեսպաններ ուղարկեցին նրա մոտ, հարցնելու համար, թե ի՞նչ կարող էին իրենք անել. որպեսզի նրա բարեկամները դատան: Իսկ Քսենոփոնը դեսպաններին ներկայացնում էր զինվորներին:

(5) Մինչ այդ ժամանակ նաև Կլեանդրոսը, բերելով երկու տրիերա, Բայց և ոչ մի նավ: Ու պատահեց, որ նրա ժամանման պահին գորհը նամբարից դուրս էր եկել, իսկ զինվորներից ոմանք գնացել էին դեպի լեռը, ավար ձեռք բերելու. նրանք վերադարձան բազմաքիվ ոչխարներով: Երկյուղ կրելով, որ



այդ բոլոր կվերցնեն իրենցից, նրանք դիմեցին Դեֆսիպոսին, որը հիսուն-  
 քիսնի նավով քաֆուն փախել էր Տրապեզունտից, ու խնդրեցին, որ պահպա-  
 նի իրենց ոչխարներին, մի մասը վերցնի իր համար, իսկ մյուսները էտ վե-  
 րադարձնի իրենց: (6) Դեֆսիպոսն իսկույն հետո էլ շուրջը կանգնած  
 զինվորներին, որոնք ասում էին, թե այդ բոլորը ընդհանուրին է պատկանում.  
 գալով Կլեանդրոսի մոտ, նա ասաց նրան, թե զինվորները ցանկանում են  
 հափշտակել ոչխարները: Իսկ Կլեանդրոսը պատվիրեց հափշտակողին ան-  
 միջապես բերել իր մոտ: (7) Ու Դեֆսիպոսը բռնելով մի զինվորի, բերեց.  
 բայց Ագասիասը պատահելով նրան, էտ վերցրեց զինվորին, ֆանգի տար-  
 վողն իր վաշտից էր: Իսկ այնտեղ ներկա գտնվող մյուս զինվորներն սկսեցին  
 ֆարկոծել Դեֆսիպոսին, նրան անվանելով դավանան: Վախեցան նաև տրիե-  
 րայի նավագներից շատերը ու փախան դեպի ծով. փախավ նաև Կլեանդրոսը:  
 (8) Մինչ այդ Քսենոփոնը և մյուս զորավարներն արգելում էին նրանց և  
 ասում Կլեանդրոսին, թե պատահարը ոչինչ է և կատարված դեպքերի պատ-  
 ճառը գործի ընդունած որոշումն է: (9) Իսկ Կլեանդրոսը մասամբ զբոսաբերելով  
 Դեֆսիպոսի կողմից, մասամբ էլ գայրանալով իր երկշտուրքյան վրա, հայ-  
 տարարեց, թե ինքը կմեկնի և կպատվիրի բոլոր ֆաղաֆներին, որպեսզի որևէ  
 մեկը չընդունի նրանց, ֆանի որ նրանք թշնամիներ են: Այդ ժամանակ լա-  
 կեղեմոնացիներն իշխում էին համայն հելլենների վրա<sup>33</sup>: (10) Այնժամ հել-  
 լենները տեսնելով, որ գործը վատ ընթացք է ստանում, խնդրեցին Կլեանդ-  
 րոսին շիրագործել իր սպանոնալիքը: Բայց նա պատասխանեց, թե այլ կերպ  
 չի կարող վարվել, եթե իրեն չհայտնեն առաջին ֆարկոծողին և նրան, ով  
 Դեֆսիպոսի ձեռքից խլեց հափշտակիչ զինվորին: (11) Այն մարդը, որի  
 հանձնումը նա պահանջեց, Ագասիասն էր, Քսենոփոնի մտերիմ ընկերը. և  
 այդ էր պատճառը, որ Դեֆսիպոսը զբարտուում էր նրան:

Այնժամ, ստեղծված ծանր դրության պատճառով, հրամանատարները  
 զորաժողով գումարեցին: Ու նրանցից ոմանք էին նշանակություն էին տալիս  
 Կլեանդրոսին, մինչդեռ Քսենոփոնն այս դեպքը աննշան չհամարելով, հանդես  
 եկավ ու ասաց. (12) «Ո՛վ զինվորներ. ինձ թվում է, թե կատարվածը աննշան  
 բան չէ, եթե Կլեանդրոսը մեր նկատմամբ այդպիսի մտադրություն ունենա-  
 լով թողնի հեռանա, ինչպես ինքն ասաց: Քանզի հելլենական ֆաղաֆներն  
 այստեղ մոտիկ են, իսկ Հելլադայում գերիշխում են լակեղեմոնացիները և  
 ամեն մի լակեղեմոնացի կարող է որևէ ֆաղաֆում իր ցանկացածը կատարել:  
 (13) Ու եթե այս մարդը մեզ չընդունի Բյուզանդիոն, այնուհետև մյուս կառա-  
 վարիչներին ևս պատվիրի մեզ չընդունել իրենց ֆաղաֆները, որպես լակեղե-  
 մոնացիների հանդեպ անհնազանդ գտնվողների և օրենքը ռոնահարողների,

և, վերջապես, եթե մեր այս արաբների մասին լուրը հասնի ծովակալ Անաֆ-  
 սիբիոսին, ապա մեզ համար դժվար կլինի և՛ այստեղ մնալը, և՛ նավերով  
 հեռանալը. ֆանգի այժմ և՛ ցամափի, և՛ ծովի վրա լակեղեմոնացիներն են  
 իշխում: (14) Ու ոչ մի դեպքում մենք չենք կարող թույլ տալ, որպեսզի մե-  
 զանից մեկի կամ երկուսի պատճառով մնացյալ բոլորը զբկվեն Հելլադայից,  
 այլ պետք է հնազանդվենք լակեղեմոնացիների հրամաններին. ֆանգի այն  
 ֆաղաֆները, որտեղից մենք մեկնել ենք, նույնպես ենթարկվում են նրանց:  
 (15) Ինչ վերաբերում է ինձ, ֆանի որ ես լսեցի, թե Դեֆսիպոսը հայտնել է  
 Կլեանդրոսին, որ իբր Ագասիասն այդ բոլորը շէր անի առանց իմ հրամանի,  
 ապա ես կվերացնեմ և՛ Ագասիասի, և՛ ձեր վրայից ամեն մի մեղադրանք,  
 եթե ինքը Ագասիասը հայտարարի, որ ես եմ եղել այս բոլորի պատճառը, և  
 եթե ես եղել եմ ֆարկոծման կամ որևէ այլ բռնության նախաձեռնողը, ապա  
 ես ինքս կդատապարտեմ ինձ ամենածանր պատժի, և պատրաստ եմ կրելու  
 այդ պատիժը: (16) Ես այն կարծիքին եմ նաև, որ եթե Դեֆսիպոսը որևէ  
 մեկ ուրիշին ևս մեղադրի, ապա նրա դատավիճակը պետք է կայացնի Կլեանդ-  
 րոսը. միայն այդպես դուր կարող եմ ազատվել մեղադրանքներից: Իսկ ներ-  
 կա պայմաններում շատ ծանր կլինի, եթե մենք, որ երթադրում ենք, թե Հել-  
 լադայում գտվեստի ու պատվի կարծանանակ, այդ բոլորի փոխարեն նույ-  
 նիսկ հավասար իրավունքներ չունենանք մյուսների հետ և չկարողանանք  
 մտաք գործել հելլենական ֆաղաֆները»:

(17) Այնուհետև Ագասիասը հանդես գալով ասաց. «Ո՛վ զինվորներ. ես  
 երդվում եմ աստվածների և աստվածուհիների առաջ, որ իրոք ոչ Քսենոփո-  
 նը, ոչ իսկ ձեզանից որևէ մեկ ուրիշը չպատվիրեց ինձ ազատել այդ մարդուն.  
 երբ ես տեսա, որ իմ վաշտի լավ զինվորներից մեկին տանում է Դեֆսիպ-  
 ոսը, որին դուր դավանանք եմ համարում, այդ ինձ գայրացուցիչ թվաց. և,  
 խոստովանում եմ, ես ազատեցի նրան: (18) Բայց դուր ինձ մի՛ մատնեք. ես  
 ինքս, ինչպես Քսենոփոնն առաջարկում է, ինձ կհանձնեմ Կլեանդրոսին, որ-  
 պեսզի վարվի ինչպես կամենա. այս դեպքի պատճառով դուր մի՛ կովեք լա-  
 կեղեմոնացիների դեմ, այլ ամեն մեկը ապահով վերադարձեք այնտեղ, որ  
 ցանկանում եք: Ինձ հետ միասին Կլեանդրոսի մոտ ուղարկեցեք նաև ձեր մի-  
 ջից ընտրված մի ֆանի մարդու, որոնք, եթե ես որևէ բան բաց թողնեմ, խո-  
 սեն ու գործեն իմ փոխարեն»:

(19) Այնժամ գործը թույլատրեց նրան, որպեսզի ինքն ընտրի իր ցան-  
 կացած ուղեկիցներին: Եվ նա ընտրեց զորավարներին: Այնուհետև Կլեանդ-  
 րոսի մոտ գնացին Ագասիասը և զորավարները և այն զինվորը, որին Ագա-  
 սիասն ազատել էր: (20) Ու զորավարներն այսպես խոսեցին. «Մեզ գործն է

ուղարկել ֆեզ մոտ, ո՛վ Կլեանդրոս, և խնդրում է ֆեզանից. երբ դու բոլորիս մեղավոր ես համարում, ապա ինձ դատավոր եղի՛ր ու վճռի՛ր ինչպես ցանկանում ես. իսկ երբ դու մեղադրում ես միայն մեկ կամ երկու կամ մի քանի մարդու, ապա զորքը պահանջում է, որ նրանք կամովին հանձնվեն քո դատաստանին: Երբ մեզանից որևէ մեկն է մեղավոր, ապա մենք քո առաջ կանգնած ենք. իսկ երբ մեկ ուրիշն է մեղավոր, ապա հայտնի՛ր մեզ. Բանգի մեզ ենթարկվողներից և ոչ մեկը չի համարձակվի շինազանդվել: (21) Այնուհետև Ագասիասը առաջ գալով ասաց. «Ո՛վ Կլեանդրոս. ես եմ այն մարդը, որ Դեֆսիպպոսի ձեռքից ազատեցի նրա տարած մարդուն և պատվիրեցի ձեռքի Դեֆսիպպոսին: (22) Ես գիտեմ, որ այս զինվորը առափնի մարդ է. իսկ Դեֆսիպպոսի մասին գիտեմ. որ նա զորքի կողմից ընտրվելով հրամանատար հիսունօրիանի նավի, որը վերցրել էինք տրապեզունտցիներից, որպեսզի դրանով նավեր հավաքեինք և կարողանայինք ապահով վերադառնալ, վերցրեց այն ու քաֆուն փախավ, դրանով իսկ դավանանելով այն զինվորներին, որոնց հետ ինքը փրկվել էր: (23) Այդպիսով, մենք և՛ տրապեզունտցիներին զրկեցինք հիսունօրիանի ռազմանավից, և՛ նրանց առաջ վատ համբավ ձեռք բերեցինք Դեֆսիպպոսի պատճառով: Քացի այդ, մենք ինքներս ևս այդ պատճառով կորստի ենք մատնվում: Քանզի նա ևս, ինչպես մենք բոլորս, իմանում էր, որ անհնար էր հետիոտն վերադառնալիս անցնել գետերը և ապահովությամբ հասնել Հելլադա: Քանի որ նա այդպիսին էր, ուստի և ես ազատեցի նրա ձեռքից այս զինվորին: (24) Քայց երբ զինվորին տանողը դու լինեիր, կամ քո մարդկանցից մեկը, և ոչ թե գաղտագողի մեզանից փախածներից մեկը, ապա լավ իմացիր, որ ես նման բան չեմ անի: Ուստի համոզված եղի՛ր, որ երբ այժմ դու ինձ մահապատժի ենթարկես, ապա վախկոտ ու նենգ մի մարդու փոխարեն սպանած կլինես ազնիվ մարդու»:

(25) Այս լսելով, Կլեանդրոսն ասաց, թե ինքը չի արդարացնում Դեֆսիպպոսին, երբ նա իրոք այդպես է վարվել. «այսուհանդերձ,—չարունակեց նա,—Դեֆսիպպոսը երբ նույնիսկ ծայրագույն աստիճանի նենգ մարդ լինի, ապա դարձյալ, իմ կարծիքով, նա չպետք է բռնության ենթարկվի, այլ ատյանի առաջ կանգնի, ինչպես դուք այժմ պահանջում եք, և դատվի: (26) Իսկ այժմ հեռացե՛ք, այս մարդուն թողնելով ինձ մոտ. և երբ ես պահանջեմ, ներկայացե՛ք ատյանի: Ես ոչ զորքին եմ մեղադրում, ոչ իսկ որևէ մեկ ուրիշին. քանի որ այս մարդն ինքը խոստովանեց, որ ազատել է զինվորին»։ (27) Այնժամ նա, ում Ագասիասը փրկել էր. ասաց. «Ո՛վ Կլեանդրոս. երբ կարծում ես, որ ինձ բռնել են որպես հանցագործի. ապա իմացիր, թե ես ոչ ոքի չեմ ձեռք բերել և չեմ փրկածել, այլ ասել եմ, որ ոչխարներն ընդհանուրին են պատկա-

նում. Բանգի զինվորները որոշում են ընդունել, որ զորքի ընդհանուր առաջվի ժամանակ որևէ մեկի ձեռք բերած ավարը պատկանում է ընդհանուրին: (28) Այդպես ասացի. և այս խոսքիս համար Դեֆսիպպոսը վերցրեց ինձ ու տարավ, որպեսզի որևէ մեկ ուրիշը չհամարձակվի խոսել. իսկ ինքը, հակառակ պայմանի, ցանկացավ հափշտակողների օգտին ավարը պահպանելով, դրա մի մասը յուրացնել: Կլեանդրոսը նրան այսպես պատասխանեց. «երբ իրոք դու.....<sup>34</sup>, ապա մեա, որպեսզի քո մասին ևս խորհրդակցենք»:

(29) Այնուհետև Կլեանդրոսն ու նրա հետ եղողները նստեցին նախանաչելու: Իսկ Քսենոփոնը զորաժողով գումարեց և խորհուրդ տվեց դեսպաններ ուղարկել Կլեանդրոսի մոտ, որպեսզի միջնորդեն հօգուտ (մեղադրվող) մարդկանց: (30) Այնժամ նրանք որոշեցին ուղարկել զորավարների և վաշտապետների և Դրակոնտիոս սպարտացուն և ուրիշների, որոնց ընդունակ էին համարում ամեն կերպ խնդրելու Կլեանդրոսին, որպեսզի ազատ արձակի այդ երկու մարդկանց: (31) Գալով Կլեանդրոսի մոտ, Քսենոփոնն ասաց. «Ո՛վ Կլեանդրոս. այդ մարդիկ քո տրամադրության տակ են և զորքը քեզ իրավունք տվեց քո կամքի համաձայն վարվել թե՛ այդ երկուսի, թե՛ ամբողջ զորքի հետ: Իսկ այժմ ջերմագին խնդրում են, որպեսզի ետ հանձնես երկու մարդկանց ու նրանց կյանքը չկործանես. Բանգի անցյալում նրանք շատ բան են արել զորքի համար: (32) Եթե քո կողմից նման շնորհի՛ք արժանանան, դրա փոխարեն խոստանում են, երբ ինձ ցանկանաս առաջնորդել իրենց, և եթե աստվածները ողորմած լինեն, ցույց տալ ֆեզ, որ ոչ միայն համեստ են, այլև ի վիճակի են ենթարկվելով իրենց առաջնորդին, աստվածների օգնությամբ շվախենալ թշնամիներից: (33) Նրանք խնդրում են նաև, որ դու գալով և իրենց առաջնորդը դառնալով, ֆենես Դեֆսիպպոսի և մյուսների հարցը, թե ո՛վ ինչպիսին է, և նրանց արժանին հատուցես»։ (34) Այդ լսելով, Կլեանդրոսը պատասխանեց. «Երդվում եմ զույգ աստվածների<sup>35</sup> անունով, որ շուտով ձեզ կպատասխանեմ ու երկու մարդկանց կվերադարձնեմ, ինքս էլ կգամ ձեզ հետ. և եթե աստվածները բույլ տան, ձեզ կառաջնորդեմ Հելլադա: Ձեր այս խոսքերը բոլորովին հակառակն են այն ամենի, ինչ ես լսել եմ ձեզանից ոմանց մասին, որ իբր զրգոում են զորքը շինազանդվել լակեդեմոնացիներին»:

(35) Դրանից հետո ուղարկվածները գովաբանելով Կլեանդրոսին մեկնեցին, իրենց հետ տանելով զույգ ռազմիկներին: Իսկ Կլեանդրոսը ուղևորվելու կապակցությամբ զոհ մատուցեց ու բարեկամացավ Քսենոփոնի հետ, հյուրասիրության պայման կապելով: Իսկ երբ Կլեանդրոսը նկատեց, որ զինվորներն իր հրահանգները ճշտորեն կատարում են, առավել ևս ցանկացավ

նրանց առաջնորդը դառնալ: (36) Բայց ֆանի որ երեք օր նրա կատարած գոհաբերությունները բարենշան չէին ավարտվում, նա զորավարներին ժողովի հրավիրելով ասաց. «Զոհաբերության նշանները բարենպաստ չեն, որպեսզի ես առաջնորդեմ ձեռք վերադարձր. սակայն դուք մի՛ տխրեք այդ բանի համար, ֆանգի քվում է, քե դուք ինքներդ պետք է առաջնորդեք զինվորներին: Ուստի ուղևորվեցեք: Եվ եթե դուք ժամանեք այնտեղ<sup>36</sup>, ապա մենք ձեզ ինչֆան կարող ենք ավելի լավ կրնդունենք»:

(37) Այնժամ զինվորները որոշեցին հասարակաց ոչխարները նվիրել նրան: Նա ընդունեց, սակայն նորից ետ վերադարձեց: Այնուհետև կլեանդրոսը մեկնեց նավով: Իսկ զինվորները իրենց հավաքած պարենը և ձեռք բերած ունեցվածքը բաժանելով իրար միջև, ուղևորվեցին բյուրանիացիների երկրի միջով: (38) Բայց ֆանի որ ուղիղ ճանապարհով գնալիս նրանց ոչինչ չպատահեց, որպեսզի վեցնեին և ինչ-որ ունեցվածքով մտնեին բարեկամական երկրի սահմանները, ապա որոշեցին նորից ետ վերադառնալով մեկ օր ու գիշեր գնալ: Այդպես անելով, նրանք բազմաթիվ գերիներ ու ոչխարներ ձեռք բերեցին և վեցերորդ օրը հասան Քաղկեդոնիայի Քրյուսոպոլիսը<sup>37</sup> և այնտեղ մնացին յոթ օր, վանառելով իրենց ձեռք բերած իրերը:




Վիրակապույթուն



Զինվորների հանգստի տեսարան (հին հունական վազաներից)





## Գ Ի Ր Ք Յ Ո Ք Ե Ր Ո Ր Դ

1. [Այն ամենը, ինչ հելլենները կատարեցին Կյուրոսի հետ արշավելիս, մինչև հակատամարտը, և այն, ինչ Կյուրոսի մահից հետո ուղևորության ընթացքում կատարվեց մինչև նրանց Պոնտոս հասնելը, և այն, ինչ նրանք կատարեցին Պոնտոսից մեկնելով և՛ ցամաքային ուղևորության ժամանակ, և՛ ծովային ճանապարհորդության ընթացքում, մինչև հասան Պոնտոսի սուտք՝ Ասիայի Քրյուսուպոլիսը, պատմվել է նախորդ խոսքում]:

(2) Այս բանից հետո Փառնաբազոսը վախենալով, որ շլինի թե հելլենների զորքը արշավի իր երկրի վրա, բանազնաց ուղարկեց ծովակալ Անաֆսիբիոսի մոտ, որն այդ ժամանակ Բյուզանդիոնում էր գտնվում, և խնդրեց նրան զորքը (նեղուցներով) անցկացնել Ասիայից, փոխարենը խոստանալով կատարել այն ամենը, ինչ անհրաժեշտ կլինի: (3) Եվ Անաֆսիբիոսը զորավարներին ու վաշտապետներին հրավիրեց Բյուզանդիոն, խոստանալով, որ եթե փոխադրվեն, ապա զինվորները ոռնիկ կստանան: (4) Մինչդեռ մյուսները հայտարարեցին, թե իրենք կպատասխանեն խորհուրդ գումարելուց հետո, Քսենոփոնն ասաց, թե արդեն ցանկանում է թողնել զորքը և նավով հեռանալ: Իսկ Անաֆսիբիոսը պատվիրեց նրան զորքի հետ միասին փոխադրվել և դրանից հետո միայն թողնել զորքը: Քսենոփոնը խոստացավ այդպես էլ կատարել:

(5) Արդ, Սևթես քրակիացին՝ Քսենոփոնի մոտ ուղարկեց Մեդոսադեսին և խնդրեց նրան, որպեսզի օժանդակի զորքը մյուս ափ անցկացնելու գործին,

ավելացնելով, որ օժանդակելու դեպքում նա չի զոյս: (6) Քսենոփոնը պատասխանեց. «Ձուքը այնպես էլ կանցնի. դրա համար կարիք չկա վարձատրելու ո՛չ ինձ, ո՛չ իսկ մեկ ուրիշի. իսկ երբ գորհն անցնի, ես կհեռանամ գորհից, և այնժամ Արևսը բոլոր այդ բաներ իրեն ապահով բվացող ձևով առաջարկի մնացողներին և հեղինակություն ունեցողներին»:

(7) Այնուհետև բոլոր զինվորները փոխադրվեցին Ռյուզանդիոն: Եվ Անասիբիոսը ունիկ շվնարեց, այլ զինվորներին հրամայեց, վերցնելով իրենց զենքերն ու բեռները, դուրս գալ ֆաղափից, որպեսզի նրանց, իբր, կարողանա նախապահ դնել և միաժամանակ նրանց հաշվել: Այնժամ զինվորները վշտացան, քանի որ դրամ չունեին նախապահին պարեն գնելու համար, և դժկամությամբ պատրաստվում էին նախապահվելու: (8) Իսկ Քսենոփոնը կտավարիչ Կլեանդրոսի հետ հյուրասիրությամբ մտերմացած լինելով, եկավ նրա մոտ մեկնելու կապակցությամբ հրաժեշտ առնելու: Եվ Կլեանդրոսն ասաց նրան. «Այդպես մի՛ վարվիր, ապա թե ոչ դու մեղավոր կհամարվես և արդեն այժմ իսկ ոմանք քեզ մեղադրում են այն բանում, որ գորհը դանդաղ է առաջ շարժվում»: (9) Իսկ Քսենոփոնն ասաց. «Բայց ես այդ բանում մեղավոր չեմ. իրենք զինվորները պարենավորման կարիք են զգում, և այդ պատճառով դժկամությամբ են հեռանում»: (10) «Այսուհանդերձ, — ասաց Կլեանդրոսը, — ես խորհուրդ եմ տալիս քեզ ֆաղափից դուրս գալու ժամանակ այնպես ձևացնել, իբր ուղևորվում ես զինվորների հետ միասին, իսկ երբ գորհը արդեն դուրս գա ֆաղափից, այնժամ կարող ես լինել նրանց»: «Եթե այդպես է, — պատասխանեց Քսենոփոնը, — ապա գնանք Անասիբիոսի մոտ ու բանակցենք այս մասին»: Նրանք եկան Անասիբիոսի մոտ և հայտնեցին ամենը: (11) Նա պատվիրեց Քսենոփոնին այդպես էլ անել, իսկ բանակին կարգադրեց շտապ պատրաստվելով դուրս գալ ֆաղափից. և ավելացրեց, թե նա, ով չի ներկայանա ստուգատեսին և հաշվառման, պատասխան կտա:

(12) Այնուհետև ֆաղափից դուրս եկան նախ գորավորները, ապա և մյուսները: Եվ համարյա բոլորը, բացի մի ֆանիսից, դուրս եկան ֆաղափից ու Ետեռնիկոսը<sup>2</sup> կանգնեց դարբասների մոտ, որպեսզի երբ բոլորը դուրս գան, փակի դարբասը և ներսից լծակը դնի: (13) Այնժամ Անասիբիոսը գումարելով գորավորներին ու վաշտապետներին, ասաց. «Պարեն դուրս կարող եմ վերցնել թրակիական գյուղերից. այնտեղ մեծ ֆանակությամբ գարի կա և ցորեն և այլ մրբերներ. պարենավորվելուց հետո կուղևորվեմ Քերոսնեսոս, որտեղ և Կյունիսկոսը<sup>3</sup> ձեզ ունիկ կվճարի»: (14) Զինվորներից ոմանք ականջ էին դրել այս խոսակցությանը, զուցե և վաշտապետներից որևէ մեկը այն հայտնել էր գորհերին: Իսկ գորավորները հետաքրքրվեցին Արքեսի մասին,

իմանալու համար, արդյո՞ք նա թշնամի՝ և, թե՛ բարեկամ, և ո՞ր նախապահով առաջ շարժվե՞ն. Սրբազան լեռան վրայո՞վ՝, թե՛ այն շրջանցեն և ընթանան Քրակիայի միջով: (15) Մինչդեռ նրանք այս մասին խորհրդակցում էին, զինվորներն իրենց զենքերը վերցնելով արագ վազեցին դեպի դարբասը, նորից ֆաղափի պարիսպներից ներս մտնելու նպատակով: Բայց երբ Ետեռնիկոսը և նրա հետ եղողները տեսան մտրիկ վագող հուպիտներին, ապա փակեցին դարբասը և ներսից լծակը դրեցին: (16) Զինվորներն սկսեցին հարվածել դարբասին և աղմկել, թե իրենց հետ խիստ անազարացի վերաբերվեցին դուրս հանելով և թշնամու ֆմահանույթին թողնելով. և ասացին, թե կխորտակեն դարբասը, եթե կամովին բաց չանեն: (17) Զինվորների մի մասը վազեց դեպի ծով ու ելուստի մոտ պարիսպն անցնելով, մտավ ֆաղափ. իսկ մյուսները, որոնք դեռևս մնացել էին պարիսպներից ներս, տեսնելով դարբասի մոտ կատարվող անցքերը, կացիններով կոտորեցին սողնակները, բացեցին դարբասը. և զինվորները խուժեցին ներս:

(18) Տեսնելով կատարվածը. Քսենոփոնը վախեցավ, որ չլինի թե գորհը կողոպուտի ետևից ընկնի և դրանով իսկ անուղղելի շարիք հասցնի թե՛ ֆաղափին, թե՛ իրեն, թե՛ զինվորներին. ուստի ինքը ևս ամբոխի հետ միասին մտավ դարբասից ներս: (19) Իսկ բյուզանդացիները, տեսնելով բռնությամբ ֆաղափ ներխուժող գորհը, հրապարակից փախան, ոմանք դեպի նավերը, ուրիշները դեպի սններ, իսկ աներում գտնվողները վազեցին դուրս. ոմանք էլ տրիերաներն էին իջեցնում ծով, դրանցում փրկություն որոնելով. և բոլորը կարծում էին, թե կորստի են մատնված, ասես ֆաղափը գրավվել էր: (20) Ետեռնիկոսը ապաստան գտավ միջնաբերդում: Իսկ Անասիբիոսը վազեց դեպի ծով, ձկնորսական նավի վրա շրջանցիկ նախապահով հասավ միջնաբերդ և իսկույն Քաղկեդոնից կայագոր հրավիրեց. ֆանգի թվում էր, թե միջնաբերդում գտնվող գորամասը ի վիճակի չէր դիմադրելու զինվորներին:

(21) Ու երբ զինվորները տեսան Քսենոփոնին, մեծ բազմությամբ նետվեցին դեպի նրա կողմը և ասացին. «Այժմ դու, ո՞վ Քսենոփոն, հնարավորությու՞ն ունես մեծ մարդ դառնալու: Քաղաքը քո ձեռքին է, դու ունես տրիերաներ, ունես դրամ, ունես այսֆան գորհ: Այժմ, եթե միայն ցանկանաս, դու կարող ես մեզ օգտակար հանդիսանալ, ու մենք փոխաբեր քեզ մեծ մարդ կդարձնենք»: (22) Բայց Քսենոփոնը ցանկանալով նրանց հանգստացնել, այսպես պատասխանեց. «Ճիշտ եմ ասում և ես այդպես էլ կանեմ. եթե դու իրոք այդ էմ ցանկանում, ապա իսկույն շարժելով ու սպառազինությամբ դասավորվեցե՛ք»: Քսենոփոնն անձամբ մտնեցավ զինվորներին, պատվիրում էր կատարել այդ. և միաժամանակ խնդրում հաղորդել մյուս զինվորներին ևս



վերցնել զնեները և կանգնել շարքերով: (23) Զինվորներն սկսեցին ինքնաբերաբար շարվել, և ինչ անց հոպլիտները կանգնել էին ուրական շարքի խոռոչումը, իսկ պելտաստները վազելով բռնել էին երկու թևը: (24) Հրապարակեց, որտեղ նրանք կանգնել էին, կոչվում էր քրակիական՝ և շատ հարմար էր զինվորների դասավորության համար. այդ վայրը հարթ էր և գուրկ որևէ կառույցից: Երբ բոլորը զենքերով կազմ ու պատրաստ կանգնել էին և արդեն խաղաղվել, Քսենոփոնը այսպես դիմեց զորքին. (25) «Ո՛վ զինվորներ, ես չեմ գարմանում, որ դուք գայրանում եք և կարծում, թե խաբված լինելով տուժում եք: Բայց եթե գայրույթից մղված մենք այստեղ գտնվող լակեդեմոնացիներից վրեժ լուծենք խաբեության համար և ոչնչով մեղավոր չեղող հաղաբ կողոպուտի ենթարկենք, ապա մտածեք, թե այդ բոլորից ի՞նչ կստացվի: (26) Մենք բացահայտորեն լակեդեմոնացիների և նրանց դաշնակիցների թշնամիները կդառնանք: Թե ինչպիսի պատերազմ կլինի այդ, կարող են պատկերացնել նրանք, ովքեր տեսել են և վերհիշում են դեռևս վերջերս կատարված դեպքերը: (27) Զէ՛ որ մենք, արքեևացիներս, պատերազմ սկսեցինք լակեդեմոնացիների և նրանց դաշնակիցների դեմ, երբ ունեինք ոչ պակաս քան երեք հարյուր տրիբրա, որոնց մի մասը ծովի վրա էր, մյուս մասը՝ նավաշինարաններում. երբ մենք հաղախում ունեինք մեծ հարստություն. երբ մեր տնօրինության տակ էր համայնքի ներսում, ինչպես նաև մեր դրսի տիրույթներից ստացվող տարեկան եկամուտը, որը ավելի քան հազար տաղանդի էր հասնում. մենք իշխում էինք բոլոր կղզիների վրա և տիրում էինք Ասիայում ու Եվրոպայում գտնվող բազում հաղախներին, ի թիվս այլոց նաև այս իսկ Բյուզանդիոնին, որտեղ այժմ մենք գտնվում ենք. բայց այս ամենն ունենալով հանդերձ, մենք լիովին պարտվեցինք, ինչպես հայտնի է ձեզ բոլորիդ: (28) Իսկ հիմա ի՞նչ փորձություններ մենք կկրենք, երբ լակեդեմոնացիների հետ են նրանց նախկին դաշնակիցները, այլև արքեևացիներն ու սրանց նախկին դաշնակիցները ևս միացել են լակեդեմոնացիներին. երբ Տիսսափեոնեսն ու ծովափին ապրող բոլոր բարբարոսները մեզ թշնամի են, իսկ ամենամեծ թըշնամին ինքը արքան է, որի դեմ մենք արշավեցինք, նրանից իշխանությունը խլելու և, եթե կարողանայինք, նրան սպանելու նպատակով: Եվ քանի որ նրանք բոլորը միասին են. ապա ո՛վ այնքան անփութ կգտնվի ենթադրելով, որ մենք նրանց բոլորին կհաղթենք: (29) Հանուն աստվածների, մի՛ գայրացեք, որպեսզի ամոքալի կորստի չմատնվենք իբրև հայրենիքի և մեր իսկ բարեկամների ու հարազատների թշնամիներ: Քանզի նրանք բոլորը ապրում են այն հաղախներում, որոնք դուքս կգան մեր դեմ պատերազմի, և արդարացի կերպով. քանզի մենք չկամեցանք տեր դառնալ բարբարոսական և ոչ մի քա-

ղափի, քեպետն հաղթել էինք, մինչդեռ այժմ ցանկանում ենք կողոպուտել մեր ժամանած առաջին իսկ հելլենական հաղաբը: (30) Ես կմաղթեմ ավելի շուտ բյուր գրկաչափ գետնի տակն անցնել. քան ականատես լինել ձեր կատարած գործերին: Իսկ ձեզ խորհուրդ եմ տալիս. որպես հելլեններ, ենթարկվել բոլոր հելլենների վրա գեթիշտողներին և դրանով իսկ ձգտել արդարություն գտնելու: Իսկ եթե այդ բանը չհաջողվի, ապա մենք, թեկուզև անարգված լինենք, այնուամենայնիվ Հելլադա վերադառնալը մեզ չի արգելվի: (31) Արդ, ես կարծում եմ, որ պետք է բանազնաց ուղարկենք Անախիփոսի մոտ հայտնելու, որ մենք հաղախ մտանք ոչ թե բռնություն գործելու համար, այլ որպեսզի, եթե հնարավոր լինի, որևէ լավ բան ստանանք ձեզանից, իսկ եթե այդ հնարավոր չլինի, ապա ցույց տալու համար, որ մենք հեռանում ենք ոչ թե խաբված, այլ որովհետև ուզում ենք հնազանդ մնալ:»

(32) Այսպես որոշվեց. և ուղարկեցին Հիերոնիմոս Էլեացուն, որպեսզի հաղորդի այդ բոլորը, ինչպես նաև եվրիլոֆոս արկադիացուն և Փիլեսիոս աֆայացուն. և սրանք մեկնեցին բանակցելու համար:

(33) Մինչ զինվորները դեռևս նստած էին, երբ նրանց մոտ եկավ Կոյրատադաս թեբեացիները, որք թափառում էր Հելլադայում ոչ թե վտարանդի լինելով, այլ երազելով գորավար դառնալ և իր ծառայություններն էր առաջարկում. եթե որևէ հաղախ կամ ազգ՞ գորավարի կարիք էր զգում: Եվ այսպես, նա մոտենալով զինվորներին, ասաց, թե պատրաստ է նրանց առաջնորդելու այսպես կոչված քրակիական Դելտան, որտեղ նրանք կարող են ձեռք բերել բազմապիսի բարիքներ, և մինչև նրանց տեղ հասնելը, խոստացավ զինվորներին տրամադրել առատ ուտելիք և խմիչք: (34) Զինվորներն այս լսեցին, միաժամանակ նրանց հաղորդեցին նաև Անախիփոսի պատասխանը, թե զինվորները չեն զղջա իրենց հնազանդության համար. Անախիփոսը խոստացավ ևս, թե այդ մասին կհաղորդի իր կառավարությանը և ինքը ևս իր հնարավորությունների սահմաններում ամեն ինչով կօժանդակի նրանց: (35) Ուտի և զինվորները Կոյրատադասին ընդունեցին իբրև գորավար և դուրս եկան հաղախի պարխապներից: Իսկ Կոյրատադասը պայմանավորվեց նրանց հետ հաջորդ օրը ներկայանալ գորքին, իր հետ բերելով նրա համար զոհաբերման անասուններ, գուշակ և ուտելիք ու խմիչք: (36) Իսկ երբ դուրս եկան հաղախից, Անախիփոսը փակեց դարբասները և հայտարարեց, որ եթե զինվորներից որևէ մեկը բռնվի հաղախում, ապա կվանառվի որպես ստրուկ: (37) Հետևյալ օրը Կոյրատադասը ժամանեց, իր հետ բերելով զոհաբերման անասուններ և գուշակ, իսկ նրան հետևում էին զարի բերող քան մարդ ու գինի բերող ևս քան մարդ, ձիաբայով բերող երեք մարդ, մի մարդ, որն այնքան մեծ բեռ սխտոր ուներ,

որ հազիվ կարողանում էր տանել, և մի մարդ էլ սոխի նույնպիսի բեռով: Այս ամենը ցած դրեց իբրև թե բաժանելու համար և սկսեց զոհաբերություն կատարել:

(38) Իսկ Քսենոփոնը մարդ ուղարկեց Կլեանդրոսի մոտ, պատվիրելով խնդրել նրան, որպեսզի բույլ տա իրեն մտնել պարիսպներից ներս և մեկնել Բյուզանդիոնից. (39) Կլեանդրոսը գալով պատմեց, թե եկել է արդեն համաձայնություն բերելով, որը սակայն իրեն մեծ դժվարությամբ է հաշտվել ստանալ. քանզի Անախիբիոսը լավ չի համարում, որ Քսենոփոնը լինի ֆաղափ ներսում, երբ զինվորները գտնվում են պարսպի մոտ. մյուս կողմից բյուզանդացիների միջև ևս գժտություն կա և իրար հանդեպ թշնամաբար են վերաբերվում: «Սակայն Անախիբիոսը, — շարունակեց նա, — բույլ է տալիս քեզ ֆաղափ մտնել, եթե ցանկանում ես իր հետ մեկնել նավով»: (40) Ուստի Քսենոփոնը ողջագործվելով զինվորների հետ, ֆաղափ մտավ Կլեանդրոսի ընկերակցությամբ: Իսկ Կոյրատադասը իր զոհ մատուցելու առաջին օրը բարենպաստ նշաններ չստացավ և զինվորներին ոչինչ չբաժանեց: Հաջորդ օրը, երբ արդեն զոհաբերման անասունները տարվել էին բազիլի մոտ և Կոյրատադասը գլխին պսակ դրած պատրաստվում էր զոհաբերությունը կատարել, մոտեցան Տիմասիոն դարդանացին և Նեոն ասինացին և Կլեանդր օրհամենացին և ասացին Կոյրատադասին, որպեսզի զոհ չմատուցի, քանի որ նա չի կարող դառնալ զորքի առաջնորդը, մինչև զինվորներին պարենամթբեբ չտա: (41) Այնժամ Կոյրատադասը կարգադրեց պարենը բաժանել: Երբ պարզվեց, որ դեռևս մեծ քանակությամբ պարեն է պակասում յուրաքանչյուր զինվորին թեկուզև մեկ օրով կերակրելու համար. ապա նա իր հետ վերցնելով զոհաբերման անասուններին, հեռացավ ու հրաժարվեց գորավարությունից:

II. Նեոն ասինացին և Փոյունիսկոս աֆայացին և Փիլեսիոս աֆայացին և Քասնթիկես աֆայացին և Տիմասիոն դարդանացին մնացին զորքի ղեկավարներ, և առաջ գնալով դեպի քրակիացիների գյուղերը, որոնք գտնվում էին Բյուզանդիոնի մոտակայքում, այնտեղ էլ բանակեցին: (2) Զորավարների միջև անհամաձայնություն կար. Կլեանդր և Փոյունիսկոսը ցանկանում էին զորքը տանել Սեքեսին, որը համոզել էր նրանց, մեկին ձի նվիրելով, մյուսին՝ կին. իսկ Նեոնը ուզում էր զորքը տանել Քերսոնեսոս, Լեքադրելով, որ էրև զորքը գտնվի լակեդեմոնացիների իշխանության տակ. ապա ինքը կզատնա բոլորի հրամանատարը<sup>9</sup>. մինչդեռ Տիմասիոնը ցանկանում էր նորից անցնել մյուս ափը՝ Ասիա, Լեքադրելով. որ այնտեղից տուն կվերադառնա. զինվորները ևս նույն ցանկությունն ունեին: (3) Բայց քանի ժամանակն անցնում էր, զինվուներից շատերը, գեներալն այստեղ վանառելով, մեկնեցին ով որ-

տեղ կարող էր. իսկ մի մասն էլ [գեներալն այստեղ վանառելով], խառնվեց ֆաղափների բնակչությանը: (4) Անախիբիոսն ուրախանում էր լսելով, որ զորքը ֆայթալով է. քանզի նա կարծում էր, որ այդպիսով առավել ևս կհանդիանա Փառնաբագոսին:

(5) Երբ Անախիբիոսը Բյուզանդիոնից նավով դուրս եկավ, Կյուզիկոսում նրան հանդիպեց Արիստարհոսը, որը Կլեանդրոսին փոխարինել էր որպես Բյուզանդիոնի կառավարիչ: Անախիբիոսին ասվեց, թե Պոլսը ևս՝ նրա հաջորդը ծովակալի պաշտոնում<sup>11</sup>, շուտով կժամանի Հելլեսպոնոս: (6) Եվ Անախիբիոսը հանձնարարեց Արիստարհոսին Կյուրոսի զինվորներից որևէ մեկին Բյուզանդիոնում պատահելու դեպքում, նրան վանառի ստրկության. մինչդեռ Կլեանդրոսը ոչ մեկին չէր վանառել ստրկության, այլ հիվանդներին խղճալով նույնիսկ խնամում էր և ստիպում ընդունել նրանց տներում. իսկ Արիստարհոսը, Բյուզանդիոն ժամանելով, իսկույն ստրկության վանառեց ոչ պակաս քան չորս հարյուր մարդու: (7) Անախիբիոսը հասնելով Պարիոն, (բանագնաց) ուղարկեց Փառնաբագոսի մօտ, համաձայն իրենց պայմանավորվածության<sup>12</sup>: Բայց երբ Փառնաբագոսն իմացավ, որ Արիստարհոսը ժամանել է իբրև Բյուզանդիոնի կառավարիչ, և որ Անախիբիոսն արդեն ծովակալ չէ, անտեսեց Անախիբիոսին և Կյուրոսի զորքի վերաբերյալ Արիստարհոսի հետ նույնպիսի բանակցություններ վարեց, ինչ վարել էր Անախիբիոսի հետ:

(8) Անախիբիոսն այնժամ իր մոտ կանչեց Քսենոփոնին և խորհուրդ տվեց ամեն կերպ և ինչքան հնարավոր է շուտ վերադառնալ բանակ, որպեսզի այն չցրվի, և միաժամանակ հավաքել մինչ այդ ցրված զինվորներից հնարավորին շատ ավելի շատերին և նրանց բերելով Պերիեթոս<sup>13</sup>, շուտ կերպով փոխադրել Ասիա, նա հանձնեց Քսենոփոնին Լեկսոնթիանի նավ և նամակ, ուղարկեց նրա հետ նաև մեկին, պատվիրելու համար Պերիեթոսի բնակիչներին, որպեսզի Քսենոփոնին ինչքան հնարավոր է շուտ ձիերով հասցնեն բանակ: (9) Եվ Քսենոփոնը նավարկելով հասավ զորքերին: Զինվորները նրան հանույժով ընդունեցին և իսկույն հոծարակամ հետևեցին նրան, Թրակիայից Ասիա փոխադրվելու հույսով:

(10) Իսկ Սեքեսը, լսելով Քսենոփոնի վերադարձը, ծովային նանապարհով նրա մոտ ուղարկեց Մեդոսադեսին և խնդրեց, որ զորքն առաջնորդի իր մոտ, միաժամանակ խոստանալով այն ամենը, ինչով կարծում էր, թե կհրաշքորի Քսենոփոնին: Սակայն, Քսենոփոնը պատասխանեց, թե այդ հնարավոր չէ: Մեդոսադեսն այս լսելով մեկնեց: (11) Իսկ երբ հելլենները հասան Պերիեթոս, Նեոնը շուրջ ութ հարյուր հոգով անջատվեց և առանձին բանակեց. իսկ մնացած ամբողջ զորքը միասին բանակեց Պերիեթոսի պարիսպների տակ:

(12) Այս ամենից հետո Քսենոփոնը բանակցեց նավեր ձեռք բերելու մասին, որպեսզի զորքը շուտափույթ տեղափոխի մյուս ափը: Այդ ժամանակ Փառնաբազուսի թելադրանքով Բյուզանդիոնից նրանց մոտ եկավ կառավարիչ Արիստարհոսը երկու տրիերայով և արգելեց նավատերերին զորքերը փոխադրել. իսկ գալով զորաբանակ, զինվորներին ևս պատվիրեց շանցնել Ասիա: (13) Քսենոփոնն ասաց. «Այդպիսին է եղել Անախարիսի հրամանը և նա այդ իսկ պատճառով է ինձ այստեղ ուղարկել»: Արիստարհոսը դարձյալ խոսելով ասաց. «Անախարիսոսն արդեն ծովակալ չէ, իսկ ևս այժմ կառավարիչ էմ. և էթե ձեզանից որևէ մեկին բռնեմ ծովի վրա, ապա նրան ծովամույն կանեմ»: Այս ասելուց հետո նա մտավ պարսպից ներս: Իսկ հետևյալ օրը իր մոտ հրավիրեց զորավարներին ու վաշտապետներին: (14) Բայց երբ նրանք արդեն հասել էին պարիսպներին, ինչ-որ մեկը հայտնեց Քսենոփոնին, որ էթե ներս մտնի ֆաղաֆ, ապա իսկույն կձերբակալվի և կա՛մ տեղնուտեղը կպատժվի, կա՛մ նրան կհանձնեն Փառնաբազուսին: Այս լսելով, Քսենոփոնը մյուսներին առաջ ուղարկեց և ասաց, թե ինքն իբր ցանկանում է զոհ մատուցել: (15) Վերադառնալով, նա զոհ մատուցեց և հարցրեց աստվածներին, թե արդյա՞հ թույլ կտան փորձել զորքը Սևրեսի մոտ տանելու: Քանզի նա տեսնում էր, որ և՛ Ասիա անցնելն է վտանգավոր, ֆանի որ արգելի հանդիսացողը տրիերաներ ունե, և՛ ինքը չի ցանկանում գալով Քերսոնեսոս, բոլոր կողմերից շրջապատված վիճակում մնալ<sup>14</sup>. այս դեպքում զինվորներն ամեն ինչի սուղ կարիք էին զգալու և կարիքից դրդված, պիտի ենթարկվեին այնտեղի կառավարչին. և զորքը ոչ մի պարեն չէր կարողանա ձեռք բերել:

(16) Քսենոփոնն գրազված էր այս գործերով. իսկ զորավարներն ու վաշտապետները վերադառնալով Արիստարհոսի մոտից, հաղորդեցին, որ նա իրենց պատվիրեց այժմ մեկնել, բայց երեկոյան վերադառնալ. այսպիսով առավել բացահայտ դարձավ նրա շարժումը: (17) Այնժամ, ֆանի որ զոհաբերության նշանները բարենպաստ Լիան ու ցույց տվեցին, որ ինքը և զորքը կարող են անվտանգ հասնել Սևրեսի մոտ. Քսենոփոնն իր հետ վերցրեց վաշտապետ Պոլյուկրատես արևեացուն, և բացի նեոնից, մյուս բոլոր զորավարների մոտից մեկական վտանգի մարդ, ու գիշերով մեկնեց Սևրեսի մոտ. վաթսուն ասպարեզ հետո: (18) Երբ մտանցավ այնտեղ, պատանեց լքված պահակային խառույկների: Սկզբում կարծեց, թե Սևրեսը հեռացել է մի ուրիշ տեղ. բայց երբ նա աղմուկ լսեց, ու Սևրեսի զինվորներն սկսեցին իրար ձայնել, ապա կռահեց, որ Սևրեսը հրամայել է գիշերային պահակակետերի առաջ կրակներ վառել. որպեսզի պահակները, մնալով խավարի մեջ, չնկատվեն ու չիմացվի նրանց թիվն ու կանգնած վայրը, իսկ

մտանցողները չկարողանան թափնվել. այլ կրակի լույսի տակ պարզ նրկատվեն:

(19) Այդ բանը հասկանալով, Քսենոփոնը առաջ ուղարկեց իր մոտ զբանրվող քարգմանին և պատվիրեց ասել Սևրեսին, թե Քսենոփոնը եկել է ոչ ցանկանում է տեսակցել նրա հետ: Պահակները հարցրին, թե նա զորքում Լիդոդ արթնացի՞ն է: (20) Երբ պատասխանեց, թե այդ ինքն է, նրանք հեծնելով ձիերը, սուրալով հեռացան, և ֆիչ հետո հայտնվեցին շուրջ երկու հարյուր պելտաստ ու իրենց հետ վերցնելով Քսենոփոնին և նրա հետ Լիդոդներին, առաջնորդեցին Սևրեսի մոտ: (21) Նա գտնվում էր աշտարակում, խիստ պաշտպանությամբ տակ, իսկ աշտարակի շուրջ բոլորը կանգնած էին սանձված ձիեր. ֆանզի վախենալու պատճառով նա ձիերին ցերեկով արածացնում էր, իսկ գիշերները պահում սանձված վիճակում: (22) Պատմում էին, որ իբր նախկինում Սևրեսի նախնի Տերեսը նույն այս երկրում, մեծ զորք ունենալով հանդերձ, խոշոր վնասներ կրեց նույն այս քչնամիների պատճառով ու կորցրեց նույնիսկ իր գումակը. նրանք քյուններն էին<sup>15</sup>, որոնց մասին ասում են. թե առավել ռազմատենչ են հատկապես գիշեր՝ ժամանակ:

(23) Երբ նրանք մտանցան, Սևրեսը առաջարկեց Քսենոփոնին ներս գալ, բնտրելով իր ուղեկիցներից երկուսին, ում ինքը ցանկանա: Ներս մտնելով, նրանք ողջագուրվեցին, ապա, քրակիական սովորության համաձայն, իրար կենացը եղջյուրով զինի խմեցին. Սևրեսի մոտ ներկա էր նաև Մեդոսաղեսը. որն ամեն տեղ գնում էր որպես նրա դեսպանը: (24) Այնուհետև Քսենոփոնն այսպես սկսեց խոսել. «Ո՛վ Սևրես. դու առաջին անգամ ինձ մոտ, Քաղկեդոն ուղարկեցիր ահա այս Մեդոսաղեսին, խնդրելով ինձ ամեն կերպ օժանդակել. որպեսզի զորքը Ասիայից անցնի այս ափը և միաժամանակ խոստանալով, որ Լրե այդ բանը կատարեմ, ապա դու ինձ շնորհապարտ կլինես. այդպես հաղորդեց Մեդոսաղեսը»: (25) Այս ասելով Քսենոփոնը հարցրեց Մեդոսաղեսին, թե ճի՞շտ է այդ բոլորը. և նա հաստատեց. «Ինքը՝ Մեդոսաղեսը երբեք անգամ եկավ ինձ մոտ, երբ ևս Պարիանից նորից վերադարձա զորքի մոտ, և խոստացավ ինձ, որ Լրե զորքը ֆեզ մոտ առաջնորդեմ, ապա դու ինձ կհատկացնես քո տիրապետության տակ գտնվող առափնյա երկրամասերը»: (26) Այս ասելուց հետո նորից հարցրեց Մեդոսաղեսին, թե ճի՞շտ է այդ բոլորը ասում: Եվ նա այդ ևս հաստատեց. «Իսկ այժմ.—շարունակեց Քսենոփոնը.—պատմիր Սևրեսին, թե ի՞նչ պատասխանեցի ևս ֆեզ Քաղկեդոնում առաջին անգամ»: (27) «Ինչ պատասխանեցիր, թե զորքը արդեն պետք է անցնի Բյուզանդիոն, և այդ բանի համար ոչ ոք ոչինչ պետք չէ վնասի, ոչ դու, ոչ իսկ մեկ ուրիշը. և ավելացրի. թե Լրե ինքն անցնես Բյուզանդիոն, իսկույն

կմեկնես. և կատարվեց այնպես. ինչպես դու էիր ասում»: (28) «Իսկ ի՞նչ ասացի,—հարցրեց Քսենոփոնը,—երբ դու ժամանեցիր Սելյուսի մոտ»: «Դու ասացիր, որ այդ անհեար և, քանի որ գալով Պերինթոս, դուք պետք է անցնե՞նք Ասիա»: (29) «Այժմ անա,—ասաց Քսենոփոնը,—ես եկել եմ ևս մտ, ինչ անեմ նաև գործարարներից Փոյունիսկոսը և վաշտապետներից Պոլյուկրատեսը, իսկ դու ասում կան. բացի լակոնացի Նեոնից. մյուս բոլոր գործարարների մտից մեկական վատահեղի մարդ: (30) Երբ դու ցանկանում ես, որ մեր գործարարը ավելի վատահեղի դառնա, ապա նրանց ևս ներս հրավիրիր: Ո՛վ Պոլյուկրատես. դուրս գնա և ասա, որ ես կարգադրում եմ նրանց զենքերը դրսում բողոքել, դու ևս քո սուտերը բող, և ներս մտնե՛ք»:

(31) Այս լսելով, Սեքեսն ասաց, թե ոչ մի արեւնացու նկատմամբ անվատահուրյուն չունի, քանի որ գիտեմ, որ արեւնացիները իրեն ցեղակից են<sup>16</sup> և ինքը նրանց համարում է իր լավ բարեկամները: Այնուհետև, երբ ներս մտան կանչվածները, նախ Քսենոփոնը հարցրեց Սեքեսին, թե ի՞նչ գործի համար է ցանկանում օգտագործել գործը: Եվ նա այսպես ասաց. (32) «Իմ հայրն էր Մայսադեսը, որը տիրում էր մելանդիտներին, քյուններին և տրանիպսներին: Երբ օդրյուսների<sup>17</sup> գործերը ձախողվեցին, հայրս արտաքսվեց երկրից և հիվանդանալով մահացավ. իսկ ես որք, դաստիարակվեցի այժմյան քաղաքում Մեդոկոսի մոտ: (33) Երբ պատանի դարձա, արդեն ինչ համար անհանդուրժելի էր ուրիշների սեղանին նայելով ապրելը. և նրա հետ սեղան նստելիս, ես թախանձեցի նրան տալ ինչ անհամար մարդ, ինչպես ինքը կարող էր, որպեսզի փորձելի վրեժ լուծել մեզ արտաքսողներից և կարողանալի ապրել առանց իր սեղանին նայելու: (34) Այնժամ նա տվեց ինձ այն մարդկանց ու ձիերին, որոնց դուք կանսնե՛ք առավոտյան: Այժմ անա ևս գլխավորում եմ նրանց և ասպատակում իմ իսկ հայրենի երկիրը: Իսկ երբ դուք միանա՞ք ինձ, ապա ես հուսով եմ, որ աստվածների օգնությամբ հեշտ կերպով կվերագրավեմ իշխանությունը: Այս եմ ուզում ձեզանից»:

(35) Քսենոփոնն ասաց. «Իսկ երբ մենք ևս մտ գանք, այդ դեպքում դու ի՞նչ կարող ես տալ զինվորներին և վաշտապետներին և գործարարներին: Հայտնի, որպեսզի նրանք հաղորդեն զինվորներին»: (36) Եվ նա խոստացավ յուրաքանչյուր զինվորին տալ մեկական կիզիկյան, յուրաքանչյուր վաշտապետին՝ կրկնակի, իսկ յուրաքանչյուր գործարարին՝ եռակի, և բացի այդ, տալ այնպիսի հող. ինչպես ցանկանում են. և՛ լծկաններ, և՛ ծովափին պարսպապատված ամրություն: (37) «Իսկ երև.—ասաց Քսենոփոնը,—այդպիսի փորձ անելով հանդերձ մենք հաջողության չհասնենք, և լակեդեմոնացիները մեզ սպառնան, ապա դու կընդունե՞ս նրանց, որոնք ցանկություն կունենան

ևս մտ ասպատակելու»: (38) Սեքեսը պատասխանեց. «Նրանց իմ եղբայրները կզարձենեմ և իմ սեղանակիցները ու հաղորդակիցները այն ամենը, ինչ մեզ կհաջողվի ձեռք բերել: Իսկ մեզ, ո՛վ Քսենոփոն, ես իմ դուստրը կտամ և, եթե դու ևս դուստր ունես, ապա ես կվճարեմ նրա համար քրակիական սովորույթի համաձայն, և իբրև բնակավայր կպարգևեմ Քիսանթեն. որը իմ ծովափնյա տիրույթներից ամենագեղեցիկն է»:

III. Այս խոսքերը լսելուց հետո իրար աջ տալով հեռացան. և զև առավոտ շեղած, նրանք հասան բանակատեղի. և յուրաքանչյուրը (կատարվածը) հաղորդեց իրեն ուղարկած (ազգայիններին): (2) Երբ օրը բացվեց, Արիստարխոսը նորից իր մոտ հրավիրեց գործարարներին. բայց սրանք որոշեցին հրաժարվել Արիստարխոսին ներկայանալուց և գործառնողով հրավիրել: Այս բոլորը հավաքվեցին ժողովի, բացի Նեոնի զինվորներից. քանզի նրանք գտնվում էին տասը ասպարեզ հեռու: (3) Երբ հավաքվեցին. Քսենոփոնը հանդես գալով այսպես խոսեց. «Ռազմիկներ՛ր. Արիստարխոսը, որն իր տրամադրության տակ արիերաներ ունի, խոչընդոտում է մեզ նավարկել այնտեղ, որտեղ մենք ցանկանում ենք. ուստի և ապահով չէ մեր նավով համփորդելը: Նույն Արիստարխոսը մեզ հրամայում է ուժով կտրել Սրբազան լեռը և անցնել Քերունետոս: Երբ մենք գրավելով լեռը, հասնենք այնտեղ, նա խոստանում է այսուհետև ձեզ չվաճառել ստրկության, ինչպես անում էր Քյուզանդիոնում, և ձեզ չխաբել, այլ ոտնիկ վճարել և անուշադրության չմատնել, ինչպես այժմ է անում, այն. որ դուք պարենի կարիք եք գգում: (4) Նա այսպես է ասում. իսկ Սեքեսը ասում է, որ երբ գնա՞ք իր մոտ, ապա նա ձեզ համար բարեգործություն կանի: Այժմ որոշեցե՛ք. թե այդ մասին խորհուրդ գումարենե՞ք այստեղ և հիմա՞. թե՛ պարենի համար արշավի ելնելուց հետո: (5) Ինչ պիտի է, որ երբ այստեղ մնանք և խորհուրդ գումարենք, մենք ոչ զրամ ունենք գնումների համար. ոչ իսկ մեզ քույր կտան առանց զրամի որևէ բան վերցնել. իսկ երբ վերադառնանք գյուղերը, որտեղ մեզանից առավել քույր բնակիչներից մենք պարեն կարող ենք վերցնել, ապա արդեն պարենավորված, մենք կլսենք, թե նրանցից (Արիստարխոսից ու Սեքեսից—բարգձմ.) ամեն մեկը ի՞նչ ծառայություններ է մեզանից պահանջում, և կընտրենք այն. ինչ մեզ առավել լավ քվա: (6) Ով համաձայն է այս կարծիքին.—չարունակեց Քսենոփոնը,—թող ձեռք բարձրացնե՛ք: Բոլորը ձեռք բարձրացրին: «Այժմ.—ասաց նա.—գրվեցե՛ք և պատրաստվեցե՛ք նախապահ ընկնելու և. երբ ազդանշանը տրվի. հետևեցե՛ք առաջից գնացող ջոկատին»:

(7) Այս բոլորից հետո Քսենոփոնն անցավ առաջ, իսկ մյուսները հետևեցին: Մինչդեռ Նեոնը և Արիստարխոսի ղեկավարները համոզում էին նրանց

վերադառնալ, զորք շտեղ նրանց: Երբ արդեն անցել էին շուրջ երեսուն ասպարեզ, հեղինակներին պատահեց Ալքեսը: Եվ Քսենոփոնը տեսնելով նրան, խնդրեց մոտիկ ձիավարել, որպեսզի ստավել շատ մարդիկ լսեն այն, ինչ ինքը օգտավետ էր համարում ասել: (8) Երբ Ալքեսը մոտեցավ, Քսենոփոնն ասաց. «Մենք գնում ենք այնտեղ, ուր զորքը կարող է պարեն ունենալ. այնտեղ կլսենք թե՛ քո, թե՛ լալոնացու»<sup>18</sup> առաջարկները և կրնարենք այն, ինչ մեզ լավագույնը քվա: Երբ դու մեզ առաջնորդես այնպիսի մի վայր, որտեղ առատ պարեն գտնվի, ապա մենք քեզ կհամարենք մեր բարեկամը»: (9) Ու Ալքեսը պատասխանեց. «Իսկ ես ի՞նչ մոտիկ գտնվող շատ գյուղեր գիտեմ, որտեղ ամեն տեսակ պարեն կա և որոնք մեզանից սուկ այնքան հեռավորությամբ վրա են գտնվում, որ դուք այնտեղ հասնելով, մեծ բավականությամբ կնաշեք»: (10) «Ուրեմն մեզ այնտեղ առաջնորդիր»,—ասաց Քսենոփոնը: Երբ նրանք Երեկոյան հասան գյուղերը, գինվորները ժողովեցին, ու Ալքեսը այսպես խոսեց. «Ո՛վ ռազմիկներ, ես ձեզ խնդրում եմ արշավել ինձ հետ, որի համար խոստանում եմ զինվորներին վճարել մեկական կիզիկյան, իսկ վաշտապետներին ու զորավարներին՝ ընդունված կարգի համաձայն<sup>19</sup>. բացի այդ, ես կպատվեմ արժանավորին: Ուտեստ և խմիչք. ինչպես և հիմա, դուք կվերցրնեք երկրից: Բայց ինչքան որ ավար վերցվի, ես պահանջում եմ, որ մնա ինձ, որպեսզի այն վաճառելով ես կարողանամ ձեզ համար ռոնիկ հայրայրել: (11) Եվ փախչողներին ու քաֆևոդներին մենք կարող ենք հետապնդել և հայտնաբերել. իսկ էրե որևէ մեկը դիմադրի մեզ, ապա ձեր օգնությամբ մենք կաշխատենք հպատակեցնել նրանց»: (12) Քսենոփոնը հարցրեց. «Իսկ ծովից ինչքան հեռու դու պետք է պահանջես, որ զորքը հետևի քեզ»: Եվ նա պատասխանեց. «Ոչ մի վայրում այն յոթ օրվա նախապահից ավելի հեռավորության վրա չի լինի. իսկ շատ տեղերում՝ դրանից պակաս»:

(13) Այնուհետև քույրատեղ խոսել յուրաքանչյուր ցանկացողին. և շատերը արտահայտեցին այն միտնույն միտքը, թե Ալքեսի խոսքերը առավել արժանի են ուշադրության. քանզի ձմեռ էր, և տուն վերադառնալ ցանկացողների համար նավելու հնարավորություն չկար. իսկ բարեկամական երկրում երկար ապրել անկարելի էր, քանի որ ամեն ինչի համար պետք էր վճարել, իսկ մնալ և ապրել քչնամու երկրում առավել ապահով էր Ալքեսի հետ միասին, քան էրե իրենք մենակ լինեն: Ու էրե այդ բոլորով հանդերձ նաև ռոնիկ ստանան, ապա այդ բանը իրենց համար գյուտ կլինի: (14) Նրանցից հետո Քսենոփոնն ասաց. «Երբ որևէ մեկը ուզում է հակաճանաչել, բոլոր խոսի. ապա թե ոչ՝ հարցը դնում եմ քեզ»:

նեց, հարցը դրեց քեզ: Ես առաջարկեմ ընդունվեց: Այնուհետև Քսենոփոնը ասաց Ալքեսին, թե հեղինակները կարշավեն նրա հետ միասին:

(15) Այնուհետև զինվորները վրան խփեցին բոլոր շտեղներին, իսկ զորավարներին ու վաշտապետներին Ալքեսը նաշի հրավիրեց իր գրաված մոտիկ գյուղում: (16) Երբ նրանք հասան Ալքեսի դուռը, նաշին մասնակցելու համար, այնտեղ հայտնվեց ոմն Հերակլեյդես Մարոնեա քաղաքից<sup>20</sup>: Սա մտնելու էր բոլոր նրանց, որոնց մասին ենթադրում էր, թե կարող են Ալքեսին որևէ բան նվիրել. նախ և առաջ Պարիսոն քաղաքից ոմանց, որոնք եկել էին օգրյուսների քաղաքից Մեդոկոսի հետ դաշինք կնքելու նպատակով, որի համար և նվերներ էին տանում նրան և նրա կնոջը: Այս Հերակլեյդեսն ասաց, թե Մեդոկոսը գտնվում է ծովից շուրջ տասներկու օրվա նախապահի հեռավորության վրա, իսկ Ալքեսը արդեն այսպիսի զորք ձեռք բերած լինելով, կդառնա ծովափի տերը: (17) «Լինելով ձեր հարևանը,—ասաց նա,—Ալքեսը բոլորից առավել կարող է ձեզ թե՛ բարիք անել, թե՛ չարիք: Ու էրե դուք խելամիտ լինեք, ապա նրան կնվիրեք այն ամենը, ինչ տանում եք ձեզ հետ. և դա ձեզ համար առավել օգտավետ կլինի, քան էրե դրանք տանեք ու նվիրեք հեռվում բնակվող Մեդոկոսին»: Այսպիսի խոսքերով համոզում էր նրանց:

(18) Այնուհետև նա մոտեցավ Տիմասիոն դարդանացուն. քանզի լսել էր, որ նա բարբարոսական ըմպանակներ և զորքեր ունի, և ասաց, որ Ալքեսը ենթադրում է իր մոտ նաշի հրավիրվածներից ընծաներ ստանալ: «Եվ էրե,—ասաց նա,—Ալքեսը այստեղ դառնա հզոր տիրակալ, ապա նա կարող կլինի քեզ տուն վերադարձնել<sup>21</sup>, իսկ այստեղ մնալու դեպքում քեզ հարստացնել»: Այսպես էր նա խորհուրդ տալիս մտնելուով ամեն մեկին: (19) Քսենոփոնին ևս մտնելուով նա ասաց. «Դու խոշորագույն քաղաքից ես և քո անունը Ալքեսի մոտ մեծագույն պատվի է արժանացել. գուցե և դու ցանկանաս այս երկրում ամրոցներ և տիրույթներ ստանալ, ինչպես այդ ստացել են ձեզանից ուրիշները ևս<sup>22</sup>. ուստի և արժանի է, որպեսզի դու ևս Ալքեսին պատվես մեծարժեք ընծաներով: (20) Քո նկատմամբ իմ ունեցած բարյացակամությունից է, որ ես տալիս եմ քեզ այդ խորհուրդը. քանզի ես լավ գիտեմ, թե մարդ ինչքան առավել ընծաներ նվիրի նրան, այնքան առավել շնորհիների կարժանանա նրա կողմից»: Քսենոփոնը լսելով այս խոսքերը, ընկավ դժվարին կացության մեջ. քանզի Պարիսոնից վերադառնալիս նա եկել էր իր հետ ունենալով միայն մի ստրուկ և հազիվ նախապահաճախար հոգալու շափ միջոցներ:

(21) Երբ նաշի համար ներս մտան քրակիացիներից ամենաերևելիները և հեղինակների զորավարներն ու վաշտապետները և քաղաքից ինչ-որ դեսպանություն ժամանեց, բոլորը շուրջանակի նստած, սկսեցին նաշել: Այնուհետև



յուրաբանչյուրի համար եռուսանի սեղաններ բերվեցին. դրանց վրա առատորեն մսի խորտիկներ կային և քրիստոսով քիսած մեծ հացեր, որոնք շամբուած էին մսի կտորներին: (22) Սեղանները առավելապես դրվում էին հյուրերի առաջ. Բանգի ընդունված սովորության կար, որք և առաջինը կիրառեց Սեթևը: Նա վերցնելով իր առաջ դրված հացերը, դրանք մանր կտորների բաժանեց և նետեց իր ցանկացած մարդկանց առաջ. այդպես վարվեց նաև մսերի հետ. իսկ իր համար բողեց այնքան, ինչքան կարող էր ուտել: (23) Այնժամ մյուսները ևս, որոնց առաջ սեղաններ էին դրված, նույնպես վարվեցին: Իսկ ոմն արկադիացի՝ Արյուստաս անունով, մի ահավոր խոտոր, չէր ցանկանում ուրիշներին ուտեստ նետել. վերցնելով իր ձեռքը մոտ երեք խոյնիկս<sup>23</sup> մեծության հաց և ծնկներին մսի կտորներ դնելով, նա նաշում էր: (24) Բերում էին նաև գիծիով լցրած եղջյուրներ, և բոլորը վերցնում էին դրանք. իսկ Արյուստասը, երբ նրա մոտ էկավ մատովակր՝ եղջյուրը ձեռքին, տեսնելով Քսենոփոնին, որք վերջացրել էր ուտելը, ասաց. «Տուր նրան. Բանգի նա արդեն հանգստանում է, իսկ ես դեռևս ոչ»: (25) Սեթևը լսելով խոսակցությունը, հարցրեց մատովակին, թե ի՞նչ էր նա ասում: Եվ մատովակը, որք հունարեն գիտեր, պատմեց: Այնժամ ծիծաղ առաջացավ:

(26) Միեղդեա խնջույքը շարունակվում էր, ներս մտավ մի քրակիացի, բերելով իր հետ սպիտակ ձի և, վերցնելով գիծիով լցրած եղջյուրը, ասաց. «Խմում եմ քո կենացը, ո՛վ Սեթևս, և պարգևում եմ քեզ այս ձին, որի վրա հեծած դու կարող ես, ցանկության դեպքում, հասնել որևէ փախչողի ետևից, իսկ նահանջի ժամանակ կարող ես շվախենալ քշեամուց: (27) Ուրիշ մեկը ստրուկ բերեց իր հետ և այն նվիրեց, նույնպես խմելով Սեթևսի կենացը. մեկ ուրիշը ևս զգեստներ պարգևեց նրա կնոջ համար: Տիմասիոնը ևս խմելով նրա կենացը, նվիրեց արծաթե բնական և տասը մինա արժողությամբ մի գորգ: (28) Աթենացի Գնեսիպպոսը վեր կենալով ասաց, թե կա լավագույն մի հին սովորույթ, որի համաձայն ունեւորները նվիրում են արքային ի նշան հարգանքի, իսկ շունեւորներին նվիրում է ինքը արքան: «Այդ ձևով միայն ես,— ասաց նա,— կարող եմ քեզ որևէ բան նվիրել ու պատիվ մատուցել»: (29) Իսկ Քսենոփոնը չգիտեր ի՞նչ անել. մանավանդ, որ նա իբրև առավել հարգարժան հյուր, նստել էր Սեթևսին ամենամոտիկ դրված արքային: Իսկ շեռակեյդեսը պատվիրեց մատովակին եղջյուրը մատուցել Քսենոփոնին: Եվ Քսենոփոնը, արդեն փոքր-ինչ խմած լինելով, վեր կացավ համարձակ ու եղջյուրը վերցնելով ասաց. (30) «Ես, ո՛վ Սեթևս, քեզ նվիրում եմ ինձս ինձ և իմ այս ընկերներին, որոնք հավատարիմ բարեկամներ կլինեն քեզ. Բանգի նրանցից ոչ մեկը ակամայից չի եկել այստեղ, այլ բոլորը, առավել քան ես, ցանկանում

են քո բարեկամը դառնալ: (31) Եվ այժմ նրանք այստեղ են եկել քեզանց ուրիշ ոչ մի բան չխնդրելով. այլ նրանք պատրաստ են հոծարակամ իրենց վտանգի և դժվարությունների ենթարկել հոգուտ քեզ: Նրանց օգնությամբ, էրև առավանները կամենան, դու ձեռք կրեես քե՛ այն ընդարձակ երկրները, որոնք պատկանել են քո հայրերին, բայց դու կորցրել ես. թե՛ բազմաթիվ ձիեր, մարդկանց ու գեղադեմ կանանց, որոնց ոչ թե դու պետք է գերելարես, այլ այս մարդիկ իրենք են քեզ նվեր բերելու»: (32) Սեթևը վեր կացավ. Քսենոփոնի հետ միասին խմեց ու նրա հետ միասին եղջյուրից գինու մնացորդը շաղ տվեց<sup>24</sup>: Այնուհետև ներս մտան մարդիկ, որոնք փշում էին այնպիսի եղջյուրներ, որոնցով ազդանշան են տալիս, և նվագում էին եզան հում կաշվից պատրաստած շեփորներով այնպես, ասես մագաղիս<sup>25</sup> էին նվագում: (33) Ինքը Սեթևը նույնպես վեր կացավ, ուղեկան ճիշտ արձակեց և սկսեց մեծ թեթևությամբ ցատկոտել. ասես պաշտպանվում էր արձակված նետից: Հայտնվեցին նաև ծաղրածուներ:


(34) Երբ արդեն արևը մայրամուտին էր հասել, հելլենները վեր կացան և հայտարարեցին, թե պահակներ նշանակելու և կարգախոս տալու ժամն է: Ու Սեթևսին խնդրեցին հրաման արձակել, որպեսզի քրակիացիներից և ոչ մեկը գիշեր ժամանակ չմտենա հելլենների բանակատեղին. «Քանզի քրակիացիները,— ասացին նրանք,— մեզ քշեամի են. իսկ դուք, թեպետև քրակիացի, մեր բարեկամներն եք»: (35) Երբ հելլենները դուրս եկան, վեր կացավ նաև Սեթևը, բոլորովին շնամանվելով հարբած մարդու: Դուրս գալով, նա առանձին կանչեց գորավարներին ու ասաց. «Ո՛վ այրեր. մեր քշեամիները դեռևս չգիտեն մեր զինակցության մասին. ուստի եթե մենք նրանց դեմ գնանք նախ քան նրանք միջոցներ ձեռք կտանեն չգերելու համար և նախքան կնախապատրաստվեն պաշտպանության դիմելու, ապա մենք առավել հաստատ կերպով կգերենք և իրենց, և՛ իրենց ունեցվածքը: (36) Զորավարները հա՛մաձայնվեցին այդ բոլորին և խնդրեցին առաջնորդել իրենց: Եվ Սեթևսն ասաց. «Պատրաստվեցեք և սպասեցեք. իսկ ես, երբ ժամանակը հասնի, կգամ ձեզ մոտ, և պելտաստներին ու ձեզ վերցնելով, կառաջնորդեմ իմ հեծյալների հետ միասին»: (37) Իսկ Քսենոփոնը ասաց. «Ապա մտածիր. եթե իրոք գիշերով պետք է ուղևորվենք, արդյոք ավելի լավ չէ՞ հելլենական սովորությունը. Բանգի ցերեկ ժամանակ ընթանալիս գորհի առջևից գնում է միշտ այն ջոկատը, որք առավել հարմար է տվյալ տեղանքի համար՝ մերք հոպլիտների, մերք պելտաստների, մերք հեծյալների ջոկատը. իսկ գիշեր ժամանակ, հելլենական սովորության համաձայն, առջևից ընթանում է ամենածանրաշարժ գորամարը: (38) Այս եղանակով ամբողջ գորհը պակաս չափով կմասնատվի



և իրարից կտրված շոկատները բիշ շափով իրար կկորցնեն. մինչդեռ մուր-ված շոկատները հանախ են իրար վրա ընկնում և շնանաշելով իրար, շարիք են պատճառում և աուծում»: (39) Այնժամ Ակթեար պատասխանեց. «Ի՞նչ միշտ եմ ասում և ես ձեր սովորությանը կհետևեմ: Ես ձեզ առաջնորդներ կամ երեցների միջից, որոնք լավագույնն ծանոթ են երկրին, իսկ ինձն հեծյալներով զորքի վերջում կհետևեմ ձեզ. անհրաժեշտության դեպքում ես արագ առաջ կսլանամ»: Այնժամ որոշեցին կարգախոսը՝ «Արենա», իրենց ազգակցության պատճառով: Այսպես պայմանավորվեցին ու գնացին հանգստի:

(40) Երբ կեսգիշերի մոտ էր, հայտնվեց Ակթեար լանջապանակներով զրահավորված հեծյալներով ու սպառազինված պելտաստներով: Առաջնորդներին նրանց հանձնելուց հետո հուպիտներն առաջ ընկան, նրանց հետևեցին պելտաստները, իսկ հեծյալները կազմեցին վերջապահ զորամասը: (41) Երբ առավոտ եղավ, Ակթեար ձիով առաջ անցավ ու գովեց հելլենական սովորու-թյունը: Նա ասաց, որ ինքը գիշեր ժամանակ նույնիսկ փոքրաքիվ զորամասով ընթանալիս, հանախ է իր հեծյալներով կտրվել հետևակից. «Իսկ այժմ,— շարունակեց նա,— օրը բացվելու հետ միասին արդեն բոլորս ի մի ենք հավաքվել, ինչպես այդ անհրաժեշտ էր մեզ համար: Բայց դուք այստեղ սպասեցե՛ք և հանգստացե՛ք, իսկ ես փոքր-ինչ հետախուզելուց հետո կվերադառնամ»: (42) Երբ նա հասավ խորը ձյունին, սկսեց հետախուզել, թե կա՞ն արդյոք առաջ կամ ետ գնացած մարդկանց հետքեր: Բայց տեսնելով, որ նանապարհը տրորված չի, շտաով վերադարձավ և ասաց. (43) «Այրե՛ր, եթե աստված կամենա, ամեն ինչ լավ կլինի. բանգի մենք այս մարդկանց վրա հարձակվելու ենք առանց նկատվելու: Բայց ես հեծյալների հետ կսուրամ առաջ, որպեսզի եթե որևէ մեկին նկատենք, ապա նա չկարողանա մեզանից փախչել ու տեղյակ պահել բշտամիներին. իսկ դուք հետևեցե՛ք ինձ. եթե ես մնամ, հետևեցե՛ք ձեր հետևորդներին: Լեռներն անցնելուց հետո մենք կհասնենք բազմաքիվ և հարուստ գյուղերի»:

(44) Կեսօրվա ժամին նա արդեն զագաթին էր և այնտեղից տեսնելով ցածում գտնվող գյուղերը, ձիավառելով վերադարձավ հուպիտների մաս և ասաց. «Այժմ ես հեծյալներին քույլ կտամ սուրալ դեպի դաշտ, իսկ պելտաստներին կողարկեմ գյուղերի վրա: Դուք հետևեցե՛ք նրանց ինչքան կարող եք ավելի արագ, որպեսզի, եթե որևէ մեկը դիմադրի, ետ մղե՛ք նրան»: (45) Այս լսելով Քսենոփոնը ձիուց ցած իջավ: Ու Ակթեար հարցրեց. «Ինչո՞ւ ձիուց իջնում ես, երբ անհրաժեշտ է շտապել»: «Ես գիտեմ,— պատասխանեց Քսենոփոնը,— որ միայն իմ կարիքը չէ, որ ունես. իսկ հուպիտները ավելի արագ և ավելի հոժարակամ կվազեն, եթե ես ինձն նրանց հետիոտն առաջնորդեմ»:



Արծաթյա պոլյակ (սխտոն)՝ Արիմոնից (V դ. մ. թ. ա.)

(46) Դրանից հետո Աւքեսը հեռացավ. նրա հետ նաև Տիմասիոնը, իր հետ տանելով մոտ քառասուն հելլեն հեծյալների չոկատը: Իսկ Քսենոփոնը կարգադրեց մինչև Երեսուն տարեկան թերևագին ռազմիկներին դուրս գալ իրենց վաշտերից: Վերցնելով նրանց, ինքը ևս նրանց հետ միասին վազեց առաջ. իսկ Կլեանորը առաջնորդում էր մնացածներին: (47) Երբ նրանք հասան գյուղերը, Աւքեսը մոտ Երեսուն հեծյալի հետ ձիավարելով մտանցավ նրանց և ասաց. «Ահա քո ասածները, ով Քսենոփոն, կատարվում են. մարդիկ սլանում են ու փախչողներին հալածելիս ցրվում. ուստի ես վախենում եմ, որ թշնամիները որևէ տեղ հավաքվելով շարիք կույրեն մեր դեմ: Անհրաժեշտ է նաև, որ մեզանից ոմանք մնան գյուղերում. քանզի դրանք բազմամարդ են»: (48) «Այդ դեպքում,—ասաց Քսենոփոնը,—ես իմ զինվորներով բաժանվեմ. իսկ դու պատվիրի՛ր Կլեանորին, որպեսզի ֆալանգսը ձգի գյուղերի կողմով»: Երբ այս բոլորն արեցին, նրանք գերի վերցրին շուրջ հազար ստրուկ, երկու հազար եզ, նաև տասը հազար ոչխար: Այնուհետև նրանք այնտեղ իսկ բացօթյա գիշերեցին:

IV. Հաջորդ օրը Աւքեսը գյուղերն ամբողջությամբ հրկիզելով, ոչ մի տուն կանգուն չթողեց, որպեսզի մյուս բնակիչներին ևս ահաբեկի, թե շիրպատակվելու դեպքում նույն փորձության կենթարկվեն ու վերադարձավ: (2) Այնուհետև նա Հերակլեյդեսին ուղարկեց Պերիսթոս, ավարը վանառելու համար, որպեսզի զինվորներին ոռնիկ հայրայրեր: Ինքը հելլենների հետ բանակեց թյունների դաշտում. իսկ թյունները լվելով իրենց տները, փախչում էին դեսյի լեռները: (3) Առատ ձյուն էր տեղացել և այնքան ցուրտ էր, որ նաշի համար բերված ջուրը, ինչպես նաև ամանների մեջ գինին, սառչում էր, և բազմաթիվ հելլենների քթերն ու ականջները ցրտահարվեցին: (4) Այնժամ պարզ դարձավ, թե ինչու քրակիացիները ազվեսի մորթիներ են ծածկում իրենց գլխներին և ականջներին, ինչպես նաև հագնում են խիտոններ, որոնք ծածկում են ոչ միայն նրանց լանջը, այլև ազդրերը, իսկ ձիավարելիս հագնում են ոչ թե ֆլամիդ, այլ յիկնոց, որը հասնում է մինչև ոտները<sup>26</sup>: (5) Աւքեսը գերի վերցվածներից ոմանց ուղարկեց լեռները, պատվիրելով հաղորդել (փախած թյուններին), որ եթե շվերադառնան իրենց տները և շինազանդվեն իրեն, ապա կայրի նրանց գյուղերը ևս, ինչպես և հացը, և նրանք կմեռնեն սովից: Այնժամ լեռներից սկսեցին իջնել կանայք և երեխաներն ու ծերունիները. իսկ երիտասարդները մնացին սարատակի գյուղերում: (6) Աւքեսն այդ իմանալով, պատվիրեց Քսենոփոնին վերցնել ամենաերիտասարդ հոսպիտներին և ընկերակցել իրեն: Գիշերը նանապարհ ընկնելով, նրանք ա-



նավոտյան հասան գյուղերը: Բնակիչների մեծ մասը փախել էր, քանզի լեռ մոտիկ էր. իսկ բոլոր գերվածներին ներքար անխնա նիզակահարեց:

(7) Այնտեղ էր ոմն օլիերացի Եպիստեմոս, արվամոլ մի մարդ. նա տեսնելով նոր պատանիացող գեղաղեմ մի տղայի, որը վստահ էր կրում և որին մահապատիժ էր սպառնում, վազեց Քսենոփոնի մոտ և աղաչեց նրան օգնել գեղաղեմ տղային: (8) Եվ Քսենոփոնը գալով Սևթեսի մոտ, խնդրեց նրան շսպանել տղային ու պատմեց Եպիստեմոսի մոլորյալ մասին և թե ինչպես նա մի անգամ վաշտ կազմեց, զինվորների ընտրության ժամանակ ոչինչ հաշվի չառնելով, բացի գեղեցկությունից. այդ վաշտով նա դարձավ ֆաշարի մարդ: (9) Իսկ Սևթեսը հարցրեց. «Գուցե և ցանկանա՞ս, ով Եպիստեմոս, սպանվել այս տղայի փոխարեն»: Եպիստեմոսը պարզեց իր պարանոցը և ասաց. «Խփի՛ր, Լքե տղան այդ է խնդրում և դրանով իսկ նա քեզ երախտապարտ կլինի»: (10) Սևթեսը հարցրեց տղային, թե արդյո՞ք Եպիստեմոսին սպանի իր փոխարեն: Տղան թույլ չտվեց այդ, այլ աղաչեց իրենց երկուսից և ոչ մեկին չսպանել: Այնժամ Եպիստեմոսը գրկեց տղային և ասաց. «Արդ ժամանակն է, ո՞վ Սևթես, որպեսզի որս համար կովես ինձ հետ. քանզի տղային ես բաց չեմ թողնի»: (11) Իսկ Սևթեսը ծիծաղելով այս բոլորի վրա, համաձայնվեց: Նա որոշեց այնտեղ իսկ բանակել, որպեսզի լեռ փախածները շկարողանան այդ գյուղերից պարեն վերցնել: Ինքն իջավ դաշտ և այնտեղ բանակեց. մինչդեռ Քսենոփոնը իր ընտրյալ զինվորներով մնաց լեռնալանջի ամենաբարձր գյուղում, իսկ մյուս հեյլենները բանակեցին մոտակայքում, լեռնային կոչված քրակիացիների միջև:

(12) Այս դեպքերից հետո շատ օրեր չէին անցել. երբ քրակիացիները լեռից իջան Սևթեսի մոտ և սկսեցին բանակեցնել հաշտության և պատանդների մասին: Եվ Քսենոփոնը եկավ ու ասաց Սևթեսին, թե իր գործմասը վատ տեղում է բանակել և մոտակայքում թշնամիներն են: «Ավելի հանելի կլինեք, — ասաց նա, — եթե բացօթյա գիշերեին ամբողջով ձայրերում, քան բնակարաններում, որտեղ կարող են կործանվել»: Իսկ Սևթեսը խորհուրդ տվեց շանհանգստանալ և ցույց տվեց իր մոտ գտնվող պատանդներին: (13) Միաժամանակ լեռներից իջած մարդիկ Քսենոփոնին խնդրեցին օժանդակել իրենց հաշտություն կնքելու գործում: Նա համաձայնվեց և համոզեց նրանց շանհանգստանալ, ու երաշխավորեց, որ նրանք ոչ մի շարիքի չեն հանդիպի, եթե հնազանդվեն Սևթեսին: Սակայն քրակիացիներն այդպես խոստում էին լրտեսելու նպատակով:

(14) Այս ամենը կատարվեց ցերեկ ժամանակ. իսկ երբ գիշերն իջավ, թյունները լեռից իջնելով հարձակում գործեցին: Դեպի տները նրանց առաջ-

նորդում էր յուրաքանչյուր տան տերը. քանզի այլ կերպ դժվար կլինեք խավարի մեջ գտնել գյուղի տները և, բացի այդ, ոչխարների պատճառով տները բոլոր կողմերից շրջապատված էին բարձր ցցապատներով: (15) Երբ նրանք հասան ամեն մի առանձին բնակարանի դռանը, ոմանք սկսեցին տեղեր նետել, ուրիշները՝ հարվածել լախտերով, որ օգտագործում էին, իրենց ասելով, թշնամու նիզակների ծայրերը շարդելու համար. իսկ ուրիշներ սկսեցին հրկիզել, և Քսենոփոնին իր անունով կանչելով, հրամայեցին դուրս գալ տնից և մեռնել, հակառակ դեպքում սպառնացին նրան այնտեղ իսկ այրել: (16) Եվ արդեն տանիքից բոց էր երևում, իսկ ներսում Քսենոփոնի զինվորները լանջապանակներ հագած ու սաղավարտներ ծածկած, վահաններով ու թրերով կանգնել էին նրա շուրջը, երբ Սիլանոս մակիստիացին, մոտ տասնութամյա մի պատանի, շեփոր հնչեցրեց. և իսկույն մյուս բնակարաններում գտնվողները ևս դուրս թռան մերկացրած թրերով: (17) Իսկ քրակիացիները փախան, վահանները իրենց սովորության համաձայն ուտերին զցած. նրանցից ոմանք բռնվեցին այն պահին, երբ անցնում էին ցցապատները, քանզի որ նրանց վահանները կառչեցին ցցերից և իրենք կախված մնացին. ոմանք էլ ելք չգտնելով սպանվեցին. իսկ հեյլենները թշնամուն հալածեցին գյուղից դուրս: (18) Թյուններից ոմանք ետ շրջվելով, խավարի մեջ նիզակներ նետեցին այրվող տան մոտով վազող հեյլենների վրա. նրանք նետեցին խավարից դեպի լույս, ուստի և խոցեցին վաշտապետ Հիերոնիմոս Եպիստիլացուն<sup>27</sup> և վաշտապետ Թեոգենես լուկացուն. ոչ ոք չսպանվեց, բայց ոմանց զգեստն ու գույքը այրվեցին: (19) Սևթեսը յոթ հեծյալով և քրակիացի շեփորահարի հետ միասին օգնության հասավ առջևում գտնվողներին: Երբ Սևթեսն իմացավ դեպքերի ընթացքը, քանզի դեռ շտապում էր օգնության հասնելու, ամբողջ հանապարհին եղջուրը շեփորում էր. ուստի այս հանգամանքը ևս ազդեց թշնամիների վրա: Հասնելով հեյլենների մոտ, նա ձեռնով ողջունեց նրանց և ասաց, թե ինքը ենթադրում էր նրանցից շատերին սպանված գտնել:

(20) Այնուհետև Քսենոփոնը խնդրեց Սևթեսից իրեն հանձնել պատանդներին և, եթե ցանկանում է, իր հետ միասին արշավել դեպի լեռը. իսկ եթե ոչ, ապա թույլ տալ իրեն արշավելու: (21) Հաջորդ օրը Սևթեսը հանձնեց պատանդներին, որոնք արդեն մեծահասակ էին և, ինչպես ասացին, լեռնալանդների մեջ ամենահեղինակավորներից, և ինքն իսկ եկավ իր գործերով: Արդեն Սևթեսն ուներ եռապատիկ ավելի զորք, քան առաջ. քանզի օգրյուններից շատերը, լսելով Սևթեսի գործողությունների մասին, իջան լեռներից նրա արշավանքին մասնակցելու համար: (22) Իսկ թյունները լեռան բարձրությունից տեսնելով հոպիտաների, պելտաստների և հեծյալների բազմությունը, իջան

ցած և հաշտություն աղերսեցին. խոստանալով ամեն ինչ կատարել և առաջարկեցին իրենց միջից պատանդներ վերցնել: (23) Արևսր կանչեց Քսենոփոնին, հաղորդեց նրանց ասածները և հայտնեց. թե չի խնայելու նրանց, եթե Քսենոփոնը ցանկանում է պատժել նրանց կատարված հարձակման համար: (24) Իսկ Քսենոփոնը պատասխանեց. «Ես կարծում եմ, որ նրանք բավական պատժված կլինեն, եթե ազատ մնալու փոխարեն ստրկացվեն»: Այնուհետև խորհուրդ տվեց Արթեսին հետ այսու պատանդ վերցնել նրանց, ովքեր զորություն ունեն վնասելու, իսկ ձերուներին տուն արձակել: Այսպիսով բոլորը հնազանդվեցին:

V. Այնուհետև հելլենները անցնելով լեռները, գնացին դեպի Բյուզանդիոնից վերև ապրող քրակիացիները՝ դեպի այսպես կոչված Դելտան<sup>28</sup>. այդ արդեն Մայսադեսի տիրույթը չէր, այլ պատկանում էր Տերես օդրյուսացուն: (2) Այստեղ ներկայացավ նաև Հերակլեյդեսը, իր հետ բերելով ավարի վաճառքից գոյացած գումարը: Ու Արթեսը երեք զույգ շորի դուրս բերեց, քանզի ավելին չկար, և մի քանի զույգ եզ, ու կանչելով Քսենոփոնին, պատվիրեց վերցնել դրանց միջից իր ցանկացածը, իսկ մնացածը բաժանել զորավարներին ու վաշտապետներին: (3) Իսկ Քսենոփոնը պատասխանեց. «Ես համաձայն եմ հետագայում ստանալ իմ բաժինը. դու ընծաներ տուր այս զորավարներին ու վաշտապետներին, որոնք հետևել են ինձ»: (4) Այսպիսով, չորիների մի զույգը ստացավ Տիմասիոն դարդանացին, մեկը՝ Կլեանոր օրհմենացին, իսկ մեկը՝ Փոյունիսկոս ախյացին. իսկ եզների զույգերը բաժանվեցին վաշտապետների միջև: Ռոնիկ վնարվեց միայն քսան օրվա համար, թեպետև ամիսը լրացել էր. քանզի Հերակլեյդեսը հայտարարեց, թե նա ավարի վաճառքից չի կարողացել ավելին ստանալ: (5) Քսենոփոնը, սակայն, գայրացավ ու երդվելով ասաց. «Ինձ թվում է, ո՛վ Հերակլեյդես, որ դու հոգ ես տանում Արթեսի օգտի համար ոչ պատշաճ ձևով. քանզի եթե դու իրավ հոգ տանեիր այդ մասին, ապա ռոնիկը լրիվ կբերեիր, թեկուզև պարտք վերցնելով և եթե այլ կերպ հնարավոր չլիներ, նույնիսկ քո սեփական զգեստները վաճառելով»:

(6) Այս խոսքերից Հերակլեյդեսը գայրացավ ու վախեցավ, որ կգրկվի Արթեսի բարեհաճությունից. ուստի և այդ օրվանից սկսեց Քսենոփոնին շարախոսել Արթեսի առաջ: (7) Մինչդեռ զինվորները ևս հանդիմանում էին Քսենոփոնին այն բանի համար, որ ռոնիկ չէին ստացել, իսկ Արթեսը գայրանում էր նրա վրա, որ նա համառորեն պահանջում էր ռոնիկ տալ զինվորներին: (8) Նախապես Արթեսը միշտ խոստանում էր հենց որ ծովափ հասնեն Քսենոփոնին պարգևել Բիսանթեն, Դանոսը և Նեոն ամրոցը: Բայց այս օր-

վանից հետո երբեք այդ մասին չհիշատակեց. քանզի Հերակլեյդեսը նրան ներշնչել էր այն միտքը, թե իբր անվտանգ չի լինի ամրոցները ռազմական ուժեր ունեցող մարդուն հանձնելը:

(9) Այս բոլորից հետո Քսենոփոնը մտածում էր՝ ի՞նչ պետք է անել ավելի ևս դեպի երկրի խորքը արշավելու համար: Մինչդեռ Հերակլեյդեսը մյուս զորավարներին բերեց Արթեսի մոտ և պատվիրեց ասել. թե իրենք կարող էին զորքը առաջնորդել Քսենոփոնից ոչ վատ, և միաժամանակ խոստացավ մի քանի օր հետո վնարել լրիվ երկու ամսվա ռոնիկ, համոզելով նրանց շարունակել արշավանքը Արթեսի հետ: (10) Բայց Տիմասիոնն ասաց. «Այսուհանդերձ, առանց Քսենոփոնի ևս արշավանքին չեմ մասնակցի, եթե նույնիսկ հինգ ամսվա ռոնիկ ինձ վնարեք»: Եվ Փոյունիսկոսն ու Կլեանորը համերաշխ եղան Տիմասիոնի հետ: (11) Այնժամ Արթեսը կշտամբեց Հերակլեյդեսին այն բանի համար, որ նա չէր հրավիրել նաև Քսենոփոնին: Այնուհետև Քսենոփոնին առանձին հրավիրեցին: Իսկ Քսենոփոնը, իմանալով Հերակլեյդեսի խորամանկությունը, որը ցանկանում էր իրեն զրպարտել մյուս զորավարների առաջ, եկավ և իր հետ բերեց նաև բոլոր զորավարներին ու վաշտապետներին:

(12) Երբ արդեն բոլորը համերաշխեցին, համատեղ արշավեցին ու Պոնտոսն իրենց աչ կողմն ունենալով, կորեկակերներ<sup>29</sup> կոչված քրակիացիների երկրի միջով հասան Սալմյուդեսոս<sup>30</sup>: Այստեղ Պոնտոսում նամիտրոդոսը նավերից շատերը խրվում են և ափ նետվում. քանզի ծովն այստեղ երկար տարածության վրա ծանծաղ է: (13) Եվ այդ վայրերում ապրող քրակիացիները սյուններով սահմաններ են նշել և յուրաքանչյուրը կողոպտում է իր բաժնում ափ դուրս եկած նավը. պատմում են. թե մինչև սահմաններ որոշելը, նրանցից շատերը կողոպուտի ժամանակ իրար են սպանել<sup>31</sup>: (14) Այստեղ մեծ թվով մահնակալներ գտան, մեծ թվով արկղներ, զբված զբեր և այլ իրեր, որ նավատերերը սովորաբար փոխադրում են փայտե արկղների մեջ: Այս երկրները հպատակեցնելուց հետո նրանք նորից հեռացան: (15) Այնժամ արդեն Արթեսն ուներ ավելի մեծ քանակությամբ զորք, քան հելլենական զորքն էր. քանզի օդրյուսներից շատերը լեռներից իջան և նրան ընդմիջտ հպատակություն հայտնելով, մասնակցեցին նրա արշավանքին: Նրանք բանակեցին Սելյուսբիայից<sup>32</sup> վերև գտնվող դաշտում. ծովից շուրջ երեսուն ասպարեզ հեռու: (16) Բայց ռոնիկի մասին դեռևս ոչինչ հայտնի չէր: Զինվորները շատ կին նեղացել Քսենոփոնից, իսկ Արթեսն արդեն նրա նկատմամբ բարեհաճ չէր. ինչպես առաջ, և ամեն անգամ, երբ Քսենոփոնը ցանկանում էր հանդիպել Արթեսին, վերջինս միշտ բազում զբաղմունքներ էր ունենում:



VI. Այդ ժամանակ, երբ արդեն անցել էր գրեթե երկու ամիս, Քիբրոնի մտախից ժամանեցին Քարմիթոս լակոնացին և Պոլինիկոսը հաղորդելով, որ լակեդեմոնացիները որոշել են ռազմարշավ սկսել Տիսսափեոնեսի դեմ<sup>23</sup>, և Քիբրոնը արդեն նավերով մեկնել է պատերազմելու նպատակով. նա հելլենական զորքի կարիքն է զգում, ուստի և խոստանում է ամեն ամիս յուրաֆանչյուրին վճարել մեկ դահեկան. վաշտապետներին՝ կրկնակի, իսկ զորավարներին՝ քառակի ավելի:

(2) Երբ լակեդեմոնացիները ժամանեցին, Հերակլեյդեսն իսկույն համոզվելով, որ նրանք եկել են զորքի համար, ասաց Սևթեսին, թե շատ լավ բան է կատարվում. «Քանզի լակեդեմոնացիները զորքի կարիքն ունեն, իսկ այն այսուհետև կեզ պետք չէ. զորքը եթե հանձնես, դու լակեդեմոնացիներին շնորհ բերած կլինես, իսկ զինվորները բեզանից այսուհետև ոռնիկ չեն պահանջելու, այլ շուտով կլինեն այս երկիրը»: (3) Այս լսելով, Սևթեսը հրամայեց ներս հրավիրել դեսպաններին. և երբ նրանք ասացին, թե եկել են զորքի համար, Սևթեսը պատասխանեց, թե կհանձնի այն և ցանկություն հայտնեց նրանց բարեկամն ու դաշնակիցը դառնալու: Ես դեսպաններին կոչունքի հրավիրեց և նրանց մեծ շուքով բնորոնեց: Իսկ Քսենոփոնին նա չհրավիրեց, ինչպես մյուս զորավարներից և ոչ մեկին: (4) Երբ լակեդեմոնացիները հարցրին, թե ինչպիսի՞ մարդ է Քսենոփոնը, նա պատասխանեց, որ բնդհանրապես վատ մարդ չէ. բայց շատ է սիրում զինվորներին. և այդ իսկ պատճառով ինքն իրեն առավել վնաս է պատճառում: Եվ նրանք հարցրին. «Գուցե նա իր խոսքերով գրավում է զինվորներին»: Իսկ Հերակլեյդեսը պատասխանեց. «Ճիշտ այդպես»: (5) «Այդ դեպքում, — ասացին նրանք, — գուցե մե՞զ ևս դիմադրի զորքերը ասանելու գործում»: «Բայց երբ դուք, — պատասխանեց Հերակլեյդեսը, — հավաքելով զինվորներին, խոստանալ նրանց ոռնիկ վճարել, ապա նրանք քիչ ուշադրություն կդարձնեն Քսենոփոնին ու կփութան ձեզ հետևել»: (6) «Իսկ մենք, — ասացին նրանք, — ինչպե՞ս հավաքենք բոլորին»: Հերակլեյդեսը պատասխանեց. «Վաղն առավոտյան մենք ձեզ կտանենք նրանց մոտ, և ես համոզված եմ, որ ձեզ տեսնելով, նրանք հոժարությամբ կվազեն հավաքի»: Այդ օրն այդպես վերջացավ:

(7) Հետևյալ օրը Սևթեսն ու Հերակլեյդեսը լակոնացիներին տարան զորքի մոտ, և զինվորները հավաքվեցին ժողովի: Լակոնացիները ասացին. «Լակեդեմոնացիները որոշել են պատերազմել Տիսսափեոնեսի դեմ, որը ձեզ հանդես պահողություն է գործել. և եթե դուք մեզ հետ արշավեք, ապա և՛ քշնամուն կպատճեք, և՛ ձեզանից յուրաֆանչյուրը կստանա ամսական մեկ դահեկան, վաշտապետը՝ կրկնակի, իսկ զորավարը՝ քառակի»: (8) Զինվոր-

ները հանուրյամբ լսեցին այդ և իսկույն արկաղիացիներից մեկը հանդես եկավ Քսենոփոնին մեղադրելով: Ներկա էր նաև Սևթեսը, որը ցանկանում էր տեսնել, թե ի՞նչ է կատարվելու. նա լսելի տարածության վրա կանգնած էր բարձրահասակ հետ. ինքը ևս հուճարեն ասվածների մեծ մասը հասկանում էր: (9) Այնժամ արկաղիացին ասաց. «Մենք, ո՞վ լակեդեմոնացիներ, դեռ շատ վաղուց կլինեինք ձեզ մոտ, երբ Քսենոփոնը մեզ համոզելով չըրեր այստեղ, որտեղ դաժան սառնամանիքի կովել են և գիշեր ու գոր շենք հանգստացել. մինչդեռ նա օգտվել է մեր տառապանքներից. իսկ Սևթեսը միայն նրան հարստացրեց և մեզ զրկեց ոռնիկից: (10) Ուստի և ես երբ տեսնեմ Քսենոփոնին ֆարկոժվելիս և պատիժ կրելիս այն ամենի համար, ինչի մեջ մեզ ներհաշեց, ապա կհամարեմ իմ վարձն ստացած և երբեք չեմ արժանացի իմ կրած տառապանքների համար»: Սրանից հետո հանդես եկավ մեկ ուրիշը ևս նույն խոսքերով, հետո նաև երրորդը: Այնուհետև Քսենոփոնն այսպես խոսեց.

(11) «Ճիշտ է, սակայն, որ մարդ արարածը պետք է ամեն ինչի պատճառ լինի: Ահա ես հիմա այնպիսի վիճակում եմ, երբ դուք ինձ կշտամբում եք իմ այն գործերի պատճառով, որոնք, իմ կարծիքով, ես մեծ շահասիրությամբ կատարել եմ ձեր օգտին: Արդեն դեպի տուն նախապահ ընկնելուց հետո ես ետ վերադարձա, Զևսը վկա, ոչ թե ձեր բարօրության մասին լսելով, այլ իմանալով, որ գտնվում եք դժվարին դրության մեջ. ու նորից եկա հնարավոր ամեն ինչով ձեզ օգնելու: (12) Երբ ես վերադարձա ձեզ մոտ, ահա Սևթեսը դեսպաններ ուղարկեց և ինձ շատ քան խոստացավ այն դեպքում, երբ ինձ հաջողվե համոզել ձեզ նրա մոտ գնալու. մինչդեռ ես, ինչպես ձեզ հայտնի է, այս բանը հանձն չառա. ընդհակառակը, ձեզ առաջնորդեցի այնտեղ, որտեղից ենթադրում էի, որ դուք ավելի շուտ կարող էիք անցնել Սպիա: Քանզի ես այդ համարում էի ձեզ համար լավագույնը և գիտեի, որ դուք ևս այդ մեկը ցանկանում եք սիրով: (13) Բայց երբ տիրեաներով ժամանեց Արխատարհոսը և մեզ խոչընդոտեց նավերով անցնել, այնժամ ես, ինչպես ընդունված կարգն էր, ձեզ ժողովի հրավիրեցի, որպեսզի միասին որոշենք մեր անելիքը: (14) Այնժամ դուք լսելով Արխատարհոսին, որը հրամայում էր մեզ ուղևորվել դեպի Քերսոնեսոս, և Սևթեսին, որը համոզում էր արշավել իր հետ, բոլորը արտահայտվեցիք Սևթեսի հետ գնալու օգտին և բոլորը այդպես փվարկեցիք: Ուստի ո՞րն է այս դեպքում իմ հանցանքը, երբ ես ձեզ բերել եմ այնտեղ, որտեղ դուք ինքներդ եք որոշել: (15) Ինչ վերաբերում է ձեր ոռնիկի հարցում Սևթեսի խաբելությանը, ապա երբ ես նրան գովաբանեի, դուք իրավացիորեն կարող էիք ինձ մեղադրել և ատել: Բայց երբ նախապես ես եղել եմ նրա ամենամոտիկ բարեկամը, իսկ այժմ նրա հետ ամենից շատ



րե արդարացի կլինե՞ր, այս բոլորի համար իմ դեմ գայրանալու փոխարեն, գոհունակություն հայտնեիք աստվածներին, եղածը օրհնություն համարելով:

(33) Ահա այսպիսին է ձեր վիճակը: Այժմ, հանուն աստվածների, մտածե՛ք նաև իմ վիճակի մասին: Երբ ես առաջին անգամ հավատվեցի տուն գնալու, ինձ հետ տանում էի ձեր ջերմագին գովասանները, ինչպես նաև ձեր օգնությամբ բոլոր հեղինակների առաջ իմ վաստակած համբավը: Ու լակեղեմունացիները ինձ վստահում էին. այլ կերպ նրանք ինձ նորից չէին ուղարկի ձեզ մոտ: (34) Միևնույնը այժմ ես մեկնում եմ լակեղեմունացիների առաջ ձեր կողմից գրպարտված, միաժամանակ ձեր պատճառով առեցի դարձած Արքեպիսկոպոսին, որին ես հույս ունեի ձեր օգնությամբ ծառայություն մատուցել և դրանով իսկ հարմար ապաստան ապահովել թե՛ ինձ, թե՛ իմ որդիների համար, եթե այդպիսիք ես ունենամ<sup>34</sup>: (35) Իսկ դուք, որոնց համար ես այսօր քշեմ մամազա ինձանից շատ ավելի հզոր մարդկանց հետ, դուք, որոնց համար այժմ ես չեմ դադարում իմ ուժերի ներած շափով բարիք գործել, իմ մասին այդպես եք մտածում:

(36) Այժմ ես ձեր առաջ եմ, բայց ոչ որպես փախստական, որին բռնել էք բախնվելիս. և եթե դուք իրագործե՛ք ձեր սպանելիքը, ապա իմացե՛ք, որ դուք սպանած կլինե՛ք մի մարդու, որը ձեզ համար շատ է անույն մնացել, ձեզ հետ միասին շատ տանջանքներ է կրել և վտանգների ենթարկվել թե՛ իր հերթին. թե՛ արտահերթ. մի մարդու, որը աստվածների ողորմածությամբ ձեզ հետ միասին բազմաթիվ կորոզներ կանգնեցրեց ի նշանավորումն բարբարոսների դեմ տարած հաղթանակների. մի մարդու, որն ամեն բան, ինչ կարող էր, արեց, որպեսզի դուք հեղինակներից ոչ մեկին քշեմ մի շղատնայի: (37) Այժմ դուք բոլոր հնարավորություններն ունե՛ք ապահով նսնապարհ ընկնելու բաժնի ձեր բնությունն՝ թե՛ ցամախով. թե՛ ծովով: Եվ դուք, երբ արդեն ձեր առաջ այսօր առատություն է նկատվում, և կարող եք նավարկել դեպի այն երկիրը, ուր վաղուց էիք երազում, և ձեր կարիքն են գգում հզոր առաջնորդները, և արդեն ոռհիկն առկա է. և արդեն ձեզ մոտ են ժամանել լակեղեմունացիները, որոնք ամենահզոր առաջնորդներն են համարվում, այժմ եք դուք որոշում ինձ շուտափույթ մահվան դատապարտելու: (38) Բայց երբ ծանր դուրսանե՛ք մեջ էիք. ո՛վ դուք, բոլորից ուժեղ հիշողություն ունեցողներդ, մի՛թե ինձ հայր չկոչեցիք և խոստացա՞ք ինձ միշտ հիշել որպես ձեր բարեբախտ: Բայց չէ՞ որ այժմ այստեղ ձեզ մոտ ժամանած մարդիկ ևս անմիտներ չեն. ուստի և ես կարծում եմ, որ իմ նկատմամբ ձեր այս վերաբերմունքից հետո նրանք ևս ձեր մասին լավ կարծիք չեն կազմիք: Այս ասելով նա վերջացրեց իր խոսքը:

(39) Վեր կացավ Քարմինոս լակեղեմունացին և ասաց. «Չույզ աստվածները վկա<sup>36</sup>. ինձ բվում է, որ դուք անարդարացի եք դժգոհում այս մարդուց. Բանգի ես նույնպես կարող եմ վկայել նրա օգտին: Երբ ես Պոլիսիկոսի հետ Սերբեսին հարցրինք Քսենոփոնի մասին, թե ու ինչպիսի՞ մարդ է, ապա նա որիչ ոչ մի պարտավանք չկարողացավ գտնել. այլ միայն ասաց, թե շատ է սիրում զինվորներին: Այդ իսկ պատճառով Քսենոփոնի գործերը վատ են թե՛ մեզ՝ լակեղեմունացիներին, թե՛ Սերբեսի մոտ: (40) Այնուհետև եվրիլոնոս լուսիացին [Արկադիայից] հանդես եկավ ու ասաց. «Իմ կարծիքով, ո՛վ լակեղեմունացիներ, մեզ վրա գորավարներ դառնալուց առաջ դուք պարտավոր եք Սերբեսից գանձել մեզ խոստացված վարձը՝ կամովին լինի դա, թե բռնությամբ. իսկ մինչ այդ դուք մեզ այստեղից չե՛ք շարժիք»: (41) Իսկ Պոլիկրատես արքեպիսկոպոսի դրդմամբ այսպես ասաց. «Ո՛վ այրեր. ևս այստեղ ներկա եմ տեսնում նաև Հերակլեյդեսին, որը վերցնելով մեր ջանքերով ձեռք բերված ունեցվածքը, դրանք վանառեց, բայց ոչ Սերբեսին փող տվեց, ոչ էլ մեզ. այլ դրանք բախնվելով, յուրացրեց: Եթե մենք խելամիտ լինե՛նք, ապա նրան պետք է վար դենք, մանավանդ որ.— շարունակեց Պոլիկրատեսը,— նա քրակիացի չէ. այլ հեղինակ լինելով հանդերձ, վնասում է հեղինակներին»: ևս քրակիացի չէ. այլ հեղինակ լինելով հանդերձ, վնասում է հեղինակներին»:

(42) Այս լսելով Հերակլեյդեսը մեծապես ահաբեկվեց և, մոտենալով Սերբեսին, ասաց. «Եթե մենք խելամիտ լինե՛նք, ապա կհեռանան այստեղից, այս մարդկանց իշխանությունից»: Ու նա հեղինակ լինելով նրանք հեռացան իրենց սեփական բանակատեղին: (43) Եվ այստեղից Սերբեսը Քսենոփոնի մոտ ուղարկեց իր քարգման Արրոզյուլեսին, առաջարկելով նրան մնալ իր մոտ հազար հույլիաների հետ միասին, և խոստացավ նրան պարգևել թե՛ առափնյա ամրությունները, թե՛ այն ամենը, ինչ խոստացել էր: Միաժամանակ իրեն գաղտնի հաղորդեց նրան, թե Պոլիսիկոսից իմացել է, որ եթե Քսենոփոնը ընկնի լակեղեմունացիների ձեռքը, ապա անպայման կսպանվի Քիրոսի կողմից: (44) Ուրիշ շատերը ևս գոչացրին Քսենոփոնին, ասելով, որ նրան զրպարտել են և որ անհրաժեշտ է պահպանվել: Նա լսելով այս ամենը, երկու ողջակեզ վերցրեց ու գոհաբերեց Չես Արեային, հարցնելով, թե ո՞րն էր իր համար առավել լավ ու շահավետ. մնա՛լ Սերբեսի մոտ նրա առաջարկած պայմաններով. թե՛ հեռանալ գուրբի հետ միասին: Ու պատասխանը եղավ՝ հեռանալ:

VII. Այնուհետև Սերբեսը բանակեց ավելի հեռու տարածության վրա. իսկ հեղինակները օրհանեցին գյուղերում, որտեղից. լրիվ պարենավորվելուց հետո նրանք պետք է մեկնե՛ին դեպի ծով: Այդ գյուղերը Սերբեսը պարգևել էր Մեդոսաղեսին: (2) Ուստի Մեդոսաղեսը տեսնելով, թե գյուղերի ունեցվածքը

վասնովում է հելլենների կողմից, գայրացավ. և նա վերցրեց իր հետ օբյեկտներին հզորագույն մեկին. որն իջել էր վերին երկրից, և շուրջ երեսուն ձիավորով եկավ ու հելլենական զորքի միջից կանչեց Քսենոփոնին: Սա իր հետ վերցնելով վաշտապետներից ոմանց և ուրիշ բանիմաց մարդկանց, ընդառաջ գնաց նրան: (3) Այնժամ Մեդոսադեսն ասաց. «Դու, ո՞վ Քսենոփոն, անիրավ գործ եմ անում մեր գյուղերը քաղանելով: Ուստի մենք ձեզ նախագրուշացնում ենք, ես՝ Սևթեսի անունից, և այս մարդը, որը ժամանել է Մեդոկոսի՝ վերին երկրի քաղավորի կողմից, որպեսզի հեռանա այս երկրից. հակառակ դեպքում մենք ձեզ այդ բանը քույլ չենք տա, և եթե մեր երկրին շարիք հասցնեք, մենք կպաշտպանվենք ձեզանից իբրև բշտամիներին»:

(4) Իսկ Քսենոփոնն այս լսելով ասաց. «Քո այդ խոսքերին դժվար է պատասխանել. սակայն ես կխոսեմ հանուն այս երիտասարդի<sup>36</sup>, որպեսզի նա իմանա, թե ինչպիսին եմ դու, և ինչպիսին եմ մենք: (5) Մենք,—չարունակեց նա,—նախքան ձեզ հետ բարեկամություն հաստատելը, այս երկրով առաջ էինք գնում մեր ցանկացած ուղղությամբ, կողոպտելով այն. ինչ ցանկանայինք և այրելով այն, ինչ ցանկանայինք: (6) Նույնիսկ դու, երբ մեզ մոտ ժամանեցիր իբրև դեսպան, բշտամիներից առանց վախենալու, իջևանեցիր մեզ մոտ, և դու խուսափում էիր այս երկրից, և եթե իսկ երբևիցե գալիս էիր այստեղ, ապա այդ անում էիր առավել հզորների երկրում ապաստան գտնելու համար, ընդ որում ձիերը միշտ սանձած պահելով: (7) Բայց մեզ հետ դաշնակցելուց հետո, մեր միջոցով, ասավանների օգնությամբ այս երկրին տեղ դարձաք, իսկ այժմ մեզ վտարում եք այն երկրից, որին մենք տիրել էինք մեր զենքի օգնությամբ: Դու ինքդ ևս գիտես, որ բշտամին չկարողացավ մեզ այստեղից դուրս էլնել: (8) Դու նույնիսկ շես ցանկանում այն ծառայության փոխարեն, որ մենք քեզ մատուցել ենք, շնորհակալական նվերներ տալով, մեզ հանապարհ դնել. այլ ամեն ինչ անում ես, որպեսզի մենք մեկնելիս ոչ մի տեղ չկարողանանք ապաստան գտնել: (9) Եվ այդ խոսքերն ասելիս դու ո՞չ ասավաններից ես ամաշում, ո՞չ իսկ այս մարդուց, որն այժմ տեսնում է քո հարստանալը և գիտի, թե նախքան մեզ հետ բարեկամություն հաստատելը դու, ինչպես ինքդ ասացիր, ավագակությամբ էիր զբաղվում: (10) Սակայն ինչո՞ւ դու այդ բոլորն ինձ ես ասում. չէ՞ որ այժմ ես չեմ հրամանատար, այլ լակեդեմոնացիներ, որոնց, ո՞վ զարմանալի մարդիկ, դու հանձնեցիր զորք, այն ես առաջնորդելու համար. առանց ինձ հետ խորհրդակցելու, կարծելով, որ ես նրանց ատելի եմ դարձել զորք ձեզ մոտ առաջնորդած լիներուս համար, իսկ այժմ վախենում եք, որ զորք լակեդեմոնացիներին հանձնելով, ես կարող եմ նրանց մոտ շնորհ գտնել»:

(11) Օբյեկտն այս բոլոր լսելուց հետո ասաց. «Ինչ վերաբերում է ինձ, ո՞վ Մեդոսադես, ես ամորից ուզում եմ գետնի մտնել այդ խոսքեր լսելով: Եթե ես այս բոլոր նախապես իմանայի, ապա երբեք չլի հետևի քեզ. իսկ այժմ ետ եմ վերադառնում: Քաղավոր Մեդոկոսը նույնպես ինձ չի գովաբանի. եթե դուրս էլնի բարեգործներին»: (12) Այս ասելով նա հատեց ձի ու մեկնեց մյուս հեծյալների հետ, բացի շուրջ քե հինգ հոգուց: Իսկ Մեդոսադեսը, որը վշտանում էր երկրի ավերումից, խնդրեց Քսենոփոնին՝ հրավիրել երկու լակեդեմոնացիներին: (13) Եվ Քսենոփոնը իր հետ վերցնելով մտիկ մարդկանց, եկավ Քարմինոսի և Պոլիեթիոսի մոտ և ասաց, թե նրանց հրավիրում է Մեդոսադեսը, առաջարկելու համար նույնը, ինչ իրեն էր առաջարկել՝ հեռանալ երկրից: (14) «Եվ ես կարծում եմ,—չարունակեց նա,—որ դու կկարողանաք զինվորներին խոստացված վարձն ստանալ, եթե հայտարարեք, որ զորքը պահանջում է ձեր օժանդակությունը՝ կամա թե ակամա վարձը Սևթեսից գանձելու համար, որից հետո զինվորները հոծարակամ կհետևեն ձեզ. ասացե՛ք նաև, թե ձեր կարծիքով զորքն իրավացի է, ուստի և դուք խոստանում եք մեկնել, եթե զինվորների արդար պահանջները բավարարվեն»:

(15) Այս լսելով, լակոնացիները պատասխանեցին, թե այդ ամենի մասին կխոսեն, ինչպես նաև իրենց կողմից կավելացնեն ինչ կարող են. և իսկույն հանապարհ ընկան, իրենց հետ վերցնելով բոլոր հմուտ մարդկանց: Երբ տեղ հասան, Քարմինոսն ասաց. «Եթե դու որևէ բան ունես մեզ ասելու, ո՞վ Մեդոսադես, ասա. իսկ եթե ոչ, ապա մենք քեզ ասելու բան ունենք»: (16) Այնժամ Մեդոսադեսը մեղմությամբ պատասխանեց. «Ես ասում եմ, նույնպես և Սևթեսը, որ մեր բարեկամները ձեր կողմից ոչ մի շարիքի պետք չեն բարկվեն: Եթե նրանց որևէ շարիք պատճառեք, ապա այդ մեզ պատճառած եք լինում. քանզի նրանք մեզ են պատկանում»: (17) «Մենք,—պատասխանեցին լակոնացիները,—կմեկնենք այն ժամանակ, երբ այս բոլորը ձեզ համար նվաճողները կստանան իրենց վարձը. հակառակ դեպքում մենք այժմ նույնպես կօժանդակենք նրանց և կպատժենք այն մարդկանց, որոնք հակառակ արված երդումներին, նեղացրին նրանց: Եթե դու ևս այդպիսիներից եք, ապա ձեզանից մենք կսկսենք իրավունք պահանջել»: (18) Իսկ Քսենոփոնն ասաց. «Չէի՞ք ցանկանա, ով Մեդոսադես, քույլ տալ այն մարդկանց, որոնց երկրում ենք մենք գտնվում և որոնց դու ձեր բարեկամներն եք համարում, որպեսզի իրենք որոշեն, թե դո՞ւ պետք է հեռանաք այս երկրից, թե՞ մենք»: (19) Մեդոսադեսը այդ բանին «ոչ» պատասխանեց. բայց պնդեց, որ երկու լակոնացիները վարձի հարցով գնան Սևթեսի մոտ և ասաց, թե իր կարծիքով Սևթեսը կհամոզվի. եթե իրենք համաձայն չեն գնալու, այդ դեպքում քող Քսեն-

նոփոնին ուղարկեն իր հետ. իսկ ինքը խոստացավ օժանդակել, բայց խնդրեց գյուղերը շայրել:

(20) Այնժամ ուղարկեցին Քսենոփոնին ու նրա հետ ամենահմուտ քվացող մարդկանց: Քսենոփոնը գալով Սևրեսի մոտ, սաաց նրան. «Ես եկել եմ, ո՛վ Սևրես, ոչ թե որևէ բան պահանջելու, այլ, երևի կարողանամ, ցույց տալու, (21) թե դու անարդարացի կերպով ինձանից վրդովվեցի՝ այն բանի համար, որ ես պահանջում էի քեզանից հոժարակամ վճարել զինվորներին խոստացված վարձը. քանզի ես ենթադրում էի, որ քեզ համար ավելի լավ է, որ ինքդ տաս, քան նրանք վերցնեն այդ: (22) Նախ ես գիտեմ, որ այս մարդիկ էին, որ աստվածների օգնությամբ քեզ երևելի դարձրին ու դրա հետ միաժամանակ ընդարձակ երկրի ու բազում մարդկանց վրա քաղաք հաստատեցին. այնպես, որ դու չես կարող քաղցնել ո՛չ քո վատ, ո՛չ էլ քո լավ արարքները:

(23) Այսպիսի դիրքում գտնվող մարդու համար, իմ կարծիքով, շատ կարևոր է խուսափել այն մեղադրանքից, թե իբր նա ապերախտորեն իրենից նեղացրեց իր բարեկամներին. միաժամանակ շատ կարևոր է գովասանել լսելի վեց հազար մարդու կողմից<sup>37</sup>, իսկ առավել կարևոր է երբեք չդժել տված խոստումը: (24) Քանզի վստահություն չվայելող մարդկանց խոսքերը մնում են ունայն, անգոր և անարժեք. իսկ իրենց նշմարտասիրությամբ հայտնի մարդիկ երբ որևէ բան են խնդրում, ապա նրանք իրենց խոսքով ավելին են ձեռք բերում, քան ուրիշները՝ բռնությամբ: Իսկ երբ նրանք ցանկանան որևէ մեկին խելի բերել, ապա նրանց սպանալիքը միայն ոչ պակաս սանձահարող կլինի ուրիշների կիրառած պատիժներից. և երբ այսպիսի մարդիկ որևէ բան խոստանան, ապա նրանք ոչ պակաս հաջողության կհասնեն, քան ուրիշները անմիջական նվիրատվությամբ:

(25) Հիշիր, թե մեզ ի՞նչ կանխավճար տվեցիր, երբ մեզ հետ հաշտության դաշն էիր կնքում. գիտես, որ ոչինչ: Բայց քանի որ մենք հավատում էինք քո խոսքերի նշմարտությանը, ապա դու կարողացար համոզել այսօր մեծ քվով մարդկանց արշավել քեզ հետ ու նվաճել քեզ համար ոչ թե երեսուն տաղանդ արժող իշխանություն, որպիսի գումար այժմ պահանջում են զինվորները. այլ բազմապատիկ ավելի: (26) Այսպիսով, նախ և առաջ այն վստահությունը, որը քեզ համար քաղաքացիություն նվաճեց, այս գումարով վաճառվում է:

(27) Այժմ հիշիր նաև, թե ինչպիսի մեծ կարևորություն էիր տալիս քո այժմյան տիրույթները նվաճելու գործին: Ես վստահ եմ, որ դու այդ ժամանակ խիստ ցանկանում էիր ձեռք բերել այն, ինչ արդեն այժմ նվաճել ես,

քան ստանալ բազմապատիկ ավելի դրամ, քան այս գումարն է: (28) Ես կարծում եմ, թե ավելի մեծ կարուստ և ամոք է այժմ արդեն ձեռք բերածը կորցնելը, քան բոլորովին չունենալը. նիշա ինչպես առավել ծանր է հարուստ վիճակից դառնալ աղքատ, քան երբեք հարուստ չլինել. և առավել վշտալի է քաղաքներից դառնալ հասարակ մարդ, քան բոլորովին չբազմաբնակել: (29) Գուշն հասկանում, որ քո այժմյան հպատակները ոչ թե քո նկատմամբ բարեկամական զգացումներից դրդված համոզվեցին քո իշխանության տակ ապրել, այլ կարիքից ստիպված, և որ նրանք կփորձեն դարձյալ ազատություն ձեռք բերել, եթե երկյուղը նրանց չկաշկանդեր: (30) Ո՛ր դեպքում, քո կարծիքով, նրանք քեզանից պետք է առավել երկյուղեն և քեզ հնազանդվեն. այն դեպքում, երբ նրանք տեսնեն, թե զինվորները քո նկատմամբ այնպես են տրամադրված, որ հոժար են այժմ մնալ այստեղ. երբ դու այդպես հրամայես, կամ իսկույն ետ վերադառնալ, երբ դու իրենց կարիքն ունենաս, կամ այն դեպքում, երբ նրանք տեսնեն, թե ուրիշները ես, լսելով նրանցից քո բարեմասնությունների մասին, քո հրամանով անհապաղ ներկայանում են այստեղ, թե՛ այն դեպքում, երբ նրանք անբարեկալստ կարծիք կազմեն քո մասին և համոզվեն, որ ոչ մի գործ չի գալու դեպի քեզ, այժմ կատարված դեպքերի հետևանքով առաջացած անվստահության պատճառով, իսկ այս զինվորները առավել հակված կլինեն դեպի նրանց, քան թե քեզ: (31) Բացի այդ, նրանք քեզ հնազանդվեցին ոչ թե մեր քվական գերազանցությունից պարտվելով, այլ առաջնորդներ չունենալու հետևանքով: Այժմ առկա է նաև այն վտանգը, թե նրանք կարող են իրենց համար առաջնորդ ընտրել այն մարդկանց միջից, որոնք համարում են, որ քեզանից վերավորանք են կրել, կամ նույնիսկ նրանցից ավելի հզոր լակեդեմոնացիներին, երբ, իհարկե, զինվորները խոստանան առավել հոժարակամ մասնակցել նրանց արշավանքին այն պայմանով, որ քեզանից վերցնեն խոստացվածը, իսկ լակեդեմոնացիները, գործի կարիք զգալով, ընդառաջեն նրանց պահանջին: (32) Անկասկած, այժմ քո հպատակության տակ գտնվող քրակիացիները առավել հոժարությամբ կգնան քո դեմ, քան քեզ հետ. քանզի քո հաղթանակի դեպքում նրանց սուրկություն է սպասում, իսկ քո հաղթվելու դեպքում՝ ազատություն:


(33) Եթե դու ցանկանում ես հոգ տանել այս երկրի մասին իբրև բռն, ո՛ր դեպքում, քո կարծիքով, այն գերեզ կմնա մեծ շարիքներից. երբ այս զինվորներն ստանան իրենց պահանջածն ու մեկնեն, իրենց ետև խաղաղություն բողոքելով, թե՛ նրանք ես երբ մնան այստեղ իբրև բռնաժողովուրդ, որի պատճառով էլ դու ստիպված կլինես նրանց դեմ հանել առավել մեծաթիվ գործ, որը ես պարենի կարիք կունենա: (34) Ո՛ր դեպքում ավելի շատ դրամ



կծախսվի. երե այս մարդկանց վնասե՛ս քո պարտքը, քե՛ այդ պարտքը երե մնա քեզ վրա, և դու անհրաժեշտություն զգաս ուրիշ, ավելի հզոր բանակ վարձելու: (35) Ճիշտ է, որ Հերակլեյդեսին, ինչպես ինձն ինձ հայտնեց, այս գումարը ևս շատ մեծ է քվում: Սակայն շատ ավելի հեշտ է քեզ համար այժմ այդ գումարը հավաքելով մեզ վնասելը, քան քե մեր այստեղ գալուց առաջ դրա տասներորդ մասը հավաքելը: (36) Քանզի քվական քանակը չէ շատը կամ քիչը որոշողը, այլ վնասողի և ստացողի կարողությունը: Իսկ այժմ քո տարեկան եկամուտն ավելի է, քան ամբողջ քո նախկին ունեցվածքը:

(37) Իսկ ես, ո՛վ Սեքես, իբրև քո բարեկամը, այս բոլորի մասին կանխամտածել եմ, որպեսզի և՛ դու արժանի համարվեիր աստվածների կողմից քեզ շնորհված բարիքներին, և՛ ես զինվորների մոտ հեղինակությունից չզրկվեի: (38) Լավ իմացիր, որ ես այժմ այս գործի օգնությամբ քշնամուն ոչ մի վնաս չեմ կարող հասցնել, երե այդ ցանկանամ, ինչպես նաև ի վիճակի չեմ լինի նորից քեզ օգնության հասնել, երե այդ ցանկանամ իսկ. ահա այսպիսին է գործի վերաբերմունքը դեպի ինձ: (39) Այսուհանդերձ, ես վկայակոչում եմ քեզ և ամենիմաց աստվածներին, որ ես երբեք քեզանից ոչինչ չեմ ստացել զինվորների համար, ոչ իսկ երբեք քեզանից խնդրել եմ նրանց պատկանող որևէ բանը ինձ տալ, և երբեք չեմ պահանջել ստանալ նույնիսկ այն, ինչ անձամբ ինձ էիր խոստացել: (40) Երդվում եմ քեզ, որ ես չեմ քնդունի քո վնասումը, երե զինվորները ևս ինձ հետ չստանան իրենց բաժինը: Քանզի ամոք բան կլինեք կարգավորել իմ գործերը և անուշադրության մատնել նրանց ձախորդությունը, մանավանդ որ նրանք հարգում են ինձ: (41) Ճիշտ է, Հերակլեյդեսը ամեն ինչ, որևէ զեղով հարստանալու հետ համեմատած, անմիտ է համարում. իսկ ես, ո՛վ Սեքես, կարծում եմ, որ ամեն մի մարդու, հատկապես հրամանատարի համար, չկա առավել արժանավայել բան, քան անապիճությունը, արդարադատությունը և ազնվությունը: (42) Այս հատկություններով օժտված մարդը հարուստ է, քանզի ուրիշները ևս ձգտում են դառնալ նրա բարեկամները, և նա բարեբախտության մեջ շատ հաղորդակիցներ կունենա, իսկ դժբախտության մեջ նրան օգնողները չեն պակասի:

(43) Բայց երե դու ոչ իմ արարքներից կարողացար ենթադրել, քե ես ամբողջ հոգով քո բարեկամն եմ, ոչ իսկ այդ բանում համոզվեցիր իմ խոսքերից, ապա լավ մտածիր այն ամենի մասին, ինչ զինվորներն ասացին. քանզի դու ներկա էիր և լսեցիր ինձ պարսավող մարդկանց խոսքերը: (44) Նրանք լակեղեմոնացիների առաջ ինձ մեղադրում էին, որ իբր քեզ էի առավել նվիրված, քան լակեղեմոնացիներին, և ինձ ամբաստանում էին, որ ես քո շահերը առավել բարձր եմ դասում, քան նրանցը. նրանք ասացին նաև, որ



Հունական նավեր. հին հունական վազայից.

Ես իբր ֆեզանից բնծաներ եմ ստացել: (45) Սակայն այդ բնծաների մասին նրանք ինչո՞ւ ինձ մեղադրեցին: Մի՞թե այն պատճառով, որ նրանք իմ կողմից ինչ-որ վատ վերաբերմունք են նկատել և նկատելի և հանդեպ, թե՛ բնդհակառակը, հասկացել են, որ ես շատ բարեկամ եմ և նկատմամբ: (46) Այսուհանդերձ, ես կարծում եմ, որ ամեն մարդ պարտավոր է Երախտահատույց լինել նրան, ով իրեն բնծաներ է պարգևել: Իսկ դու, հախճան ես ֆեզ որևէ ծառայություն կմատուցեի, ինձ բարյացակամություն հայտնեցիր և հայացրով, խոսքով ու նվերներով, և երբեք չզրացար ինձ խոստումներ տալ: Բայց երբ արդեն և ցանկությունները կատարվել են և դարձել ես այնքան հզոր, ինչքան որ ես կարող էի ֆեզ դարձնել, արդ դու հանդգնում ես անտեսել այն, որ ես զինվորների առաջ այսպիսի անպատվության եմ արժանանում: (47) Բայց ես համոզված եմ, որ դու կվճռես արժանին հատուցել. քանզի ժամանակը ֆեզ կսովորեցնի այդ անել և դու ինքդ ևս չես հանդուրժի կշտամբանք լսել այն մարդկանց բերանից, որոնք ֆեզ այսքան ծառայություն են մատուցել: Ուստի և ես խնդրում եմ ֆեզանից, որ նրանց վարձը վճարես և աշխատես զինվորների աշխին իմ հեղինակությունը դարձնել այնպիսին, ինչպիսին եղել էր հախճանում, երբ մենք հանդիպեցինք»:

(48) Այս լսելով, Սևրեսը անիծեց այն մարդուն, որը պատճառ էր եղել վարձը ժամանակին չվճարելուն. և բոլորը կասկածում էին, որ այդ մարդը Հերակլեյդեսն է. «Քանզի ես,—ասաց Սևրեսը,—երբևէ իսկ չեմ մտածել վարձը պահելու մասին, ուստի և բոլորը կվճարեմ»: (49) Այնժամ Քսենոփոնը դարձյալ ասաց. «Քանի որ այժմ որոշել ես վարձը վճարել, սպա վճարի իմ միջոցով, որպեսզի ևս պատճառով զորքի առաջ այժմ ոչ պակաս պատիվ ունենամ, քան այն ժամանակ, երբ ժամանեցի ֆեզ մոտ»: (50) Իսկ նա ասաց. «Իմ պատճառով զինվորների մաս դու պակաս պատիվ չես ունենա, եթե ցանկանաս ինձ մոտ մնալ միայն հազար հույլիտով, իսկ ես կպարգևեմ ֆեզ թե՛ կալվածք, թե՛ այն ամենը, ինչ խոստացել եմ»: (51) Քսենոփոնը դարձյալ այսպես ասաց. «Այդ բոլորն այժմ անհնարին է. ուստի մեզ նանապարհ դիր»: «Բայց ես,—ասաց Սևրեսը,—համոզված եմ, որ ֆեզ համար ավելի ապահով է մնալ ինձ մոտ, քան թե մեկնել»: (52) Իսկ Քսենոփոնը դարձյալ պատասխանեց. «Զգուշացնելով համար ֆեզ շնորհակալ եմ. բայց ես չեմ կարող մնալ: Իմացիր սակայն, որ եթե որևէ տեղ ես առավել պատվի արժանանամ, ապա դրանից ֆեզ ևս օգուտ չկունի»: (53) Այնժամ Սևրեսն ասաց. «Դրամ ես չունեմ. իսկ այն ֆիշը, որ ունեցիր, բնդամներ մեկ տաղանդ, տալիս եմ ֆեզ. վեց հարյուր եզ, շուրջ չորս հարյուր, որոնք ոչխար և շուրջ հարյուր ֆամ ստուկ: Վերցրու այս բոլորը, ինչպես նաև իմ վիրավորած պատանդներին, և մեկ-

նիր»: (54) Քսենոփոնը ծիծաղեց և ասաց. «Եթե այդ բոլորը շրվակահանացնի վարձը վճարելու համար, ապա ես ո՛րքո՞ւ պետք է համարեմ այս մեկ տաղանդը: Ավելի լավ չէ՞, քանի որ մեկնելը ևս ինձ համար ապահով չէ, ևս զգուշանամ քարոզման ենթարկվելու վտանգից: Քանզի ինձի ևս լսեցիր եղած սպառնալիքները»: Այսպիսով Քսենոփոնը մնաց նրա մոտ:

(55) Հետևյալ օրը Ակքեսը տվեց նրանց այն, ինչ խոստացել էր և նրանց հետ ուղարկեց նաև մարդկանց, որոնք պետք է նախիրը բշխեն: Իսկ զինվորները մինչ այդ ասում էին, թե Քսենոփոնն իբր գնաց Ակքեսի մոտ, այնտեղ մնալու և իրեն խոստացվածը ստանալու նպատակով. բայց երբ տեսան նրան, ուրախացան և ընդառաջ վազեցին: (56) Իսկ Քսենոփոնը, նկատելով Քարմիճոսին և Պոլիեմիդոսին, ասաց. «Այս ամենը գործի համար ապահովվեց ձեր միջոցով. ուստի և ես բոլորը ձեզ եմ հանձնում, որպեսզի դրանք բաժանեք զինվորներին»: Նրանք վերցրին ունեցվածքը և վաճառողներ նշանակելով, սկսեցին վաճառել. և շատ մեղքեր բարդվեցին նրանց վրա: (57) Իսկ Քսենոփոնը չէր մտածում, այլ բացահայտ կերպով պատրաստվում էր տուն վերադառնալու, քանզի Արեմնիում դեռևս որոշում չէր կայացվել նրա արտաքսման մասին<sup>39</sup>: Սակայն գորաբանակում գտնվող նրա մտերիմները եկան նրա մոտ ու խնդրեցին չմեկնել, մինչև գործը (Թրակիայից) հանելը և այն Թիրոնին հանձնելը:

VIII. Այստեղից հեղինակները նավեցին Լամփակոս, որտեղ Քսենոփոնին նաևողիպեց գուշակ Եվկլիդեսը, որին կլեագորասի, որը կերտել էր Լյուկեյոնի<sup>39</sup> որմնակարները: Եվկլիդեսը խնդակեց Քսենոփոնին նրա փրկության համար և հարցրեց, թե ինչքա՞ն օսկի է բերել: (2) Իսկ Քսենոփոնը երդվելով ասաց նրան, թե ինքը նույնիսկ տուն վերադառնալու միջոցներ չէր ունենա, եթե չվաճառեր իր ձին և իր հետ ունեցած իրերը: Իսկ նա Քսենոփոնին չհավատաց: (3) Բայց երբ Լամփակոսցիները Քսենոփոնին հյուրընկալման ընծաներ ուղարկեցին, և նա զոհ մատուցեց Ապոլլոնին, այնժամ նրա մոտ կանգնած Եվկլիդեսը դիտարկեց զոհաբերման նշանները, ասաց, ո՞ր հավատում է, որ Քսենոփոնի մոտ դրամ չկա: «Բայց ես տեսնում եմ, — ասումակեց նա, — որ եթե նույնիսկ երբևիցե հարստանալու առիթ ներկայա՞ս, ապա այդ բանի համար խոչընդոտ պետք է լինի. եթե ուրիշ արգելիք չլինի, ինձի բեզ պետք է խանգարես»: Քսենոփոնը այդ բանին հայտնի էր և եղավ: (4) Ու Եվկլիդեսն ասաց. «Բեզ խոչընդոտում է Ձևս Ողորձը<sup>40</sup>, և հարցրեց՝ «արդյո՞ք դու Ձևսին այնպիսի զոհեր մատուցել ես, ինչպիսին ես մատուցում էի տանը՝ զոհը ողջակիզելով»<sup>41</sup>: Քսենոփոնը պատասխանեց, թե տնից մեկնելուց հետո այդ աստծուն զոհեր չի մատուցել: Եվկլիդեսը խորհուրդ տվեց նրան

զոհ մատուցել ընդունված սովորության համաձայն և ասաց, թե այդ իրեն շատ օգուտ կբերի: (5) Հաջորդ օրը Քսենոփոնը գալով Սփրյունիոն, զոհ մատուցեց և խոզեր ողջակիզեց հայրենական սովորության համաձայն, և ստացավ բարեկաստ նախանշաններ: (6) Նույն այդ օրը ժամանեցին Քիոնը և Նավսիկլիդեսը՝ զորքին դրամ բաժանելու համար: Նրանք հյուր եղան Քսենոփոնի մոտ և ենթադրելով, որ նա Լամփակոսում խիստ կարիքից դրդված վաճառել է իր ձին հիսուն դահեկաճով, և որովհետև լսել էին, որ նա շատ էր սիրում իր ձիուն, փրկագնեցին այն, վերադարձրին Քսենոփոնին և հրաժարվեցին գինը վերցնել:

(7) Այստեղից նրանք առաջ ընթացան Տրովադայի միջով և անցնելով Իդե լեռը, նախ հասան Անտանդրոս, այնուհետև գնացին ծովափով և հասան Թեբեի դաշտը: (8) Այստեղից նրանք ուղևորվեցին Ադրամյուտիոնի և Կիտոնիոնի<sup>42</sup> միջով ու գալով Կայիկոսի հովիտը, հասան Մյուսիայի Պերգամոն (Քաղաքը):

(8) Այստեղ Քսենոփոնին ընդունեց Հելլասը, Էրեստիացի Գոնգյուպոսի<sup>43</sup> կիներ և Գորգոնի ու Գոնգյուպոսի մայրը: (9) Նա հայտնեց Քսենոփոնին, թե հարթավայրում բնակվում է մի պարսիկ, Ասիդատես անունով, և ավելացրեց, որ եթե Քսենոփոնը գիշերը գնա այնտեղ երեք հարյուր զինվորով, ապա կարող է գերի վերցնել թե՛ նրան, թե՛ նրա կնոջն ու որդիներին, թե՛ նրա ունեցվածքը, որը շատ էր: Որպես ուղեցույց նա Քսենոփոնի հետ ուղարկեց իր ազգականին և Գափնագորասին, որին ինքը շատ էր համակրում: (10) Նրբ դեռ նրանք իր մոտ էին, Քսենոփոնը զոհաբերություն կատարեց: Ներկա գտնվող գուշակ Բասիաս էլիդացին ասաց, որ կանխանշանները շատ բարենպաստ են Քսենոփոնի համար և որ այդ մարդը պետք է գերեվարվի: (11) Ուստի ընթրելուց հետո Քսենոփոնը նախապահվեց, իր հետ վերցնելով իր ամենամոտերիմ վաշտապետներին, որոնք բոլոր հանգամանքներում հավատարիմ էին ճշացել իրեն, որպեսզի նրանց լավություն արած լինի: Եկան ևս ուրիշ վեց հարյուր մարդ, որոնք պնդում էին, որ Քսենոփոնն իրենց վերցնի իր հետ. իսկ վաշտապետները նրանց հետացնում էին, շցանկանալով նրանց հետ բաժանել այն հարստությունը, որը շուտով ընկնելու էր իրենց ձեռքը:

(12) Երբ նրանք գիշերվա մոտ առաջ հասան, դրակի շուրջը գտնվող ստրուկները և անասունները մեծ մասը փախան, քանզի որ հեղինակները անուշադրության էին մատնել նրանց, ձգտելով գերեվարել իրենք՝ Ասիդատեսին և նրա ունեցվածքը: (13) Երբ վերջով չկարողացան դրակը վերցնել, քանզի այն շատ էր բարձր և խոշոր, ունեցնելով թվով աշտարակներ և այնտեղ կային լավ կովող բազմաթիվ զինվորներ, այն հեղինակները փորձեցին քանդել դրդ-



յակի պարիսպը: (14) Իսկ պարիսպը հողն ուր աղյուսի հաստություն ուներ: Առավոտյան պարիսպը արդեն ծակված էր. բայց անմիջապես որ լույս երեվաց, ներսից ինչ-որ մեկը ցույի շամփուռով հարվածեց ամենամոտ կանգնածի ազդրին. այնուհետև ներսից նետահարելով, այնպես արեցին, որ այդպեղին մոտենալն իսկ դարձավ անապահով: (15) Նրանց ճիշերը լսելով և վառած կրակները տեսնելով, օգնության հասան Խամանեսն իր գորաշոկատով, իսկ Կոմանիայից ասորեստանյան հուպիտներ և հյուրկանցի հեծյալներ՝ շուրջ ուրսուն մարդ, որոնք նույնպես արհայի վարձկաններն էին, և ես ուր հարյուր պելտասներ, ինչպես նաև հեծյալներ Պարթենիոնից, Ապոլլոնիայից և այլ մտակա վայրերից:

(16) Արդեն ժամանակն էր նահանջի մասին մտածելու. և վերցնելով այնտեղ գտնված առչարն ու ոչխարները և ստրուկներին, իրենց բառակուսի դասավորության շրջանակի մեջ առան ու բշեցին, արդեն մտածելով ոչ թե հարստության, այլ այն մասին, որ չլինի թե նահանջը փախուստի վերածվի, եթե ավարը լքելով հեռանան, քանզի այդպիսով թշնամին կդառնար ավելի համարձակ, իսկ զինվորները՝ ավելի ահաբեկված. իսկ այժմ նրանք նահանջում էին իբր ունեցվածքի համար կոպելով: (17) Բայց երբ Գոնգյուլուսը տեսավ, որ հելլենները փոքրաթիվ են, իսկ նրանց վրա հարձակվողներն այդքան շատ, նա. ի հեռուկա մտ կամփին, իր գորամասով դուրս եկավ, ցանկանալով մասնակցել գործին: Հալիսաունեից և Տեթրանիայից նրան օգնության հասավ նաև Դամարատոսի հետևորդ Պրոկլեսը<sup>44</sup>: (18) Իսկ Քսենոփոնի գորաշոկատը արդեն խոշոր կտրուստներ էր կտում աղեղների ու պարսատիկների նետումներից և ընթանում էր շրջանակ կազմած, որպեսզի վահաններով պաշտպանվեն նետումներից. նրանք հազիվ կարողացան անցնել Կարկասոս գետը, երբ արդեն գորաշոկատի գրեթե կեսը վիրավորված էր: (19) Այստեղ վիրավորվեց վաշտապետ Ագասիաս ստյումփալացին, որն ամբողջ ժամանակ կոպում էր թշնամու դեմ: Եվ հելլեններին հաջողվեց դուրս գալ Կարկասոսից, բերելով շուրջ երկու հարյուր ստրուկ և այնքան ոչխար, ինչքան անհրաժեշտ էր զոհեր մատուցելու համար:

(20) Հետևյալ օրը Քսենոփոնը զոհ մատուցելուց հետո՝ գիշերով ամբողջ գործը տարավ առաջ, առավել երկար նահապարհով՝ Կյուդիայի միջով, որպեսզի Ասիդատեսը հելլենների մոտիկ լինելու փոխից չանհանգստանա և չզգուշանա: Բայց Ասիդատեսը լսելով, որ Քսենոփոնը դարձյալ զոհեր է մատուցել և ամբողջ գործով գալիս է իր դեմ կավ օրեանեց Պարթենիոն ֆաղափի<sup>45</sup> շրջակայքում գտնվող գյուղերում (22) Այստեղ նրան պատահեց Քսենոփոնի գորամասը և գերի վերցրեց նրան և կնոջը և որդիներին և ձիերին և

ամբողջ ունեցվածքը: Այսպիսով, նշմարիտ դուրս եկան առաջին զոհաբերության կանխանշանները: (23) Այնուհետև հելլենները նորից վերադարձան Պերգամոն: Այստեղ Քսենոփոնը զոհացավ աստծուց. քանզի լակոնացիները, վաշտապետները, մյուս գորավարները, ինչպես նաև զինվորները համաձայնվեցին. որպեսզի Քսենոփոնն իր ընտրությամբ ձիեր և լծասարքեր և այլ ունեցվածք ստանա. այնպես, որ նա արդեն հնարավորություն ուներ ուրիշներին բարեգործություն անելու:

(24) Այդ ընթացքում ժամանեց Թիրոնը, վերցրեց գորամասը և այն միացնելով հելլենական մյուս զորքին, պասեռագմի Էլավ Տիսսափեոնեսի և Փառնաբագոսի դեմ:

(25) [Արհային պատկանող մեր անցած երկրների տիրակալները հետևյալներն էին. Կյուդիայի՝ Արտիմասը, Փոյուզիայի՝ Արտակամասը, Կյուկանոնիայի և Կապադովկիայի՝ Միթրադատեսը, Կիլիկիայի՝ Սյուենեսիսը, Փյունիկիայի և Արաբիայի՝ Դեոնեսը, Սիրիայի և Ասսյուրիայի՝ Բելեսյուսը, Բաբելոնի՝ Հոսպարասը, Մեդիայի՝ Արբակասը, փասիանների և հեսպերիտների՝ Տիրիբագոսը. իսկ կարդուփները և խալյուփները և խալդայները և մակրոնները և կոլխերը և մոսսինոյկները և կոյտոսները և տիբարենները ինքնավար են. Պափլագոնիայի տիրակալն էր Կուչուլասը, բյուրանիացիներինը՝ Փառնաբագոսը. Եփրոսական թրակիացիներինը՝ Սեթեսը:

(26) Արշավանքի ու նահանջի ամբողջ նահապարհի երկարությունն էր երկու հարյուր տասնհինգ կայան՝ հազար հարյուր հիսուն փարսախ՝ երեսուչորս հազար երկու հարյուր հիսունհինգ ասպարեզ: Արշավանքի և նահանջի ամբողջ ժամանակը եղավ մեկ տարի և երեք ամիս]:



ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ







ՔՍԵՆՈՓՈՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ  
«ԱՆԱԲԱՍԻՍ»

«Աստիկյան մեղու». այդպես է բնութագրել պատմական ավանդությունը հույն պատմագիր և գրող Քսենոփոնին, նրա բնայր հունարևների համար, համեմատելով նրան մեղվի ակտրժալի բզզոցի հետ: Խոսքը առկայն ավելի խոր իմաստ ունի, քան թվում է, հենց նրանով, որ Քսենոփոնը բնորոշում է ստացել ըստ իր երկերի լեզվի և ոչ ըստ նրանց բովանդակության: Հիրավի, նրա գաղափարաբանությունը՝ իր բնոգրկմամբ կամ խորությամբ, նրա հույզերը՝ իրենց թափով ու գործությամբ չեն կարող մրցել ժամանակի մի շարք այլ մտավորական գործիչների մտքի ու հույզի հետ: Սակայն, այսուհանդերձ, Քսենոփոն Աթենացին մնում է հույն դասական պատմագրության գագաթը կազմող երրորդության՝ Հերոդոտ, Թուկիդիդես, Քսենոփոն՝ աճօտարելի անդամը: Ինչո՞ւ է նա վաստակել այդ բարձր պատիվը: Անշուշտ, իր դարաշրջանի առանձնահատկությունների զարմանալի ցուցումն անդրադարձմամբ իր անձի և իր գրվածքների մեջ:

Հունական տրկատիրական հասարակության այն դարաշրջանը, որ տվել է պատմագիրների հիշված երևելի շարքը և դրանց կողքին նույնքան ու ավելի փայլուն դեմքեր, հանճարների մի ամբողջ շարան փիլիսոփայության ու գրականության, ճարտարապետության ու քանդակագործության, ուզմի ու քաղաքականության և այլ ասպարեզներում, դեմքեր, որոնք հունական քաղաքակրթությունն ու մշակույթը հասցրին այնպիսի աննախընթաց բարձունքների, որ այն իր խորը դրոշմը թողեց մարդկության զարգացման ողջ հետագա ընթացքի վրա և իր որոշ

կողմերով չզերագանցված մնաց, այդ դարաշրջանը կոչում են սովորաբար «դասական շրջան»:

Այն ընդգրկում է հիմնականում մ. թ. ա. V դարը:

V դարի քաղաքական պատմության բովանդակությունն են կազմում երկու երկարամիջ պատերազմներ, ավելի ճիշտ՝ պատերազմաշարեր, Հունա-պարսկականը՝ 500—449 թթ. և Պելոպոնեսյանը՝ 431—404 թթ., նրանց միջև ընկած շուրջ երկու տասնամյակ տևողությամբ խաղաղ մի ժամանակահատվածով:

Հունա-պարսկական պատերազմաշարը առանձին քաղաք-պետությունների կամ պոլիսների բաժանված փոքրածավալ հույն ժողովրդի ազատագրական ու պաշտպանական պայքարն էր հին արևելյան մի պետության՝ Աթենականների հսկայածավալ տերության դեմ: Պայքարը ծայր առավ արևմտյան Փոքր Ասիայի ռինավորաց հունական քաղաքների՝ Աթենական Պարսկաստանի լծից ազատագրման խնդրի կապակցությամբ, շարունակվեց պարսկական արքաներ Դարեհ I Վշտասպյանի և նրա որդի ու հաջորդ Բսերքսեսի ամենի զորաբանակների արշավանքներով դեպի բուն Հունաստանը և ավարտվեց հույների փայլուն հաղթանակով, որի նվաճման առանձին հանրահռչակ դրվագներ են Մարաթոնի, Թերմոպիլեի, Սալամինի և այլ ճակատամարտերը:

Հույների հաղթանակը պարսկական տերությանն ակառնամբ դա նրանց ճառարկարգի **դեմոկրատիայի** հաղթանակը ու նրա առավելությունների դրսևորումն էր հին արևելյան տիպի **դեապոտիայի**՝ միապետական կարգերի ամենաաստիկ ձևերից մեկի հանդեպ:

Պատերազմի ընթացքում և հաղթանակի հետևանքով առանձնապես բարձր վերելք ապրեց հունական քաղաք-պետություններից Աթենքը, իր շուրջը ստեղծելով պոլիսների մի խոշոր միավորում, որը պատմության մեջ է մտել «Աթենական ժողովային միություն» կամ «Աթենական Արքե» անուններով: Սա, իհարկե, Ֆեդերացիա էր և ոչ պետություն, սակայն, այնուհանդերձ, Աթենքի դեկավար և մյուս քաղաք-պետությունների ստորադաս դերը խիստ շեշտված էր, և գործը հասնում էր Աթենքի կողմից սրանց անխնա ու բացարձակ շահագործման:

Աթենքում այդ ժամանակաշրջանում հանդես է գալիս հունական քաղաքական խոշորագույն գործիչներից մեկը՝ Պերիկլեսը, որի օրոք բացի ռազմականից ու քաղաքականից, Աթենքն ապրում է նաև կուլտուրական գերագույն ծաղկման փուլը. ստեղծվում է Աթենքի Ակրոպոլիսի ճարտարապետական հռչակավոր համալիրը՝ իր թագն ու պսակը կազմող Պարթենոն տաճարով, որի վրա աշխատել է նաև հանձարեղ Ֆիդիասը, գործում են Էսքիլոսի արժանավոր շարունակողներ Սոփոկլեսն ու Եվրիպիդեսը և այլ հանձարներ, որոնց թիվը զարմանալի շատ է մի փոքր ժողովրդի և համեմատաբար կարճ ժամանակահատվածի համար:

Բարձր զարգացման են հասնում նաև Հունաստանի բազմաթիվ այլ պոլիսներ, և այս ծաղկման հիմնական հանգրվանը պետք է տեսնել կրկին նրանց հասարակարգի՝ դեմոկրատիայի մեջ:

«Դեմոկրատիան», սակայն, որ նշանակում է «ժողովրդի տիրապետություն», տվյալ դեպքում պայմանական տերմին է, որով կարելի է բնութագրել ողջ Հունաստանի քաղաք-պետությունների կամ պոլիսների կարգը՝ այն հին արևելյան դեապոտիային հակադրելիս միայն: Իրականում դեմոկրատիան հատուկ էր հունական պոլիսների մի թևին, որ գլխավորում էր Աթենքը, մյուս թևին բնորոշ լինելով **արիստոկրատիան** կամ **օլիգարխիան**, և այդ թևերը այնքան էին հակադիր, որ պիտի բախվեին միմյանց հետ մի նոր պատերազմում, նախորդի լարվածությանը գերազանցող համատությանը ու դաժանությանը:

Բայց նույնիսկ այդ դեմոկրատիան այն չէր, ինչ մենք ենք հասկանում բառիս տակ, քանի որ դա ստրկատիրական դեմոկրատիա էր. նրա սահմաններից ամբողջովին դուրս էր մնում համապատասխան պոլիսների բնակչության մի ստվար, երբեմն գերակշռող մասը, ի դեմս ստրուկների և կիսակախյալ արտադրողների: Դեմոկրատիայի պտուղներից օգտվում էին միայն քաղաքային համայնքների անդամները՝ տվյալ պոլիսի լիիրավ քաղաքացիները, որոնց թիվը սահմանափակ էր և որոնք միավորված էին համայնքի մեջ հենց որպես ստրկատերեր՝ իրական և կամ պոտենցիալ:

Հունական քաղաք-պետությունների մյուս՝ Սպարտայի գլխավորած, թևի հասարակարգի համար բնորոշ էր, ինչպես սսվեց, արիստոկրատիան կամ օլիգարխիան: Այս պետություններում իշխանության դեկը գտնվում էր արդեն ոչ թե համայնքի բոլոր անդամների, այլ, ինչպես ցույց են տալիս համապատասխան տերմինները, նրանցից «ազնվագույնների», «քչերի» ձեռքում, ազատների մնացած մասը պետական գործերից արտազատված և նույնիսկ «քչերի» շահագործման ստարկա դարձած լինելով:

Եվ ահա, երբ երկու հակադիր թևերի միասնական ջանքերով պարսկական լծի վտանգը վերացված էր, հերթը հասավ նրանց փոխադարձ հակասությունների ու թշնամության դրսևորմանը: Պատերազմը, որ ստացավ Պելոպոնեսյան անունը, իհարկե, մղվում էր տարբեր պետությունների միջև և նրա հիմքում ընկած էին նաև մի շարք տնտեսական պատճառներ, սակայն, իրականում, վերը նշված պարագաների շնորհիվ դա միաժամանակ քաղաքացիական պատերազմ էր, և դրանով են բացատրվում նրա որոշ առանձնահատկությունները: Նկատի ունենք պատերազմող կողմերի տարբեր սոցիալական շերտերի՝ պատերազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը: Այս կետը կարևոր է Բսենոփոնի կենսագրության որոշ էջեր և նրա աշխարհայացքի որոշ կողմեր ճիշտ ըմբռնելու համար: Մինչդեռ լակոնական (այ-

սինքն՝ Սպարտայի վերջինը կոչվում էր նաև Լակոնիկե կամ Լակեդեմոն) ճամբարի քաղաքներում ապրող՝ դեմոկրատական հալացքների տեր քաղաքացիները համակրում էին հակառակորդ՝ աթենական ճամբարին և նույնիսկ հաղթանակ ցանկանում նրան ու գործում դրա օգտին, Աթենքի շուրջը համախմբված պոլիսների օլիգարխիա դավանող քաղաքացիները, ընդհակառակն, Սպարտայի հաղթանակն էին տեսնում և նույնիսկ ձգտում դյուրացնել այն:

Պատերազմը շատ դաժանորեն էր վարվում և ուղեկցվում էր հելլենների կողմից հելլենական իսկ քաղաքների բնակչության գերեվարմամբ և ստրկացմամբ, ամբողջ ծաղկուն շրջանների ամայացմամբ: Այն սկզբից ընթանում էր փոփոխական հաջողությամբ, նույնիսկ Աթենքի որոշ գերակշռությամբ, բայց հետագայում կշեռքի նժարը թեքվեց Սպարտայի կողմը և վերջինը հաղթանակ ձեռք բերեց, դառնալով հելլենական աշխարհի հեգեմոն՝ Աթենքի փոխարեն: Լակեդեմոնի իշխանությունը անհամեմատ ավելի խիստ ու դաժան էր, հանգամանք, որ արտահայտվել է նաև Քսենոփոնի «Անաբասիսի» համապատասխան գլուխներում, հայտնակ հեղինակի լակոնասեր լինելուն:

Այսուհանդերձ, պելոպոնեսյան պատերազմների բուն հետևանքները ավելի ընդգրկուն էին, քան մի ճամբարի հաղթանակը մյուսի նկատմամբ: Սնանկացան գաղափարախոսությունները երկու ճամբարների էլ, թե՛ պարտվածի և թե՛ հաղթողի: Դրա հիմքն էր իրեն՝ պոլիսի, քաղաք-պետության, որպես ներքին ու ինքնաբավ պետականության ձևի, խոր ճգնաժամը, որը իր հերթին արդյունք էր հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման, նրանց մեջ կատարված որոշակի տեղաշարժերի: Որպես դրանցից մեկը կարելի է նշել դասական պոլիսի ռազմական ու քաղաքական հզորության պատվանդանը կազմող միջին հողատեր-քաղաքացիների շերտի քայքայումը, շերտ, որը հասարակության բեկոնացման համընթաց տարրալուծում էր մասամբ խոշոր, իսկ հիմնականում՝ մանր հողատերերի և չքավորության մեջ, իր հետ տանելով պոլիսի նախկին ունակությունը՝ պահպանվելու որպես սուվերեն պետություն և միայնակ, առանց արտաքին ուժի օգնության, սանձահարելու իր սարուկներին և ընդհանրապես շահագործվողներին:

Թագմա-քաղաքական միավորումների ստեղծման այն ձգտումը, որ ի հայտ եկավ հունական աշխարհում դեռևս V դարում, պոլիսի ճգնաժամի ցուցանիշներից մեկն էր: Չէ՞ որ դրանց առաջացման մեջ արտանյախվում էր ոչ միայն մի պոլիսի ճգնումը իշխել մյուսների վրա, այլև մյուսների ձգտումը արտաքին հենարան գրուցել իր գոյությունը պահպանելու համար: Եվ ահա Պելոպոնեսյան պատերազմներից հետո կրկին ու կրկին այդպիսի միավորումներ են ստեղծվում, որոնցից առանձնապես նշելի են Աթենական երկրորդ ծովային միությունը, մանավանդ

հեղափոխական միությունը, որը իր կարճ գոյության ընթացքում խոշոր հաջողությունների հասավ, և ուրիշները:

Սակայն այսօրինակ միավորումները ի վիճակի չէին արմատապես դարմանելու հասարակությանը համակած ճգնաժամը: Օրակարգի էր միապետությունների ստեղծումը, և որպես դրա նախանշան, առաջ էին քաշվում, բարձր դիրքերի հասնում և աստվածներին պատշաճող փառաբանության արժանանում առանձին ուժեղ անհատներ, որոնց իշխանությունը սկսում էր հետզհետե փոխարինել կոլեկտիվի՝ լինի դա արիստոկրատիայի թե դեմոկրատիայի հիմունքներով կազմված կոլեկտիվ, իշխանությանը: Ահա հասարակության զարգացման այս տեղեկնքի ուժով է, որ առաջ է մղվում հունական պոլիսների հյուսիսային հարևան Մակեդոնիան: Ալեքսանդր Մակեդոնացու հոր՝ Փիլիսպոսի օրոք նա այնքան հզոր է գտնվում, որ կարողանում է իրեն ենթարկել գրեթե բոլոր հունական քաղաք-պետությունները: Այս նորաստեղծ միավորված պետությունն էր, որ իբրև բունցը գործի դրեց Ալեքսանդրը, նվաճելով նոր ուժերով այն ժամանակ հայտնի ողջ Արևելքը: Այսպես վրա հասավ հելլենիստական դարաշրջանը, սակայն նրա արմատները, ինչպես տեսանք, խորը թաղված էին նախորդ հելլենական դարաշրջանի ընդերքում:

\* \* \*

Հույն առաջին պատմիչներն են համարվում VI դարում մ. թ. ա. ստեղծագործել սկսած **Լոգոգրաֆները**, որոնք, ի տարբերություն Հոմերոսի, Հեսիոդեսի և մարդկության պատմության երկույթները չափածոյով ու ի միջի այլոց շարադրած ուրիշ գրողների, անցել են արձակի, զատելով պատմական ժանրը մյուսներից ու դրանով հիմք ծառայելով հունական դասական պատմագրությանը: Լոգոգրաֆներից խոշորագույնն էր Հեկատեոս Միլետացին (VI դարի երկրորդ կես—V դարի սկիզբ), որը իր գործերը նվիրել է մարդկության առաջացման խնդրին և աշխարհի նկարագրմանը: Ի դեպ, հույն մատենագրության մեջ նա Հուլիստանը հիշատակող առաջին հեղինակն է: Լոգոգրաֆների երկերը դեռևս լի են առասպելաբանությամբ, սակայն արդեն ձգտում կա տարազատել առասպելական տարրերը պատմական հիմք ենթադրող տարրերից:

Նրանց նվաճումները ժառանգել ու զարգացրել է Հերոդոտը (շուրջ 490—շուրջ 430 թթ. մ. թ. ա.), որին ավանդությունը պարզել է «Պատմահայր» պատվատիրոջը: Իր «Պատմության» թե ընդգրկմամբ ու կառուցվածքով, թե պատմական աղբյուրներին ու իրողություններին մոտեցմամբ և թե, վերջապես, շարադրանքի ոճով նա հիռավի «պատմագրություն» կոչված երկույթի հիմնադիրն է: Նրա երկի գլխավոր թեման հունա-պարսկական պատերազմներն են, բայց շարադրանքը նա սկսում է շատ ավելի վաղ շրջաններից, նպատակ ունենալով ոչ միայն բացահայտել այդ

իրադարձության խոր պատմական արմատներն ու պատճառները, այլև տալ իրեն հայտնի բոլոր երկրների հնարավորին չափ մանրամասն ու հավաստի նկարագրությունն ու պատմությունը, դրա համար օգտագործելով իր տեսածը, լսածը և կարդացածը: Նրա մոտ արդեն առկա են աղբյուրների նկատմամբ քննական մոտեցումն ու ռացիոնալիզմը, որոնք և, այսպիսով, դառնում են հունական պատմագրության հատկանշական գծեր:

Հաջորդ խոշոր պատմագիրը, որի գործով հույն դասական պատմությունը հասնում է իր գագաթնակետին, Թուկիդիդեսն է (V դարի երկրորդ կես): Սա իր երկը նվիրել է Պելոպոնեսյան պատերազմների պատմությանը: Թուկիդիդեսին բնորոշ է օգտագործված աղբյուրների շատ լայն շրջանակը, որը ներառում է նույնիսկ հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերը, ինչպես և վիմագրական նյութերը: Նրա օգտագործած վիմական արձանագրությունների մեզ հասած նմուշներից երևում է, թե որքան հարազատորեն ու ճշգրտորեն է նա վերարտադրել իր աղբյուրների տվյալները: Միևնույն ժամանակ նա խոր քննադատական վերաբերմունք է ցուցաբերում իր աղբյուրների նկատմամբ, դասակարգելով դրանք ըստ հավաստիության աստիճանի: Թուկիդիդեսը երբեք չի բավարարվել պատմական իրողությունը նկարագրելով, այլ միշտ ձգտել է բացատրել այն, ըստ որում տվել է ոչ թե դիցաբանական, այլ միշտ նյութական, առանձին դեպքերում նույնիսկ տնտեսագիտական մեկնաբանություն (հանգամանք, որ նշել է Մարքսը):

Թուկիդիդեսի «Պատմությունը», որը հեղինակը մտադիր է եղել հասցնել մինչև Պելոպոնեսյան պատերազմների վերջը, մնացել է անավարտ, նույնիսկ ընդհատված մի մտքի շարադրանքի մեջտեղում: Այս հանգամանքը օգտագործել է Քսենոփոնը, սկսելով իր «Հունական պատմությունը» հենց այդ կետից՝ «Դրանից մի քանի օր անց...» բառերով ներածվող նախադասությամբ: Սրանով նա թերևս ցանկացել է հաջորդակցական կապ հաստատել իր և Թուկիդիդեսի միջև ու ներկայացնել որպես նրա գործի շարունակող: Մենք կտեսնենք, սակայն, որ Քսենոփոնը էապես տարբեր է իր նախորդից:

\* \* \*

Քսենոփոնի կյանքի մասին մեզ հասած տեղեկությունները հարուստ չեն: Վեճեր կան նրա ծննդյան թվականի մասին իսկ: Ուսումնասիրողների մի մասը այն դնում է 444 թվականից առաջ, ելնելով 424 թ. տեղի ունեցած մի ճակատամարտի և 422 թ. մի խնջույքի նրա մասնակցած լինելու մասին մեզ հասած տեղեկություններից և ուրիշ հանգամանքներից: Մյուս մասը նրա ծննդյան ժամանակը ենթադրում է շուրջ 430-ին, հիմք ընդունելով նրա հիշատակումը իր մասին «Անաբասիսում» 401 թ. դեպքերի կապակցությամբ որպես երիտասարդի ու մի քանի այլ

պարագաներ. այս վերջին տեսակետը ավելի լայն տարածում ունի, և նրանով ստաջնորդվելով է, որ սույն 1970 թ. նշվել է Քսենոփոնի ծննդյան 2400-ամյակը:

Իր կյանքի սկզբնական շրջանը (մինչև 401 թ.) Քսենոփոնը անց է կացրել ծննդավայրում, Աթենքում: Քսենոփոնի աշխարհայացքի արիստոկրատական բնույթը, նրա գրվածքներում ի հայտ եկող բազմազան գիտելիքները հողի նպատակահարմար շահագործման, ձիավարության, շներով որսի և այլ խնդիրների շուրջը, կարակացնել են տալիս, թե նա ծագում է աթենական ունևոր, գուցե և հարուստ հողատիրական ընտանիքից: Նման եզրակացությանը կատարելապես համապատասխանում է այն միակ հաստատուն փաստը, որ հայտնի է Քսենոփոնի կյանքի այս ժամանակաշրջանի մասին, այն է, թե նա աշակերտել է Սոկրատեսին: Սոկրատեսը, ինչպես հայտնի է, իրեն շրջապատում էր ազնվական ծագում ունեցող երիտասարդությամբ և դաստիարակում նրանց իր փիլիսոփայության ոգով, որը քաղաքական ուղղվածությամբ բացարձակ-օլիգարխիական շիճելով հանդերձ, շատ հեռու էր դեմոկրատական երանգից: Այս հողի վրա է, ի դեպ, որ հետագայում տեղի ունեցավ Սոկրատեսի բախումը Աթենքի իշխանությունների հետ, որոնք և նրան մահվան դատապարտեցին:

Մի տեղեկություն էլ կա այս շրջանի մասին, իբր Քսենոփոնը որոշ ժամանակ գերության մեջ է եղել հեղվտիայում և այնտեղ ունկնդրել Պրոդիկոս փիլիսոփային: Բայց սա վիճելի է նույն պատճառով, ինչ որ 424 և 422 թվականներին վերաբերող վերը նշված տեղեկությունները:

401 թ. Քսենոփոնը իր բարեկամ Պրոքսենոսից, որ ծառայում էր փոքրասիական հողերի պարսկական սատրապ, պարսից արքաներայր Արթեմեդյան Կյուրոսի մոտ (այսպես կոչված Կյուրոս Կրտսեր), հրավեր է ստանում մեկնել Փոքր Ասիա, Սարդես քաղաքը, Կյուրոսին ներկայացվելու նպատակով: Քսենոփոնը որոշում է գնալ և ճարպկորեն շրջանցում նույնիսկ այն խոչընդոտները, որ կարող էին նրա առջև հարուցել... աստվածները. Սոկրատեսից խորհուրդ ստանալով նախապես հարցում անել Դելփյան պատգամախոսին իր գնալ-չգնալու մասին, նա այնպես է ձևակերպում հարցումը, որ բացառում է բացասական պատասխանը: Այս քայլը ցույց է տալիս, որ Քսենոփոնն իր արիստոկրատական, ուրեմն և լակոնասիրական, հայացքներով իրեն լավ չէր զգում հայրենի Աթենքում և գործունեության ավելի նպաստավոր բնավայր էր փնտրում: Գուցե նաև գծոված էր իշխանությունների հետ, հատկապես այն բանից հետո, երբ Սպարտայի՝ իր հաղթանակից հետո Աթենքում հաստատած կարգերը՝ «Երեսնի բռնատիրությունը», տապալվել էին:

Ինչևիցե, այդ քայլը վճռական դեր խաղաց նրա կյանքի հետագա ուղու ընտրության ստումով: Ներկայանալով Կյուրոսին և ընդունվելով նրա բարեկամների

շարքը, Քսենոփոնը մասնակցում է նրա ձեռնարկած ռազմական արշավանքին դեպի Պարսկաստան: Կյուրոսի նպատակն էր տապալել իր եղբորը՝ Արտաքսերքսես II-ին և տիրանալ նրա գահին: Արշավանքը անհաջողությամբ է ավարտվում, Կյուրոսն ընկնում է Կունաքսայի վճռական ճակատամարտում, ու նրա տասնհազարանոց վարձկան հունական զորարանակը, որի մեջ էր նաև Քսենոփոնը, թեև նույն ճակատամարտի ժամանակ իր զբաղեցրած թևում հաղթանակ է տանում, բայց և այնպես ստիպված է լինում բռնել հեռավոր երկրից դեպի հայրենիք ճահանջի ուղին: «Անաբասիսը», որից էլ իմանում ենք այս բոլորը, գլխավորապես նվիրված է այս ճահանջի նկարագրությանը: Այդ դժվարին պահին Քսենոփոնն իրեն դրսևորում է որպես բանիմաց, խիզախ և տոկուն զորահրամանատար և նպաստում 10.000 հույն մարտիկների վերադարձին Հոնիա:

Սրանից հետո նա որպես վարձկան զորքի հրամանատար, պատերազմում է նախապես Թրակիայի թագավոր Աթենսի դրոշի ներքո, իսկ այնուհետև, 396—394 թթ., ծառայում Սպարտայի քսաիլևս Ագեսիլաոսի մոտ, որը պարսիկների դեմ ռազմական գործողություններ էր ծավալել Փոքր Ասիայում: Այս վերջին քայլը անշուշտ, ավելի ևս սրեց Քսենոփոնի հարաբերությունները Աթենքի դեկավարների հետ: Իսկ երբ նա Ագեսիլաոսի հետ միասին վերադարձավ Հունաստան և մասնակցեց Թերեի և Աթենքի ու Սպարտայի դաշնակցության միջև ծագած նոր պատերազմին և նույնիսկ լակոնական զորքերի շարքերում մարտնչեց իր հայրենիքի դեմ Կորոնեայի ճակատամարտում (394 թ.), աթենացիները դատավճիռ կայացրին նրա նկատմամբ, հայտարարելով նրան ցմահ վտարանդի: Սպարտան, ընդհակառակը, երախտահատույց եղավ Քսենոփոնին, հատկացնելով նրան 387 թվականին Պելոպոնեսում Սկիլլոս բնակավայրի մոտ մի տուն և հողամաս, որտեղ և Քսենոփոնը անցկացրեց շուրջ 17 տարի, գրելով այստեղ իր երկերի հիմնական մասը, այդ թվում և «Անաբասիսը», և զբաղվելով իր սրտին մոտիկ գյուղատնտեսությամբ:

371 թ. Պելոպոնեսում նոր ռազմական գործողությունների ծավալման կապակցությամբ Քսենոփոնը իր ընտանիքի հետ տեղափոխվում է Կորնթոս: Բիշ անց Սպարտան և Աթենքը դաշինք են կնքում, ուղղված վտանգավոր չափով հզորացած Թերեի դեմ, որի զորավարն էր հուշակավոր Էպամինոնդասը: Քսենոփոնի երկու որդիները՝ Գրիլլոսը, որ իր պապի անունն էր կրում, և Դիոդորը մասնակցում են այդ պատերազմին: Գրիլլոսն ընկնում է հերոսական մահով 362 թվականին Մանտինեայի ճակատամարտում: Այս նոր իրադրության մեջ Քսենոփոնի վերաբերյալ Աթենքում կայացած դատավճիռը չեղյալ է հայտարարվում, նա դադարում է վտարանդի լինելուց և հնարավորություն ստանում վերադառնալ հայրենի քաղաքը:

Քսենոփոնը, սակայն, այդպես էլ չիրագործեց այդ հնարավորությունը, մնաց Կորնթոսում և իր կյանքի վերջին տարիները նվիրեց գրական գործունեության շարունակմանը: Այստեղ էլ նա մահացավ շուրջ 356 թ., հասնելով խոր ծերության հասակի:

\* \* \*

Քսենոփոնը բազմազան շահագրգռությունների տեր հեղինակ է եղել: Բացի պատմական գործերից, նա գրել է բարոյախոսական, տնտեսագիտական, գյուղատնտեսական, ռազմական, քաղաքական և նույնիսկ որսորդական բովանդակությամբ երկեր: Այդ բոլորը միավորվում է նրա աշխարհայեցողությամբ, որը ցայտուն կերպով ի հայտ է եկել նաև նրա պրակտիկ գործունեության մեջ: Նա ոչ միայն գրել է իր արիստոկրատական, լակոնասիրական հայացքների համեմատ, այլև գործել, ուստի և փաստորեն հասել է իր հայրենի Աթենքի նկատմամբ դավաճանության (հորջորջում, որ մասամբ մեղմանում է Սպարտայի և Աթենքի միջև սղված պատերազմների վերը նշված քաղաքացիական բնույթի շնորհիվ):

Լակոնական իրականությունը նրան գրավում է իր օլիգարխիական հասարակարգով, այլև իր պահպանողականությամբ, այն պարագայով, որ, ինչպես համոզված էր Քսենոփոնը, Սպարտայում ավելի հավատարիմ էին նախնիների ազնիվ ավանդներին, ավելի էին պահպանել հելլենական հիմնավորոց խիստ ոգին: Լակոնական մանկավարժությունը, նրա կարծիքով, ինչպես և ընդհանրապես լակոնացիների աշխարհըմբռնումը ավելի սերտ էին կապակցված կյանքի պրակտիկ խրճողիների հետ, քան Աթենքից, ուր իբր չափազանց շատ էին տարվում վերացական ու տեսական խնդիրներով, զանց առնելով կենսական գործերը: Գործնականությունը, պրակտիկայի հետ սերտ կապը, ըստ Քսենոփոնի, մարդու ամենանախընտրելի բարեմասնությունն է, որը հավասարապես կարևոր է թե սուկ մի տանտիրոջ ու հողատիրոջ համար, իր տան ու տնտեսության գործերը կազմակերպելիս, և թե քաղաքական կամ ռազմական ղեկավարի ու թագավորի համար, իր զորքի կամ քաղաքի և կամ լայնատարած իր երկրի գործերը տնօրինելիս: Տեսական գիտելիքների ձեռք բերումը նա անհրաժեշտ է համարում սուկ այն չափով, որ չափով նրանք պիտանի և կիրառելի են առօրյա կյանքում: Այսպես, Սոկրատեսի բերանով նա հայտնում է այն միտքը, թե երկրաչափությունը պիտի յուրացնել այնքան, որ մարդ կարողանա անհրաժեշտ դեպքում ընդունել, հասնել, բաժանել հողամասը, մնացածը ավելորդ է:

Փիլիսոփայությունը ևս, իր խորքերով, հիմնականում խորթ է մնացել Քսենոփոնին, չնայած նա բավական երկար ժամանակ եղել է Սոկրատեսի աշակերտների շարքում: Սոկրատեսից նա ընկալել է գլխավորապես նրա իմացության արտաքին-



տրամաբանական կողմը, դրույթի ապացուցման ճարտարությունը, որը և փայլուն կիրառել է իր երկերում: Սրա օգնությամբ նա հաճախ հիմնավորում է իր, Սոկրատեսի փիլիսոփայության հետ առնչություն չունեցող, դրույթները:

Քսենոփոնի աշխարհայացքը հատկապես պարզորոշ դրսևորվել է նրա այն ստեղծագործություններում, որոնք բնորոշված է միավորել «սոկրատական» անվան տակ: Դրանք են. «Հուշեր Սոկրատեսի մասին», «Սոկրատեսի արդարացումը», «Երախանան» և «Տնարարություն»: Բոլոր այս գործերի մեջ կենտրոնական դերում հանդես է գալիս Սոկրատեսը, սակայն դա Քսենոփոնյան Սոկրատես է, պրակտիկ օգտակար գործունեության ջատագով, կենսական խնդիրների լուծման պատրաստի դեղատոմսեր բաժանող մի անձնավորություն, որը քստ մեծի մասի հաղորդում է հեղինակի տեսակետը, և ոչ այն նրբին ու ներհուն փիլիսոփան, որպիսին հանում է Սոկրատեսը Պլատոնի տրամախոսություններում: Սոկրատեսը Քսենոփոնի երկերում իր կարծիքն է հայտնում ընտանեկան կյանքի, բարեկամների ընտրության և սրանց հետ վարվելակերպի, հասարակական աշխատանքի, մարդու ֆիզիկական ու մտավոր զարգացման, սիրո, տնտեսության, մարդկանց ղեկավարելու արվեստի և բազմաթիվ այլ խնդիրների կապակցությամբ, ամենուրեք արտահայտելով սահմանափակ ու պահպանողական ոգու տեր ամրակուռ տանտիրոջ տեսակետներ:

Քսենոփոնի լակոնասիրական հակումները առանձնապես ցցուն հանդես են գալիս նրա «Ագեսիլասոս» ներքողի և «Լակեդեմոնացիների պետությունը» դարձյալ ջատագովական բնույթ կրող ստեղծագործության մեջ, թեև նրանք այս կամ այն չափով առկա են ուրիշ գործերում ևս. ի դեպ՝ ամենից քիչ «Անաբասիտում»: Հավանական է, որ այս հակումները նրա կյանքի վերջին տարիներին, հատկապես կորնթոսյան շրջանում, որոշ ստեղծագործություն են ապրել: Քսենոփոնը կարծես տեսնում է, վերջապես, թե Սպարտան իր երազած իդեալական պետությունը չէ, թե նախնիների ավանդները ամենևին այն չափով չէ, որ այնտեղ հարգվում ու կիրառվում են, ինչպես ինքը կարծում էր, թե բարքերի անկումը, ընչաքաղցությունն ու ազահությունը ամենևին աթենացիների մենաշնորհը չեն, այլ հատուկ են նաև լակոնացիներին, որ լրիվ չափով ի հայտ եկավ, երբ սրանք դարձան հելլենական աշխարհի հեգեմոն: Այս փոփոխությունները իրենց արտացոլումն են գտել նրա «Հունական պատմության» ու շրջանում գրված եզրափակիչ բաժիններում, նույն ժամանակ ստեղծված «Եկամտուների մասին» գրվածքում, ուր խոսքը Աթենքի տնտեսական գործերի բարելավման մասին է, և «Հիերոն» (դատողություններ բռնապետության՝ տիրանիայի մասին) գործի մեջ:

Քսենոփոնի գրչին են աստիանում նաև «Հեծելության մասին», «Հեծելագործի պետի մասին» և «Ծներով որսի մասին» ստեղծագործությունները, որոնց մեջ դրսևորվում են նրա բազմազան գիտելիքները համապատասխան բնագավառներում:

Քսենոփոնի ստեղծագործությունների կարևորագույն խումբն են կազմում նրա պատմական գրվածքները՝ «Հունական պատմությունը» և «Անաբասիսը», որոնց որոշ վերապահությամբ կարելի է կցել նաև նրա «Կյուրոպեդիան» («Կյուրոսի դատախարակությունը»):

Վերջինը որքան պատմական գործ է, այնքան էլ, գուցե և ավելի, բարոյախոսական-քաղաքական, և այս հաճախ հիմք է ծառայել որոշ հետազոտողների համար այն իսպառ վտարելու Քսենոփոնի պատմական երկերի շարքից: Թվում է, սակայն, թե սա չափազանց է: Ծիշտ կլինի բնորոշել այն որպես պատմա-քաղաքական վեպ, ըստ որում՝ իր տեսակի մեջ առաջինը համաաշխարհային գրականության մեջ և լավագույններից մեկը, որպիսի գեահաստական վաստակում է իր գեղարվեստական արժանիքներով, կենդանի կերպարների այն շարանով, որ կարողանում է ստեղծել Քսենոփոնի հմուտ գրիչը:

Այս ստեղծագործության մեջ խոսքը պարսկական թագավոր Կյուրոս Մեծի մասին է, որը հիմնադրեց Աքեմենյանների աշխարհակալությունը, առաջին անգամ պատմության մեջ մի պետության ծածկի տակ միավորելով ողջ Առաջավոր Ասիան: Քսենոփոնը իր վեպում ձգտում է պատասխանել այն հարցին, թե ինչպիսի՞ դատախարակություն ու պատրաստություն պետք է ստանա գործիչը, որպեսզի հաջողացնի գլուխ բերել այդպիսի մի բարդ ձեռնարկություն, կամ, ավելի լայն, ինչպիսի՞ պատրաստություն ու հատկություններ պիտի ունենա իդեալական միջպետը, որպիսին նա տեսնում է հանձին Կյուրոսի, կամ թերևս որպիսին նա ուզում է ցույց տալ Կյուրոսի իր ստեղծած կերպարի մեջ: Նրա պատասխանը, բացի վերը նշված՝ ղեկավարին անհրաժեշտ գործնական հատկություններից, անձի գերագույն կատարելագործման մեջ է. առաջնորդը պետք է կատարելագործի իր ունակություններն ու կարողությունները այն աստիճան, որպեսզի ամեն ինչով գերազանցի մյուսներին: Այդ դեպքում բոլորը համոզված ու սիրահոծար կենթարկվեն ու կհետևեն նրան:

«Կյուրոպեդիայի» մեջ արտացոլվել է Քսենոփոնի քաղաքական նոր կողմնորոշումը հոգուտ **միապետության**, որը նա սկսում է գերադասել և՛ դեմոկրատիայից, և՛ օլիգարխիայից, և՛ բռնապետությունից (տիրանիա), սրանց անկայունությանը հակադրելով միապետության կայունությունը: Նման կողմնորոշումը և սրա հետ լծորդված՝ ուժեղ անհատների այն իդեալականացումը, որի մեկից ավելի օրինակները գտնում ենք Քսենոփոնի ստեղծագործություններում՝ Կյուրոս Մեծ, Ագեսիլասոս, Կյուրոս Կրտսեր և այլք, իսկապես որ նրան դարձնում են հելլենիզմի գաղափարախոսական նախակարապետ: Իսկ քիչ հետո կհամոզվենք, որ նա այստեղ ևս չմնաց սուսկ տեսաբան, այլ անձամբ մասնակցեց հելլենիստական դարաշրջանի

նաև գործնական նախապատրաստմանը, հելլենիզմից դեռևս յոթ տասնյակ տարի առաջ:

«Կյուրուպեղիայի» գոտս պատմագիտական արժեքը մակերևույթի վրա չէ, այն թաքնված է վիպական-գեղարվեստական բողի տակ, ուստի և հաճախ վրիպել ու վրիպում է ուսումնասիրողների աչքից: Նրա հիմքն է, մեր կարծիքով, այն անկասկածելի պարագան, որ Քսենոփոնը գրել է Պարսկաստանի պատմության, Աքեմենյանների տիրապետության սկզբնավորման մասին ոչ թե հեռուից հեռու, ինչ որ օտար միջավայրից բազմաթիվ ձևերի միջնորդությամբ իրեն հասած աղոտ լուրերի հիման վրա, այլ որպես մարդ, որ անձնապես շփվել է Աքեմենյան տոհմի ամենափայլուն շտապիղներից մեկի՝ Կյուրոս Կրտսերի ու նրա շրջապատի հետ և եղել է Պարսկաստանում: Որքան էլ վիպական տեսք ունենա նրա գրածը, այս հանգամանքները և նրանց շնորհիվ Քսենոփոնի ձեռք բերած կենսական ու կոնկրետ պատկերացումները պարսկական միջավայրի մասին պիտի նրան մոտ պահեին բուն պատմական եթե ոչ իրողությանը, գոնե ոգուն: Չպետք է կասկածել, որ «Կյուրուպեղիան» պատմաբանի աչքով վերլուծելով, հնարավոր է դուրս կորզել նրանից պատմական տվյալներ:

Մենք ցանկացանք հատկապես շեշտել այս հանգամանքը, նկատի ունենալով «Կյուրուպեղիայի» այն բավական ծավալուն բաժինը, որ վերաբերում է Հայաստանին (Արմենիային): Այստեղ, 6-րդ դարի կեսերին առնչված, հանդես են գալիս հայկական թագավորությունը, հայոց թագավորը, նրա որդիներ Տիգրանը (որ ներկայանում է որպես Կյուրոսի բարեկամ և որսակից) և Սաբարիսը, նրա զորավար Էմբասը, տեղեկություններ են տրվում հայկական զորքի՝ այրուձիի և հետևակի քանակության մասին, արքունի հարստությունների մասին և այլն, հայերի փոխհարաբերությունների մասին Մարաստանի (Մեդիա) և այլ հարևան երկրների ու ժողովուրդների հետ:

Որքան արժանահավատություն կա այս տվյալների մեջ: Նորագույն կարծիքները դրական են: Նախ և առաջ Հայաստանը ևս այն երկրների շարքում է, որտեղ անձամբ եղել է «Կյուրուպեղիայի» հեղինակը: Կյուրոս Կրտսերի արշավանքի ձախողումից հետո նա երկար ճանապարհ է կտրել Հայաստանի վրայով, որի մասին մանրամասն պատմում է «Անաբասիսում»: Որեմն այն, ինչ վերն ասվեց Պարսկաստանի մասին, վերաբերում է նաև Հայաստանին: Բայց կա նրա հաղորդածի արժեքի երկրորդ երաշխիքը ևս: Մովսես Խորենացին, կրկին մ. թ. ա. VI դարի կապակցությամբ, պատմում է հայոց թագավորության, սրա արքաներ Երվանդ Սակավակյացի ու նրա որդի Տիգրանի մասին, վերջինիս Կյուրոսի հետ դաշնակից լինելու և Մարական պետության հետ բախման մասին: Խորենացու պատմածը դուրս բերել Քսենոփոնի ասածից հնարավոր չէ նմանությունների կողքին էական տար-

բերությունների առկայության պատճառով: Ուստի մնում է ենթադրել, թե դրանք պատմական միևնույն իրականության այլազան արտացոլումներն են: «Կյուրուպեղիան», այսպիսով, հայ ընթերցողի համար, իր ընդհանուր արժանիքների հետ մեկտեղ, ունի նաև առանձնահատուկ նշանակություն:

Քսենոփոնի երկերի մեջ իր կարևոր տեղն ունի նրա «Հունական պատմությունը»: Սկսվում է այն 410 թվականից, այնտեղից, ուր ընդհատվում է, ինչպես նշվեց, Թուկիդիդեսի «Պատմությունը», և հասցվում մինչև 362 թ.՝ Մանտինեայի ճակատամարտը: Այն, այսպիսով, ծայրեծայր վերաբերում է իրադարձությունների, որոնց ժամանակակիցը, հաճախ ականատեսն ու մասնակիցն է եղել Քսենոփոնը: Այս հանգամանքը «Հունական պատմությանը» որոշակի չափով հուշերի բնույթ է հաղորդում, այստեղից բխող բոլոր հետևանքներով: Մի կողմից, ժամանակակիցի ու ականատեսի դիրքը մեծապես բարձրացնում է Քսենոփոնի հաղորդածի արժեքը, մյուս կողմից, սակայն, գործուն մասնակից լինելու հանգամանքը որոշակի սուբյեկտիվ երանգ է տալիս նրա մերձեցմանը պատմական իրողություններին: Վերջինս ի հայտ է գալիս առանձին իրերի ոչ այնքան սխալ, որքան միակողմանի մեկնաբանմամբ: Սպարտայի համար որոշ աննպաստ հանգամանքներ Քսենոփոնը պարզապես լուրջան է մատնում, ուրիշ դեպքերի մասին ստեղծում իր ցանկացած տպավորությունը, ուշադրությունը կենտրոնացնելով, խնդրի էության փոխարեն, երկրորդական մանրամասների վրա և այլն: Այս բոլոր բացերով հանդերձ «Հունական պատմությունը», շարադրված լինելով Քսենոփոնի նման իրագել ու հմուտ մեղիակի կողմից, Հունաստանի հիշյալ ժամանակաշրջանի պատմության կարևորագույն ու ամենամանրամասն սկզբնաղբյուրն է հանդիսանում:

\* \* \*

«Անաբասիսը» (հայ գրականության մեջ՝ «Նահանջ բիրուն») կարող է համարվել Քսենոփոնի գլուխ-գործոցը թե իր անզուգական արժեքով որպես պատմական սկզբնաղբյուր և թե իր հույակապ գրական-գեղարվեստական արժանիքներով:

Առաջին հայացքից «Անաբասիս» մեջ պատմված իրադարձությունը աննշան է իր մասշտաբներով: Հիրավի, մի բյուր (տասը հազար) հույն վարձկան զինվորներ մասնակցում են պարսկական տերության մեջ տեղի ունեցող հերթական ապստամբությանը, արշավում դեպի Պարսկաստան՝ գահի հավակնորդի առաջնորդությամբ, և նրա վախճանից հետո թշնամի երկրի միջով նահանջում դեպի հայրենիք: Սակայն այս աննշան իրադարձությունը հսկայական արձագանք գտավ անտիկ աշխարհում և մտավ օրինակելի սխրանքների դասական շարքը: Դեռևս մ. թ. ա. 36 թ. հռոմեական զորավար Մարկոս Անտոնիոսը, իր պարթևական արշավանքի ձախողումից հետո թշնամի երկրի միջով նահանջելիս, ծանր րուպեներին բացակաճում

Լր. «Օ՛, Բյո՛ւր»: Սակայն վերագրել Բյուրի արշավի ու նահանջի այս հռչակը Քսենոփոնի գրչի գործությանը՝ կենսական բացահայտել ճշմարտության մի կողմը միայն: Մեզ հայտնի է, որ սնկախ Քսենոփոնից, այդ նույն իրադարձությանն են անդրադարձել և ուրիշ հեղինակներ: Այսպես, դրա մասին իր երկում պատմել է հույն հեղինակ Քսենասար, որն այդ ժամանակ գտնվելիս է եղել հակառակ՝ պարսից թագավորի ճամբարում, որպես արքայի անձնական թժիշկ: Այդ արշավանքի պատմությունը գրել է նաև ոմն Սոփեանտոս, որը հավանաբար «Անաբասիսում» նկարագրված Սոփեանտոս Սոինփալացին է, Բյուրի ստրատեգներից մեկը: Սրա գործը մեզ չի հասել: Ենթադրում են, որ մ. թ. ա. I դարի հեղինակ Դիոդոր Սիկիլիացու «Գրադարանում» պահպանված՝ Բյուրի արշավանքի բավական հանգամանակից նկարագրությունը (XIV, 19—31, 37) հիմնված է հենց Սոփեանտոսի գործի վրա: Եթե այս ենթադրությունը չարդարանա, ապա կպարզվի, որ գոյություն է ունեցել Բյուրի արշավանքի նաև մի չորրորդ պատմություն, որից օգտվել է Դիոդորը:

Իրադարձությունն, ուրեմն, գտնվել է հույն հասարակության ուշադրության կենտրոնում անկախ Քսենոփոնի գրածից: Ինչո՞ւ: Կարճ ասած, սա առաջին դեպքն էր, երբ հունական մի զորաբանակ այդչափ կտրվում էր իր հայրենիքից և ընդհանրապես իր հարազատ տարերքից՝ ծովից, հեռանում ցամաքի խորքը, ու սյն էլ գնում հասնում պարսկական պետության սիրտը և այնտեղ մարտի մեջ հաջողությամբ չափվում պարսից արքայից արքայի հսկայական ուժերի հետ: Սա ոչ միայն սոսկ սխրանք էր, այլև հույների վաղեմի բաղձանքների իրականացման փորձ՝ ուսանելի կարգով արշավել այն թշնամու հողը, տիրանալ այն թշնամու հարստություններին, որը իր հսկայական բանակներով մի ժամանակ հեղեղել էր հույների երկիրը: Նման ծրագրեր, ինչպես իմանում ենք հունական մատենագրությունից, փառապաշխել են V դարում, բայց նրանց իրականացման փորձերի մեջ Բյուրի արշավը առաջինն էր:

Լի ավելի իմաստ է ստանում այս իրադարձությունը, երբ այն դիտում ենք հաջորդ դարաշրջանի՝ հելլենիզմի տեսանկյունով: Հիրավի, քաղաք-պետությունների միավորման տենդենցը, որ հելլենիզմի նախանշաններից էր, ուներ ոչ միայն պոլիսի ներքին նգնաժամի հաղթահարման իմաստը, որը մենք վերը հատկապես շեշտեցինք, այլև ստրկատիրական ամեն մի հասարակության անօտարելի հատկանիշը կազմող՝ արտաքին նվաճումների, հարստությունների թալանի, մանավանդ գերեվարությունների առավել մեծ չափով իրականացման նպատակը: Եվ ամա հելլեն հասարակությունը փորձով համոզվեց, որ ինքը սկզբունքորեն ի վիճակի է կատարել այդպիսի վիթխարի մի գործ՝ նվաճել Աքեմենյան հզոր ու անասան թվացող տերությունը: Եվ դրանից հետո նման ծրագրերն ու փորձերը չդադարեցին, մինչև որ

չպատկվեցին կատարյալ հաջողությանը արդեն Ալեքսանդր Մակեդոնացու օրոք: Այսպես, Բյուրի արշավանքի, ինչպես ջրի կաթիլի մեջ, արտացոլվել է մի ամբողջ մեծ ու կարևորագույն դարաշրջանի ամենահատկանշական տենդենցներից մեկը:

Քսենոփոնի ստեղծագործության բոլոր ուսումնասիրողները նշում են, որ «Անաբասիսը» գրելու նրա դրդապատճառներից մեկն է եղել ինքնափառաբանումը. թերևս նրա բաղձանքն է եղել իր նկարագրած ուժեղ անձնավորությունների վերոհիշյալ ցանկի մեջ ներմուծել իր սեփական կերպարը ևս: Այդ ձգտումը ապացուցվում է և այն հանգամանքով, որ Քսենոփոնը իր գրչին այս ուղղությամբ ազատություն և պատմածին՝ ավելի կշիռ տալու նպատակով «Անաբասիսը» հրատարակել է ուրիշի անվամբ (ոմն Թեմիստոկենես Սիրակուսացու, որ հայտնի չէ գոյություն ունեցե՞լ է, թե ոչ), և իր մասին պատմածի քանակով ու ոգով: Քսենոփոն Աթենացին, որ դեպի Պարսկաստան արշավանքի ընթացքում դեռևս ստվերում է գտնվում, առաջին պլան է դուրս բերվում իսկույններթ, երբ Կունաքայի ճակատամարտից և լավագույն զորավարների խարդախ սպանությունից հետո հույներն ընկնում են ծանր ու անելանելի թվացող կացության մեջ և հոգեկան անկում ապրում: Քսենոփոնը, աստվածների ներշնչմամբ, հորդոր է կարդում զինվորներին, վստահություն ներշնչում նրանց իրենց ուժերի նկատմամբ, և ընտրվելով ստրատեգուների շարքը, փաստորեն ստանձնում է Բյուրի ղեկավարությունը: Հետագա ողջ նահանջի ընթացքում զորքի բոլոր հաջողությունները կապակցվում են Քսենոփոնի նախաձեռնության, իմաստության ու եռանդի հետ, անհաջողությունները՝ ի հեճուկս նրա կատարած գործողությունների հետ: Նույն ուղղությամբ են ներգործում նաև Քսենոփոն-հեղինակի կողմից Քսենոփոն-ստրատեգուի բերանը դրած բազմաթիվ ու կրկարաշունչ ճառերը, այնպես որ Բյուրի վերադարձը Հոնիա ընթերցողը սկսում է ընկալել որպես հիմնականում Քսենոփոնի ջանքերի արդյունք: Անշուշտ, սա չափազանցություն պիտի համարել, մանավանդ որ, ասենք, Դիոդորի մոտ պահպանված համապատասխան պատմվածքում Քսենոփոնի անունն իսկ չի հիշատակված: Այս հանգամանքը ընդունակ էր ստվեր ձգելու ողջ «Անաբասիսի» արժանահավատության վրա, և եղել են հետազոտողներ, որոնք տուրք են տվել այդ կարծիքին:

Սակայն երկի մանրագնին ուսումնասիրությունը ի վերջո հանգեցրել է այն միահամոտ տեսակետին, որ հակառակ Քսենոփոնի իր սեփական դերի գերագնահատման՝ «Անաբասիսի» պատմական կոտավը ոչ միայն ճշմարտացի, այլև վերին աստիճանի ճշգրիտ է դուրս գալիս այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է լինում ստուգել նրա տվյալները: Քննողները եկել են այն եզրակացության, որ Քսենոփոնը արշավանքի ողջ ընթացքում օրագիր է վարել, որը և օգտագործել է հետագայում «Անաբասիսը» շարադրելիս: Օրագրի գոյության փաստի անկասկածելի ապացույց է, օրինակ, այն հանգամանքը, որ Քսենոփոնը իր երկում նշում է ոչ միայն կա-

տարված անցումների թիվը, այլև դրանցից յուրաքանչյուրի երկարությունը, մեծ մասամբ պարսկական փարսախներով (փարսանգ), այն տեղերում, երբ ընթացել են պարսկական պետական (արքունի) ճանապարհների երկարությամբ և դրանց վրա պարբերաբար դասավորված կայանները թույլ են տվել ճշգրտորեն նշել անցած տարածությունը: Մյուս դեպքերում՝ մոտավոր ձևով՝ սուպարեզներով և կամ ճանապարհի վրա ծախսած ժամանակով: Ոչ պակաս ցցուն կերպով են ցուցադրում Քսենոփոնի շարադրանքի ճշմարտապատում լինելը նաև Արևելքում նրա տեսածի նկարագրությունները:

Պետք է շեշտել, որ «Անաբասիսի», որպես պատմական աղբյուրի, արժեքը առաջին հերթին խարսխված է ահա ռազմերթի ընթացքում նրա հեղինակի տեսածի ու լսածի արձանագրման վրա, որը, իհարկե, իր նմանը չունի հույն գրականության մեջ: Քսենոփոնը Կյուրոսի հետ արշավելիս, անցել է ողջ Փոքր Ասիան և Հյուսիսային Միջագետքը, տեսել բազմաթիվ երկրներ, քաղաքներ ու բնակավայրեր և տեղեկություններ է հաղորդում այս ամենի մասին, ինչպես և պարսիկների բարձր ոլորտներում, որտեղ նա անցնում-դառնում էր, տիրող բարքերի ու սովորությունների մասին: Սակայն առանձնապես և, կասեինք, եզակի կարևորություն է ձեռք բերում նրա պատմածը այն պահից, երբ սկսվում է Բյուրի նահանջը անծանոթ ու թշնամի երկրների միջով: Հույները կորում-անցնում են Հայկական լեռնաշխարհը հարավից հյուսիս-արևմուտք, Վանս լճից հարավ ընկած Կարթուսների երկրից, բուն Հայաստանի և «Արևմտյան» Հայաստանի վրայով դեպի Սև ծովի ափերը ու այնուհետև ընթանում նրա հարավային ափի երկայնքով: Այդ ընթացքում նրանք ծանոթանում են տասնյակ ցեղերի ու ժողովուրդների հետ, որոնցից շատերը մինչ այդ հույներին հայտնի էին լավագույն դեպքում սուս անուններով:

Եթե նախապես հույները պարսկական զորքի կազմում էին արշավում, որպիսի հանգամանքը նրանց մասամբ մեկուսացնում էր այցելված երկրների բուն միջավայրից, սուս այժմ՝ միայնակ, թողնված բախտի քմահաճույքին, ենթակա անսպասելի ու անծանոթ վտանգների: Այս սվելի է սրում նրանց ուշադրությունն ու դիտողականությունը համապատասխան երկրների ու նրանց բնակչության նկատմամբ: Վերջինի հետ նրանք անընդհատ ձգտում են անմիջական շփում հաստատել, փորձում լեզու գտնել, հնարավորին չափ առանց բախումների անցնելու համար իրենց ճանապարհը: Օգտագործում են հանգստի համար նրանց կացարանները, սնվում նրանց սննդով, օգտվում նրանց հագուստից, տեսնում նրանց զբաղմունքները, բարքերը, հարաբերությունները, ճանապարհի առաջնորդներ ընտրում նրանցից և նման ուղիներով հսկայական ինֆորմացիա ստանում նրանց կյանքի մասին:

Երջանիկ պատահականությամբ հույն զորաբանակում գտնվել է Քսենոփոնի փայլուն պատրաստությունը, շահագրգռումները և գրիչը ունեցող անձը, որը ներ-

ծծել է այս բոլոր տպավորությունները և հարազատորեն հանձնել թղթին: Հասկանալի է, թե որքան անգերագնահատելի նշանակություն ունի այդ համապատասխան ցեղերի ու ժողովուրդների պատմության համար: Այն շատ վառ ցուցադրվում է հատկապես Հայաստանի մասին Քսենոփոնի հաղորդածով, որի հիման վրա իր յուսարանումն է ստանում հայ ժողովրդի պատմության մի ամբողջ դարաշրջան, որը այլապես մոլոր կմնար:

Որպես պատմական աղբյուրի՝ «Անաբասիսի» մի այլ արժանիքն է հունական զորքի պատմության որոշ էջերի վառ լուսարանումը: Քսենոփոնը մի դարաշրջանում է ապրել, երբ սկսվում է վարձկան զորքի նշանակության վերելքը ժամանակի քաղաքական ու ռազմական խնդիրների լուծման մեջ, բայց երբ վարձկանության ծախս ու հոգեբանությունը դեռևս չէր քայքայել հելլենական զորքի հիմնավորը ազնիվ ավանդները: Բյուրը, փաստորեն, մի շարժուն պոլիս են ներկայացնում, բախտի քմահաճույքով նետված օտար ցեղերի ու բնության անհրապույր գիրկը, և հետաքրքրականն այն է, որ հակառակ բոլոր արհավիրքների, նրանք պահպանում են իրենց կենսակերպը ու նկարագիրը: Մեծագույն վարպետությամբ և, իհարկե, միանգամայն վաղերադրոյե՛ն պատմում է Քսենոփոնը, թե ինչպիսի կյանքով է ապրում իր հայրենիքից հարյուրավոր մղոններ հեռուցած Հելլադայի այս փշուրը:

Մենա գոլիսի գերագույն դեկավար օրգանի՛ն՝ ժողովրդական հավաքին փոխարինող զինվորների հավաքը, որ գումարվում է ամեն անգամ արշավանքի հետ կապված սկզբունքային հարցերը լուծելիս, և որում ամենավերջին զինվորը իրավական տեսակետից հավասար է ստրատեգոսին ու կարող է բննադատել նրա և յուրաքանչյուր այլ անձնավորության գործողությունները և իր առաջարկները մտցրնել, որոնք կրկնումվեն կամ կմերժվեն հավաքի ձայների մեծամասնությամբ: Իհարկե սա սկզբունքն է միայն, իսկ իրականության մեջ իրեն խիստ զգացնել է տալիս իշխանության, ծագման, ունեցվածքի և այլ տեսակի տարբերությունից բխող հեղինակության տարբերությունը: Ելույթները հաճախ միտումնավոր են ու դեմագոգիկ, հավաքի վճիռները՝ որոշ դեպքերում՝ անխոհեմ: Բայց բնդհանոր առմամբ այս դեմոկրատական արարողությունը ցույց է տալիս, թե որն է թշնամիներին ու արհավիրքներին այս մի բոլոր հելլենների դիմադրելու կարողության աղբյուրը. այն, որ յուրաքանչյուրը նրանցից իրեն ազատ քաղաքացի, ինքնուրույն անձ է զգում և գործում է գիտակցաբար: Սրանով, ռակայն, ամենևին չի բացառվում զինվորական խիստ կարգապահությունը, առանց որի հելլեններին փրկություն չէր լինի:

Այս կողմերիվ, շարժուն պոլիսը, երբեք չի մոռանում հայրենիքում մոր կաթի հետ ներծծված այն զգացումը, որ հելլենները իրենց բնությամբ հակադիր են ոչ հելլեններին՝ բարբարոսներին, գերագանց են նրանցից իրենց ազատությամբ,

իրենց հոգևոր ու նույնիսկ մարմնական ուժերով: Բանակ-պոլիսը լրիվ պահպանում է նաև իր ստրկատիրական էությունը: Թշնամու երկիրը ասպատակելիս հեղինակները, բացի իրենց անհրաժեշտ պարենից և այլ կենսամիջոցներից, տանում են նաև բնակչությունը, այն հարմար դեպքում վաճառելու և կամ առանձին աչքի ընկնող արտույտներին իրենց հետ հայրենիք վերցնելու նպատակով: Իրենք էլ լավ հասկանում են, որ իրերի դժբախտ ընթացքի դեպքում կարող են, ազատ քաղաքացիներ լինելով հանդերձ, ստրկացվել, նույնիսկ Լորայր-հեղինակների կողմից: Այսպիսի մի դեպք՝ 400 զինվորների ստրկացումը, նկարագրված է «Անարասիսում»:

Հեղինակների հետ արշավանքի մեջ են նաև նրանց աստվածները, որոնց հետ ամեն օր շփվում են զոհաբերությունների ու հարցումների միջոցով: Ոչ մի կարևոր քայլ չի ձեռնարկում Քսենոփոնը կամ մյուս ստրատեգոսները, զորքին թե սեփական անձին վերաբերող, նախքան զոհաբերված կենդանու փորոտիքի հետազոտման հիման վրա գուշակը չհայտնի աստվածների կամքը: Զոհաբերության համար կենդանի հայթայթելու նպատակով հույները պատրաստ էին ծախսել իրենց վերջին միջոցները: Մոռացության չէին տալիս նրանք նաև իրենց մարմնամաշակական ավանդական մրցումները: Հագիվհագ Հայկական լեռնաշխարհից դուրս պրծած, դեռ հոգևած ու հյուծված, առաջին իսկ հնարավորության դեպքում նրանք կազմակերպում են պոլիսի մրցումներ և ամբողջ հոգով տրվում դրանց:

Նման էտնախորքի վրա ամենին տարօրինակ չի հնչում այն գաղափարը, որը մի քանի անգամ այս կամ այն առիթով արծարծվում է «Անարասիսում» և անցնում իրեն Քսենոփոնի մտքով. արդյոք ճիշտ չի՞ լինի, փոխանակ հայրենիք վերապահելու, որտեղ հայտնի չէ, թե ինչ է սպասում յուրաքանչյուրին, բնորոշ որևէ ծովամերձ հարմարավետ վայր և մի նոր պոլիս հիմնադրել: Ու թեև այդ միտքը մերժվում է, բայց հեշտությամբ կարելի է պատկերացնել, թե որքան դյուրին կարող էր այն իրականանալ:

Եվ, վերջապես, «Անարասիսը» աչքի է ընկնում թե Քսենոփոնի ստեղծագործությունների և թե ողջ հունական գրականության մեջ իր բարձր գրական-գեղարվեստական արժանիքներով, որոնք գնահատվել են դեռևս հեների կողմից և որոնք մասնաշրջան են պատճառում այսօրվա ընթերցողին ևս:

«Անարասիսը» այս առումով դիտելիս հիշենք, որ այն գեղարվեստական ժանրին չի պատկանում, և հեղինակը խիստ սահմանափակված է եղել գեղարվեստական միջոցների կիրառման խնդրում: Քսենոփոնը զարմանք է պատճառում սուղ և զուտ միջոցներով հիանալի արդյունքի հասնելու իր ունակությամբ: Պատմական անձնավորությունների կերպարները և իրադարձությունների նկարագրությունները մրցում են իրար հետ արտահայտչականությամբ և ներգործման աստիճանով:

Սովորաբար առաջին հերթին մատնացույց են անում այն տեղը, որտեղ ներ-

կայացված են Բյուրի դավադրաբար սպանված երեք զորահրամանատարների՝ Կլեարքոսի, Պրոքսենոսի և Մեևոնի բնութագիր-դիմանկարները: Սրանք, հիրավի, տարվորիչ են: Սևոմ տողերով ոչ միայն գծագրված է երեք միանգամայն տարբեր անձնավորություն, իրենց թույլ ու ուժեղ, դուրեկան ու համակրելի կողմերով, իրենց գաղափարներով ու ձգտումներով, կյանքի նկատմամբ ունեցած պահանջներով ու շրջապատի հանդեպ՝ վերաբերմունքով և այլն, այլև նկարագրերը հասցված են սոցիալական ընդհանրացումների աստիճանի, որով երեք գիևկորականների տիպական կերպարները բնութագրում են իրենց ծնած հասարակությանը:

Այս հատվածները, սակայն (ինչպես և քիչ ավելի վաղ տրված՝ Կյուրոս Կրտսերի հնուպիշ դիմանկարը), որոնք մահախոսականների բնույթ են կրում, ամենին գրական «շեղումներ» չեն շարադրանքի բուն նյութից. նրանք հիմնավորված են և նախապատրաստված նախորդ շարադրանքով: Նախքան դրանց հասնելը, բնթերցողն ինքը, հիշյալ անձերի արածի ու ասածի հիման վրա, Քսենոփոնի գրչի չեղարվեստական գործությամբ, արդեն ստեղծում է իր մեջ նրանց կերպարների մոտավորապես նույն նկարագիրը, որն այնուհետև ստանում է հեղինակից՝ ավելի ճշգրիտ ու նրբին կերտվածքով: Սա է, ի դեպ, այդ բնութագրումների ներգործական ուժի մի էական ակունքը: Նրանք նախորդ շարադրանքի հանրագումարներն են մահվան խազած գծի տակ:

Այս ասում ենք նաև շեշտելու համար, որ բազմաթիվ այլ, նման սեղմ բնութագրումներից զուրկ անձնավորություններ ևս հանում են «Անարասիսի» էջերից, որպես ցցուն ու բնորոշ կերպարներ: Եթե շարունակենք հույն գորավարների պատկերաշարը, ապա կարելի է հիշատակել Քսենոփոնի ընկերակից լակոնեմոնացի Խելրիստոփոսին, որի բնորոշ գծերը նրա միջակ, տաղանդից զուրկ ամուր պրոֆեսիոնալիզմն ու կենսավորձն են, կամ դիպվածաբար հանդես եկող Կոչրատադասին: Վերջինի գործողությունները Քսենոփոնը նկարագրում է ամենայն լրջությամբ, բայց ընթերցողի ականջին այն հնչում է որպես կծու ծաղր հեղինակական գորավարների ևս մի «տարատեսակի» նկատմամբ, որի ներկայացուցիչները, հակառակ իրենց չնչին կարողությունների, կաշվից դուրս են գալիս որսալու իրենց բախտը վարձկանության պղտոր շրթերում: Սոցիալական ընդհանրացումը այստեղ ևս, ինչպես այլ դեպքերում, առկա է:

Մի շարք «բարբարոսների» կերպարներ ևս՝ Տիսապեոնոսի, Արիպոսի և ուրիշների, շատ տպավորիչ են: Հատկապես Աթեսիսը, խորամանկ, բայց կարճամիտ, իշխելու ծարավի, բայց անարի, թագավորություն նվաճել ձգտող, բայց միջոցներ խնայող, իրեն իսկ ծառայող մարդկանցից երկնշող թրակիական արքայիկի, որը կատարյալ հակապատկերն է մի այլ «բարբարոսի»՝ հզոր ու լայնախոն Կյուրոս Կրտսերի:



Ոչ պակաս դիպուկ ու հմայիչ են արշավանքի տեսարանների, ուազմական գործողությունների, ստանձին բնդհարումների, ստօրյա դեպքերի, խնջույքների նկարագրությունները, որոնց մեջ չի գտնվի պատահական, իմաստացին լիցքից զուրկ բառ և որոնք բնթթրցույթի համար գրեթե տեսողական էֆեկտ են ստեղծում և ներմուծում նրան նկարագրվող իրականության բուն մթնոլորտը:

Անկարկի Լ, ի վերջո, կրկին անգամ չհիշատակել Քսենոփոնի լեզուն, որին նկերի տված բնութագրումից մենք սկսեցինք սույն հոդվածը: Այն հիրավի օրինակելի Լ համարվում իր բերականական հավասարակշռությամբ և հանգիստ արտահայտչականությամբ: Պատահական չէ, որ տվանդարար հենց Քսենոփոնից և հասկապես «Անարասիսից» են սկսում նոր ժամանակներում հունարենի ուսուցումը:

«Անարասիսի» ներկա հայերեն թարգմանությունը հարագատորեն է վերարտադրում բնագրի ձևն ու ոգին և արժեքավոր ներդրում է բազմադարյան հսկայական նվաճումներ ունեցող և հատկապես հոյց գրականության նմուշներով հարուստ հայ թարգմանական գրականության գանձարանը:

ԳԱԿԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

#### «ԱՆԱԲԱՍԻՍԸ» ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հունական պատմագրության դերը հին Հայաստանի պատմության լուսաբանման գործում առայժմ մնում է չգերազանցված: Հետազոտողի ուշադրությունն են գրավում հատկապես Հերոդոտի, Քսենոփոնի և Ստրաբոնի կերպարները: Այս եղյակի հիշատակումը պատահական չպետք է համարել: Երեքն էլ ստույգ պատմաբանի համբավ ձեռք բերած լինելուց բացի այս կամ այն ձևով մոտիկից ծանոթ են եղել Հայաստանին: Բայց նրանցից և ոչ մեկը այն չափով չի ուսումնասիրել Հայաստանը և կարևոր տեղեկություններ թողել նրա ներքին կյանքի մասին, ինչ չափով, իրերի բերմամբ, այդ արել է Քսենոփոն Աթենացին: Բյուրի ստիպողական նահանջը Քսենոփոնին՝ այդ նահանջի մասնակցին, դեմ առ դեմ կանգնեցրեց Հայաստանի բնաշխարհի և մարդկանց հետ, և ականատես հեղինակի ձեռքով կատարված գրառումները «Անարասիս» ամենահետաքրքրական բաժիններից մեկի հիմք դարձան: Որոշ պատկերացում տալով Հայաստանի քաղաքական վիճակի մասին, Քսենոփոնը լայնորեն լուսաբանում է հին հայկական հասարակության կյանքի տարբեր կողմեր: Այս է «Անարասիսի» գլխավոր արժեքը Հայաստանի պատմության համար:

«Անարասիսը» և Քսենոփոնի մյուս աշխատությունը՝ «Կյուրուպեդիան», որի Հայաստանին վերաբերող տեղեկությունները նա նույնպես քաղել է Հայկական լեոնաշխարհի միջով անցնելիս, անդրապատկերում են Հայաստանի պատմության

նշանակալից այն ժամանակաշրջանը, որն սկսվեց ուրարտական տերության անկումով և Հայկական լեռնաշխարհում՝ հայերի քաղաքական գերիշխանության հաստատումով: Հայ ժողովրդի պատմության այս նոր փուլում՝ տնտեսության առաջացման, հայ ժողովրդի կազմավորման հետ առնչվող կարևորագույն երևույթներ և բազմաթիվ այլ սկզբունքային կարգի հարցեր, ավելի կամ պակաս չափով, իրենց արտացոլումը գտան Քսենոփոնի վերոհիշյալ երկերում, մի անգամ ևս ընդգծելով նրանց աղբյուրագիտական բացատրիկ նշանակությունը:

Երբ հույները ոտք դրին Հայաստանի հողի վրա, այն արդեն մեկ և կես դար Աքեմենյան Իրանի աշխարհակալ տերության մասն էր կազմում: Պարսկական իշխանությունը հաստատվել էր Հայկական լեռնաշխարհում VI դարի կեսերին, բայց երկրի վերջնական հպատակեցումը տեղի ունեցավ ավելի ուշ և կապված էր հայերի ապստամբության ճնշման հետ: Օգտվելով պարսից արքունիքում ստեղծված խառնակ վիճակից, տերության ժողովուրդները, այդ թվում և հայերը, ոտքի էլան վերանվաճելու կորցրած անկախությունը: Աքեմենյան տոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչ Դարեհը, իշխանությունը իր ձեռքը վերցնելով, ստանձնեց կայսրության ամբողջականության վերականգնման գործը, որը կատարեց մեծ վճռակալությունների հանդիպեց Դարեհը Հայաստանում: Պարսկական զորքերը հինգ անգամ ներխուժեցին Հայաստան, միայն վերջին արշավանքից հետո պարսիկները իրարության տերը դարձան:

Դարեհ I-ը վերամիավորված տերության մեջ բազմաթիվ բարեփոխումներ իրագործեց, վարչական նոր կարգ սահմանեց, դրամական միասնական սխտեմ մշտցրեց, կարգավորեց ճանապարհները, հարկերի հաստատ չափեր որոշեց: Հայաստանը դարձավ Աքեմենյան տերության սատրապություն, իր կառավարիչ սատրապով: Այս էր Հայաստանի ընդհանուր վիճակը, երբ հունական զորքը նրա միջով անցնելով, իրագործեց իր հռչակավոր նահանջը Միջագետքից դեպի Սև ծով և այնտեղից էլ Փոքր Ասիայի արևմտյան ափերը:

Սակայն V և IV դարերի սահմանագլխի այդ օրերին արդեն ուրվագծվում էր պարսկական աշխարհակալ տերության վախճանը, երևում էին նրա վերահաս փլուզման առաջին նշանները: Քսենոփոնի կողմից այդքան վարպետությամբ նկարագրած արշավանքը նախակարապետն էր մոտ 70 տարի հետո տեղի ունեցած Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհացունց արշավանքի, որը պիտի կործաներ Աքեմենյան տերությունը և պայմաններ ստեղծեր մի շարք նոր երկրների, այդ թվում և Հայաստանի ինքնուրույն զարգացման համար:

\* \* \*

401 թ. գարնանը դուրս գալով Սարդեսից, Լիդիայի, Փոյուգիայի և Կապադովկիայի սատրապ Կյուրոսը, որը, ի տարբերություն իր նույնանուն նախնու, հայտնի է «Կրտսեր» մականունով, բազմաբանակ զորքի գլուխն անցած սկսեց արշավանքը ընդդեմ հարազատ եղբոր, պարսից արքա Արտաքսերքսես II Մեծնի (404—358): Երկու եղբայրների միջև ընդհարման պատճառը միայն անձնական ու դինաստիական հողի վրա չէր, այն կապված էր տերության առաջավոր ուժերի՝ երկրի կյանքում բարեփոխումներ մտցնելու ձգտումների հետ: Կտրելով-անցնելով Փոքր Ասիան, արշավող բանակը, որի կազմում կար նաև հույն վարձկանների մի մեծ ջոկատ, Կիլիկիայի ու Ասորիքի վրայով մուտք գործեց Միջագետք և Եփրատի ձախ ափով առաջ խաղաց դեպի հարավ: Չհասած Բաբելոն քաղաքին, Կունաքսայի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը, որի էլքը աղետաբեր եղավ Կյուրոսի համար: Նա ինքը սպանվեց, իսկ իր բանակը քայքայվեց ու ցաքուցրիվ եղավ: Հույներին, որոնց զինվորական ղեկավարման կազմի մեջ ընդգրկվել էր արշավի մասնակից Քսենոփոնը, այլ բան չէր մնում, բան մտածել վերադարձի մասին: Վերադառնալ հույները կարող էին այն ճանապարհով, որով նրանք եկել էին, բայց այն իրենց ծանոթ լինելով հանդերձ կապված էր բազմաթիվ վտանգների հետ: Այդ պատճառով նրանք վճռեցին շարժվել այն ճանապարհով, որը, ավելի երկար լինելով, ավելի ապահով էր թվում և դուրս էր բերելու դեպի Սև ծովի նավահանգիստները: Մի շարք դժվարություններ հաղթահարելուց հետո հունական զորքը անցավ Տիգրիսը և գետի ձախ ափով դեպի հյուսիս շարժվեց: Երբ հույները հասան ճանապարհի խոշոր խաչմերուկին՝ արևմտյան ճանապարհը տանում էր դեպի Լիդիա և Հոնիա, արևելյանը դեպի Սուրա և Էփեսոս, հարավայինը, որով նրանք եկել էին՝ դեպի Բաբելոն, իսկ հյուսիսայինը՝ դեպի կարդուխների երկիրը, ապա նրանք ընտրեցին վերջինը, որովհետև տեղեկացել էին, որ այդպիսով կհասնեն Հայաստան, որտեղից «ամեն մեկը կարող է հեշտությամբ գնալ, ուր որ կամենա»: Քանի որ Տիգրիսի ափով այլևս ճանապարհ չէր շարունակել ճանապարհը, հույները որոշեցին շարժվել կարդուխների լեռնոտ երկրի միջով: Իրենց դժվարին անցման յոթերորդ օրը հույները հասան այն գյուղերը, որտեղից երևաց Կենտրիոնս գետը, Հայաստանի և կարդուխների երկրի սահմանը:

Հայաստանի միջով հունական զորքի նահանջի ճանապարհի ստույգ որոշումը նախապայման է «Անաբասիսի» Հայաստանին վերաբերող մի շարք տվյալների հիշտ մեկնաբանման համար: Այդ է պատճառը, որ այս հարցը արժանացել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությանը, որոնք սակայն միասնական կարծիքի չեն հանգել, և այդ գարնանայի չէ, քանի որ հին Հայաստանի պատմական աշ-

խարհագրությանը գրադվողը վճռական խոսք ասելու համար իր տրամադրության տակ չափից քիչ նյութեր ունի: Եվ այնուամենայնիվ Քսենոփոնը հիշատակում է մի շարք հենակետային նշանակություն ունեցող տվյալներ, որոնք ուսումնասիրողին կողմնորոշում են ճիշտ ուրվագծելու ընդհանուր ուղղությունը, անտեսելով մասնակի շեղումները:

Այդպիսի հենակետերից են Կենտրիտես գետը, Տիգրիսի ակունքները, Տելեբոսս գետը, Եփրատի ակունքները, Փասիս գետը, տատխների և խալիքների երկրները: Սրանցից բացի Քսենոփոնը հիշատակում է թե՛ ամեն մի ճանապարհահատվածում քանի որ են քայլել, քանի անցում կատարել, քանի փարսախս անցել, ընդ որում հայտնի են այս միավորների միջև գոյություն ունեցող մոտավոր փոխհարաբերությունները (1 օր=1 անցում=5 փարսախս, 1 փարսախս=5 կմ):

Հաշվի առնելով երթուղին տեղում ուսումնասիրողների եզրակացությունները, օգտվելով հին աշխարհաբարտեզների և ժամանակակից մեծ մասշտաբային քարտեզների տվյալներից, հնարավոր է մոտավորապես վերականգնել նահանջի ճանապարհը: Այն փաստից, որ հույները կարողութների երկիրը հասնելուց հետո շարունակեցին իրենց ճանապարհը այդ երկրի միջով և ոչ թե Տիգրիսի երկայնքով. կարելի է եզրակացնել, որ Կենտրիտեսը նրանք հասան ու ապա անցան մի այնպիսի կետում, որ գտնվում էր Տիգրիսի երկու՝ արևմտյան և արևելյան (Կենտրիտես) ճյուղերի միախառնման տեղից դեպի արևելք: Գետանցումը կատարելուց հետո, հաղորդում է Քսենոփոնը, հույները ընթացան այնպես, որ կտրելով-անցնելով Տիգրիս գետի ակունքները, հասան Տելեբոսս գետը: Քանի որ Քսենոփոնի հետագա շարադրանքից երևում է, որ հույները անցան նաև Եփրատի ակունքների մոտով, ապա պարզ է, որ Տիգրիսի ակունքների շրջանից այնտեղ հասնելու համար հույները պետք է հաղթահարած լինեն Հայկական Տավրոսը, անցնելով նրա լեռնանցքներից որևէ մեկով: Հնարավոր է, որ Կենտրիտեսի հայկական ափը փոխադրվելուց հետո հույները շարժվեցին մոտավորապես դեպի հյուսիս և Կենտրիտեսի վտակ Բաղեշ գետի ակունքների մոտով ու ապա Բաղեշի լեռնանցքով իջան Մշո դաշտը: Մակայն բացատրված չէ, և նույնիսկ ավելի հավանական է, որ Հայաստան մուտք գործելուց հետո հույները շարժվեցին դեպի արևմուտք և ապա հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղություն ընդունելով՝ Քաղիթթ գետի հովտով բարձրացան դեպի լեռները և ակունքների մոտ գետը անցնելուց հետո Սասնա լեռնանցքով իջան դեպի Մշո նույն դաշտը: Այդ մասին «Անաբասիտում» որոշ ակնարկներ են պահպանվել: Հասնելով Կենտրիտեսի մոտ հույները դիմացի ափում նկատեցին մի ձեռակերտ ճանապարհ, որը դեպի վեր էր տանում: Հնարավոր է, որ խոսքը այստեղ «արքայական» ճանապարհի մասին է, որը, ինչպես հայտնի է, անցնում էր Հայաստանի հարավ-արևմտյան շրջաններով և որի ուղղությունը մերձիգրիսյան վայրերում

արևմուտքից արևելք եղած պիտի լիներ: Ընթանալով այս ճանապարհով, հույները առժամանակ պետք է որ դեպի արևմուտք գնացած լինեն, հեռանալով հետևաբար Բաղեշի գետից և մոտենալով այդպիսով Քաղիթթ գետին: Թեքվելով ապա մայրուղուց, որը նրանց ի վերջո հասցնելու էր Փոքր Ասիայի այն վայրերը, որոնցից նրանք խուսափում էին, հույները ընդունեցին հյուսիսային ուղղություն՝ դեպի Տիգրիսի ակունքները: Որ հույները պետք է անցած լինեն ոչ թե Բաղեշի գետը, այլ Քաղիթթը, երևում է նաև այն բանից, որ Քսենոփոնը խոսում է Տիգրիսի ակունքների մասին և ոչ Կենտրիտեսի: Մտնելով նման տարբերակում Տիգրիսի երկու ճյուղերի միջև՝ Կենտրիտեսի տակ հասկանալով Արևելյան Տիգրիսը, իսկ պարզապես Տիգրիսի, հետևաբար, արևմտյանը, Քսենոփոնը պետք է որ վերջինիս ակունքները փնտրած լինի ոչ թե Կենտրիտեսի, այլ Տիգրիսի արևմտյան ճյուղի վտակների մեջ: Վերջապես շատ անհավանական է, որ հույները Բաղեշի լեռնանցքով շարժվելիս չտեղեկանային Վասն լճի գոյության մասին, որը շատ մոտիկ է այդ լեռնանցքից:

Հայկական Տավրոսը կամ ավելի ճիշտ Սասնա լեռները հաղթահարելուց հետո հույները իջան դաշտը, իրենց ճանապարհին հանդիպելով Տելեբոսս գետին: Այստեղից մի շարք անցումներ կատարելուց հետո, պատմիչի ասելով, հույները անցան Եփրատը, բայց այնպիսի մի կետում, որտեղից ակունքները հեռու չէին: Եվ ապա շարունակելով իրենց ճանապարհը, հասան Փասիս գետը՝ Արաքսի վերին հոսանքը:

Մի շարք հետազոտողներ Տելեբոսսի մեջ տեսնում են Արևելյան Եփրատը (Արածանին), մոռանալով, որ Տելեբոսսը Քսենոփոնը անվանում է ոչ մեծ գետ, իսկ Եփրատի տակ հասկանում են Արևմտյան Եփրատը, ենթադրելով, որ Արածանին անցնելուց հետո հույները ուղևորվեցին դեպի հյուսիս: Նման մեկնաբանման դեմ են խոսում սակայն մի շարք նկատառումներ: Դեռևս Միջագետքում նահանջի հետ կապված հարցերը քննարկելիս հյուսիս դեկավարներից մեկը խոշոր գետերի անցման դժվարությունների կապակցությամբ այն միտքը հայտնեց, որ նրանք հաղթահարելի են, եթե զորքը փորձի գետերը անցնել ակունքների մոտ գտնվող հատվածում: Այդ սկզբունքը կիրառելի դարձավ Հայաստանում: Հայաստանի միջով իրենց առաջխաղացման հնարավորությունները պարզելիս հույները կարողութների երկրում տեղեկացան, որ Եփրատի ակունքները հեռու չեն Տիգրիսի ակունքներից, և այդ այդպես էլ եղավ, ավելացնում է պատմիչը: Այս պնդումը թույլ է տալիս ենթադրելու, որ Եփրատի անվան տակ Քսենոփոնը հասկացել է Արածանին, որը իսկապես հեռու չէ Տիգրիսի ակունքներից: Ապա ճանապարհի նկարագրությունը Եփրատից, ավելի ճիշտ՝ նրա ակունքներին մոտ մի կետից մինչև Փասիս (այսինքն՝ Արաքսի վերին հոսանքը) համապատասխանում է ավելի Արևելյան Եփրատի

(Արածանիի) և Արաքսի միջև ընկած տարածությունը, ուստի և դժվար է համաձայնվել այն ուսումնասիրողների հետ, որոնք Եփրատի անվան տակ հասկանում են Արևմտյան Եփրատը:

Այսպիսով, Տելեռասից, որը այժմ նույնացվում է Արածանիի ձախակողմյան վտակ Մեղրագետի հետ, հույները նախ Մշո և ապա Մանագլերտի դաշտով շարժվեցին դեպի արևելք և անցան Արածանին՝ ակունքների մոտ գտնվող մի վայրում, ու ապա, առաջ խաղալով, հավանաբար Ալաշկերտի դաշտով, հասան հայտնի այն գյուղերը, որտեղ տեղեկացան հարևան խալիբների երկրի և այնտեղ տանող ճանապարհի մասին: Սակայն, փոխանակ շարժվելու այս ճանապարհով դեպի հյուսիս և խալիբների երկրի վրայով ծովը դուրս գալու, հույները, որոնց որոշ ժամանակ առաջնորդում էր հայ գյուղապետերից մեկը, ընթացան հավանաբար դեպի հյուսիս-արևելք, հասնելով Արաքսի վերին հոսանքը: Բացառված չէ նաև, որ միառժամանակ հույները շարժվեցին Արաքսի երկայնքով, այդ պատճառով էլ լրիվ պարզ չէ, թե այն որ կետում է, որ նրանք հեռացան գետից՝ թեքվելով դեպի տառիսների երկիրը տանող ճանապարհը: Այն հանգամանքը, որ այս ճանապարհի վրա ընկած լեռնանցքը պաշտպանում էին խալիբների, փասիանների և տառիսների միացյալ ուժերը, ակնարկում է այն մասին, թե ճանապարհը դեպի տառիսները ընթացել է փասիանների երկրի միջով, հին հայկական Բասեն գավառով, որը միջանկյալ դիրք էր գրավում տառիսների և խալիբների երկրների միջև: Այդ է դեպ հաստատվում է նաև Դիոդոր Սիկիլիացու միջնորդությամբ մեզ հասած տղվալներով: Տառիսների երկրից հույները շարժվեցին դեպի արևմուտք՝ և խալիբներու սկյութիանների երկրի միջով, Հարպասու (Մորոխ) գետի ափով ու Գյումնիաս քաղաքով անցնելուց հետո հասան Թեխես լեռը, որտեղից երևաց ծովը և որտեղից փաստորեն սկսվեց վայրէջքը դեպի Տրասպոն:

\* \* \*

Քսենոփոնը Հայաստանը անվանում է ընդարձակ մի երկիր և որոշ տեղեկություններ է տալիս նրա հարավային և հյուսիսային սահմանների մասին: V դարի վերջում Հայաստանի հարավային սահմանը, ավելի ճիշտ այդ սահմանի մի՝ արևելյան հատվածը, Կենտրիտես գետն էր (միջնադարյան աղբյուրներում՝ Ջերմ), Արևելյան Տիգրիսը (Բոհոտանու), որը Հայաստանը բաժանում էր կարդոխների երկրից (Կորդոք): Հարավային սահմանի մյուս՝ արևմտյան հատվածը, նույն այդ ժամանակ, կամ Արևմտյան Տիգրիսն էր կազմում կամ Մասիոսը՝ Տուր-Աբդին լեռնաշղթան:

Հայաստանի հյուսիսային սահմանը դժվարությամբ է որոշվում, թեպետ հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել նրա մասին: Հյուսիս-արևմտյան մա-

տում, դատելով Քսենոփոնի, ինչպես նաև հույն այլ պատմիչների վկայություններից, հայերը սահմանակից էին խալդայ-խալիբներին, որոնք զբաղեցնում էին Բարձր և Փոքր Հայքի լեռները: Սահմանը այստեղ հավանաբար անցնում էր Դերշանի և Կարինի գավառներով և ապա ընթանում էր դեպի հյուսիս-արևելք, իր մեջ առնելով նաև Սպեր և Բասեն գավառների հողերը: Այդ երևում է «Անաքասիսի» վերջում պահպանված մի հավելվածից, որտեղ հեսպերիտները և փասիանները (որոնցից առաջացել են վերոհիշյալ գավառների անունները) «Արևմտյան Հայաստանի» կառավարիչ Տիրիբագոսի ենթականերն են համարվում: Ինչպես երևում է նահանջի ճանապարհի մկարագրությունից, հյուսիսային սահմանի շարունակությունը գրանրվում էր Արաքսի վերին հոսանքից դեպի հյուսիս: Հույները Արաքսի մոտից սկսած հաղթահարում են մոտ 40 փարսախս (200 կմ) մինչև որ հասնում են տառիսների երկիրը:

Հայաստանի արևելյան և արևմտյան սահմանների մասին Քսենոփոնը ոչինչ չի տալորդում, բայց Հերոդոտից գիտենք, օրինակ, որ արևմտյան սահմանը Եփրատով էր անցնում: Այդ վկայությունը վերաբերում է Հայկական սատրապության գոյության առաջին ժամանակաշրջանին: Դատելով Անտիոքոս I Կոմմագենացու Նեմրոդ լեռան արձանագրություններից, հնարավոր է, որ V դարի վերջերին, հենց Քսենոփոնի հիշատակած Օրոնտաս սատրապի օրոք, այդ սահմանը կամ նրա մի մասը տեղափոխվել էր Եփրատից էլ արևմուտք, ներառելով իր մեջ նաև Կոմմագենե երկիրը: Ինչ վերաբերում է հյուսիս-արևելյան սահմանին, ապա այն, ինչպես երևում է Հայաստանի վարչական բաժանումների բաղդատումից, գտնվում էր Քուռ գետի վրա:

Հայկական սատրապությունը՝ վարչական այս ընդհանուր միավորը, ուներ իր ենթաշրջանը՝ հյուպարքիան՝ «Արևմտյան Հայաստանը», որի հարավային սահմանները անցնում էին հավանաբար Արածանիի ստորին հոսանքով և ապա հաստատապես Հայկական Տավրոսի Սասնա լեռնաշղթայով, որը հաղթահարեցին հույները Հայաստանի հարավային շրջաններից «Արևմտյան Հայաստան» ենթաշրջանը մուտք գործելու համար: Սահմանը ապա շարունակվում էր Վանա լճի հյուսիսային ափերով և շրջանցելով Արածանիի ակունքները, միանում, հավանաբար, Հայկական Պարին ու ապա ձգվում դեպի հյուսիս՝ մինչև տառիսների երկիրը<sup>1</sup>:

Քսենոփոնի հաղորդած տվյալներից երևում է, որ Հայկական սատրապության՝ «Արևմտյան Հայաստան» հյուպարքիայից ջոկվող մասերը չի կարելի Արևելյան Հայաստան անվանել: Նման հակադրությունը մեխանիկական կլիներ, քանի որ

<sup>1</sup> «Արևմտյան Հայաստանի» տեղադրման մասին կան և այլ կարծիքներ: Տե՛ս, օրինակ, սույն գրքում հրատարակվող՝ Ս. Տ. Երևմյանի քարտեզը:

այդ ենթադրյալ Արևելյան Հայաստանի մեջ մտնում էին այնպիսի երկրամասեր, ինչպիսին Աղձնիքն ու Վասպուրականն են, էլ չենք խոսում Ծոփքի և Կոմմագենեի մասին, որոնց աշխարհագրական դիրքը համատեղելի չէ արևելյան հասկացության հետ:

Անհաջողության են մատնված նաև փորձերը նույնացնելու Քսենոփոնի օրոք Հայաստանում գոյություն ունեցող վարչական բաժանումը այն ավելի վաղ վիճակի հետ, որը մեզ ծանոթ է Հերոդոտի նկարագրությունից: Ինչպես հայտնի է, վերջինս խոսում է Հայկական լեռնաշխարհում և նրա սահմաններից էլ դուրս գոյություն ունեցող երկու՝ XIII և XVIII սատրապությունների մասին: XIII սատրապությունը, պատմահոր վկայությամբ, ընդգրկում էր Պակտյունիեն, հայերին և նրանց հարևաններին մինչև Սև ծովը: Պակտյունիեի տեղը պարզված չէ, բայց V դարի առաջին կեսին (այդ ժամանակին է վերաբերում Հերոդոտի վկայությունը) հայերն ընդգրկում էին Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանները, ներառյալ Վանա լճի ավազանը: Վերջինս և Ուրմիա լճի արևմտյան ափերի միջև ընկած շրջաններից մինչև Բարձր և Ժոքր Հայքի լեռները հայեր էին ապրում, իսկ այդ լեռներից դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք, մինչև ծովը՝ հայերի հարևանները:

XVIII սատրապությունը ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի այն մարզերը, որտեղ, ըստ Հերոդոտի, բնակվում էին սասպեյրները՝ ու ալարոդները (ուրարտացիները), ինչպես նաև Ուրմիա լճի ավազանի զգալի մասը, որտեղ, ըստ նույն պատմիչի, ապրում էին մատիեները: Երկու միավորների նման սահմանազատումը չի համապատասխանում այն բաժանմանը, որ գոյություն ուներ արդեն Քսենոփոնի օրոք: Այդ նշանակում է, հետևաբար, որ V դարի երկրորդ կեսում երկրի վարչական բաժանման մեջ փոփոխություններ են տեղի ունեցել: Պարսկական արձանագրությունների Արմինա կոչվող երկիրը, որը կազմված էր երկու՝ նաև Հայկական լեռնաշխարհից դուրս հողեր ընդգրկող սատրապություններից, դարձավ ավելի կոտ՝ պարփակվելով ավել կամ պակաս չափով Հայկական լեռնաշխարհի բնական սահմանների մեջ, ինչպիսին նա եղած պետք է լինի Քսենոփոնի օրոք: Երկու սատրապությունների փոխարեն ստեղծվեց մի սատրապություն իր ենթաշրջանով, որն իր մեջ էր առնում ինչպես XIII, այնպես էլ XVIII սատրապության ուրոշ շրջաններ:

\*\*\*

«Անաբասիսը» հակիրճ, բայց կարևոր վկայություն է պարունակում V և IV դարերի սահմանագլխին Հայաստանի սատրապ-կառավարչի՝ Օրոնտասի (Երվանդ) մասին, որը մասնակցել էր Կոմագենայի ճակատամարտին և հյուրի նահանջի սկզբի

օրերին վերադառնում էր տուն: Գլխավորապես հույն պատմագիրների մոտ հիշատակվող նման մի շարք վկայություններ հնարավորություն են տվել ակադ. Հ. Մանանդյանին հիմք դնելու Երվանդունիների հայկական դինաստիայի ուսումնասիրմանը: Քսենոփոնից իմանում ենք նաև, որ Օրոնտասը ամուսնացած էր Աքեմենյան Պարսկաստանի թագավոր Արտաքսերքսես II Մենունի (404—358) դստեր հետ, որի Հոռոդունե անունը մեզ է հասել Անտիոքոս I Կոմմագենացու Նեմրոդ-դադում կերտած արձանագրությունների և Պլուտարքոսի միջնորդությամբ: Մասնակի բնույթ ունեցող այս փաստը մի լրացուցիչ ակնարկ է այն խոշոր դերի մասին, որ խաղում էր Հայկական սատրապությունը Աքեմենյանների տերության մեջ: Հետագայում վերոհիշյալ հանգամանքը մեծ նշանակություն ստացավ Երվանդունիների հայկական թագավորության իրավական հիմունքները հաստատելու տեսակետից: Դինաստիայի՝ Աքեմենյանների հետ ունեցած ազգակցությունը, թեկուզև մայրական կողմից, լուրջ փաստարկ էր հօգուտ 330 թ-ին, Աքեմենյանների տերության փլատակների վրա, հայկական անկախ պետության ստեղծման և հաստատման:

Եթե այս եղանակով Օրոնտասի հաջորդների ծագումը կապվում է Աքեմենյանների հետ, ապա լրիվ պարզ չէ իր իսկ Օրոնտասի ծագումը: Հույն աշխարհագիր Ստրաբոնը Երվանդունիների տոհմը սերում է Հիդարնեսից՝ Դարեհ I-ի վեց հոչակավոր զինակիցներից մեկից: Նեմրոդ լեռան արդեն հիշատակված արձանագրության մեջ տոհմի նախահայրը նույն ինքը Դարեհն է համարվում, իսկ Պերգամոնի 362 թ. արձանագրության մեջ Քսենոփոնի հիշատակած Օրոնտասը հայտարարված է բակտրիացի: Անհաշտելի թվացող այս իրարմերժ փաստերին կարելի է ավելացնել նաև Երվանդունիների՝ ճ. մ. թ. VI դարի հայկական թագավորական դինաստիայի հետ ազգակցական կապ հաստատող տեսակետը:

Երվանդունիների Դարեհ I-ից սերած լինելու կարծիքը զգալի չափով բխում է հենց Քսենոփոնի վկայությունից՝ Օրոնտասի՝ Արտաքսերքսեսի փեսա լինելու մասին, որով Օրոնտասի հետնորդները, բայց ոչ ինքը, Արտաքսերքսեսի և իր դստեր միջնորդությամբ իրավամբ ծագած են համարվում Դարեհ I-ից: Ուշադրության արժանի է Ստրաբոնի վկայությունը տոհմի ծագման վերաբերյալ, որը նա մեջ է բերում իր «Աշխարհագրության» մեջ վերջին Երվանդունու կապակցությամբ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այն պայմանավորված է հելլենիստական ժամանակաշրջանի Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում տարածում գտած ընդհանուր ձգտմամբ՝ ամեն կերպ ազգակցական կապ հաստատել Աքեմենյանների կամ նրանց մերձավորների հետ: Սակայն Երվանդունիները Հիդարնեսի հետ ազգակցական շինծու առնչություններ ստեղծելու կարիքը չունեին, քանի որ նրանց ազգակցական իրական կապը բուն Աքեմենյանների հետ ամեն մի կասկածից վեր էր, ինչպես այդ երևում է նախևառաջ Քսենոփոնի հաղորդածից: Ուստի զարմա-



Ապրիլ հանդերձ, որ Ստրաբոնը չի հիշատակում Երվանդունիների շատ ավելի պատվաբեր արեմենյան ծագումը, պետք է հաշվի նստել նրա տոհմաբանական տեղեկության հետ: Այդ տեղեկությունը գուցակցված Հայաստանում սատրապական իշխանության ժառանգական բնույթի հետ, թույլ է տալիս ենթադրելու, որ ի սկզբանե Դարեհ I-ը Հայաստանը հանձնեց որպես սատրապություն Հիդարնեսին, և նրա հետնորդները ժառանգաբար կառավարեցին այն: Հավանական է, որ Հիդարնեսի նույնանուն որդին մի կողմից և Օրոնտասի՝ Նեմրոդ լեռան արձանագրություններում հիշատակվող հայրը՝ Արտասուրան և պապը՝ նույնպես Օրոնտաս, մյուս կողմից, ևս եղել են Հայաստանի սատրապներ, Հիդարնեսի՝ Դարեհի զինակցի և Օրոնտասի՝ Արտաքսերքսես II փեսայի կառավարման տարիների միջև ընկած ժամանակաշրջանում (մոտավորապես VI դարի 20-ական թվականներից մինչև V դարի վերջերը): Մնում է հաշտեցնել սատրապական այդ շարքի տոհմաբանությունը Երվանդի բակտրիական ծագման վերաբերյալ տեղեկության և VI դարի դինաստիայից սերվելու մասին գոյություն ունեցող տեսակետի հետ:

Հիդարնեսի կամ Երվանդունիների նախահայրերից որևէ մեկը բակտրիացի լինելու մասին ոչ մի տեղեկություն չունենք: Ուսումնասիրողներից ոմանք (Ս. Տ. Երենյան), ելնելով մի շարք տեղանունների ընդհանրությունից, Բակտրիա հասկացողության տակ տեսնում են Հայաստանի և Ատրպատականի սահմանամերձ շրջանները, որտեղից ծագած պետք է լինի Հայաստանի VI դարի թագավորական դինաստիան: Նման մեկնաբանման դեպքում Երվանդունիների կապը կամ, ավելի ճիշտ, նույնացումը այդ դինաստիայի հետ դառնում է իրական: Այդպիսի կապի օգտին կարող է խոսել Երվանդ անվան ընդհանրությունը (VI դարի դինաստիայում ունենք Երվանդ Սակավակյաց անունը, իսկ Երվանդունիների դինաստիայում, հատկապես նրա երկրորդ շրջանում, իշխանավորները բոլորը Երվանդ են), թեպետ մյուս կողմից հատկանշական է VI դարի դինաստիայում հանդիպող մյուս՝ Տիգրան անվան իսպառ բացակայությունը Երվանդունիների մեջ: Վերջին հաշվով բացառված չէ նաև, որ Հիդարնեսը խնամիացել էր հայկական թագավորական տան հետ՝ ամուսնանալով նրա ներկայացուցչուհիներից որևէ մեկի հետ, երկրում իր իշխանությանը օրինական տեսք տալու նպատակով: Ամեն դեպքում և հատկապես այս ենթադրությունների համեմատությամբ Քսենոփոնի ստույգ վկայությունը Օրոնտասի և նրա ազգակցական կապերի մասին Աքեմենյանների հետ պահանջում է իր ողջ նշանակությունը:

Ինչ վերաբերում է Օրոնտասի հետագա ճակատագրին, ապա այն առնչվում է Փոքր Ասիայի հետ: IV դարի սկզբներին Օրոնտասը հեռանում է Հայաստանից: Դիողոր Սիկիլիացու տվյալների համաձայն 386—384 թթ. նա Տիրիբազոսի հետ միասին պատերազմ է վարում Կիպրոսի Էվագորաս թագավորի դեմ: Դավադրություն-

ներ նյութած լինելու պատճառով Արտաքսերքսես II-ը նրան հեռացնում է Փոքր Ասիայի արևմտյան մասը, որտեղ կարգում է Մյուսիա ենթաշրջանի հյուպարքոս: Այստեղ Օրոնտասը կանգնում է սատրապական մեծագույն ապստամբության գլուխը, որին մասնակցում էին Փոքր Ասիայի համարյա բոլոր կառավարիչները (362—361 թթ.): Սակայն վերջին բուպեին Օրոնտասը դավաճանում է ապստամբներին, հույս ունենալով, որ այդ բանի համար կվարձատրվի առափնյա սատրապություններով: Դատելով Տրոգոս Պոմպեոսի վկայությունից, թագավորը այդ թվականներին նրան վերադարձնում է միայն Հայկական սատրապությունը: Դժգոհ Օրոնտասը փորձում է ուժով ձեռք բերել այն, ինչ որ բարի կամքով չէր տրվել իրեն: Նա շարունակում է գործել արևմտյան Փոքր Ասիայում, ժամանակավորապես գրավելով Պերգամոնը, որի մասին է վկայում նրա այնտեղ թողած արձանագրությունը: Ապա տեղափոխվելով Փոքր Ասիայի արևելյան մասերը, նա հարձակում է գործում Սիրիայում, նախապես համաձայնության գալով Եգիպտոսի հետ: Հնարավոր է, որ հենվելով նորից ձեռք բերած Հայկական սատրապության վրա է, որ Օրոնտասը փորձեց իրագործել իր ծրագրերը կայսրության այս մասում: Թագաժառանգ Օխսին սակայն հաջողվում է ճնշել ապստամբությունը և 357 թ.-ին գահի վրա բարձրանալ Արտաքսերքսես III անվան տակ: Օրոնտասը պարտված էր, բայց չէր հրաժարվել իր ծրագրերից: Նա նորից է ապստամբվում առափնյա սատրապությունները ձեռք բերելու նույն մտադրությամբ: 354 թ.-ին Օրոնտասը հիշատակվում է Դեմոսթենեսի մի ճառում, որպես պարսից թագավորի ամենավտանգավոր հակառակորդ: Օրոնտասի գործունեության մասին վերջին տվյալները վերաբերում են 352—349 թթ.-ին և հանդիպում են Աթենքում գտնված արձանագրություններում: 349 թ. դեկրետում խոսվում է Օրոնտասի «իշխանության» մասին, որի տակ կարելի է հասկանալ վերջապես ձեռք բերված առափնյա սատրապությունները: Բացառված չէ, որ այս նոր վիճակի կապակցությամբ, որը ժամանակագրական տեսակետից համընկնում է Արտաքսերքսես III Օխոսի իշխանության տարիների հետ (357—336), Հայկական սատրապությունը հանձնված լինի Կողոմանոսին, ապագա Դարեհ III-ին, որը այն կառավարում է մինչև 336 թ., իր գահակալման տարին, երբ Հայաստանի սատրապի պաշտոնում նրան փոխարինում է Օրոնտասի նույնանուն որդին կամ թոռը:

Ինչպես տեսանք, «Անաբասիտում» հիշատակվում է ևս մեկ բարձրատիճան պաշտոնյա, Տիրիբազոսը, «Արևմտյան Հայաստան» կոչված ենթաշրջանի հյուպարքոսը, որը Օրոնտասի ստորադասն էր: Այդպիսին լինելով հանդերձ, նա Արտաքսերքսես թագավորի անձնական բարեկամն էր և ուներ պարսից թագավորին ձի նստեցնելու հատուկ արտոնությունը: Այս հանգամանքը ավելորդ անգամ վկայում

է Հայկական սատրապության խոշոր նշանակության օգտին՝ Աքեմենյանների տե-  
րության համակարգում:

\* \* \*

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայկական լեռնաշխարհի էթնիկական  
պատկերը, որը մեզ է հասել Քսենոփոնի միջնորդությամբ: V դարի վերջին Հայ-  
կական լեռնաշխարհի մեծ մասը, նրա միջնաշխարհը բնակեցված էր հիմնակա-  
նում մեկ ժողովրդով՝ հայերով: Հույների նահանջի ճանապարհի նկարագրությու-  
նից երևում է, որ Արևելյան Տիգրիսից մինչև Արաքսի վերին հոսանքը և ավելի  
հյուսիս հույները անցան հայկական գյուղերով: Հայերը, որոնք արդեն VI դարում  
ապրում էին դասակարգային հասարակության և պետականության պայմաններում,  
ժողովուրդ էին հանդիսանում: Հայերից բացի Քսենոփոնը հիշատակում է Հայկա-  
կան լեռնաշխարհում մի շարք էթնիկական խմբեր. խալդայներ, խալիբներ, կար-  
դոխներ, մարդեր, տաոխներ, փասիաններ, հեսպերիտներ:

«Անաբասիս» և «Քսենոփոնի մյուս աշխատության» «Կյուրոպեդիայի» համապա-  
տասխան տեղեկությունների համադրումից խալդայների ու խալիբների անվան տակ  
պետք է հասկանալ միևնույն ցեղախումբը, որը բնակվում էր Հայկական լեռնաշ-  
խարհի հյուսիս-արևմտյան մասերում, Բարձր Հայքի և Փոքր Հայքի լեռներում: Այդ  
երկու ցեղանունների նույնությունը մատնանշել է նաև հույն աշխարհագիր Ստրա-  
բոնը: Այդ ցեղի մասին վաղագույն տեղեկություններ կարելի է գտնել Ռուսա II-ի  
ուրարտական արձանագրություններում, որոնք VII դարում հիշատակում են Խալիտու  
երկիրը, ինչպես նաև VI դարի հույն պատմագիր Հեկատոսյոս Միլետացու աշխատու-  
թյունից մեզ հասած բեկորներում, որտեղ խալիբ-խալդայները հիշատակվում են  
հայերի հարևանությամբ:

Թեպետ «Անաբասիս» վերջում տեղադրված ամփոփում-հավելվածից երևում  
է, որ խալիբները ինքնուրույն էին, բուն տեքստի մի շարք ակնարկներից բխում  
է, որ Արևմտյան Հայաստանի կառավարիչ Տիրիբազը նրանց աստիճանաբար են-  
թարկում է իր ազդեցությանը: Հարկ է հիշել, որ նրանց հպատակեցումը արեմեն-  
յան տերության կողմից սկսվել էր Կյուրոս Մեծի օրոք: Ստրաբոնի մ. թ. ա. II դա-  
րին վերաբերող տվյալներից կարելի է եզրակացնել, որ խալիբ-խալդայները արդեն  
վաղուց գտնվում էին Փոքր Հայքի տիրապետության տակ: Հավանական է,  
որ IV դարի երկրորդ կեսում, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի օրե-  
րին Արևմտյան Հայաստանի հիմքի վրա կազմավորված Փոքր Հայք քա-  
ղաքական միավորը իրեն էր ենթարկել խալիբ-խալդայներին, որոնց տերիտո-  
րիայի մի մասը հետագայում անցավ Արտաշես I-ի միացյալ պետությանը: Խալիբ-

խալդայները բռնել էին հայ ժողովրդի մեջ լուծվելու ճանապարհը: Այդ մասին է  
վկայում ի դեպ և Պլինիոս Ավագի ուշագրավ տեղեկությունը «արմենո-խալիբների»  
մասին: Խալդայների հետ են կապվում հյուսիս-արևմտյան Հայաստանում մի շարք  
տեղանուններ, այդ թվում Խաղտիք երկրամասը:

Հյուսիսային Հայաստանում ապրում էին նաև փասիանները, որոնք ծառայում  
էին Տիրիբազոսի բանակում որպես վարձկաններ, և որոնց երկրով հույները ամե-  
նայն հավանականությամբ անցան: Ինչպես տեսանք, Արաքսի վերին հոսանքում  
տեղադրված հին հայկական Բասեն գավառի անունը փասիանների ցեղանունից է  
սերվում: Փասիաններից ոչ հեռու էր գտնվում հեսպերիտների երկիրը, որի անունը  
պահպանվել է հին հայկական Սպեր գավառի մեջ: Փասիանների և հեսպերիտ-  
ների երկրները «Արևմտյան Հայաստանի» մասերն էին կազմում, քանի որ Տիրի-  
բազոսը այդ ցեղերի կառավարիչն էր համարվում:

Հյուսիսային կարևորագույն ցեղերից էին տաոխները, որոնք նույնպես ծառա-  
յում էին Տիրիբազոսի բանակում և որոնց երկրով անցան հույները: Տաոխների  
երկրի մասին հնագույն տվյալների կարելի է հանդիպել ասորեստանյան և ուրար-  
տական արձանագրություններում՝ Դայանի կամ Դայանեի և Դիաուխի կամ Դիաու-  
եիի անվան տակ: Քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման բավականին  
բարձր մակարդակի հասնելուց հետո տաոխների այս միավորումը աստիճանաբար  
սկսում է հետադիմել: Հավանական է, որ V դարի վերջում, խալիբ-խալդայների  
նմանությամբ, տաոխները բռնել էին «Արևմտյան Հայաստանին» ենթարկվելու ու-  
ղին: IV դարի երկրորդ կեսում կազմավորված Երվանդունիների հայկական թագա-  
վորությունը պետք է որ արդեն իր կազմի մեջ ունենար տաոխների երկիրը՝ հայ-  
կական Տայքը:

Քսենոփոնը հիշում է նաև մարդերին՝ Հայաստանի սատրապ Օրոնտասի  
վարձկաններին: Սրանք իրենց անունը թողել են Հայաստանի մի շարք գավառների  
անունների մեջ, որոնցից մեկը՝ Մարդաստանը կամ Մարդուցայքը գտնվում է Մա-  
կոի մերձակայքում, իսկ մյուսը՝ Մադադին, Կարինից հարավ:

Մեզ է հասել նաև կարդոխների՝ Հարավային Հայաստանի լեռներում ապրող  
ցեղախմբի նկարագրությունը հետաքրքիր մանրամասնություններով: Կարդոխների  
անունը պահպանվել է Կորդուք գավառի անվան մեջ:

Հիշատակված ցեղերի մեծ մասը գտնվում էր հասարակության զարգացման  
ցածր մակարդակի վրա, ապրում նախնադարյան համայնական հասարակության  
համար բնորոշ տրոհվածության պայմաններում և աստիճանաբար ենթարկվեց դա-  
սակարգային հասարակության և պետականության փուլը թևակոխած հայերին ու  
ծուլվեց նրանց:

\* \* \*

Արեւմեայան ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսությանը վերաբերող տեղեկությունները հանդիպում են հիմնականում Քսենոփոնի աշխատություններում: Հատկապես «Անաբասիտում» գտնում ենք հայերի զբաղմունքի և արտադրության մասին բազմաթիվ մանրամասնություններ:

Հայերի հիմնական զբաղմունքը եղել է գյուղատնտեսությունը: Իրենց ճանապարհին՝ Կենտրիոն գետի և Տիգրիսի ակունքների միջև, Տելեբոսս գետի ափերին, Տելեբոսսից դեպի Արածանիի ակունքները տանող ճանապարհին, Արածանիի վերին հոսանքը անցնելուց հետո հույները հանդիպել են բազմաթիվ գյուղերի կամ գյուղախմբերի:

Քսենոփոնը նշում է Հայաստանի բարեկեցիկ վիճակը, իսկ գյուղերը նկարագրելիս ամեն անգամ ընդգծում նրանց պաշարներով լի ու հարուստ լինելու հանգամանքը: Հայերի տներում Քսենոփոնի հանդիպած սննդամթերքից և պաշարներից կարելի է որոշ հետևություններ անել Հայաստանի գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության մասին: Պատմիչը հիշատակում է ցորենից և գարուց պատրաստված հաց, ցորեն և գարի առանձին, չորացրած խոտ՝ անասունների համար, գարուց պատրաստված գինի (այսինքն՝ գարեջուր), հին անուշահոտ հորած գինիներ, չամիչ, ընդդեմներ, քունջութի, դառը նշի և բլեկնի ձեթ: Մթերքների այս թվարկումը ցույց է տալիս հին Հայաստանի երկրագործության զարգացման համեմատաբար բարձր աստիճանը և նրա բազմաճյուղակիությունը: Հացահատիկային բույսերի մշակման կողքին գոյություն ունեւ խաղողագործությունը, որի զարգացման բարձր աստիճանի մասին են վկայում հատուկ մշակման միջոցով պատրաստված հին գինիները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի գինու մի մասը արտահանվում էր: Խմիչքի, ընդդեմի և տեխնիկական կուլտուրաների գոյությունը ևս ապացույց է վերելք արող երկրագործության, քանի որ այդպիսի կուլտուրաների մշակումը ոչ միայն աշխատատար էր, այլև պահանջում էր դարավոր փորձ և մեծ հմտություն, աչքի ընկնելով իր բացառիկ արդյունավետությամբ: Տեխնիկական կուլտուրաների առկայությունը մյուս կողմից վկայում է նշված ժամանակաշրջանում Հայաստանում ոռոգման սխեմայի գոյության մասին: Ընդհանրապես պետք է նշել, որ 5—4-րդ դարերի սահմանագլխին Հայաստանի երկրագործության, նրա զարգացման աստիճանի, ինչպես նաև մշակվող կուլտուրաների բազմազանության մասին տեղեկությունները փոխարձագանքում են ուրարտական երկրագործության մասին մեզ հայտնի թե՛ գրավոր, թե՛ հնագիտական հարուստ տվյալների հետ:

Ինչ վերաբերում է անասնապահությանը, ապա հավանաբար խաղայների հպատակեցումից հետո էլ ավելի լավ պայմաններ ստեղծվեցին նրա զարգացման

համար, քանի որ հայերը տիրեցին արտավայրերով հարուստ նոր տերիտորիաների: Հերոդոտը հայերին անվանում է «անասուններով հարուստ ժողովուրդ», իսկ Քսենոփոնը հակառակ հանվանե թվարկում է իր տեսածը հայերի տներում՝ կով, այծ, ոչխար, ձի, տնային թռչուններ, պնուհետև՝ ոչխարի, այծի և խոզի միս, խոզի ճարպ: Ինչպես ուրարտացիների օրոք, Հայաստանի անասնապահությունը ներկայացված էր խոշոր և մանր եղջերավոր անասուններով: Հատկապես կարևոր է Քսենոփոնի վկայությունը բուծվող ձիերի մասին, որոնք թեպետ ավելի փոքր էին քան պարսկականները, բայց նրանցից ավելի կայտատ էին:

\* \* \*

Բնական է, որ հին Հայաստանի հասարակարգն ուսումնասիրողները իրենց ուշադրությունը սևեռում են այն կարևոր տվյալների վրա, որ թողել է Քսենոփոնը գյուղական կենցաղի և կացութաձևի վերաբերյալ:

Այդ վկայությունների առաջին լուրջ ուսումնասիրողը եղել է Նիկողայոս Ադոնցը: Նա հանգել է այն եզրակացության, որ Քսենոփոնի նկարագրած Հայաստանի գյուղերը տոհմական բնույթ են ունեցել, իսկ հիշատակված գյուղապետերը (կոմարիները) տոհմի առաջնորդներ, տոհմապետներ են եղել:

Հ. Մանանդյանը այս հարցում հիմնականում համերաշխ էր Ն. Ադոնցի՝ նշելով արեւմեայան ժամանակաշրջանի հայկական գյուղերի տոհմական կազմակերպությունը:

Սովետահայ պատմագիտությունը, սակայն, իր զարգացման ընթացքում նոր եզրակացությունների է հանգել այս հարցում: Ինչպես ցույց է տվել Ս. Տրեմյանը, Քսենոփոնի նկարագրած գյուղերը ոչ թե տոհմային կապերի վրա հիմնված միավորներ էին, այլ տերիտորիալ և տնտեսական հատկանիշներով միավորված գյուղական համայնքներ: Քսենոփոնի նկարագրությունից իսկապես երևում է, որ մեծամասնության վրա հիմնված ընտանիքները ունեին իրենց տները, անասունները, գյուղատնտեսական մթերքները: Ուրիշ խոսքով, առանձին ընտանիքներ արտադրության միջոցների, սպասման առարկաների նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք ունեին: Նման ընտանիքների ամբողջությունը հենց կազմում էր գյուղական այն համայնքը, որը միավորված էր նախ և առաջ տնտեսական և սպա միայն, այն էլ մասնակիորեն, ազգակցական կապերով:

Գյուղատնտեսության ուժեղ մասնագիտացումը ուշագրավ երևույթ է Քսենոփոնի ժամանակաշրջանի Հայաստանի համար: Խաղողագործության, տեխնիկական կուլտուրաների, բանջարաբուծության, ինչպես նաև ընդհանրապես երկրագործական արտադրանքի վերամշակման բարձր մակարդակը, որի մասին վկայում է Քսենոփոնը, թույլ է տալիս ենթադրելու նաև հողի անհատական տիրակալության և

հողօգտագործման առկայության մասին, իսկ տներում ամեն տեսակի մթերքների գոյությունը՝ անհատական և մասնավոր յուրացման մասին: Նման վիճակը քիչ է համատեղելի տոհմական համայնքի հետ:

Հայկական գյուղերի վճարած տարեկան, որոշակիորեն կարգավորված հարկի մասին եղած վկայությունները նույնպես չեն ներդաշնակում հայկական համայնքների մասին Ն. Ադոնցի ունեցած պատկերացումների հետ: Վերջապես, Քսենոփոնի ուշագրավ տեղեկությունը գյուղապետի մասին, որն իր ազգակիցներին հանդիպում է իր տնօրինության տակ գտնվող գյուղից դուրս՝ այլ գյուղերում, բացահայտում է գյուղական տերիտորիալ համայնքի հիմնական հատկանիշներից մեկը՝ տոհմի տարատեղ բնակեցումը:

Այսուհանդերձ, ինչպես երևում է նույնիսկ շատ ավելի ուշ ժամանակաշրջանի նյութերից, գյուղական համայնքի մեջ դեռ շատ ուժեղ էին նախնադարյան համայնքի վերապրուկները:

Քսենոփոնի «Անաբասիս» տեղեկությունները, որքան էլ դրանք կարևոր լինեն, չեն տալիս ժամանակակից հայ հասարակության ամբողջական պատկերը, քանի որ վերաբերում են գրեթե բացառապես միայն գյուղական համայնքներին:

Քսենոփոնը հիշատակում է նաև երկու գյուղ, մեջը՝ ապարանք-ամրոց, սատրապի համար, պատնեշով ամրացված մի այլ գյուղ, բայց չի խոսում և ոչ մի բերդի, ավանի, տաճարային կենտրոնի կամ քաղաքի մասին, ինչպիսիք կային Հայաստանում այդ ժամանակ և թեկուզ մասամբ վկայված են գրավոր աղբյուրներով ու հնագիտական պեղումների արդյունքներով: Թերևս հույները իրենց ճանապարհին չեն հանդիպել դրանց կամ գուցե գիտակցաբար են խուսափել դրանցից:

Տնտեսության հիմնական ձևերի՝ երկրագործության ու անասնապահության մասին Քսենոփոնի ջանքերով մեզ հասած տվյալները խիստ կարևոր են նաև VI—IV դարերի հին հայկական հասարակության զարգացման մակարդակը որոշելու տեսակետից: Այդ տվյալներից երևում է, որ երկրագործության տեսակարար կշիռը երկրի տնտեսության մեջ ավելի նշանակալից էր, քան անասնապահությանը, համեմատաբար, որ մեծ նշանակություն ուներ պետության ձևավորման ընթացքի համար: Երկրագործության ակնհայտ վերելքը, որ Քսենոփոնը նշում է հայկական միջավայրում, զգալի չափով պայմանավորեց հայկական պետության կազմավորման պրոցեսը:

• • •

Քսենոփոնի «Անաբասիս» երկից կարելի է որոշ տեղեկություններ քաղել նաև արքեմենյան Հայաստանի սատրապային վարչակարգի մասին: Քսենոփոնը հիշա-

տակում է գյուղերում կանգնած ապարանք-ամրոցներ, որոնք պատկանել են սատրապին կամ նրա ենթակային և ծառայում էին որպես սատրապության նստավայր: Հայկական ընդհանուր սատրապության գլխավոր կենտրոնը սակայն շարունակում էր մնալ հավանաբար Վանը: Վանի ժայռի վրա պահպանվել է Աքեմենյան Քսերքսես I (486—465) թագավորի սեպագիր արձանագրությունը, որը հաղորդում է թագավորի շինարարական աշխատանքների մասին:

Աքեմենյան կայսրության մյուս սատրապությունների նմանությամբ Հայաստանում կային սատրապական տնտեսություններ և տիրույթներ: Հավանական է, որ վերոհիշյալ ապարանք-ամրոցների շուրջը գտնվող գյուղերը իրենց հողերով հանդերձ, Հայաստանի սատրապ Երվանդի կամ հյուպարքոս Տիրիբազոսի սեփականությունն էին կազմում: Նման տիրույթները կառավարվում էին հատուկ պաշտոնյաների, կառավարիչների կողմից, իսկ որպես աշխատող ուժ օգտագործվում էին ստրուկներ կամ աղքատացած համայնականներ:

Որոշ տեղեկությունների կարելի է հանդիպել «Անաբասիսում» սատրապության զինվորական կազմակերպության վերաբերյալ: Սատրապության զորքի հիմքը կազմում էր հայ աշխարհագրը: Քսենոփոնի մյուս աշխատության՝ «Կյուրոպեդիայի» մեջ ասված է, որ VI դարի հայկական թագավորությունը ուներ իր կայուն բանակը, կազմված հետևակից և այրուձից: Հայերը մասնակցել են իրենց զորքով Դարեհի և Քսերքսեսի հունական և մյուս արշավանքներին: Իր զորքով մասնակցել է Կուրաքսայի ճակատամարտին Օրոնտաբը: Քսենոփոնի կարևոր վկայության համաձայն թագավորական զորքը դասավորված էր ըստ էթնիկական սրատկանելության՝ ըստ ժողովուրդների և ցեղերի: Կասկածից վեր է հետևապես, որ այդ ճակատամարտում Հայկական սատրապության զորամասերը հիմնականում հայերից էին կազմված: Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև ավելի ուշ, մ. թ. ա. 331 թ., Ալեքսանդր Մակեդոնացու և Աքեմենյան Դարեհ III միջև կայացած Գավգամելայի ճակատամարտում:

Ինչպես սատրապը, այնպես էլ հյուպարքոսը լայնորեն օգտվում էին վարձկանների ծառայությունից: Սրանք, որպես կանոն, համարվում էին Հայկական լեռնաշխարհի ծայրամասերում ապրող կիսանկախ ցեղերից: Բացառված չէ, որ սատրապական զորքի մեջ կային նաև պարսիկներ, որոնք կամ թիկնապահների դեր էին կատարում և կամ ծառայում երկրի գլխավոր կենտրոնների կայսրոջը: Հայաստանի սատրապական վարչության, նրա կառավարման ապարատը և սատրապական տնտեսությունը բնութագրող տվյալները, սակավաթիվ լինելով հանդերձ, թույլ են տալիս սատրապային կարգերի մեջ տեսնել մի գործոն, որը որոշ չափով, այն էլ հիմնականում սկզբնական շրջանում, կարող էր խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը:

«Անաբասիտում» որոշ տեղեկություն է պահպանվել նաև Հայկական սատրապության վճարած տարեկան հարկի մասին: Որպես հարկ հայերը թագավորին էին ուղարկում նծույզներ, մի հանգամանք, որն իր հաստատումն է գտնում նաև Ստրաբոնի հանրահայտ վկայության մեջ:

\* \* \*

Ի վերջո, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները գյուղական ճարտարապետության, զենքերի և կենցաղային առարկաների մասին: Գյուղական տների թռուցիկ նկարագրությունից երևում է, որ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների տները տարբերվում էին կենտրոնական շրջանների տներից: Հարավային Հայաստանի տները աշտարակավոր էին: Այդ առանձնահատկությունը սահմանամերձ այս շրջանում բացատրվում է, քստ երևույթին, պաշտպանողական նկատառումներով: Քսենոփոնը աշտարակաձև տների է հանդիպել նաև պրնտական լեռներում, մոսիևոյների տերիտորիայում: Նման տների կառուցվածքի ակունքները պետք է որոնել ուրարտական ճարտարապետության մեջ, որին քաջ ծանոթ էին աշտարակաձև կառույցները, այդ թվում, հավանաբար, և աշտարակաձև բնակարանը:


Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային մասերի տները այս տիպի էին: Սրանք, դատելով Քսենոփոնի նկարագրությունից, ստորգետնյա էին, վերևից ջրհորի բերանի նման բացվածքով, որը լայնանում էր ներքևի մասում: Այս բացվածք-մուտքով մարդիկ սանդուղքով իջնում էին սենյակը: Անասունների համար հատուկ մուտք էր փորված: Այս, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի՝ ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի հնագիտորեն ուսումնասիրված տների մեջ ուսումնասիրողները տեսնում են հայկական ժողովրդական տան վաղ օրինակը, որը հանդիսանում է ճարտարապետական ավելի զարգացած ձևի՝ գլխատան նախատիպը:

Ինչպես տեսանք, Հայաստանի միջով անցած Քսենոփոնի գրառումները, դիտողություններն ու տպավորությունները տեղ են գտել ոչ միայն «Անաբասիտում»: Կյուրոս Մեծի, աքեմենյան տերության հիմնադրի վարքում՝ հանրահայտ «Կյուրոպեդիայում», ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Հայաստանի VI դարի պատմության վերաբերյալ: Ժամանակակից պատմագիտությունը ժխտում է «Կյուրոպեդիայի» աղբյուրագիտական արժեքը: Բարոյախոսական ընդգծված բնույթ ունեցող քաղաքական այս վեպի մեջ պարունակված պատմական անճշտությունները արդարացիորեն առաջացրել են ուսումնասիրողների վերապահությունը դեպի այս երկը: Ինչպես պարզվում է, սակայն, վերջին տարիներում կատարած ուսումնասի-

րություններից, վերապահ նման մոտեցումը նվազ չափով է ընդունելի Հայաստանի պատմությանը վերաբերող տվյալները քննության առնելիս: «Կյուրոպեդիայի» համեմատումը այս տեսանկյունից մի շարք աղբյուրների և առաջին հերթին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հետ, երևան բերեց նրա պիտանիությունը հայ ժողովրդի VI դարի պատմության այնպիսի հարցերի ուսումնասիրման համար, ինչպիսիք են. թագավորական դինաստիան, երկրի քաղաքական վիճակը և նրա փոխհարաբերությունները Մարական և ապա Պարսկական աշխարհակալ պետությունների հետ, նրա ներքին կյանքի որոշ կողմեր: Այժմ կասկածից վեր է, որ այս տեղեկությունների մեծ մասը Քսենոփոնը քաղել է Հայկական լեռնաշխարհի միջով անցնելիս, այն տեղեկությունների հետ միասին, որոնք «Անաբասիսի» Հայաստանին վերաբերող բաժնի հիմքն են կազմում, հանդիսանալով հայ ժողովրդի պատմության աղբյուրագիտական գանձարանը Քսենոփոնի ներմուծած անուրանալի ավանդը:

ԳԵՎՈՐԳ ՏԻՐԱՅՅԱՆ






**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՓՈՔԻ ԱՄԻԱՆ  
ԸՍՏ ԲՍԵՆՓՈՆԻ «ԱՆԱՐԱՍԻ»-Ի**

Բարձրագույն հեղինակ՝ Ա.Տ. ԵՐԵՄՅԱՆ

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

- կրթության կրթական կենտրոնների արդյավանների արդյավաններ 300-400 քա
- ▼ Արեւմտյան Եւրոպայի Արեւմտափորի (486-465) հին պարսկերեն արձանագրությունների վանի միջնաբերդը
- Արեւմտյան պետության ստորապետությունների սահմաններ (մոտավոր) [Ուլարովու] Բաժնետիրական «Անարասի»-ում չիրազատակազմ տեղանուններ [ԱՆԱՐԱՍԻՆԵՐ] և ցեղանուններ
- × կոնստանդուպոլիսի ճակատամարտի
- == Արեւմտյան պետության արքունի ճակատամարտի



ԾԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16

Ներկա թարգմանությունը կատարել ենք՝ Xenophontis Expositio Cyri, recensuit Guillemus Gemoll, Editio minor. Bibliotheca Teubneriana, Lipsiae, 1910 թ. հրատարակությունից: Միաժամանակ ձեռքի տակ ունեցել ենք «Loeb Classical Library» մատենաշարով հրատարակված Քսենոփոնի բնագիրը:

Թարգմանությունը ծանոթագրելիս օգտագործել ենք նույնպես՝ Ксенофонт, Анабасис, перевод, статья и примечания М. И. Максимовой, М.—Л., 1951 թ. հրատարակությունը, ինչպես նաև Աթենքում հրատարակված Հունական Մեծ Հանրագիտարանը:

Սույն թարգմանության մեջ անկյունավոր փակագծերով [...] ներկայացված են այն հատվածները, որոնք համարվում են Քսենոփոնի բնագրի վրա կատարված հետազոտված ընդմիջարկություններ: Կլոր փակագծերի (....) մեջ առնված բառերը ընթերցվածը պարզ դարձնելու նպատակով մեր կատարած հավելումներն են:

#### Գ Ի Ր Զ Ա Ռ Ա Զ Ի Ն

1. Աքեմենյան Դարեհ 2-րդ Նոթոսը (հունարեն նշանակում է՝ «անհարազատ») իշխել է Պարսկաստանում մ. թ. ա. 423—404 թթ.\*: Պարսաստիսը Դարեհ 2-րդի թույն էր և կիճը: Աչքի էր ընկնում փառասիրությանը և դաժանությանը: Իր ամուսնու, ինչպես և հետագայում իր որդու թագավորության ժամանակ նա մեծ ազդեցություն ուներ պարսկական արքունիքում:

2. Աքեմենյան թագավորներից Արտաքսերքսես 2-րդ Մենոնը (հունարեն նշանակում է՝ «հիշողության տեր») հաջորդել է Դարեհ 2-րդին և թագավորել 404—358 թթ.: Նրա դեմ ապստամբեց կրտսեր եղբայրը՝ Կյուրոսը, որը 401 թ. ջախջախվեց Կունաքսայի մոտ: Այս Արտաքսերքսեսին է Պլուտարքոսը նվիրել իր «Զուգահեռ կենսագրություններից» (հայկական թարգմանական ավանդության մեջ՝ «Զուգակշիռք») մեկը:

3. Այս Կյուրոսին Աքեմենյան հարստության հիմնադիր Կյուրոս Մեծի հետ չչփոթելու համար կոչել են Կյուրոս Կրտսեր:

4. Դարեհն այդ ժամանակ գտնվում էր Մեդիայում, ուր գնացել էր 404 թ. կադուսյան ցեղերի ապստամբությունը ճնշելու համար:

5. Սատրապ (σατράπης) հին պրակ. xšādrāpā բառի հունականացրած ձևն է և նշանակում է՝ «տեղապահ, աշխարհապահ»: Աքեմենյան տերության վարչական բաժանումները կոչվում էին սատրապություններ: Սատրապությունների կառավարիչ սատրապներին նշանա-

\* Ծանոթագրություններում նշված տարեթվերը պետք է հասկանալ մ. թ. ա.:

կում էր ինքը՝ արքայից արքան, որպես կանոն, պարսկական ավագանու բարձր ներկայացուցիչների միջից, իր մերձավորներին ու ազգակիցներին: Իրեն վստահված սատրապության սահմաններից ներս սատրապը մի տեսակ փոքր արքա էր: Արքայից արքայի ձեռնարկված ռազմական արշավանքների ժամանակ սատրապը գլխավորում էր իր սատրապությունից հավաքագրած զորքը: Սատրապը պարտավոր էր նաև ապահովելու տուրքերի և հարկերի գանձումը իր տիրույթներից հօգուտ արքայի, ինչպես նաև վարելու դատական գործերը սատրապության ներսում: Գերագույն այս պաշտոնյան իրավունք ուներ իր սատրապության ներքին շրջանառության կարիքների համար արծաթ և պղինձ դրամ հատելու, մինչդեռ ամբողջ տերության մեջ ոսկի դրամ հատելու իրավունքը արքայից արքան վերապահում էր բացառապես իրեն:

6. Կաստղոս դաշտը գտնվում էր Կյուդիայի միջով հոսող Հերմոս գետի հովտում: Այս դաշտը արևմտյան Փոքր Ասիայում գտնվող պարսկական ռազմական բոլոր ուժերի տարեկան ստուգատեսի հավաքատեղին էր:

7. Տիսասփեռնեղը Հյուդառնեսի որդին էր, Պարսկաստանի խոշոր պետական գործիչներից մեկը 5-րդ դարի վերջին—4-րդ դարի սկզբին: Հավանաբար արեմակցական կապ է ունեցել Հայաստանի Երվանդունիների հետ, քանի որ, Ստրաբոնի վկայությամբ, հայոց Երվանդ թագավորը ևս (III դարի վերջերը) համարվում էր Հյուդառնեսի շատսփոլը (Strabo, XI, 14, 15):

8. Հուպիտները կազմում էին հելլենների ծանրազեն հետևակը, հունական զորքի հարվածային ուժը: Տվյալ դեպքում, անկասկած, նրանք պետք է Կյուրոսին ծառայեին իբրև թիկնապահներ:

9. Պլուտարքոսը այլ ձևով է պատմում այս դեպքի մասին: Ըստ նրա, Կյուրոսը մահափորձ է նյութում Արտաքսերքսեսի դեմ, վերջինիս թագադրման արարողության ժամանակ, բայց մատնվում իր բուրմ-դաստիարակի և Տիսասփեռնեսի ձեռքով: Սակայն մայրը միջնորդելով՝ փրկում է Կյուրոսին մահապատժից (Plut., Artaxerxes, 2, 3):

10. «Բարբարոս» անելով հելլեն հեղինակները նկատի են ունեցել բոլոր ոչ-հելլեններին: Բարբարոս այդ ժամանակ նշանակում էր ընդհանրապես «օտարերկրացի»: Հսեմոփոնի այս և հետագա հատվածներում «բարբարոսներ» արտահայտության տակ պիտի հասկանալ ընդհանրապես պարսիկներին:

11. Առանց երկիրը կամ անունը նշելու արքային հիշատակելիս, հելլենները միշտ էլ նկատի են ունեցել պարսից արքային, որն իր հզորությամբ անհամեմատ գերազանցում էր Արևելքի բոլոր իշխանավորներին: Նրա այդ հզորությունը իր արտահայտությունն է գտել նրան տրված «արքայից արքա» պարսկական տիտղոսի մեջ: Հելլենները նրան հաճախ անվանում էին «մեծ արքա»:

12. Փոքր Ասիայի արևմտյան ծովափի հունիական քաղաքները, որոնք հունական պոլիսներ էին, այդ ժամանակ գտնվում էին Պարսկաստանի գերիշխանության տակ և պարտավոր էին հարկ վճարել սրբսից արքայից արքային և պատերազմի դեպքում ցույց տալ նրան ռազմական օգնություն: Արքան համապատասխան սատրապի, ինչպես նաև իր նշանակած տիրանների միջոցով վերահսկում էր այդ քաղաքների ներքին և արտաքին քաղաքականության հիմնական գծերին, մնացյալ հարցերում թողնելով նրանց ինքնավար:

13. Աքյուդոս—քաղաք Մյուսիայի փոքրասիական ծովափին, Հելլեսպոնտոսի ամենամեծ հատվածում: Այս քաղաքը հիշատակվում է դեռևս Հուներոսի Իլիականում (II, 836)։ Աքյու-

դոսը հետագայում գաղութացվեց միլետացիների կողմից: Այստեղ էր, որ Հսեմոսեսը իր բազմաբնույթ բանակի զորատեսը կազմակերպեց 480 թ., նախքան Աթենք արշավելը:

14. Կլեարքոսը պելոպոնեսյան պատերազմի ժամանակ Սպարտայի աչքի ընկնող զորահրամանատարներից էր, իր ժամանակի արկածախնդիր ռազմական առաջնորդի տիպական ներկայացուցիչը, որը ռազմական գործունեությունը միջոց էր համարում իշխանության հասնելու համար:

15. Կահեկան (բնագրում՝ *καρχηδόνος* նշանակում է՝ դարեհական) — պարսկական ոսկեդրամ, մոտ 5,40 դոլար արժեքով, որի գնողունակությունը, սակայն, եղել է ավելի բարձր: Այն կշռում էր 8,4 գրամ: 3000 դահեկան=1 տաղանդ=մոտ 28 կգ.:

16. Պիսիդիա—լեռնային երկիր Փոքր Ասիայի հարավային մասում, Լիկիայի և Կիլիկիայի միջև: Պիսիդիացիները, իրենց հարևան լիկոնացիների, իսավրիացիների և պամփիլիացիների հման ապրում էին Տավրոսում գտնվող բնակավայրերում ու քաղաքներում: Մինչև 5-րդ դարի կեսերը նրանք պարսկական տիրապետության տակ էին, իսկ հետագայում, օգտվելով Պարսկաստանում կենտրոնական իշխանության թուլացումից, անկախացան և սկսեցին արշավել պարսիկներին ենթակա հարևան մարզերը: Պարսիկներին այնուհետև հնարավոր չեղավ նրանց լրիվ հնազանդեցնել:

17. Սարդես—ամրացված քաղաք արևմտյան Փոքր Ասիայում, որը հանդիսանում էր պարսկական սատրապի նստավայրը:

18. Բնագրում՝ *γυπαρίσαι* = մերկեր: Այսպես էր կոչվում թեթևակն հետևակը, որը չունեց պաշտպանողական սպառնազնություն: «Մերկ» բառը նույնպիսի նշանակությամբ գործածել է նաև Մովսես Խորենացին: Խոսելով Տիգրան Երվանդյանի գործունեության մասին, պատմահայրը ի միջի այլոց գրում է. «Հետևամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերելալք, և պարսատրոքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտատրոքն ի սուսեր և ի տեզ նիզակի վառելալք մերկքն վահանօք և զգեստոք երկաթօք պարածածկելալք» (Մ. Խորենացի, Ա, ԻԿ):

19. Պելոսատները հունական բանակում զորքի այն տեսակն էր, որը միջանկյալ տեղ էր գրավում հուպիտների և մերկերի միջև: Նրանց տարբերությունը մերկերից այն էր, որ նրանք կրում էին թեթև կլոր վահան, որը հունարեն կոչվում էր *πέλιτρον* — պելտե (այստեղից էլ նրանց անունը՝ պելտաստներ):

20. Բնագրում՝ *στειλάροι* — ստաթոս: Կայանը բանակելու վայր էր: Այդպիսի կայանները տեղաբաշխված էին իրարից մոտավորապես մեկ օրվա ճանապարհի հեռավորության վրա:

21. Փարսախը (բնագրում *παρσαχί*) երկարության չափ էր, որ հավասար էր 30 ստադիոնի՝ ասպարեզի (մոտ 5,5 կմ.):

22. Պեթրոն—երկարության չափ, հավասար մոտավորապես 30 մետրի:

23. Մեմոն թեսալացու մասին հիշատակություն կա նաև Պլատոնի մոտ: Ըստ երևույթին Հսեմոփոնը նրա նկատմամբ աչտուտ է եղել: Մեմոնը Կլեարքոսի պառլամեն էր և ձգտում էր Կյուրոսի հելլեն վարձկանների մեջ առաջին գորավարը դառնալ: Հսեմոփոնը համարում է նրան դավաճան, որը պատասխանատու է եղել չորս հրամանատարների, այդ թվում և Հսեմոփոնի մտերիմ ընկեր Պրոքսենոսի մահվան համար, ուստի և հեղինակը Մեմոնին բնութագրելիս խոսացրել է գույները: Համեմայն դեպս, Պլատոնի մոտ սալ կերպ ներկայացված լինելով հանդերձ, Մեմոնը հին աշխարհում համարվել է դավաճան:

24. Դոլոպները ցեղը բնակվում էր Եսիստոսում: Էնիանները բնակվում էին հարավային Թեսալիայում: Օլիմոս քաղաքը գտնվում էր Հաղկիդիկե թերակղզում:

25. Հույները պարսից արքայից արքային հաճախ կոչել են մեծ արքա: (Տե՛ս ծան. 11):

26. Այնպիսիությունը սատիր Մարսիապին վերաբերող առասպելի մասին է, որի համաձայն Մարսիաը այնքան է մեծամտանուն, որ երաժշտական մրցության մեջ է մտնում մինչև իսկ Ապոլլոնի հետ: Ապոլլոնը հաղթելով Մարսիապին, չարաչար պատժում է նրան, մորթազերծ անելով:

27. Բերքետե—պարսից արքայից արքա (486—465 թթ.): Այս հատվածում նկատի է առնված Բերքետեի պարտությունը Հունաստանում 480 թ.:

28. Լիկյան տոները կազմակերպվում էին Ջևսի պատվին:

29. Հելլադայում մարզական մրցման մասնակիցներն իրենց մարմինը օծում էին յուղով, որը մրցումից հետո մաքրում էին հատուկ քերիչներով:

30. «Կերամոն ագորա» հունարեն նշանակում է խեցեղենի շուկա:

31. Սյունենեսիսը միայն ձևականորեն էր թագավոր: Նա փաստորեն արքայից արքայի հպատակներից էր: Այդ իսկ պատճառով նա ձգտում էր լավ հարաբերություններ պահպանել և՛ Կյուրոսի, և՛ Արտաքսերքսեսի հետ:

32. Միդասը Փոյոզիայի կիսաառասպելական թագավորն էր: Սատիրոսը հունական դիցաբանության երկրորդական աստվածներից էր, Դիոնիսոսի մշտական ուղեկիցը, որը մեծ թուլություն ուներ գինու նկատմամբ: Սատիրոսի մասին այս գրույցը հանգամանորեն ձիշատակում է նաև Հերոդոտոսը (VIII, 138): Զրույցի շարունակության մեջ պատմվում է, թե Միդասը Սատիրոսի հանդեպ ցուցաբերած իր ազնիվ վերաբերմունքի համար վարձատրվեց Դիոնիսոսից այն բանով, որ պետք է կատարվեր նրա որևէ ցանկությունը: Միդասը ցանկացավ, որ այն ամենին, ինչ ինքը ձեռք տար, ոսկի դառնար: Նրա այս ցանկությունը կատարվեց և դրանով իսկ նա քաղցած մահացավ:

33. Զոկատը (բնագրում՝ *Ζοκ*) 60 հեծյալից բաղկացած զորախումբ էր:

33ա. Ծածկած սայլակառք—բնագրում՝ *ζυγία*

34. Խիտոն—մի տեսակ վերնաշապիկ, ստանց թևերի: Կենմիս—մետաղա գլան, որը կովի ժամանակ ռազմիկի ծունկն ու սրունքը պահպանում էր հարվածներից:

35. Հունական զորքերին մթերքով օրապահիկ չէր տրվում: Զինվորներն իրենց օրական պարենը գնում էին զորքին ուղեկցող ստեղծարարներից. եթե զորքը գնում էր ոչ թշնամական երկրի միջով: Թշնամու երկրում զորքը ապրում էր կողպուտի հաշվին: Անապատներն անցնելիս զորքն իր հետ տանում էր մթերքը: Զորահրամանատարի կարևոր հոգսերից մեկն էլ բանակի իջևանած վայրին մոտիկ մթերքի շուկայի սակայության հարցն էր:

35ա. Իկոնիոն—այժմ՝ Կոնիա, քաղաք կենտրոնական Թուրքիայում:

36. Կյուրոսի այս քայից երևում է, որ Լիկանոսն չէր մտնում նրա գերիշխանության տակ գտնվող ասորապության մեջ:

37. Արքունի ծիրանակիր (*φουλακτορ βασιλευς*): Այս տերմինի նշանակությունը վերջնականապես չի պարզված: Հնարավոր է անել չորս ենթադրություն. 1) Այդպես էին կոչվում բարձրաստիճան այն պարսիկները, որոնք իրավունք ունեին ծիրանի զգեստ հագնելու: 2) Այդ տիտղոսը կրում էին պարսկական զորքի դրոշակակիրները, քանի որ պարսկական դրոշները ծիրանագույն էին: 3) Այդ տիտղոսը կրում էր արքունի ներկատների կառավարիչը: 4) Այդպես կարող էր կոչվել արքայի հանդերձապահը, «զգեցուցանողը», ինչպես կասեր Խորենացին (I, Է):

38. Տրիերա—հունական ռազմանավ, երեք շարքի վրա տեղավորված թիակներով:

39. Սոլի—ծովափնյա քաղաք Կիլիկիայում, որը հետագայում նվաճվեց հայոց Տրպան 2-րդ թագավորի կողմից և որի բնակիչները բռնի տեղափոխվեցին Հայաստան: Իսաու

առափնյա քաղաք Կիլիկիայում, Ասորիքի սահմանին մոտ: Պատմության մեջ հայտնի է այն բանով, որ այստեղ 333 թ. Ալեքսանդր Մակեդոնացին արքայից արքայի բազմահազար զորքը գլխովին ջախջախեց:

40. Լոքոս—զորական ստորաբաժանում մոտ 100 հոգուց՝ վաշտ:

41. Ակինակե (*ακινάκης*)—կարճ թուր, որը տղամարդիկ դաշույնի նման կրում էին իրենց մեջքին:

42. Այսպիսի նվերներ կարող էր պարգևել միայն պարսից արքայից արքան: Կյուրոսի այս քայից պարզ է դառնում, որ նա արդեն իրեն համարում էր արքայից արքա:

43. Դիոդորոս Սիկիլիացին այլ կերպ է նկարագրում Կիլիկիայի թագավորի բռնած ընթացքը: Նա պատմում է, թե Սյունենեսիսը Կյուրոսին դիմադրելու ուժ չունենալով, խուսաճավում էր: Իր որդիներից մեկին նա Կյուրոսի հետ ուղարկում է արշավանքի Արտաքսերքսեսի դեմ, հանձնելով նրան ռազմական ջոկատ: Միաժամանակ մյուս որդուն նա ուղարկում է արքայի մոտ, հայտնելու համար իր հավատարմությունը և տեղեկացնելու Կյուրոսի զորքերի թիվը: Նա, ըստ երևույթին, հաջողություն չունեցավ, քանի որ 4-րդ դարում նրա դիմաստիան վերացել էր (Diodor., XIV, 20):

44. Ասպարեզ (բնագրում՝ *ασπίς* = ստաթին): Հունական տարբեր քաղաքներում ասպարեզը ունեցել է տարբեր երկարություն: Աստիկյան ասպարեզը հավասար էր 177 մետրի: Հսեմնոփոնը, որպես աթենացի, երկարությունը հաշվում էր աստիկյան ասպարեզով:

45. Նավարքոս (*ναυαρχος*) նշանակում է՝ «ծովակալ»: Այդպիսին էր հունական նավատորմի հրամանատարի տիտղոսը:

46. Դիոդորոս Սիկիլիացին (XIV, 19) պատմում է, որ Կյուրոսը սպարտացիներից օգնություն խնդրեց, և վերջիններս 800 ռազմիկ ուղարկեցին Կյուրոսին, Խեյրիստիոսի հրամանատարության տակ:

47. Հերոդոտոսը (V, 52 և հաջ.) պատմում է, թե Աքեմենյան Պարսկաստանի կարևորագույն ճանապարհների վրա, ստանձնապես աստրապությունների սահմաններին և դժվարամատուց վայրերում պարսիկները կատարել էին ամրություններ, որոնք հույն պատմագիրը կոչում է «դարբաններ»: Այնտեղ մշտապես կանգնած էին կաշազորեր: Սա արքայից արքային հնարավորություն էր տալիս վերահսկելու ճանապարհները և անհրաժեշտության դեպքում ռազմական ուժ գործադրելու: Կիլիկիայից Ասորիք տանող այս դարբանի մասին հիշատակում է նաև Ստրաբոնը (XIV, 5, 18 և XVI, 2, 8): Այդ դարբանը գտնվում էր այն վայրում, որտեղ Ամանոս լեռը ճյուղավորվում է Տավրոսից ու ձգվում Կիլիկիայի արևելյան սահմանով մինչև ծով: Այս անցքը կոչվում էր նաև Ամանոսյան դարբան:

48. Արրոկմաաը Փյունիկիայի ասորապն էր:

49. Տրալլես՝ քաղաք Կարիայում, հարավ-արևմտյան Փոքր Ասիայում:

50. Մեմական Ատարգատիս-Դերկեստո դիցուհու պաշտամունքը կապված էր սրբազան համարվող ձկների հետ: Ատարգատիսի գլխավոր տաճարը Բոմբիկե քաղաքում էր, որը գտնվում էր Խալոս գետի մոտ, Եփրատից ոչ հեռու, Կյուրոսի երթուղուն մոտիկ: Ատարգատիս-Դերկեստոյի պաշտամունքը շատ էր տարածված սեմական ցեղերով բնակեցված երկրներում: Տարածված գրույցի համաձայն, Դերկեստո դիցուհին փոխակերպվեց ձկան, իսկ նրա դուստր Ամիրամիսը (Ծամիրամ)՝ աղավնու:

51. Դարակական արքունիքի անդամները, ինչպես նաև բարձրաստիճանի պարսիկները բնահարկի ձևով եկամուտ էին ստանում քաղաքներից ու երկրամասերից, որոնք արքան այդ նպատակով էլ պարգևել էր իրենց: Այս միջոցները ծախսվում էին արքունիքի պահպանման



և հանդերձարանի համար: «Գոտու համար» (բնագրում 313 2697) արտահայտությունը, հավանաբար, նշանակում է «հանդերձանքի համար»: Հերոդոտոսը (II, 98), օրինակ, հայտնի է, որ եգիպտական Ատիլա քաղաքը պարսից արքային տրամադրում էր կոշիկ:

52. Բաբելոնը կառուցվել էր հավանաբար դեռևս մ. թ. ա. 3-րդ հազարամյակում և հետագայում դարձել էր թագավորության մայրաքաղաք, որը նրա անունով կոչվել է Բաբելոնիա: Այն գտնվում էր Եփրատ գետի վրա: Պարսից արքայից արքան սովորաբար իր ամառն այստեղ էր անցկացնում:

53. Այստեղ հույն զինվորները ոչ թե ընդհանրապես ոռոգիկի ավելացում են պահանջում, այլ միանվագ հատուկ վարձ:

54. Մնա—հունական կշռի միավոր, որը հավասար է 617 գրամի:

55. Լուրագու—լիբուսի հրամանատար՝ վաշտապետ (տե՛ս ծանոթ. 40):

56. Գլուս—եգիպտացի Տանուսի որդին, Կյուրոսի մերձավորը և թարգմանը: Կյուրոսի պարտությունից ու սպանությունից հետո անցավ Արտաքսերքսեսի կողմը և հետագայում դարձավ պարսկական նավատորմի հրամանատար:

57. Չփոթել Հայաստանի Արաքս (Երասխ) գետի հետ, որի ակունքները Քսենոփոնի մոտ կրում են Փասխ (Փասիս) անունը: Այստեղ հիշատակված Արաքսես գետը Եփրատի ձախ վտակներից է Միջագետքում:

58. Այստեղ Քսենոփոնը ոչ ճիշտ կերպով Արաքսես գետից մինչև Բաբելոնի սահմանն ընկած երկիրը կոչում է Արաքիա:

59. Հունարենում Պլուլե (πλουλι) նշանակում է «դարբաս»: Հավանաբար այստեղ ևս ամրացված կետ կար, որը պաշտպանում էր Կիլիկիայից Բաբելոն տանող առևտրական ճանապարհի այս հատվածը, որը միաժամանակ Բաբելոնի մուտքն էր:

60. Լյուդիացիները հայտնի են եղել որպես մանրածախ առևտրականներ:

61. Կապիթե (καπιτη) —հայկական աղբյուրներում հանդիպում է «կապիթ» ձևով. տե՛ս Հր. Աճառյան, Արմատական բառարան, հատ. Բ (տարրոլության պարսկական չափ, որը հավասար էր 2,3 լիտրի): Սիկլ—պարսկական արծաթ դրամ, որը կշռում էր 5,6 գրամ: Օրոլա—հունական մանր արծաթ դրամ: Քոլոնիկս (χολονικ) —տարրոլության հունական չափ, որը հավասար էր 1,1 լիտրի: Քսենոփոնի հիշատակած այս գինը 50 անգամ ավելի էր, քան հացի սովորական գինը Աթենքում:

62. Կանդիս (κανδισ) —պարսկական թևավոր վերնազգեստ:

63. Անաքսիրիդ—պարսկական երկար ու նեղ անդրավարտիք:

64. Էդ. Մեյերը հաշվել է, որ Աքեմենյան Պարսկաստանի բնակչության թիվը կազմում էր մոտ 50 միլիոն մարդ (E. Meyer, Geschichte des Altertums, B. III, էջ 91):

65. Գետանցման այս ձևը լավագույնս պատկերված է Դարեհ Ա-ի Բեհիստունյան արձանագրության բարձրաքանդակներում:

66. Աքեմենյանների տերության մեջ արքայից արքայի կողքին կար յոթ ազնվագույն պարսիկների խորհուրդը: Այդ յոթ պարսիկները արքայի մերձավորագույն խորհրդականներն էին և օգնականները: Հետագայում, Աքեմենյանների տիրապետության տապալումից հետո Փոքր Ասիայում առաջացած հելլենիստական պետությունների թագավորները (Արիարաթեսը՝ Կապադոկիայում, Միհրդատը՝ Պոնտոսում, Օրոնտեսը (Երվանդ)՝ Հայաստանում) իրենց համարում էին այդ յոթ պարսիկներից որևէ մեկի շտապիրդը: «Անաքսիրիս» այս հաստվածից կարելի է հետևցնել, թե Կյուրոսը ևս, որպես սատրապ և արքայորդի, իր մեր-

ձավորներից ստեղծել էր յոթի նմանօրինակ խորհուրդ: Նրա արքունիքը, ընդհանրապես, կազմակերպված էր պարսից արքայից արքայից արքայի արքունիքի օրինակով:

67. Պարսիկների մոտ գոտուն ձեռք մեկնելը, որպես մահվան դատապարտվում նշան, նկարագրված է նաև Իհոդորոս Սիկիլիացու կողմից (Diodor., XVII, 30):

68. Աքեմենյան Պարսկաստանում հատատված սովորության համաձայն, արքայի նալունվկու ժամանակ բոլոր նպատակները պարտավոր էին նրան երկրպագել որպես սատանո (պրոնոկիմիսիս): Քսենոփոնի այս նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ պարսիկ որոշ ազնվականների ևս այդպիսի պատիվ էր մատուցվում:

69. Բնագրում 313 2697: Բառացի նշանակում է գայիսոն կրող, մականակիր: Դեռևս չի պարզված պարսկական արքունիքում տրված այդ տիտղոսի բուն էությունը:

70. Հունական պոլիսներում պետությանը հատուկ ծառայություններ մատուցած աչքի ընկնող քաղաքացիներին համայնքը պարգևատրում էր պատվով: Ոսկե պսակը համարվում էր բարձրագույն պարգև: Ներկա դեպքում Կյուրոսը հելլենների շահագրգռելու նպատակով խոստանում է հետևել հունական սովորությանը:

71. Այս թվերը փոքր-ինչ տարբեր են իր իսկ Քսենոփոնի հաղորդած նախորդ թվերից (հմտ. գիրք I, գլ. II, 9 և II, 25):

72. Քսենոփոնը իր «Կյուրոպեդիա» երկում (գիրք VI, գլ. 1, 30) պատմում է, թե սովորական ռազմականքերը առաջին անգամ Կյուրոս Մեծի ժամանակ վերածվեցին մանգաղակիր ռազմականքերի: Առանցքի վրա ռազմականքի յուրաքանչյուր կողմից ամրացվում էր երկաթե մանգաղներ, մոտ մեկ մետր երկարությամբ:

73. Այս թիվը պետք է չափազանցված համարել: Պարսկական արքունիքի հույն բժիշկ, հետազայում պատմագիր Կտեսիաքսը (տե՛ս Plutarch., Artaxerxes, 13) Արտաքսերքսեսի գործի թիվը համարում է 400 հազար: Իհոդորոսի հաղորդման համաձայն, Կյուրոսի բանակում կար 70 հազար բարբարոս, որոնցից երեք հազարը հեծյալ, և 13 հազար հույն վարձկան, իսկ Արտաքսերքսեսի բանակում հաշվվում էր 400 հազար մարդ: Վ. Տարնը (W. W. Tarn, Cambridge Ancient History, vol. VI, էջ 7) այս թվերը ևս համարում է չափազանցված: Նա ենթադրում է, որ երկու հակառակորդների բանակները թվով մոտավորապես իրար հավասար էին, բաղկացած շուրջ 30 հազար մարդուց, բայց Արտաքսերքսեսի վեց հազար հեծյալների դիմաց Կյուրոսն ուներ 2500: Այս հանգամանքն էլ վճռեց նակատամարտի ելքը հօգուտ Արտաքսերքսեսի:

74. Գրկաչափ (բնագրում 313 2697) —հունական երկարության չափ, որը հավասար է մոտավորապես 1,85 մետրի:

75. Մեդական պարիսպը մանրամասն նկարագրել է Քսենոփոնը (գիրք II, գլ. IV, 12): Ահմմանամերձ այս պաշտպանական գիծը կառուցել էր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր 2-րդ թագավորը (605—562 թթ.) այն վայրում, որտեղ Տիգրիս ու Եփրատ գետերը իրար ավելի են մոտենում, քան որևէ մի այլ կետում: Կառուցման հիմնական նպատակը պաշտպանությունն էր մեդացիների դեմ: Ամրության արևելյան վերջավորությունը հասնում էր մինչև Տիգրիս, որտեղ հետագայում կառուցվեց Ալեկիսա խոշոր քաղաքը, իսկ արևմտյան ծայրը հասնում էր մինչև Սիննարա քաղաքը: Կառուցի երկարությունը հասնում էր 30 կմ.: Քսենոփոնի ժամանակ, հավանաբար, պարսիկ այդ մասը ավերակ էր, քանի որ 1) արքան ստիպված է եղել այստեղ խրամատ փորել և 2) Քսենոփոնը պարիսպը նկարագրում է ոչ թե այս հատվածում, այլ հաջորդ գլխում:

76. «Անաքսիրիս» հրատարակիչներից Գեմոլլը (Xenophontis Expositio Cyri, recensuit

Guilelmus Gemoll. Editio minor. Bibliotheca Teubneriana, Lipsiae, 1910, կապակածում է փակագծերի մեջ ստեղծված այս հատվածի հարազատությանը և այն համարում է հետագայի ընդմիջարկություն:

77. «Անաբասիս»-ի առաջին գրքի 8-րդ և 10-րդ գլուխները Կունաքսայում (հարկունի մոտ) Արտաքսերքսեսի և Կյուրոսի միջև տեղի ունեցած վճարական ճակատամարտի նկարագրությունն է, որը աչքի է ընկնում բնականությանը ու կենդանությանը: Ինուս Պլուտարքոսը իր ժամանակ մեծ գովեստով է խոսել այդ մասին, բարձր գնահատելով Քսենոփոնի պատմությունը կենդանի, տպավորիչ ոճը: Վ. Վ. Տարնը, սակայն (Cambridge Ancient History, vol. VI, էջ 7), գտնում է, որ Կունաքսայի ճակատամարտի նկարագրությունը Քսենոփոնի մոտ ճշմարտացի չէ: Անգլիացի գիտնականը գերադասում է Դիոդորոսի շարադրանքը (Diodor., XIV, 23, 24), ըստ որի Կունաքսայի ճակատամարտի ելքը վճռեց Արտաքսերքսեսի մեծաթիվ հեծելազորը, որ Տիսասփեոնեսը նետեց Կյուրոսի զորաբանակում Կեարքոսի ջոկատի նահանջի հետևանքով ստաշացած ճեղքվածքը:

78. Հունական զորքը, որպես մի ամբողջություն, կազմում էր Կյուրոսի ողջ բանակի աջ թևը: Կենտրոնն ու ձախ թևը կազմում էին պարսկական զորամասերը: Ոստի և Կեարքոսն ու Մեհոնը կազմում էին, համապատասխանաբար, սոսկ հունական զորքերի աջ ու ձախ թևերը:

79. Արիայոս—Կյուրոսի ընկերը և զինակիցը և նրա պարսկական զորամասերի հրամանատարը: Ակզբնական շրջանում, Կունաքսայի ճակատամարտից անմիջապես հետո, հունական զորամասերի հետ լավ հարաբերություններ էր պահպանում: Բայց Արտաքսերքսեսից ապահովության խոստումներ ստանալուց հետո նա երևա թեթև հեղինակներից և մասնակցեց հելլեն հրամանատարների գերեվարման ու ոչնչացման գործին, որը կատարվել էր Տիսասփեոնեսի հրամանով: Սատրապ Անանակվելուց հետո արքայի հրամանով 395 թ. Արիայոսը ձերբակալեց ու սպանեց Տիսասփեոնեսին: Հետագայում, 394 թ., ըստ երկույսին նա մասնակցեց արքայից արքայի դեմ բռնկված ապստամբությանը (Xenoph., Hellen., IV, 1, 27):

80. Փակագծերում ստեղծված այս հատվածը ևս Գեմոլլը համարում է հետագայի ընդմիջարկություն:

81. Զորքի բառակուսի դասավորումը ստացվում էր հետևյալ կերպ. ստաշամար և հետամարը կազմում էին ֆալանգներ՝ ջոկատներ, իսկ կողքերը՝ միաշար զորապետներ: Սեչ-տեղում, զորքի պաշտպանության տակ տեղավորվում էին թեթևագնացները և գունակը:

82. Այստեղ բարբարոսական է կոչված արքայից արքայի պարսկական զորքը:

83. Խոսքը վերաբերում է Իրեն՝ հեղինակին: Նա ամեն անգամ իր մասին խոսում է երբորդ դեմքով:

84. Հին հույների կրոնական հավատալիքների մեջ հատուկ նշանակություն էր ստացել բնության տարրեր երևույթների և նշանների հիման վրա գուշակելու արվեստը: Այդ մասին առաջին տեղեկությունները հաղորդում է դեուս Հոմերոսը: Հույները կարծում էին, թե այդ նշաններն ուղարկվում են աստվածների կողմից, կյանքում մարդկանց առաջնորդելու համար: Գուշակում էին հիմնականում հավերթի թռչնի կամ ճիչերի համաձայն, գոհարելված անասունների փորձերի վրա, ինչպես նաև երագների բացատրությանը: Գուշակության էին դիմում գլխավորապես այն դեպքերում, երբ ծրագրում էին կարևոր գործողություններ կատարել: Որպես կանոն, երբեք պատերազմ չէին ձեռնարկում առանց այդպիսի գոհարությունների ու գուշակությունների: Ինքը, Քսենոփոնը, դատնալով զորքերի հրամանատար, պարծանքով շեշտում էր, թե ոչինչ չէր ձեռնարկում առանց աստվածների կամքն իմանալու: Զո-

հաբերված անասունների փորձերի վրա գուշակություն անելը համարվում էր բարդ գութ, որի համար անհրաժեշտ էր ունենալ որոշակի գիտելիքներ: Կյուրոսի բանակում կային գուշակությամբ զբաղվող մի քանի մարդ: Զոհաբերությունը անհաջող լինելու դեպքում, սովորաբար այն կրկնում էին մինչև բարենպաստ նշաններ ստանալը:

85. Ջևա-Փրկչի պաշտամունքը լայն տարածում ուներ Հունաստանում: Հույները կովից ստաշ հաճախ էին դիմում Ջևա-Փրկչին:

86. Ազգբնապես պետ էր կոչվում խմբերգի մի տեսակը, որը կապված էր Ապոլլոնի պաշտամունքի հետ: Արդեն «Երկական»-ում այդպիսի պետ էր կոչվում է, ուղղված Ապոլլոնին, որպեսզի սա վերացնի իր իսկ ուղարկած ժանտախտը: Պետն երգում են նաև Հեկատոսի սպանությունից հետո, որպես հաղթանակի խորհրդանիշ: Հետագայում պետն երգում էին ճակատամարտից հետո, որպես հաղթության երգ, կամ, դրանից առաջ, որպես ռազմերգ:

87. Էնիալիոս—նազմի աստված Արեսի մականուններից մեկը:

88. Պարսկական հետևակը չունեց արշավանական զենք, բացի թեթև կաշվե վահանից: Այդ իսկ պատճառով նա ի վիճակի չէր ձեռնամարտ մղելու ծանրագույն հուպիտների դեմ:

89. Քսենոփոնը իր «Կյուրոսադիա» գրքի վերջում (VIII, 8, 24), խոսելով Պարսկաստանում ռազմական գործի անկման մասին, նշում է, որ մանգաղակիր ռազմականքերը թեև մասնակցում էին մարտերին, բայց կորցրել էին իրենց նշանակությունը, քանի որ կտասպանները, մինչև թշնամու հետ ընդհարվելը, կամ ընկնում են կտոքից, կամ իրենք են ցած թռչում, և կտոքերը մնալով առանց կտավարի, հաճախ ավելի մեծ վնաս են հասցնում յուրաքանչեքին, քան թշնամուն:

90. Պարսից արքայի սեղանակիցներ (հունարեն՝ *δραγοσται*) էին կոչվում այն պաշտոնատար անձինք և պալատականները, որոնք օրական մեկ անգամ ճաշում էին պալատում արքայի հաշվին: Սովորական օրերին նրանք ճաշում էին արքայից անհատ, իսկ տոների և հանդիսավոր դեպքերին արքան նրանց հետ ճաշում էր նույն սեղանին: Սատրապ Կյուրոսն այս հարցում ևս ընդօրինակել էր արքունիքի սովորությունները:

91. Կտեփաս—հույն պատմիչ, որը 415 թ. գերի էր ընկել պարսիկների ձեռք և արքայից արքայի կողմից մեծ պատիվների արժանանալով, 17 տարի մնացել էր պարսկական սիրունիքում որպես բժիշկ: Նա հեղինակել է Արևելքի երկրների պատմությունը՝ «*ἱστορίαι*» (Պարսկական) վերնագրով, որը բաղկացած է եղել 23 գրքից: Հետագայում Պլուտարքոսը Արտաքսերքսեսի կենսագրությունը շարադրելիս մեծապես օգտվել է Կտեփասի աշխատությունից: Ինչպես երևում է «Անաբասիս»-ի տվյալ հատվածից, Քսենոփոնը ևս օգտվել է Կտեփասից: Կտեփասի աշխատության առաջին վեց գիրքը վերաբերել է Ասորեստանի և հնագույն ժամանակների Պարսկաստանի պատմությանը, մինչդեռ հաջորդ գրքերի յոթվեցում զանազանությամբ կազմել է Պարսկաստանի հետագա շրջանի պատմությունը, մինչև 393 թ.: Հատկանշական է, որ Կտեփասը հաճախ է մեղադրում Հերոդոտոսին որպես ստատպատում հեղինակի, թեև ինքը շատ հաճախ էապես շեղվում է ճշմարտությունից: Կտեփասը գրել է նաև աշխատություն Հեղկաստանի հրաշքների մասին: Կտեփասի գործերից թաղվածքներ մնացել են Բյուզանդիայի պատրիարք Փոտի երկերում:

92. Այս գլուխը ամբողջությամբ տալիս է Կյուրոսի բնութագիրը: Պարսկական գահի պատանի հավակնորդի անձնավորությունը (նա սպանվեց 22 տարեկան հասակում) մեծ սպավորություն էր գործել Քսենոփոնի վրա, որն իր նկարագրությամբ ընթերցողի հասակըրանքն է շարժում Կյուրոսի հանդեպ: Կյուրոսն, անկասկած, պարսկական արտակարգ գործիչներից մեկն էր, օժտված մեծ եռանդով, լայն մտահորիզոնով, անձնական արի-

թյանը և մարդկանց առիճքներու կարողությամբ: Նա սիրում էր հունական մշակույթը և տիրապետում հունարենին: Քսենոփոնը, սակայն, իդեալականացնելով իր ներուժին, բուրժուան է մատնել նրա այնպիսի բացասական գծերը, ինչպիսիք են նրա փառասիրությունը, մեծամտությունը, դաժանությունը (Կյուրոսը սպանել է իր երկու եղբայրներին): Քսենոփոնի ստեղծած Կյուրոսի կերպարի մեջ խտացվել են պարսիկների պատկերացրած իդեալական տիրակալի դրական գծերը, գծեր, որոնք մասամբ հավանում էր նաև Քսենոփոնը: Կարելի է համարձակորեն ասել, որ Կյուրոսը նույնքան գրական կերպար է, ինչքան և պատմական անձնավորություն: «Կյուրոսպեդիա»-ն շարադրելիս, Քսենոփոնը հետևողականորեն զարգացրեց իր տեսակետները պետության օրինակելի ղեկավարի մասին, դրանք վերագրելով Կյուրոս Մեծին: «Կյուրոսպեդիա»-ն ընթերցելիս դժվար չէ նկատել, որ Կյուրոս Մեծին վերագրվում են բնավորության մի շարք գծեր, որոնք հատուկ էին Կյուրոս Կրտսերին:

93. Պարսիկ ազնվականության երեխաների դաստիարակության մասին Քսենոփոնը հանգամանորեն խոսում է իր «Կյուրոսպեդիա» երկում: Քսենոփոնի հաղորդած որոշ տվյալներից կարելի է ենթադրել, որ իր ժամանակ մարա-պարսկական արքունիքում դաստիարակվել է նաև արմենների թագավորի որդի Տիգրանը և այնտեղ դարձել Կյուրոսի որակիցը (Cyrus; III, I, 7):

94. Որք պարսկական ավագանու ոչ միայն սիրած ժամանցն էր, այլև համարվում էր ռազմական արվեստը սովորելու և խիզախություն ձեռք բերելու լավագույն միջոց: Որսի ժամանակ պարսիկ ազնվականության պատանիները իրար միջև մրցություններ էին կազմակերպում:

95. Հին աշխարհում բնահարկի մի ձևն էլ ընծաներ մատուցելն էր: Արքայից արքային և պարսկական բարձր ավագանուն ընծաներ մատուցելը պարտադիր էր բոլոր նրանց համար, ովքեր անմիջականորեն շփման մեջ էին մտնում նրանց հետ: Պարսկական տերության հզորներին ընծաներ էին մատուցում նաև նրանց գերիշխանության տակ գտնվող քաղաքներն ու երկրները: Մ. թ. ա. 4-րդ դարի հույն մատենագիր Թևոպոմպոսը պատմում է. «Պարսկական տերության մեջ եղած բնության բոլոր բարիքները և արհեստային արտադրանքը արքային է ուղարկվում ընծաների ձևով. գորգեր, զգեստներ, վրաններ, շքեղ կահույք, ոսկե և արծաթե սպասներ, անհամար գեներ և, բացի այդ, բուռնակիր ու մսացու անասուններ, ինչպես նաև համեմունք, մետաքս, գործվածքներ և այլ ամենը, ինչ կարելի է որևէ կերպ օգտագործել» (F. Jacoby, Die Fragmente der griechischen Historiker, B. II, Berlin, 1927, S. 526—617, Frag. 125):

96. Բնագրում՝ *ბუნავი*, որը նշանակում է ստրուկ, ծառա: Պարսից տերության մեջ արքայից արքայի բոլոր հպատակները, նույնիսկ ամենաբարձրաստիճանի ազնվականները, համարվում էին նրա ծառաները: Հայկական սկզբնաղբյուրներում ևս (Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի) մինչև իսկ հայոց հզորագույն նախարարները համարվում էին հայոց թագավորի ծառաներ:

97. Փոկալուրի այս հարձի անունը եղել է Միլտո: Պլուտարքոսի վկայությամբ (Plutarch, Pericl., 26—28), Կյուրոսը նրան անվանում էր Ասպասիա, Պերիկլեսի հայտնի սիրուհու անունով: Այնուհետև նա դարձավ իրեն գերելարած Արտաքսերքսեսի հարձը:

98. Արքայից արքայի այս զինանշանը հիշատակված է նաև Քսենոփոնի «Կյուրոսպեդիա» երկում՝ «ոսկե արծիվ՝ նիզակի ծայրին պարզած» (Cyrus., VII, 1,4):

1. Այսպիսի անփոփոմներ կան նաև հաջորդ գրքերի սկզբում (բացի 6-րդ գրքից): Այս բոլորը, ինչպես նաև ներկա թարգմանության մեջ անկյունավոր փակագծերի մեջ առնված հատվածները, Գ. Գեմոլլը համարում է հետագայի ավելացումներ:

2. Դեմարտոս—Սպարտայի բառիկա, որը 491 թ. վտարվեց իր երկրից և փախավ Պարսկաստան, Դարեհ I-ի մոտ: Հետագայում նա մասնակցեց Հունաստանի վրա Բսերքսեսի կատարած արշավանքին: Իր գործակցության համար նա պարսից արքայից իբրև ժառանգական տիրույթ ստացավ Տևթրանիս և Ալիստոնա քաղաքները Միսիայում (Herod., VI, 65: Xenoph., Hellen., III, I, 6): Դեմարտոսի մահն ուրիշ հույն քաղաքական գործիչներ ևս հատուկ ծառայությունների դիմաց ամբողջական մարգեր են իբրև պարգև ստացել արքայից: Նրանք լիիշխան տիրակալներ էին իրենց պարզված երկրների, բայց պարտավոր էին պարսից արքայի պահանջով նրան գորք տրամադրել: Նրանք իրավունք են ունեցել մինչև իսկ իրենց սեփական դրամը հատելու:

3. Ոմանք ենթադրում են, որ Թեոպոմպոսի անվան տակ հանդես է եկել ինքը՝ Քսենոփոնը (Ed. Meyer, Geschichte des Altertums. B. V, էջ 185): Այս կարծիքը, սակայն, քիչ է հավանական, քանի որ հաջորդ հատվածում (II, I, 14) Քսենոփոնը շեշտում է, թե «պատմում են, որ ոմանք հանդես եկան...»: Այս դարձվածքը մատնում է այն, որ Քսենոփոնը տվյալ բանակցությունների մասին հաղորդում է իր լսածների համաձայն:

4. Հայտնի է, որ Դարեհ 2-րդի թագավորության ժամանակ Եգիպտոսում ապստամբություն ծագեց պարսիկների դեմ, որի հետևանքով այդ երկիրը անկախացավ և այնտեղ վերահաստատվեց փարավոնների իշխանությունը: Եգիպտոսը վերանվաճելու Արտաքսերքսես 2-րդ Մեմեոնի փորձը անհաջողությամբ ավարտվեց:

5. Փակագծերի մեջ առնված այս հատվածը Գ. Գեմոլլը համարում է հետագայի ընդմիջարկություն:

6. Հելլենների նահանջի ճանապարհի առաջին փուլը այնքան էլ պարզ չէ, քանի որ Քսենոփոնի հաղորդման այս մասում, ըստ երևույթին, աշխարհագրական մի շարք անուններ շփոթված են, իսկ որոշ դեպքերում բաց են թողնված, ինչպես, օրինակ, Տիգրիսի վտակ Փոքր Զար գետը: Անցնելով Տիգրիսը հարեյունից Սուսա տանող ճանապարհի կամուրջով, հելլենական զորքը ուղղվեց դեպի հյուսիս, Տիգրիսի արևելյան ափի երկայնքով:

7. Միջագետքը հնագույն ժամանակներից հայտնի էր իր արհեստական ոռոգման զարգացած սխեմանով: Քսենոփոնի հիշատակած այս առուներն ու ջրանցքները կազմում էին բարելոնյան մարզի արհեստական ոռոգման ցանցի մի մասը:

8. Արտաքսերքսեսը, հավանաբար իր մոր՝ Պարիսատիսի միջամտությամբ, իրոք որ ներեց Կյուրոսին հավատարիմ անացած Արիայոսին և նրա մերձավորագույն զինակից Միթրադատեսին և հետագայում նրանց նշանակեց սատրապ. Արիայոսին՝ Փոյուգիայի, իսկ Միթրադատեսին՝ Կապպադոկիայի:

Ցա. Այս և մի քանի այլ հատվածներից հետևում է, որ արշավանքին մասնակցած հելլեններից դեռևս հայտնի չեն եղել աշխարհագրական քարտեզները և նրանք անձանոթ են եղել Արևելքի աշխարհագրությանն ընդհանրապես:

9. Հելլեն հուպիստները իրենց ծանր հանդերձանքի պատճառով անկարող էին փախուղ թշնամուն հավանել, մինչդեռ նման պայմաններում հեծյալներն ունեին անհամեմատ զգալի արագություն:

10. Այս Օրոնտաքը (Երվանդ) Արմենիայի ասորապն էր: Ամենայն հավանականությամբ, նրան ուղեկցող այս գործառնարը բաղկացած էր արմեններից: Աղյուսի կնարությունը հիմք է տալիս *Herod.* բառը, որը նշանակում է՝ «իր սեփականը»:

11. Մ. Բ. Մաքսիմովան «Անարախ»-ի իր թարգմանությամբ կցած համապատասխան ծանոթագրության մեջ (էջ 264, ծանոթ. 13) շատ նկարավոր է համարում, որ այդ երիտասարդը կղամ լինի ոչ այլ ոք, քան ինքը՝ Քսենոփոնը: Եթե այդպես է, ապա այս հատվածում հունարեն *ἑαυτοῦ* բառը Մաքսիմովան թարգմանում է սխալ (*ἑαυτοῦ*—պատանի): Մենք նկատի ունենք այն, որ Քսենոփոնը ծնվել է շուրջ 430 թվին, ուստի և նկարագրված դեպքերի ժամանակ (401 թ.) նա կլիներ մոտ 30 տարեկան, նշանակում է՝ ոչ պատանի:

12. Քսենոփոնը Մեդիա է անվանում Միջագետքի այն մասը, որը գտնվում է Տիգրիսի միջին հոսանքի վրա և հայտնի է որպես Ասորեստան: Իրականում Մեդիան գտնվում էր ավելի արևելք, Կասպից ծովից հարավ և հարավ-արևելք:

13. Նման լատերի նկարագրությունը տալիս է Հերոդոտոսը գրելով, որ այդ լատերը պատրաստում էին արմենների երկրում, որտեղ «կտրում են ուռենու ճյուղերը, դրանցով հյուսում նավի կողերը, դրանք պատում կաշիով, տալով դրանց հատակի ձև. ոչ նավի ետնամասն են լայնացնում, ոչ էլ առաջամասը նեղացնում, այլ նավին տալիս են վահանի նման կլոր ձև, այն լցնում ծղոտով, բեռնում և թողնում գետի հոսանքն ի վար» (*Herod.*, I, 194):

14. Զապատաս—Տիգրիսի ձախ հարկատու գետ (այժմ՝ Մեծ Զաք):

15. «Հակառակորդ» իմաստով Քսենոփոնն այստեղ օգտագործում է հունարեն *ἑσθρο* բառը, որը վերցված է Հունաստանի օլիմպիական մրցույթների պրակտիկայից: Այնտեղ մարզիկները մրցում էին զուգերով և եթե նախնական վիճակահանությամբ մարզիկներից որևէ մեկը մնում էր առանց զույգի, ապա նա կոչվում էր *ἑσθρο* և մրցման մեջ էր մտնում նախորդ զույգի հաղթողի հետ: Հասկանալի է, որ այդ մարզիկի դրությունը գերադասելի էր, բանի որ նա պետք է մրցեր արդեն հոգնած հակառակորդի հետ:

16. Դաշտավայրերը հարմարագույն ասպարեզ էին պարսկական մեծաքանակ հեծելազորի համար, մինչդեռ հեղին վարձկանները բոլորովին հեծելազոր չունեին:

17. Տիարան պարսկական խույր էր, որը գլխին ուղիղ դնելու իրավունքը միայն պարսից արքան ուներ: Մնացած պարսիկները պարտավոր էին այն գործածել վերևի սուր մասը դեպի ներքև ծնելուց հետո միայն: Քսենոփոնի այս հատվածում Տիսասիեռները կարծես թե ակնարկում է պարսկական գահը գրավելու իր մտադրության մասին: Հովսեփոս Փլավիոսի մի վկայության համաձայն (*Jos. Flav., Antiq.*, XIX, 67), պարսից արքան կարող էր տիրապետել ուղիղ դնելու իրավունք շնորհիվ նաև իր ցանկացած մարդուն:

18. Տե՛ս Ա գրքի 96 ծանոթագրությունը:

19. Այստեղ խոսքը 431—404 թթ. պելոպոնեսյան պատերազմի մասին է:

20. «Հեղիններ» ասելով հեղինակն այստեղ նկատի ունի Թրակիայում հաստատված հույն գաղթականներին:

21. Էֆորունների կոլլեգիան, թվով 5 մարդ, Սպարտայի քաղաք-պետության բարձրագույն ղեկավար իշխանությունն էր, որն ամեն տարի ընտրվում էր համայնքի ընդհանուր ժողովում:

22. Իսթմոս (բառացի նշանակում է՝ «պարանոց») կոչվում էր Պելոպոնեսոսը կենտրոնական Հելլադային միացնող պարանոցը (այժմ այն կտրված է արհեստական ջրանցքով, որի վրա կառուցված է Կորնթոսի կամուրջը):

23. Գորգիաս լեոնտինացին Սոկրատեսի ժամանակակից հայտնի սոփեստ էր և հետո: Նա եղել է ճարտասանության առաջին ուսուցիչը Հելլադայում: Օրջել է Հունաստան:

Եի տարբեր շրջաններ (Աթենք, Թեսալիա), հետադարձապես դպրոցներ բաց անելով: Անտիկ հեղինակների վկայությամբ, նա մեծ հաջողություն է ունեցել պատանիների շրջանում: Էփորոսը (*XII*, 53, 2) հաղորդում է, որ նա իր յուրաքանչյուր աշակերտից գանձում էր 100 մնա ուսման վարձ:

Գ Ի Ր Գ Ե Ր Ր Ո Ր Գ

1. Քսենոփոնի ժամանակ հույների աշխարհագրական պատկերացումները Հելլադայից հեռու գտնվող երկրների մասին դեռևս շատ աղոտ պետք է լինելին և անստույգ: Քսենոփոնի նկարագրություններից հետևում է, որ Կյուրոսի հեղին վարձկանները քարտեզներ չէին օգտագործել: Նախանջի ճանապարհին նրանք բոլոր դեպքերում դիմում էին տեղացի բնակիչներից գերի վերցված ուղեցույցների օգնությանը:

2. Այստեղ Քսենոփոնը շարադրում է իր համառոտ կենսագրությունը մինչև այն պահը, երբ ինքը միացավ Կյուրոսի բանակին:

3. Սոկրատես Աթենացին Հունաստանի ամենամանաշված փիլիսոփաներից էր: Հայտնի է նրա վայելած հեղինակությունը Աթենքի ստրկատիրական հասարակության բարձր խավի երիտասարդության մեջ: 399 թ. աթենացիները նրան մահվան դատապարտեցին, մեղադրելով անաստվածության և երիտասարդներից գայթակղեցնելու մեջ: Քսենոփոնը դեռևս պատանեկության տարիքից եղել է Սոկրատեսի աշակերտը ու հետևորդը, և հետագայում իր գրած «Հուշեր Սոկրատեսի մասին» երկով, բաղկացած 4 գրքից, նա ամեն կերպ պաշտպանեց իր ուսուցչին, նրա դեմ հարուցված բոլոր մեղադրանքների դեմ:

4. Այստեղ ակնարկությունը Պելոպոնեսյան պատերազմի մասին է:

5. Դելփիում (կենտրոնական Հելլադա) էր գտնվում Ապոլլոնի հայտնի տաճարը, որը դարձել էր համահունկական պատգամատուն: Դելփյան պատգամախոսին դիմում էին ինչպես առանձին անհատներ, այնպես և պետությունների ներկայացուցիչներ. ընդ որում, ոչ միայն Հունաստանից, այլև ուրիշ երկրներից: Այս հանգամանքի շնորհիվ Դելփյան պատգամախոսը և տաճարի քրմերը մեծ հեղինակություն էին վայելում հին Հունաստանի քաղաքական կյանքում:

6. Հեղինների գերագույն աստված Ջևսը, ինչպես նաև մյուս աստվածների մեծ մասը, ուներ մի շարք մակդիրներ, որոնք արտահայտում էին նրա այս կամ այն հատկությունը: Ջևսը ստացել էր «արքա» մակդիրը որպես աստվածների և մարդկանց գերագույն տերը, և նա էր, որ մարդկանց ուղարկում էր տարբեր երազներ:

7. Ինչպես նշել ենք, այդ ժամանակ Քսենոփոնը շուրջ 30 տարեկան էր: Ջորավարի պաշտոնը զբաղեցնելու համար այդ տարիքի մարդը Աթենքում համարվում էր դեռևս երիտասարդ (*Thucyd.*, VI, 12.2):

8. Քսենոփոնը այստեղ ևս, ինչպես նախորդ հատվածներից մեկում (*II*, V, 10), դիմում է մարմնամարզական մրցումներից վերցված համեմատության: Մրցումներում հաղթողների համար սահմանված մրցանակները նախապես ցուցադրվում էին ընդհանուրի առաջ: Ազոնոթետես (*ἄζονοθετες*) կոչվում էին մրցումների կազմակերպիչներն ու դատավորները:

9. Արևելքի մի շարք ժողովուրդների, ինչպես նաև լիդիացիների մոտ, ականջօղեր կրում էին ոչ միայն կանաչք, այլև տղամարդիկ. մի բան, որ խորթ էր հույներին: Հույներն այդ հասարակություն էին կանացիություն:

10. Բնագրում ասվում է: Այս անվանման տակ ենթադրված գործի միավորը որոշակի քանակ չէր ներկայացնում: Այդպես էր կոչվում, սովորաբար, առանձին մի հրամանատարին ենթարկված միավորը:

11. Տաքսիարքունի գործառնական հրամանատար, գործարարի մերձավոր օգնականը:

12. Հին Հունաստանում քարոզի պաշտոնը դեռևս Հռոմեոսի ժամանակներից հատուկ մասնագիտություն էր, ընդ որում՝ պատվաբեր: Քարոզի պարտականությունն էր՝ ժողովրդին առյուծանի հրավիրել: Աստիճանաբար միջնորդ էր արքայի կամ գործառնականատարի ու ժողովրդի միջև: Քարոզը համարվում էր սրբազան և անձեռնմխելի անձնավորություն: Նա ուղեկցում էր բարեկամների կամ թշնամիների մոտ ուղարկվող բանագնացներին, զոհաբերությունների ժամանակ կատարում քրմական պարտականություններ և այլն:

13. Որոշ ձեռագրերում «Ագասիասի» փոխարեն՝ «Կլեանոս արկադացի»: Այս վերջին տարբերակը կասկածներ է հարուցում, քանի որ շարունակության մեջ Քսենոփոնը բազում անգամներ Կլեանոսին համարում է ոչ թե արկադացի, այլ օրթոմեճացի:

14. Հելլենների սովորությամբ, հյուրը անձեռնմխելի էր տանտիրոջ համար, քանի դեռ նա գտնվում էր վերջինիս տանը: Այս սովորությամբ ամրապնդված էր կրոնական հավատալիքներով և հյուրասիրության սրբազան օրենքների պահպանող համարվում էր աստվածների հայր Զևս-Հյուրընկալը (Ζεὺς Ξένιος):

15. Հելլենների մոտ փոշտալը բարի նշան էր համարվում: Փոշտոցին ներկա եղողները պատասխանում էին՝ «Ձևան օգնական»: Ներկա դեպքում այն առանձնակի կարևորություն էր ստանում հույների համար, քանի որ զինվորը փոշտացել էր Քսենոփոնի արտասանած *σωτηρίας* (փրկության) բառի վրա:

16. Քսենոփոնի խոսքն այստեղ 490 թ. տեղի ունեցած Մարաթոնյան հայտնի ճակատամարտի մասին է:

17. Հերոդոտոսի վկայությամբ (VI, 117) պարսիկները Մարաթոնյան դաշտում թողեցին 6400 սպանված:

18. Հերոդոտոսը (VII, 185) Հունաստանի վրա Քսերքսեսի կատարած արշավանքին մասնակցած պարսկական բանակի թիվը հաշվում է ավելի քան 2.600.000 մարդ. իսկ Քսենոփոսի վկայությամբ այն բաղկացած էր 800.000 մարդուց և 1200 ճավիհ:

19. Քսերքսեսի արշավանքը Հունաստան տեղի ունեցավ 480—479 թթ.: Այդ ժամանակ հույները պարսիկներին հաղթեցին ծովային մարտում Սալամինի մոտ՝ 480 թ., իսկ ցամաքի վրա Պլատեայի մոտ՝ 479 թ.:

20. Այս հատվածում հիշատակված մյուսիացիները, պիսիդիացիները և լիկանացիները Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդներից էին, որոնք մշտական ընդհարումների մեջ են եղել պարսկական իշխանությունների հետ:

21. Այստեղ Քսենոփոնի ակնարկությունը վերաբերում է «Ողիսական»-ի հետևյալ տողերին (IX, 91—97).

«Այնտեղ մերոնք հանդիպում են լոտոսակեր բարի մարդկանց, Որոնք ոչ մի չարիք չէին նյութել երեք ճավազներից. Միայն նրանց լոտոս էին հյուրասիրել ճաշակելու. Սակայն նա, ով ճաշակում էր հասած լոտոսը մեղրածոր, էլ չէր ուզում վերադառնալ և լուր բերել ընկերներին,

Այլ ուզում էր ամփոշտ մնալ լոտոսակեր մարդկանց երկրում, Քաղցր լոտոսը ճաշակել, վերադարձը մոռանալով»:

(Հոմերոս, «Ողիսական», թարգմ. Ս. Գրքաշարչյանի, Երևան, 1957, էջ 116):

22. Քսենոփոնի այս խոսքերը բացահայտ կերպով արտահայտում են հելլենների վաղեմի ձգտումը դեպի արևելք տարածվելու ուղղությամբ: Այս գաղափարը իր պերճախոս ձևակերպումը ստացավ թեմնացի հետտոր Իսոկրատեսի ճառերում, իսկ վերջնականապես գործնականում իրականացվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

23. Հունական գործին, որպես կանոն, հետևում էր գումակը և մեծ թվով ոչ-նազմիկների խոշոր մի խումբ, որոնց թիվը հաճախ գերազանցում էր մարտիկների թվին: Արշավանքի այդպիսի մասնակիցները Քսենոփոնի մոտ կոչվում են ընդհանրապես «ամբոխ» (ὄχλος): Այս ամբոխի կազմը խայտաբղետ էր: Այստեղ էին մտնում առաջին հերթին ծառաները, որպիսին ուներ յուրաքանչյուր սպա և հուպիտ: Ուղևորության ընթացքում ծառաները կրում էին հուպիտների ծանր զենքերը և հանդերձն ընդհանրապես: Կային նաև առանձին բեռնակիրներ՝ վրանների և այլ իրերի փոխադրման համար: Այստեղ մտնում էին նաև բանակին ուղեկցող տարբեր արհեստավորներ, բժիշկներ, ստրկացված գերիներ և այլն:

24. Քսենոփոնն այստեղ նկատի ունի այն, որ Կլեարքոսը հայտնի էր որպես դաժան կարապապիության կողմնակից հրամանատար:

25. Ինչպես հայտնի է, Աթենքի ու նրա դաշնակիցների և Սպարտայի ու սրա դաշնակիցների միջև տեղի ունեցած Պելոպոնեսյան պատերազմը վերջացավ Սպարտայի հաղթանակով: Պատերազմից հետո հաղթանակած լակեդեմոնացիները փաստորեն դարձան ամբողջ Հունաստանի տերը և մեծ հեղինակություն էին վայելում հունական բոլոր պոլիսների քաղաքացիների մոտ: Այդ իսկ պատճառով Քսենոփոնը առաջարկում է լակեդեմոնացի Խերիստփոսին ընտրել գործի առաջնորդ:

26. Այս Միթրադատեսի մասին տես «Անաբասիս», II, V, 35:

27. Թուլիդիդեսի վկայությամբ (VI, 25, 2) հելլենների մեջ կրետացիները համարվում էին լավագույն ճետամիտներ:

28. «Մերկերի» մասին տես Ա գիրք, 18 ծանոթագրությունը:

29. Այստեղ խոսքը այն գյուղերի մասին է, որոնք հիշատակված են նախորդ հատվածներից մեկում (գիրք Գ, գլխ. II, 34):

30. Այդ ձևերը մնացել էին այն բանից հետո, երբ Կլեարքոսի գործառնական մի խումբ փախավ արքայի մոտ (հմտ. գիրք Բ, գլխ. II, 7):

31. «Անաբասիս»-ի անգլերեն թարգմանության մեջ Carleton Brownson-ը (Xenophon, vol. 2, London. 1961, էջ 467, ծանոթ 1) Քսենոփոնի հիշատակած կարիսա քաղաքը նույնացնում է Աստվածաշնչում (Գիրք ծննդոց, Ժ 11—12) հիշատակված Քաղան խոշոր քաղաքի հետ, որը գտնվում էր հին Ասորեստանում:

32. Ոտքը պարսից արքա Կյուրոս Մեծի մասին է (558—529 թթ.):

33. Այստեղ 556 թ. տեղի է ունեցել արևի խավարում: Հավանաբար Քսենոփոնի այս հատվածում խոսքը հենց այդ խավարման մասին է:

34. Այդ բուրգը, հավանաբար, Ասորեստանի թագավորներից մեկի դամբարանն էր ելել:

35. Carleton Brownson-ը (Xenophon, vol. 2, էջ 468, ծանոթ. 1) այս առթիվ տալիս է այսպիսի մի ծանոթագրություն: Քսենոփոնի տեսած այս ավերակները Ասորեստանյան կայսրության հռչակավոր մայրաքաղաք Նինվեի ավերակներն են: Զարմանալի է, որ



ասորեստանյան այս խոշոր քաղաքը նա հիշատակում է միայն պատահական և խաբուսիկ վկայությամբ, թե «այն մի ժամանակ բնակեցրել էին մեդացիները»: Փաստորեն մեդացիները կողմից Նինվեի գրավումը (612 թ.) այն դեպքն էր, որով փակվեց նրա պատմության կարևոր շրջանը, և քաղաքը մնաց մարերի իշխանության տակ միայն հաջորդ կես դարի ընթացքում: այն է՝ մինչև այն շրջանը, երբ մեդական կայսրությունը տապալվեց պարսիկների կողմից (549 թ.): Քսենոփոնը, այսպիսով, մի ոչ կարևոր բայ էր և գնում իր պատմական ճշմանմանը, որ նա ի վիճակի չէր այդպես անելու:

36. Քսենոփոնը այստեղ ակնարկում է այն հանգամանքը, որ թշնամու շարքերը շատ խիտ էին, ուստի և հեղեղն ուղղվելիս նետումները երբեք չէին կարող վրիպել:

37. Էնոմոտարը (Enomotarios) շուրջ 25 հոգուց բաղկացած հետևակալին ոչ մեծ ջակատի՝ Էնոմոտիայի հրամանատարն էր:

38. Հեղեղների այս ուրախությունը բնական է, քանի որ հեծելագործի գործունեությունը առավել արդյունավետ էր դաշտավայրում, իսկ անհարթ տարածության վրա այն դառնում էր պակաս վտանգավոր:

39. Մտրակի հարվածների տակ պարսկական զորքերին հարկադրաբար տանում էին պատերազմի, արշավանքի, ինչպես նաև ստիպում էին զանազան աշխատանքներ կատարելու: Հերոդոտոսն, օրինակ, վկայում է, որ Թերսոպիլեի հայտնի ճակատամարտի ժամանակ Քսերքսեսը դիմեց այդ միջոցին (Herodot., VII, 223, հմտ. նաև VII, 22 և 56):

40. Սուսա (Շոշ)—պարսկական տերության կարևորագույն քաղաքներից, որտեղ գտնվում էր արքայից արքայի զանձանունը: Հայտնի էր նաև իր հողակերտ արքունի պալատներով: Եկբատանա—Մեդիայի մայրաքաղաքը, հայտնի իր առասպելական հարստություններով, հատկապես արքայից արքայի պալատով, որը հիացմունքով նկարագրել է Հերոդոտոսը:

41. Հույները երբեք առանց նախնական զոհաբերության արշավանքը չէին մեկնում:

Գ Ի Բ Ք Չ Ո Ր Ր Ո Ր Գ

1. Քսենոփոնի այս վկայությունը իրականության չի համապատասխանում: Երբ է, գերիմ Եփրատի հարավային գետաբազուկը հոսում է Հայաստանի միջով, Տիգրիսի ակունքներից ոչ հեռու, բայց այդ գետաբազուկի ակունքները գտնվում են բավական հեռու: Իհարկե արևելք:

2. Հույների զորքում զիշերը բաժանված էր 3 կամ 4 պահի՝ հերթափոխության:

3. Կարդուխների բնակեցրած երկրի սահմանները բավական ճիշտ կերպով որոշվում են Քսենոփոնի հաղորդած տվյալներով: Հարավում այն եզերված էր Բուրդիստանի լեռներով, հյուսիսում՝ Տիգրիսի վտակ Կենտրիսեսը (այժմ՝ Բոհտան-սու) այն բաժանում էր Հայաստանից: Քսենոփոնի հաղորդած վկայությունները մեծ արժեք են ներկայացնում այդ երկրի ոճակների վաղ շրջանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար: Կարդուխները այդ ժամանակ ունեցել են հարուստ գյուղեր, գրավել են երկրագործությամբ, զինվորականությամբ, անասնապահությամբ, ինչպես և արհեստագործությամբ: Հատկապես զարգացած էր պղնձագործությունը: Կարդուխներն արդեն գտնվում էին սոցիալ-տնտեսական զարգացման այն աստիճանի վրա, երբ բացառվում են համայնական կարգերը: Քսենոփոնից շուրջ 4 հարյուրամյակ հետո Մտրաքոնը արդեն վկայում է, որ գորդիները (ըստ երևույթին նույն կար-

դուխները—Ս. Կ.) ունեին ամրացված քաղաքներ և հայտնի էին որպես լավագույն ջրաբերներ և պաշարողական գործիքների հմուտ վարպետներ (Strabo, XVI, I, 24):

4. «Մյուսները» արտահայտությամբ Քսենոփոնը նկատի ունի խելքիսոփոսի առաջապահ գործամասի զինվորներին:

5. Վաշտերի ուղիղ դասավորություն: Սա հեղեղական զորքի տակտիկական հատուկ դասավորություն էր, երբ վաշտը կազմում էր մեկ շարքայուն: Նման դասավորության դեպքում մարտական հարվածային ուժը անընդհատ շարքերի ճակատ չի կազմում, ինչպես այդ ստացվում է Ֆալանգի դասավորության դեպքում: Այստեղ առանձին վաշտերը դասավորվում են առավելապես ըստ խորքի, քան ըստ լայնքի: Այնուհետև վաշտերը հարձակվում են, ընդ որում վաշտերից յուրաքանչյուրը հարևան վաշտից գտնվում էր բավական հեռավորության վրա:

6. Հույների պատկերացմամբ մեծագույն սրբապետություն էր մեդյաներին առանց թաղաման լքելը: Այդ իսկ պատճառով բոլոր դեպքերում կովից հետո երկու կողմերի միջև ժամանակավոր զինարարք էր կնքվում մեդյաներին հողին հանձնելու համար: Անտիկ աշխարհի մի շարք գրական հուշարձաններում («Լիլիական», «Ողիական», «Անտիգոնե») այս երեւույթը դարձել է հիմնական կոնֆլիկտներից մեկը:

7. Կենտրիսես էր կոչվում վերին Տիգրիսի արևելյան ճյուղը (այժմ՝ Բոհտան-սու):

8. Անտիկ հեղինակները մի շարք անգամներ հիշատակում են մարդերի ցեղը: Այսպես, Հերոդոտոսը խոսելով մարդերի մասին, նրանց համարում է իրանական վաշկատուն ցեղ (Herod., I, 125): Ըստ երևույթին Հերոդոտոսի հիշատակած մարդերը տարբեր ցեղեր են Քսենոփոնի հիշատակած մարդերից: Վերջիններին ավելի շուտ պիտի նույնացնել Մտրաքոնի մոտ հանդիպող մարդերի (կամ ամարդների) հետ, որոնք ապրում էին հայկական լեռնաշխարհում (Strabo, XI, 13, 3: Հմտ. նաև XI, 7, 1 և 8, 1): Աշխարհագիր Պտղոմեոսը Երավդոնի վկայությամբ (Ptol., V, 12, 9), մարդերը բնակվում էին Տիգրիսի ստորիններից արեւելք: Մարդերի մասին տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 69—70:

9. Այս խաղաղների (γαλδαισι) չափաք է շփոթել հարավային Միջագետքի նոգման շաղղեացիների ցեղի հետ: Քսենոփոնի հիշատակած խաղաղները բնակվում էին Եփրատի հարավ-արևելյան ծովափից ոչ հեռու Ս. Ս. ПИОТРОСКИИ, Урарту, Ереван, 1944, էջ 328), իսկ Յ. Մարկվարտը ենթադրում է, որ այս վարձկան խաղաղները ուշադրության են արժանի, որոնց մի ժամանակ Լեհման-Հաուպտի ազդեցության տակ գիտության մեջ անվանում էին «խաղեր» (J. Markwart, Südarmerien und die Tigrisqueilen, Wien, 1930, էջ 229—230: Հմտ. նաև՝ Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն... հ. Ա, էջ 68—69):

10. Այս նախադասության ճիշտ թարգմանությունը մեծ նշանակություն ունի որոշելու համար արմեն զինվորների փոխարարությունները սատրապի և, առհասարակ, արքայից արքայի հետ: Բանն այն է, որ Քսենոփոնի այս նախադասությունից պարզ չի երևում, թե արդյո՞ք նա՝ արմենները, կ'ամարդերը, կ'խաղաղները վարձկաններ էին, թե՛ «բարձեռներ» ընդորշումը վերաներում է միայն խաղաղներին: Ս. Ի. Մաքսիմովայի թարգմանությամբ (Ксенофонт, Анабасис, М.-Л., 1951, էջ 102) բոլորը վարձկաններ են, իսկ ուրիշ թարգմանություններում այդ այնպես էլ պարզ չի հասկացվում: Մենք կարծում ենք, որ Քսենոփոնի վկայությամբ վարձկաններ եղել են միայն խաղաղները, որովհետև՝ 1) Արմենիան պարսկա-

կան տիրապետության տակ գտնվող առանձին աստրապություն էր և արձեճները պարտավոր էին զորք հատկացնել աստրապին, տվյալ դեպքում՝ Օրոնտասին և 2) հաջորդ նախադասությանը Քսենոփոնը նշում է, թե «խաղաղները ազատ էին», հետևաբար, նրանք պարտավոր չէին ծառայելու պարսկական բանակում: Այս հանգամանքը Քսենոփոնը մատնանշում է նաև մի այլ աղբյուրով (V, V, 17): Թվում է, թե այս նույն կարծիքին է նաև ակադ. Հ. Ն. Մանանդյանը («Քննական տեսություն...», հ. Ա, էջ 68—69), իսկ Յ. Մարկվարտը ենթադրում է, որ «վարձկան» բառը այստեղ վերաբերում է ոչ միայն խաղաղներին, այլև մարդերին (J. Markwart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919, էջ 17):

11. Հին Հունաստանում հեղուկ կատարելը աստվածներին անարյուն զոհ մատուցելու ձև էր, որը հաճախ կատարում էին դեռևս Հռոմեոսի հերոսները («Ողիսական», III, 345—349 և այլն): Այսպիսի դեպքում բաժակի մեջ լցրած գինու մի մասը գետին էին թափում, միաժամանակ աստվածներին մաղթանք մրմնջում և աղոթում:

12. Սպարտական պետական կարգերը գովաբանող իր երկում Քսենոփոնը վկայում է, որ սպարտական մարտիկները թշնամու դեմ գնալիս իրենց գլուխները զարդարում էին պսակով («Λακεδαιμονίων πολιτεία», 13, 8): Ներկա դեպքում Խելլիստիոսը, որպես սպարտացի, հետևում է այդ սովորությանն ու մյուսներին ևս կոչ է անում ընդօրինակել իրեն:

13. Մյուս ժողովուրդների նման հույները ևս աստվածացրել են բնության տարբեր երեկոյթները, այդ թվում նաև գետերը: Այս դեպքում հույները զոհ են մատուցում տվյալ գետի աստծուն, որպեսզի սա հեշտացնի իրենց գետանցը: Հերոդոտոսի վկայությամբ, նման սովորույթ ունեցել են նաև պարսիկները (Herod., VII, 113):

13ա. Ըմպանակներ (բնագրում՝ ἐμπόματα) — նման ըմպանակներ հայտնաբերվել են Արևմտյան Հայաստանում կատարված հնագիտական պեղումների միջոցով (O. M. Dalton The treasure of the Oxus with other examples of early Oriental metal-work, London, 1916, II ed., էջ 44: Գ. Ա. Տիրացյան, Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. 6—4-րդ դդ., Պատմա-բանասիրական հանդես, 1969, № 4, էջ 147—156):

14. Բնագրում՝ κατ' ἀπορία, որը բառացի նշանակում է «դեպի վախճան», իսկ մենք թարգմանել ենք «դեպի ձախ», քանի որ ռազմիկը իր վախճանը պահում էր ձախ ձեռքով:

15. Բնագրում՝ ἐπί δόρυ, որը բառացի նշանակում է «նիզակի վրա», իսկ մենք թարգմանել ենք «դեպի աջ», քանի որ ռազմիկն իր նիզակը բռնում էր աջ ձեռքով:

16. Քսենոփոնի այս նկարագրությունը ենթադրել է տալիս, որ այս խոշոր բնակավայրը եղել է Հայաստանի հնագույն քաղաքներից մեկը: Այն, որ Քսենոփոնը այդ համարում է գյուղ, պիտի բացատրել այն հանգամանքով, որ հելլենները քաղաք չէին համարում այն բնակավայրը, որը չէր շրջապատված պարսպով: Նույնիսկ 15 դար անց բյուզանդական հեղինակ Գեորգիոս Կեդրենոսը (Georgius Cedrenus. Historiarum t. II, Bonnae, 1897, էջ 577) միջնադարյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկը, առևտրի հայտնի կենտրոն Արծնը համարում է գյուղաքաղաք (χωρὸς πολις), հակառակ, որ այն ուներ ավելի քան հարյուր հազար բնակիչ: Եվ այդ, հավանաբար, սուկ այն պատճառով, որ Արծնը չէր շրջապատված քաղաքային պարսպով:

17. Տեղեքոս գետը Յ. Մարկվարտը նույնացնում է այժմյան Կարասուի հետ (J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus, X, Heft I, էջ 236): Մ. Ի. Մաքսիմովն «Անաբասիս»-ի իր թարգմանության մեջ համապատասխան ծանոթագրությամբ (Ксенофонт, Анабасис, М.-Л., 1951, էջ 271, ծանոթ. 15) հավանական է համարում, որ Տեղեքոս գետը իրականում Եփրատի հարավային թևն է, որն այժմ կոչվում է Մուրադ-սու:

18. Քսենոփոնի այս վկայությունը բացառիկ նշանակություն ունի աստրապության շրջանի Արմենիայի վարչական բաժանումը որոշելու համար: Այս վկայության, ինչպես նաև Հերոդոտոսի մոտ պահպանված մի տեղեկության հիման վրա (Herod., III, 93—94), մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ Արմենիան այդ ժամանակ վարչական տեսակետից բաժանված է եղել երկու մասի՝ արևելյան և արևմտյան, կազմելով Արեմենյան Պարսկաստանի 13-րդ և 18-րդ աստրապությունները (Ս. Մ. Գարսագաշյան, Քննական պատմություն Հայոց, Ա, Թիֆլիս, 1895, էջ 67: Խ. Ա. Աժոն, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 390: Կ. Ասլան, Études historique sur le peuple arménien, Paris, 1909, էջ 71 և սրիշներ): Ավելի ճիշտ պիտի համարել Հ. Մանանդյանի ենթադրությունը, թե «ինչպես Հերոդոտոսի, նույնպես և Քսենոփոնի ժամանակ Արմենիան ունեցել է հավանորեն, միայն մեկ աստրապ»: Հ. Մանանդյանը, սակայն, չի բացատրում Արմենիայի բաժանումը արևելյան և արևմտյան մասերի, որոնք կազմում էին մի աստրապություն, աստրապ Օրոնտասի գերիշխանության տակ, որի օգնականն էր հյուսիսարևմտյան Տիրիբազոսը (Հ. Ն. Մանանդյան, Քննական տեսություն...», հ. Ա, էջ 65): Լեոն ևս մատնանշում է, որ Հայաստանը Քսենոփոնի ժամանակ ունեցել է միայն մեկ աստրապ (Լեո, Հայոց պատմություն, Ա., Թիֆլիս, 1917, էջ 331): Նույն տեսակետին է նաև «Անաբասիս»-ի անգլերեն թարգմանիչ Կարլոսոն Բրաունսոնը, որը համապատասխան ծանոթագրության մեջ նկատում է, որ Տիրիբազոսը «ենթակա էր ամբողջ Արմենիայի աստրապ Օրոնտասին» (Xenophon, Anabasis, book IV—VII, London, 1947, էջ 38, ծանոթ. 1):

19. Հույները սովորություն ունեին մարզական վարժություններից առաջ իրենց մարմինը յուղով օծելու, որպեսզի մաշվող առանձազական դառնա:

20. Ամազոնոհիները առասպելական կին ռազմիկներ են, որոնց մասին հույները հյուսել են բազմաթիվ գրույցներ: Այդ գրույցները պահպանվել են անտիկ հեղինակների մոտ (Հոմերոս, Պիդարոս, Էսքիլոս, Հերոդոտոս, Ստրաբոն): Ամազոնոհիների հիմնական հայրենիքը համարվում էր Կովկասը: Հունական արվեստում (խեցեղենի վրա կատարված նկարներում, որմնանկարներում) ամազոնոհիները պատկերված են հատուկ ձևի տապարներով, որոնց նմանները հայտնաբերվում են Փոքր Ասիայում և Անդրկովկասում կատարվող հնագիտական պեղումների միջոցով:

21. Քսենոփոնի այս վկայությունը ցույց է տալիս, որ արմենական գյուղերի բնակիչները, հույնիսկ կանայք, գիտեին պարսկերեն կամ ծայրահեղ դեպքում հասկանում էին այդ լեզուն:

22. Հունարեն χωρὸς γῆς (նաև χωρὶς γῆς) բառը, որը բառացի նշանակում է «գյուղապետ», մենք թարգմանեցինք «գեղջավազ», նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ ձևը հանդիպում է մեր վաղ միջնադարյան մատենագրության մեջ:

23. Կրատեր (շարժիչ): Հույները գիցին անխառն չէին խմում, այլ այն խառնում էին ջրի հետ: Կրատերը կալվե այն անոթն էր, որի մեջ գիցին խառնում էին ջրով: Սակայն Քսենոփոնի հաջորդ հաղորդումից (Anab. IV, V, 32) պարզ երևում է, որ «կրատեր» ասելով նա նկատի ունի գինու խոշոր կարասները:

24. Բնագրում՝ ἰσχυρίεις, որը բառացի նշանակում է շրթներին հավասար, այսինքն՝ մինչև ամանների բերանը:

25. Հաղկական լեռնաշխարհում շատ է զարգացած եղել ձիաբուծությունը: Աստվածաշնչում կա հետաքրքիր մի վկայություն, որ «ի տանն Թորգոմայ» բերված ձիերն ու ջորիները վաճառվում էին փյունիկյան քաղաքներում (Եզեկիել, ԻԷ, 14): Աշխարհագիր Ստրաբոնը վկայում է, որ Արմենիան դեռ հնուց շատ հարուստ էր ձիաբուծական արտաներով (Strabo՝

XI, 18, 7), և որ աքսենկյանների տիրապետության շրջանում Արմենիայի սատրապը սրբախնդար արքային ուղարկում էր տարեկան 20.000 մտրոկ միհրական տոների համար (Strabo, XI, 14,9):

26. Հելիոսը ("Ηλιος) Արևի աստվածությունն էր («արև» հելև): Արևելքի մի շարք Փողոպոլորներ ձին համարում էին Արև աստծու սրբազան անասունը: Հերոդոտոսը (Herod., I, 216) վկայում է, որ մասսագետները բոլորից առավել պաշտում են արևը և նրանց զոհ ևս մատուցում ձիեր:

27. Բացառված չէ, որ գեղջավազը դիտավորյալ կերպով հույների զորքը խալկոսների երկրով շատաչնորդեց ուղիղ դեպի հյուսիս, դեպի ծովափ, այլ նրանց տարավ դեպի արևելք: Արաքսի վերին հոսանքը: Գեղջավազի փախուստից հետո հույները, զրկվելով ուղեցույց առաջնորդից, 7 օր նույն ուղղությամբ շարունակեցին ճանապարհը մինչև Արաքս գետը, որը Քսենոփոնի մոտ կոչվում է Փասիս: Այսպես է ընդունված պատմագիտության մեջ: Բացառություն է կազմում Հ. Մանանդյանը, որը Քսենոփոնի մոտ հիշատակված Փասիս գետը նույնացնում է Պասիս-նու գետի հետ, իսկ Քսենոփոնի հիշատակած Հարպասոս ("Αραξος) գետի անունը համարում է «Արաքս» անվան աղավաղված գրություն և նույնացնում է Արաքս գետի հետ (Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 13—17: Նույնի՝ Քննական տեսություն... հ. Ա, էջ 64): Մինչդեռ Մ. Ի. Մաքսիմովյան «Անաբասիս»-ի ռուսերեն թարգմանությանը կցած համապատասխան ծանոթագրության մեջ (Ксенофонт, Анабасис, էջ 273 և քարտեզում) Հարպասոս գետը նույնացնում է մորոյն գետի հետ: Փասիսն անցնելուց հետո հույների հետևած ճանապարհը Քսենոփոնի հաղորդած տվյալներով լրիվ չի պարզվում: Այս ճանապարհի մասին վկայություն կա նաև Դիոդորոսի մոտ, որի նկարագրությունը, սակայն տարբերվում է Քսենոփոնից: Ըստ Քսենոփոնի, հելլենները Փասիսից հետո հանդիպեցին խալկոսներին, տատխներին, դարձյալ խալկոսներին, իսկ ըստ Դիոդորոսի (Diodor., XIV, 29) հույները հանդիպեցին խոլերին, փասիսաններին և հասան խալկոսների երկիրը:

28. Այստեղ բնագրի παρὰ նախորդը մենք թարգմանեցինք մոտ, մինչդեռ Մ. Ի. Մաքսիմովյան (Ксенофонт, Анабасис, էջ 114) թարգմանել է «մինչև» (до), Հ. Մանանդյանը՝ (Քննական տեսություն, էջ 392) «երկարությամբ», իսկ Կ. Բրաունսոնը (Xenophon, Anabasis, էջ 57)՝ «դեպի»: Եվ դա միանգամայն հասկանալի է: Բանն այն է, որ նախորդը ունի բազմաթիվ նշանակություններ և գործածվում է տարբեր հոլովների հետ: Այսպես παρὰ + սեռական նշանակում է՝ «կողմից, կողքին, շուրջ», παρὰ + տրական նշանակում է՝ «հետ, կից, հանդեպ, ընթացքում, պահին, հանդերձ, բացի» և այլն: Հ. Մանանդյանի թարգմանությունը («Փասիս գետի երկարությամբ») բառացի ճիշտ լինելով հանդերձ, մեր կարծիքով, չի բխում ամբողջ կոնտեքստից, որտեղ չի ասված, թե հելլենները նախապես հասել էին գետի եզերքը, որից հետո միայն ճանաչ ստիպված կլինեին գնալ գետի երկարությամբ: Այդպիսով, ոչ ճիշտ թարգմանության հիման վրա Հ. Մանանդյանը փորձել է վերանայել 10.000 հելլենների նահանջի ճանապարհը և սխալ է որոշել Գյունդիսա քաղաքի տեղը:

29. Հույն վարձկաններն իրենց նահանջի ճանապարհին երկու անգամ են հանդիպում խալկոսներին: Ստացվում է, որ խալկոսները ապրելիս են եղել երկու տարբեր մարզերում, երկու տարբեր ցեղախմբերով, Պարիսպոս լեռան փեշերին և Սև ծովի ափին՝ մոսիսկոսներին ու տիբարեներին մինչև: Մերձսևծովյան խալկոսները հայտնի էին իրենց մետաղագործությանը. ցեղի անունն իսկ՝ γάλαψ, հունարեն նշանակում է պողպատ: Մերձսևծովյան խալ-

կոսները հաստատված են եղել Ամիսոսի և Տրապեզունտի միջև, ըստ Քսենոփոնի՝ Կոտյու-ոսա (այժմ Օրդու) քաղաքից արևելք: Քսենոփոնը նրանց համարում է ոչ մեծաթիվ. և մշում, որ նրանք զբաղվում էին մետաղագործությամբ: Մինչդեռ խոսելով լեռնաբնակ խալկոսների մասին, հույն մատենագիրը ընդգծում է նրանց ուսումնականությունը և նրանց վերաբերումը բնավորության բոլորովին այլ գծեր: Մ. Ի. Մաքսիմովյան (Анабасис, էջ 273, ծանոթ. 25) նշում է, որ հարևան մարզերում իրարից բոլորովին այլ կենցաղ ու կացութան ունեցող, սայց նույն անունը կրող երկու ցեղերի գոյությունը պիտի բացատրել կամ Քսենոփոնի տրվյալների անճշտությամբ, կամ էլ պիտի ենթադրել, որ խալկոսները մերձսևծովյան հարավ-արևելյան ափերի բնիկներն էին, որոնք մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին մասամբ նվաճվել են Փոքր Ասիայի հարավային մարզերից եկած ցեղերի կողմից: Խալկոսների մի մասը այդ ժամանակի ընթացքում յուրացնում է այլ բարքեր ու սովորություններ:

30. Տատխները լեռնային ցեղեր են, որոնք Քսենոփոնի ծանանակ ապրել են Հարպասոս գետի ակունքների շրջանում: Աստուրական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Դասեներ, իսկ ուրարտական արձանագրություններում՝ Դիասուխի երկիրը: Սա իրավամբ ձուլանցվում է տատխների երկրի հետ: Ուրարտական թագավորները (Մենուա, Արգիշտի, Փարգուրի) երկար պատերազմներ են մղել տատխների դեմ և հարկադրել նրանց վճարել ռոտը ուկով, արծաթով, մեղրով և անասուններով (Б. Е. Пиотровский, О проихождении армянского народа, Ереван, 1946, էջ 8; П. Н. Ушаков, К походу урартийцев в Закавказье, ВДИ, 1946, № 2, էջ 32; Г. А. Меликшвили, Дияухи, ВДИ, 1950, № 4, էջ 26—42): Տատխների անունից ծագել է պատմական Հայաստանի «Տայք» գավառի անունը (Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 72):

31. Սովորաբար փասիսներ են կոչվել Փասիս գետի (այժմ՝ Ռիոնի) ավազանում ապրող ցեղերը: Բայց «Անաբասիս»-ի տվյալ հատվածում հիշատակված փասիսները, հավանաբար, վերին Արաքսի շուրջն ապրող ցեղեր են եղել: Փասիսների անունից էլ ծագել է պատմական Հայաստանի հայտնի գավառի անունը (նույն տեղում):

32. Բնագրում՝ ἄρατοι. նշանակում է հավասարներ, նմաններ: Այսպես էին կոչվում Պարսուպում քաղաքային համայնքի լիիրավ ազատ անդամները:

33. Քսենոփոնը իր «Լակոնական պոլիտեյա» երկում (II, 6) պատմում է, թե Սպարտայում սպարտանները վարժեցվում էին գողության, որպեսզի նրանք սովի ժամանակ չտառապեին: Սակայն գողության վրա բռնված պատանուն պատժում էին:

34. Այստեղ Խելրիստիսն ակնարկում է աթենական համայնքի պաշտոնատար անձանց քննաքննությունը և, որպես սպարտացի, ծաղրում է աթենական դեմոկրատական կարգերը, սխաշմանակ ակնարկում Քսենոփոնի բարձր հասարակական խալկին պատկանելի:

35. Բնագրում՝ ἐπιτήρ. այսպես էր կոչվում սպարտացիների օգտագործած մանգաղանկ Փոքր դանակը:

36. «Անաբասիս»-ի ձեռագրերում 5-ի փոխարեն հանդիպում է 15, որը 9. Գեմոլը և 10-րդներ համարում են ոչ ճիշտ: Հ. Մանանդյանը ևս (Քննական տեսություն, հ. Ա, էջ 393) թարգմանել է 15, որը պիտի համարել սխալ: Քսենոփոնը պատմում է, որ խալկոսներն անգլիկները մեկ ծայր ունեին. նա, հավանաբար, նշում է այս փաստը այն պատճառով, որ հույների անգլիկների ներքևի մասը ևս սրածայր էր, որպեսզի հանգստի ժամին այն հեշտությամբ ճողը խրեին:

37. Բնագրում՝ πόλισμα (հոգն.՝ πόλισματα), որը նշանակում է ոչ մեծ քաղաք, իսկ մեծ



- 6. Տրիակոնտորոն՝ 80 թիակ ունեցող ռազմական նավ:
- 7. Քսենոփոնի այս խոսքերից կարելի է հետևեցնել, թե հելլենները մինչ այդ ամառացրեցին այդ ամբողջ շրջապատը և արդեն հնարավոր չէր մտիկ տեղերում պարեն նարել:
- 8. Մ. Ի. Մաքսիմովան դրիվներին համարում է կոլխերին ցեղակից, որոնք ապրում էին Տրապեզունտի մերձակա լեռներում (M. И. Максимова. Местное население Юго-восточного Причерноморья по «Анабасису» Ксенофонта, ВДИ, 1951, № 1, էջ 250—262):
- 9. Դահպանված ձեռագրերում 2000 մարդ: Գ. Գեմոլլը ուղղում է 1000 մարդ: Այժմ բուրմ ընդունում են այդ ուղղումը:
- 10. Էմիալիոս՝ բառացի նշանակում է «մարտական»: Այդ մականունը տրվում էր ռազմի աստված Արեսին:
- 11. Հունարեն «մյուսոս» (μυσοσ) բառը նշանակում է «մյուսիացի» և միաժամանակ կարող է համարվել նաև մյուսիացու անձնական անուն. ինչպես, օրինակ, հայի անունը կարող է լինել Արմեն:
- 12. Կերասունտ քաղաքը հին հունական գաղութ էր Տրապեզունտ քաղաքից արևմուտք: Այժմ էլ Սև ծովի հարավային ափին կա նույնանուն քաղաք, սակայն, համավարար, ոչ հին քաղաքի վայրում:
- 13. Հին Հունաստանում աստվածներին զոհաբերություն անելու մի ձևն էլ աստծո կամ նրա տաճարին նվիրաբերված տասանորդն էր, որը հելլենները մասնահանում էին իրենց շահույթներից, պատերազմական ավարներից և այլն: Հայ մատենագրության տվյալներից կարելի է հետևեցնել, որ հին Հայաստանում ևս ընդունված է եղել տաճարներին տասանորդ, նվիրաբերելու սովորությունը, որը հետագայում քրիստոնեության ընդունման հետ միասին անցնում է քրիստոնեական եկեղեցուն:
- 14. «Անաբասիս»-ի հաջորդ հատվածներում, մինչև IV գլուխը, Քսենոփոնը ընդմիջելով իր շարադրանքը, երկրորդ անգամ կատարում է ինքնակենսագրական շեղում:
- 15. Հին Հունաստանի քաղաք-պետությունները, այդ թվում նաև Աթենքը, իրենց հատուկ գանձատուն ունեին համահունակական դելփյան սրբավայրում: Այնտեղ կենտրոնացվում և պահպանվում էին աթենական պետության, ինչպես նաև առանձին քաղաքացիների կողմից Ապոլլոնին նվիրաբերված պարզևները: Այդ գանձատունը, որը մարմարե ոչ մեծ տաճար էր. կառուցվել էր 520 թվականին:
- 16. Ագեսիլատը 4-րդ դարի սկզբի սպարտական, նաև համահունակական քաղաքական ու ռազմական գործիչ էր, որը 399 թ. պայքար սկսեց Դարսիլաստանի դեմ և հաղթեց Տրասպեդանի գլխավորած զորքերին: Հետագայում նա մի շարք հաղթական պատերազմներ մղեց պարսիկների դեմ Փոքր Ասիայում:
- 17. Այդ արշավանքի հետևանքը եղավ Կորոնեայի նախատմարտը 394 թվականին, որից մասնակցել էր նաև Քսենոփոնը: Ծակատամարտն ավարտվեց սպարտացիների հաղթանակով Բեոլոտիայի, Կորնթոսի և Մակեդոնիայի միացյալ ուժերի դեմ:
- 18. Ետկորոս (επιχορος) կոչվում էր տաճարի վերահսկիչը:
- 19. Աթենքի քաղաքացի Քսենոփոնը սպարտական զորքում ծառայելու, ինչպես նաև Կյուրոսի արշավանքին մասնակցած լինելու համար Աթենքի համայնքի կողմից դատապարտվեց ցմահ արտաքսման և նրա ունեցվածքը բռնագրավվեց: 380-ական թվականներին նա, հեռանալով հասարակական աշխատանքներից, հաստատվեց սպարտացիների կողմից իրեն տրամադրված կավածքում, որը գտնվում էր Սիկլյուսում՝ Օլիմպիայի մոտ: Այնտեղ էլ նա շարադրել է իր «Անաբասիսը»:

- 20. Օլիմպիայում, որտեղ գտնվում էր Ջևսի հայտնի տաճարներից մեկը, ամեն չորս տարին մեկ անգամ տեղի էին ունենում համահունակական տոնակատարություններ և մրցումներ: Այդ օրերին մրցումները դիտելու համար հունական բոլոր քաղաքներից այստեղ էին գալիս Կանդիսառեսներ և ուխտավորներ:
- 21. Քսենոփոնի այս նկարագրությունից հետևում է, որ խրախուսանքի մասնակիցները ռոմաիսմության ժամանակ սնվում էին տաճարի միջոցներով:
- 22. Եփեսոսում գտնվող Արտեմիսի տաճարը հունական ամենահայտնի ճարտարապետական կոթողներից մեկն էր: Տաճարի ավերակներն այժմ էլ մեծ հիացմունք են պատճառում այցելուներին: Արտեմիսի պաշտամունքը լայն տարածում ուներ ոչ միայն հույների, այլև Ֆոքլանդիական ժողովուրդների, ինչպես նաև պարսիկների մոտ: Մ. Խորենացու վկայություններից հետևում է, որ այն մուտք էր գործել նաև Հալաստան:
- 23. Կոթող (բնագրում՝ στήλη) — այսպիսիք քարից կամ բրոնզից կանգնեցվում էին դամբարանների վրա, տաճարների մոտ և այլ կառույցների տառ: Այդ կոթողների վրա սովորաբար լինում էին արձանագրություններ և բարձրաքանդակներ:
- 24. Մոսսինդյկներ (μοσσοινδοί) — հունարեն բառացի նշանակում է փայտե կառույցներում (μοσσοίνας) ապրողներ: Բառը կազմված է հունարենի բառաբարդության կանոնների համաձայն: Թերևս սա տեղական տերմինի՝ հույների կողմից արված ժողովրդական ստուգաբանություն է: Ստրաբոնը նույն այդ ցեղերին անվանում է նորից հունարեն «հեպտակոնտներ» բառով, որը նշանակում է յոթ գյուղերում ապրողներ: Մոսսինդյկների մասին հետաքրքիր դիտողություններ ունի Մ. Ի. Մաքսիմովան հարավ-արևելյան Սև ծովի ափի հնագույն ցեղերին նվիրված իր հոդվածում (M. И. Максимова. Местное население юго-восточного Причерноморья по «Анабасису» Ксенофонта, ВДИ, 1951, № 1): Մոսսինդյկներին հիշատակում են մի շարք հնագույն մատենագիրներ, սկսած Հեկատեյոս Միլետացուց: Այդ ցեղերը ապրելիս և՛ եղել Կերասունտից արևմուտք, մերձափնյա անտառափստ լեռներում:
- 25. Բնագրում՝ πρόβουος որ նշանակում է՝ հյուրեր ընդունող:
- 26. Հունական դասական թատրոնում դերակատարի խաղը իրենց խմբերով լրացնում էին խորոսները, ժամանակակից հասկացողությամբ՝ երգչախմբերը: Այդ խորոսները ներկայացնում ժամանակ օրքեստրայում (բենսիֆոնային) տեղ էին զբաղեցնում հատուկ դասադրությամբ: Բաժանվելով երկու խմբի, խորոսի անդամները միաշար կանգնում էին իրար դիմաց և փոխիփոխ կատարում իրենց բաժին մասը:
- 27. Գ. Գեմոլլը ձեռագրի πρόβουος (բուլոս) բառը կարդում է πρόβουος և թարգմանում՝ ամբուսությունը այրելով, լքեցին:
- 28. Ամֆորա — երկունկանի կավե մեծ սափոր:
- 29. Այս վայրերում կատարվող դրիմի որսի մասին խոսում է նաև Ստրաբոնը (Strabo, XII, 2, 19):
- 30. Բնագրում՝ χίρσα πλασία որը բառացի նշանակում է «տափակ ընկույզներ»:
- 31. Արանք, բառ ետևույթին, պատկանում էին այն խալցոնների ցեղախմբերին, որոնց Գրկով նախապես անցել էին հելլեն վարձկանները (տես Anab. IV, VII, 15):
- 32. Տիրաբեները բնակվում էին Սև ծովի մերձափնյա շրջանում՝ մոսսինդյկներից արևմուտք: Հերոդոտոսի վկայությամբ (III, 94), տիրաբեների երկիրը Դարեն I-ի ժամանակ շեղվել էր սպարսկական պետության 19-րդ սատրապության մեջ: Բայց Քսենոփոնի վկայություններից հետևում է, որ նրանք ևս, իրենց հարևան մյուս ցեղերի (մոսսինդյկներ, կոլխեր, խալցոններ և այլն) նման ինքնուրույնություն էին ձեռք բերել: Այս հանգամանքը պիտի

վերագրել մի կողմից Աքեմենյանների կենտրոնական իշխանության թուլացման, մյուս կողմից լեոնային տեղանքի անմատչելիության և բնակիչների ռազմատենչության: Ժամանակակից ուսումնասիրողները տիրաբեռներին նույնացնում են սելապար արձանագրություններում հիշատակված տարավների հզոր ցեղերի հետ: Տիրաբեռների մասին տես՝ *И. Д. Джавахишвили, Основные историко-этнологические проблемы истории Грузии, Кавказа и Ближнего Востока древнейшей эпохи, ВДИ, 1939, № 4; В. А. Куфтин. К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, Вест. Муз. Грузии, XII, 9. 1941:*

33. Կոտլուորա քաղաքի ճշգրիտ տեղը դեռևս հայտնի չէ: Ենթադրում են, որ այն գրտնդում էր ժամանակակից Օրդու բնակավայրի տեղում (*W. Hamilton, Researches in Asia Minor, Pontus and Armenia, I, London, 1842, էջ 251*): Մ. թ. շեմին Կոտլուորան արդեն կորցրել էր իր նշանակությունը և վերածվել էր ոչ մեծ գյուղի (*Strabo, XII, C. 548*):

34. Փակագծերի մեջ առնված այս հատվածը ևս հրատարակիչները համարում են հետագայի հավելում:

35. Հունական խոշոր սրբավայրերի տոնախմբություններում տեղի էին ունենում հանդիսավոր երթեր (*περιπαι*): Այդ երթերին մասնակցող մարդկանց թափորը տանար էր տանում աստվածների արձանները և սրբանվեր ընծաներ:

36. Պափլագոնիան գրավում էր կենտրոնական Փոքր Ասիայի հյուսիսային մասը: Պափլագոնացիները լայն ինքնավարություն էին վայելում պարսկական տերության կազմում և ունեին իրենց ցեղակից առաջնորդը: Պափլագոնացիները Քսենոփոնի ժամանակ արդեն իրենց իշխանությունը տարածել էին դեպի արևելք, գրավելով Կասպադովկիայի հյուսիսային մասը:

37. Մինոս—քաղաք Փոքր Ասիայի հյուսիսային ծովափին, որը, համաձայն հունական ավանդության, հիմնել էին միլետացիները մ. թ. ա. 8-րդ դարում: Այն շուտով դարձավ հեղինակյալ խոշորագույն քաղաք Ան ծովի հարավային ափերին:

38. Կորյուլաս: Պափլագոնացիների առաջնորդը: Քսենոփոնի վկայությամբ (*Anab., I, III, 5*) Կյուրոսի զորքերի թվում կար նաև 1000 հեծյալ պափլագոնացի. ուստի պիտի ենթադրել, որ Կորյուլասը մինչ այդ դաշնակից էր Արտաքսերքսեսի հակառակորդների հետ:

39. Այստեղ ակնարկությունը պափլագոնացիների առաջնորդ Կորյուլասի մասին է:

40. Պոնտական Հերակլեան Ան ծովի հարավային ափին գտնվող հունական խոշորագույն քաղաքներից էր: Գտնվում էր այժմյան Էրեյլի («Հերակլեան» անվան աղավաղված ձևը) քաղաքի տեղում:

41. Տես՝ *Anab., I, VII, 18:*

42. Կիզիկոսը հելլենական հայտնի քաղաք էր Պրոպոնտիսում (այժմյան Մարմարա ծովի ափին): Կիզիկյան ոսկե դրամը հավասար էր պարսկական 1 1/2 դահեկանին:

43. Փառնաքաղաք Փոյոզիայի և հյութանիայի պարսիկ ատորապն էր:

44. Դերկլյուիդասը Սպարտայի հայտնի զորավարներից էր: Նա մասնակցել էր Պելոպոնեսյան պատերազմին: Հետագայում այս 10 հազար հելլեն վարձկանները ծառայեցին նրա հրամանատարության տակ: Այստեղ ակնարկված արշավանքը տեղի է ունեցել 416 թ.:

45. Փասիանները Կոլխիդայում ապրող ցեղեր էին:

46. Այետեքը առասպելական անձնավորություն է: Հին հունական գրույցների համաձայն, նա Արեգակի և Դերսեի որդին էր և հայտնի կախարդ Կիրկեի եղբայրը (*Ոդիսական, X,*

135—139): Արգոնավորդների արշավանքի հետ կապված առասպելում նա հիշատակված է որպես Կոլխիդայի թագավոր և Մեդեայի հայր:

47. Ագորանոնոս—շուկայի վերահսկիչ հունական քաղաքներում:

48. Հելլեններն անպայման հատուկ ծիսակատարությամբ հրկիզում էին իրենց հարագատի դիակը: Դիակն անթաղ թողնել նշանակում էր սրբապղծություն և մեծագույն անպատվություն մեռնողի հասցեին: Հելլենները հավատում էին, որ անթաղ մնալու դեպքում մեռածի հոգին չէր կարող հանգիստ մտնել Հադեսի սահմաններից ներս (հմտո. «Ոդիսական», III, 265: *Sophocles, Antigone*):

49. Հելլենները բանակցությունների համար գնացող դեսպաններին առհասարակ համարում էին անձեռնմխելի անձնավորություն:

50. Հելլենների սովորության համաձայն, բանագնաց դեսպանները կրում էին հատուկ մական, տարբերանշաններով: Այդ մականի վերին ծայրը զարդարված էր լինում գույզ օձի քանդակով: Այսպիսի մական կրողը անձեռնմխելի անձ էր համարվում:

51. Քսենոփոնն այստեղ նկատի ունի Հելլադան:

52. Հրատարակիչները նկատում են, որ այստեղ ձեռագիրն աղավաղված է:

53. Թիավարողների վերակացուն (բնագրում՝ *περιπεσις*) նալի առաջամասում նստած, ազդանշան էր տալիս թիավարումն սկսելու և վերջացնելու համար. միաժամանակ նա հետևում էր, որպեսզի բոլորը համաչափ թիավարեն:

54. Հույների մոտ քվեարկությունը կատարվում էր փոքրիկ քարերի կամ խեցիկների միջոցով, որոնք քվեարկողները գցում էին քվեատուփի մեջ:

Գ Ի Բ Զ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

1. Միտակա—թրակիական ռազմական երգ, որը ստեղծվել էր Թրակիայի թագավոր Միտակասի պատվին. սա գահակալել էր մ. թ. ա. 5-րդ դարի երկրորդ կեսին:

2. Էնիանցիները և մագնեսիացիները Թեսսալիայում ապրող ցեղամբեր էին: Մագնեսիա կոչվում էր Թեսսալիայի լեոնային շրջաններից մեկը: Այն չափի շփոթել փոքրասիական Մագնեսիա քաղաքի հետ:

3. Կարպայա (*καρπαια*) կոչված պարը ուրիշ ոչ մի տեղ չի հիշատակված: Բառն առաջացել է, հավանաբար, հունարեն *καρπος* (նշանակում է՝ պտուղ, բերք) արմատից: Ըստ երեվոյթին կարպայա պարը կապված էր բերքահավաքի հետ և նշանակում էր «բերք հավաքելու պար»:

4. Պյուրիքե (*πυρρίκη*) կոչված պարը Հելլադայում մեծապես տարածված ռազմական պար էր, որը կատարում էին սպառազինված: Այդ պարը հատկապես սիրելի էր Սպարտայում, որտեղ այն սովորեցնում էին երեխաներին հինգ տարեկան հասակից սկսած:

5. Մեդիմնոս՝ տարողության չափ, որն օգտագործում էին հին Հունաստանում: Ատտիկյան մեդիմնոսը հավասար էր մոտավորապես 52,5 լիտրի:

6. Մափորը (*μαφορον*) կապել աման էր 20 լիտր տարողությամբ:

7. Տրիերա (տես Ա գրքի 38 ծանոթությունը):

8. Անաքսիբիոսի մասին տես գիրք Ե, գլ. 3—4:

9. Հունաստանում լայնորեն տարածված էր հավթերի թռիչքի և ցրանց կոնչի հիման վրա գուշակություններ կատարելը:



10. Այստեղ Քսենոփոնը ակնարկում է Խելրիստոսին: Այդ ժամանակ, ինչպես վերևում գրել ենք (տե՛ս Գ գրքի 35 ծանոթ.), մեծ էր լակեդեմոնացիների հեղինակությունը ամբողջ հունական աշխարհում, ուստի և Քսենոփոնն անթույլատրելի է համարում սպարտացի ռազմիկի ներկայության դեպքում ոչ սպարտացուն հրամանատար ընտրելը:

11. Այստեղ նկատի է առնված Պերոպոնետայան պատերազմի վերջում (404 թ.) Աթենքի շահագլխունը սպարտացիների կողմից:

12. Հելլենները խնջույքի ժամանակ ընտրում էին դեկավար, այժմյան հասարակության մեջ թամադա, որը և դեկավարում էր ամբողջ խնջույքը: Բոլոր սեղանակիցները պարտավոր էին ներթափվել նրան և կատարել նրա բոլոր կարգադրությունները:

13. «Արգո» — առասպելական նավ, որով, ըստ հունական ավանդության, կատարվեց Կատարի և հեռավոր ճանապարհորդությունը: «Արգո» նավով ճամփորդել են հունական հերոսները դեպի Կոլխիդա, սակեգեդը ձեռք բերելու համար: Նավի անունով նրանք կոչվել են արգոնավորդներ: Արգոնավորդների առաջնորդ Յասոնի անունով է կոչվել Թերմոզոնես գետից արևելք գտնվող հրվանդանը: Արգոնավորդների առասպելը ավելի հին է, քան Հռոմեական պոեմները: Արգոնավորդների արշավանքը կատարել է հոմերոսյան հերոսներին նախորդած սերունդը: Յասոնի և նրա ուղեկիցների անվան հետ կապված գրույցները առանձին նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի, հատկապես նրա կազմավորման խնդրի հետ կապված մի շարք հարցերի ուսումնասիրման համար:

14. Անկյունավոր փակագծերի մեջ առնված այս հատվածը պահպանվել է «Անաբասիս»-ի ձեռագրերում, սակայն հրատարակիչները այն համարում են հետագա ժամանակների հավելում և իրավացի կերպով նկատում, որ այստեղ հիշատակված աշխարհագրական տեղայունները չեն համապատասխանում իրականությանը: Այսպես, Յասոնի հրվանդանը և Քսենոփոնի, Իրիսի և Հայտուսի գետաբերանները գտնվում են ոչ թե Սիևոպոլից արևմուտք, այլ արևելք: Միայն Պարթենոսի գետաբերանը գտնվում է Սիևոպոլիսի և Հերակլեայի միջև:

15. Մարիանդինները Փոքր Ասիայի այս շրջանի հնագույն բնակիչներից են եղել: Կրթական քաղաքի հիմնադրումից հետո մարիանդիններն ընկնում են Մեգարայից ելած հալկյան գաղութարարների գերիշխանության տակ և դառնում նրանց ստրուկները:

16. Ըստ հունական դիցաբանության, Հերակլեսը 12 գերմարդկային վերագործություններ կատարեց: Դրանցից մեկն էլ այն էր, որ նա կարողացավ իջնել ստորերկրյա աշխարհ Հադեսի թագավորության սահմաններից ներս և առևանգել Հադեսի անքուն սառեակ կրեպիլանի շուն Կերբերոսին:

17. Քսենոփոնի ձեռագրի այս հատվածը տարբեր հրատարակիչներ տարբեր ձևով են ընթերցել: Մեր ներկա թարգմանության ժամանակ մենք հետևել ենք Carleton Brownson-ի հրատարակությանը, որը լույս է տեսել Լոնդոնում Loeb Classical Library շարքով:

18. Նեոնը Խելրիստոսի տեղակալն էր:

19. Կառավարիչ (բնագրում՝ ἀρχιστράτης): Այս տիտղոսը կրում էր դուռնադիրների հիմնած գաղութներում Սպարտայի կողմից նշանակված կառավարիչը:

20. Այս Թրակիան գտնվում էր Փոքր Ասիայի թերակղզում. այն չի կարելի շփոթել հուսկանյան թերակղզում գտնվող Թրակիայի հետ:

21. Անկյունավոր փակագծերի մեջ առնված այս հատվածը իրավամբ համարվել է Քսենոփոնի հավելում, ուստի և «Անաբասիս»-ի մի շարք հրատարակիչներ այն զանց են առնում:

22. «Անաբասիս»-ի այս հատվածում հետագա շարադրանքի հաջորդականությունը հրատարակիչների մոտ կասկածանք է հարուցել, որի հետևանքով էլ նրանցից ոմանք պարբեր

ությունների տեղաշարժ են կատարել: Մեր թարգմանության մեջ անկյունավոր փակագծերով ցույց է տրված սրբերությունների՝ հրատարակիչների կողմից առաջարկված նոր հարակալումը, իսկ կլոր փակագծերի մեջ նշված է պարբերությունների՝ Քսենոփոնի ձեռագրերում պահպանված համարակալումը:

23. Այստեղ Քսենոփոնի ակնարկությունը նախորդ հատվածներից մեկում (գիրք 2, գլ. II, 9—12) նկարագրված դեպքերի մասին է:

24. Բնագրում՝ ἄστυα, որը բառացի նշանակում է «քերան»:

25. Բնագրում՝ πόλις: Այս բառի մասին տես Գ գրքի 37 ծանոթությունը:

26. Հուշադամբարան (բնագրում՝ ξενόδοχος, որը բառացի նշանակում է «դատարան դամբարան»): Այսպիսի դամբարաններ կառուցում էին այն դեպքում, երբ հնարավոր չէր լինում սպանվածի դիակը գտնել: Այդ դամբարանների ստաց նա հելլենները կատարում էին ընդունված բոլոր ծիսակատարությունները:

27. Փառնաբազուսի մասին տես «Անաբասիս», գիրք Ե, գլ. VI, 24: Հելլենները, քսան դեռ առաջանում էին ծովափով, գործ էին ունենում ինքնավար կամ արարիկների անվանական գերիշխանության տակ գտնվող ցեղերի, ինչպես նաև հելլենական ազատ քաղաքների հետ: Մտնելով Բյուրթանիա, հելլենները նորից բախվեցին Փառնաբազուսի պարսկական գործերի հետ: Փառնաբազուսի նպատակն էր փակել հելլենների ճանապարհը դեպի պարսկական Փոյուզիա սատրապությունը:

28. Այստեղ խոսքն այն մասին է, որը նկարագրված էր նախորդ հատվածներից մեկում (գիրք 2, գլ. IV, 3):

29. Թվում է, թե անտիկ աշխարհի ռազմական տակտիկայի պատմության մեջ սա մեզ ձեռքով առաջին դեպքն է, երբ ճակատամարտի ժամանակ պահեստային ուժեր են օգտագործվում:

30. Այստեղ մեր թարգմանության ընթացքում հետևել ենք «Loeb Classical Library» հրատարակությանը լույս տեսած «Անաբասիս»-ի բնագրին: Որիչ հրատարակություններում (9-րդ պարբերության վերջին նախադասությունը տեղադրված է պարբերության սկզբում):

31. Ռազմական աղաղակներով (բնագրում՝ ὁλοκλήτως, որը բառացի նշանակում է «ալիս-ալիս գնչելով»): Հույները հարձակված էին գնում բոլորը միասին այդպիսի աղաղակ տրակելով:

32. Բնագրի οὐδέτις բառը մենք թարգմանեցինք «չնորձին»: Οὐδέτις բառացի ունի երկու նշանակություն՝ «ընտանիքի անդամ» և «ստրուկ, ծառա»: Մենք կարծում ենք, որ հայ հին մատենագրության մեջ հանդիպող «ընդոձին» բառն այս դեպքում ավելի լավ է արտահայտում Քսենոփոնի οὐδέτις բառի իմաստը:

33. Ինչպես այլ առիթով գրել ենք, Կլեանդրոսը լակեդեմոնացիների կողմից նշանակված կառավարիչ էր Բյուզանդիոն քաղաքում:

34. Այստեղ «Անաբասիս»-ի ձեռագիրը վնասված է:

35. «Ձույց աստվածներ» ասելով այստեղ նկատի են առնված Կաստոր և Պոլլուկես աստվածները, որոնք հունական դիցաբանության մեջ հայտնի են դիոսկուրոսներ անունով: Ինչպես անունն է ցույց տալիս, նրանք համարվում էին Ջևաի որդիներ (Իիոս = Ջևա անվան սեր. հողմը. իսկ «կուրոս» նշանակում է տղա, որդի): Նրանք հիմնականում համարվում էին Սպարտայի հովանավոր աստվածներ, ուստի և նրանց պաշտամունքի գլխավոր կենտրոնը Լակոնիան էր. սակայն նրանց պաշտամունքը տարածված էր նաև ամբողջ հունական աշխարհում:

նում: Դիցաբանության մեջ գովաբանվում է նրանց առաքինությունը, եղբայրասիրությունը, նվիրվածությունը: Նրանք համարվում էին լույսի և բարության աստվածներ, մարդկանց օգնականներ և առավել չափով մեծարանքի էին արժանանում ծովագնացների մոտ:

56. Այսինքն՝ Բյուզանդիոն քաղաքը:

57. Այս Բյուզանդիոն քաղաքը գտնվում էր առիական ափին՝ Բյուզանդիոնի դիմաց:

Գ Ի Ր Գ Յ Ո Թ Ե Ր Ո Ր Գ

1. Թրակիայի թագավոր Ալթեսի կենսագրությունը Քսենոփոնը տալիս է այս գրքի հետագա հատվածներում:

2. Լակեդեմոնացի պաշտոնյա, որի անունը հայտնի էր դեռևս Պելոպոննեսյան պատերազմից: Այստեղ նա Անաքսիբիոսի օգնականն է:

3. Կյուսիակոսը սպարտական զորավար էր, որն այդ ժամանակ պատերազմական գործողություններ էր վարում թրակիացիների դեմ:

4. Սրբազան կոչվող այս լեռը գտնվում էր հարավային Թրակիայում, Պրոպոնտիսի հյուսիսային ափին: Հելլենական զորքի նպատակն էր հասնել այժմյան Գելիպոլո թերակղզիին, որի համար կար երկու ճանապարհ, առաջինը՝ դժվար, բայց կարճ, իսկ երկրորդը՝ երկար, բայց դյուրին:

5. Թրակիական անունը կրող հրապարակը գտնվում էր Բյուզանդիոն քաղաքի կենտրոնական մասում:

6. Այստեղ Քսենոփոնը նկատի ունի Սպարտայի և Աթենքի միջև 431—404 թթ. տեղի ունեցած պատերազմը, որը պատմության մեջ հայտնի է Պելոպոննեսյան պատերազմ անունով և որն ավարտվեց Սպարտայի լիակատար հաղթությամբ:

7. Կոյրատաղաս թերեացին իր ժամանակի համար բնորոշ թափառական զորականներից էր: Նա պատերազմը դիտում է որպես արհեստ և պատրաստ է ամեն կովի մասնակցել, միայն թե այդ բանը իր համար շահավետ լինի: Նախկինում նա մասնակցել էր Պելոպոննեսյան պատերազմին որպես Կենաբոսի օգնականը և գերի էր ընկել աթենացիների ձեռքը (Xenoph., Hellen., I, III, 15—22): Այս հատվածում Քսենոփոնը հեզանքով է պատմում հելլենական զորքի հրամանատարությունը վերցնելու նպատակով նրա կատարած անհաջող փորձի մասին:

8. Բնագրի Թյոս (Էթոնոս) բառը մենք թարգմանել ենք «ազգ»:

9. Սա հավանաբար այն եռանկյունի թերակղզին է, որը ձգվում է Սև ծովի, Բուսպոլի և Պրոպոնտիսի միջև:

10. Նանը այսպես մտածելու հիմքեր ուներ, քանի որ բոլոր զորավարների մեջ նրան լակեդեմոնացին ինքն էր:

11. Ծովակալը (ναυαρχος) ընտրվում էր ամեն ամառ, մի տարի ժամանակով. այդ պաշտոնում չէր կարելի վերընտրել նույն մարդուն:

12. Այս մասին տես «Անաբասիս»-ի գիրք է, գլ. I, 2:

13. Պերինթոսը գտնվում էր Պրոպոնտիսի եվրոպական ափին:

14. Քերսոնեսոս թերակղզին (հունարեն Χερσοννησος ինքնին նշանակում է թերակղզի) մայր ցամաքի ձեռ հաղորդակցվում էր նեղ մի պարանոցով, որը գրավելու դեպքում հեշտությամբ կարելի էր զորքը Քերսոնեսոսում պահել պաշարված վիճակում:

15. Թյունները (բնագրում՝ Թյուն) թրակիական ցեղեր էին, հավանաբար բյուզանդացիների ցեղակից:

16. Ալթեսի նախնի Տեոեսի և աթենացիների ցեղակցության մասին ավանդությունը հիշատակում է Թուկիդիդեսը (II, 23, 2):

17. Մելանդիոսները, թյունները, տրակիացիները և օդրյուսները թրակիական ցեղեր էին. սրանց մեջ ուժեղագույնը օդրյուսներն էին, որոնք և իրենց էին հպատակեցրել թրակիական մյուս ցեղերին և հիմնել առանձին թագավորություն:

18. Այստեղ Քսենոփոնը նկատի ունի Արիստարքոսին:

19. Զինվորների և հրամանատարների վարձատրման ընդունված կարգը նկարագրված է նախորդ հատվածում: Այդ կարգի համաձայն վաշտապետը ստանում է կրկնակի վարձ, քան զինվորը, իսկ զորավարը կրկնակի վարձ քան վաշտապետը:

20. Հունական Մարոնեսա քաղաքը գտնվում էր Թրակիայում:

21. Տուն վերադառնալու հանգամանքը հատուկ նշանակություն ուներ Տիմասիոնի համար, քանի որ նա վտարանդի էր իր հայրենի քաղաքից:

22. Այստեղ, հավանաբար, ակնարկությունը վերաբերում է աթենական հայտնի քաղաքական գործիչ Ալկիբիադեսին:

23. Խոյնիկս կոչվող չափի մասին տես Ա գիրք, 61 ծանոթ.:

24. Բյուզանդական բառարանագիր Սուիդասը վկայում է, որ թրակիացիները սովորություն են ունեցել որևէ կենաց խմելիս եղջյուրի մեջ մնացած վերջին կաթիլները շաղ տալ հյուրի զգեստների վրա:

25. Մագադիս—լարային երաժշտական գործիք, որը հավանաբար նման էր տավիդին:

26. Այսպես է նկարագրում նաև Հերոդոտոսը Քսերքսեսի արշավանքին մասնակցած թրակիացի զինվորների հագուստը (Herod., VII, 75):

27. Բնագրում՝ Էքստիէս:Գ. Գեմոլլը իր հրատարակության մեջ այն ուղղում է Էքսթիէս (Եվրեացի):

28. Տես «Անաբասիս», գիրք է, գլ. I, 33, ծանոթ. 8:

29. Կորեկակերներ, բնագրում՝ քսելլոքսիոս հունարեն քսելլոք բառից, որ նշանակում է՝ կորեկ:

30. Սալմյուդեսոս երկրամասը համանուն քաղաքով գտնվում էր Սև ծովի արևմտյան ափին (Strabo, VII, 6.1):

31. Ստրաբոնը ևս վկայում է, որ թրակիացիները կողոպտում էին այնտեղ ափ դուրս ընկած նավերը (Strabo, VII, 6.2):

32. Սելյուսբրիս—հունական քաղաք Պերինթոսի և Բյուզանդիոնի միջև՝ Մարմարա ծովի հյուսիսային ափին:

33. Կյուրոսի սպանությունից հետո նրա աստրապությունն անցավ Տիսապիեռնեսին: Մինչ այդ աստրապության սահմաններում գտնվող հունական քաղաքները, օգտվելով Պարսկաստանում ծայր առած զանալալական երկարատևություններից, իրենց հայտարարեցին անկախ: Աստրապ դարձած Տիսապիեռնեսը 400 թ. արշավեց այդ քաղաքների դեմ: Հունական քաղաքներն օգնություն խնդրեցին Սպարտայից: Սպարտացիները պատերազմ հայտարարեցին Տիսապիեռնեսին և հինգհազարանոց զորք ուղարկեցին Եփեսոս, Թիբրոնի հրամանատարությամբ:

34. Այստեղ Քսենոփոնը ակնարկում է հաշտություն կնքելու վերաբերյալ տեղի ունեցած

բանակցությունների ժամանակ Սպետի կատարած խոստումները՝ Քսենոփոնին իբրև սեփականություն քաղաքներ և ամրություններ պարգևելու մասին:

35. Տե՛ս՝ Զ գրքի 35 ծանոթությունը:

36. Խոսքն այստեղ վերաբերում է օղբյուսների կողմից եկած մարդուն, որն ընկերակցում էր Մերոսադեսին:

37. Քսենոփոնի այս ակնարկումից կարելի է հետևցնել, թե հելլեն վարձկանների թիվը 13 հազարից նվազելով արդեն իջել էր 6 հազարի:

38. Տե՛ս է՝ գրքի 19 ծանոթությունը:

39. Լյուկիյոն—Աթենքի հայտնի գիմնասիոնը, որտեղ ուսանել է նաև փիլիսոփա Արիստոտելը:

40. Ջևար պաշտվում էր նաև «Ողորմած» (Μετάρως) անունով: Այս աստուծո պաշտամունքի գլխավոր կենտրոնը Աթենքն էր, որտեղ նրան նվիրված տոնախմբությունների ժամանակ ատառ զոհեր էին մատուցում:

41. Աստվածներին մատուցվող սովորական զոհաբերությունների ժամանակ մորթված անասունի մի փոքր մասը կիզելով նվիրաբերում էին աստծուն, մի մասը տրվում էր զոհաբերության արարողությունը կատարող քրմերին, իսկ մյուս մասը բաժանվում էր տոնախմբության մասնակիցներին: Բայց որոշ դեպքերում, հատկապես ողորմածություն հայցելու նպատակով կատարված զոհաբերությունների ժամանակ, ամբողջ անասունը ողջակիզվում էր:

42. Գ. Գենոլլի հրատարակության մեջ համապատասխանաբար՝ Ատրամիուտեյոն և Կլուդոնիոն:

43. Էրետրիացի Գոնգյուլոսի նույնանուն նախնին վտարված էր Էրետրիայից այն բանի համար, որ նա միջնորդի դեր էր կատարել արքայից արքա Քսերքսեսի և Սպարտայի բասիլև Պավսանիասի միջև, որը մտածում էր Հունաստանը հանձնել պարսիկներին: Այս ծառայության դիմաց Քսերքսեսը նրան ծառանգության իրավունքով պարգևել էր չորս քաղաք Տրովադայում (հմմտ. Բ գրքի, 2 ծանոթությունը):

44. Տե՛ս Բ գրքի 2 ծանոթությունը:

45. Բնագրում՝ *ἑξήκοντα* (տե՛ս Գ գրքի 37 ծանոթ.):

Ց Ա Ն Կ Ե Բ



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արրոզելմես 187  
 Արրոկոմաս 16, 17, 26  
 Ագասիաս ստյունփալացի 63, 65, 85, 102, 103, 113, 141, 142, 149, 156—158, 196  
 Ազեսիլաս 116  
 Ագիաս արկադիացի 53, 58  
 Աթենա 176  
 Ամփիդեմոս 87  
 Ամփիկրատես արենացի 87  
 Ալետոս 129  
 Անաքսիբիոս 110, 139, 141, 157, 161—163, 165, 167, 168  
 Ապոլլոն 10, 60, 115, 116, 194  
 Ապոլլոնիդես 62  
 Առեքսիոն արկադիացի 149, 151, 152  
 Ասիդատես 195, 196  
 Արբակաս 197  
 Արբակես 26  
 Արգո ճալ 142  
 Արիայոս 28, 34, 37, 38, 40, 41, 46—48, 53, 54, 58, 65, 66, 68, 79  
 Արիստարքոս 167, 168, 171, 183, 185  
 Արիստոս քիոսցի 85 101  
 Արիստրիպոս թեսալացի 8, 9, 58  
 Արիստոն արենացի 126  
 Արիստոնիմոս մեթիոբիացի 85, 101—103  
 Արյուստաս 174  
 Արտագերսես 26  
 Արտակամաս 197  
 Արտաոզոս 48, 54  
 Արտապատես 24, 30  
 Արտաքսերքսես 7, 37, 49  
 Արտեմիս 67, 117, եփեսոսյան 115, 116  
 Արտիմաս 197  
 Արտուխաս 89  
 Արքագորաս 87  
 Բասիաս արկադիացի 84, էլիդացի 195  
 Բելեսիս 18, 197  
 Բիոն 195  
 Բոիսկոս թեսալացի 136  
 Գալլիստես 25  
 Գլոս 19, 21, 37, 49  
 Գենափպոս արենացի 174  
 Գոբրիաս 26  
 Գունգյուլոս 195, 196  
 Գորգիաս լեոնտիցացի 56  
 Գորգիոն 195  
 Դամապատոս 196  
 Դարեն 2-րդ 7, 26  
 Դափնագորաս 195  
 Դեմարատոս 37  
 Դեմոկրատես տեմնոսացի 94  
 Դեոնես 197

Վերկայիցան 127  
 Վերսիպարո 111, 141, 156--159  
 Վրսիբնոխոս սպարտացի 108, 159

Նայիբա 11, 13  
 Նայիպեննա ամփիպոլեցի 35, օլիմբացի 178  
 Նվկիդիէն գուշակ 194  
 Նվրիլոքոս լուսիացի (արկադիացի) 88, 103, 165, 187  
 Նվրիմաքոս դարդանցի 126--127  
 Նտոննիկոս 162, 163

Չելարքոս 132  
 Չուս 26, 61, 75, 108, 132--134, 136, 133, 184, 194, Արքա 61, 140, 187, Հյուրընկալ 66, Ողորմած 194, Փրկիչ 29, 66, 154, Օլիմպիական 116

Էնեյաս սոյումփալացի 103  
 Էնիպիոս 29, 113  
 Էսքիննա ակառնանեցի 91, 107

Թարսիպաս 58  
 Թեոգեննա լոկրացի 179  
 Թեոսոմպոս արթենացի 39  
 Թիբրոն լակեդեմոնացի 182, 187, 194, 197  
 Թորաքս բեովտիացի 126, 127, 129

Բասանեննա 196

Լեոն բորիացի 109  
 Լեոնիմոս լակոնիացի 84  
 Լյուկիոս արթենացի 73, 91, 104, սիրակուսացի 36  
 Լյուկոն 127, 142, 143

Խակրիստիոս 17, 38, 40, 54, 65, 70--72, 78--80, 82--84, 86, 88--92, 95--102, 107, 109, 110, 115, 116, 129, 139, 141--146, 149, 150

Կալիմաքոս պատասիացի 85, 102, 103, 142, 143  
 Կերքերոս 142

Կեփիստորոս արթենացի 87  
 Կեփիստիոն 87  
 Կելազարոս 194  
 Կելապենտոս 111  
 Կելանդրոս 143, 150, 155--160, 166, 167  
 Կելանոր արկադիացի (օրքոմենացի) 38, 54, 65, 66, 99, 107, 150, 166, 177, 180, 181  
 Կելարետոս 131  
 Կելարքոս 8--11, 13--16, 18, 22--26, 28, 29, 35--50, 52--56, 65, 66, 70, 73, 116, 127, 141, 144  
 Կլոնիսկոս 162  
 Կլոբոս Մեծ 31  
 Կլոբոս Կրտսեր 7--34, 36--39, 41, 45, 48--52, 54, 55, 57--60, 63, 66, 67, 71, 75, 82, 109, 126, 133, 140, 148, 161, 167  
 Կոյրատադաս թեբեացի 165, 166  
 Կոլոյուլաս 122, 123, 125, 137, 197  
 Կտեսիաս 30

Հադես 142  
 Հեգեսանդրոս 144  
 Հեկիոս 98  
 Հելլաս 195  
 Հեկատոնկլոնոս 121, 123, 124  
 Հերակլէս 108, 125, 142, 154  
 Հիերոնիմոս Էլեացի 63, 149, 165, Էպիթալիացի 179  
 Հոաթիննա 152  
 Հոսպարոս 197

Մաշտադես 170, 180  
 Մարսիաս 10  
 Մեզարյուզոս 116  
 Մեգափեոմենոս 12  
 Մեդես 75  
 Մեդեոս 170, 173, 188, 189  
 Մեդուսադես 161, 167, 169, 187, 189  
 Մենոն թեսալացի 10--13, 19, 20, 22, 25, 28, 38, 40, 48, 53--55, 57, 65  
 Միդաս 11  
 Միթրադատես 54, 71, 72, 74, 197  
 Միլտոկլոթես թրակիացի 41  
 Մյուսոս 115

Նավսիկլիդես 195  
 Նեոն սաթենացի 116, 129, 143, 149--151, 166--168, 170, 171  
 Նիկանդրոս լակոնացի 111  
 Նիկարոս արկադիացի 54, 72  
 Նիկոմաքոս իտեացի 101

Ողիսուս 109

Պասիոն մեզարացի 9, 14, 17  
 Պատեգորաս 27  
 Պարիսատիս 7, 18, 26, 50  
 Պիգրես 11, 21, 28  
 Պելլոթեննա ամփիպոլեցի 99  
 Պլութագորաս լակեդեմոնացի 17  
 Պլուտիաս արկադիացի 152  
 Պոլիգնիկոս 182, 187, 189, 194  
 Պոլիստրատոս 73  
 Պոլյուկրատես արթենացի 97, 168, 170, 187  
 Պոլոս 167  
 Պրոկլէս 37, 40, 196  
 Պրոքսենոս բեովտիացի (թեբեացի) 9, 22, 23, 35, 38, 47, 53--56, 60, 61, 63 65, 116

Սամոլաս սքալացի 126, 152  
 Սատիրոս 11  
 Սիրանոս ամբրակիացի (գուշակ) 27, 126, 128, 149, մակիստիացի 179  
 Սեփրես 144  
 Սյունենեսիս 11--13, 17, 197  
 Սոկրատես արթենացի 60, արալացի 9, 10, 53, 58, 65  
 Սոսիս սիրակուսացի 10  
 Ստակրիդաս սիկիոնացի 79  
 Սոփալենտոս սոյումփալացի (արկադիացի) 9, 10, 54, 94, 115, 133, 152  
 Սպիթրիդատես 152

Սարատոկլէս կրետացի 88  
 Սևթես 111, 161, 162, 166--187, 189, 190, 192--194, 197

Տամոս 12, 17, 37  
 Տերես օրքոսացի 169, 180  
 Տիմասիոն դարդանացի 65, 71, 126--129, 141, 146, 147, 154, 166, 173, 174, 177, 180, 181  
 Տիմեսիթեսոս տրապեզունցի 117  
 Տիսասփեոնէս 7--10, 17, 26, 28, 32, 35, 38, 45--50, 52--54, 59, 63, 65, 68, 71, 74--79, 82, 89, 164, 182, 197  
 Տիրիբազոս 93--95, 197  
 Տոլմիդէս Էլեացի 43, 65, 113

Փալիմոս 38--40  
 Փասնաքազոս 127, 150, 152, 155, 161, 167, 168, 197  
 Փիլեսիոս արալացի 65, 115, 127, 133, 165, 166  
 Փոլոնիսկոս 166, 170, 180, 181  
 Փրասիոս արթենացի 152

Փարմիոնոս լակոնացի 182, 187, 189, 194  
 Քասանթիկլէս արալացի 65, 133, 166  
 Քանիսաս պատասիացի (արկադիացի) 7, 9, 11, 14, 18  
 Քանեպիոն 29, 48, 54, 60, 63, 65, 66, 70--72, 78--80, 83--93, 95--100, 102, 104--107, 110--114, 116, 117, 119, 122, 125--130, 133--135, 139--157, 159, 161, 164, 166--183, 187--190, 193--197  
 Քսենքսես 10, 67

Օրոնտաս (պարսիկ) 23, 24, 34  
 Օրոնտաս Արմենիայի սատրապ 47, 54, 75, 81, 89

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

|  |   |
|--|---|
| Աբյուդոս 8   | Բյուրանիացիներ 144, 147, 150, 151, 154, 155, 160, 197 |
| Ադրամյուտիոն 195   | Կանոս 180   |
| Աթենացիներ 55, 67, 100, 116, 140, 143, 164, 170                  | Կյունցիս 104  |
| Աթենք 60, 67, 105, 194   |   |
| Անտանդրոս 195  | Կանա 12   |
| Ապոլլոնիա 196  | Կելտա թրակիական 165, 180                              |
| Ասիա 116, 161, 164, 166—170, 183, 185                            | Կելփի 60, 116, 140                                    |
| Ասորեստանցիներ 196   | Կոլոպներ 10   |
| Ասպենդացիներ 11  | Կրիլներ 111, 112                                      |
| Ասպուրիա 197   |   |
| Արաքիա 20, 197   | Եգիպտացիներ 28, 51                                    |
| Արաքսես 20   | Եգիպտոս 39  |
| Արգոս 87   | Եկրատանա 49, 81                                       |
| Արկադիացիներ 138, 141, 143—145, 147, 148, 174, 183               | Եկրոպա 163, 184                                       |
| Արմենիա 81, 82, 89, 93, 98, արևմտյան 93                          | Եկրսիկյան Պոնտոս 107, 109                             |
| Արմեններ 89, 98  | Եփեսոս 17, 41, 116, 117, 140                          |
| Աքալացիներ 144—147   | Եփրատ 16, 19—21, 27, 28, 47, 82 95                    |
| Աքերուսիաս թերակղզի 142  |   |
|  | Չապսուտա գետ 50, 72                                   |
| Բաբելոն 19, 21, 41, 48, 81, 121, 197                             | Էնիաններ 10, 138                                      |
| Բաբելոնիա 25   | Էոլիս 127   |
| Բևոլտիա 63, 116  | Թափասկոս 19, 20                                       |
| Բիսանթե 171, 180   | Թերեի դաշտ 195  |
| Բյուզանդացիներ 163, 166  | Թեսալիա 9   |
| Բյուզանդիոն 143, 147, 150, 156, 161, 162, 164, 166—169, 171, 180 | Թերմոդոն 125, 142                                     |
|  | Թեքես լեռ 104   |

|  |  |
|--|--|
| Թյումրիոն 11   | Սերասունացիներ 122, 130—133  |
| Թյուններ 169, 170, 177—179   | Վիլիկեցիներ 11—13, 15  |
| Թրակիա 144, 163, 167, 185, 194, սափական 147  | Վիլիկիա 11—13, 17, 60, 197   |
| Թրակիացիներ 8, 10, 14, 55, 137, 138, 144, 145, 147, 166, 173—175, 177—181, 185, 187, 191, 197                            | Սիրտոնիոն 195  |
|  | Սկոզոնա գետ 13   |
|  | Սկոզիկոս 167   |
|  | Սոլլներ 105, 107, 111, 129   |
|  | Սոլլսիդա 107, 115  |
| Իդե լեռ 195  | Սոլոսոս 10   |
| Իկոնիոն 12   | Սոմանիա 196  |
| Իսթմոս 55  | Սոլոսոսներ 197   |
| Իսսոս 13, 17   | Սոտյուորա 121  |
| Իրիս գետ 125, 142  | Սոտյուորացիներ 121—123, 136  |
|  | Սորսոտե 20   |
|  | Սրետացիներ 10, 72, 73, 75, 88, 108, 115  |
| Լակեդեմոն 116  |  |
| Լակեդեմոնացիներ (լակոնացիներ) 55, 60, 116, 140, 141, 143, 156, 157, 159, 164, 166, 170, 182, 183, 186—189, 191, 192, 197 | Նալիսաոնե 196  |
| Լամիասկոս 194, 195   | Նալլոսոս գետ 125, 142  |
| Լամիասկոսցիներ 194   | Նարմենե 139  |
| Լարիսսա 74   | Նարպասոս 103   |
| Լիկաոնացիներ 69  | Նելլադա 10, 14, 15, 18, 40, 44—48, 59, 63, 65, 67, 69, 79, 105, 109, 117, 126—130, 139, 148, 154, 156—159, 165   |
| Լիկանիա 12, 197  | Նելլենցներ 10—12, 14, 17—19, 25—30, 34—38, 40—50, 52—55, 59, 60, 69, 71, 72, 74—96, 101, 103—105, 107, 109, 111, 112, 114, 115, 117—125, 127, 131, 132, 137—139, 142, 144—148, 150—152, 154—156, 161, 165, 167, 172, 173, 175, 177—180, 186— |
| Լյուդիա 10, 31, 81, 196, 197   | Նելլեսպոնտոս 8, 55, 167  |
| Լյուդիացիներ 63  | Նեսպերիտներ 197  |
| Լյուկեյոն 194  | Ներակիլա 125, 141—143, 145, 147, 149, 151  |
| Լյուկոս գետ 142  | Ներակիլացիներ 126—128, 142, 144, 150   |
|  | Նյուրկանցիներ 196  |
| Խաղդայներ 89, 122  | 188, 194—197   |
| Խալլուբներ 94, 98, 99, 103, 121  | Նոնիա 12, 19, 37, 81   |
| Խալուս գետ 18  | Նոնիական քաղաքներ 8  |
|  | Նոդոսցիներ 73, 75  |
| Վալպե 143—147  |  |
| Վալիկոս գետ 195  | Մագնեսիացիներ 138  |
| Վալնայ քաղաք 50  | Մակրոններ 105, 122   |
| Վասպադոկիա 12, 31, 197   | Մանոնիեացիներ 138  |
| Վաստուլոսի դաշտ 7, 31  | Մասկաս գետ 20  |
| Վալստրոպեդիոն 11   | Մասսիլա 75   |
| Վարդոխներ 81—83, 89, 91—93, 122, 197   |  |
| Վարկուսոս գետ 196  |  |
| Վարսոս գետ 17  |  |
| Վենոբիոնես 83  |  |
| Վերամոն ագորս 11   |  |
| Վերասուն 115, 117, 131, 132  |  |



|  |  |
|--|--|
| Մարդեր 89  | Սիրիա 17, 18, 20, 197                              |
| Մարիանդիներ 142  | Սիտտակի 48   |
| Մարունեա 173   | Սկիլլունա 116                                      |
| Մարսիա գետ 10  | Սկոթիներ 103, 105                                  |
| Մեանդրոս գետ 10  | Սոլի 13  |
| Մեգարացիներ 142  | Սպարտա 55  |
| Մեդական պարիսպ 27, 48  | Սրբազան լեռ 163, 171                               |
| Մեդացիներ 69, 74, 75   | Սուսա 49, 81                                       |
| Մեդիա 50, 81, 197  |  |
| Մելանդիսներ 170  | Տառխներ 94, 99, 101, 103, 122                      |
| Միլետ 8—10, 17, 31, 139  | Տարսոն 13  |
| Մյուսիա 11, 195  | Տելեբոսա 93  |
| Մյուսիացիներ 32, 51, 68, 69, 138                                 | Տիբարեներ 121, 197                                 |
| Մյուրիանդոս 18   | Տիգրիս 27, 41, 48—50, 74, 79, 82, 93               |
| Մոսսիոնյաններ 117—121, 197                                       | Տյուրիայոն 11                                      |
|  | Տրալես 18  |
| Յասոնի հրվանդան 142  | Տրանիպսներ 170                                     |
|  | Տրապեզունտ 107, 109, 115, 122, 156                 |
| Նեոն ամրոց 180   | Տրապեզունտացիներ 110—112, 122, 158                 |
|  | Տրովադա 127, 195                                   |
| Պարթևներ 196   | Տրոասիա 37, 196                                    |
| Պարթևնիս գետ 125, 142  |  |
| Պարիոն 167, 169, 173   | Փասիաններ 99, 129, 197                             |
| Պարսիկներ 28, 31, 67, 69, 72, 74, 75, 77                         | Փասիս 99, 129, 130                                 |
| Պասիլագոնացիներ 28, 122—124, 137, 138                            | Փյունիկցիներ 18                                    |
| Պասիլագոնիա 121, 124, 137, 139, 197                              | Փյունիկիա 17, 26, 197                              |
| Պելոպոննես 17  | Փյուսկոս գետ 49                                    |
| Պելոս 11   | Փյոլե լեռ 116                                      |
| Պերգամոն 195, 197  | Փյուրգիա 10—12, 31, 127, 150, 197                  |
| Պերիկոս 167, 170, 177, 185                                       | Փասրոս գետ 17                                      |
| Պիսիդիացիներ 9, 32, 51, 60, 68                                   |  |
| Պյուլե 21  | Քաղկեդոն 163, 169                                  |
| Պյուրամոս գետ 17   | Քաղկեդոնիա 160                                     |
| Պոնտոս 111, 112, 126, 127, 130, 131, 139, 142, 147, 153 161, 181 | Քերսոնեսոս 8, 14, 55, 127, 162, 166, 168, 171, 183 |
|  | Քրյուսապոլիս 146, 160, 161                         |
| Սալմյուդեսոս 181   |  |
| Սամոս 25   | Օդրյուսներ 170, 173, 180, 181, 188, 189            |
| Սարդես 9, 10, 23, 60   | Օլիմպիա 116  |
| Սելևոնոս 116   | Օլիմբացիներ 10                                     |
| Սելյուսիս 170, 181   | Օպիս քաղաք 49                                      |
| Սիևոս 107, 115, 121—123, 125, 139                                | Օփիլոնիոն 195                                      |
| Սիևոսացիներ 122—125, 127—128, 139                                |  |

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |     |
|---|-----|
| Գ Ի Ր Ք ԱՌԱՋԻՆ  | 7   |
| Գ Ի Ր Ք ԵՐԿՐՈՐԴ   | 37  |
| Գ Ի Ր Ք ԵՐՐՈՐԴ  | 59  |
| Գ Ի Ր Ք ՉՈՐՐՈՐԴ   | 82  |
| Գ Ի Ր Ք ՀԻՆԳԵՐՈՐԴ   | 109 |
| Գ Ի Ր Ք ՎԵՑԵՐՈՐԴ  | 137 |
| Գ Ի Ր Ք ՅՈԹԵՐՈՐԴ  | 161 |
| ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  |     |
| Գ. Սարգսյան—Քսենոփոնի կյանքը և ստեղծագործությունը. «Անաբասիս» | 201 |
| Գ. Տիրացյան—«Անաբասիս» և Հայաստանը                            | 221 |
| Ծ ա ն ո թ ա գր ու թյ ու ն ն ք                                 | 241 |
| Ց ա ն կ ք   | 275 |

ՔՍԵՆՈՓՈՆ  
ԿՇԵՈՓՈՒՏ

Ա Ն Ա Բ Ա Ս Ի Ս

Նկարչական Անավորումը՝ Հ. Ն. ԿՈՐԾԱԿԱԼՅԱՆԻ  
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ  
Սրբագրիչ Ի. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎՋ 03548      Հրատ. 3322      Պատվեր 347      Տպաքանակ 15000  
Հանձնված է արտադրության 9/II 1970 թ., ստորագրված է տպագրության  
28/XII 1970 թ., տպագր. 17.75 մամուլ + 17 ներդիր, հրատ. 17.71 մամուլ,  
պայման. 20.76 մամուլ, թուղթ № 1, 70 × 90<sup>1</sup>/<sub>16</sub>: Գինը 1 ռ. 90 կ.:  
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան